ՎԵՐԱԴԱՐՁ ԱՎԵՏԱՐԱՆԻՆ

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏԻԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՈՒՇԱՑՈՒՄԵՐԸ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄԸ ԵՎ ՁԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ

Վերադարձ Ավետարանին

Ավետարանի զորությունը և ուղերձը

Ավետարանի կանչը և ճշմարիտ դարձը

Ավետարանի հավաստիացումը և զգուշացումները

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄԸ ԵՎ ՁԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

Ավետարանի հավաստիացումը և զգուշացումները
© 2014 Փոլ Վոշեր

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող որևէ կերպով օգտագործվել կամ կրկնօրինակվել՝ առանց գրավոր թույլտվության, բացառությամբ՝ կարճ մեջբերումների քննադատական հոդվածների և ակնարկների մեջ: Ուղղե՛ք ձեր խնդրանքները հրատարակչին հետևյալ հասցեով.

«Reformation Heritage Books»
2965 Լեոնարդ փող., Նեբրասկա
Գրենդ Ռեփիդս, Միչիգան 49525
հեռ. 616-977-0889 / ֆաքս. 616-285-3246
էլ. փոստ. orders@heritagebooks.org
վեբ կայք. www.heritagebooks.org

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
14 15 16 17 18 19/10 9 8 7 6 5 4 3 2 1

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են (1869թ.), կամ, հատուկ նշումների դեպքում, բառացիորեն թարգմանված են «Ձեյմս թագավորի նոր Աստվածաշնչից» (NKJV, հեղինակային իրավունքները՝ 1982թ., «Thomas Nelson, Inc»):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Վերադարձ Ավետարանին» գրքաշարի ներածություն VII

ՄԱՍ ՄԵԿ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ

1. Կեղծ հավաստիացում 3
2. Ստուգե՛ք ձեզ 15
3. Վարվել Աստծո հայտնության մեջ 25
4. Խոստովանել մեղքը 33
5. Պահել Աստծո պատվիրանները 47
6. Նմանվել Քրիստոսին 59
7. Սիրել քրիստոնյաներին 67
8. Մերժել աշխարհը 83
9. Մնալ եկեղեցում 99
10. Դավանել Քրիստոսին 111
11. Սրբել սեփական անձը 121
12. Արդարություն գործել 133
13. Հաղթել աշխարհին 147
14. Հավատալ Հիսուսին 159

ՄԱՍ ԵՐԿՈՒ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԴԱՏԱՐԿ ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂՆԵՐԻՆ

15. Ավետարանի պարզունակացում 179
16. Նեղ դուռը 191
17. Նեղ ճանապարհը 217
18. Ներքին իրողության արտաքին վկայությունը 243
19. Դատարկ դավանության վտանգները 257

«Վերադարձ Ավետարանին» գրքաշարի ներածություն

Հիսուս Քրիստոսի Ավետարանը մեծագույնն է բոլոր գանձերից, որոնք տրվել են եկեղեցուն և յուրաքանչյուր քրիստոնյայի: Այն պարզապես *ինչ-որ* ուղերձ չէ՝ այլոց թվում, այլ *միակ* ուղերձը, որը վեր է բոլորից: Այն Աստծո զորությունն է՝ փրկելու համար, և Աստծո իմաստության մեծագույն հայտնությունը՝ տրված մարդկանց և հրեշտակներին[1]: Այս պատճառով էր, որ Պողոս առաքյալն առաջնահերթություն էր համարում Ավետարանը քարոզելը, ջանք էր գործադրում, որ պարզորեն ազդարարեր այն, և նույնիսկ անեծք էր հռչակում նրանց վրա, ովքեր փորձում էին աղավաղել Ավետարանի ճշմարտությունը[2]:

Քրիստոնյաների ամեն սերունդ Ավետարանի ուղերձի տնտեսն է, և Սուրբ Հոգու զորությամբ Աստված կոչ է անում մեզ պահպանել այն գանձը, որը վստահվել է մեզ[3]: Որպես հավատարիմ տնտեսներ՝ մենք պետք է կլանված լինենք Ավետարանի ուսումնասիրությամբ, մեծ ջանք գործադրենք, որ հասկանանք դրա ճշմարտությունները, և պարտավորվենք անաղարտ պահել դրա բովանդակությունը[4]: Այսպես վարվելով՝ մենք կապահովենք թե՛ մեր, թե՛ մեզ լսողների փրկությունը[5]:

Այս տնտեսությունն է, որ դրդում է ինձ գրել այս գրքերը: Ես այնքան էլ չեմ ցանկանում լծվել գիրք գրելու դժվարին գործին, և, անկասկած, քրիստոնեական գրքերի պակաս նույնպես չկա: Այնուամենայնիվ, ես գրի առա իմ քարոզաշարերը նույն պատճառով, որով և քարոզում էի՝ դրանց բեռից ազատ լինելու համար: Ինչպես Երեմիայի պարագայում, եթե ես չխոսեմ այս ուղերձը, «այն ժամանակ սրտիս մեջ վառված կրակի պես դարձավ՝ ոսկորներումս պահված, և ես հոգնեցի կրելուց և չկարո-

1 Հռոմեացիների 1.16, Եփեսացիների 3.10
2 Ա Կորնթացիների 15.3, Կողոսացիների 4.4, Գաղատացիների 1.8,9
3 Բ Տիմոթեոս 1.14
4 Ա Տիմոթեոս 4.15
5 Ա Տիմոթեոս 4.16

ղացա»[6]: Ինչպես որ բացականչեց Պողոս առաքյալը. «Վա՛յ է ինձ, եթե Ավետարանը չքարոզեմ»[7]:

Ինչպես հայտնի է, *«Ավետարան»* բառը հունարենում *«եվանգե՛լիոն»* բառն է, որն ավելի ճիշտ կլինի թարգմանել «բարի լուր»: Ինչոր իմաստով, Աստվածաշնչի յուրաքանչյուր էջ Ավետարան է պարունակում, սակայն, այլ իմաստով, Ավետարանը շատ հստակ ուղերձ է փրկության մասին, որը կատարվել է անկում ապրած մարդկանց համար Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու կյանքի, մահվան, հարության և համբարձման միջոցով:

Հոր բարեհաճության համաձայն, հավիտենական Որդին, Որը հավասար է Հորը և Նրա բնության ճշգրիտ պատկերն է, հոժարաբար թողեց երկնային փառքը, հղացվեց Սուրբ Հոգուց կույսի որովայնում և ծնվեց որպես Աստված-մարդ՝ որպես Նազովրեցի Հիսուս[8]: Նա ապրեց այս աշխարհում որպես մարդ՝ կատարելապես հնազանդվելով Աստծո օրենքին[9]: Երբ եկավ ժամանակի լրումը, մարդիկ մերժեցին և խաչեցին Նրան: Խաչի վրա Նա Իր վրա վերցրեց մարդկության մեղքը, կրեց Աստծո զայրույթը և մահացավ մարդկության փոխարեն[10]: Երրորդ Օրը Աստված հարություն տվեց Նրան մեռելներից: Նրա աստվածային հարությունը ազդարարում էր այն մասին, որ Հայրն ընդունեց Իր Որդու մահը՝ որպես զոհ մեղքերի: Հիսուսը կրեց մարդկության անհնազանդության պատիժը, բավարարեց Աստծո արդարադատության պահանջները և խաղաղեցրեց Աստծո զայրույթը[11]: Հարությունից քառասուն օր անց Աստծո Որդին համբարձվեց Երկինք և նստեց Աստծո աջ կողմը՝ ստանալով փառք, պատիվ և իշխանություն ամեն ինչի վրա[12]: Այդտեղ՝ Աստծո ներկայության մեջ, Նա ներկայացնում է Իր ժողովրդին և խնդրանքներ է ուղղում Աստծուն նրանց փոխարեն[13]: Աստված լիարժեքորեն կների, կարդարացնի և կհաշտեցնի Իր հետ նրանց, ովքեր ընդունում են իրենց մեղավոր և անօգնական վիճակը և գցում են իրենց Քրիստոսի վրա[14]: Սա է Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի Ավետարանը:

Մերօրյա քրիստոնեական սերնդի ամենամեծ հանցանքներից մեկը Ավետարանը անտեսելն է. մեր բոլոր ախտերը բխում են դրանից: Կորսված աշխարհը ոչ թե խստացված է Ավետարանի հանդեպ, այլ անտեղ-

6 Երեմիա 20.9
7 Ա Կորնթացիների 9.16
8 Գործք 2.23, Եբրայեցիների 1.3, Փիլիպեցիների 2.6,7, Ղուկաս 1.35
9 Եբրայեցիների 4.15
10 Ա Պետրոս 2.24, 3.18, Եսայի 53.10
11 Ղուկաս 24.6, Հռոմեացիների 1.4, Հռոմեացիների 4.25
12 Եբրայեցիների 1.3, Մատթեոս 28.18, Դանիել 7.13,14
13 Ղուկաս 24.51, Փիլիպեցիների 2.9-11, Եբրայեցիների 1.3, Եբրայեցիների 7.25
14 Մարկոս 1.15, Հռոմեացիների 10.9, Փիլիպեցիների 3.3

յակ է Ավետարանից, քանի որ այն մարդիկ, ովքեր հռչակում են Ավետարանը, նույնպես չգիտեն դրա հիմնարար ճշմարտությունները: Այն էական թեմաները, որոնք կազմում են Ավետարանի միջուկը՝ Աստծո արդարադատությունը, մարդու ծայրաստիճան ապականված լինելը, արյան քավությունը, ճշմարիտ դարձի բնույթը և փրկության մեջ հավաստիացում ունենալու աստվածաշնչյան հիմքը, չեն հիշատակվում շատ ու շատ ամբիոններից: Եկեղեցիները կրճատում են Ավետարանի ուղերձը՝ հասցնելով այն քրիստոնեական հավատամքներից վերցրած մի քանի արտահայտությունների. նրանք սովորեցնում են, որ դարձի գալը սոսկ մարդու որոշումն է, և հայտարարում են, որ ցանկացած մարդ, որն ապաշխարության աղոթք է անում, փրկված է:

Ավետարանի նմանօրինակ պարզունակացումը շատ լուրջ հետևանքներ ունի: Առաջինը՝ այն ավելի է խստացնում դարձի չեկած մարդկանց սրտերը: Այսօր «դարձի եկածներից» քչերն են միանում եկեղեցիներին, իսկ միացողները հաճախ ետ են կանգնում կամ մարմնավոր կյանք են վարում: Միլիոնավոր մարդիկ, որոնք քայլում են մեր փողոցներով և նստում են մեր եկեղեցիներում, չեն վերապրում այն փոփոխությունը, որը բերում է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Ավետարանը, սակայն նրանք համոզված են, որ փրկված են, քանի որ մեկ անգամ իրենց կյանքում ձեռք են բարձրացրել ինչ-որ ավետարանչական հավաքույթի ժամանակ կամ ինչ-որ աղոթք են կրկնել: Ապահովության այս կեղծ զգացումը մեծ խոչընդոտ է ստեղծում, որը հաճախ փակում է նման մարդկանց՝ ճշմարիտ Ավետարանը լսելու համար:

Երկրորդը՝ նման ավետարանը խեղաթյուրում է եկեղեցին (որը վերածնված հավատացյալների հոգևոր մարմին է)՝ վերածելով այն մարմնավոր մարդկանց հավաքույթի, որոնք դավանում են, որ ճանաչում են Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են Նրան[15]: Երբ քարոզվում է ճշմարիտ Ավետարանը, մարդիկ եկեղեցի են գալիս՝ առանց քրիստոնեական ժամանցային ծրագրերի, հատուկ միջոցառումների կամ այնպիսի խոստումների, որոնք ավելին են, քան այն, ինչ տալիս է Ավետարանը: Մարդիկ եկեղեցի են գալիս, քանի որ ցանկանում են Քրիստոսին, փափագում են լսել Աստվածաշնչի ճշմարտությունը, սրտանց երկրպագում են Աստծուն, ինչպես նաև հնարավորություններ են փնտրում՝ մարդկանց ծառայելու համար: Երբ եկեղեցին հռչակում է ցածրորակ Ավետարան, այն լցվում է մարմնավոր մարդկանցով, որոնց գրեթե չեն հետաքրքրում Աստծո իրողությունները, իսկ նման մարդկանց պահելը ծանր բեռ է դառնում եկեղեցու համար[16]: Նման պայմաններում եկեղեցին

15 Տիտոս 1.16
16 Ա Կորնթացիների 2.14

նվազեցնում է Աստվածաշնչի ծայրահեղ պահանջները՝ փոխարինելով դրանք հարմարավետ բարոյականությամբ, իսկ Ճշմարիտ նվիրումը Քրիստոսին տեղի է տալիս այնպիսի գործունեության, որի նպատակն է՝ գոհացնել իր անդամներին: Եկեղեցին դառնում է միջոցառումների վայր և դադարում է կենտրոնանալ Քրիստոսի վրա. այն մանրակրկիտ ձևով զտում կամ վերաձևակերպում է Ճշմարտությունը՝ իր մարմնավոր մեծամասնությանը չվիրավորելու նպատակով: Եկեղեցին անտեսում է աստվածաշնչյան և ուղղադավան քրիստոնեության Ճշմարտությունները և սկսում է առաջնորդվել պրագմատիզմով կամ օգտապաշտությամբ (այսինքն՝ այն ամենով, ինչը պահպանում է եկեղեցու բնականոն կյանքը և ապահովում է եկեղեցու աճը):

Երրորդը՝ նման ավետարանը փոքրացնում է ավետարանչության կամ միսիոներական աշխատանքի նշանակությունը՝ վերածելով այն մարկետինգային ռազմավարությամբ առաջնորդվող մարդասիրական ջանքերի, որոնք հիմնված են մշակույթի վերջին միտումների մանրակրկիտ ուսումնասիրությունների վրա: Տարիներ շարունակ տեսնելով ոչ սուրբգրային ավետարանի անկարողությունը՝ շատ ավետարանականներ, թվում է, համոզված են, որ Ավետարանը չի գործում, քանի որ ինչ-որ կերպով մարդն այնքան բարդ արարած է դարձել, որ չի կարող փրկվել նման պարզ և վրդովեցուցիչ ուղերձով: Ներկայումս եկեղեցիներն ավելի շատ ձգտում են հասկանալ մեր անկում ապրած մշակույթը և դրա տարօրինակությունները, քան հասկանալ և հռչակել միակ ուղերձը, որն ի զորու է փրկել այդ մշակույթը: Արդյունքում Ավետարանը շարունակ վերաձևակերպվում է՝ ժամանակակից մշակույթին համապատասխանելու համար: Մենք մոռացել ենք, որ Ճշմարիտ Ավետարանը մշտապես համապատասխան է ամեն մի մշակույթի, քանի որ այն Աստծո հավիտենական խոսքն է՝ ուղղված յուրաքանչյուրին:

Չորրորդը՝ նման ավետարանը նախատինք է բերում Աստծո անվանը: Արժեզրկված ավետարան հռչակելու արդյունքում մարմնավոր և դարձի չեկած մարդիկ մուտք են գործում եկեղեցի, ու թեև նրանք գրեթե լիովին արհամարհում են աստվածաշնչյան և եկեղեցական կարգապահությունը, նրանց թույլ են տալիս մնալ՝ առանց շտկելու կամ հանդիմանելու: Այս փաստն արատավորում է եկեղեցու մաքրությունը և համբավը և նախատում է Աստծո անունն անհավատների մեջ[17]: Արդյունքում Աստված չի փառավորվում, եկեղեցին չի կառուցվում, եկեղեցու դարձի չեկած անդամները չեն փրկվում, և եկեղեցին գրեթե կորցնում է իր զորությունը կամ լիովին անզոր է դառնում՝ աշխարհին վկայելու համար:

Մեզ՝ ծառայողներիս և աշխարհական հավատացյալներիս, հարիր չէ

17 Հռոմեացիների 2.24

անգործությամբ հետևել, թե ինչպես է մեր «երանելի Աստծո փառավոր Ավետարանը» փոխարինվում անփառունակ ավետարանով[18]: Որպես այս ավանդի տնտեսներ՝ մենք պարտավոր ենք վերադառնալ միակ ճշմարիտ Ավետարանին և խիզախորեն ու պարզորեն ազդարարել այն բոլորին: Մենք լավ կանենք, եթե ականջ դնենք Չարլզ Հեդդոն Սփերջենի խոսքերին.

> *«Այս օրերին ես պարտավորված եմ զգում, որ շարունակաբար անդրադառնամ Ավետարանի տարրական ճշմարտություններին: Խաղաղ ժամանակներում մենք միգուցե ազատորեն արշավներ կազմակերպենք դեպի ճշմարտության հետաքրքիր շրջանները, որոնք գտնվում են հեռուներում, բայց այժմ մենք պետք է տանը մնանք և հսկենք եկեղեցում գտնվող սրտերը և ընտանիքները՝ պաշտպանելով մեր հավատքի առաջին սկզբունքները: Այս ժամանակաշրջանում բարձրացել են մարդիկ հենց եկեղեցու ներսից, որոնք արատավոր բաներ են խոսում: Շատերն են նեղություն պատճառում մեզ իրենց փիլիսոփայություններով և նորարարական մեկնություններով, որոնցով նրանք մերժում են այն վարդապետությունները, որոնք, իրենց ասելով, սովորեցնում են, ինչպես նաև վարկաբեկում են այն հավատքը, որը պարտավորվում են պահպանել: Անհրաժեշտ է, որ մեզնից մի քանիսը, ովքեր գիտեն, թե ինչին ենք մենք հավատում, և չեն աղավաղում մեր խոսքերը, հաստատեն մեր ոտքերը և ամրապնդեն մեր դիրքը՝ ուսուցանելով կյանքի Խոսքը և պարզորեն ազդարարելով Հիսուս Քրիստոսի Ավետարանի հիմնարար ճշմարտությունները»[19]:*

Թեև «Վերադարձ Ավետարանին» գրքաշարը չի պարունակում Ավետարանի ամբողջական համակարգված ներկայացում, այն, այդուհանդերձ, անդրադառնում է դրա ամենաէական տարրերի մեծ մասին, հատկապես այն ճշմարտություններին, որոնք ամենից անտեսվածն են ժամանակակից քրիստոնեության մեջ: Հուսով եմ, որ այս խոսքերը կառաջնորդեն ձեզ և կօգնեն վերագտնել Ավետարանը՝ ամբողջ գեղեցկությամբ, վրդովեցուցիչ ճշմարտություններով և փրկարար զորությամբ: Իմ աղոթքն է, որ այն վերագտնելը նաև վերափոխի ձեր կյանքը, զորացնի ձեզ Ավետարանը հռչակելու մեջ և փառավորի Աստծուն:

Ձեր եղբայր

Փոլ Դեյվիդ Վոշեր

---

18 Ա Տիմոթեոս 1.11

19 Չարլզ Հ. Սփերջեն, ««Մետրոպոլիտեն Թեբերնեքլ»-ի ամբիոնը» (վերտպ. Փասադենա, Տեխաս, «Pilgrim Publications»), հտ. 32, էջ 385:

ՄԱՍ ՄԵԿ

Աստվածաշնչյան հավաստիացում

«Փորձե՛ք ձեզ, թե արդյո՞ք հավատքի մեջ եք: Ստուգե՛ք ձեզ: Թե՞ դուք չգիտեք ձեզ, որ Հիսուս Քրիստոսը ձեզանում է, եթե միայն դուք այն չեք, ինչ պետք է լինեք»:

– Բ Կորնթացիների 13.5 (NKJV)

«Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատցողներիդ, որ գիտենաք, թե հավիտենական կյանք ունեք»:

– Ա Հովհաննես 5.13

ԳԼՈՒԽ ՄԵԿ

Կեղծ հավաստիացում

«Խոստովանում են, թե Աստծուն գիտեն, բայց իրենց գործերով ուրանում են Նրան: Պիղծ են և անհնազանդ և ամեն բարի գործի համար անպիտան»:

– Տիտոս 1.16

«Շատերը կասեն ինձ այն օրը. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք և Քո անունով շատ զորություններ գործեցինք»: Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ»:

– Մատթեոս 7.22,23

«Վերադարձ Ավետարանին» գրքաշարի այս երրորդ գրքում մենք հասել ենք վճռական կետի Ավետարանի և փրկության մեր ուսումնասիրության մեջ: Մենք պետք է հարցնենք հետևյալը. «Ինչպե՞ս իմանամ, որ վերստին ծնված եմ և ճշմարտապես Աստծո զավակ եմ», և «Ինչպե՞ս իմանամ, որ հավատալով՝ ես հավիտենական կյանք եմ ստացել»: Այս հարցերի արդիականությունն ակնհայտ է դառնում, երբ գիտակցում ենք, որ ապրում ենք մի ժամանակաշրջանում, որտեղ շատերն են պնդում, որ հավիտենական հույս ունեն Քրիստոսում, սակայն աննշան չափով են արտացոլում Նրա ուսմունքներն իրենց կյանքում:

Այս հարցի լրջությունն ավելին է այն պատճառով, որ քսանմեկերորդ դարի քարոզումը և ավետարանչությունն արմատապես փոխել են Ավետարանի, Ավետարանի կանչի և փրկության հավաստիացում ստանալու միջոցների բովանդակությունը: Շատ քարոզիչներ այսօր ներկայացնում են Ավետարանը որպես հակիրճ և հարմարավետ պնդումների մի շարք, որոնք, թեև ինքնին ճիշտ են, հաճախ չեն բացատրվում և հեռացվում են իրենց ճշմարիտ ավետարանչական իմաստից և զորությունից: Ապաշ-

խարելու և հավատալու Ավետարանի կանչը փոխարինվել է Քրիստոսին ընդունելու և մեղավորի աղոթքը կրկնելու կանչով՝ այն մեղավորի աղոթքը, որը հաճախ գտնվում է ավետարանչական գրքույկների վերջում և արվում է զգացմունքային և հաճախ շահարկող հրապարակային հրավերների արդյունքում: Շատերն այլևս փրկության մեջ հավաստիացում չեն ստանում՝ ուշադրությամբ դիտարկելով իրենց դարձի գալը և կյանքի ոճը Սուրբ գրքի լույսի ներքո: Փոխարենը, այն շնորհվում է բարի մտադրություններ ունեցող ծառայողի կողմից, որը պատրաստակամորեն հայտարարում է փրկության լիակատար առավելությունները յուրաքանչյուրի կյանքում, ով աղոթել է և ընդունել է Քրիստոսին՝ ակնհայտ անկեղծության որոշակի չափով:

Ավետարանի այս արմատական փոփոխությունների արդյունքն այն է, որ բազմաթիվ անհատների կյանքում գրեթե չկա փրկարար շնորհքի ապացույց, սակայն նրանք մեծ հավաստիացում ունեն և մեծապես վիրավորվում են յուրաքանչյուրից, ով վիճարկում է իրենց դավանությունը: Նրանք հավատում են, որ փրկված են, կրում են իրենց հավաստիացումն իրենց սրտում և հաստատություն ունեն որևէ հոգևոր առաջնորդից: Նրանք հազվադեպ են ստացել դատարկ դավանություն անողներին ուղղված թեկուզ մեկ զգուշացում Ավետարանից, և նրանց չեն հորդորել, որ ստուգեն իրենց Սուրբ գրքի լույսի ներքո՝ կյանքում դարձի առարկայական ապացույցներ գտնելու համար[20]: Նրանք բոլորովին հրատապություն չեն զգում և չեն կարծում, որ կարիք ունեն հաստատ դարձնելու իրենց կոչումը և ընտրությունը[21]:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ

Ավետարանի բազմաթիվ ծառայողներ պետք է խոստովանեն, որ մեծ մեղավորություն ունեն այն բանում, որ մարդկանց կյանքում գերակշռում է փրկության հանդեպ անհոգ վերաբերմունքը և հավաստիացման մակերեսային դիտարկումը: Նման սխալական կարծիքը և անհոգ վերաբերմունքն Ավետարանի հանդեպ չի առաջացել Սուրբ գրքի ուշադիր ընթերցումից և նախորդ դարերի դավանանքների ու քարոզման լուրջ ուսումնասիրությունից: Փոխարենը, այդ թյուր, վտանգավոր կարծիքների պատճառն այն ծառայողներն են, որոնք անփութորեն են քարոզել, աննշան երկյուղածությամբ են վերաբերվել Ավետարանին և մակերեսորեն են աշխատել մարդկանց հետ:

Ավետարանի այդպիսի արժեզրկման և դրան ոչ պատշաճ կերպով վերաբերվելու պատճառը քսաներորդ դարի աստիճանական,

20 Մատթեոս 7.13-27, Բ Կորնթացիների 13.5, Տիտոս 1.16
21 Բ Պետրոս 1.10

բայց վճռական հեռացումն է Աստվածաշնչյան ճշմարտության նվիրյալ ուսումնասիրությունից՝ մի սովորությունից, որն ինքնին ի զորու է օգնել մարդկանց մեծարանքով վերաբերվել Աստծուն, պատշաճ կերպով արժևորել Ավետարանը և ունենալ առողջ երկյուղ՝ կատարելու համար այն լրջագույն պարտավորությունը, որը դրվել է ծառայողների վրա: Այսպիսով, մարդիկ փոխարինել են իրենց ծառայողական պատմուճաններ-ը մեթոդաբանությունների հետ, մարգարեությունը՝ օգտապաշտության հետ, և Սուրբ Հոգու զորությունը՝ հմտորեն մշակված շուկայական մարտավարությունների հետ: Այժմ մարգարեների դպրոցները ապագա տնօրենների և կրտսեր ղեկավարների համար ավելի նման են սեմինարի: Հովվի համար կյանքի սկզբունքները սովորեցնելն ավելի առաջնահերթ է, քան Ավետարանը քարոզելը: Եկեղեցական համայնքի արագ աճը և համախմբումն ավելի կարևոր են դարձել, քան եկեղեցու մաքրությունը, և եկեղեցական համայնքի անդամը դարձի եկած է համարվում, եթե աղոթել է մեղավորի աղոթքը և մասնակցում է եկեղեցու առաքելության իրականացմանը:

Որպես ծառայողներ, որոնց շատ բան է տրվել, և որոնցից շատ բան է պահանջվելու, մենք, Սուրբ Հոգու օգնությամբ, պետք է հսկենք այն գանձը, որը վստահվել է մեզ[22]: Մենք պետք է վերադառնանք վաղեմի ճանապարհներին, որոնք նշագծված են Աստծո Խոսքով[23]: Մենք պետք է կլանված լինենք Սուրբ գրքով, որպեսզի մեր առաջադիմությունն աստվածապաշտության մեջ և մեր օգտակարությունն Ավետարանի ծառայության մեջ ակնհայտ լինի բոլորին[24]: Մենք պետք է ջանք անենք, որ ընտիր լինենք Աստծո առջև որպես մշակներ, որոնք ամաչելու պատճառ չունեն, որոնք ճշտորեն փոխանցում են ճշմարտության խոսքը[25]: Մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք մեզ և մեր վարդապետությանը, հատկապես երբ սովորեցնում ենք Ավետարանը, քանի որ, եթե այդպես վարվենք, մենք կապահովենք թե՛ մեր, թե՛ մեր ունկնդիրների փրկությունը[26]: Որպես Ավետարանի ծառայողներ, մենք չենք կարող անտեղյակ կամ անհոգ լինել Ավետարանը քարոզելու, մարդկանց ապաշխարության և հավատքի կանչելու և Աստծուն փնտրող մարդկանց հետ խորհրդատվություններ անցկացնելու վերաբերյալ: Մարդկանց հավիտենական ճակատագիրը և եկեղեցու համբավը կախված են մեր ջանասիրությունից և հավատարմությունից այս վեհ գործերում:

Մենք պետք է հիշենք, որ Հիսուս Քրիստոսի եկեղեցին բաղկացած

22 Ղուկաս 12.47,48, Բ Տիմոթեոս 1.14
23 Երեմիա 6.16
24 Ա Տիմոթեոս 4.15
25 Բ Տիմոթեոս 2.15
26 Ա Տիմոթեոս 4.16

է այնպիսի մարդկանցից, որոնք վերածնվել են Սուրբ Հոգու կողմից, ապաշխարել են, հավատացել են փրկությանը և շարունակում են վարվել և աճել շնորհքի մեջ: Եկեղեցին Աստծո ստեղծագործությունն է և Նրա ամենատպավորիչ գործերից մեկը[27]: Եկեղեցին Աստծո կողմից որոշված գործիքն է, որի միջոցով Իր փառքը պետք է ցուցադրվի, և Իր բազմապիսի իմաստությունը պետք է հայտնի լինի իշխանություններին և պետություններին երկնավոր վայրերում[28]: Եկեղեցին կարևոր ձեռնարկություն է, և բոլորս՝ թե՛ ծառայողները, թե՛ աշխարհականները, ովքեր կանչված են ներդրում ունենալու եկեղեցու կառուցման մեջ, պետք է մեծապես զգուշանան: Մենք պետք է անենք այն, ինչ մեր ուժերի մեջ է, որպեսզի մեր ծառայությունը կառուցի և գեղեցկացնի եկեղեցին, ոչ թե տկարացնի եկեղեցին և անուղղելի վնաս հասցնի դրա վկայությանը: Այս ներկա սպառնալիքը դրդեց Պողոսին հորդորել Կորնթոսի եկեղեցուն.

> *«Որովհետև ոչ ոք ուրիշ հիմք չի կարող դնել, քան թե որ դրված է, որ է Հիսուս Քրիստոսը: Եթե մեկն այս հիմքի վրա շինի ոսկի, արծաթ, ազնիվ քարեր, փայտ, խոտ, եղեգ, ամեն մեկի գործը պիտի հայտնվի, որ օրը կերևացնի, որովհետև կրակով պիտի հայտնվի: Եվ ամեն մեկի գործը, թե ինչպես է, կրակը կփորձի: Եթե մեկի գործը, որ շինեց, հաստատ մնա, վարձք կառնի: Եվ եթե մեկի գործն այրվի, վնաս կքաշի, բայց ինքը կապրի, այլ այնպես, ինչպես թե կրակով» (Ա Կորնթ. 3.11-15):*

Հիսուս Քրիստոսը եկեղեցու Մեծ Անկյունաքարն է[29]. այնպես որ, եկեղեցու հիմքն անսասան է: Ինչպես Պողոսը գրեց երիտասարդ Տիմոթեոսին. «Բայց Աստծո հաստատ հիմքը կանգնած է և այս կնիքն ունի, թե՝ «Տերը ճանաչում է նրանց, որ Իրենն են»» (Բ Տիմոթ. 2.19): Մյուս կողմից, մենք կանչված ենք կառուցելու այդ հիմքի վրա ահով ու դողով, որոնք բխում են երկու աղբյուրից: Առաջինը՝ մենք գիտենք, որ մեր ներդրումը եկեղեցում կարող է զորացնել կամ տկարացնել, գեղեցկացնել կամ վնասել այն: Երկրորդը՝ մենք գիտենք, որ դատաստանի առջև ենք կանգնելու եկեղեցուն մատուցած մեր ծառայության որակի համար: Այդ Մեծ օրը մեր աշխատանքի որակը կրակով կհայտնվի: Թեև կփրկվենք Աստծո շնորհքով և Գառան արյունով, մենք կարող ենք ականատես լինել մեր ամբողջ աշխատանքի այրվելուն: Այս մտքերը պետք է դրդեն Ավետարանի ծառայողին զգուշանալ իր ծառայության յուրաքանչյուր ոլորտում, հատկապես՝ Ավետարանը քարոզելու և մարդկանց մասին խնամք տանելու մեջ: Եթե այս առաջին քարը տեղում չլինի, պատն ամ-

27 Եփեսացիների 2.10
28 Եփեսացիների 3.10
29 Սաղմոս 118.22, Եսայի 28.16, Մատթեոս 21.42, Մարկոս 12.10, Ղուկաս 20.17, Գործք 4.11, Եփեսացիների 2.20, Ա Պետրոս 2.6,7

բողջությամբ կտկարանա, և եկեղեցու համբավը, որը ոսկուց թանկ է, կարատավորվի:

ԿԵՂԾ ՀԱՎԱՍՏԻԱՑՄԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Թեև այն, ինչի մասին խոսում եմ մինչև հիմա, խիստ խոսք է, որը դժվար է լսել և հասկանալ[30], համաձայն ծանրակշիռ ապացույցների, սա ժամանակակից Ավետարանական շարժման մեծ մասի ճշգրիտ նկարագրությունն է: Շատերն անփութորեն են վերաբերվել Ավետարանին՝ ընդհանրացնելով դրա էական ճշմարտությունները և հասցնելով դրա բովանդակությունը նվազագույն ընդհանուր հայտարարի, որպեսզի իրենց համայնքներում կարողանան ընդգրկել հնարավորինս շատ դավանող հավատացյալների: Մեր երանելի Աստծո փառավոր Ավետարանը[31] դարձել է մակերեսային հավատամք՝ կազմված մի քանի հոգևոր օրենքներից և սկզբունքներից: Եթե ինչ-որ մեկը պատրաստ է համաձայնել այս հավատամքին նույնիսկ ամենամակերեսային ձևով, մենք հեղինակավոր կերպով վերստին ծնված ենք հայտարարում նրան, ընդունում ենք նրան Աստծո ընտանիքի մեջ և ընդգրկում ենք նրա անունը եկեղեցու անդամների թվում: Թեև այդ նորադարձներից մի քանիսն իսկապես դարձի են գալիս, այնուամենայնիվ շատերն էլ կա՛մ այդպես էլ եկեղեցի չեն վերադառնում, կա՛մ անհետանում են եկեղեցական համայնքից ընդամենը մի քանի ամիս անց: Մյուսները, որոնք պահում են կապը եկեղեցու հետ, հաճախ բոլորովին հետաքրքրված չեն Քրիստոսով, վախենալու աստիճան անտարբեր են սրբության հանդեպ և անարգանք են դրսևորում ծառայության հանդեպ: Նրանք կապված են եկեղեցուն ոչ թե Քրիստոսի հետ ունեցած կենսական կապով, այլ այն ամենով, ինչ իրենց համայնքը՝ եռանդուն առաջնորդներով և հագեցած ծրագրերով, կարող է առաջարկել իրենց՝ առողջ շփման շրջանակ, ոգևորիչ ընկերություններ, վայր, որտեղ իրենց երեխաները կարող են մեծանալ, և մշտական օգնություն իրենց անմիջական կարիքները հոգալու հարցում:

Քանի որ ավետարանական ամբիոնը տկարացած է տգիտությամբ, օգտապաշտությամբ և վախով, դավանող եկեղեցում կան անթիվ մարդիկ, որոնք երբեք իրականում չեն առերեսվել Հիսուս Քրիստոսի Ավետարանին, երբեք չեն լսել Ավետարանի զգուշացումները և գրեթե պատկերացում չունեն ճշմարիտ աստվածաշնչյան հավաստիացման մասին: Ավելին, ավետարանականներն արդարացնում են սրբացման բացակայությունը և աշխարհիկությունն այդ մարդկանց կյանքում՝ օգտագործելով «մարմնավոր քրիստոնյա» հասկացությունը, որը եկեղե-

30 Հովհաննես 6.60
31 Ա Տիմոթեոս 1.11

ցում երբևէ ի հայտ եկած ամենավտանգավոր հասկացություններից է: Նրանք սովորեցնում են, որ Հիսուս Քրիստոսին անկեղծորեն հավատացող մարդը, որը վերածնված է, և որի ներսում բնակվում է Սուրբ Հոգին, կարող է ամբողջ կյանքն ապրել աշխարհիկության մեջ՝ կատարելով իր մարմնական ցանկությունները և գրեթե չմտածելով աստվածային իրողությունների մասին: Այս ուսմունքն ուղղակիորեն հակասում է Քրիստոսի և առաքյալների ուսմունքներին: Ավելին, այն թույլ է տալիս մարմնավոր և չվերածնված մարդկանց հավաստիացում գտնել փրկության մեջ՝ հիմնվելով անցյալում Քրիստոսին ընդունելու իրենց որոշման ակնհայտ անկեղծության վրա, թեև իրենց ապրելակերպը հակասում է այդպիսի դավանությանը[32]:

Ի հակադրություն այս ուսմունքին, նրանք, ովքեր դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, Սուրբ գիրքը հորդորում է, որ հավաստիացում ստանան իրենց փրկության մեջ՝ ոչ միայն լրջորեն դիտարկելով իրենց դարձի գալու փորձառությունը, այլև իրենց ապրելակերպը՝ այդ փորձառությունից հետո: Արդյո՞ք իրենց կյանքում կա Աստծո սրբացման շարունակական աշխատանքի ապացույցը, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը[33]: Արդյո՞ք այն Աստված, Ով սկսել է Իր բարի գործը, կատարում է այն[34]: Արդյո՞ք տվյալ անձնավորությունը պտուղ ունի՝ իր անկեղծ ապաշխարության և հավատքին համապատասխան[35]: Արդյո՞ք նրա դավանությունն ապացուցվում կամ վկայվում է անկեղծ բարեպաշտ գործերով[36]:

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Ավետարանականների միջև մեծ բանավեճ է ընթանում մի ուսմունքի շուրջ, որը կոչվել է «տերունական փրկություն»: Դրա կողմնակիցները հավատում են, որ փրկվելու համար մարդը պետք է ընդունի Հիսուս Քրիստոսին ոչ միայն որպես Փրկիչ, այլև որպես Տեր: Բանավեճի մյուս կողմում գտնվողները սովորեցնում են, որ փրկվելու համար մարդը միայն պետք է ընդունի Քրիստոսին որպես Փրկիչ, իսկ Նրա իշխանությունը բոլորովին այլ հարց է: Հետևաբար, նրանք պնդում են, որ Քրիստոսի իշխանությանը հնազանդվելու պահանջը հակասում է վարդապետությանը այն մասին, որ փրկությունը միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով է[37]: Նրանց պնդմամբ, եթե մարդը պետք է հնա-

32 Տիտոս 1.16
33 Եբրայեցիների 12.14
34 Փիլիպեցիների 1.6
35 Մատթեոս 3.8
36 Հակոբոս 2.18
37 Եփեսացիների 2.8

զանդվի Քրիստոսի իշխանությանը փրկություն ստանալուց հետո, նշանակում է՝ փրկությունն այլևս շնորհքի հիման վրա չէ, այլ՝ գործերի[38]:

Թեև ողջունում եմ յուրաքանչյուր անկեղծ ջանք՝ պաշտպանելու համար վարդապետությունն այն մասին, որ փրկությունը միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով է, ես ստիպված եմ արտահայտել իմ անհամաձայնությունը այս կարծիքին: Ես պնդում եմ, որ Հիսուսի իշխանությանը հնազանդվելու կոչը՝ մեղավորներին ուղղված Ավետարանի կանչի էական և անբաժանելի մասն է: Ավելին, ես պնդում եմ, որ դավանող քրիստոնյայի աճը կամ աստիճանական առաջընթացը Տեր Հիսուս Քրիստոսին հնազանդվելու մեջ ճշմարիտ ձևով դարձի գալու ապացույցներից մեկն է: Իմ համոզմունքները հիմնված են հետևյալ ճշմարտությունների վրա:

Առաջինը՝ Քրիստոսն Ինքը սովորեցրեց, որ բացարձակապես անհրաժեշտ է անկեղծորեն և գործնականորեն հնազանդվել Իր իշխանությանը, և որ դա փրկության էական կողմերից մեկն է: Փրկության համար ոչ միայն պահանջվում է դավանել Նրա իշխանությունը, այլև ապացուցել այդ դավանանքը: Լեռան քարոզն ամփոփելիս Քրիստոսը խստորեն զգուշացրեց Իր ունկնդիրներին, որ ճշմարիտ դավանության անսխալական ցուցանիշն Իր իշխանությանը հնազանդվելն է: Նրա խոսքով, նեղ է դուռը և նեղվածք է ճանապարհը, որը տանում է դեպի կյանք, և քչերն են գտնում այն, նույնիսկ քչերը այն մարդկանցից, որոնք ընդունում են Իրեն որպես Տեր. «Ոչ թե ամեն ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայություն, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթ. 7.13,14,21):

Քրիստոսը չի սովորեցնում փրկություն՝ հիմնված գործերի վրա, այլ մի ճշմարտություն, որը կարելի է տեսնել ամբողջ Սուրբ գրքում: Հնազանդությունն Աստծո և Քրիստոսի իշխանությանը (այսինքն՝ հնազանդությունն Աստծո կամքին)՝ փրկարար հավատքի ապացույցն է: Թեև հերձվածություն է նույնիսկ միտքն այն մասին, որ փրկություն ստանալու համար անհրաժեշտ են հավատք և գործեր, այնուամենայնիվ, Սուրբ գիրքը, ուղղադավան վարդապետությունը և պատմական քրիստոնեությունը հաստատում են համոզմունքը և ուսուցումն այն մասին, որ գործերը փրկության արդյունքն են և դրա իսկությունը ստուգելու միջոցը:

Երկրորդը՝ հնազանդությունը Հիսուս Քրիստոսի իշխանությանը Ավետարանի այն էական կողմերից է, որն ազդարարում էին առաքյալները: Ոչ ոք չի կարող ժխտել, որ առաքյալները հանդիսավոր կերպով վկայում էին թե՛ հրեաներին, թե՛ հույներին, որ Աստված այն Հիսուսին, որին

38 Հռոմեացիների 11.6

այս աշխարհը խաչեց, և՛ Տեր, և՛ Օծյալ արեց[39]: Ավելին, ըստ առաքյալների կողմից ազդարարվող Ավետարանի, Քրիստոսի համընդհանուր իշխանությունը դավանելը էապես կարևոր է մարդու փրկության համար: Պողոս առաքյալը հատուկ շեշտում է, որ «եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես (կամ՝ կփրկվես)» (Հռոմեացիների 10.9):

Այս խոսքն Աստվածաշնչի ամենակարևոր դավանանքային պնդումներից է: Ավելին, ավետարանականների շրջանում այն ամենից լայնորեն գործածվող խոսքն է Ավետարանը քարոզելու մեջ: Արդյոք մե՞նք, թե՞ հենց առաքյալն է Քրիստոսի իշխանությունը զուր դավանելու կոչ անում մեղավորներին: Արդյո՞ք նրանք պետք է դավանեն Հիսուսին որպես Տեր՝ առանց Նրա կամքին հնազանդվելու որևէ մտադրության: Կարո՞ղ է արդյոք մարդն իր սրտում հավատալ նման մեծ ճշմարտությանը և բերանով դավանել այն՝ առանց վերապրելու որևէ գործնական ազդեցություն իր կյանքի նպատակի, ուղղվածության և ոճի վրա: Այդպիսի տարբերակ առաջադրելը սխալ է: Ավելին, մենք հենց նոր խոսեցինք այն մասին, որ Քրիստոսի իշխանության ցանկացած դավանություն, որը չի ուղեկցվում Նրա կամքը կատարելով, դատարկ է և տանում է հավիտենական կործանման[40]:

Երրորդը՝ տերունական փրկությանը հաճախակի ուղղված առարկությունները, թվում է, բխում են փրկության բնույթի թյուրըմբռնումից, հատկապես՝ վերածնման և հարատևության վարդապետությունների: Սովորեցնելով, որ գործնական և տեսանելի հնազանդությունը Հիսուսի իշխանությանը[41] փրկության էական ապացույց է և հավաստիացում ստանալու միջոց, Սուրբ գիրքը ոչ մի դեպքում նկատի չունի, որ հավատացյալի փրկությունը կամ հարատևությունը նրա գործերի արդյունքն է: Հավատացյալի հնազանդությունը Հիսուսի իշխանությանը՝ չի առաջացնում և չի պահպանում փրկությունը, այլ՝ հավատացյալի ներսում Աստծո մեծ փրկարար աշխատանքի արդյունքն է: Այս աշխատանքը երկակի է: Առաջինը՝ նա, ով ապաշխարում է և հավատում է փրկությանը, վերածնվել է Սուրբ Հոգու կողմից: Աստծո այս գերբնական և վերստեղծող աշխատանքն առաջացնում է իրական փոփոխություն (ի հակադրություն բանաստեղծական կամ այլաբանական փոփոխության) հավատացյալի բնության մեջ: Քրիստոնյան դառնում է նոր ստեղծված[42], որն ունի նոր ձգտում արդարությանը և նոր հակվածություն ճշմարիտ

39 Գործք 2.36, 20.21, Ա Կորնթացիների 2.8
40 Մատթեոս 7.23
41 Հիսուսի իշխանությանը հնազանդվելը պտղի (Մատթ. 7.16,20), Հիսուսի կամքը կատարելու (Մատթ. 7.21) և գործերի (Հակոբոս 2.14-16) հոմանիշն է:
42 Բ Կորնթացիների 5.17

աստվածապաշտությանը: Երկրորդը՝ նա, ով ապաշխարում է և հավատում է փրկությանը, դարձել է Աստծո ձեռքի գործը[43]: Փրկությունից հետո Աստծո շնորհքի շարունակական աշխատանքը հավաստիացնում է, որ յուրաքանչյուր անկեղծ հավատացյալ աստիճանական առաջընթաց կունենա սրբացման մեջ: Այս առաջընթացը տեղի չի ունենում հավատացյալի կամքի ուժի կամ նրա վճռականությունից դրդված գործերի արդյունքում, այլ շնորհիվ այն աշխատանքի, որն Աստված կատարում է նրա կյանքում: Նա, Ով սկսել է Իր բարի գործը դարձի ժամանակ, շարունակում է գործել մինչև վերջին օրը: Հավատացյալի կյանքի ամբողջ ընթացքում նրա առաջընթացը սրբացման մեջ ակնհայտ կլինի, քանի որ Աստված է, որ ներգործում է՝ «կամենալն էլ, անելն էլ»՝ ըստ Իր բարեհաճության (Փիլիպ. 2.13):

Հոգու վերածնող և սրբացնող աշխատանքի շնորհիվ յուրաքանչյուր հավատացյալ աճ կունենա Քրիստոսի իշխանությանը հնազանդվելու և Նրան նմանվելու մեջ: Սա չի նշանակում, որ բոլոր հավատացյալների աճը կլինի նույն արագությամբ կամ նույն չափով, ո՛չ էլ պահանջում է, որ հավատացյալը ցանկացած պահին ապացույց ներկայացնի իր առաջընթացի մասին: Նույնիսկ ամենից անկեղծ հավատացյալի կյանքում լինելու են մարմնավոր փուլեր՝ մտքում, խոսքում և գործերում: Սա նշանակում է, որ հավատացյալի կյանքի ամբողջ ընթացքում լինելու է տեսանելի աճ Քրիստոսի իշխանությանը հնազանդվելու, արդարության գործերի և պտղաբերության մեջ: «1869 թվականի Լոնդոնի հավատքի դավանանքը» և «Վեստմինստերի հավատքի դավանանքը» համաձայնում են 13-րդ գլխի 1-3-րդ պարբերություններում.

> *«Նրանք, ովքեր միացած են Քրիստոսին, արդյունավետ կերպով կանչված են և վերածնված են՝ ունենալով նոր սիրտ և նոր հոգի՝ ստեղծված իրենցում Քրիստոսի մահվան և հարության առաքինությամբ, նաև շարունակում են սրբացվել՝ իրականում և անձնապես, նույն առաքինությամբ, Նրա Խոսքով և իրենցում բնակվող Հոգով. մեղքի մարմնի իշխանությունը կործանված է, և դրանում գտնվող կրքերն է՛լ ավելի են թուլանում և մահացվում, և իրենք է՛լ ավելի են կենդանանում և զորանում բոլոր փրկարար շնորհներում՝ կատարելու համար ճշմարիտ սրբությունն ամբողջությամբ, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը:*
>
> *Այս սրբացումն ամբողջությամբ կատարվում է մարդու էության մեջ, սակայն անկատար է մնում այս կյանքում. նրա էության կողմերից յուրաքանչյուրում դեռևս բնակվում են ապականութ-*

43 Եփեսացիների 2.10

յան որոշ մնացորդներ, ինչից էլ առաջանում է շարունակական և անհաշտ պատերազմ. մարմինը ցանկանում է՝ հակառակ Հոգուն, իսկ Հոգին՝ հակառակ մարմնին:

Այս պատերազմում, թեև ապականության մնացորդը որոշ ժամանակով կարող է մեծ հաղթանակ տանել, Քրիստոսի սրբացնող Հոգուց տրվող ուժի շարունակական մատակարարմամբ վերածնված մասը հաղթում է. այնպես որ, սրբերն աճում են շնորհքով՝ կատարելով սրբությունը Աստծո ահով, ձգտելով երկնային կյանքին՝ ավետարանական հնազանդությամբ բոլոր պատվիրաններին, որոնք Քրիստոսը՝ որպես Գլուխ և Թագավոր, Իր Խոսքում սահմանել է նրանց համար»:

Եթե ինչ-ինչ պատճառով Վեստմինստերի և Լոնդոնի հավատքի դավանանքները բավական չէին՝ ցույց տալու համար, որ ճշմարիտ փրկարար հավատքի ապացույցը սրբացումը և գործերն են, մենք կարող ենք դիմել նաև հեղինակավոր «Բելգիական հավատքի դավանանքին» և դրա ակնառու մեկնություններին 22-րդ և 24-րդ պարբերություններում: Այստեղ կրկին տեսնում ենք միայն հավատքով փրկվելու վարդապետության համաձայնությունը Սուրբ գրքի պարզ ուսմունքին, որ փրկարար հավատքը վկայվում է գործերով.

«Այդ իսկ պատճառով, ասելը, որ Քրիստոսը բավական չէ, այլ որ անհրաժեշտ է ևս ինչ-որ բան, անասելի հայհոյություն է Աստծո դեմ, քանի որ դրանից հետևում է, որ Հիսուս Քրիստոսը միայն կես Փրկիչ է... Եվ այդ պատճառով, մենք արդարացիորեն ասում ենք Պողոսի հետ, որ մենք արդարացված ենք «միայն հավատքով» կամ հավատքով՝ «առանց օրենքի գործերի» (Հռոմեացիների 3.28):

Մենք հավատում ենք, որ այս ճշմարիտ հավատքը, որն առաջանում է մարդու ներսում Աստծո Խոսքը լսելով և Սուրբ Հոգու աշխատանքով, վերածնում է նրան և դարձնում «նոր ստեղծված» (Բ Կորնթացիների 5.17)՝ դրդելով նրան ապրել «կյանքի նորոգության» մեջ (Հռոմեացիների 6.4) և ազատելով նրան մեղքի ստրկությունից... Ուրեմն, անհնար է, որ այս սուրբ հավատքն անպտուղ լինի մարդու մեջ, քանի որ մենք չենք խոսում դատարկ հավատքի մասին, այլ՝ այնպիսի հավատքի, որը Սուրբ գիրքն անվանում է «հավատք, որ գործում է սիրով» (Գաղատացիների 5.6), որն առաջնորդում է մարդուն ինքնուրույն անելու այն գործերը, որոնք Աստված պատվիրել է Իր Խոսքում»:

Փրկությունը շնորհքով է՝ միայն հավատքի միջոցով, սակայն փրկության բնույթը երաշխավորում է, որ փրկարար հավատքը կունենա իրական և գործնական ապացույցներ: Այսպիսով, ովքեր ճշմարտա-

պես հավատացել են Քրիստոսին՝ փրկության համար, կարող են ստանալ իրենց փրկության ավելի մեծ հավաստիացումը՝ ոչ միայն քննելով իրենց դարձի փորձառությունը Սուրբ գրքի լույսի ներքո, այլև հիմնավորապես քննելով իրենց կյանքը իրենց դարձից հետո: Թեև բոլոր հավատացյալները ենթակա են բազմաթիվ ձախողումների և կարող են տեղի տալ նույնիսկ ամենափոքր գայթակղությանը, նրանց վճռականությունը՝ շարունակելու իրենց հավատքի կյանքը, և նրանց աստիճանական ու առաջադիմական սրբացումը փրկության մեծ ապացույցներ են և հաստատուն հիմք են հավաստիացման համար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

Ստուգե՛ք ձեզ

«Փորձե՛ք ձեզ, թե արդյո՞ք հավատքի մեջ եք: Ստուգե՛ք ձեզ: Թե՞ դուք չգիտեք ձեզ, որ Հիսուս Քրիստոսը ձեզանում է, եթե միայն դուք այն չեք, ինչ պետք է լինեք»:

– Բ Կորնթացիների 13.5 (NKJV)

«Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ, որ գիտենաք, թե հավիտենական կյանք ունեք»:

– Ա Հովհաննես 5.13

Այժմ կդիտարկենք կարևորագույն վարդապետություններից մեկը հավատացյալի և Աստծո փոխհարաբերության վերաբերյալ՝ հավաստիացումը: Ինչի՞ հիման վրա հավատացյալը հավաստիացում ունի, որ իր մեղքերը ներվել են, և որ ինքը հաշտվել է Աստծո հետ:

Բոլոր ճշմարիտ քրիստոնյաները գիտակցում են, որ փրկությունը Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի՝ Նրա աստվածության, մարմնավորման, անմեղանչական կյանքի, քավչարար զոհի, մեռելներից հարություն առնելու և Աստծո աջ կողմը համբարձվելու հանդեպ հավատքի արդյունքն է: Այնուամենայնիվ, ինչպե՞ս ենք իմանում, որ փրկարար հավատք ունենք[44], և որ մենք պարզապես խաբված չենք կեղծ հավատքով: Չէ՞ որ Սուրբ գիրքը լի է խիստ և լուրջ զգուշացումներով նրանց դեմ, ովքեր դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն ուրանում են Նրան իրենց գործերով. որոնք վճռականորեն դավանում են Նրա իշխանությունը, սակայն մերժում են ստանում դատաստանի օրը. որոնք հավատում են, որ գառներ են, սակայն համարվում են այծերի հետ և ուղարկվում հավիտենական պատժի[45]: Սարսափեցնող առակը հարսանեկան խնջույքի մասին, որով Հիսուսը

44 Հռոմեացիների 1.16, 10.10, Բ Տիմոթեոս 3.15, Ա Պետրոս 1.5
45 Մատթեոս 7.21-23, 25.41-46, Տիտոս 1.16

հիշեցնում է Իր ունկնդիրներին, որ «շատերն են կանչված, բայց քչերը՝ ընտրված», պատմում է մի հրավիրված հյուրի մասին, որն անպատրաստ ժամանեց: Նա պապանձվեց՝ երես առ երես հանդիպելով թագավորին, ինչից հետո, կապելով նրա ձեռքերն ու ոտքերը, նրան նետեցին դրսի խավարը, որտեղ լաց և ատամների կրճտոց է[46]: Փրկությունը միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով է, բայց որտեղի՞ց ենք իմանում, որ փրկարար հավատքը, որ պահանջվում է մեզնից, հենց այն հավատքն է, որը մենք ունենք: Փրկությունը տրվում է հավատացողներին, բայց ինչպե՞ս իմանանք, որ ճշմարտապես հավատում ենք:

ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Կորնթոսի եկեղեցին անսովոր կերպով օրհնված էր: Պողոս առաքյալի խոստովանությամբ, նրանք ամեն բանի մեջ հարստացած էին՝ ամեն խոսքով և գիտությամբ, և չունեին ոչ մի շնորհքի կամ պարգևի պակասություն[47]: Այնուամենայնիվ, այդ եկեղեցում նաև մեծ խնդիրներ կային՝ երկպառակություններ եկեղեցու անդամների միջև, նախանձ և կռիվներ, մեծամտություն և հպարտություն, անբարոյություն, դատական հայցեր, աշխարհիկություն, ազատությունների չարաշահում, անկարգություն հավաքույթների ընթացքում և գրեթե հարության վարդապետության ժխտում[48]: Այս ամենի լույսի ներքո առաքյալն այդ եկեղեցական համայնքը խստորեն հանդիմանելու լուրջ պատճառներ ուներ. «Եվ ես, եղբայրնե՛ր, չկարողացա ձեզ հետ խոսել՝ ինչպես հոգևորների հետ, այլ՝ ինչպես մարմնավորների հետ, ինչպես մանուկների հետ Քրիստոսում: Կաթ խմեցրի ձեզ, և ոչ թե կերակուր, որովհետև տակավին չէիք կարող, այլ հիմա էլ դեռ չեք կարող: Որովհետև տակավին մարմնավոր եք, որովհետև տակավին նախանձ և կռիվ և բաժանումներ կան ձեզանում: Չէ՞ որ մարմնավոր եք և մարդկորեն եք վարվում»[49]:

Մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք Պողոսի կողմից ընտրված բառերին: Նա չի փայփայում կորնթացիներին, այլ հանդիմանում է՝ օգտագործելով հնարավորինս խիստ խոսքեր: Լավագույն դեպքում, նա մեղադրում է նրանց մանուկ քրիստոնյա լինելու մեջ, որոնք դեռ անկարող են հաստատ կերակուր, այսինքն՝ ողջամիտ ուսմունք ստանալ և յուրացնել: Վատագույն դեպքում, նա խոսում է նրանց հետ՝ որպես մարմնավոր կամ չվերածնված մարդկանց, որոնք չունեն Աստծո Հոգուն և վարվում են հեթանոսների պես[50]: Հաշվի առնելով կորնթացիների

46 Մատթեոս 22.8-13
47 Ա Կորնթացիների 1.4-7
48 Ա Կորնթացիների 1.10, 3.3, 4.7,8, 5.1, 6.1-6, 8.1-9.27, 11.1-14.40, 15.1-58
49 Ա Կորնթացիների 3.1-3
50 Եփեսացիների 4.17-19

անաստված վարքը՝ Պողոսը պարզապես առաջադրում էր երկու հավանական տարբերակ: Առաջինն այն էր, որ կորնթացիները ոչ հասուն քրիստոնյաներ էին, որոնց անհրաժեշտ էր և՛ հանդիմանություն, և՛ խրատ՝ վերադարձնելու նրանց դեպի ճշմարիտ աստվածապաշտության ուղին: Երկրորդն այն էր, որ այդ եկեղեցու անդամների գոնե մի մասը դեռ դարձի եկած չէր: Նրանք «մարդկորեն» էին վարվում, քանի որ հետևում էին իրենց մարմնի կրքերին, կատարում էին մարմնի ցանկությունները և չէին կարողանում ընդունել Աստծո Հոգու իրողությունները[51]: Միայն ժամանակը և նրանց պատշաճ արձագանքը Պողոսի հանդիմանությանը ցույց կտար նրանց հավատքի իսկությունը:

Այստեղ տեսնում ենք հավատարիմ, լավ պատրաստված ծառայողի գործելաոճը, որը բախվել է իր հավատքը դավանող մարդկանց, որոնց ապրելակերպը հակասում է իրենց դավանությանը: Քանի որ նա ամենագետ չէ, պետք է որոշի ճիշտը հետևյալ երկու հավանական տարբերակից: Առաջինը՝ այդ մարդիկ, ովքեր դավանում էին իրենց հավատքը, ոչ հասուն կամ մոլորված հավատացյալներ են, որոնք կարող են և կվերականգնվեն Աստծո նախախնամությամբ, Հոգու օգնությամբ և Աստծո Խոսքի պատշաճ մատակարարմամբ՝ սովորեցնելու, հանդիմանելու, ուղղելու և խրատելու միջոցով[52]: Երկրորդը՝ այդ մարդիկ, ովքեր դավանում էին իրենց հավատքը, դեռևս դարձի եկած չեն: Նրանք աստվածապաշտության կերպարանք ունեն, սակայն ուրանում են զորությունը. նրանք դավանում են, որ հավատում են Քրիստոսին, սակայն ուրանում են Նրան իրենց գործերով[53]: Այս ծառայողի հանդիմանության արդյունքում այդ մարդիկ կա՛մ կապաշխարեն և փրկարար հավատք կստանան, կա՛մ կանտեսեն Նրա զգուշացումները և կշարունակեն մնալ իրենց մեղքի մեջ, կա՛մ որոշ ժամանակով կնորոգեն իրենց ճանապարհները, իսկ հետո կվերադառնան իրենց հիմարությանը, ինչպես որ «շունը վերադառնում է դեպի իր փսխածը, և լվացված խոզը՝ թավալվելու ցեխի մեջ» (Առակ. 26.11, Բ Պետր. 2.22): Ահա թե ինչպես են տարբերվում ճշմարիտ և կեղծ հավատացյալները:

Մինչև շարունակելը, պետք է ևս մեկ անգամ պարզորեն նշենք, որ ճշմարիտ քրիստոնյան լիովին սրբացված չէ այս կյանքում: Մեղավոր մարմնական բնությունը լիովին հեռացված չի լինի նրա կյանքից մինչև նրա վերջնական փառավորումը Երկնքում[54]: Նույնիսկ ամենից նվիրված հավատացյալի կյանքում մշտապես լինելու է շարունակական պայքար մեղքի և բարոյական ձախողման դեմ, ինչպես նաև ապաշխարության, խոստո-

51 Ա Կորնթացիների 2.14, Եփեսացիների 2.3
52 Բ Տիմոթեոս 3.16
53 Բ Տիմոթեոս 3.5, Տիտոս 1.16
54 Գաղատացիների 5.17

վանության և վերականգնման կարիք[55]: Այնուամենայնիվ, ամենատկար անկեղծ հավատացյալը, որը պայքարում է մեղքի դեմ և միայն աննշան առաջադիմություն ունի սրբացման մեջ, մեծապես տարբերվում է այն կեղծ հավատացյալից, որը դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն ապրում է համարյա թե մշտական աշխարհիկ վիճակում՝ գրեթե չունենալով խղճի խայթ, զղջում՝ մեղքի պատճառով, և սրտանց խոստովանության կարիք: Ճշմարիտ և կեղծ հավատացյալների միջև այս ակնհայտ տարբերությունների պատճառով է, որ Պողոս առաքյալը տալիս է հետևյալ հեղինակավոր ցուցումը մոլորյալ կորնթացիներին՝ նրանց ուղղված երկրորդ նամակի վերջում. «Փորձե՛ք ձեզ, թե արդյո՞ք հավատքի մեջ եք: Ստուգե՛ք ձեզ: Թե՞ դուք չգիտեք ձեզ, որ Հիսուս Քրիստոսը ձեզանում է, եթե միայն դուք այն չեք, ինչ պետք է լինեք» (Բ Կորնթ. 13.5, NKJV):

Կորնթոսի եկեղեցուն ուղղված Պողոսի նամակներից տեսնում ենք, որ նրանց միջև գտնվող սուտ առաքյալները և մարգարեները մշտապես քննադատական ստուգման էին ենթարկում Պողոսի կյանքը և ծառայությունը՝ կասկած նետելով նրա առաքելական կոչման վրա և նույնիսկ վիճարկելով նրա հավատքի անկեղծությունը[56]: Պողոսը վերահաստատավորում է իր դեմ ուղղված քննադատությունը՝ պատվիրելով իր հակառակորդներին և նրանց ունկնդիրներին փորձել *իրենց* և ստուգել *իրենց*[57]՝ իրենց դավանության իսկության վերաբերյալ, քանի որ նրանց կյանքը չէր համապատասխանում իրենց հավատքի հռչակմանը և ենթադրյալ նույնացմանը Քրիստոսի հետ:

Պողոսի հորդորը Կորնթոսի դավանող քրիստոնյաներին իրենց ստուգելու և դարձի վկայություններ փնտրելու մասին ապացուցում է, որ Աստծո փրկության աշխատանքը հավատացյալի կյանքում չի հանգեցնում միայն արդարացման, այլև իրական, գործնական և նկատելի սրբացման: Աստված ոչ միայն ազատում է հավատացյալին մեղքի դատապարտությունից, այլև շարունակում է աշխատել նրա ներսում, որպեսզի ազատի մեղքի իշխանությունից: Հիսուս Քրիստոսի ճշմարտապես հավատացող յուրաքանչյուր մարդ վերածնվել է Սուրբ Հոգով և դարձել է նոր ստեղծված՝ նոր ձգտումներով Աստծո և Նրա արդարության հանդեպ: Ավելին՝ այն Հոգին, որը վերածնում է հավատացյալին, շարունակում է գործել՝ նրան սրբացնելու համար: Հավատացյալը դարձել է Աստծո ստեղծագործությունը, և Աստված, Ով բարի գործ է սկսել նրանում, կկատարի այն[58]:

55 Ա Հովհաննես 1.8-10

56 Ա Կորնթացիների 9.1-3, Բ Կորնթացիների 10.1-12.21, 13.3

57 Հունարենում այս պնդումը շատ արտահայտիչ է: Պողոսն օգտագործում է *«իուտոու»* անդրադարձ դերանունը երեք անգամ՝ փորձե՛ք *ձեզ*, ստուգե՛ք *ձեզ*, ընդունե՛ք սա *ձեր* մասին:

58 Եփեսացիների 2.10, Փիլիպեցիների 1.6

Անչափ կարևոր է, որ ժամանակակից Ավետարանական շարժումը վերադառնա այս ճշմարտությանը: Բազմաթիվ դավանող քրիստոնյաներ Արևմուտքում և աշխարհով մեկ գրեթե մշտապես աշխարհիկ, մարմնավոր և անպտուղ վիճակում են: Այնուամենայնիվ, նրանք հանդարտ նստած են Սիոնում՝ մեծագույն հավաստիացմամբ իրենց փրկության մեջ և առանց, նույնիսկ, աննշան վախի, որ իրենց հավատքը կարող է զուր լինել: Շատերն իրականում նույնիսկ չեն հավատում և չեն փնտրում Քրիստոսին, այլ վստահում են մի որոշման, որը կայացրել են տարիներ առաջ, և որը գրեթե չունի տեսանելի ազդեցություն իրենց կյանքում: Այս իրավիճակն ավելի է բարդանում այն բանով, որ բարի մտադրություններ ունեցող ծառայողները, որոնք, թվում է, աննշան պատկերացում ունեն փրկության բնույթի և զորության մասին, հավանություն են տալիս այդ վտանգավոր վիճակում գտնվող մարդկանց: Այդ ծառայողները դարձել են Երեմիայի օրերի մարգարեների պես. «Նրանք նույնպես թեթևորեն են բժշկել Իմ ժողովրդի վերքը՝ ասելով. «Խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն», երբ խաղաղություն չկա» (Երեմ. 6.14, NKJV):

Արդյո՞ք գիտակցում ենք, որ մեր նորադարձներից շատերն անջուր ամպեր և պտղակորույս ծառեր են՝ երկու անգամ մահացած և արմատախիլ եղած[59]: Նրանք փափագում են Տիրոջ օրվան՝ մտածելով, որ այն հեշտ է լինելու, բայց նրանց համար այն լինելու է խավարի և անխուսափելի դատաստանի օր՝ նման այն բանին, որ մարդը փախչում է առյուծից և հանդիպում է արջի, կամ ձեռքը հենում է իր տան պատին և թունավոր օձի խայթոց է ստանում[60]: Նրանք վստահ են, նույնիսկ անսասան են, որ իրենց առատությամբ տրվելու է մտնել մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հավիտենական Թագավորությունը[61], բայց նրանք վտարվելու են հետևյալ խոսքերով. «Երբեք ձեզ չե՛մ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23):

Առյուծը մռնչա՛ց: Մի՞թե մենք չենք վախենա և չենք մարգարեանա[62]: Մի՞թե դետերը փող չեն հնչեցնի և չեն զգուշացնի անօրեններին[63]: Մի՞թե մենք թույլ կտանք, որ նրանք հանգիստ նստեն Սիոնում, երբ վերահաս դատաստանը երևում է դիտանոցից: Մի՞թե մենք չպետք է գոչենք նրանց.

> *«Վե՛ր կաց, ո՛վ քնած, և վե՛ր կանգնիր մեռելներից, և Քրիստոսը կլուսավորի քեզ» (Եփես. 5.14):*

59 Հուդա 12
60 Ամովս 5.18-20
61 Բ Պետրոս 1.11
62 Ամովս 3.8
63 Եզեկիել 3.17-21, 33.1-9

«Փորձե՛ք ձեզ, թե արդյո՞ք հավատքի մեջ եք: Ստուգե՛ք ձեզ» (Բ Կորնթ. 13.5):

«Ձեր կոչումը և ընտրությունը հաստա՛տ արեք» (Բ Պետր. 1.10):

Հասկացե՛ք, որ սրանով կոչ չեմ անում ծառայողներին և աշխարհիկ հավատացյալներին մարդկանց դատավորներ դառնալ: Ես հորդորում եմ, որ հրաժարվենք հավատալ մակերեսային և անզոր ավետարանի, որը հավաստիացնում է տալիս միլիոնավոր մարդկանց, և որի պատճառով նրանք ընդդիմանում են աստվածաշնչյան Ավետարանին՝ կնքելով իրենց հավիտենական դատապարտությունը, և ես հորդորում եմ, որ հրաժարվենք ազդարարել այն: Մենք պետք է սովորենք սփոփանք և հավաստիացում տալ ամենաթույլ սուրբին, որը կոտրված է իր բազում մեղքերի պատճառով, բայց մենք նույնպես պետք է սովորենք զգուշացնել կեղծ հավատացյալին, որի կյանքն ամուլ և անպտուղ ծառ է, և որի կենսառճը հակասում է Ավետարանին:

Արևմուտքում Ավետարանական եկեղեցուն պատած ախտերի մեծ մասի բուժումը վերադարձն է սուրբգրային տեսանկյանը փրկության մասին, որը և՛ զորավոր է, և՛ սքանչելի: Մենք պետք է մերժենք այն մարդկանց, որոնք ձգտում են փրկել եկեղեցին՝ ներկայացնելով նորաարական մարտավարություններ և առաջադեմ մեթոդաբանություններ, որոնք ավելի են հեռացնելու մեզ Սուրբ գրքից. «Օրենքին ու վկայությանը դիմեք, եթե նրանք չխոսեն այս խոսքի համեմատ, արշալույս (կամ՝ «լույս») չունեն» (Եսայի 8.20): Եկեք նայենք այն վեմին, որից մենք կտրված ենք, և այն հորի գուբին, որից փորված ենք[64]: Եկեք կանգնենք ճանապարհին և տեսնենք, և հարցնենք վաղեմի ճանապարհներին, թե արդյոք ո՞րն է լավ ուղին, և գնանք դրանով: Այդ ժամանակ մենք հանգիստ կգտնենք մեր անձերի համար, նաև այն մարդկանց համար, որոնք վստահվել են մեզ[65]: Այդ ժամանակ կվերականգնենք վաղեմի ավերակները և կկանգնեցնենք շատ սերունդների առաջվա փլատակները[66]:

Հիշենք այն ծառայողներին, որոնք եղել են մեզնից առաջ և մեծ հավիտենական հաջողություն և օգուտ են բերել եկեղեցուն, ինչպիսիք են Ջորջ Ուայթֆիլդը, Ջոնաթան Էդվարդսը, Ջոզեֆ Ալլեյնը, Չարլզ Սփերջենը, Մարտին Լլոյդ-Ջոնսը և Է. Ու. Թոզերը: Ճշմարտության օրենք կար նրանց բերանում, և անիրավություն չէր գտնվում նրանց շուրթերին: Նրանք խաղաղությամբ և ուղղությամբ էին վարվում Աստծո հետ

64 Եսայի 51.1
65 Երեմիա 6.16
66 Եսայի 61.4

և շատերին դարձնում էին անօրինությունից[67]: Եկեք ընդունենք նրանց պարզ ավետարանչական մեթոդաբանությունը: Նրանք քարոզում էին Ավետարանը, ապաշխարության և հավատքի էին կանչում իրենց ունկնդիրներին, խրախուսում էին ամենատկար սրբերին Աստծո սիրո մեջ և իրենց Տիրոջ պես, զգուշացնում էին դատարկ դավանություն ունեցողներին, որ ոչ թե նա, ով Տեր է անվանում Հիսուսին, կմտնի Երկնքի թագավորություն, այլ նա, ով կատարում է երկնային Հոր կամքը[68]: Նրանք լիովին հավատարիմ էին այն վարդապետությանը, որ փրկությունը միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով է, բայց նրանք նույնպես հասկանում և քարոզում էին, որ փրկարար շնորհքը նաև սրբացնում է, և որ անկարելի է ստանալ ճշմարիտ հավաստիացում փրկության մեջ՝ առանց սեփական անձը Սուրբ գրքի լույսի ներքո ստուգելու:

ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԸ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇԸ

Սուրբ գիրքը պատվիրում է մեզ ստուգել ինքներս մեզ՝ պարզելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ ենք, փորձել ինքներս մեզ՝ հասկանալու համար, թե արդյո՞ք իրականում քրիստոնյա ենք[69]: Այնուամենայնիվ, այս հորդորն առաջացնում է մի անչափ կարևոր հարց. ո՞րն է այն հեղինակավոր չափանիշը, որով մենք պետք է գնահատենք մեր հավատքի իսկությունը: Ո՞ր հաստատ կանոնի համաձայն կարող ենք ստուգել մեր կյանքը: Ո՞վ կարող է դատել մեզ և օգնել, որ քննենք մեր գործը:

Հովհաննես առաքյալը զգուշացնում է մեզ, որ մենք չպետք է պարզապես վստահենք մեր սրտի մղումներին նման հարցերում, քանի որ մեր սիրտը կարող է սխալմամբ հավանություն տալ կամ դատապարտել մեզ[70]: Պողոս առաքյալը խրատում է մեզ, որ մեր չափանիշներով չափվելը կամ մեր շփման շրջանակում գտնվող մարդկանց հետ համեմատվելն իմաստուն չէ[71]: Եթե մենք չափանիշ համարենք Քրիստոսին դավանող որևէ մարմնավոր մարդու, կարող ենք խաբվել՝ կեղծ հավաստիացում ստանալով: Մյուս կողմից, եթե մենք համեմատենք մեզ մեր եկեղեցական համայնքի ամենահասուն քրիստոնյայի հետ, կարող ենք կեղծ դատապարտություն ընդունել: Ավելին, թեև այս հարցում այլ մարդկանց խորհուրդը հարցնելը իմաստուն որոշում է, մենք չենք կարող փրկության մեջ մեր հավաստիացումը հիմնավորել միայն մարդկանց կարծիքների վրա: Ոմանք կարող են կեղծ հավաստիացում տալ

67 Մաղաքիա 2.6
68 Մատթեոս 7.21
69 Բ Կորնթացիների 13.5
70 Ա Հովհաննես 3.19,20
71 Բ Կորնթացիների 10.12

մեզ՝ փրկության վերաբերյալ իրենց ցածր կարծիքի պատճառով[72], իսկ մյուսները կարող են կեղծ դատապարտություն բերել մեզ վրա՝ պահանջելով ապացույցներ, որոնք գերազանցում են Սուրբ գրքի պայմանները, և դնելով ծանր բեռներ մեզ վրա, որոնք իրենք էլ չեն կամենում և չեն կարող կրել[73]: Ի՞նչը, այդ դեպքում, պետք է լինի մեր չափանիշը: Ո՞ր չափանիշի համաձայն պետք է գնահատենք մեր հավատքի անկեղծությունը և մեր դարձի գալու իսկությունը:

Մենք կարող ենք շնորհակալ լինել, որ այն չափանիշը, որը փնտրում ենք, անհուսորեն թաքցված չէ Սուրբ գրքում, և ո՛չ էլ անըմբռնելի առեղծված է, որը հասանելի է միայն մեծագույն մտքերին: Ընդհակառակը, Աստվածաշունչը պարզ և հստակ ներկայացնում է այն: Ճշմարիտ դարձի չափանիշը կամ ստուգման ձևն ամենից պարզ, հակիրճ և ամբողջական ներկայացված է մեզ Հովհաննես առաքյալի Առաջին թղթում:

Հովհաննեսի Ավետարանի և Հովհաննեսի Առաջին թղթի ամենից զարմանալի և օգտակար կողմերից մեկն այն է, որ պարզորեն նշված է դրանց գրվելու նպատակը.

> *«Հիսուսն ուրիշ էլ շատ նշաններ արեց Իր աշակերտների առջև, որ գրված չեն այս գրքում: Բայց սրանք գրվեցին, որ հավատաք, թե Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծո Որդին, և որ հավատալով կյանք ունենաք Նրա անունով» (Հովհ. 20.30,31, շեղագիրն ավելացված է):*

> *«Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ, որ գիտենաք, թե հավիտենական կյանք ունեք» (Ա Հովհ. 5.13, շեղագիրն ավելացված է):*

Հովհաննեսը գրեց իր Ավետարանը՝ ներկայացնելով Աստվածաշնչի գրքերի ոգեշնչվածությունը և միասնականությունը, որպեսզի իր ընթերցողները հավատան Հիսուս Քրիստոսին և հավիտենական կյանք ստանան: Համապատասխանաբար, նա գրեց իր Առաջին թուղթը, որպեսզի ովքեր ճշմարտապես հավատացել են, լիարժեք հավաստիացում ունենան, որ հավիտենական կյանքը շնորհվել է իրենց:

Իր Առաջին թղթում ամբողջությամբ Հովհաննեսը ներկայացնում է մի շարք ստուգումներ, որոնցով ճշմարիտ հավատացյալը կարող է քննել իր կյանքը, որպեսզի ապացուցի իր հավատքի դավանանքի իսկությունը և փրկության հավաստիացում ստանա՝ հիմնվելով Աստծո անսխալական Խոսքի վրա: Այնուամենայնիվ, այս թուղթը ծառայում է ևս մեկ նպատակի. այն բացահայտում է անհավատի կեղծ հավաստիացումը՝

72 Երեմիա 6.14,15
73 Մատթեոս 23.4

այն մարդու, որը դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն չունի ճշմարիտ դարձի նշաններից ոչ մեկը: Մի քանի հեղինակավոր ծառայողներ սատարում են այս տեսանկյունը Հովհաննեսի թղթի նպատակի վերաբերյալ: Ձոն Ռ. Վ. Սթոթը գրում է. «Ամբողջ այս թղթում Հովհաննեսը ներկայացնում էր [իր ընթերցողին] չափանիշներ (վարդապետական, բարոյական, հասարակական), որոնցով հնարավոր է ստուգել սեփական անձը և ուրիշներին: Նրա նպատակն է հաստատել նրանց հավաստիացումը... Ի մի բերելով նրա Ավետարանի և Առաջին թղթի նպատակները՝ Հովհաննեսի նպատակը բաղկացած է չորս փուլից՝ որպեսզի իր ընթերցողները լսեն, լսելով հավատան, հավատալով ապրեն և ապրելով իմանան»: Դ. Էդմունդ Հեյբերտն անում է հետևյալ դիտարկումը. «Հեղինակի գործնական նպատակն ակնհայտ է: Հովհաննեսը ցանկանում է հաստատել նրանց իրենց փրկության հավաստիացման մեջ... Նա ներկայացնում է մի շարք ստուգումներ, որոնցով նրանք կարող են քննել իրենց հավատքը և վարքը և հաստատել իրենց սրտերը... Այն հավաստիացումը, որը Հովհաննեսը նկատի ունի, ցանկալին իրական համարելու արդյունք չէ. այն անխախտ կերպով հիմնված է այս թղթում ներկայացված բազմաթիվ ապացույցների վրա»: Վերջապես, Կոլին Գ. Կրուզը հաստատում է.

> *«Այս նամակը գրելու հեղինակի գլխավոր նպատակը նրանց հավաստիացմանը նեցուկ տալն էր՝ ընդդիմանալով երկպառակություն սերմանող սուտ ուսուցիչների ուսմունքներին: Հեղինակը ձգտում էր անել սա՝ նշելով, որ իր ընթերցողներն էին, որ ճշմարտապես ընդունել էին հավիտենական կյանքը և ճշմարտապես ճանաչում էին Աստծուն, ոչ թե երկպառակություն սերմանող սուտ ուսուցիչները: Իր ընթերցողներն էին, որ արտահայտում էին հավիտենական կյանք ունեցող մարդկանց ճշմարիտ նշանները. նրանք էին, որ հարատևում էին այն ուսմունքների մեջ, որոնք հենց սկզբում ազդարարվել էին ականատեսներին. նրանք էին, որ շարունակում էին հնազանդվել Տիրոջ պատվիրաններին. և նրանք էին, որ սիրում էին Աստծո զավակներին, ինչը հավիտենական կյանք ունեցող մարդկանց կարևորագույն նշանն է»*[74]:

Հովհաննեսը տրամադրում է իր ընթերցողներին բազմաթիվ վարդապետական չափանիշներ, որոնցով նրանք կարող են ստուգել, թե

74 Ձոն Ռ. Վ. Սթոթ. *«Հովհաննեսի թղթերը. ներածություն և մեկնություն»* (Լոնդոն, «Tyndale», 1964թ.), էջեր 184–85, Դ. Էդմոնդ Հեյբերտ. *«Հովհաննեսի թղթերը. բացատրական մեկնություն»* (Գրինվիլ, Հրվ. Կարոլինա, «Bob Jones University Press», 1991թ.), էջեր 19, 52, և Կոլին Գ. Կրուզ. *«Հովհաննեսի նամակները»* (Գրանդ Ռեփիդս, «Eerdmans», 2000թ.), էջեր 188–189:

արդյո՞ք իրենց փրկությունը վավերական է: Նա ձգտում է հաստատել նրանց հավաստիացումը փրկության մեջ՝ ոչ թե ցանկալին իրական համարելով, կրոնական զգացմունքներով կամ ընդամենը հավատքի դավանանքով, այլ նրանց կյանքում քրիստոնեության իրական նշանների ցուցադրման կամ արտահայտման հիման վրա: Համաձայն Հովհաննեսի վարդապետության՝ ովքեր դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, կարող են աստվածաշնչյան հավաստիացում ունենալ փրկության մեջ՝ այն չափով միայն, որով իրենց կյանքը համապատասխանում է այս առաջին նամակում իր ներկայացրած ստուգումներին:

Որպես ամփոփում, կարևոր է, որ հիշենք, որ Հովհաննեսը չի ներկայացնում դարձի գալու միջոցները, այլ դրա հետևանքները: Մենք կարող ենք աստվածաշնչյան հավաստիացում ունենալ փրկության մեջ՝ այն չափով, որով Հովհաննեսի թղթում ներկայացված ապացույցներն իրական են մեր կյանքում: Եթե մեզ ստուգելուց հետո պարզենք, որ դրանք բացակայում են մեր կյանքում, մենք պետք է մեծապես մտահոգվենք: Եթե մեր ապրելակերպը լրջորեն հակադրվում է ճշմարիտ հավատացյալի Հովհաննեսի նկարագրությանը, մենք պետք է լրջորեն դիտարկենք երկու հավանական տարբերակ: Առաջինը՝ մենք Աստծո ճշմարիտ զավակ ենք, որը շեղվել է Նրա կամքից և լրջորեն ապաշխարելու կարիք ունի: Եթե մենք ճշմարտապես ապաշխարենք և վերադառնանք Աստծո կամքը կատարելուն, մեծ հույս կա, որ մենք ճշմարտապես հավատացել ենք և հավիտենական կյանք ունենք: Երկրորդը՝ մենք երբեք ճշմարտապես չենք ճանաչել Տիրոջը, և մեր հավատքն ու դավանությունը կեղծ էին հենց սկզբից: Այս դեպքում պետք է փնտրենք Տիրոջը և կանչենք Նրան: Եթե իսկապես ապաշխարենք, մենք կարող ենք փնտրել Նրան մեծ վստահությամբ՝ իմանալով, որ Նա չի անարգի կոտրված և փշրված հոգին, որ Նա ոչ մի դեպքում դուրս չի անի Իր մոտ եկողին, որ ամեն Տիրոջ անունը կանչողը կփրկվի, և որ Նրան հավատացողը չի ամաչի[75]:

Հաջորդ գլուխներում կբացատրենք և մանրամասն կներկայացնենք այս ստուգումներից յուրաքանչյուրը՝ այն հաջորդականությամբ, որով դրանք հանդիպում են Հովհաննեսի նամակում: Մենք խրախուսում ենք ընթերցողին ուշադրությամբ և աղոթքով ուսումնասիրել յուրաքանչյուր գլուխը: Սուրբ գիրքը կոչ է անում, որ ստուգենք ինքներս մեզ՝ որոշելու համար, թե արդյո՞ք ճշմարիտ քրիստոնյա ենք[76]: Հաջորդ գլուխներում մենք կհնազանդվենք այս պատվիրանին:

75 Սաղմոս 51.17, Հովհաննես 6.37, Հռոմեացիների 10.11,13
76 Բ Կորնթացիների 13.5

ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

Վարվել Աստծո հայտնության մեջ

«Եվ սա է այն ավետիքը, որ Նրանից լսեցինք և պատմում ենք ձեզ, թե Աստված լույս է, և ոչ մի խավար չկա Նրանում: Եթե ասենք, թե հաղորդություն ունենք Նրա հետ, և խավարի մեջ ման գանք, սուտ ենք ասում և ճշմարտությունը չենք անում: Բայց եթե լույսի մեջ ման գանք, ինչպես Նա է լույսի մեջ, հաղորդություն ունենք իրար հետ, և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը մեզ սրբում է ամեն մեղքից»:

– Ա Հովհաննես 1.5-7

Հովհաննեսը գրեց իր Առաջին թուղթը հատուկ նպատակով՝ որպեսզի Հիսուս Քրիստոսին հավատացողները մեծ հավաստիացում ունենան, որ հավիտենական կյանքը պատկանում է իրենց[77]: Այս նպատակն իրագործելու համար, առաքյալը ներկայացրեց ճշմարիտ դարձի մի շարք ապացույցներ կամ էական հատկանիշներ, որոնցով կարող ենք ստուգել մեր կյանքը և մեր դարձի իսկությունը: Այս հատկանիշներից առաջինը կարելի է ամփոփել հետևյալ պնդմամբ.

Քրիստոնյան պետք է վարվի լույսի մեջ: Նրա ապրելակերպը պետք է համապատասխանի այն ամենին, ինչ Աստված հայտնել է մեզ Իր բնության և կամքի մասին:

ԱՍՏՎԱԾ ԼՈՒՅՍ Է

Առաջին Հովհաննես 1.5-ը սկսվում է անչափ կարևոր պնդմամբ. «Աստված լույս է, և ոչ մի խավար չկա Նրանում»: Հովհաննեսը հաճախ է օգտագործում «լույս» և «խավար» բառերն իր գրքերում[78], և անչափ կարևոր է, որ բացահայտենք այս բառերի նշանակությունն այս հատ-

77 Ա Հովհաննես 5.13

78 Կարդացե՛ք Հովհաննես 1.4,5, 3.19 և Ա Հովհաննես 2.8-10՝ որպես Հովհաննեսի Ավետարանում և թղթերում այս ընդհանուր թեմայի օրինակներ:

վածում: Առաջին հայացքից, մենք կարող ենք մտածել, որ Հովհաննեսի կողմից լույսի և խավարի հակադրումը հիմնականում վերաբերում է բարոյական հասկացությունների, այսինքն՝ բարու և չարի տարբերակմանը կամ սրբության և պղծության միջև գտնվող մեծ անդունդին: Այս մեկնությունը, անկասկած, համապատասխանում է այն ամենին, ինչ Աստվածաշունչը պատմում է մեզ Աստծո սրբության մասին: Այնուամենայնիվ, գրելով, որ Աստված լույս է, Հովհաննեսը ոչ միայն նկատի ունի Նրա բարոյական մաքրությունը, այլև՝ որ Նա Աստված է, Ով հայտնել է Իրեն: Սուրբ գրքի Աստված թաքնված չէ կամ խավար չէ. Նա լույս է: Նա հայտնել է Իրեն մարդկությանը՝ արարչագործության միջոցով, պատմության միջոցով և Սուրբ գրքի միջոցով, և հատկապես՝ Իր Որդի Հիսուս Քրիստոսի մարմնավորման և փրկարար աշխատանքի միջոցով:

Այս մեկնությունն ավելի ակնհայտ է դառնում, երբ դիտարկում ենք Հովհաննեսի Առաջին թղթի պատմական համատեքստը: Այն եկեղեցին կամ եկեղեցիները, որոնց Հովհաննեսը գրում էր, հայտնվել էին մի կեղծ ուսմունքի ազդեցության ներքո, որը հետագայում վերածվեց եկեղեցուն երբևէ ընդդիմացող մեծագույն հերձվածություններից մեկի՝ գնոստիցիզմի, որը հունական փիլիսոփայության, հրեական խորհրդապաշտության և քրիստոնեության խառնուրդ էր: Այն գաղտնուսական կրոն էր՝ բաղկացած առեղծվածներից, ծածուկ գիտելիքից և թաքնված աստծուց, որին կարող էին ճանաչել միայն այդ գաղտնի հասարակության նվիրյալները կամ վերին օղակների գերհոգևոր անդամները:

Պայքարելով այդ վտանգավոր և կործանարար հերձվածության դեմ՝ Հովհաննես առաքյալը բացատրում է եկեղեցուն, որ Աստված լույս է, և Նա հայտնել է Իրեն և Իր կամքը հավատացյալներին՝ առաքյալների վկայությամբ, որոնք մարմնավորման ականատեսներն էին, և Սուրբ Հոգու ուսուցմամբ, Որին ստացավ նրանցից յուրաքանչյուրը[79]: Աստված թաքնված չէ, ինչպես ենթադրում էին սուտ ուսուցիչները, ո՛չ էլ Նրա ճշմարտությունը մի քանի ինքնահռչակ գերառաքյալների բացառիկ սեփականությունն է: Աստված հայտնել է Իրեն և Իր կամքը նրան, ով հավատացել է Քրիստոսին և ծնվել է Աստծուց: Հովհաննեսն ազդեցիկ կերպով ներկայացնում է այս ճշմարտությունն իր եզրափակիչ փաստարկում, որը գտնվում է այս թղթի ամփոփման մեջ. «Եվ գիտենք, որ Աստծո Որդին եկավ և *մեզ միտք տվեց,* որ ճշմարիտը ճանաչենք, և ճշմարիտում ենք, այսինքն՝ Նրա որդի Հիսուս Քրիստոսում: Նա է ճշմարիտ Աստվածը և հավիտենական կյանքը» (Ա Հովհ. 5.20, շեղագիրն ավելացված է):

Հիմնվելով այն բանի վրա, ինչ գիտենք այս թղթի ներքին վկայութ-

79 Ա Հովհաննես 1.1-4, 2.20, 2.27

յան մասին, և այն պատմական միջավայրի մասին, որում այն գրված էր, մենք կարող ենք վստահաբար եզրակացնել հետևյալը. «Աստված լույս է» պնդումը վերաբերում է ոչ միայն Նրա անսխալական բարոյական բնությանը, այլև Նրա հարաբերությանը Հիսուս Քրիստոսում գտնվող յուրաքանչյուր հավատացյալի հետ և նրանց տրված Իր հայտնությանը: Աստված չի թաքցրել Իրեն Իր ժողովրդից, այլ ողորմածաբար և առատորեն հայտնել է նրանց թե՛ Իր բնությունը, թե՛ Իր կամքը: Նա տվել է մեզ հայտնություն Իր մասին՝ որպես Տիրոջ, Ով ողորմություն, իրավունք և արդարություն է անում այս երկրի վրա և հավանում է դրանք[80]: Նա հայտնել է մեզ այն բարին, որն Ինքը պահանջում է մեզնից[81]: Սրանում կատարվել է Երեմիայի մարգարեությունը նոր ուխտի վերաբերյալ. «Եվ այլևս մեկ մարդ իր ընկերոջը և մեկ մարդ իր եղբորը չպիտի սովորեցնի՝ ասելով, թե «Ճանաչե՛ք Տիրոջը», որովհետև նրանք ամենքը պիտի ճանաչեն Ինձ՝ նրանց փոքրերից մինչև նրանց մեծերը,- ասում է Տերը,- որովհետև Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը, և նրանց մեղքերն այլևս չպիտի հիշեմ» (Երեմ. 31.34):

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԸ

Այժմ կուսումնասիրենք «հաղորդություն» բառը և կփորձենք հասկանալ դրա պատշաճ իմաստը: Այս բառը թարգմանված է հունարեն «կոինոնի՛ա» գոյականից, որը սովորաբար նշանակում է հարաբերություն, շփում, հաղորդություն կամ համատեղ մասնակցություն: Այս թղթի համատեքստում, Աստծո հետ հաղորդություն ունեցող մարդը հավատում է Նրան և անվանում է իրեն Նրա զավակը: Աստծո հետ հաղորդություն չունեցող մարդիկ դեռևս դարձի եկած չեն, մահացած են իրենց հանցանքներում և մեղքերում և գտնվում են Աստծո բարկության ներքո[82]:

Վերջին ժամանակներում «հաղորդություն» բառի իմաստն այս համատեքստում լիովին սխալ է մեկնաբանվում: Ոմանք այժմ հավատում և սովորեցնում են, որ Հովհաննեսի տարբերակումը չի վերաբերում փրկարար հավատք ունեցող և դեռևս դարձի չեկած մարդկանց, այլ հոգևոր քրիստոնյաներին, որոնք հաղորդակցվում են Աստծո հետ, և մարմնավոր քրիստոնյաներին, որոնք չունեն հաղորդություն Նրա հետ: Այս մեկնությունը ոչ միայն հեռանում է այս հատվածի իրական իմաստից, այլև դավաճանում է այն նպատակը, որի համար Հովհաննեսը գրել է իր ամբողջ թուղթը: Նա չի ասում. «Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացողներիդ, որ գիտենաք, անկախ այն բանից՝

80 Երեմիա 9.24
81 Միքիա 6.8
82 Եփեսացիների 2.1-3, 5.6

դուք հոգևո՞ր, թե՞ մարմնավոր քրիստոնյաներ եք»: Ավելին, Հովհաննեսի Առաջին թղթի 1.7-ը սովորեցնում է, որ միայն լույսի մեջ վարվողները կարող են ակնկալել, որ ստանում են Աստծո Որդու սրբացնող արյունը: Եթե խավարի մեջ վարվողները մարմնավոր քրիստոնյաներ են, նշանակում է՝ Քրիստոսի սրբացնող արյան զորությունը հասանելի չէ նրանց, սակայն դա չի կարող վերաբերել ոչ մի քրիստոնյայի:

Այս ճշմարտությունների լույսի ներքո մենք իրավացիորեն եզրակացնում ենք, որ Աստծո հետ հաղորդություն ունենալը նշանակում է լինել քրիստոնյա, որին պատկանում են Քրիստոսի քավչարար աշխատանքի բոլոր առավելությունները և օրհնությունները: Իսկ Քրիստոսի հետ հաղորդությունից դուրս լինելը նշանակում է լինել դեռևս դարձի չեկած, Աստծուց բաժանված և հավիտենական կործանման վտանգին ենթակա անձնավորություն:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ Է ՎԱՐՎՈՒՄ

Այժմ կդիտարկենք ճշմարիտ քրիստոնյայի առաջին հատկանիշը. նա լույսի մեջ է վարվում: «Վարվելը» կամ «ման գալը» թարգմանված է հունարեն *«պերիպատե՛ո»* բառից, որը բառացիորեն նշանակում է «քայլել կամ շրջել»: Փոխաբերական իմաստով, այն վերաբերում է մարդու ապրելակերպին կամ վարքին: Կարևոր է նշել, որ «վարվելը» կամ «ման գալը» ներկա ժամանակով է, ինչն արտահայտում է շարունակական գործողություն և ավելի է հաստատում, որ Հովհաննեսը նկատի ունի մարդու կենսառճը, ապրելակերպը կամ ձևավորված սովորությունները: Այսպիսով, Աստծո ճշմարիտ զավակի առաջին հատկանիշն այն է, որ նա վարվում է լույսում: Նրա կենսառճը հաստատում է այն, ինչ Աստված հայտնել է Իր բնության և կամքի մասին: Ինչ վերաբերում է կեղծ հավատացյալին, նա վարվում է խավարում: Նրա կենսառճն արտացոլում է նրա հոժարակամ տգիտությունն Աստծո մասին, և նրա վարքը ցուցադրում է աննշան համապատասխանություն Աստծո բնությանը և կամքին, ինչպես որ դրանք հայտնված են Սուրբ գրքում:

Դիտարկելով ճշմարիտ հավատքի այս առաջին ստուգումը՝ պետք է հասկանանք հետևյալը: Հովհաննեսը չի սովորեցնում, որ քրիստոնյան կարող է հասնել կամ կհասնի անմեղ կատարելության մակարդակի (սխալական տեսակետ այն մասին, որ այս կյանքում քրիստոնյաները կարող են հասնել սրբացման այնպիսի մակարդակի, որում նրանք այլևս չեն մեղանչում): Ո՛չ էլ նա ենթադրում է, որ քրիստոնյայի կյանքը մշտապես Աստծո բնավորության և կամքի կատարյալ արտացոլքն է լինելու: Նա պարզապես պնդում է, որ ճշմարիտ հավատացյալի կենսառճը կամ վարքը՝ ընդհանուր առմամբ, կերպարանվելու է Աստծո հայտնությա-

նը Իր և Իր կամքի մասին: Ավելին, թեև հավատացյալի կյանքը կարող է բախվել մեծ պայքարների և ուղեկցվել պարբերական ձախողումներով, նրա կյանքը և վարքը հստակորեն տարբերվելու են անհավատի կյանքից և վարքից: Փրկության ապացույցը կատարելությունը չէ և ո՛չ էլ Աստծո հայտնության լույսով մշտապես վարվելու կարողությունը: Ավելի ճիշտ՝ փրկության ապացույցն այն է, որ, ուշադրությամբ ուսումնասիրելով մեր կյանքը, տեսնում ենք իրական և հարաճուն կերպարանում Աստծո բնությանը և կամքին: Այնուամենայնիվ, եթե բացահայտենք չփոխվող կյանք և այնպիսի վարք, որը հետևողականորեն հակասում է Աստծո Խոսքի հայտնությանը Իր բնության և կամքի մասին, մենք պետք է մեծապես մտահոգվենք:

Կարևոր է նշել, որ, խոսելով սեփական անձը ստուգելու մասին, մենք չենք անդրադառնում որևէ պահի կամ եզակի իրադարձության, այլ մեր կյանքի ամբողջ ընթացքին՝ մեր դարձի պահից ի վեր: Մենք չենք կարող որոշել Աստծո փրկարար աշխատանքի վավերականությունը մեր կյանքում՝ քննելով միայն մեր մեկ օրվա վարքը: Նույնիսկ ամենից հասուն քրիստոնյան կունենա ակնթարթային բարոյական բացթողումներ, նաև էտման ժամանակահատվածներ, երբ, թվում է, նա քիչ պտուղ ունի: Մեզ համար մեծամտություն կլիներ հաստատել մեր փրկությունը՝ հիմնվելով մեկ բարի գործի ուշադիր ուսումնասիրության վրա, և, նմանապես, անմտություն կլիներ դատապարտել ինքներս մեզ՝ մեկ անգամ մեղանչելու պատճառով: Մեր հավատքի դավանությունը ճշտորեն ստուգելու համար անհրաժեշտ է, որ լիովին հաշվի առնենք մեր կյանքը՝ դարձի գալու և Քրիստոսին դավանելու պահից մինչև ներկան: Մեր քրիստոնեական կյանքի ամբողջ ընթացքում պետք է հարցնենք մեզ՝ արդյո՞ք մեր կյանքում կա վկայություն այն մասին, որ մենք ավելի ենք կերպարանվում Աստծո Անձին և կամքին: Հետևյալ օրինակը կարող է օգտակար լինել:

Եթե մենք հետևեինք դավանող քրիստոնյային միայն կարճ ժամանակով և լուսանկարեինք նրան այն պահին, երբ նա բարոյական ձախողում ունենար, մենք կարող էինք օգտագործել այդ լուսանկարը՝ ապացուցելու համար, որ նա դարձի եկած չէ: Այն քիչ բան է պատմում մեզ նրա կյանքի մասին՝ նրա դարձից ի վեր: Այնուամենայնիվ, եթե հետևեինք նույն դավանող քրիստոնյային մի քանի տարի շարունակ՝ թվային տեսախցիկով, որը շարունակ կտեսագրեր նրա կյանքը, մենք կկարողանայինք առատ վկայություն ունենալ և պատկերացում կազմել կա՛մ հօգուտ, կա՛մ ի վնաս նրա հավատքի դավանության: Եթե նա ճշմարտապես քրիստոնյա լիներ, մենք, միևնույն է, մեղքով չաղտոտված կատարյալ կյանք չէինք տեսնի, բայց կտեսնեինք կյանք, որը և՛ փոխված

է, և՛ փոխվում է՝ կերպարանվելով Աստծո բնությանը և կամքին: Նրա տկարությունն ակնհայտ կլիներ, նրա պայքարներում հաղթանակները դժվարությամբ կտրվեին, և հաճախ նրա առաջընթացը երեք քայլ առաջ և երկու քայլ ետ կլիներ: Բայցևայնպես, իր ամբողջ կյանքում այդ քրիստոնյան Աստծո բնությանը և կամքին ավելի կերպարանվելու նկատելի վկայություն կունենար:

ԱՐԴՅՈ՞Ք ՄԵՆՔ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ ԵՆՔ ՎԱՐՎՈՒՄ

Այժմ, հասկանալով այս հատվածի իմաստը, մենք պետք է կիրառենք դրա ճշմարտությունը մեր կյանքում: Արդյո՞ք մենք լույսի մեջ ենք վարվում: Արդյո՞ք մեր կենսաոճն արտացոլում է հարաճուն կերպարանում այն ամենին, ինչ Աստված հայտնել է մեզ Սուրբ գրքում Իր բնության և կամքի մասին: Արդյո՞ք մեր և անհավատի ապրելակերպի միջև տեսանելի տարբերություն կա: Եթե որևէ անկողմնակալ դիտորդ մի քանի ամիս շարունակ ուսումնասիրեր յուրաքանչյուրիս կյանքը, արդյո՞ք կկարողանար բավականաչափ ապացույցներ հավաքել, որպեսզի փաստեր մեր հավատքի վավերականությունը դատարանում, թե՞ դատարանը կմերժեր նրա դիմումը՝ ապացույցների բացակայության պատճառով:

«Աստված լույս է, և ոչ մի խավար չկա Նրանում» (Ա Հովհ. 1.5): Արդյո՞ք մենք, թեկուզ ինչ-որ չափով, նման ենք այդ լույսին: Արդյո՞ք մենք լույսի որդիների պես ենք վարվում և լույսի պտուղն ենք բերում՝ ամեն բարությամբ, արդարությամբ և ճշմարտությամբ[83]: Թե՞ անհավատների պես ենք վարվում՝ մեր մտքի ունայնությամբ, խավարած մտքով և օտարացած աստվածային կյանքից[84]: Հնարավո՞ր է արդյոք ապացուցել, որ մենք անկեղծորեն ենք Փրկիչ և Տեր դավանում Հիսուսին՝ Հոր կամքին հնազանդ կյանքով, թե՞ կարելի է ապացուցել, որ մեր դավանությունը կեղծ է՝ հոգևորապես անհոգ, Աստծո բնությանը չհամապատասխանող և Նրա կամքի հայտնության դեմ ապստամբող կյանքով[85]:

Եթե ասում ենք, որ ճշմարտապես քրիստոնյա ենք, սակայն խավարում ենք վարվում, մենք ստում ենք: Գրեթե տարբերություն չկա՝ միտումնավո՞ր ենք ստում, թե՞ խաբված ենք մեր ժամանակների մակերեսային Ավետարանով: Մենք պետք է գիտակցենք, որ մտել ենք լայն դռնով և քայլում ենք ընդարձակ ճանապարհով, որը կործանման է տանում[86]: Մենք պետք է խոստովանենք, որ անուն ունենք, թե ողջ ենք, բայց իրականում մահացած ենք մեր հանցանքների և մեղքերի մեջ[87]:

83 Եփեսացիների 5.8,9
84 Եփեսացիների 4.17-20
85 Մատթեոս 7.21,23
86 Մատթեոս 7.13
87 Եփեսացիների 2.1, Հայտնություն 3.1

Մենք պետք է փախչենք գալիք բարկությունից և մոտենանք Աստծուն՝ ապաշխարությամբ և հավատքով[88]: Մենք պետք է փնտրենք Նրան, մինչև որ գտնենք:

Եթե ասում ենք, որ Աստծո հետ հաղորդություն ունենք և լույսի մեջ ենք վարվում, նշանակում է՝ մենք անցել ենք Հովհաննեսի առաջին ստուգումը՝ փրկության լիարժեք հավաստիացում ունենալու ճանապարհին: Մենք դրել ենք հույսի պարսպի առաջին քարը, որը հիմնված է Սուրբ գրքի վրա և անխոցելի է թշնամու կրակոտ նետերի համար: Մենք պետք է խրախուսվենք, սակայն չպետք է ինքնավստահ դառնանք, այլ շարունակենք՝ անցնելով Հովհաննեսի մյուս ստուգումները, և քննենք մեր կյանքը դրանց լույսի ներքո:

88 Մատթեոս 3.7, Ղուկաս 3.7, Հակոբոս 4.8

ԳԼՈՒԽ ՉՈՐՍ

Խոստովանել մեղքը

«Եթե ասենք, թե մեղք չունենք, մեր անձերը խաբում ենք, և ճշմարտությունը չկա մեզանում: Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրավությունից: Եթե ասենք, թե մեղք չգործեցինք, ստախոս ենք անում Նրան, և Նրա խոսքը մեզանում չէ»:

– Ա Հովհաննես 1.8-10

Ճշմարիտ դարձի երկրորդ ստուգումը կարելի է համարել ամենաուշագրավ ստուգումներից մեկը, քանի որ այն ապացուցում է, որ հավատացյալի հավաստիացումը փրկության մեջ հիմնված չէ իր կյանքում մեղքի բացակայության վրա, այլ իր պատշաճ արձագանքի վրա, երբ իր մեղքը հայտնվում է իր ուշադրության կենտրոնում: Ճշմարիտ հավատացյալի նշանը անմեղ կատարելությունը չէ, այլ՝ որ մեղքը դառնում է ավելի ու ավելի վանող նրա համար, ավելի ու ավելի թշնամական նրա ցանկություններին: Մեղքի ի հայտ գալը դրդում է նրան ապաշխարության և խոստովանության: Այս ճշմարտությունն աջակցվում է մի քանի մեծագույն սուրբգրային պնդումներով, որոնք հավատացյալի և մեղքի հանդեպ նրա վերաբերմունքի մասին են:

«Աստծո ընդունելի պատարագները կոտրված հոգին է. կոտրված ու փշրված սիրտը Դու չես անարգի, ո՛վ Աստված» (Սաղմ. 51.17):

«Եվ Ես սրան եմ մտիկ տալիս՝ խոնարհին և կոտրած հոգի ունեցողին և Իմ խոսքից դողացողին» (Եսայի 66.2):

«Երանի՜ սգավորներին, որ նրանք կմխիթարվեն» (Մատթ. 5.4):

«Երանի՛ նրանց, որ սոված և ծարավ են արդարության, որ նրանք կկշտանան» (Մատթ. 5.6):

Վկայությունն այն մասին, որ մենք Աստծո զավակներ ենք դարձել, այն է, որ երբ գիտակցում ենք մեր մեղքը, մենք արձագանքում ենք խոնարհությամբ, կոտրվածությամբ, փշրվածությամբ, սգալով և դողալով՝ այն օրենքի պատճառով, որն արհամարհել ենք: Այն փաստը, որ Աստված ներկայացնում է մեզ այս ճշմարտությունը մեր անձը ստուգելու սկզբում, ցույց է տալիս, թե որքան մեծ է Նրա իմաստությունը: Եթե այս հատվածում գտնվող ճշմարտությունն ի հայտ գար ավելի ուշ, մենք կարող էինք չափազանց խիստ լինել մեր անձը ստուգելու մեջ, հայտնվել կեղծ դատապարտության ներքո և արդյունքում հուսալքվել: Մենք հեշտորեն կարող էինք սխալ մեկնաբանել և սխալ կիրառել առաջին ստուգումը, որը դիտարկեցինք՝ հավատալով, որ լույսից չափազանց հաճախ մոլորվելն ապացուցում է, որ մենք դարձի եկած չենք: Այնուամենայնիվ, մեր անձի ստուգման հենց սկզբում Աստված ապացուցում է, որ մեր հաճախակի պայքարը մեղքի դեմ չի վարկաբեկում մեր հավատքի դավանությունը, այլ, ընդհակառակը, հաստատում է այն: Մենք գիտենք, որ ճանաչել ենք Նրան, ոչ թե՝ որ առանց մեղքի ենք, այլ՝ որ մեր վերաբերմունքը մեղքի հանդեպ արմատապես փոխվել է. մեր ներսում ավելացել է ատելությունը դրա հանդեպ, մենք կոտրված ենք դրա պատճառով և խոստովանում ենք դա:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼԻ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՔԻ ՀԱՆԴԵՊ

Նորադարձը հաճախ է պատմում իր որոշման մասին՝ հայտարարելով, որ ունի նոր հարաբերություն Աստծո հետ: Այնուամենայնիվ, նա չի հասկանում, որ հակառակը նույնպես ճշմարիտ է. նա ունի նոր հարաբերություն մեղքի հետ: Իրականում, նրա պնդումն Աստծո հետ նոր հարաբերություն ունենալու մասին, կարելի է վավերական համարել այն չափով միայն, որով փոխվել է նրա հարաբերությունը մեղքի հանդեպ:

Մինչև վերստին ծնունդը և դարձի գալը, մեղավորը եսասեր և ցանկասեր է. նա ատում է Աստծուն և բարին[89]: Հոբը դիտարկում արեց այն մասին, որ դարձի չեկած մարդը ծարավում է անօրինությանը և խմում է այն ջրի պես[90]: Սողոմոնի իմաստությունը բացահայտում է բնական մարդուն՝ ցույց տալով, որ նա ոչ միայն թողնում է ուղղության ճանապարհները, որպեսզի խավարի ճանապարհներով գնա, այլև ուրախանում է չարություն գործելով և զվարճանում է նենգությամբ[91]: Չարի հանդեպ այս հակվա-

89 Հռոմեացիների 1.30, Բ Տիմոթեոս 3.2-4
90 Հոբ 15.16
91 Առակաց 2.13,14

ծության և դրա հետ հարաբերության պատճառը պարզորեն հայտնվում է մեզ ամբողջ Սուրբ գրքում, բայց այն հատկապես տեսանելի է Երեմիա մարգարեի խորհրդի մեջ, որն այսպես նկարագրեց անկում ապրած մարդու սիրտը. «Խորամանկ է սիրտն ամենից ավելի և ապականված»: Իրականում, Երեմիան այն աստիճան ցնցված էր մարդու սրտի ծայրահեղ արատավորությունից, որ ապշահար հայտարարեց. «Նրան ո՞վ կարող է հասկանալ» (Երեմ. 17.9): Անկում ապրած մարդկային սիրտը մարդու մեջ առաջացնում է բնական մեծ ձգտում մեղքի հանդեպ և, հավասարապես, մեծ հակակրանք Աստծո և արդարության հանդեպ:

Այնուամենայնիվ, կատարելով դարձի տիտանական աշխատանքը, Աստված վերստեղծում է սիրտն Իր նմանությամբ՝ ճշմարիտ արդարությամբ և սրբությամբ[92]: Այս արմատապես փոխված սիրտն ունի նոր և արմատապես փոխված ձգտումներ: Եսասիրությունը փոխարինվել է աստվածասիրությամբ, և անօրինության հանդեպ ծարավը փոխարինվել է արդարության հանդեպ քաղցով ու ծարավով[93]: Պարզ ասած, այժմ քրիստոնյան սիրում է այն Աստծուն, որին ինքը մի ժամանակ ատում էր, և ատում է իր անձը, որը մի ժամանակ սիրում էր. այժմ նա ձգտում է այն արդարությանը, որը մի ժամանակ արհամարհում էր, և ատում է այն անարդարությունը, որով մի ժամանակ պարծենում էր:

Ոմանք կարող են վիճարկել, որ հավատացյալի արմատապես փոխված սրտի այս նկարագրությունն անիրատեսական է, որ այն գերագնահատված վախճանաբանության արդյունք է, որը վերագրում է հավատացյալին փրկության այնպիսի օրհնություններ ներկայում, որոնք իրականություն կդառնան միայն նրա վերջնական փառավորման ժամանակ: Նրանք կարող են պնդել, որ այս նկարագրությունը նույնիսկ աստվածաշնչյան չէ: Նրանք կարող են արձագանքել հետևյալ հարցով. «Եթե այդպես է, ինչո՞ւ եմ ես դեռ պայքարում մեղքի հետ»: Այս հարցի պատասխանը պարզորեն տրված է Սուրբ գրքում: Թեև մենք երբեք չպետք է փոքրացնենք հավատացյալի մեծ և ընթացիկ պայքարը մեղքի հետ, մենք չպետք է անտեսենք և փոքրացնենք վերստին ծնունդի զորությունը: Հավատացյալը պայքարում է մեղքի հետ ոչ թե այն պատճառով, որ վերստին ծնունդի զորությունը պակաս է իմ նկարագրածից, այլ որովհետև հավատացյալի սիրտը դեռևս դիմակայում է մեծ և անդրդվելի թվացող թշնամուն՝ մեղավոր մարմնական բնությանը: Թեև հասկացությունը մեղավոր մարմնական բնության մասին դժվար է սահմանել, մենք պետք է ընդունենք, որ գոյություն ունի հին մարդու մնացորդ, որը մնում է հավատացյալի կյանքում մինչև լիովին արմատախիլ

92 Եփեսացիների 4.24
93 Մատթեոս 5.6

լինելը նրա փառավորման ժամանակ[94]: Հավատացյալի անձի մեջ կա չվերածնված կողմ, որը դարձնում է նրան ընկալունակ գայթակղության հանդեպ և պատերազմում է նոր մարդու դեմ, ինչպիսին որ ինքը դարձել է վերստեղծման արդյունքում: Պողոսը ներկայացնում է այս պայքարի իրողությունը՝ Գաղատիայի եկեղեցուն ուղղված հետևյալ խոսքերով. «Որովհետև մարմինը ցանկանում է Հոգուն հակառակ, և Հոգին՝ մարմնին հակառակ, և սրանք հակառակ են մեկը մյուսին՝ այնպես, որ դուք չանեք այն բաները, որոնք ցանկանում եք» (Գաղատ. 5.17, NKJV):

Թեև հավատացյալը պատերազմելու է մեղքի հետ և երբեմն պարտություն է կրելու, և՛ նրա սիրտը, և՛ զգացմունքները վերափոխված են: Նրա մեղքն այլևս բերկրանքի և պարծանքի առարկա չէ նրա համար, այլ՝ սգո և խոստովանության: Իրականում, այս խոստովանության դրդող սուգը նրա դարձի գալու մեծագույն ապացույցներից է: Նա այլևս սատանայի զավակ չէ և անհնազանդության որդի չէ, այլ՝ Աստծո զավակ է և նոր ստեղծված է Քրիստոս Հիսուսում[95]: Ուրեմն, նա այլևս չի կարող հանդուրժել այն մեղքը, որով մի ժամանակ բերկրանքով սնվում էր. այժմ մասնակցությունը մեղքի մեջ վանում է նրան և սրտխառնոց է առաջացնում: Այսպիսով, նա պետք է խոստովանի դա և ազատվի դրանից:

ՃՇՄԱՐԻՏ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջին Հովհաննեսի 1.9-ում Հովհաննեսը հայտնում է, որ ճշմարիտ դարձի մեծագույն նշաններից մեկը սեփական մեղքը խոստովանելն է: Այնպես որ, կարևոր է, որ բացահայտենք, թե ինչ է խոստովանությունը: «Խոստովանել» բառը թարգմանված է հունարեն *«հոմոլոգե՛ո»* բառից, որը բաղադրյալ բառ է՝ բաղկացած *«հոմոս»* («նույնը») և *«լո՛գոս»* («խոսք») բառերից: Այն բառացիորեն նշանակում է «խոսել նույն բանը»: Այնպես որ, խոստովանելը նշանակում է բանավոր կերպով համաձայնել Աստծո հետ, որ մենք մեղանչել ենք, և որ մեր մեղքը հրեշավոր է: Երբ այդ խոստովանությունն անկեղծ է, այն նույնպես ուղեկցվում է տրտմությամբ և զղջմամբ:

Թեև հավատացյալի կյանքը նշանավորվում է սրբության մեջ աճելով կամ մեղքի հանդեպ ավելի մեծ իշխանություն ունենալով, նա երբեք լիովին ազատ չի լինի դրա ազդեցությունից, մինչև իր փառավորվելը Երկնքում: Նույնիսկ ամենահասուն հավատացյալը մեղանչում է: Այնուամենայնիվ, նրա արձագանքն այդ մեղքին ապացուցում է, որ ինքն այլևս չվերածնված ապստամբության որդի չէ, որն օտարացած է Աստծուց և

94 Ջոն ՄակԱրթուր, *«ՄակԱրթուրի ուսումնական Աստվածաշունչ»* (Նեշվիլ, «Thomas Nelson», 1997թ.), էջ 1704:
95 Հովհաննես 8.44, Բ Կորնթացիների 5.17, Եփեսացիների 2.2, Ա Հովհաննես 3.12

զուրկ է Նրա հայրական նախախնամությունից, այլ որ ինքը դարձել է Աստծո զավակ՝ Նրա տան անդամը, որը ենթակա է աստվածային դաստիարակությանը և խրատին[96]: Երբ հավատացյալը մեղանչում է, Աստված հավատարիմ է, որ բացահայտի նրա մեղքը և հանդիմանի նրան իր հանցանքի մեջ[97]՝ Սուրբ Հոգու ծառայության միջոցով[98]: Թեև Աստված կարող է օգտագործել շատ բնական միջոցներ՝ հավատացյալի մեղքը բացահայտելու համար, օրինակ՝ Սուրբ գրքի ուսուցումը, հավատարիմ եղբայրներից մեկի հանդիմանությունը կամ, նույնիսկ, եկեղեցու կարգապահական միջոցները, դա, միևնույն է, Աստծո նախախնամության գերբնական գործն է: Ի պատասխան, հավատացյալն ընդունում է իր մեղքը և դրա ծանրությունը: Եվ այդ ժամանակ նա դառնում է Աստծուն՝ կոտրված և փշրված սրտով, խոստովանում է իր մեղքը և ներում է խնդրում:

Աստվածաշնչյան խոստովանության մի ուսուցողական օրինակ գտնվում է Սաղմոս 51.1-4-ում, որը գրեց Դավիթը՝ այն բանից հետո, երբ մեղանչեց Բերսաբեի հետ, և որոշ ժամանակ անց ստացավ Նաթան մարգարեի հանդիմանությունը.

> «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ծ, Քո ողորմության պես,
> Եվ Քո մեծ ողորմության պես ջնջի՛ր իմ անօրինությունները:
> Իսպառ լվա՛ ինձ իմ անօրինությունից
> Եվ սրբի՛ր ինձ իմ մեղքից:
> Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրինությունները,
> Եվ իմ մեղքն ամեն ժամանակ իմ առջև է:
> Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի
> Եվ չարը Քո աչքի առջև գործեցի,
> Որ Դու արդար լինես Քո խոսքերում
> Եվ մաքուր լինես Քո դատաստանում»:

Ուշադրություն դարձրեք, որ թեև Դավիթը կոտրված էր իր մեղքի պատճառով, նա կաթվածահար չէր եղել վախից և անհուսության չէր մատնվել: Աստծո ողորմածությունը և մեծ գթածությունը անհրաժեշտ վստահություն հաղորդեցին նրան, որպեսզի խոստովաներ իր մեղքը՝ ներման մեծագույն սպասումով: Որքա՜ն ավելի մենք՝ Քրիստոսում լինողներս, պետք է խրախուսվենք, որ մոտենանք և խոստովանենք մեր

96 Եփեսացիների 2.2,19, Եբրայեցիների 12.5-11

97 *«Հանդիմանել» և «հանդիմանություն»* բառերը հիմնականում սխալ են հասկացվում: *«Հանդիմանել»* բառը թարգմանված է հունարեն *«էլե՛գչո»* բառից. այն պատկերում է մեղադրող դատախազի գործը, որը ջանասիրաբար ներկայացնում է առկա հանցանշանները՝ պաշտպանյալի հանցանքն ապացուցելու համար: Վերջնական արդյունքն այն չէ, որ հավատացյալը պարզապես հանդիմանված է զգում իրեն, այլ որ նա հանդիմանվում է և դրանով իսկ ընդունում կամ խոստովանում է իր օրինազանցությունն Աստծո առջև:

98 Հովհաննես 16.8,13, Հռոմեացիների 8.14, Ա Հովհաննես 2.27

մեղքերն Աստծուն: Մի՞թե Աստված չի խոստացել, որ Ինքը «հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրավությունից» (Ա Հովհ. 1.9): Մի՞թե մենք չենք իմացել ամենից հուսալի աղբյուրից, որ ունենք այնպիսի Քահանայապետ, Ով կարող է կարեկցել մեր տկարություններին, որովհետև Նա գայթակղվեց ամեն ինչում, ինչպես և մենք, սակայն առանց մեղքի մնաց: Մի՞թե Ինքը Աստված չի խրախուսում մեզ համարձակ մոտենալ շնորհքի գահին, որպեսզի «ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք՝ պատշաճ ժամանակին օգնելու» (Եբր. 4.15,16): Թանկագի՛ն քրիստոնյա, եթե մեր մեղքի և պարտության մեջ երբևէ կարգադրություն լսենք, որ հեռու *փախչենք* Աստծուց, ոչ թե *մոտենանք* Նրան, մենք պետք է գիտակցենք, որ այդ ձայնը եկել է ոչ թե երկնային բարձունքներից, այլ դժոխքի գուբից:

Երկրորդը՝ մենք պետք է ուշադրություն դարձնենք այն բանին, որ Դավիթը մեծապես խորշում էր իր մեղքից և ցանկանում էր մաքրվել: Վերստին չծնված մարդը չի ցանկանում մաքրվել իր մեղքից. նա միայն ցանկանում է խուսափել հրապարակայնությունից և ազատ լինել դրա վատ հետևանքներից: Ավելին, եթե նա մաքրվեր, անընդունելի կհամարեր այդ վիճակը: Նրա կրքերը կմոլեգնեին, և նրա սիրտը հանգիստ չէր գտնի, քանի դեռ նա կրկին չէր սնվել նույն կեղտոտ տաշտից և չէր քնել նույն գարշահոտ ճահճում: Որպես բացարձակ հակադրություն, քրիստոնյան ատում է այն մեղքը, որը գործել է: Նա խորշում է նույնիսկ այն հանդերձից, որը հագել էր իր բարոյական ձախողման պահին, և աղտոտված, անմաքուր ու վարակիչ է համարում այն[99]: Նրա սիրտը կոտրված է, փշրված է և լցված է խղճի խայթով ու սգով: Ի վերջո, նրա արձագանքը ցույց է տալիս, որ նա իսկապես նոր ստեղծված է, որի կյանքում հներն անցել են, և նորն է եկել[100]: Այն մեղքը, որը մի ժամանակ հաճելի կերակուր էր նրա համար, վերածվել է պղծության տակառի. մեղքի կյանքը, որը մի ժամանակ նրա անուշաբույր անկողինն էր, վերածվել է գոմաղբով լի ճահճուտի:

Երրորդը՝ մենք պետք է ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ Դավիթն արդարացրեց Աստծուն: Երբ Նաթան մարգարեն դատապարտեց նրան՝ մեղադրելով ծածուկ հանցանքի մեջ, նա որևէ կերպով չարդարացավ, այլ բացահայտ խոստովանեց բոլորի ներկայությամբ. «Մեղանչել եմ Տիրոջ դեմ»[101]: Սաղմոս 51.3,4-ում նա ավելի պարզ է արտահայտվում.

> «Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրինությունները,
> Եվ իմ մեղքն ամեն ժամանակ իմ առջև է:

99 Ղևտացիների 13.52-57, 15.4,7, Հուդա 23
100 Բ Կորնթացիների 5.17
101 Բ Թագավորաց 12.13

Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի,
Եվ չարը Քո աչքի առջև գործեցի,
Որ Դու արդար լինես Քո խոսքերում
Եվ մաքուր լինես Քո դատաստանում»:

Դավիթը սկսեց՝ ասելով, որ ինքը ճանաչում է իր մեղքը[102]: Նա տեսել էր իր մեղքն Աստծո աչքերով և պատկերացում էր կազմել դրա հրեշավոր բնության և զարհուրելի հետևանքների մասին: Նա նույնպես գիտակցել էր, որ թեև ինքը մեղանչել էր Ուրիայի դեմ՝ սպանություն գործելով, Բերսաբեի դեմ՝ շնություն գործելով, ինչպես նաև Իսրայելի ժողովրդի դեմ՝ խախտելով իր թագավորական և հովվական երդումը, նա, ըստ էության, մեղանչել էր Աստծո դեմ: Եվ նրա մեղքի հենց այս կողմն է, որն այդքան գարշելի է դարձնում այն:

Ի վերջո, Դավիթն ընդունեց, որ Աստված արդար էր իր մեղքը գնահատելու և դատելու մեջ: Երբ Աստված ընդդիմացավ Ադամին՝ պարտեզում գործած նրա առաջին անօրինության պատճառով, Ադամն ուղղեց մեղադրանքը կնոջը և, ըստ էության, հենց Աստծուն. «Եվ Ադամն ասաց. «Այն կինը, *որ [Դու] ինձ տվիր,* նա տվեց ինձ այն ծառից, և ես կերա»» (Ծնն. 3.12, շեղագիրն ավելացված է): Ի հակադրություն՝ Դավիթը չփորձեց որևէ կերպով բաշխել իր հանցանքի ծանրությունը, այլ բացահայտ խոստովանեց, որ Աստծո ասածն իր մասին ճիշտ էր: Նա համաձայնեց Աստծո հետ, որ մեղք է գործել և խոսեց նույն բանը: Սա ճշմարիտ խոստովանության նշան է:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ԿՅԱՆՔԻ ՄԱՍ

Ոմանք եզրակացրել են, որ, աճելով սրբության մեջ՝ հավատացյալն իր մեղքը խոստովանելու ավելի քիչ կարիք կունենա, սակայն ճշմարիտը հակառակն է: Սրբացման մեջ աճին զուգընթաց հավատացյալն ավելի մեծ ազատություն կզգա մեղքի իշխանությունից և ավելի մեծ հաղթանակ կտանի մեղքի հանդեպ: Այնուամենայնիվ, միաժամանակ նրանում կձևավորվի ավելի հստակ պատկերացում Աստծո սրբության մասին և ավելի մեծ զգայունություն մեղքի հանդեպ իր կյանքում: Արդյունքում նրա կյանքը կառանձնանա ավելի խորը կոտրվածությամբ և խոստովանությամբ: Հասուն սուրբը կվարվի ավելի մեծ սրբությամբ, քան վերջերս ապաշխարած նորադարձը, սակայն նրա տրտմությունը մեղքի պատճառով ավելի մեծ կլինի, իսկ նրա խոստովանությունը ավելի խորը և

102 *«Ճանաչել»* բառը թարգմանված է եբրայերեն *«յադա՛»* բառից, որը նշանակում է «իմանալ, ընկալել կամ ընդունել. մտերմաբար ճանաչել որևէ մարդու կամ փորձառաբար ծանոթ լինել որևէ բանի»:

հաճախակի կդառնա՝ Քրիստոսի մեջ մանկան համեմատ: Պատճառը պարզապես այն է, որ Աստծո սրբությունը և իր մեղքն ավելի ակնհայտ իրողություններ են նրա համար:

Հիսուսը սովորեցրեց մեզ, որ ճշմարիտ քրիստոնեական կյանքը բնութագրվում է սգալով[103]: Այնուամենայնիվ, խոսքն այնպիսի սգի մասին չէ, որը գերազանցում է մյուս բոլոր աստվածային զգացմունքները կամ ավարտվում է հուսալքությամբ: Այն տրտմությունը, որի մասին Հիսուսը խոսում է, մշտապես տանում է մխիթարության և ուրախության: Աճելով Աստծուն ճանաչելու մեջ, քրիստոնյան ավելին է իմանում սեփական անձի և մեղքի մասին: Այս հայտնությունը, ճիշտ կերպով ընկալվելու դեպքում, հանգեցնելու է ավելի խորը սգի, բայց ոչ՝ հուսալքության: Որովհետև, աճելով Աստծուն ճանաչելու մեջ, քրիստոնյան նաև ավելի լավ է հասկանում Աստծո շնորհքը, որը տրվել է Հիսուս Քրիստոսի Անձի և աշխատանքի միջոցով: Այս մեծ շնորհքը դրդում է քրիստոնյային բացահայտ խոստովանել իր մեղքը և ներում ստանալ՝ «անպատմելի և փառավոր խնդությամբ» (Ա Պետրոս 1.8): Ամենից հրաշալին այս վերափոխման մեջ այն է, որ հավատացյալն ավելի ու ավելի քիչ ուրախություն է գտնում իր գործերի մեջ, և ավելի ու ավելի շատ ուրախություն՝ Քրիստոսի կատարյալ և անփոփոխ աշխատանքի մեջ: Այսպիսով, հավատացյալն աստիճանաբար ետ է վարժվում ինքն իրենում ուրախություն և հավաստիացում գտնելու կռապաշտությունից, և Քրիստոսը դառնում է ուրախության և հավաստիացման միակ աղբյուրը նրա համար:

Սատանան ուզում է համոզել մեզ, որ եթե շարունակ մտահոգվենք մեր մեղքի պատճառով, մենք մեծ վնաս կհասցնենք մեզ, և եթե բացահայտ խոստովանենք մեր մեղքը, կդառնանք Աստծո խիստ խրատի առարկան: Այնուամենայնիվ, ոչինչ չի կարող ավելի հեռու լինել ճշմարտությունից: Խորապես գիտակցելով մեր մեղքը և անկարողությունը՝ կհառենք մեր հայացքը Քրիստոսի կատարյալ աշխատանքին, և, բացահայտ խոստովանելով մեր մեղքը՝ ներում կստանանք մեր երկնային Հորից և կմաքրվենք: Մեր մեղքին լրջորեն վերաբերվելը չի հանգեցնի տանջալի խղճի խայթի. ընդհակառակը, եթե ճշտորեն հասկանանք Ավետարանը, դա ազատության, հավաստիացման և ուրախության ճանապարհի կդառնա մեզ համար:

ԿՈՒՅՐ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

Սուրբ գիրքը հաստատում է, որ ճշմարիտ դարձի մեծագույն ապացույցներից մեկն այն է, որ մարդն ունի մեղքի գիտակցում, կոտրված

103 Մատթեոս 5.4

և փշրված հոգի, և պատրաստ է անկեղծորեն խոստովանել իր մեղքն Աստծո առջև: Նույն չափով, կեղծ դարձի մեծագույն ապացույցներից մեկն այն է, որ մարդը կույր է մեղքի հանդեպ, խստասիրտ է, և նրա կյանքում չկա անկեղծ խոստովանություն:

Առաջին Հովհաննեսի 1.8-10-ում Հովհաննես առաքյալը երեք սարսափելի հետևություն արեց այն մարդու մասին, որը դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն չի համարում, որ ապաշխարության և խոստովանության կարիք ունի: Առաջինը՝ այդ մարդը խաբում է ինքն իրեն: Որքա՜ն մոլորված կարող է դառնալ մարդը՝ հավատալու համար, որ ապրել է օրեր կամ նույնիսկ ժամեր՝ բացարձակապես և շարունակաբար համապատասխանելով Աստծո օրենքի չափանիշներին[104]: Ունայնության ինչպիսի՜ բարձունքների նա պետք է հասած լինի, որպեսզի նույնքան կատարյալ համարի իրեն, որքան մեր երկնային Հայրն է[105]: Որքա՜ն ժամանակ կաս-կարմիր երկաթը պետք է սեղմված լինի նրա խղճին, որպեսզի նա կանգնի Հիսուս Քրիստոսի կողքին և մարտահրավեր նետի՝ ասելով. «Ձեզնից ո՞վ կարող է հանդիմանել Ինձ մեղքի համար»[106]: Նման կատարյալ կուրությունն անհնարին է թվում, սակայն այս խաբկանքը հազվագյուտ չէ: Բազմաթիվ դավանող քրիստոնյաներ նստած են Ավետարանական եկեղեցիներում ամեն Տիրոջ օրը, սակայն նրանց մեղքը հազվադեպ է բացահայտվում իրենց համար կամ հարկադրվում իրենց խղճին՝ այնպիսի ուժով, որ կոտրի նրանց սիրտը և բացի նրանց բերանը՝ պոկելու համար գոնե ամենից աղքատիկ խոստովանությունն առ Աստված: Թեև այս երևույթը կարելի է որոշ չափով վերագրել ժամանակակից ամբիոնի տկարությանը և մեղքի դեմ քարոզելու դժկամությանը, դրանք չեն կարող միակ պատճառները լինել: Թեպետ ճշմարիտ է, որ Սուրբ Հոգին գործում է քարոզելու միջոցով, Նա սահմանափակ չէ դրանով: Եթե այս բազմությունը ճշմարտապես պատկաներ Աստծուն, Նա ցույց կտար նրանց իրենց մեղքը և կառաջնորդեր նրանց խոստովանության՝ ժամանակակից քարոզչի օգնությամբ կամ առանց նրա: Այդ դեպքում, ինչպե՞ս է ստացվում, որ շատ-շատերը Ավետարանական եկեղեցում անտեղյակ են իրենց մեղքից, և նրանց կյանքում խոստովանություն չկա: Հնարավո՞ր է, որ նրանց մեծ մասը դարձի եկած չէ: Նրանք հանգիստ նստած են Սիոնում և անգիր սովորում են նրա երգերը, սակայն նրանցում իմաստություն չկա[107]: Նրանք անուն ունեն, թե ողջ են, սակայն մահացած են[108]: Նրանք հավատում են, որ

104 Գաղատացիների 3.10, Հակոբոս 2.10
105 Մատթեոս 5.48
106 Հովհաննես 8.46, Ա Տիմոթեոս 4.2
107 Երկրորդ Օրինաց 32.28, Եսայի 29.13, Ամովս 6.1
108 Հայտնություն 3.1

հարուստ են և ոչնչի կարիք չունեն, բայց չգիտեն, որ թշվառ, ողորմելի, աղքատ, կույր և մերկ են[109]:

Հովիվների միջև քաջ հայտնի է, որ երբ Աստված շարժվում է եկեղեցում՝ մեղքը բացահայտելու և սրտերում կոտրվածություն առաջացնելու համար, գրեթե մշտապես ամենից բարեպաշտներն ու նվիրվածներն են, որ արտասվելու աստիճան ազդվում են և բացահայտ խոստովանում են իրենց մեղքը, մինչդեռ եկեղեցու անդամների մարմնավոր և անտարբեր մեծամասնությունը նստած է իրենց աթոռներին՝ քարի պես սառը: Նրանք անզգա են Աստծո Հոգու հանդեպ, և նույնիսկ իրենց շուրջը գտնվող ավելի լավ մարդկանց բացահայտ զղջումը և խոստովանությունը ոչ մի կերպ չի ազդում նրանց վրա: Ո՞րն է նման հակադրության պատճառը նույն եկեղեցական համայնքում: Պատասխանը նույնքան պարզ է, որքան և դաժան է. մենք պարզապես մասնակցում ենք Դատաստանի մեծ օրվա նախադիտմանը, երբ այծերը որոշվում և առանձնացվում են ոչխարներից: Ոչխարները նրանք են, ովքեր զգայուն են Հոգու հանդիմանության աշխատանքի հանդեպ և խոստովանության են բերվում, այնինչ այծերը նրանք են, ովքեր չեն տեսնում ոչ մի բիծ ու արատ իրենց վրա և կատարյալ բավականություն են զգում իրենց հարմարավետ կրոնով: Կրկին, իրավիճակն ավելի է վատթարանում այն բանով, որ նրանց անարձագանք վիճակը հազվադեպ է բացահայտվում ամբիոնից. այնպես որ, քարոզչի լռությունը կնքում է նրանց կործանումը:

Երկրորդ հետևությունը, որը Հովհաննեսն անում է, այն է, որ մարդիկ, որոնք պնդում են, թե մեղք չունեն, զուրկ են ճշմարտությունից: Սա նույնպես վերաբերում է նրանց, ովքեր դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, բայց կա՛մ կույր են շարունակական մեղքի հանդեպ իրենց կյանքում, կա՛մ մտահոգված չեն դրանով: Այնպիսի իրողությունները, ինչպիսիք են հանդիմանությունը մեղքի մեջ, զղջումը և խոստովանությունը, բոլորովին բացակայում են նրանց առօրյայից: Ավելին, նրանք համարում են, որ զղջումը մեղքի պատճառով տարօրինակ զգացում է, որը հատուկ է միայն իրենց ծայրահեղ ինքնավերլուծության ենթարկող մարդկանց, որոնց կրոնական նախանձավորությունն անցնում է քաղաքավարության և պատկառելիության սահմանները: Իհարկե, նրանք չեն ասում, որ անմեղ և կատարյալ են. այնուամենայնիվ, չունենալով նույնիսկ աննշան զղջում և խոստովանություն, նրանք այնպես են ապրում, ասես իրենց կյանքում մեղք չկա:

Նման ունայն և վտանգավոր մոլորությանը ընդդիմանալու համար, Հովհաննեսը կրկնակի զգուշացնում է ուղղում իր ընթերցողներին՝ ընդամենը երեք խոսքում.

109 Հայտնություն 3.17

> «Եթե ասենք, թե մեղք չունենք... Ճշմարտությունը չկա մեզանում» (խս. 8):
>
> «Եթե ասենք, թե մեղք չգործեցինք... Նրա խոսքը մեզանում չէ» (խս. 10):

Կարևոր է, որ հասկանանք Հովհաննեսի զգուշացման ճշգրիտ իմաստը: Նա պարզապես չի հանդիմանում մի քանի ոչ հասուն հավատացյալի՝ մեղքին մակերեսորեն վերաբերվելու համար: Փոխարենը, նա ասում է հետևյալը. մարդիկ, որոնք մեղք չեն տեսնում և խոստովանության ոչ մի պատճառ չեն գտնում իրենց կյանքում, զուրկ են Ավետարանից և դրան ուղեկցող փրկությունից: Նրանք կույր մարդկանց կույր առաջնորդներ են, որոնց մեկ ոտքն արդեն փոսի մեջ է[110]:

Ավետարանի խոսքը ստանալը նշանակում է ստանալ բանալին, որը բացում է իրականության մասին ճիշտ պատկերացման դուռը, հատկապես՝ սեփական անձի իրականության: Միայն Ավետարանի օգնությամբ կարելի է ճշմարտապես հնազանդվել փիլիսոփայի «Ճանաչի՛ր քեզ» հորդորին: Ավետարանի փրկարար գիտելիքն ունեցող մարդիկ տեսել են իրենց սրտի արատավորությունը և իրենց մեղքի հրեշավոր բնույթը: Նրանք հասկացել են, որ հեռու են Քրիստոսից, և հենց այդ գիտելիքն է, որ Նրան մոտեցրել է իրենց: Դարձի գալուն պես նրանց զգայունությունը մեղքի հանդեպ շարունակում է ավելանալ՝ մեղքի հանդեպ արհամարհանքի և այն խոստովանելու հետ մեկտեղ:

Ի հակադրություն, ովքեր միայն կրոնի ձև ունեն, բայց երբեք չեն վերապրել արդարացնող և վերածնող Ավետարանի զորությունը, երանելի ձևով անտեղյակ են մնում իրենց կյանքում մեղքի գոյության և դրա նողկալի բնույթի մասին: Նրանք շարունակ նայում են, բայց չեն տեսնում, լսում են, բայց չեն հասկանում[111]: Նրանք շարունակում են գնալ՝ «ինչպես ուրիշ հեթանոսներն են գնում՝ իրենց մտքի ունայնությամբ, որ խավարված են մտքով, և օտար՝ Աստծո կյանքից, այն տգիտության պատճառով, որ նրանցում է՝ իրենց սրտերի կուրության համար» (Եփես. 4.17,18): Թեև նրանք կրոնական հանդերձանք են կրում և վստահ են, որ իրենք կույրերի առաջնորդ են, լույս են խավարում գտնվողների համար, կարող են խրատել անմիտներին և սովորեցնել մանուկներին[112], նրանք անտեղյակ են տիեզերքի մեծագույն իրողություններից մեկի՝ սեփական մեղքի մասին:

Երրորդը՝ Հովհաննես առաքյալը եզրակացնում է, որ նա, ով պնդում

110 Մատթեոս 15.14
111 Եսայի 6.9, Երեմիա 5.21, Եզեկիել 12.2, Մատթեոս 13.14, Մարկոս 4.12, Ղուկաս 8.10, Հովհաննես 12.40, Հռոմեացիների 11.8
112 Հռոմեացիների 2.19,20

է, թե մեղք չունի, ստախոս է անվանում Աստծուն: Մեղքի համընդհանուր բնույթն ամենից ակնառու թեմաներից է, որը հետևողականորեն հանդիպում է ամբողջ Սուրբ գրքում. «Ամենը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են» (Հռոմ. 3.23), «Մարդ չկա, որ չմեղանչի» (Գ Թագ. 8.46), «Շատ բաներով մեղանչում ենք ամենս» (Հակոբ. 3.2): Նույնիսկ ամենից բարեպաշտ հինկտակարանյան սրբերի և առաքյալների թվում մենք չունենք կատարելության թեկուզ մեկ օրինակ կամ որևէ գրի առնված պնդում այն մասին, որ ինչ-որ մեկն Ադամի որդիներից՝ Քրիստոսից բացի, անմեղ կատարելության է հասել: Նույնիսկ մեծ Պողոս առաքյալը, որը կարող էր ասել Ա Կորնթացիների 11.1-ում. «Ինձ նմանող եղեք, ինչպես ես էլ՝ Քրիստոսին», ոչ մի անգամ չհավակնեց կատարելության, այլ, ընդհակառակը, տվեց հետևյալ վկայությունը Փիլիպեցիների 3.12-14-ում.

> «Ոչ իբր արդեն բռնած լինեմ, կամ թե արդեն կատարյալ եղած լինեմ, բայց հետևում եմ, որ իցե թե հասնեմ նրան, ինչպես որ էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնված եմ: Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. ետևի բաները մոռանալով՝ դեպի առաջին լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակին Քրիստոս Հիսուսում»:

Չկա ոչ մի հատված Սուրբ գրքում, որը նույնիսկ ակնարկում է, որ անմեղ կատարելությունը հնարավոր է թե՛ անօրենների, թե՛ սրբերի կյանքում: Եթե մենք հավատում ենք, որ Աստված է Սուրբ գրքի Հեղինակը և Պահպանողը, և որ յուրաքանչյուր խոսք դրանում գալիս է Նրա բերանից[113], մենք պետք է ընդունենք, որ յուրաքանչյուր մարդ, որը պնդում է իր բարոյական մաքրությունը, ընդդիմանում է Աստծուն: Նա ընդդիմանում է Աստծո կարծիքին և, լավագույն դեպքում, համարում է, որ Նա սխալվել է, իսկ վատագույն դեպքում՝ որ Նա ստախոս է: Նման կարծիքը, դիրքորոշումը կամ արարքը հատուկ չէ Աստծո զավակին:

ԱՐԴՅՈ՞Ք ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԱ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես ամփոփում, մենք պետք է ընդունենք այն ճշմարտությունները, որոնք սովորեցինք: Առաջինը՝ փրկության իսկ բնույթը[114] հավաստիացնում է մեզ, որ եթե մենք քրիստոնյա ենք, կվարվենք Աստծո լույսի մեջ և աստիճանաբար կաճենք Նրա բնությանը և կամքին կերպարանվելու մեջ: Երկրորդը՝ մենք կարող ենք ճշտորեն եզրակացնել, որ

113 Մատթեոս 4.4, Բ Տիմոթեոս 3.16

114 Չափազանց երկար ժամանակ Ավետարանական շարժման մեջ Աստծո փրկության աշխատանքը դիտարկվել է միայն արդարացման տեսանկյունից: Փրկության մյուս կողմերը, որոնք են վերստին ծնունդը և սրբացումը, անտեսվել են:

նրանք, ովքեր վստահաբար դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն շարունակում են վարվել հակառակ Աստծո Անձին և կամքին, մեղավոր են անձնապաստանության մեջ, հավանաբար դարձի եկած չեն և ենթակա են հավիտենական կործանման վտանգին: Երրորդը՝ ճշմարիտ դարձի ապացույցն անմեղ կատարելությունը չէ, այլ՝ կյանքը, որը բնութագրվում է անկեղծ ապաշխարությամբ և խոստովանությամբ: Եվ վերջինը՝ նա, ով դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն ապրում է մեղքի մեջ և գրեթե կամ լիովին զղջում չունի և զուրկ է աստվածային խրատից, պետք է լրջորեն մտահոգվի:

Սովորելով այս կարևոր ճշմարտությունները՝ այժմ պետք է ստուգենք մեր կյանքը և մեր քրիստոնեական դավանությունը դրանց լույսի ներքո: Արդյո՞ք մենք աճում ենք Աստծո սրբությունը ճանաչելու մեջ և, իր հերթին, ավելի ու ավելի զգայուն ենք դառնում մեր մեղքի հանդեպ: Արդյո՞ք մենք հակազդում ենք մեր մեղքին ավելի մեծ ատելությամբ և արհամարհանքով: Արդյո՞ք մենք պայքարում ենք դրա դեմ: Արդյո՞ք մեր մեղքի ծանրությունը, Աստծո բարության հետ մեկտեղ, դրդում է մեզ ապաշխարության և խոստովանության[115]: Եթե մեր պատասխանը դրական է, դա վկայում է այն մասին, որ Աստված փրկարար աշխատանք է կատարել մեզանում:

115 Հռոմեացիների 2.4

ԳԼՈՒԽ ՀԻՆԳ

Պահել Աստծո պատվիրանները

«Եվ սրանով գիտենք, որ ճանաչեցինք Նրան, եթե Նրա պատվիրանները պահենք: Ով որ ասում է, թե՝ ճանաչեցի Նրան, և Նրա պատվիրանները չի պահում, ստախոս է, և ճշմարտությունը չկա նրանում: Բայց ով որ Նրա Խոսքը պահի, հիրավի Աստծո սերը նրանում կատարյալ է»:

– Ա Հովհաննես 2.3-5

Մենք արդեն դիտարկեցինք ճշմարիտ դարձի երկու մեծ ապացույց: Առաջինը՝ ճշմարիտ քրիստոնյան սովորում է վարվել Աստծո հայտնության լույսի մեջ և աճում է՝ կերպարանվելով Նրա բնությանը և կամքին: Երկրորդը՝ քրիստոնյայի կյանքում ձևավորվում է նոր հարաբերություն մեղքի հետ: Նրանում աճում է հակակրանքը մեղքի հանդեպ, և երբ մեղանչում է, նա և՛ ապաշխարում է իր մեղքից, և՛ ազատորեն խոստովանում է այն Աստծո առջև:

Անցնելով Հովհաննեսի թղթի երկրորդ գլխին՝ մենք գտնում ենք ճշմարիտ դարձի երրորդ ապացույցը. հավատացյալը պահում է Աստծո պատվիրանները: Այս գլխում մենք կձգտենք հասկանալ, թե ինչ է սա նշանակում, և ինչպես պետք է կիրառել սա մեր կյանքում:

ՀԱՎԱՏՔԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Մենք պետք է հիշեցնենք մեզ Հովհաննեսի Առաջին թղթի ընդհանուր նպատակը. նա գրի առավ այս ճշմարտությունները, որպեսզի Հիսուս Քրիստոսին հավատացող մարդիկ ստանան իրենց հավատքի աստվածաշնչյան վավերացումը, այսինքն՝ իմանան, որ հավիտենական կյանք ունեն[116]: Հետևաբար, Հովհաննեսը սկսում է իր երրորդ ստուգումը՝ վերահաստատելով այս նպատակը. «Եվ սրանով գիտենք, որ ճանաչե-

116 Ա Հովհաննես 5.13

ցինք Նրան, եթե Նրա պատվիրանները պահենք» (Ա Հովհ. 2.3):

Մենք պետք է հիշեցնենք մեզ, որ ամբողջ այս թղթում Հովհաննեսը տարբերակում չի անում երկու տեսակի քրիստոնյաների միջև. նա չի բաժանում Աստծո ժողովրդին հոգևորների և մարմնավորների: Հովհաննեսն առանձնացնում է ոչխարներին այծերից: Թեև նրա գլխավոր նպատակը ճշմարիտ հավատացյալներին փրկության սուրբգրային հավաստիացում տալն է, որպես կողմնակի հետևանք՝ նա բացահայտում է նրանց, ովքեր դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն դեռևս դարձի եկած չեն: Շատերի համար այսօր այս խոսքերը ծանր են, և դրանք դժվար է ընդունել: Բայցևայնպես, Հովհաննեսը պարզապես հետևում է Մատթեոս 7.17-19-ում Տիրոջ կողմից սահմանված ուսմունքին և օրինակին. բարի ծառը որոշվում է իր բերած բարի պտղից, որովհետև ծառը ճանաչվում է իր պտղից:

Թեև սա աստվածաշնչյան ճշմարտություն է, որն ընդունված է եղել եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում՝ իր ամենաակնառու ծառայողների և հաստատված հավատքի դավանանքների կողմից, ժամանակակից ավետարանականների մեծամասնությունը, թվում է, դատող, խիստ և սիրուց զուրկ է համարում այն: Այս անսովոր արձագանքը կարող է վերագրվել փրկության և դրան ուղեկցող բոլոր երևույթների մակերեսային դիտարկմանը: Ժամանակակից ավետարանական շարժման մեջ փրկությունը փոքրացվել է՝ հասցվելով ընդամենը Քրիստոսին ընդունելու մարդկային որոշման, և ենթադրվում է, որ դրան հետևող կյանքը լիովին կախված է դարձի եկած մարդու շարունակաբար կայացվող ճիշտ որոշումներից: Համարվում է, որ, քանի որ Աստծո սերը հարկադրական և շահարկող չէ, քրիստոնյան կարող է պարզապես որոշել, որ ինքն աՃ չի ունենալու: Նա կարող է ապստամբել Աստծո մեղմ մղումների դեմ և այդպես էլ չգնալ ճշմարիտ աշակերտության ճանապարհով: Նա կարող է մարմնավոր մնալ, մինչև այն օրը, երբ ուղեկցվի դեպի փառքը և վերափոխվի: Թեև սրանում որոշ ճշմարտություն կա, ընդհանուր առմամբ, այս կարծիքը պետք է մերժվի՝ որպես բացարձակ հերձվածություն:

Թեև ճշմարիտ է, որ Աստծո սերը հարկադրական և շահարկող չէ, և հավասարապես ճշմարիտ է, որ մարդու կամքն անհրաժեշտ է թե՛ դարձի, թե՛ սրբացման մեջ, այս կարծիքն անտեսում է և նույնիսկ մերժում է առնվազն երեք խոշոր վարդապետություն, որոնք անբաժան են փրկությունից: Առաջինը վերածնման վարդապետությունն է: Այն մարդը, որն ապաշխարել է մեղքից և հավատացել է Տեր Հիսուս Քրիստոսին, վերստին ծնվել է: Նա դարձել է նոր ստեղծված՝ նոր բնությամբ և վերափոխված ձգտումներով: Թեև նա դեռ պետք է պայքարի իր մեղավոր մարմնական բնության, այս աշխարհի և սատանայի հետ, ու թեև նա

կատարյալ չի դառնա մինչև վերջնական փառավորումը Երկնքում, նա, այնուամենայնիվ, կդրսևորի այն նոր անձի հատկանիշները, որն ինքը դարձել է: Անհրաժեշտ է հիշել հետևյալ կանոնը. բանական անձի կամքը և ձգտումները որոշվում են նրա բնությամբ:

Երկրորդ և երրորդ վարդապետությունները սրբացման և աստվածային նախախնամության անբաժանելի ճշմարտություններն են: Եթե մենք հավատում ենք Սուրբ գրքի ոգեշնչմանը և Աստծո հավատարմությանը, ապա, Պողոս առաքյալի հետ միասին, մենք պետք է համոզված լինենք, որ այն Աստված, Ով սկսեց Իր բարի գործը, կկատարի այն յուրաքանչյուր հավատացյալի կյանքում[117]: Որովհետև Աստված է, որ ներգործում է հավատացյալի ներսում՝ կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես[118]: Ճշմարիտ հավատացյալը կսովորի Տիրոջից և կառաջնորդվի Նրա Հոգով[119]: Եվ երբ հավատացյալը մեղանչի կամ ապստամբի Աստծո հայրական ձեռքի դեմ, նա կխրատվի, որպեսզի բաժնեկից լինի Աստծո սրբությանը և սրբացմանը, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը[120]: Նա կխրատվի նույնիսկ տրտմության և տառապանքի աստիճան, որպեսզի կարողանա արդարության խաղաղ պտուղ բերել[121]: Եթե ինչ-որ մեկը պնդում է, որ Աստծո որդի է՝ Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով, սակայն ապրում է մարմնավոր կերպով, և նրա կյանքում չկա Աստծո միջամտությունը, ապա Սուրբ գիրքը դատապարտում է նրան՝ որպես կեղծ հավատացյալի և խորթ զավակի. «Եթե խրատին համբերեք, Աստված ձեզ հետ՝ ինչպես որդիների հետ կվարվի, որովհետև ո՞ր որդին է, որ հայրը նրան չի խրատում: Բայց եթե առանց խրատի եք, որին ամենը մասնակից եղան, ուրեմն խորթ եք և ոչ՝ որդիներ» (Եբր. 12.7,8):

Փրկության բնույթը, Աստծո նախախնամության զորությունը և Նրա խոստումների մնայուն հավատարմությունը երաշխավորում են, որ հավատացյալը կաճի, կհասունանա և կարտացոլի իրենում եղող նոր կյանքի հատկանիշները: Այս պատճառով է, որ Հիսուսը կարող է ասել. «Իրենց պտուղներից ճանաչե՛ք նրանց» (Մատթ. 7.16-20): Այս ճշմարտությունների շնորհիվ է, որ Պողոսը կարող է հորդորել հավատացյալներին ստուգել և քննել իրենց՝ պարզելու համար, թե արդյո՞ք իրենք հավատքի մեջ են[122]: Այս հիմքի վրա է, որ Հովհաննեսն իր թղթում կարող է աստվածաշնչյան չափանիշ ներկայացնել, որով նրանք պետք է անեն դա:

117 Փիլիպեցիների 1.6
118 Փիլիպեցիների 2.13
119 Հովհաննես 6.45, Հռոմեացիների 8.14, Փիլիպեցիների 3.15, Ա Հովհաննես 2.27
120 Եբրայեցիների 12.10,14
121 Հովհաննես 15.8,16, Եբրայեցիների 12.11
122 Բ Կորնթացիների 13.5

ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԻՆ

Համաձայն այս և շատ այլ նորկտակարանյան հատվածների՝ ամբողջ Նոր կտակարանում, Աստծո պատվիրաններին հնազանդվելը ճշմարիտ դարձի և Նրա հետ ճիշտ հարաբերությունների մեծագույն ցուցիչներից է: Հնազանդությունը Խոսքին՝ փրկության մեծագույն և անսխալական ստուգումն է: Այս ճշմարտությունն ամենից պարզ արտահայտվում է Հակոբոս 2.17-20-ում.

> «Այսպես էլ հավատքը, եթե ինքնին գործ չունենա, մահացած է: Բայց ինչ-որ մեկը կասի. «Դու հավատք ունես, իսկ ես գործեր ունեմ»: Ցույց տուր ինձ քո հավատքը՝ առանց քո գործերի, իսկ ես ցույց կտամ քեզ իմ հավատքն իմ գործերից: Դու հավատում ես, որ մեկ Աստված կա: Ճիշտ ես անում: Նույնիսկ դևերն են հավատում, և դողո՛ւմ են: Բայց ցանկանո՞ւմ ես իմանալ, ո՛վ անմիտ մարդ, որ հավատքն առանց գործերի մահացած է» (NKJV):

Նրանք, ովքեր ընդունում են Սուրբ գրքի անսխալականությունը և միատարրությունը, հասկանում են, որ չկա ոչ մի հակասություն Հակոբոսի խոսքերի և հավատքով արդարանալու վարդապետության միջև, որը Պողոս առաքյալը պարզորեն սովորեցնում էր[123], և որը բարեկարգողները հաստատակամորեն ընդունում և քարոզում էին[124]: Այս երկու ոգեշնչված հեղինակները պարզորեն խոսում են փրկության մասին՝ նկարագրելով նույն դրամի երկու երեսները: Պողոս առաքյալը խոսում է փրկության պատճառի մասին, իսկ Հակոբոսը՝ արդյունքի: Այսպիսով, այս երկու հեղինակների միջոցով մենք ստանում ենք համապարփակ պատկերացում փրկության մեջ Աստծո աշխատանքի մասին:

Փրկությունը միայն հավատքով է, և ովքեր այլ կերպ են հավատում և սովորեցնում, անեծքի տակ են[125]: Այնուամենայնիվ, հավատքով փրկության արդյունքը՝ գործերն են, կամ հնազանդությունը՝ օրենքին: Սակայն մենք չպետք է վերագրենք նույնիսկ այս գործերը դրանք կատարողին, այլ՝ Աստծուն, Ով շնորհք է տալիս[126]: Հավատքով փրկված մարդը ապրում է՝ շարունակաբար կերպարանվելով Աստծո պատվիրաններին, ոչ թե շնորհիվ ինչ-որ նորագյուտ կարողության կամ կամքի ուժի, քանի որ նա վերածնվել է[127], նոր բնություն է ստացել, նոր ստեղծված է դարձել, և Աստծո

---

123 Հռոմեացիների 3.19-22, 4.1-25, Գաղատացիների 2.16

124 Չափազանցություն չէ ասելը, որ «սոլա ֆիդե», լատիներեն՝ «միայն հավատքով արդարանալու» վարդապետությունը այն ճշմարտությունն էր, որից բռնկվեց Բարեկարգումը (Ռեֆորմացիան):

125 Գաղատացիների 3.10

126 Ա Կորնթացիների 15.10, Եփեսացիների 3.7

127 Հովհաննես 3.3,7, Ա Պետրոս 1.3,23

Հոգին բնակվում է նրանում[128]: Պողոսի բառերով, նա մահացել է հին մարդու համար, որն ինքը մի ժամանակ էր, և հարություն է առել, որ կյանքի նորոգության մեջ վարվի[129]: Այս ամենը Աստծուց է, որ հաշտեցրեց մեզ Իր հետ Քրիստոսի միջոցով, և երբ մենք պատշաճ կերպով հասկանում ենք սա, ամեն բան վերագրում ենք Աստծուն՝ երկրպագության միջոցով[130]:

Այս ճշմարտությունը նույնպես հիմնավորվում է Պողոսի այն խոսքերով, որոնք, հավանաբար, ավելի հաճախ են մեջբերվում, քան ցանկացած այլ հատված՝ ի պաշտպանություն միայն հավատքով փրկության ուսմունքի. «Որովհետև շնորհքով եք փրկված՝ հավատքի ձեռքով, և սա ոչ թե ձեզնից է, այլ Աստծո պարգևն է, ոչ թե գործերից, որ մեկը չպարծենա: Որովհետև Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք» (Եփես. 2.8-10):

Առաջին երկու խոսքերում Պողոսը պնդում է՝ ավելորդության աստիճանի հասնելով. փրկությունը *շնորհքով է և հավատքի միջոցով, և այն ոչ թե մարդուց է, այլ Աստծո պարգևն է, և գործերի արդյունք չէ, որպեսզի ոչ ոք չպարծենա:* Դժվար կլիներ ավելի հստակ և սպառիչ պնդում անել՝ առանց ընթերցողի միտքը վիրավորելու: Մի՞թե Պողոսը կարող էր ավելի պարզ արտահայտել այս անժամանակյա ճշմարտությունը, որն ուսուցանվում և պաշտպանվում է Սուրբ գրքի յուրաքանչյուր էջում: Գաղատացիների 2.16-ում նա նույնքան պարզորեն գրում է. «Մարդն օրենքի գործերից չի արդարանում, բայց միայն Հիսուս Քրիստոսի հավատքից... ոչ թե օրենքի գործերից, որովհետև օրենքի գործերից ոչ մի մարմին չի արդարանա»:

Պողոսը հնարավորինս պարզ շարադրում է Եփեսացիների 2.8,9-ը՝ ցույց տալու համար, որ հավատքն արդարացման միակ միջոցն է, իսկ հետո ուղղում է իր ուշադրությունը մյուս երկու ուղեկցող վարդապետություններին՝ Աստծո նախախնամությանը և սրբացման աշխատանքին հավատացյալի կյանքում: Հավատքով արդարացած մարդիկ Աստծո ստեղծվածն են՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնք Աստված նախապես պատրաստել է նրանց համար աշխարհի արարումից առաջ, որպեսզի նրանք վարվեն դրանցում: Աստված չի արդարացնում, իսկ հետո թողնում մարդուն: Նա չի հայտնել մեղքի դատապարտությունից փրկելու Իր զորությունը, որ դրանից հետո հայտնի, որ անկարող է փրկել մեղքի իշխանությունից: Ինչո՞ւ են բազմաթիվ ժամանակակից ամբիոններ լիովին կույր այս ճշմարտության հանդեպ: Այն Աստված, որ կարող է արդարացնել առաջին մեղավորին, կարող է նաև

128 Եզեկիել 36.26,27, Հռոմեացիների 8.9-11, Բ Կորնթացիների 5.17
129 Հռոմեացիների 6.1-6
130 Բ Կորնթացիների 5.18

սրբացնել առաջին մեղավորին[131]: Ամեն կիրակի եկեղեցական նստարաններին անթիվ մարմնավոր և չսրբացված մարդիկ են նստում, ոչ թե՝ որ Աստծո խոստումներն անզոր են, այլ՝ որ նրանք դեռևս դարձի չեն եկել: Նրանք աստվածապաշտության կերպարանք ունեն, սակայն ուրացել են դրա զորությունը[132]: Նրանք նույնացնում են իրենց Քրիստոսի հետ, սակայն «անօրինություն են գործում», ասես Նա երբեք օրենք չի տվել իրենց, որին պետք է հնազանդվեն: Նրանք «Տե՛ր, Տե՛ր» են կոչում Նրան, բայց չեն անում այն, ինչ Նա ասում է (Ղուկ. 6.46): Վերջին օրը նրանք կլսեն իրենց ուղղված ամենազարհուրելի դատավճիռը. «Երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք» (Մատթ. 7.23):

Այս պատճառով է, որ Հովհաննեսի Առաջին թղթի ստուգումներն անչափ կարևոր են, հատկապես այն ստուգումը, որն այս պահին դիտարկում ենք: Փրկության ապացույցը՝ անմեղ կատարելությունը կամ հնազանդության գործերի անթերի ցուցակը չէ, այլ նոր հարաբերությունն է Աստծո պատվիրանների հետ, իրական հակվածությունը դրանց, դրանք կատարելու անկեղծ ցանկությունը, դրանց մշտական գործնական կիրառումը, նաև սրտանց զղջումը, երբ մեր կողմից դրանք անտեսելն ակնհայտ է դառնում: Մինչև մարդու դարձի գալը, նա չունի նման հարաբերություն Աստծո պատվիրանների հետ, այլ այնպես է ապրում, ասես Աստված չի տվել ոչ մի օրենք, որին պետք է հնազանդվել, նաև ոչ մի իմաստուն ցուցում, որով պետք է հիանալ, և որը պետք է կատարել: Նա չի սկսում ճանաչել Աստծո օրենքը և ջանասիրաբար կիրառել այն: Նրա գրեթե մշտական անհնազանդությունը չի ազդում իր խղճի վրա և չի դրդում ապաշխարության: Այնուամենայնիվ, երբ մարդը կենդանանում է Աստծո Հոգով՝ Ավետարանի քարոզման միջոցով, նրա կյանքում սկսվում է նոր հարաբերություն ոչ միայն Աստծո հետ, այլև Աստծո Խոսքի հետ: Նա Աստծո պատվիրանների իմաստության և գեղեցկության հանդեպ աճող գնահատանք է հայտնաբերում իրենում: Նա բացահայտում է Աստծո պատվիրաններն իմանալու և դրանց համապատասխան վարվելու ճշմարիտ ցանկություն: Թեև նախկինում նա լիովին արհամարհում էր Աստծո պատվիրանները, այժմ գովաբանում է դրանց արժանիքները: Ի շփոթություն իրեն և ի զարմանս նրանց, ովքեր ճանաչել են իրեն մինչև իր դարձի գալը, ձեռք ձեռքի տված Սիոնի մեծագույն սրբերի հետ նա հայտարարում է.

> «Տիրոջ օրենքն անարատ է, հանգստացնում է հոգին.
> Տիրոջ վկայությունը ճշմարիտ է, իմաստուն է անում պարզամիտին:

131 Ա Տիմոթեոս 1.15
132 Բ Տիմոթեոս 3.5

Տիրոջ պատվիրաններն ուղիղ են, ուրախացնում են սիրտը.
Տիրոջ հրամանները մաքուր են, լուսավորում են աչքերը:
Տիրոջ վախը սուրբ է, մնում է հավիտյան.
Տիրոջ դատաստանները ճշմարիտ են, բոլորովին արդար:
Նրանք ավելի ցանկալի են, քան թե ոսկի և քան թե շատ մաքրված ոսկի.
Է՛լ ավելի քաղցր են, քան թե մեղր և մեղրահաց:
Քո ծառան էլ նրանցով լուսավորվում է.
Նրանց պահպանությունում շատ հատուցում կա» (Սաղմ. 19.7-11):

Ինչի՞ն կարող ենք վերագրել Աստծո Խոսքի հանդեպ այս նորագյուտ գնահատանքը: Եթե դրա հիմքում կռապաշտական սեր չէ, այն պետք է վերագրվի Աստծո հանդեպ նորագյուտ սիրուն: Այս պատճառով է, որ Հովհաննեսը գրում է. «Բայց ով որ Նրա Խոսքը պահի, հիրավի Աստծո սերը նրանում կատարյալ է» (2.5): Սա չի կարող վերաբերել հավատացյալի հանդեպ Աստծո սիրուն, քանի որ այն կատարյալ է հենց սկզբից: Այն սերը, որի մասին Հովհաննեսը գրում է, վերածնված քրիստոնյայի սրտից բխող սերն է: Նա սիրում է Աստծուն, և այդ սերն ապացուցվում է, արտահայտվում է և կատարելագործվում է՝ Աստծո պատվիրաններն ավելի ճշգրտորեն կատարելու միջոցով: Սիրելի մաքրակրոն իմաստուն Մեթյու Հենրին առաջարկում է մի խորաթափանց միտք, որը և՛ պերճախոս է, և՛ կառուցողական:

«Լույսը պետք է բոցավառի սերը, և սերը պետք է պահի և կպահի Աստծո Խոսքը: Սերը ձգտում է իմանալ, թե ինչպես հաճեցնել և ծառայել Սիրելիին, և պարզելով, որ դա տեղի է ունենում Նրա հռչակված կամքը կատարելով, այն գործում և արտահայտվում է: Սերը դրսևորվում է, և սա դառնում է նրա կատարյալ (կամ լիարժեք) վարժանքը, գործունեությունը և հրճվանքը, և սրանով (Աստծո և Քրիստոսի կամքը պարտաճանաչ կատարելով) իմանում ենք, որ Նրանում ենք: Մենք իմանում ենք, որ պատկանում ենք Նրան, և միավորված ենք Նրա հետ այն Հոգով, որը բարձրացնում և օգնում է մեզ այս հնազանդության մեջ»[133]:

Սա չի նշանակում, որ ճշմարտապես դարձի եկած մարդն այլևս չի արհամարհի օրենքը և անհնազանդությամբ չի շրջվի դրանից: Չկա մի մարդ, որը չի մեղանչում, և ոչ ոք ազատ չէ այն անտարբերությունից, որը երբեմն հաղթահարում է մեր անձը և կուրացնում մեր դատողությունը: Չկա ոչ մի հավատացյալ, որը սիրում է Աստծուն այնպես, ինչպես

133 Մեթյու Հենրի. *«Ամբողջ Աստվածաշնչի մեկնություն»* (Նյու Յորք, «Fleming H. Revell», անհայտ տարեթիվ), հտ. 6, էջ 1066:

պետք է սիրի, որը պատշաճ կերպով ցանկանում է Աստծո օրենքը, կամ որն այնքան նախանձավոր է այն կատարելու հարցում, որքան ինքը կամենում է: Այնուամենայնիվ, սա նշանակում է, որ Աստծո Հոգուց վերածնված մարդիկ, Խոսքի հանդեպ իրենց կարծիքով և այն կատարելով նկատելիորեն կտարբերվեն դեռևս դարձի չեկած և այս աշխարհում գտնվող մարդկանցից: Ահա այն ճշմարտությունը, որը Հովհաննեսը ձգտում է ցույց տալ մեզ:

ԴԱՏԱՐԿ ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննեսը շարունակում է՝ բացահայտելով այն մարդկանց, որոնք ցանկանում են նույնանալ քրիստոնեության հետ, սակայն չունեն նման վստահության ոչ մի պատճառ: Կրկին, Հովհաննեսի համարձակությունը մի փոքր խիստ է հնչում ժամանակակից ականջների համար, որոնք սովորել են ավելի մեղմ խոսքերի: Այնուամենայնիվ, նրա խոսքերը ոգեշնչված են, և նրա սերն անառարկելի է: Նա գրում է. «Ով որ ասում է, թե «Ճանաչեցի Նրան» և Նրա պատվիրանները չի պահում, ստախոս է, և ճշմարտությունը չկա նրանում» (Ա Հովհաննես 2.4):

Եթե համարում ենք, որ Հովհաննեսի բառերը չափազանց խիստ կամ դաժան են, մենք առնվազն պետք է հասկանանք, որ նրա լեզուն սովորական է Հին և Նոր կտակարանների համար: Հիսուսը բացահայտում է կեղծ հավատացյալներին շատ ավելի խիստ բառերով՝ անվանելով նրանց «անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23): Պողոս առաքյալը հանդիմանում է այդ մարդկանց՝ ասելով, որ նրանք պնդում են, թե ճանաչում են Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են Նրան: Նա նույնիսկ մեղադրում է նրանց՝ «պիղծ, անհնազանդ և ամեն բարի գործի համար անպիտան» անվանելով (Տիտոս 1.16): Հակոբոսը՝ Տիրոջ խորթ եղբայրը, ասում է, որ նման մարդկանց բնավորությունը և վարքն ավելի վատն է, քան դևերինը, քանի որ դևերը գոնե այնքան ողջամտություն ունեն, որ սարսափում են[134]: Իսկ այդ մարդիկ դավանում են Քրիստոսին, սակայն անտեսում են Նրան և Նրա պատվիրանները՝ առանց թե՛ ժամանակավոր, թե՛ հավիտենական հետևանքներից վախենալու: Նրանք համարձակ հայտարարում են. «Ես ճանաչում եմ Նրան», իսկ հետո փայլուն կերպով պաշտպանում են իրենց հարաբերությունն Աստծո հետ՝ ընդդեմ հակառակի մասին վկայող բոլոր ապացույցների: Նրանք խստորեն վիրավորվում են, սրտի կսկիծ են զգում և նույնիսկ համակվում են զայրույթով ամենաչնչին ենթադրությունից այն մասին, որ իրենք չեն ճանաչում Տիրոջը, կամ որ Նա չի ճանաչում իրենց: Այն-

134 Հակոբոս 2.19

պես որ, նրանց հետ այս մասին խոսող մարդիկ պետք է հիշեն Տիրոջ զգուշացումը. «Սուրբ բանը շներին մի՛ տվեք, ո՛չ էլ ձեր մարգարիտները գցեք խոզերի առջև, որ նրանց կոխ չտան իրենց ոտքերով և ետ դառնան՝ ձեզ պատառեն» (Մատթ. 7.6):

Համոզիչ ապացույցներին համառորեն հակառակվելն ունի երկու պատճառ: Առաջինը մարդկային բնությունն է: Չվերածնված սիրտը լցված է հպարտությամբ և բոլոր չար խորհուրդներով[135]: Այնուամենայնիվ, այն սիրում է պատել իրեն կրոնի և բարեպաշտության բարակ պատյանով: Բավական է թրով հասցրած ամենաթեթև հարվածը՝ այդ շինծու բարեպաշտության բարակ պատյանը կոտրելու համար, և կեղծ հավատացյալի ճշմարիտ բնությունն ի հայտ է գալիս՝ նման հորդացող ջրերի կամ հոշոտող գայլի: Երկրորդ պատճառը, թե ինչու է կեղծ հավատացյալն անթափանցելի թվացող պարիսպ կանգնեցնում իր մոլորության շուրջը, այն քարոզներն են, որոնք նա լսել է: Փոխարենը զգուշացնեն, որ հավատացյալները պատրաստվեն դիմավորելու իրենց Աստծուն, հաստատ դարձնեն իրենց կոչումը և ընտրությունը և ստուգեն իրենց՝ տեսնելու՝ արդյո՞ք հավատքի մեջ են, ժամանակակից ամբիոնը, թվում է, ընկղմում է նրանց վտանգավոր քնի մեջ՝ ասելով. ««Խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն,», երբ խաղաղություն չկա»[136]: Շատ քարոզիչներ կառուցում են իրենց ծառայությունը դարձի չեկած եկեղեցական անդամների չոր ոսկորների վրա, դրա թույլ պատերին քսում են ստեղծարար շուկայավարության և զվարճալի միջոցառումների ծեփը և ծակծակոտ հորեր են փորում, որպեսզի հոգան այն մարդկանց առօրյա կարիքները, որոնք մահանում են և Ավետարանի կարիքն ունեն[137]: Երբ Աստծո դատաստանի հորդառատ անձրևները և սաստիկ քամիները վրա հասնեն, նրանց պատը փուլ կգա, իսկ դրա մնացորդները կմոռացվեն[138]: Քարոզողը միգուցե փրկվի, բայց հազիվ կրակից ազատվելով, իսկ նրա գործը կայրվի[139]:

Ովքեր դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն լսել չեն ուզում Նրա պատվիրանների մասին, պետք է մեծապես մտահոգվեն: Թեև նրանք աննահանջ ընդդիմանում են՝ պնդելով, որ սիրում են Աստծուն, նրանց գործերը չեն վկայում այդ մասին: Անհրաժեշտ է այդպիսի մարդկանց ցույց տալ, որ Սուրբ գիրքը նման սեր չի ճանաչում, այլ արհամարհում է այն՝ որպես անիմաստ խոսքեր[140]: Ավելին, ովքեր պնդում են, որ մարգարեի վերարկու ունեն, պետք է արթնացնեն այդ

135 Ծննդոց 6.5, Մարկոս 7.21-23
136 Երեմիա 6.4, Ամոս 4.12, Բ Կորնթացիների 13.5, Բ Պետրոս 1.10
137 Երեմիա 2.13, 14.3, Եզեկիել 13.10,11
138 Երեմիա 9.11-14, Եզեկիել 13.10-16
139 Ա Կորնթացիների 3.15
140 Ա Հովհաննես 2.5,15

մարդկանց, որպեսզի նրանք հարություն առնեն մեռելներից: Այդ ժամանակ Քրիստոսը ճշմարտապես կլուսավորի նրանց[141]:

ՄԵՐ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՍՏԾՈ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

Հովհաննեսի ձայնը պարզորեն լսվում է այս երրորդ ստուգման մեջ, որը առաջարկում է մեզ. «Եվ սրանով գիտենք, որ ճանաչեցինք Նրան, եթե Նրա պատվիրանները պահենք» (Ա Հովհ. 2.3): Այս ստուգումն ամրացնո՞ւմ է, թե՞ թուլացնում մեր հավաստիացումը փրկության մեջ: Եթե մեր վերաբերմունքն Աստծո պատվիրանների հանդեպ համեմատվեր անհավատի վերաբերմունքի հետ, արդյո՞ք մենք իրական կամ նկատելի տարբերություն կտեսնեինք: Ինչպե՞ս կնկարագրեինք մեր վերաբերմունքն Աստծո կամքի հանդեպ, որը հայտնված է Նրա Խոսքում: Մենք ուսումնասիրո՞ւմ ենք Աստծո Խոսքը՝ մեր անձն ընտիր դարձնելու համար[142]: Մենք Խոսքը կատարողնե՞ր ենք, թե՞ միայն լսողներ, որոնք խաբում են իրենց[143]:

Ամփոփելով՝ կարող ենք ասել հետևյալը ճշմարտապես դարձի եկած մարդու մասին: Առաջինը՝ մենք պետք է փաստենք նրա տկարությունը: Նույնիսկ ամենահասուն սուրբը հաճախ ստիպված է պայքարել այս աշխարհի շեղող հանգամանքների և Աստծո Խոսքի հանդեպ իր սրտում առաջացող անտարբերության դեմ: Յուրաքանչյուր քրիստոնյա ցավով է խոստովանում չափազանց հաճախ Աստծո Խոսքն անտեսելը և Նրա պատվիրանները խախտելը: Այնուամենայնիվ, այս խոստովանությունը և ապաշխարությունն են, որ վստահաբար ապացուցում են նրա դարձի գալը: Վերստին չծնված մարդը չունի նման մտահոգություններ:

Երկրորդը՝ չնայած ճշմարիտ հավատացյալի փաստացի տկարությանը, նրա վերաբերմունքն Աստծո պատվիրանների հանդեպ ակնհայտորեն տարբերվելու է անհավատի վերաբերմունքից: Քրիստոնյայի հիացմունքն Աստծո պատվիրաններով ավելանալու է, և նա առաջադիմելու է դրանք հնազանդությամբ կատարելու մեջ: Թեև նրա առաջընթացը հաճախ երեք քայլ առաջ և երկու քայլ ետ է, այն իրական է լինելու: Թեև նրա կյանքում կան էտման և աստվածային խրատի պահեր, նա հաղթելու է և պտղաբեր է լինելու: Հավատացյալի կյանքի ամբողջ ընթացքում և Աստծո շարունակական և սրբացնող աշխատանքի միջոցով նրա վերաբերմունքը և վարքն արտացոլելու են ավելի ու ավելի մեծ հնազանդություն Աստծո կամքին, որը հայտնված է Նրա պատվիրաններում:

141 Եփեսացիների 5.14
142 Բ Տիմոթեոս 2.15
143 Հակոբոս 1.22

Երրորդը՝ հավատացյալի սուգն անհնազանդության պատճառով ավելանալու է՝ հնազանդվելու ցանկության հետ մեկտեղ: Է՛լ ավելի հասկանալով Աստծո արժանիքները և գնահատելով Նրա Խոսքը, հավատացյալը մեծ զղջում է զգալու իր կյանքում ցանկացած տեսակի անհնազանդության համար: Այնուամենայնիվ, նրա զղջումը հուսահատության չի տանելու, քանի որ իր երկրային պանդխտության մեջ ինքը տեսել է Աստծո հավատարմությունը և փորձառաբար գիտի, որ կոտրված և փշրված սիրտը Նա «չի անարգի» (Սաղմ. 51.17):

Եթե ձեր կյանքում տեսաք այն, ինչ ներկայացնում է Հովհաննեսը՝ քրիստոնյայի նոր և եզակի վերաբերմունքն Աստծո պատվիրանների հանդեպ, դուք կարող եք ավելի մեծ հավաստիացում ունենալ փրկության մեջ: Այնուամենայնիվ, եթե դուք պարզեցիք, որ օտարացած եք Աստծո պատվիրաններից կամ չունեք որևէ առնչություն դրանց հետ, մտահոգվելու լուրջ պատճառ ունեք: Դուք պետք է աղաղակեք Աստծուն և ստուգեք ձեր կյանքը՝ Նրա Խոսքի լույսի ներքո: Աստված չի անարգի կոտրված ու փշրված հոգին, դուրս չի անի նրան, ով գալիս է Իր մոտ[144], և «ամեն, ով որ Տիրոջ անունը կանչի, կապրի (կամ՝ կփրկվի)» (Հռոմ. 10.13):

144 Հովհաննես 6.37

ԳԼՈՒԽ ՎԵՑ

Նմանվել Քրիստոսին

«Սրանով ճանաչում ենք, որ Նրանում ենք: Ով որ ասում է, թե՝ Նրանում եմ բնակվում, պետք է, ինչպես որ Նա գնաց, ինքն էլ այնպես գնա»:

– Ա Հովհաննես 2.5,6

Նախորդ գլխում դիտարկեցինք ճշմարիտ դարձի հավանաբար մեծագույն ապացույցը՝ մշտական հնազանդությունն Աստծո Խոսքին: Դրա մեծության ներքո կարող ենք հեշտորեն անտեսել հաջորդ ստուգման կարևորությունը: Այնուամենայնիվ, այս ստուգումն այնքան կարևոր է, որ մեր ուշադրությունն ամբողջությամբ պետք է ուղղենք դրան: Ինչպե՞ս ենք իմանում, որ ճանաչել ենք Նրան և փրկություն ենք ստացել: Պատասխանը նույնքան ազդեցիկ է, որքան և հակիրճ է. մենք վարվում ենք այնպես, ինչպես Նա վարվեց:

Առաջին հայացքից, այս ստուգումը կարող է համակել մեզ կասկածով և նույնիսկ հուսահատությամբ: Ի վերջո, ո՞վ կհամարձակվի մտածել, առավել ևս՝ հայտարարել, որ իր կյանքը հավասար է եղել այս երկրի վրա Քրիստոսի ապրած կյանքին: Բայցևայնպես, երբ մենք հաղթահարում ենք այս հատվածի սկզբնական թյուրըմբռնումը, այն վերածվում է անասելի սփոփանքի, նույնիսկ՝ ամենատկար սուրբի համար:

ՀԻՍՈՒՍԻ ԿՅԱՆՔԸ

Մեր ուսումնասիրությունը սկսելու համար օգտակար կլինի սեղմ դիտարկել այն զարմանալի կյանքը, որը Հիսուսն ապրեց այս երկրի վրա Իր պանդխտության ընթացքում: Սուրբ գիրքը սկսում է՝ հաստատելով, որ Աստծո Որդին եկավ այս աշխարհ մեղավոր մարմնի նմանությամբ[145]: Սա չի նշանակում, որ Քրիստոսն ընդամենը մեղավոր մարմնի նմանութ-

145 Բառացիորեն՝ «մեղքի մարմնի նմանությամբ», (Հռոմ. 8.3):

յուն ուներ, այլ՝ որ Նա իրականում և ճշմարտապես հագավ մարդկային բնությունը՝ չպղծված և առանց մեղքի, որը, սակայն, ենթակա էր նույն սահմանափակումներին, տկարություններին, նեղություններին և տառապանքներին, որոնց ներքո գտնվում էր անկում ապրած մարդկությունը: Վիլյամ Հենդրիկսենն այսպես է բացատրում սա. «Նա ընդունեց այդ մարդկային բնությունը՝ ոչ թե այն տեսքով, որով այն սկզբնապես տրվել էր Արարչի ձեռքով, այլ՝ տկարացած մեղքով, թեև այն ինքնին առանց մեղքի էր»[146]:

Աստծո Որդու համար անասելի նսեմացում կլիներ, եթե Նա ընդուներ մարդկային բնությունը, երբ այն իր ամբողջական փառքով ու զորությամբ էր՝ մեղանչումից առաջ: Այնուամենայնիվ, Նա ուղարկվեց մարդկային մարմնի նմանությամբ և հագավ մի բնություն, որը ենթակա էր մեր անկման բոլոր սարսափելի հետևանքներին: Նա ճանաչեց մեր տկարությունը, կրեց մեր նվաստացումը և գայթակղվեց ամեն ինչում, ինչպես և մենք, սակայն մնաց առանց մեղքի[147]: Նա «սուրբ, անմեղ, անարատ» մնաց (Եբր. 7.26):

Որպեսզի հասկանանք այս ճշմարտության մեծությունը, օգտակար է համեմատություն անել այս աշխարհում երբևէ ապրած մեծագույն և ամենից աստվածապաշտ սրբերի և Հիսուս Քրիստոսի եզակի Անձի միջև: Նույնիսկ Պողոս առաքյալի կյանքում երբևէ չէր եղել թեկուզ մի պահ, երբ նա սիրել էր Աստծուն այնպես, ինչպես Նա արժանի է: Նա երբեք չէր կատարել նույնիսկ մեկ արարք Աստծո համար, որի վերաբերյալ կարող էր ասել, որ արել էր դա Աստծո փառքի համար՝ լիովին, բացառապես և առանց որևէ մրցակցող դրդապատճառների: Այնուամենայնիվ, մենք գիտենք, որ Քրիստոսի կյանքում երբեք չէր եղել նույնիսկ մեկ վայրկյան, որ Նա չսիրեր Իր Տեր Աստծուն Իր ամբողջ սրտով, անձով, մտքով և զորությամբ[148]: Յուրաքանչյուր գործ, որը Նա արել էր, միայն Աստծուն փառավորելու կատարյալ դրդապատճառով էր: Թե՛ ուտելիս, թե՛ խմելիս, թե՛ ամենաաննշան առաջադրանքները կատարելիս Նա անում էր ամեն ինչ Աստծո փառքի համար[149]:

Հիսուսի անմեղ կատարելությունն այն աստիճան ակնառու և անժխտելի էր, որ, առանց մի փոքր վարանելու, Իր կատարելության մասին Նա վկայեց նույնիսկ թշնամիների առջև: Մեզնից ո՞վ կարող է կանգնել իր ամենից եռանդուն հակառակորդների առջև և հետևյալ մարտահրավերը նետել. «Ձեզնից ո՞վ կարող է Ինձ մեղքի համար հանդիմանել» (Հովհ. 8.46): Մեզնից ո՞վ այդքան համարձակություն կունենա, որ կանգ-

146 Վիլյամ Հենդրիկսեն. *«Նոր կտակարանի մեկնություն. Պողոսի Հռոմեացիներին ուղղված թղթի մեկնություն»* (Գրենդ Ռեփիդս, «Baker», 1980թ.) էջ 247:
147 Բ Կորնթացիների 5.21, Եբրայեցիների 4.15
148 Մարկոս 12.30
149 Ա Կորնթացիների 10.31

նի իր օրերի կրոնական առաջնորդների առջև և հայտարարի. «Ես միշտ Նրան հաճելի բաներն եմ անում» (Հովհ. 8.29): Սա Քրիստոսի վկայությունն էր Իր մասին, սակայն Նա միայնակ չէր Իր կարծիքի մեջ: Հայրը Ինքը վկայեց Քրիստոսի կատարյալ հնազանդության մասին. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Որին Ես հավանեցի» (Մատթ. 3.17, 17.5):

Ամենուր Նոր կտակարանում վկայություն ենք գտնում Հիսուս Քրիստոսի անմեղանչական կյանքի մասին: Նույնիսկ Քրիստոսի թշնամիներն ընդունում էին այս ճշմարտությունը: Հիսուսին դավաճանելուց ոչ շատ ժամանակ անց Հուդան, համակված զղջումով, բացականչեց. «Ես մեղք գործեցի՝ անմեղ արյուն մատնելով» (Մատթ. 27.4): Մինչև որ Պիղատոսը կայացրեց իր զարհուրելի դատավճիռը, կինը զգուշացրեց նրան. «Այդ արդար Մարդու հետ դու բան չունես, որովհետև շատ բաներ քաշեցի այսօր Նրա պատճառով (կամ՝ «որովհետև այսօր երազիս մեջ նրա պատճառով շատ չարչարվեցի»)» (Մատթ. 27.19): Չնայած Պիղատոսի անկայունությանը և զիջողությանը, որը հանգեցրեց Քրիստոսի մահապատժին, այդ անողոք և ինքնահաճո հռոմեացի պաշտոնյան այնպես ազդվեց, որ խոստովանեց. «Ես մի հանցանք չեմ գտնում այս մարդու մեջ» (Ղուկ. 23.4): Ի վերջո, Քրիստոսի խաչելությունն ավարտվեց մի խստասիրտ հռոմեացի հարյուրապետի խոստովանությամբ, որը բարձրացրեց իր ձայնը՝ փառք տալով Աստծուն և հայտարարելով. «Հիրավի այս մարդն արդար էր» (Ղուկ. 23.47):

Նոր կտակարանը վկայում է ոչ միայն Քրիստոսի անմեղ կյանքի, այլև Նրա բարության և արդարության մասին: Նա քարոզում էր Ավետարանը աղքատներին, թողություն էր ազդարարում գերիներին, բժշկում էր կույրերի տեսողությունը և ազատ էր արձակում հարստահարվածներին[150]: Երբ Նա բացում էր բերանը՝ սովորեցնելու համար, մարդիկ զարմանքով էին արձագանքում Նրա իշխանությանը[151]: Մեկ անգամ, երբ մարդիկ քաղցած էին, Նա մի քանի հաց և ձուկ բազմացրեց և կերակրեց հազարավորների[152]: Նա խոսքով ազատ էր արձակում դիվահարներին, սրբում էր բորոտներին, բժշկում էր հիվանդներին և հարություն էր տալիս մահացածներին[153]: Մարդիկ հենց այնպես չէ, որ ապշած էին Նրանով և վկայում էին՝ ասելով. «Նա ամեն բան լավ գործեց» (Մարկ. 7.37):

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՄԵՄԱՏԵԼ

Հաշվի առնելով Հիսուս Քրիստոսի անմեղ կյանքը և Նրա փառավոր գործերը, որոնք Նա արեց՝ հնազանդ լինելով մինչև մահ, և այն էլ՝ խաչի

150 Ղուկաս 4.18
151 Մատթեոս 7.28,29
152 Մատթեոս 14.16-21
153 Մատթեոս 8.2,3,16, Հովհաննես 11.43,44

մահ[154], մենք կարող ենք վիճարկել Հովհաննեսի պահանջի արդարացիությունը և ողջամտությունը. «Ով որ ասում է, թե՝ Նրանում եմ բնակվում, պետք է, ինչպես որ Նա գնաց, ինքն էլ այնպես գնա» (2.6): Ինչո՞ւ է այս սիրելի առաքյալը ցանկանում նման ծանր բեռ դնել մեզ վրա, որը ո՛չ նա, ո՛չ էլ մյուս առաքյալները չէին կարող կրել[155]: Ինչպե՞ս նույնիսկ ամենից աստվածապաշտ սուրբը երբևէ կարող է փրկության ուժգին հավաստիացում ունենալ՝ հաշվի առնելով իր առջև դրված նման բարձր չափանիշը: Ավելի հեշտ կլիներ կատարել փարիսեցիների ձանձրացուցիչ պահանջները կամ նույնիսկ համապատասխանել օրենքի ծանր չափանիշներին, քան ընդօրինակել մեր Տիրոջ կատարյալ կյանքը:

Այնուամենայնիվ, մինչև հուսահատությանը տեղի տալը և ինքներս մեզ հավիտենական կորստին հանձնելը, պետք է ևս մեկ անգամ հիշենք այն համատեքստը, որում Հովհաննեսը գրում է: Նա չի պահանջում հասնել կատարելության անհնարին մակարդակի, այլ խրախուսում է քննել մեր կյանքի ուղղվածությունը: Արդյո՞ք մենք դեռ վարվում ենք «այս աշխարհի սովորության պես» (Եփես. 2.1-3), թե՞ Հոգու սրբացնող աշխատանքի միջոցով սովորում ենք վարվել՝ ինչպես որ Քրիստոսն էր վարվում: Արդյո՞ք կա նկատելի, գործնական վկայություն այն մասին, որ մենք ձգտում ենք նմանվել Քրիստոսին: Քրիստոսի աշակերտը լինելու մեր պնդումը վավե՞ր է, թե՞ կեղծ՝ համաձայն մեր դիրքորոշման, գործերի և խոսքերի: Արդյո՞ք մեր ամենօրյա կյանքն ավելի շատ է դրսևորում Քրիստոսին և ավելի քիչ՝ այս աշխարհը: Արդյո՞ք խորը ցավ ենք զգում, երբ նայում ենք այն մեծ տարբերությանը, որը դեռ մնում է մեր և Քրիստոսի բնավորության միջև: Արդյո՞ք մենք փափագում ենք Քրիստոսի պես լինել:

Պատկերացրեք մի փոքրիկ տղայի, որն անչափ սիրում է իր ավագ եղբորը, հիանում է նրանով և ձգտում է նմանվել նրան ամեն ինչում: Թեև նա դեռ երեխա է, նրա դեմքի և վարքի ավելի ուշադիր ուսումնասիրությունը ցույց կտա բավականաչափ նմանություն իր ավագ եղբորը՝ նրանց ազգակցական կապն ապացուցելու համար: Մի ձմեռային առավոտ ավագ եղբայրը գնում է՝ կատարելու իր առօրյա գործերն ագարակում, և կրտսեր եղբայրը կրնկակոխ հետևում է նրան: Ավագ եղբայրը բարձրահասակ է, և նրա քայլքը երկար ու վստահ է: Նրա ոտնահետքերը ձյան վրա ցույց են տալիս ուժ և հավասարակշռվածություն, որոնք մեծապես գերազանցում են փոքրիկ տղայի կարողությունները: Այնուամենայնիվ, չվհատվելով անհնարին թվացող առաջադրանքից և առաջնորդվելով իր ավագ եղբորը նմանվելու ցանկությամբ, այդ տղան

154 Փիլիպեցիների 2.8
155 Մատթեոս 23.4

մեծացնում է քայլերը՝ իր առջևից թողած ոտնահետքերով գնալու համար: Ընդամենը մի քանի թույլ փորձերից հետո թե՛ այդ երեխայի, թե՛ ցանկացած դիտորդի համար ակնհայտ է դառնում, որ նա պարզապես անկարող է հետևել իր ավագ եղբոր քայլերին: Նույնիսկ եթե նա հառի իր հայացքն իր առջև բացված արահետին և լարի իր բոլոր ուժերը մինչև սպառվելը, իր եղբորը նմանվելու փորձերը չափազանց անճոռնի, նույնիսկ ծիծաղելի կթվան: Այնուամենայնիվ, չնայած որ այդ փոքրիկ տղան անկարող է հետևել իր եղբոր քայլերին, նրա հաստատակամությունն ապացուցում է, որ նրա նվիրումն իր եղբորը անկեղծ է: Չնայած նրա հաճախակի ձախողումներին, ցանկացած անկեղծ դիտորդի համար ակնհայտ է, որ այդ փոքրիկ տղայի սրտի և կամքի ձգտումն է լինել ավագ եղբոր նման և վարվել՝ ինչպես որ նա է վարվում:

Համաձայն Սուրբ գրքի, Քրիստոսը ոչ միայն մեր Մարգարեն է, Քահանան և Թագավորը, այլև մեր ավագ Եղբայրը[156], և այն ճանապարհը, որը Նա անցավ, և՛ ուղղորդում է մեր կյանքը, և՛ օրինակ է մեզ համար: Պողոս առաքյալը գրում է, որ մենք նախասահմանված ենք կերպարանակից լինելու Քրիստոսի պատկերին, որպեսզի Նա *«անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ»* (Հռոմ. 8.29, շեղագիրն ավելացված է): Ավելի ուշ Պողոսը հորդորում է մեզ նմանվել իրեն, ինչպես որ ինքը նմանվում է Քրիստոսին[157]: Պետրոս առաքյալը խրախուսում է հավատացյալներին՝ իրենց չարչարանքի մեջ, որ Քրիստոսն օրինակ է թողել, որ Նրա հետքերին հետևենք[158]: Ի վերջո, Եբրայեցիների թղթի հեղինակը հորդորում է մեզ, որ «դեն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը, և համբերությամբ վազենք մեր առջև դրված ասպարեզի ընթացքը: Մտիկ տանք հավատքի Ձորագլխին և Կատարողին՝ Հիսուսին» (Եբր. 12.1,2):

Այս հատվածների լույսի ներքո, մեզ համար չպետք է անսովոր լինի, որ Հովհաննեսը, ճշմարիտ դարձի ստուգումների թվում ընդգրկել է «Քրիստոսի պես վարվելը»: Ի վերջո, ո՞վ է աշակերտը, եթե ոչ նա, ով ձգտում է ամեն բանում նմանվել իր ուսուցչին[159]: Նա նվիրել է իրեն ոչ միայն իր տիրոջ ուսմունքները սովորելուն, այլև նրա կյանքի ոճին հետևելուն: Նա աշակերտ է, որը սովորում է իր ուսուցչի պես վարվել:

Որպես կանոն, ուսուցչի և աշակերտի հարաբերությունների կիզակետն այն է լինում, որ աշակերտն իր ուսուցչի նման է դառնում և կանգնում է նրա կողքին՝ հավասարի պես: Այնուամենայնիվ, քրիստոնեության մեջ ուսուցչի և աշակերտի հարաբերությունը երբեք կիզակետի չի

156 Եբրայեցիների 2.11,12
157 Ա Կորնթացիների 11.1
158 Ա Պետրոս 2.21
159 Մատթեոս 10.24,25

հասնում: Մենք երբեք չենք հասնի մեր Ուսուցչի մակարդակին և միշտ աշակերտներ կմնանք: Սա է պատճառը, որ Հիսուսը զգուշացրեց Իր աշակերտներին. «Բայց դուք Ռաբբի չկանչվեք, որովհետև մեկն է ձեր ուսուցիչը՝ Քրիստոսը, և դուք ամենդ եղբայրներ եք» (Մատթ. 23.8):

Ամենից քրիստոսանման հավատացյալը մշտապես աշակերտ է լինելու, որը դեռ պետք է լիովին կերպարանվի Հիսուս Քրիստոսի կատարելություններին: Ամենից հասունը դեռ սովորում է վարվել՝ ինչպես որ Քրիստոսն էր վարվում: Ամենից սրբացված սուրբը մշտապես դիտարկելու է իրեն որպես մեր օրինակի կրտսեր եղբայր, որը փորձում է, բայց այդպես էլ չի կարողանում հասնել իր եղբոր քայլերին: Նույնիսկ ամենից հետևողական քրիստոնեական կյանքը մշտապես ձգտում է սովորականից մեծ քայլեր անել, և այդ պատճառով անկատար և անճոռնի տպավորություն է թողնում: Եվ նույնիսկ մեր ամենից քրիստոսանման պահերին մեր նմանությունը մեր ավագ Եղբորը՝ աննշան է և ոչ հստակ: Անկախ այն առաջընթացից, որը մենք կատարել ենք՝ Նրան հասնելու մեր ճանապարհին, մեր միջև անասելի տարածություն կա: Այնպես որ, հասուն հավատացյալը մշտապես գիտակցում է, որ պետք է երկար ճանապարհ անցնի մինչև մրցանակը ստանալը: Պողոս առաքյալը զարմանալի պարզությամբ ներկայացրեց այս ճշմարտությունը Փիլիպեի եկեղեցուն ուղղված իր նամակում.

> «Ոչ իբր արդեն բռնած լինեմ, կամ թե արդեն կատարյալ եղած լինեմ, բայց հետևում եմ, որ իցե թե հասնեմ նրան, ինչպես որ էլ հենց Քրիստոս Հիսուսից բռնված եմ: Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. ետևի բաները մոռանալով՝ դեպի առջևում լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակին Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 3.12-14):

Մեծ Պողոս առաքյալը երբեք չէր հավակնում կատարելության: Նա երբեք չէր ձևացնում, որ Քրիստոսի պես է վարվում: Այնուամենայնիվ, կյանքում նա իսկապես դրսևորեց Քրիստոսին նմանվելու իրական և նկատելի ձգտում, «հետևեց» դեպի նպատակը և առաջընթաց ունեցավ այն աստիճան, որ կարող էր ասել իր հավատակիցներին. «Ինձ նմանո՛ղ եղեք, ինչպես ես էլ՝ Քրիստոսին» (Ա Կորնթ. 11.1):

Պողոսի հավասարակշռությունը սրբացումն ընկալելու մեջ օգնում է մեզ մոտենալ այս չորրորդ ստուգմանը՝ նույնպիսի աստվածաշնչյան հավասարակշռությամբ: Հովհաննեսը չի սովորեցնում, որ մենք պետք է կատարելության հասնենք, որպեսզի հավաստիացում ունենանք մեր փրկության մեջ: Նա չի պահում հավաստիացումը բոլոր այն մարդկանցից, որոնք դեռ «լիովին սրբացված» չեն: Այնուամենայնիվ, Հովհաննեսը

նույնպես հավաստիացում չի տալիս այն մարդկանց, որոնք խոստովանում են, որ չեն կերպարանվում Քրիստոսին իրենց կյանքում, չեն կարող Նրան ավելի նմանվելու ձգտման գործնական կամ նկատելի վկայություն ներկայացնել, նաև չունեն զգալի առաջխաղացում այն բանում, որ սովորեն վարվել Նրա պես:

ՍՏՈՒԳԵ՞Ք ՁԵՐ ԸՆԹԱՑՔԸ

Պատշաճ կերպով հասկանալով չորրորդ ստուգումը, այժմ պետք է ստուգենք մեզ դրա լույսի ներքո: Արդյո՞ք Քրիստոսի պես ենք վարվում: Ո՞րն է մեր կյանքի նպատակը և հակվածությունը: Արդյո՞ք մեր կյանքը Քրիստոսին նմանվելու իրական ձգտում է արտացոլում: Որքանո՞վ կարող ենք պատասխանել. «Այո՛, մենք հավաստիացում ունենք, որ դարձի գալու աշխատանքը ճշմարտապես կատարվել է մեր կյանքում, և Նա, Ով սկսել է Իր բարի գործը, կատարում է այն: Մենք պետք է պարզապես շարունակենք ապացուցել մեր դավանանքը մեր վարքով և շարունակենք կերպարանվել այն օրինակին, որը Քրիստոսը թողել է մեզ: Մեր հարատևման ամեն օրը միայն ավելի է ամրացնում այն հավաստիացումը, որն ունենք»:

Այնուամենայնիվ, մենք պետք է մտահոգված լինենք այն չափով, որ չափով մեր կյանքի ձգտումները և սպասումները նման են այս անհավատ աշխարհին: Եթե այս աշխարհի պես ունենք միևնույն նպատակները, և եթե մեր մտքերը, ժամանակը և միջոցները ծախսվում են այս աշխարհի գործերի վրա, մենք վախենալու պատճառ ունենք: Եթե մենք հիանում ենք միևնույն բաներով, որոնցով հիանում է այս աշխարհը, և ձգտում ենք նմանակել այդ ճանապարհներին, մենք պետք է վիճարկենք մեր դավանության իրական լինելը: Եթե, ստուգելով մեզ, պարզենք, որ այս ամենը վերաբերում է մեզ, մենք չպետք է անտարբեր գտնվենք, ո՛չ էլ տեղի տանք կաթվածահար անող հուսալքությանը, այլ հրատապ փորձենք լուծում գտնել: Այնուամենայնիվ, պետք է գիտակցենք, որ Սուրբ գիրքը չի առաջարկում որևէ բանաձև կամ հաջորդական ծրագիր՝ մեր խաթարված հավաստիացումը նորոգելու համար. փոխարենը, այն հորդորում մեզ փնտրել Տիրոջը՝ Իր Խոսքում և աղոթքի միջոցով, մինչև որ խաղաղություն տա մեզ: Մենք նույնպես պետք է հիշենք, որ Տերը կվավերացնի և կհաստատի այդ խաղաղությունը՝ կանգնեցնելով մեզ արդարության շավիղի վրա և սովորեցնելով գնալ դրանով, ինչպես որ Ինքն էր գնում: Մեր հավատքի բոլոր դավանությունները և դրանցից բխող հավաստիացման զգացումները վավերական են այնքանով, որքանով դրանք կարելի է ապացուցել գործնականորեն և տեսանելիորեն փոխված և փոխվող կյանքով:

ԳԼՈՒԽ ՅՈԹ

Սիրել քրիստոնյաներին

«Եղբայրնե՛ր, ոչ թե մի նոր պատվիրան եմ գրում ձեզ, այլ հին պատվիրանը, որ սկզբից ունեիք, և հին պատվիրանն այն խոսքն է, որ լսեցիք սկզբից: Դարձյալ նոր պատվիրան եմ գրում ձեզ, որ ճշմարիտ է Նրանում և ձեզանում, որ խավարն անցնում է, և ճշմարիտ լույսն արդեն երևում է:

Ով որ ասում է, թե լույսի մեջ է, և իր եղբորն ատում է, մինչև հիմա խավարի մեջ է: Նա, որ իր եղբորը սիրում է, լույսի մեջ է մնում, և գայթակղություն չկա նրանում: Բայց նա, որ իր եղբորն ատում է, խավարում է, և խավարի մեջ է ման գալիս, և չգիտի, թե ուր է գնում, որովհետև խավարը կուրացրեց նրա աչքերը»:

– Ա Հովհաննես 2.7-11

Սերը՝ Աստծո ժողովրդի հանդեպ կրկնվող թեմա է և՛ Հին, և՛ Նոր կտակարաններում: Այնպես որ, զարմանալի չէ, որ Հովհաննեսը ներկայացնում է այն որպես ճշմարիտ դարձի ստուգում: Պարզ ասած, նա, ով արտահայտում է իրական և հարատև սեր Քրիստոսում իր եղբոր հանդեպ, ինչպես նաև եկեղեցու հանդեպ՝ հավաքական առումով, ազդեցիկ վկայություն ունի իր դարձի մասին: Այնուամենայնիվ, նա, ով պնդում է, որ հավատում է Քրիստոսին, սակայն չի սիրում իր եղբորը, գրեթե հիմք չունի նման պարծանքի համար:

ՀԻՆ ՊԱՏՎԻՐԱՆ

Հովհաննեսը ներկայացնում է փրկարար հավատքի իր հինգերորդ ստուգումը՝ հաստատելով մի հիմնարար ճշմարտություն. մեր եղբորը սիրելու մասին Աստծո պատվիրանը եղել է Նրա հայտնված կամքի կենտրոնական դրույթներից մեկը աստվածային հայտնության սկզբից ի վեր: Քանի որ «Աստված սեր է» (Ա Հովհ. 4.8), և Նա սիրեց Իր ժողովր-

դին հենց սկզբից[160], զարմանալի չէ, որ հենց սկզբից Նա պատվիրեց սիրել միմյանց: Մեր եղբորը սիրելու պատվիրանն այնպիսի բան չէ, ինչը հայտնվեց Նոր կտակարանի գրքերում կամ Քրիստոսի ուսմունքներում: Այն անվերապահորեն ներկայացվում է Հին կտակարանի ամենավաղ պատմություններում[161], նաև հստակ հայտնվում է Մովսեսի օրենքում՝ Ղևտացիների 19.18-ում. «Վրեժ չառնես, և քո ժողովրդի որդիներից ոխ չպահես, այլ քո ընկերոջը սիրես քո անձի պես. Ես եմ Տերը»:

Այս պատվիրանում բացահայտում ենք երեք կարևոր ճշմարտություն սիրելու հինավուրց պարտականության մասին: Առաջինը՝ մենք իմանում ենք, որ սիրելու օրենքն արտահայտում է Աստծո Անձը: Այլ կերպ ասած, այս աստվածային պատվիրանը սկիզբ է առնում և բխում է աստվածային բնությունից: Ղևտացիների 19-րդ գլխի սկզբում՝ երկրորդ խոսքում, Աստված պատվիրում է Իսրայելի ժողովրդին սուրբ լինել, որովհետև Ինքը՝ Տերը, սուրբ է: Այս խոսքում Նա պատվիրում է նրանց սիրել, որովհետև Ինքը՝ նրանց Տերը, սեր է: Ջոն Ձիլը գրում է.

> *«[Սերը] ճշմարտության հավիտենական օրենքի մասն էր՝ հիմնված Աստծո անփոփոխ բնության և հավիտենական կամքի վրա, որն Ինքը սեր է և սեր է պահանջում Իր բոլոր արարածներում. [սերը] գրված էր Ադամի սրտի վրա՝ նրա անմեղ վիճակում, և աստվածային պատկերի մի մասնիկ դաջված էր նրա վրա: ԵՎ [սերը] այն է, ինչ տրվեց Մովսեսի օրենքում, որովհետև սերը՝ Աստծո և մարդկանց հանդեպ օրենքի համագումարն է և էությունը»[162]:*

Երկրորդը՝ մենք իմանում ենք, որ այն սերը, որն Իսրայելցին պետք է ցուցաբերեր իր եղբոր հանդեպ, ընդամենը զգացմունքային չէր և այնպիսի բան չէր, ինչի մասին կարելի էր պարզապես խոսել. այն իրական և գործնական էր: Համաձայն օրենքի, իսրայելցիները պետք է սիրեին միմյանց՝ վրեժ չառնելով և ոխ չպահելով, չսպանելով, չգողանալով, շնություն չգործելով, սուտ վկայություն չտալով և չանելով մի բան, ինչը կվնասեր իրենց եղբոր բարեկեցությունը[163]: Թեև սերը եղբոր հանդեպ, անկասկած, ընդգրկում է նաև մեր զգացմունքները, այն, առաջին հերթին, կամքի հարց է, որն արտահայտվում է արդար և անձնազոհ գործերով:

Երրորդը՝ մենք իմանում ենք, որ սերը մեր մերձավորի հանդեպ հին

160 Երեմիա 31.3
161 Հաշվի առե՛ք Սուրբ գրքի բացասական արձագանքը Կայենի հանդեպ՝ Աբելին չսիրելու պատճառով (Ծննդ. 4.1-15), և Ղամեքի հանդեպ՝ նրա անսրտության պատճառով (Ծննդ. 4.23): Մենք տեսնում ենք Սուրբ գրքի դրական արձագանքը Հովսեփի հանդեպ՝ իր եղբայրներին սիրելու շնորհիվ (Ծննդ. 45.1-15):
162 Ջոն Ձիլ. *«Հին և Նոր կտակարանների մեկնություն»* (Փարիզ, Արկանզաս, «Baptist Standard Bearer», 1989թ.), հտ. 9, էջ 625:
163 Ելից 20.13-16, Ղևտացիների 19.18

պատվիրան է՝ հինավուրց ճանապարհ, որն անցնում է ամբողջ Հին կտակարանով[164]: Աստված մշտապես սեր է եղել, և սերը մշտապես եղել է Նրա առաջնահերթ պատվիրանը: Ճշմարիտ աստվածապաշտությունը մշտապես արտահայտվել է սիրով՝ Աստծո և Նրա ընտրյալ ժողովրդի հանդեպ: Առաջինն առանց երկրորդի անհնար է պատկերացնել. դա վատագույն տեսակի հակասություն է, որը ոչ մի հիմք չունի:

ՆՈՐ ՊԱՏՎԻՐԱՆ

Եթե մեր եղբորը սիրելը հին պատվիրան է, այդ դեպքում ինչո՞ւ է Հովհաննեսն ասում, որ այն նաև նոր է: Մենք արդեն ապացուցեցինք, որ սերն անփոփոխ Աստծո հավիտենական հատկանիշներից մեկն է, նաև Նրա գերակշռող պատվիրաններից մեկը, որը տեսնում ենք ամբողջ Հին կտակարանում: Ուրեմն, ինչպե՞ս այն կարող է լինել և՛ հին, և՛ նոր:

Մենք պետք է գիտակցենք, որ Հովհաննեսը չի հակասում իրեն նույն խոսքի մեջ, փոխարենը օգտագործում է առաջին հայացքից հակասական թվացող պնդումները՝ ներկայացնելու համար Աստծո փառքի ավելի մեծ դրսևորումը Նոր ուխտում: Աստված մշտապես հայտնել է Իր սերը մարդկությանը հենց սկզբից: Այնուամենայնիվ, Նրա սիրո հայտնությունը՝ Քրիստոսի Անձի և աշխատանքի միջոցով, մեծապես գերազանցում է ցանկացած նախնական հայտնություն՝ այն աստիճան, որ այն լիովին նոր է թվում: Հին ուխտում, Աստծո սիրո վեհ բացահայտումից առանց որևէ բան փոքրացնելու, կարող ենք իրավացիորեն ասել, որ այն փոքր է՝ Նրա սիրո այն հայտնության համեմատ, որը տրվեց Նրա Որդու մարմնավորման միջոցով[165]: Նույնպես կարող ենք ասել, որ այն սերը, որը պատվիրվեց, բացատրվեց և ցուցադրվեց Քրիստոսի ուսմունքներում և անձնազոհ կյանքում, այն աստիճան է գերազանցում Հին կտակարանի պահանջները, որ այն լիովին նոր է թվում: Սիրո չափանիշը Նոր ուխտում չի սահմանվում միայն պատվիրաններով և դրույթներով, այլ Հիսուս Քրիստոսի օրինակով: Այժմ Նրա սերն Իր ժողովրդի հանդեպ հավատացյալի չափորոշիչն է: Այժմ Նրա սերը սահմանում է, թե ինչ խորությամբ, բարձրությամբ, լայնությամբ և երկարությամբ Աստծո ժողովուրդը պետք է սիրի մեկը մյուսին: Այժմ սիրո պատվիրանի ամբողջական հայտնությունը և ճշմարիտ էությունը գերազանց ներկայացված է Քրիստոսի Անձում: Քրիստոսը սովորեցրեց Իր աշակերտներին. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք. ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք» (Հովհ. 13.34):

---

164 Երեմիա 6.16, 18.15

165 Ես չեմ ձգտում փոքրացնել Աստծո հայտնությունը Հին ուխտում, այլ վեհացնել այն Քրիստոսի Անձում, որի համեմատ ամեն ինչ շուք է (Կողոս. 2.17):

Հին ուխտի ներքո իսրայելցիները հայտնում էին իրենց սերը՝ հնազանդվելով այնպիսի օրենքների, որոնք պաշտպանում էին իրենց ազգակիցներին, և բարեգործություն էին կատարում[166]: Այնուամենայնիվ, Նոր ուխտի ներքո Աստծո ժողովուրդը կանչված է սիրելու՝ ինչպես Քրիստոսը սիրեց, և դնելու իրենց կյանքը միմյանց օգտի և բարեկեցության համար: Ավելի ուշ իր թղթում Հովհաննեսը լիարժեք կերպով բացատրում է սա.

> «Սրանով գիտացինք [Քրիստոսի] սերը, որ Նա Իր Անձը տվեց մեզ համար: Եվ մենք պարտ ենք մեր եղբայրների համար դնել մեր անձերը: Ով որ այս աշխարհի ապրանքն ունենա և տեսնի իր եղբորը կարոտ մի բանի և իր գութը փակի նրանից, ինչպե՞ս Աստծո սերը բնակված կլինի նրանում: Որդյակնե՛ր, չսիրենք խոսքով, և ո՛չ էլ լեզվով, այլ՝ գործով և ճշմարտությամբ: Եվ սրանով ենք ճանաչում, թե ճշմարտությունից ենք, և Նրա առջև ի հանդես բերենք մեր սրտերը (կամ՝ «և կհավաստիացնենք մեր սրտերը Նրա առջև»)» (3.16-19):

Այս խոսքերից պարզ է, որ իրական սերը չի մնում զգացմունքների կամ բառերի ոլորտում, այլ դրսևորվում է գործնական, տեսանելի արարքներով: Այն սերը, որն առաջանում է ճշմարիտ դարձի արդյունքում, և որը ճշմարիտ դարձի ապացույցն է, չի կարող սահմանափակվել հափշտակիչ զգացմունքներով, պերճախոս և վառ խոսքերով և նույնիսկ լավագույն մտադրություններով: Այն պետք է գերազանցի խոսքն ու լեզուն և արտահայտվի գործով ու ճշմարտությամբ: Այն սերը, որը Քրիստոսը պահանջում է, և որի մասին Հովհաննեսը գրում է, պետք է գործի: Ուրեմն, այն ճշմարտագույնս դրսևորվում է, երբ մենք հետևողականորեն ապրում ենք Քրիստոսի մարմնում գտնվող մարդկանց օգտի համար՝ ամեն օր մահանալով մեր անձի համար և գործնականորեն ծառայելով մեր պարգևներով և ըստ նախախնամության ընձեռած հնարավորությունների: Իհարկե, այս տեսակի սերը պահանջում է, որ մենք փաստացիորեն հաղորդակցվենք Աստծո ժողովրդի հետ, նպատակաուղղված որոշենք իմանալ նրանց կարիքները և գործուն կերպով նրանց ծառայելու հնարավորություններ փնտրենք: Հետևաբար, դժվար կլինի, եթե ոչ՝ անհնարին, որ նման տեսակի սերը հետևողականորեն արտահայտվի այնպիսի եկեղեցական համայնքում, որը հավաքվում է միայն շաբաթը մեկ անգամ՝ կիրակի առավոտյան տեղի ունեցող շոուծրագրին: Այս տեսակի սերը պետք է սկիզբ առնի անձնական հարա-

166 Իսրայելցիները բարեգործություն էին կատարում՝ թողնելով իրենց հունձքի մի մասը դաշտում (Ղևտ. 19.9,10), պարտք տալով՝ առանց վաշխառության (Ելից 22.25), իրենց ձեռքը բացելով աղքատների համար (Երկր. Օր. 15.7), որբերի դատը տեսնելով և որբևայրիներին պաշտպանելով (Եսայի 1.17):

բերությունների մեջ՝ տեղական եկեղեցու մարմնի ներսում, իսկ հետո տարածվի՝ հասնելով աշխարհով մեկ գտնվող հավատացյալներին և հավատացյալների համայնքներին:

ԴԱՐՁԻ ԱՊԱՑՈՒՅՑԸ

Այս թղթում Հովհաննեսը պարզորեն հաստատում է, որ դարձի մեծագույն ապացույցներից մեկը (եթե ոչ՝ ամենամեծը) սերն է այլ քրիստոնյաների հանդեպ և, ընդհանուր առմամբ, եկեղեցու հանդեպ: Ի հավելումն, Հովհաննեսը նույնպես ցույց է տվել, որ Ճշմարիտ քրիստոնեական սերը նշանակում է սիրել՝ ինչպես որ Հիսուսը սիրեց, և դնել մեր կյանքերը Քրիստոսում մեր եղբայրների և քույրերի օգտի համար: Հովհաննեսի խոսքերի գեղեցկությունը գերազանցում է մեծագույն բանաստեղծների տողերը. այնուամենայնիվ, նրա մտադրությունը՝ որպես բանաստեղծ ընկալվելը չէ: Նա չի ձգտում տպավորել իր ընթերցողներին իր խոսքի գեղագիտությամբ, այլ հույս ունի օգնել նրանց՝ փրկության ողջամիտ հավաստիացում ստանալ՝ որոշել, թե արդյո՞ք իրենք ունեն Աստծո Ճշմարիտ զավակ լինելու ապացույցները և դրան հատուկ առաքինությունները: Վերնատան զրույցի ժամանակ Հիսուսն ասաց Իր աշակերտներին, որ մարդիկ պետք է իմանան, որ նրանք Ճշմարիտ քրիստոնյա են՝ տեսնելով նրանց սերը միմյանց հանդեպ[167]: Առաջին Հովհաննեսի 2-րդ գլխում առաքյալն ասում է նրանց, ովքեր պնդում են, թե քրիստոնյա են, որ նրանք կարող են հավաստիացում ունենալ իրենց փրկության մեջ՝ այն չափով միայն, որով իրենց կյանքը համապատասխանում է նույն այս չափանիշին՝ միմյանց հանդեպ սիրուն:

Մենք փրկված ենք միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով, և բոլոր սիրո գործերը՝ մեկտեղված հազարավոր աստվածապաշտ կյանքերից, չեն կարող արդարացնել մեզնից ոչ մեկին Աստծո դատաստանի գահի առջև: Այնուամենայնիվ, Սուրբ Հոգու վերածնող աշխատանքը, որն առաջացնում է մեզանում և՛ ապաշխարություն, և՛ փրկարար հավատք, նույնպես ստեղծում է մեր մեջ նորագյուտ և շարունակ ավելացող սեր Աստծո ժողովրդի հանդեպ: Հովհաննեսը մատնանշում է այս Ճշմարտությունը իր ամբողջ թղթում.

> «Ով որ ասում է, թե լույսի մեջ է, և իր եղբորն ատում է, մինչև հիմա խավարի մեջ է: Նա, որ իր եղբորը սիրում է, լույսի մեջ է մնում, և գայթակղություն չկա նրանում» (2.9,10):

> «Նա, ով արդարություն չի անում, Աստծուց չէ, և ոչ էլ նա, որ իր եղբորը չի սիրում» (3.10):

167 Հովհաննես 13.35

> «Մենք գիտենք, որ մահից ի կյանք փոխվեցինք, որովհետև եղբայրներին սիրում ենք: Բայց ով որ չի սիրում եղբորը, մնում է մահի մեջ» (3.14):

> «Սիրելինե՛ր, իրար սիրենք, որ սերն Աստծուց է, և նա, ով որ սիրում է, Աստծուց է ծնված, և ճանաչում է Աստծուն: Նա, որ չի սիրում, Աստծուն չի ճանաչել, որովհետև Աստված սեր է» (4.7,8):

> «Եվ մենք ճանաչեցինք և հավատացինք այն սերը, որ Աստված ունի մեզ համար: Աստված սեր է, և ով որ մնում է սիրո մեջ, Աստծո մեջ է բնակվում, և Աստված՝ նրանում» (4.16):

> «Եթե մեկն ասի, թե՝ սիրում եմ Աստծուն, և իր եղբորն ատի, նա ստախոս է, որովհետև նա, որ իր տեսած եղբորը չի սիրում, Աստծուն, որ չի տեսել, ինչպե՞ս կարող է սիրել» (4.20):

> «Նա, ով հավատում է, թե Հիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնված, և նա, ով ծնողին սիրում է, նրանից ծնվածին էլ սիրում է» (5.1):

Հովհաննես առաքյալի ոգեշնչված ուսուցումը հետևյալն է. նա, ով եղբայրներին չի սիրում, սատանայի որդի է, չի ճանաչում Աստծուն, չի սիրում Աստծուն և մահվան մեջ է բնակվում[168]: Նրա խոսքերը համարձակ և հաստատ են: Նա բանավեճ չի հրավիրում այս թեմայով, և ո՛չ էլ կամենում է հնարավոր բացառություններ քննարկել: Այն մարդը, որը եղբայրներին չի սիրում, Աստծուն չի ճանաչում, և վերջ:

Կարևոր է, որ հասկանանք, որ համարձակությունը Հովհաննեսի խոսքերում լիովին տեղին է: Ի վերջո, նա գործ ունի հավիտենական կյանքի և մահվան հետ, և մարդկանց անձերը վտանգի մեջ են: Ավելին, նա չի հորինել այն ճշմարտությունները, որոնք փոխանցում է, ո՛չ էլ դրանք Հոգու վերջերս տրված հայտնություններ են: Հովհաննեսը պարզապես սովորեցնում է այն ճշմարտությունները, որոնք ստացել էր անձամբ Տեր Հիսուս Քրիստոսից՝ Նրա երկրային ծառայության ընթացքում: Հիսուսն առաջինը հայտարարեց, որ եղբայրական սերը ճշմարիտ դարձի մեծագույն ապացույցներից է: Այս ճշմարտությունն ազդեցիկ կերպով պատկերված է Մատթեոս 25.31-46 գլուխներում, որում Քրիստոսը նկարագրում է ազգերի դատաստանը.

> «Եվ երբ որ մարդու Որդին Իր փառքով կգա, և բոլոր սուրբ հրեշտակները՝ Նրա հետ, այն ժամանակ կնստի Իր փառաց

168 Ա Հովհաննես 3.10,14, 4.7,8,20

> աթոռի վրա: Եվ բոլոր ազգերը կժողովվեն Նրա առջև, և Նա նրանց կբաժանի իրարից, ինչպես հովիվը բաժանում է ոչխարներին այծերից: Եվ ոչխարներն Իր աջ կողմը կկանգնեցնի, իսկ այծերը՝ ձախ կողմը: Այն ժամանակ թագավորը կասի Իր աջ կողմիններին. «Եկե՛ք, ո՛վ Իմ Հոր օրհնածներ, ժառանգե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված թագավորությունը: Որովհետև սովեցի, և դուք տվեցիք Ինձ ուտել. ծարավեցի, և խմեցրիք Ինձ. օտար էի, և Ինձ ձեզ մոտ առաք. մերկ էի, և հագցրիք Ինձ. հիվանդ էի, և Ինձ այցելեցիք. բանտի մեջ էի, և Ինձ մոտ եկաք»:
>
> Այն ժամանակ արդարները կպատասխանեն Նրան և կասեն. «Տե՛ր, ե՞րբ տեսանք Քեզ սոված, և կերակրեցինք, կամ ծարավ, և խմեցրինք: Ե՞րբ տեսանք Քեզ օտար, և մեզ մոտ առանք, կամ մերկ, և հագցրինք: Ե՞րբ տեսանք Քեզ հիվանդ կամ բանտի մեջ, և եկանք Քեզ մոտ»: Թագավորն էլ կպատասխանի և կասի նրանց. «Ճշմարի՛տ ասում եմ ձեզ, որովհետև այս Իմ փոքր եղբայրներից մեկին արիք, Ինձ արիք»:

Այն ժամանակ կասի ձախ կողմիններին էլ. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար: Որովհետև Ես սովեցի, և դուք չտվեցիք Ինձ ուտել, ծարավեցի, և Ինձ չխմեցրիք: Օտար էի, և Ինձ ձեզ մոտ չառաք, մերկ, և Ինձ չհագցրիք, հիվանդ և բանտի մեջ, և Ինձ չայցելեցիք»:

Այն ժամանակ նրանք էլ կպատասխանեն և կասեն. «Տե՛ր, Քեզ ե՞րբ տեսանք սոված, կամ ծարավ, կամ օտար, կամ մերկ, կամ հիվանդ, կամ բանտի մեջ, և Քեզ ծառայություն չարինք»: Այն ժամանակ կպատասխանի նրանց և կասի. «Ճշմարի՛տ ասում եմ ձեզ՝ որովհետև այս փոքրերից մեկին չարիք, Ինձ էլ չարիք»: Եվ սրանք կգնան հավիտենական տանջանքը, իսկ արդարները՝ հավիտենական կյանքը»:

Բազմաթիվ ծառայողներ և ծառայություններ օգտագործել են այս հատվածը Մատթեոսի Ավետարանում՝ վավերացնելու համար այս աշխարհին բարեգործությամբ հասնելու իրենց կանչը: Այս հատվածն անկյունաքար է դարձել բանտային ծառայությունների, քաղցի դեմ պայքարող կազմակերպությունների, բժշկական թիմերի, անվճար հագուստ տրամադրող նախաձեռնությունների և անթիվ այլ քրիստոնեական ծառայությունների համար, որոնք ձգտում են տարածել Ավետարանը՝ ծառայելով այս կորսված աշխարհի անմիջական կարիքներին: Այնուամենայնիվ, մենք պետք է մի փոքր զգուշավորությամբ օգտագործենք այս հատվածն այս իմաստով: Ճիշտ չէ, երբ որևէ հատված օգտագործվում է

որպես կեղծ պատճառանք[169], նույնիսկ արժանի գործի համար:

Թեև մարդկանց կարիքներին ծառայելը՝ նրանց դեպի Քրիստոսն առաջնորդելու համար, բարի է և համապատասխանում է Աստվածաշնչին, այնուամենայնիվ Քրիստոսը դա նկատի չունի այս հատվածում: Նա չի սովորեցնում, որ մեր հավատքի դավանանքը վավերացվում է կամ ապացուցվում է այն բանով, որ մենք կամենում ենք ծառայել կորսված և տառապյալ աշխարհին: Փոխարենը, Նա սովորեցնում է, որ մենք արտահայտում ենք մեր դավանանքի իսկությունը, երբ կամենում ենք նույնանալ այն քրիստոնյաների հետ, ովքեր, հանուն Քրիստոսի, բանտարկություն, զրկանքներ և հալածանքներ են կրել, և սովորեցնում է ծառայել նրանց կարիքներին: Այս առանցքային հատվածում նրանք, ովքեր քաղցած, ծարավ, անտուն, մերկ, հիվանդ և բանտարկված են, կորսված մարդիկ չեն, որոնք հայտնվում են նման ծանր նեղությունների մեջ իրենց մեղքի պատճառով, այլ՝ հավատացյալներ, որոնք տառապում են Աստծո առջև բարի խղճմտանք ունենալու և Քրիստոսին հավատարիմ լինելու համար[170]: Նրանք Աստծո զավակներն են, Քրիստոսի եղբայրները[171], և այնքան սերտորեն են նույնացվում Նրա հետ՝ հավատքի միջոցով, որ նրանց օրհնելը կամ նրանց անարգելը նշանակում է նույն կերպով վարվել Քրիստոսի հետ:

Երբ մենք հասկանում ենք Հիսուսի ուսուցման պատշաճ համատեքստը, տեսնում ենք, որ Նա և Հովհաննեսը խոսում են միևնույն ճշմարտության մասին. անձնուրաց սերը առանձին հավատացյալների հանդեպ, ինչպես նաև եկեղեցու հանդեպ՝ հավաքական առումով, վերստին ծնունդի մեծագույն ապացույցներից է: Վերջին դատաստանի մասին Իր խոսքում Հիսուսը հայտարարում է, որ Իր ոչխարները նրանք են, ովքեր սիրում են եղբայրներին, նույնիսկ եթե դա թանկ է նստում իրենց վրա: Նա հրավիրում է նրանց ժառանգելու Թագավորությունը՝ պատրաստված իրենց համար աշխարհի ստեղծագործությունից առաջ[172]: Ի հակադրություն, Նա դատապարտում է նրանց, ովքեր սիրո պակաս են ցուցաբերում Իր եղբայրների հանդեպ՝ փակելով իրենց ձեռքերը և սրտերը նրանց մեծագույն կարիքի ժամանակ: Նա առանձնացնում է նրանց՝ ինչպես այծերի, և ուղարկում է հավիտենական կործանման[173]:

Հետևյալ օրինակը կօգնի մեզ լիովին հասկանալ այս խոսքերում փո-

169 Մենք օգտագործում ենք որևէ սուրբգրային հատված՝ որպես կեղծ պատճառանք, երբ դրանով արդարացնում ենք այնպիսի համոզմունք կամ գործունեություն, որն այդ հատվածն ինքնին չի սովորեցնում:
170 Ա Պետրոս 2.19,20
171 Եբրայեցիների 2.11
172 Մատթեոս 25.34
173 Մատթեոս 25.41

խանցվող ճշմարտությունը: Պատկերացրեք երկրորդ դարի քրիստոնյաների մի փոքր խմբի, որոնք գաղտնի հավաքվում են քաղաքի հեռավոր ծայրամասում գտնվող կատակոմբներում: Հավաքույթից հետո նրանք վերադառնում են իրենց տները, յուրաքանչյուրը՝ այլ ճանապարհով՝ կասկածի տեղիք չտալու համար: Ամեն ինչ կարծես աննկատ է անցնում, սակայն հաջորդ օրը այդ փոքրիկ համայնքը լուր է ստանում, որ իրենց եղբայրներից երկուսը ձերբակալվել են մինչև տուն հասնելը: Անմիջապես հավաքույթ է հրավիրվում, և բոլորն իմանում են, թե ինչ է կատարվել այդ երկու եղբայրների հետ: Նրանց խիստ ծեծի են ենթարկել և բանտարկել են՝ թողնելով առանց սննդի, ջրի և անհրաժեշտ բժշկական օգնության: Նրանց վիճակը ծանր է:

Այս տեղեկության պատճառով, այս փոքրիկ համայնքը բախվում է բարոյական երկընտրանքի՝ ճշմարիտ աշակերտության ստուգման: Եթե նրանք ոչինչ չանեն, իրենց եղբայրները անկասկած կմահանան (երկրորդ դարի բանտերը բոլորովին նման չէին այսօրվա «հյուրասեր» բանտերին): Այնուամենայնիվ, եթե նրանք գտնեն իրենց եղբայրներին, վտանգ կա, որ իրենց կբացահայտեն, և իրենք, հավանաբար, կարժանանան նույն ճակատագրին: Ավելին, կերակուրը, ջուրը, դեղամիջոցները և նոր հագուստը, որոնց կարիքը նրանք ունեն, թանկ արժեն, իսկ իրենց համայնքը մեծ մասամբ բաղկացած է աղքատ աշխատավորներից և ստրուկներից:

Երբ նրանք քննարկում են այս հարցն իրենց միջև, փոքրիկ պառակտում է առաջանում: Նրանց մեծ մասը պատրաստ է գնալ՝ անկախ հետևանքներից: Նրանց փաստարկն այն է, որ Քրիստոսը դրել է Իր կյանքն իրենց համար, և իրենք էլ պետք է անեն նույնը իրենց եղբայրների համար[174]: Ավելին, նրանք փաստում են, որ չեն կարող ասել, որ Աստծո սերը բնակվում է իրենցում, եթե փակեն իրենց սրտերն իրենց եղբայրների հանդեպ, որոնք տառապում են Նրա Անվան համար[175]: Չնայած, գրեթե ամբողջական համերաշխությանը՝ մի քանիսը համաձայն չեն: Նրանց կարծիքով, բանտ այցելելն ինքնասպանություն է, և դա ոչ մի արդյունք չի տա: Ավելին, նրանք պնդում են, որ մեծ մասի ոչ անհրաժեշտ արձագանքն ընդամենը անհիրատեսական նախանձավորության և վտանգավոր կրոնական մոլեռանդության արդյունք է, որը որոշ ժամանակ է, ինչ ձևավորվում է եկեղեցում: Ողջամտության թելադրանքով, նրանք պետք է սպասեն, մինչև իրավիճակը մի փոքր հանդարտվի: Ի վերջո, ամեն ինչ, հավանաբար, այնքան վատ չէ, որքան թվում է:

Ընդամենը ևս մի քանի րոպե տևող քննարկումից հետո մեծամաս-

174 Ա Հովհաննես 3.16
175 Ա Հովհաննես 3.17

նությունը որոշում է կայացնում. նրանք հավաքում են անհրաժեշտ իրերը և աղոթքով ուղարկում են դրանք եկեղեցու անդամներից կազմված պատվիրակության հետ: Այդ մարդիկ բանտ են այցելում, վիրակապում են իրենց եղբայրներին, հագցնում են նրանց մերկ մարմինները և կերակուր ու ջուր են տալիս: Մի քանիսը, որոնք հրաժարվում են մասնակցել նման անմիտ և ոչ անհրաժեշտ նախաձեռնությանը, ի վերջո աշխարհ են վերադառնում կամ թողնում են այդ եկեղեցին՝ ավելի ողջամիտ համայնք փնտրելով:

Հիսուսի խոսքերում և այս օրինակում տեսնում ենք, որ դատաստանից առաջ ոչխարների և այծերի կամ նույն եկեղեցական համայնքում դարձի եկածների և դարձի չեկածների առանձնացում է տեղի ունենում: Այն մեծամասնությունը, որ որոշեց կանգնել իրենց բանտարկված եղբայրների կողքին, ցույց տվեց, որ իրենք ճշմարտապես վերստին ծնված են, և որ Աստծո սերը բնակվում է իրենցում[176]: Եսակենտրոն և ինքնապաստան փոքրամասնությունը ցույց տվեց, որ իրենց հավատքի դավանությունը և սերը եղբայրների հանդեպ ընդամենը «խոսքով և լեզվով» էր, ոչ թե «գործով և ճշմարտությամբ» (Ա Հովհ. 3.18):

Նման ցանկացած բարի գործի, մեր սերը եղբայրների հանդեպ փրկության չի տանում մեզ. այն փրկության արդյունքն է: Հոգու միևնույն վերածնող աշխատանքը, որը մեր մեջ հավատք է ծնում, ինչի շնորհիվ մենք արդարանում ենք, նաև եղբայրների հանդեպ ճշմարիտ սեր է ծնում, ինչի շնորհիվ ծառայում ենք նրանց:

ԱՆՀՆԱՐԻՆ ՍԵՐ

Ճշմարիտ դարձի մեծագույն ստուգումներից մեկն անկեղծ և գործուն սերն է նրանց հանդեպ, ովքեր պատկանում են Քրիստոսին և կանչված են Նրա անունով: Այս սերն ընդամենը բանաստեղծական և տեսական չէ. այն իրական և գործնական է: Այս սերը մահանում է սեփական անձի համար և, անհրաժեշտության դեպքում, վտանգում է ամեն ինչ՝ հանուն Նրա Անվան, և հանուն նրանց, ովքեր կանչված են այդ Անունով: Այսպիսի սերը վկայում է վերածնման և ճշմարիտ դարձի մասին, քանի որ, առանց այս իրողությունների, այն լիովին անհնար է:

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ մինչև դարձի գալը մարդը չի կարող Աստծո մոտ գալ, որովհետև նա սիրում է չարը, խորշում է արդարությունից և վախենում է, որ իր չար գործերը կբացահայտվեն[177]: Նմանապես, անկում ապրած մարդը չի ձգտում շփվել Քրիստոսի ճշմարիտ աշակեր-

176 Ա Հովհաննես 3.17
177 Հովհաննես 3.19,20

տի հետ, քանի որ նա խորշում է նրա արդար կյանքից և նրա քարոզներից, և զարհուրում է, որ կարող է բացահայտվել դրանց միջոցով: Իր փաստարկն ապացուցելու համար Հովհաննես առաքյալը վկայակոչում է Սուրբ գրքում նկարագրված ամենից չարաբաստիկ հանցանքներից մեկը՝ Կայենի կողմից իր եղբայր Հաբելի սպանությունը: Նա ներկայացնում է իր փաստարկը՝ տալով մի պարզ հռետորական հարց և պատասխանելով դրան. «Եվ ինչո՞ւ նա սպանեց նրան: Որովհետև իր գործերը չար էին, իսկ իր եղբորինը՝ արդար» (Ա Հովհ. 3.12, NKJV):

Անկում ապրած մարդիկ ատում են արդար Աստծուն և կսպանեին Նրան, եթե կարողանային[178]: Հետևաբար, նրանք նույնպես ատում են Աստծո արդարներին և թշնամաբար են վերաբերվում նրանց: Այս թշնամանքը հազվագյուտ երևույթ չէ. այն ներհյուսված է այս անկում ապրած աշխարհի մեջ: Անհնազանդության առաջին արարքից և դրանից բխող անեծքից հետո օձի սերնդի (անհնազանդության զավակների) և կնոջ սերնդի (Աստծո զավակների) միջև մեծ և տևական պատերազմ է եղել[179]: Թեև այդ պատերազմի կիզակետը Մեսիայի հաղթանակն էր Գողգոթայում, պայքարը Նրա ժողովրդի և այս աշխարհի միջև շարունակվելու է մինչև ամեն ինչի ավարտը: Գաղատիայի եկեղեցուն ուղղված իր նամակում Պողոս առաքյալը պատկերեց այս շարունակական պայքարը՝ անդրադառնալով պատմությանը և լուսաբանելով այլ եղբայրների, որոնց թշնամանքը գրեթե նույնքան չարաբաստիկ է, որքան Կայենի և Աբելի միջև եղածը: Նա գրում է. «Որովհետև գրված է, թե Աբրահամը երկու որդի ուներ՝ մեկն աղախնից, և մյուսն ազատից: Բայց նա, որ աղախնից էր, մարմնի կողմից էր ծնված, և նա, որ ազատից էր՝ խոստման համեմատ էր... Բայց ինչպես որ այն ժամանակ մարմնի կողմից ծնվածը հալածում էր նրան, որ Հոգու կողմից էր, այնպես էլ հիմա» (Գաղատ. 4.22,23,29):

Այս անկում ապրած աշխարհի թշնամանքն Աստծո զավակների դեմ անժխտելի սուրբգրային և պատմական ճշմարտություն է: Այս պատճառով, Հովհաննեսը հորդորում է իր ընթերցողներին չզարմանալ, որ այս աշխարհն ատում է իրենց[180]: Մենք պետք է հասկանանք՝ որպես հիմքային իրողություն, որ «ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն» (Բ Տիմոթ. 3.12): Հիսուսը տվեց նույն զգուշացումն Իր աշակերտներին Վերնատան զրույցի ընթացքում՝ Իր խաչելության նախորդ գիշերը. «Եթե աշխարհը ձեզ ատում է, գիտացե՛ք, որ Ինձ ձեզնից առաջ է ատել: Եթե

178 Սաղմոս 2.1-3, Հռոմեացիների 1.30
179 Ծննդոց 3.15
180 Ա Հովհաննես 3.13

այս աշխարհից լինեիք, ապա աշխարհն իրենը կսիրեր, բայց որովհետև աշխարհից չեք, այլ Ես ձեզ ընտրեցի աշխարհից, նրա համար աշխարհն ատում է ձեզ» (Հովհ. 15.18,19):

Այժմ, տեսնելով Սուրբ գրքում անկում ապրած մարդու թշնամանքն Աստծո ժողովրդի դեմ, ավելի հստակ ենք հասկանում, թե ինչու է եղբայրների հանդեպ սերը դարձի գալու այսքան կարևոր ստուգում համարվում: Բնական մարդը չի կարող սիրել Աստծուն և Նրա ժողովրդին: Այնպես որ, երբ ինչ-որ մեկը սիրում է երկուսին էլ, երբ ձգտում է ավելի շատ սիրել նրանց, երբ սգում է նրանց հանդեպ սիրո պակասի պատճառով, դա պետք է դրդի նրան ավելի մեծ հավաստիացման իր փրկության մեջ: Երբ մարդը, որը մի ժամանակ արհամարհում էր Աստծո ժողովրդին, հանկարծ ունենում է նույն ցանկությունները, ինչ նրանք, և ձգտում է հաղորդակցվել նրանց հետ, սա մեծ ցուցանիշ է այն մասին, որ զարմանալի մի բան է տեղի ունեցել: Այս փոփոխությունը պարզապես անբացատրելի է, եթե հաշվի չառնենք Սուրբ Հոգու վերածնող աշխատանքը:

Ինչպես Հովհաննեսը պնդում է իր ամբողջ նամակում, քրիստոնյան սիրելու է Աստծո ժողովրդին: Այնուամենայնիվ, մենք պետք է հասկանանք, որ սերը եղբայրների հանդեպ, նման քրիստոնեական մյուս բոլոր առաքինություններին, մշտապես ավելի աճելու կարիք է ունենալու: Մեր սկզբնական սերը եկեղեցու հանդեպ, որը վերապրեցինք դարձի ժամանակ, Հոգու վերածնող աշխատանքի արդյունքն էր: Համապատասխանաբար, մեր սիրո շարունակական աճը տեղի է ունենալու մեր մեջ կատարվող Հոգու մշտական սրբացնող աշխատանքի արդյունքում: Մենք հասկանում ենք, որ Աստծո զավակ ենք, ոչ թե այն պատճառով, որ մեր սերը *կատարյալ* է, այլ՝ որովհետև այն *կատարելագործվում* է՝ Աստծո տևական աշխատանքով մեզանում: Առաջին Հովհաննես 2.8-ում առաքյալը հաստատում է, որ սիրո նոր պատվիրանն իրական էր այն քրիստոնյաների կյանքում, որոնց ինքը գրում էր: Սակայն միևնույն ժամանակ նա ասես ցույց է տալիս, որ այն դեռ կատարյալ չէր նրանցում: Նրանց սերը դեռ չէր հասել Քրիստոսի հասակի կատարյալ չափին[181], այլ աստիճանաբար ավելի ու ավելի մեծ իրականություն էր դառնում նրանց համար: Նրանց հին կյանքի խավարն անցնում էր, և նրանք վերափոխվում էին Քրիստոսում Աստծո մասին շարունակ ավելացող հայտնությամբ:

ՍԻՐՈ ՍՏՈՒԳՈՒՄԸ

Այժմ պետք է ստուգենք մեր կյանքն այս ճշմարտությունների լույսի ներքո: Մենք սիրո՞ւմ ենք Աստծո ժողովրդին՝ դրանով իսկ ցույց տալով

181 Եփեսացիների 4.13

մեր հավատքի իսկությունը: Մեր սերը բաղկացած է ծածուկ դրդապատճառներից և զգացմունքների՞ց, որոնք անկարելի է ապացուցել, թե՞ արտահայտվում է իրական, գործնական և նկատելի ապացույցներով, ինչպիսիք են խոսքերը, դիրքորոշումը և գործերը: Հետևյալ հարցերը կօգնեն ձեզ հասկանալ ձեր դիրքն այս անչափ կարևոր հարցում:

Առաջինը՝ ո՞ւմ ընկերակցությունն է ամենից հաճելի ձեզ: Դուք ձգտո՞ւմ եք շփվել այլ հավատացյալների հետ: Ձեզ հաճելի՞ է զրուցել Քրիստոսի մասին: Թե՞ դուք գերադասում եք այս աշխարհի ընկերակցությունը և հազվադեպ եք խոսում Աստծո իրողությունների մասին: Ե՞րբ եք վերջին անգամ հանդիպել այլ հավատացյալների՝ պարզապես նրանց հետ լինելու և Քրիստոսի անվան շուրջ հաղորդակցվելու համար: Մենք պետք է ուշադիր լինենք՝ պատասխանելով այս հարցին, քանի որ այն ամենը, ինչ ներկայում քրիստոնեական շփում է կոչվում, մեծ մասամբ գրեթե առնչություն չունի Քրիստոսի հետ:

Երկրորդը՝ դուք հրապարակավ նույնանո՞ւմ եք Քրիստոսի և Նրա ժողովրդի հետ: Թե՞ ամաչում եք այն մարդկանցից, որոնք Հիսուսին Տեր են դավանում և ձգտում են ապրել՝ հնազանդվելով Նրա Խոսքին: Ձեր անհավատ ծանոթները համարո՞ւմ են, որ դուք «այդ քրիստոնյաներից» մեկն եք: Թե՞ դուք այնքան եք նույնացած այս աշխարհի հետ և այն աստիճան կերպարանված եք դրա պատկերին, որ հազվադեպ եք նման մեղադրանք ստանում կամ երբեք չեք ստանում: Դուք կանգնո՞ւմ եք Աստծո ժողովրդի կողքին՝ որպես տեսարան այս աշխարհի համար, որը չափազանց խելամիտ է համարում իրեն՝ մեր կրոնական մոլորություններին մասնակցելու համար[182]: Թե՞ դուք հեռու եք պահում ձեզ եկեղեցուց՝ նման մի մարդու, ով հեռանում է իր ազգականից, ամոթի պատճառով: Կարո՞ղ եք համեմատել ձեզ Մովսեսի հետ, որը «չկամեցավ փարավոնի աղջկա որդի կոչվել: Ավելի լավ համարեց Աստծո ժողովրդի հետ չարչարվել, քան թե միաժամանակ մեղքի զվարճությունն ունենալ» (Եբր. 11.24,25):

Երրորդը՝ թեև դուք տեղյակ եք եկեղեցու բազմաթիվ տկարություններից և բարոյական ձախողումներից, դուք նվիրվա՞ծ եք եկեղեցու բարելավմանը, թե՞ նույնանում եք սատանայի և այս աշխարհի հետ՝ միանալով եկեղեցուն ուղղված նրանց մեղադրանքներին[183]: Մենք պետք է մշտապես հիշենք, որ սատանան մեր եղբայրների չարախոսն է, և ովքեր նման մեղադրանքներով կանգնած են եկեղեցուց դուրս, կատարում են

182 Ա Կորնթացիների 4.9-13

183 «Սատանա» բառը հունարենում *«դիա՛բոլոս»*-ն է, որը կարելի է թարգմանել «մեղադրող» բառով: Խոսքն այնպիսի անձնավորության մասին է, որը հակված է չարախոսության և սուտ մեղադրանքների:

իրենց հայր սատանայի գործը[184]: Ի հակադրություն, ճշմարիտ հավատացյալն արձագանքում է իր եղբոր ձախողումներին սիրով, որը ծածկում է մեղքերի շատությունը, և նվիրվում է նրա վերականգնմանը և կառուցմանը[185]: Նա չի կարող թողնել եկեղեցին և անկում ապրած սուրբին՝ անկախ այն բանից, թե քանի անգամ են նրանք մոլորվում: Աստծո սիրո շնորհիվ, նա մղում է զգում գտնել նրանց, ինչպես որ Ովսեն գտավ Գոմերին, և գործել նրանց օգտի և ապագա փառքի համար[186]:

Չորրորդը՝ դուք հավատացյալների տեղական, տեսանելի հավաքույթի նվիրված անդա՞մ եք, որն իր մասնակցությունն ունի դրանում: Մենք պետք է հիշենք, որ այն տեսակի սերը, որի մասին Հովհաննեսը գրում է, կարող է դրսևորվել միայն Քրիստոսի մարմնում գտնվող այլ հավատացյալների հետ շփման դեպքում: Դուք մահանո՞ւմ եք ձեզ համար և դնո՞ւմ եք ձեր կյանքը՝ ծառայելով այլ քրիստոնյաների: Դուք աշխատո՞ւմ եք եկեղեցու կառուցման համար՝ ձեր բազում հոգևոր պարգևներով: Պարզ ասած, ի՞նչ եք դուք փաստացի անում, որ կառուցեք Աստծո ժողովրդին և նրանց հետ միասին առաջ տանեք Քրիստոսի գործը:

Այս հարցերը չեն կարող սահմանափակվել միայն հոգևորականներով, այլ վերաբերում են Քրիստոսի մարմնի յուրաքանչյուր անդամին: Իրականում, մարմնի անդամ լինելու ապացույցներից մեկն այն է, որ օգտակար ենք լինում դրան: Հետևաբար, դարձի չեկած լինելու ապացույցներից մեկն այն է, որ մենք անպիտան ենք Աստծո համար արվող ցանկացած բարի գործում[187]: Սերն առանց գործերի, ինչպես և հավատքը, մահացած է[188]: Մենք ճիշտ կվարվենք, եթե հիշենք, որ ոչխարները և այծերը բաժանվեցին ըստ այն բանի, թե ինչ արեցին և ինչ չարեցին Աստծո ժողովրդի համար:

Որպես ամփոփում, սերը պարզապես բազմաթիվ առաքինություններից մեկը չէ, այլ ամենից գերազանց առաքինությունն է, որն ավելին է, քան նույնիսկ հավատքը և հույսը[189]: Այնպես որ, անսովոր չէ, որ Հովհաննեսը նման վեհ դիրք հատկացրեց դրան՝ դարձի այլ ստուգումների թվում: Մենք պետք է որոշենք մեր վարդապետության ճշգրտությունը՝ համաձայն Սուրբ գրքի չափանիշի, և ստուգենք մեր անձնական աստվածապաշտությունը և ընծայումը դրա լույսի ներքո: Այնուամենայնիվ, ամեն ինչից առավել մենք պետք է ստուգենք, թե արդյո՞ք մեզանում սեր կա: Այս առաքինությունը պետք է գտնվի մեզանում և արտահայտվի մեր

184 Հովհաննես 8.44, Հայտնություն 12.10
185 Ա Պետրոս 4.8
186 Ովսե 3.1-3
187 Հռոմեացիների 3.12
188 Հակոբոս 2.17
189 Ա Կորնթացիների 12.31, 13.13

գործերի մեջ, մինչև որ համարձակվենք հավաստիացնել մեր սրտերն այն բանում, որ ճանաչել ենք Նրան, ինչպես որ Հովհաննեսը բազում անգամներ հիշեցնում է մեզ.

> «Մենք գիտենք, որ մահից ի կյանք փոխվեցինք, որովհետև եղբայրներին սիրում ենք: Բայց ով որ չի սիրում եղբորը, մնում է մահի մեջ» (3.14):

> «Եթե մեկն ասի, թե՝ սիրում եմ Աստծուն, և իր եղբորն ատի, նա ստախոս է, որովհետև նա, որ իր տեսած եղբորը չի սիրում, Աստծուն, որ չի տեսել, ինչպե՞ս կարող է սիրել» (4.20):

ԳԼՈՒԽ ՈՒԹ

Մերժել աշխարհը

«Մի՛ սիրեք աշխարհը, և ո՛չ էլ այն, որ աշխարհի մեջ է: Եթե մեկն աշխարհը սիրի, Հոր սերը նրանում չէ, որովհետև ամեն ինչ, որ աշխարհում է՝ մարմնի ցանկությունը, աչքերի ցանկությունը և այս կյանքի ամբարտավանությունը, Հորից չէ, այլ՝ աշխարհից: Եվ աշխարհն անցնում է, և նրա ցանկությունն էլ, բայց Աստծո կամքն անողը մնում է հավիտյան»:

– Ա Հովհաննես 2.15-17

Մենք արդեն դիտարկել ենք քրիստոնեական կյանքի մի քանի լուրջ ապացույցներ՝ Աստծո հայտնության համեմատ վարվելը, մեղքը խոստովանելը, պատվիրանները պահելը, Քրիստոսին նմանվելը և մեր եղբորը սիրելը: Այս գլխում կավելացնենք ևս մեկ նշում մեր հավաստիացումների ցուցակին՝ հավատացյալի կողմից աշխարհը շարունակաբար և ավելի մեծ չափով մերժելը:

ԻՍԿ Ի՞ՆՉ Է ԱՇԽԱՐՀԸ

Ի՞նչ է *աշխարհը:* Ինչի՞ց է այն բաղկացած: «Աշխարհ» բառը թարգմանված է հունարեն *«կո՛սմոս»* բառից: Նոր կտակարանում այն կարող է վերաբերել նյութական տիեզերքին կամ դրա բնակիչներին՝ մարդկանց: Այն նույնիսկ կարող է օգտագործվել՝ առանձնացնելու համար հրեաներին հեթանոսական աշխարհից[190]: Այնուամենայնիվ, այս համատեքստում և այլ հատվածներում *«կո՛սմոս»* բառը հստակ բացասական երանգ ունի: Այս բառը վերաբերում է այն ամենին մեր մարդկային գոյության տիրույթում, ինչը հակառակ է Աստծո մասին գիտելիքին, ընդդիմանում է Աստծո կամքին և թշնամաբար է տրամադրված Նրա Անձի հանդեպ: Այն բաղկացած է անկում ապրած մարդկանց հսկայական

190 Հռոմեացիների 11.12

զանգվածի իդեալներից, ձգտումներից, փիլիսոփայություններից, դիրքորոշումից և վարքից: Թեև այն զգեստավորվում է կրթության, իմաստաբանության և նույնիսկ բարեպաշտության լավագույն հանդերձներով, այս աշխարհը, ըստ էության, ընդամենը բաղկացած է երեք ստոր կամ չար տարրերից՝ մարմնի ցանկությունից, աչքերի ցանկությունից և այս կյանքի պարծենկոտ հպարտությունից:

ՄԱՐՄՆԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ցանկություն» բառն այս հատվածում հունարեն *«էպիթումի՛ա»* բառից է, որը նշանակում է ցանկություն, ձգտում, փափագ կամ կիրք: Այս բառը պարտադիր չէ, որ բացասական լինի, բայց այն կարող է բացասական երանգ ունենալ՝ կախված համատեքստից: Որպես այս բառի դրական օրինակներ, Հիսուսը շատ էր ցանկանում ուտել Զատիկն Իր աշակերտների հետ[191]: Պողոս առաքյալը Թեսաղոնիկեցիների երեսը տեսնելու մեծ փափագ ուներ[192]: Պողոս առաքյալը խոստովանեց նաև Փիլիպեի եկեղեցուն, որ փափագում էր դուրս գալ իր մարմնից և Քրիստոսի հետ լինել[193]:

Թեև բոլոր այս դրական օրինակները թարգմանված են *«էպիթումի՛ա»* բառից, Նոր կտակարանում այս բառն ամենից հաճախ նշանակում է կիրք կամ ուժգին ցանկություն, որը դուրս է Աստծո կամքի տիրույթից՝ կա՛մ իր ուղղվածության, կա՛մ իր ուժգնության պատճառով[194]: Մարկոսի Ավետարանում այս բառն օգտագործվում է՝ մատնանշելու համար չափազանց մեծ ցանկություն այս աշխարհում եղած բաների հանդեպ, ինչը կարող է խեղդել Ավետարանի առաջընթացը և անպտուղ դարձնել մարդու կյանքում[195]: Պողոս առաքյալն օգտագործեց այս բառը՝ մատնանշելու համար ցանկությունը կամ կիրքն այն ամենի հանդեպ, ինչը հակառակ է Աստծո կամքին[196]: Պետրոսն օգտագործում է այս բառը՝ մատնանշելու համար մարմնավոր մարդկանց ապականված ցանկությունները, որոնք անարգում են իշխանությունները և հակառակ են Աստծուն[197]:

«Մարմին» բառը թարգմանվում է եբրայերեն *«բասար»* և հունարեն

191 Ղուկաս 22.15
192 Ա Թեսաղոնիկեցիների 2.17
193 Փիլիպեցիների 1.23
194 Որևէ ցանկություն կարող է հակառակ լինել Աստծո կամքին, քանի որ այն ուղղված է արգելված առարկայի կամ երևույթի: Այն կարող է հակառակ լինել Աստծո կամքին, նույնիսկ երբ ուղղված է թույլատրելի առարկայի կամ երևույթի, եթե այդ ցանկության ուժգնությունը հավասարազոր է մարդու ձգտմանը Աստծո հանդեպ կամ ավելի մեծ է դրանից:
195 Մարկոս 4.19
196 Հռոմեացիների 7.7,8
197 Բ Պետրոս 2.10

«սա՛րքս» բառերից: Այն բազմաթիվ իմաստներ ունի՝ կախված համատեքստից: Առաջինը՝ այն կարող է նշանակել մարդու ֆիզիկական մարմինը՝ նրա միսը, արյունը և ոսկորները[198]: Երկրորդը՝ այն կարող է նկատի ունենալ մարդուն՝ որպես թույլ և մահկանացու արարածի, հատկապես՝ Աստծո համեմատ, որը հավիտենական և ամենակարող Հոգի է[199]: Երրորդը՝ այն կարող է մատնանշել չվերածնված մարդու անկումը կամ նրա բնության բարոյական արատավորությունը: Այս հատվածում Հովհաննեսն օգտագործում է այս բառի երրորդ իմաստը:

Այն երեք տարրերից, որոնք լիարժեք բնութագրում են այս անկում ապրած աշխարհը, առաջինը մարմնի ցանկությունն է: Ըստ էության, անկում ապրած մարդիկ և նրանց միացյալ մշակույթը շարժվում, առաջնորդվում կամ մղվում են իրենց կամքով, որպեսզի բավարարեն իրենց ծայրաստիճան ապականված և բարոյապես արատավորված սրտերի մեղսալի կրքերը: Սա վատագույնն է բոլոր հանցանքներից՝ կռապաշտության ամենածանր տեսակը: Ողջամիտ արարածը պետք է դրդապատճառ ունենա այն ամենի համար, ինչ անում է: Որքան ավելի վեհ և ազնիվ է նա, այնքան ավելի վեհ և ազնիվ են նրա գործողությունների դրդապատճառները: Մարդը՝ Աստծո արարչագործության գագաթնակետը, ստեղծվեց Աստծո պատկերով և Նրա փառքի համար: Թե՛ ուտելիս, թե՛ խմելիս, թե՛ ցանկացած գործ անելիս՝ ամենակարևոր գործերից մինչև ամենասովորական առաջադրանքները, նա պետք է անի ամեն ինչ Աստծո փառքի և հաճության համար[200]: Ըստ էության, մարդը պետք է կլանված լինի Աստծո հանդեպ ցանկությամբ և առաջնորդվի Նրա հանդեպ ձգտումով: Ամեն շունչ և սրտի զարկ պետք է լինի Աստծո փառքի համար. յուրաքանչյուր գործ և ձեռքբերում պետք է արժանանա Աստծո հաճությանը:

Թեև մարդը ստեղծվեց այս վեհագույն նպատակի համար, Սուրբ գիրքը վկայում է, որ նա մեղանչեց և զրկվեց այդ փառքից[201]. նա հեռացրեց և աղավաղեց իրեն: Այժմ նա առաջնորդվում է ոչ թե Աստծո հանդեպ ունեցած վսեմ զգացմունքներով, այլ իր բարոյապես ապականված սրտի նվաստ և կենդանական կրքերով: Համաձայն Սուրբ գրքի նկարագրության, բնական մարդն ապրում է մարմնի կրքերում և անձնատուր է լինում դրա ցանկություններին: Նա բնությամբ բարկության որդի է[202]:

Աշխարհի այս առաջին տարրի միջոցով սկսում ենք տեսնել տարբերությունը վերստին ծնվածների և իրենց անկում ապրած վիճակում

198 Բ Կորնթացիների 10.3, Գաղատացիների 2.20, Փիլիպեցիների 1.22
199 Եսայի 31.3
200 Ա Կորնթացիների 10.31
201 Հռոմեացիների 3.23
202 Եփեսացիների 2.3

մնացող մարդկանց միջև: Մենք սկսում ենք զատորոշել Աստծո զավակներին այն մարդկանցից, որոնք չեն ճանաչում Նրան: Այն մարդը, որը շարունակում է ստրկացված մնալ իր մարմնի մեղսալի ցանկություններին և առաջնորդվել դրանցով, դեռ պետք է ճանաչի Աստծուն՝ անկախ իր հավատքի դավանանքից և Քրիստոսին ընդունելու մասին պնդումից: Այնուամենայնիվ, այն մարդը, որը խաչել է իր մարմինը՝ կրքերով և ցանկություններով, և վարվում է Աստծո Հոգու ազատության մեջ, լուրջ պատճառ ունի հուսալու, որ Աստծո զավակ է դարձել[203]:

Կարևոր է նշել, որ մենք նկատի չունենք, որ իրական քրիստոնյան լիովին ազատ է մարմնից և դրա ցանկություններից, կամ՝ որ դրանք երբեք չեն կարող հաղթել նրան: Պողոս առաքյալը հստակ ցույց է տալիս, որ հավատացյալի պատերազմը մարմնի հետ և՛ իրական է, և՛ սաստիկ: Գաղատիայի եկեղեցիներին ուղղված իր նամակում նա պատկերում է դրա էպիկական չափերը. «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին՝ մարմնին հակառակ, և սրանք իրար հակառակ են, որ միգուցե այն, որ դուք կամենում եք, այն անեք (կամ՝ որպեսզի դուք չանեք այն բաները, որ կամենում եք)» (Գաղատ. 5.17):

Դարձի գալու ապացույցը՝ մարմնի հետ պատերազմելու բացակայությունը չէ, այլ՝ հակառակը: Իրական վերստին ծնունդի մեծագույն ապացույցներից մեկն այն է, որ մարդն ուրացել է իր ընկերությունը մարմնի հետ և պատերազմ է հայտարարել՝ առանց հաշտվելու որևէ մտադրության: Մենք պետք է հասկանանք, որ մեղքի, մարմնի և այս աշխարհի հետ խաղաղությամբ ապրող մարդու կյանքում գրեթե չկան փրկության ապացույցներ: Աստվածաշնչյան հավաստիացումը փրկության մեջ չի պատկանում այնպիսի մարդու, որը լիովին անձնատուր է եղել իր անկում ապրած մարմնին և առաջնորդվում է դրա ապականված ցանկություններով: Անհնար է ապացուցել, որ Սուրբ Հոգին բնակվում է այնպիսի մարդու մեջ, որը հանգիստ ապրում է Սոդոմում, միաբանվել է այս աշխարհի հետ և ընկերացել է իր մարմնի հետ: Այնուամենայնիվ, հնարավոր է ապացուցել այնպիսի մարդու փրկությունը, որի ատելությունը մեղքի հանդեպ ավելանում է, որն ավելի սաստկաբար է պայքարում իր մարմնի դեմ և ամեն օր ավելի է խորշում այս աշխարհից: Պողոս առաքյալը նման մարդու փայլուն օրինակ է: Նա գրում է.

> «Բայց նրանք, որ Քրիստոսինն են, իրենց մարմինը խաչը հանեցին՝ կրքերով և ցանկություններով միասին» (Գաղատ. 5.24):

> «Աշխարհն ինձ համար խաչված է, և ես էլ՝ աշխարհի» (Գաղատ. 6.14):

203 Գաղատացիների 5.16,24,25

ԱՉՔԵՐԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ Հովհաննեսն անդրադառնում է երկրորդ տարրին (որից բաղկացած է այս անկում ապրած աշխարհը)՝ աչքերի ցանկությանը: Թե՛ անցյալի, թե՛ ժամանակակից մեկնիչներից շատերը համաձայնում են, որ այս սեղմ, բայց բարդ արտահայտությունը վերաբերում է այն մեղսալի ցանկություններին, որոնք առաջանում կամ բորբոքվում են մեր աչքերի տեսածով: Աչքերի միջոցով է, որ մենք սաստիկ ցանկանում ենք այնպիսի բաներ, որոնք արգելում են Աստծո սերը և արդարությունը:

Աչքերը գայթակղության ճանապարհ էին հենց սկզբից: Պարտեզում Եվան տեսավ, որ արգելված պտուղը «հաճելի էր աչքերին», և այդ պատճառով տեղի տվեց խաբեբայի գայթակղությանը (Ծննդ. 3.6): Աքարը «տեսավ» և «ցանկացավ» մի գեղեցիկ վերարկու, նաև արծաթի և ոսկու ձուլակտորներ՝ արգելված ավարից: Նա վերցրեց դրանք և վճարեց այդ արարքի համար իր և իր հարազատների արյամբ (Հեսու 7.20,21,24-26): Դավիթ թագավորը «տեսավ» Բերսաբեի գեղեցկությունը և, հակառակ օրենքին, տիրացավ նրան (Բ Թագ. 11.2-5): Այդ արարքի արդյունքն էր՝ սպանված զինվորական, մահացած նորածին, խայտառակված թագավոր և պառակտված թագավորություն: Մատթեոսը պատմում է, որ սատանան տարավ Քրիստոսին մի բարձր սար և «ցույց տվեց» Նրան այս աշխարհի բոլոր թագավորությունները և դրանց փառքը (Մատթ. 4.8-10): Թեև այս ժամանակով փորձված մարտավարությունը չազդեց Քրիստոսի վրա, դրա օգտագործումը ցույց է տալիս, որ դա գայթակղիչի զինանոցի հաճախակի օգտագործվող զենքերից է:

Դիտարկելով այս պատմությունները՝ կարող ենք մտածել, որ այդ մարդկանց մեղքը նրանց արարքի մեջ էր, բայց իրականում նրանք մեղանչեցին այդ արարքից շատ առաջ: Հիսուսը սովորեցրեց, որ մարդը կարող է խախտել շնության դեմ տրված պատվիրանն իր սրտում, նույնիսկ եթե երբեք շնություն չի գործել: Նա զգուշացրեց մեզ, որ յուրաքանչյուրը, ով «մի կնոջ վրա մտիկ տա՝ նրան ցանկանալու համար, նա արդեն շնացավ նրա հետ իր սրտի մեջ» (Մատթ. 5.27,28): Որպեսզի ցույց տա մեր սրտում գործած մեղքի լրջությունը, Հիսուսը կոպիտ չափազանցություն օգտագործեց. Նա ասաց, որ մենք պետք է գերադասենք ինքներս մեզ խեղել, քան մոլար աչքերի պատճառով տրվող հավիտենական դատապարտություն ստանալ[204]: Ահա թե ինչու Հոբը հայտարարեց, որ ուխտ է կնքել իր աչքերի հետ՝ երիտասարդ աղջկա չնայելու համար[205]: Ու թեև սաղմոսերգուն, հավանաբար, առաջին հերթին նկատի ուներ կռապաշտության արգելքը, երբ հայտարարեց,

204 Մատթեոս 5.29,30
205 Հոբ 31.1

որ իր աչքի առջև ոչ մի չար բան չի դնի, սկզբունքը նույնն է[206]: Բոլոր այս սուրբգրային հատվածները վկայում են այն մասին, ինչը Սփերջենը պարզորեն բացատրեց. «Այն, ինչը հրապուրում է աչքը, շատ հավանական է, որ թափանցի սիրտը՝ նման Եվայի խնձորին, որը, նախ, հաճեցրեց նրա աչքին, իսկ հետո հաղթահարեց նրա միտքը և ձեռքը»[207]:

Անկում ապրած մարդու ծայրահեղ արատավորության պատճառով, վերստին չծնված սիրտը կրքով է լցված այն ամենի հանդեպ, ինչը հակասում է սուրբ Աստծո արդար օրենքին: Այս կիրքը բորբոքվում է, երբ մարդու աչքերի առջև և նրա հասանելիության սահմաններում ինչ-որ չար բան է հայտնվում: Ավելին, այս կրքի կրակն ավելի է բորբոքվում, երբ վերստին չծնված սիրտն իմանում է, որ դա արգելված է: Աստծո Խոսքը հաստատում է սկզբունքն այն մասին, որ որքան ավելի է Աստված հայտարարում, որ ինչ-որ բան դուրս է թույլատրելի սահմաններից, այնքան ավելի է անկում ապրած սիրտը կրքով լցվում դրա հանդեպ[208]:

Լեռան քարոզում Հիսուսը, օրինակ բերելով հրեական գրականությունից, անվանեց աչքը «մարմնի ճրագը» (Մատթ. 6.22,23): Գաղափարն այն է, որ մարդու սրտի բովանդակությունը և վիճակը հայտնվում են այն բանով, թե որտեղ է ուղղված նրա աչքը: Այն մարդը, որը որոշել է հեռացնել իր աչքերը չարից և ուղղել իր հայացքը Երկնային թագավորությանը, ցույց է տալիս, որ իր սիրտն արդար է դարձել՝ Ավետարանի և Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով: Իսկ այն մարդը, որը ոչ մի գեղեցկություն և օգուտ չի տեսնում Թագավորության մեջ, այլ ուղղում է իր հայացքն այս աշխարհի իրողություններին, ցույց է տալիս, որ իր սիրտը դեռ վերստին ծնված չէ, և Ավետարանը գրեթե օգուտ չի տվել իրեն:

Որպեսզի ճշտորեն կիրառենք այս ուսմունքը մեր ժամանակակից հանգամանքներում, պետք է, նախ, գիտակցենք, որ ապրում ենք մի մշակույթում, որը կլանված է իր առջև դրված չար բաներով: Զուր չէ, որ մեր օրերի վաճառքի մասնագետները կառուցում են իրենց գովազդները՝ հիմնականում շեշտադրելով տեսողությունը: Նրանք գիտեն, որ մեկ տեսողական էֆեկտի միջոցով կարող են այնպիսի ցանկություններ արթնացնել մեր սրտերում, որոնք նախկինում քնած էին, և ձգտում առաջացնել այնպիսի բաների հանդեպ, որոնց մասին մենք ընդամենը մեկ ժամ առաջ տեղյակ չէինք: Այնպիսի տպավորություն է, որ նրանք վերցրել են իրենց մարտավարությունները մեծագույն փորձիչի՝ սատանայի դասագրքից: Նա հենց սկզբից գիտեր, որ աչքն ամենամեծ և ամենալայն ճանապարհն է դեպի սիրտը:

206 Սաղմոս 101.3
207 Չ. Հ. Սփերջեն. *«Դավթի գանձարանը»* (Գրենդ Ռեփիդս, «Zondervan», 1950թ.), հտ. 1, էջ 240:
208 Հռոմեացիների 7.7-13

Դարձի գալու և դրա ապացույցներին սուրբգրային մոտեցում ունենալու համար պետք է ընդունենք այն ուսմունքը, որը ներկայացվում է մեզ այս հատվածում. դարձի մեծագույն ապացույցը մարդու կյանքի ուղղվածությունն է: Ովքեր դավանում են, որ դիրք ունեն Աստծո թագավորության մեջ, սակայն հազվադեպ են մտածում այդ Թագավորության մասին, պետք է ստուգեն իրենց դավանանքը: Եթե մենք ձգտում ենք այս աշխարհի իրողություններին, եթե տրտմում ենք այն մարմնավոր պարգևների պատճառով, որոնք չենք կարողանում ստանալ, եթե ցանկությամբ ենք լցվում այլ մարդկանց երկրային ձեռքբերումների հանդեպ, նշանակում է՝ մենք շատ հեռու ենք Երկնային թագավորությունից: Մենք պետք է սրենք մեր ականջը, որպեսզի լսենք և հասկանանք հետևյալ աստվածային ուղղումները.

> «Ինչո՞ւ եք փող վճարում, և ոչ թե հացի համար, և ձեր վաստակը՝ չկշտացնող բանի համար: Ապա Ինձ լսե՛ք, որ բարիք ուտեք, և ձեր հոգին զվարճանա պարարտությամբ» (Եսայի 55.2):

> «Որովհետև ի՞նչ օգուտ ունի մարդը, որ ամբողջ աշխարհն ստանա և իր անձը կորցնի: Կամ՝ ի՞նչ գին կտա մարդը՝ իր անձը փրկելու համար» (Մատթ. 16.26):

Փրկության ապացույցն իր պտղի մեջ է: Եթե ձեր սիրտը ճշմարտապես վերածնվել է, նշանակում է՝ դուք նոր ստեղծված եք՝ նոր ձգտումներով, որոնք կհեռացնեն ձեր աչքերն այս աշխարհի հրապուրանքներից և կուղղորդեն դեպի երկնայինը: Եթե ձեր սիրտը ճշմարտապես վերածնվել է, Երկնային թագավորությունը դաշտում թաքցրած գանձի պես կլինի ձեզ համար, որ մի մարդ, գտնելով, կրկին թաքցնում է, և ուրախությունից վաճառում է իր ամբողջ ունեցվածքը՝ գնելով այդ դաշտը[209]: Դուք նման կլինեք նաև մի առևտրականի, որը գեղեցիկ մարգարիտներ է փնտրում, և թանկարժեք մարգարիտ գտնելով՝ վաճառում է իր ամբողջ ունեցվածքը՝ գնելով այն[210]: Եթե դուք ճշմարտապես դարձի եք եկել, ապա աստիճանաբար, Հոգու սրբացման շարունակական աշխատանքի միջոցով, կհաստատեք Իսահակ Ուոթսի հուզիչ խոսքերը.

> «Բոլոր ունայն բաները, որ հրապուրում են ինձ,
> ես զոհաբերում եմ Նրա արյանը...
> Ես մահացած եմ ամբողջ աշխարհի համար,
> և ամբողջ աշխարհը մահացած է ինձ համար:

209 Մատթեոս 13.44
210 Մատթեոս 13.45,46

ԱՅՍ ԿՅԱՆՔԻ ՊԱՐԾԵՆԿՈՏ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

«Այս կյանքի պարծենկոտ հպարտությունը» արտահայտությունը թարգմանված է հունարեն *«ալազոնեի՛ա տու բի՛ու»* արտահայտությունից: *«Ալազոնեի՛ա»* բառը ճշգրտորեն թարգմանվում է որպես «պարծենկոտ հպարտություն»: Այն վերաբերում է դատարկ, մեծամիտ և հանդուգն հպարտությանը, որը դրդում է պարծանքի և սեփական անձը գովաբանող խոսքերի: Միակ հատվածը, որում այս բառը կրկին օգտագործվում է Նոր կտակարանում, Հակոբոսի խիստ հորդորն է այն հարուստներին, որոնք պարծենում են մեծ ծրագրերի և նախաձեռնությունների համար՝ Աստծուց անկախ, և առանց որևէ կերպով հաշվի առնելու Նրա նախախնամությունը և իրենց տկարությունն ու մահկանացու լինելը.

> «Ահա, ո՛վ դուք, որ ասում եք, թե՝ «այսօր և վաղը գնանք այսինչ քաղաքը և այնտեղ մի տարի լինենք և վաճառենք և շահենք», դուք, որ չգիտեք վաղվա օրը: Ինչպիսի՞ բան է ձեր կյանքը, որ մի շոգի է, որ մի քիչ ժամանակ երևում է և հետո աներևութանում: Փոխանակ որ պետք է ասեիք. «Եթե Տերը կամենա և ապրենք, այս բանը կամ այն բանը կանենք»: Բայց հիմա պարծենում եք ձեր ամբարտավանությունում *[ալազոնեի՛ասյ]:* Ամեն այդպիսի պարծանքը չարություն է» (Հակոբ. 4.13-16):

Նոր կտակարանում կա երկու հունարեն բառ, որոնք ամենից հաճախ «կյանք» են թարգմանվում: Ամենից գործածական բառը *«զո՛ե»*-ն է, որը վերաբերում է կյանքի սկզբունքին կամ էությանը: Մյուսը *«բի՛ոս»*-ն է, որը վերաբերում է մարդու կյանքի տևողությանը կամ ընթացքին, կամ այն ամենին, ինչով մարդու կյանքը պահպանվում է՝ ռեսուրսներին, հարստությանը, ունեցվածքին կամ ապրելամիջոցին: Հովհաննեսի թղթի հաջորդ գլուխներից մեկում, որում նա խոսում է աղքատների հանդեպ հավատացյալի պատասխանատվության մասին, այս բառը թարգմանված է «ապրանք» բառով. «Ով որ այս աշխարհի ապրանքն [*բի՛ոս*] ունենա և տեսնի իր եղբոյրը կարոտ մի բանի և իր գութը փակի նրանից, ինչպե՞ս Աստծո սերը բնակված կլինի նրանում» (Ա Հովհ. 3.17):

Ի մի բերելով այն, ինչ գիտենք Նոր կտակարանի այս երկու բառերի և դրանց գործածության մասին, կարող ենք եզրակացնել, որ «այս կյանքի պարծենկոտ հպարտությունը» արտահայտությունը նշանակում է այն մարդկանց հպարտությունը կամ ամբարտավանությունը, որոնք ոչ միայն պարծենում են իրենց ձեռքբերումներով և ունեցվածքով, այլև վերագրում են դրանք իրենց իմաստությանը և ուժին: Սա լավ միջոց է

աշխարհիկ մարդուն ճանաչելու համար, որի կարծիքով ինքն անկախ է Աստծուց և ազատ է Նրա նախախնամությունից՝ նման հերոսի, որն ինքն է կերտել իր գոյությունը, կառուցել իր ճակատագիրը և կուտակել իր ունեցվածքը՝ իր կամքի ուժով, խելացիությամբ և մեծ ֆիզիկական կարողությամբ: Նա համարում է, որ յուրաքանչյուր ձեռքբերում և գովեստ իր անձնական և մասնավոր հաղթանակն է՝ առանց աստվածային շնորհքի որևէ օգնության կամ օժանդակության: Դավիթը նկարագրում է նրան որպես անձնավորություն, որը չի մտածում Աստծո մասին՝ կազմելով իր ծրագրերը, և չի գոհանում Աստծուց, երբ իր ծրագրերը հաջողվում են: Նա գրում է.

> «Անօրենն իր հպարտ երեսով չի փնտրում Աստծուն.
> Աստված չկա նրա մտքերից ոչ մեկում...
> Նա ասել է իր սրտում.
> «Ես չեմ շարժվի: Ես երբեք դժվարության մեջ
> չեմ լինի»» (Սաղմ. 10.4,6, NKJV):

Նկարագրելով այս կյանքի պարծենկոտ հպարտությունը՝ պետք է ուշադիր լինենք՝ հասկանալու համար, որ այսպիսին լինելու համար պարտադիր չէ, որ մարդն աթեիստ համարի իրեն կամ բացահայտ ապստամբի Աստծո դեմ: Նույն այս վերաբերմունքը կարող է հեշտորեն ձևավորվել այնպիսի մարդկանց միջավայրում, որոնք խոստովանում են, որ ապավինում են Աստծուն, և նույնիսկ գոհանում են Նրանից: Եկեղեցում գոյություն ունի այնպիսի գործնական աթեիզմ, որն ավելի մահացու է, քան դրա ավելի համարձակ և բացահայտ արհամարհական եղբայրը: Այն կրում է քրիստոնեության հանդերձը և նույնիսկ կարող է Տեր դավանել Հիսուսին, բայց հազվադեպ է խորհրդակցում Նրա կամքի հետ գործնական մակարդակի վրա: Այն կարող է խնդրել Աստծուն միանալ իրեն որևէ նպատակի համար, որն արդեն որոշված է, կամ օրհնել որևէ ծրագիր, որն արդեն կազմված է: Միգուցե այն նույնիսկ ընդունի Նրա օգնությունը որևէ նախաձեռնության մեջ, բայց սովորաբար այն առաջարկում է միայն մնացորդային գոհություն՝ այն մնացորդները, որոնք մնում են սեղանի վրա մարդկային փառքի կշտանալուց հետո: Ովքեր այս կերպով են փնտրում Աստծո հովանավորությունը, տարբերվում են Առակաց գրքի իմաստուն մարդուց, որն ապավինում է Տիրոջը իր ամբողջ սրտով և չի վստահում իր հասկացողությանը, այլ իր բոլոր ճանապարհներում ճանաչում է Նրան[211]:

Այս կյանքի պարծենկոտ հպարտությունը սեփական անձի երկրպագության կիզակետն է, և ովքեր անձնատուր են լինում դրան, նույնքան

211 Առակաց 3.5,6

խղճալի են դառնում, որքան հին քաղդեացիները, որոնք ձուկ էին որսում իրենց ցանցով, իսկ հետո զոհաբերություններ էին մատուցում դրան[212]: Նրանք երկրպագում էին անկյանք ցանցին և ուշադրություն չէին դարձնում այն Աստծուն, Ով «Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա, և անձրև է բերում արդարների և անիրավների վրա» (Մատթ. 5.45): Համաձայն Սուրբ գրքի, ովքեր երկրպագում են իրենց անձը և պարծենում անձնական ձեռքբերումներով, երկրպագում են գոլորշու՝ մի պահ հայտնվող և անհայտացող, անցնող շուքի, հասարակ շնչառության, որը մարդու ռունգերի մեջ է[213]: Նման մարդը պարծենում է մեծ բաներով, սակայն չի կարող սպիտակեցնել կամ սևացնել գլխի նույնիսկ մեկ մազը և չի կարող մեկ ժամ էլ ավելացնել իր կյանքին[214]: Այս արտաքին շուքի մեջ նա նման է անասունների, որոնք կորչում են, ցողի, որն անհայտանում է արևածագին, և հարդի, որը քամին քշում է կալից[215]:

Այդպիսի մարդիկ չեն հասկանում, որ Աստված տալիս է մարդկանց կյանք, շունչ և ամեն ինչ, որ նրանք փնտրեն և գտնեն Իրեն[216]: Նրանք տեղյակ չեն, որ եթե Նա ծածկեր Իր երեսը, նրանք կսարսափեին, և եթե Նա վերցներ Իր հոգին, նրանք կմահանային և կրկին հող կդառնային[217]: Նման մարդիկ երբեք չեն հարցրել. «Ի՞նչ է մարդը, որ Դու հիշում ես նրան» (Սաղմ. 8.4): Նրանք տեղյակ չեն այն ճշմարտությանը, որ Նրա առջև ազգերը նման են դույլից կախված կաթիլի, և բոլորը միասին կշեռքի վրայի փոշու պես են համարվում[218]:

Այս կյանքի պարծենկոտ հպարտության տեսանկյունից մենք տեսնում ենք մեծ տարբերություն Աստծո զավակի և Նրան չճանաչող մարդկանց միջև: Ովքեր վերածնված են Հոգուց և ընդունում են Նրա սրբացնող աշխատանքը, շարունակ աճում են այն գիտելիքով, որ Քրիստոսն իրենց կյանքն է, և առանց Նրա իրենք «թշվառ և ողորմելի և աղքատ և կույր և մերկ են[219]»: Նրանք հասկանում են, որ առանց Նրա իրենք ոչինչ չեն կարող անել[220], և առավել գիտակցելով իրենց տկարությունը՝ մղում են զգում, որ ճանաչեն Աստծո կամքը և ապահով մնան դրանում: Ավելին, կատարելով Աստծո կամքը՝ նրանք գիտակցում են, որ անպիտան ծառաներ են, որոնք միայն արել են այն, ինչ պարտական էին անելու[221]: Եվ երբ իրենց տկար ջանքերով ինչ-որ բան է կատարվում, նրանք ավ-

212 Ամբակում 1.15,16
213 Սաղմոս 39,5, 144.4, Եսայի 2.22, Հակոբոս 4.14
214 Մատթեոս 5.36, 6.27
215 Սաղմոս 49.20, Ովսե 13.3
216 Գործք 17.25-27
217 Սաղմոս 104.27-29
218 Եսայի 40.15-17
219 Կողոսացիների 3.4, Հայտնություն 3.17
220 Հովհաննես 15.5
221 Ղուկաս 17.10

լում են գետինը՝ ծածկելու համար այն հետքը, որը կարող է իրենց ուղղել այդ արարքի փառքը: Սաղմոսերգուի հետ նրանք կանչում են.

> «Ոչ թե մեզ, Տե՛ր, ոչ թե մեզ, այլ Քո՛ անվանը փառք տուր՝ Քո ողորմության համար և Քո ճշմարտության համար» (Սաղմ. 115.1):

Աստծո զավակը մշտապես սովորում է Երկնքի գլխավոր սկզբունքը. «Նա, որ պարծենում է, թող Տիրոջով պարծենա» (Ա Կորնթ. 1.31, հմմտ. Երեմ. 9.23,24): Եվ երբ հավատացյալը մոռանում է իր սովորած դասերը և փորձում է վերցնել այն փառքը, որը պատկանում է միայն Քրիստոսին, Աստծո Հոգին հավատարմորեն հանդիմանում է նրան և ամոթով վերադարձնում իր տեղը[222]: Տերը չի կիսի Իր փառքը ոչ ոքի հետ[223]:

Ի հակադրություն, անհավատի սրտում կամ մտքում տեղ չկա այդպիսի խոնարհության և գոհության համար: Նա չի գիտակցում իր բացարձակ անկարողությունը, նաև իր բացարձակ կախվածությունը Աստծո շնորհքից և զորությունից: Նա ապրում է այն ամբարտավան ենթադրությամբ, որ կա՛մ Աստված չկա, կա՛մ, եթե կա, Նա չի զբաղվում մարդկանց գործերով: Այս ենթադրության պատճառով, անհավատը պնդում է, որ յուրաքանչյուր ձեռքբերում իրենն է, և յուրաքանչյուր հաղթանակ ևս մեկ պատճառ է՝ սեփական անձով պարծենալու համար: Մարդ կոչվող խղճուկ արարածը, որը չի կարող սպիտակ կամ սև դարձնել թեկուզ մեկ մազ իր գլխին և ավելացնել նույնիսկ մեկ ժամ իր կյանքին, կանգնում է իր ձեռքբերումների վերևում և հայտարարում, որ ինքն է ստեղծել իրեն:

ՄԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Այն ամենի լույսի ներքո, ինչ սովորեցինք՝ որպես դավանող քրիստոնյաներ, մենք պետք է հարցնենք մեզ, թե որն է մեր դիրքորոշումն այս աշխարհի հանդեպ: Մենք չպետք է խաբվենք՝ մտածելով, որ սա աննշան հարց է: Այն անչափ կարևոր է: Մեր հարաբերությունն այս աշխարհի հետ՝ մեր փրկության անսխալական ստուգումներից մեկն է: Հովհաննեսը զգուշացնում է, որ սերն այս աշխարհի հանդեպ և սերն Աստծո հանդեպ տրամագծորեն հակառակ են: Նա պարզ ասում է, որ «եթե մեկն աշխարհը սիրի, Հոր սերը նրանում չէ»[224]: Հակոբոսն էլ ավելի

222 Ղուկաս 14.7-11
223 Եսայի 42.8, 48.11
224 Ա Հովհաննես 2.15: «Հոր սերը» արտահայտությունը, հավանաբար, երկակի իմաստ ունի: Հովհաննեսը պնդում է, որ յուրաքանչյուրը, ով սիրում է այս աշխարհը, չի սիրում Աստծուն, ինչպես նաև չի ստանում այն հատուկ սերը, որն Աստված ցուցաբերում է Իր ժողովրդի հանդեպ: Իհարկե, սա տեղի է ունենում մեղավոր մարդու մեղավորությամբ, որն ինքնական և միտումնավոր մերժում է Աստծո այս հատուկ սերը:

համարձակ է՝ հռչակելով. «Շնացողնե՛ր, չգիտե՞ք, որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ: Արդ, ով որ կարողանա աշխարհին բարեկամ լինել, իր անձն Աստծո թշնամի կանի» (4.4):

Համաձայն Սուրբ գրքի, այս աշխարհը և Աստծուն միաժամանակ սիրելը տրամաբանորեն անհնար է, որովհետև այս երկուսը լիովին անհամատեղելի և հակասական են: Ամեն ինչ այս աշխարհում՝ մարմնի ցանկությունը, աչքերի ցանկությունը և այս կյանքի պարծենկոտ հպարտությունը, Հորից չէ: Այն չի առաջացել Նրանից, և ո՛չ էլ համապատասխանում է Նրա կամքին, այլ անտանելի և թշնամական է Նրա համար: Մարդը չի կարող միաժամանակ սիրել Աստծուն և այս աշխարհը, ինչպես որ չի կարող միաժամանակ «և՛ պահել թխվածքը, և՛ ուտել այն»:

Սա չի նշանակում, որ քրիստոնյաները խնդիրներ չեն ունենա այս աշխարհի հետ, կամ որ նրանք չեն կարող հրապուրվել դրանով: Քրիստոնյան կունենա մեծ պայքարներ այս աշխարհի հետ՝ իր բոլոր բազմաթիվ դրսևորումներով, բայց նա կատի այս աշխարհը, կպայքարի դրա դեմ և զզջում կզգա, երբ տրվի դրան: Այս տարբերությունը ոչ միայն տեսական է, այլև՝ իրական և գործնական: Այն անձնավորությունը, որը դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն գեղեցկություն և ուրախություն է գտնում այն բաներում, որոնք ընդդիմանում են Աստծո կամքին, պետք է մտահոգվի իր դավանության իսկությամբ: Այնուամենայնիվ, այն մարդը, որը դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ և գիտակցում է, որ իր արհամարհանքն այս աշխարհի հանդեպ ավելանում է, որ ինքն ապրում է՝ հակառակվելով այս աշխարհին, և առաջընթաց ունի այն հաղթելու մեջ, հավաստիացման հիմնավոր պատճառ ունի՝ անկախ այն բանից, թե որքան հաճախ նա կարող է ձախողվել: Մենք պետք է տանք հետևյալ հարցը. «Ո՞րն է մեր դիրքորոշումն այս աշխարհի հանդեպ»: Հետևելով Ջոն Բունյանի *«Ուխտագնացի ճանապարհորդությունը»* հայտնի այլաբանության գլխավոր հերոսի՝ Քրիստոնյայի օրինակին, արդյո՞ք մենք փախչում ենք Կործանվող քաղաքից: Արդյո՞ք մենք վճռել ենք ազատվել դրա ծուղակներից: Թե՞ մենք բնակվել ենք Անմտության քաղաքում, և Սնափառության տոնավաճառը մեծ հրճվանք է պատճառում մեզ:

ԽՈՍՔ ՀՈՎԻՎՆԵՐԻՆ

Հովհաննեսի օրերում այս աշխարհի դրսևորման կիզակետը Հռոմի Կայսրությունն էր՝ իր ագահությամբ, հեշտասիրությամբ և իշխանության հանդեպ ծարավով: Հայտնություն գրքի մեջ այն կոչվում է Մեծ Բաբելոն՝ «ՊՈՌՆԻԿՆԵՐԻ ԵՎ ԵՐԿՐԻ ԳԱՐՇԵԼԻՆԵՐԻ ՄԱՅՐԸ», որն «իր պոռնկության բարկության գինուց խմեցրեց բոլոր ազգերին» (Հայտն. 14.8, 17.5): Ներկայումս այս աշխարհն ավելի, քան երբևէ զորավոր և անվե-

հեր է թվում: Հոլիվուդը, Մեդիսոն Ավենյուն, Ուոլ Սթրիթը, Վաշինգտոնը և մեր ակադեմիական հաստատությունների մեծ մասը դրա ներկայացուցիչներն են: Նման հին ժամանակվա Բաբելոնին, այս աշխարհն այսօր ոսկե գավաթ է բռնել՝ «լի գարշելիությունով և իր պիղծ պոռնկությունով», և առաջարկում է բոլորին խմել դրանից (Հայտն. 17.4): Նույնպես, նման Բաբելոնին, այս աշխարհն այսօր զինված է սուտ մարգարեներով, որոնք ուղարկված են աշխարհի չորս կողմերը՝ մարդկությանը մոլորեցնելու համար: Անկախ այն բանից՝ նրանք գծավոր բիզնես կոստյումո՞վ են գալիս, նորաձևության վերջին ճիչո՞վ են հագնվում, թե՞ մարգարեի հանդերձ են կրում, նրանց ուղերձը նույնն է: Նրանք չեն խոսում հավիտենականի մասին, այլ համոզում են իրենց ունկնդիրներին տիրանալ ժամանակավորին, քանի դեռ այն չի անհայտացել: Նրանց գրեթե չեն մտահոգում բացարձակ բարոյական սկզբունքները, որոնք կարող են սահմանափակել մարդու ազատությունը ինքնաարտահայտման ձգտելու ճանապարհին: Նրանք արդարացնում են ագահությունը՝ ներկայացնելով այն իրենց ունկնդիրներին սեփական ընդունակությունների զարգացման, սեփական անձի կայացման և արդար հասանելիքը ստանալու քողի ներքո: Այդ մարդիկ միշտ իրենց ունկնդիրների կողմից են. նրանք միջնորդում են նրանց, փնտրում են նրանց շահը, պատմում են, թե ինչ է նրանց հարկավոր, և հասանելի են դարձնում դա՝ ինչ-որ բանի դիմաց: Դժվար չէ հասկանալ, թե ինչու են այդքան մարդիկ հետևում նրանց: Նրանց ուղերձները հասցեագրված են մարմնի ցանկությանը, աչքերի ցանկությանը և այս կյանքի պարծենկոտ հպարտությանը: Նրանք հաճեցնում են անկում ապրած մարդկանց ականջներին՝ ասելով այն, ինչ նրանք ուզում են լսել[225]: Նրանք այս աշխարհից են և խոսում են դրա լեզվով, և այս աշխարհը լսում է նրանց[226]: Չնայած մատուցման անսահման թվացող տարբերակներին, նրանց ուղերձը միշտ նույնն է: Իրականում, այս մարգարեների բառերն այնպիսի ապշեցուցիչ նմանություն ունեն, որ մենք սկսում ենք հավատալ, որ դրանք, հավանաբար, ընդհանուր աղբյուրից են՝ օդի իշխանության իշխանից, այն հոգուց, որ այժմ գործում է ապստամբության որդիների մեջ[227]:

Այն ամենը, ինչ նկարագրեցինք մինչև հիմա, սպասելի է: Այս աշխարհի աշխարհիկ լինելը մեծ բացատրության կարիք չունի, բայց ընբռնումից դուրս է այս աշխարհի համարձակ ներկայությունը եկեղեցում[228]: Այլ բան

225 Բ Տիմոթեոս 4.3
226 Ա Հովհաննես 4.5
227 Եփեսացիների 2.2
228 Անհրաժեշտ է կարևոր տարբերակում անել այս նախադասության մեջ *«եկեղեցի»* բառի գործածության վերաբերյալ: Այս համատեքստում օգտագործում ենք «եկեղեցի» բառը՝ նկատի ունենալով դավանող քրիստոնյաներին կամ դավանող ավետարանական եկեղեցիներն Արևմուտքում: Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին բաղկացած է միայն

է, երբ աշխարհն աննկատ և գաղտագողի փորձում է եկեղեցի թափանցել՝ որպես, գրեթե, աննկատ ուժ: Եվ լիովին այլ բան է, երբ աշխարհը համարձակ կանգնում է եկեղեցու կենտրոնում և խեղաթյուրում է ամեն ինչ՝ նմանեցնելով իր չար պատկերին: Այս վիճակում է Արևմուտքում գտնվող, այսպես կոչված, «քրիստոնեության» զգալի մասը: Կարելի՞ է ասել, որ այս աշխարհը մեղավոր է նյութապաշտության մեջ: Նույնը վերաբերում է եկեղեցուն: Կարելի՞ է ասել, որ այս աշխարհը սպառողական մտածելակերպ ունի: Նույնը վերաբերում է եկեղեցուն: Կարելի՞ է ասել, որ այս աշխարհը վարվում է օգտապաշտությամբ՝ հաշվի չառնելով աստվածաշնչյան ճշմարտությունը: Նույնը վերաբերում է եկեղեցուն: Կարելի՞ է ասել, որ այս աշխարհը տարված է զվարճալի ժամանցով, մոլորված է հաճույքներով և հրճվում է հիմարությամբ: Նույնը վերաբերում է եկեղեցուն: Կարելի՞ է ասել, որ այս աշխարհն առաջարկում է սեփական ընդունակությունների զարգացում և սեփական անձի առաջխաղացում: Նույնը վերաբերում է եկեղեցուն: Կարելի՞ է ասել, որ այս աշխարհը լի է մարմնավորությամբ, հեշտասիրությամբ, ճոխությամբ և շռայլությամբ: Նույնը վերաբերում է եկեղեցուն: Իրականում, եկեղեցին ոչ միայն հանդուրժում է մարմնավոր վարքն իր անդամների կյանքում, այլև պաշտպանում է նրանց մարմնավորությունը և, նման Կորնթոսի եկեղեցուն, նույնիսկ պարծենում է դրանով՝ վերածելով Աստծո շնորհքն անառակության, և ուրանալով մեր միակ Իշխանին և Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին[229]: Բունյանի օրերում Սնափառության տոնավաճառն այն միջոցն էր, որով սատանան զվարճացնում էր մարդկանց և պահում էր նրանց այս աշխարհում: Բունյանը զարմանքից կպապանձվեր՝ իմանալով, որ մեր օրերում շատ եկեղեցիներ իրենք են օգտագործում Սնափառության տոնավաճառը, որպեսզի զվարճացնեն Աստծուն փնտրող մարդկանց և այնպես անեն, որ նրանք վերադառնան հաջորդ կիրակնօրյա հավաքույթին:

Ինչո՞ւ և ինչպե՞ս սա տեղի ունեցավ բազմաթիվ եկեղեցիներում: Հիմնականում այն մարդկանց պատճառով, որոնք դրվեցին եկեղեցում՝ որպես հովիվներ:

Առաջինը՝ մենք պետք է եզրակացնենք, որ նրանց տագնապալի մեծամասնությունը պետք է որ վերստին չծնված և Քրիստոսից կտրված լինի: Նրանց վարդապետական և բարոյական անթաքույց և անմիտ զանցանքներն այն աստիճան անհեթեթ են, որ նրանք, հավանաբար, դարձի եկած չեն:

վերածնված մարդկանցից, որոնք իրենց դարձին համապատասխան պտուղ են բերում, և որոնք առանձնանում են դավանող (սակայն դարձի չեկած) քրիստոնյաների մեծ բազմությունից:

229 Ա Կորնթացիների 5.6, Հուդա 4

Երկրորդը՝ մենք պետք է ենթադրենք, որ նրանցից մի քանիսը, որոնք ճշմարտապես դարձի եկած են, կանչված չեն Ավետարանի ծառայության մեջ: Գոյություն ունի մեծ թյուրըմբռնում Ավետարանի ծառայության վերաբերյալ, որն այն աստիճան է ենթարկվել գործարարության և ժամանցային ոլորտների ազդեցությանը, որ շատերն այն մարդկանցից, որոնք ներկայումս կանգնած են ամբիոնների ետևում, ավելի շուտ պետք է Ուոլ Սթրիթի ընկերությունների ղեկավարներ կամ Հոլիվուդի դերասաններ լինեին:

Երրորդը՝ մենք պետք է նույնպես ենթադրենք, որ այդ մարդկանցից մի քանիսը ճշմարտապես քրիստոնյա են և ճշմարտապես կանչված են Ավետարանի ծառայության մեջ, բայց նրանք հայտնվել են մերօրյա կրոնի ծուղակում. նրանք չունեն իրական «երկաթ սրող» հարաբերություններ այլ ծառայողների հետ և չգիտեն, թե ինչպես վերադառնալ ճշմարտությանը[230]: Նման արդար Ղովտին, նրանց սրտերը տառապում են եկեղեցու աշխարհիկության պատճառով, բայց նրանք կորցրել են իրենց բարոյական հեղինակությունը և ուժը՝ դրա դեմ խոսելու համար[231]: Նրանց կյանքում կատարվել է հետևյալ առակը. «Պղտորած ակնի և քանդված աղբյուրի նման է ամբարշտի առջև ընկճվող արդարը» (Առակ. 25.26): Նրանք պետք է խրախուսվեն այն ճշմարտությամբ, որ Տերը գիտի աստվածապաշտներին փրկել որսողի որոգայթից և ազատել փորձանքից[232]:

Չորրորդը՝ շատ հովիվներ հետևում են այնպիսի միտման, ըստ որի եկեղեցին պետք է ղեկավարվի մշակույթի քմահաճույքներով կամ արդյունավետ համարվող օգտապաշտական սկզբունքներով: Այսպիսով, շատերն ընդօրինակում են որևէ դերասանի, անձնական մարզչի, հոգեբանի կամ Մեդիսոն Ավենյուի շուկայավարման փորձագետի վարքագծի: Թվում է՝ մենք մոռացել ենք, որ հովիվներն առաջին հերթին Սուրբ գրքի աշակերտներ և ուսուցիչներ են[233], հոտի մասին խնամք տանող մարդիկ են[234], նաև ջերմեռանդ բարեխոսներ են Աստծո առջև[235]: Նրանք պետք է հսկեն և ավանդեն այն, ինչը վստահված է իրենց[236]՝ իմանալով, որ հաշվետու են լինելու այն Մեծ օրը[237]: Նրանք պետք է աստվածաբաններ և Աստծո Խոսքի մեկնիչներ լինեն: Նրանք պետք է համապա-

230 Առակաց 27.17
231 Բ Պետրոս 2.7,8
232 Սաղմոս 91.3, Բ Պետրոս 2.9
233 Եզրաս 7.10, Գործք 6.2,4, Բ Տիմոթեոս 2.15
234 Գործք 20.28, Ա Պետրոս 5.1-4
235 Գործք 6.4, Հռոմեացիների 1.9, Եփեսացիների 1.15,16, Փիլիպեցիների 1.3,4, Կողոսացիների 1.9
236 Ա Տիմոթեոս 1.11, 6.20, Բ Տիմոթեոս 2.14, Տիտոս 1.3
237 Ա Կորնթացիների 3.12-15, Բ Տիմոթեոս 4.8

տասխանեն Սուրբ գրքի խիստ չափանիշներին՝ իրենց բնավորության, բարոյական սկզբունքների և պարտականությունների վերաբերյալ[238]: Նրանք պետք է առանձին ժամանակ անցկացնեն Աստծո հետ՝ նման պարսպի վրայի պահապանների[239]: Հետևելով Քրիստոսի հետքերին, նրանք պետք է մոտենան Աստծուն՝ մարդկանց անունից, և մարդկանց՝ Աստծո անունից:

Վերջինը՝ մենք նույնպես պետք է ընդունենք մեր միջև եղող վախկոտությունը՝ մերժվածության վախը, որը բխում է ինքնապահպանման կուռքից: Այս պատճառով է, որ մենք աղավաղված և հարմարավետ պատկերացում ենք ձևավորել այնպիսի սիրո մասին, որը երբեք ոչ ոքի չի բարկացնում: Այս սիրո մեջ չկա ճշմարտություն, կշտամբանք, նաև սովորեցնելու, հանդիմանելու, ուղղելու և խրատելու համարձակություն[240]: Այս սերը թույլ է տալիս մարդկանց դժոխք գնալ՝ առանց զգուշացնելու, փոխարենը հակառակվեր նրանց մեղքին, ցավ պատճառեր նրանց թույլ ինքնագնահատականին և դարձներ նրանց իր թշնամին՝ պատմելով ճշմարտությունը[241]: Իրականում, սա սեր չէ, այլ սիրո ճիշտ հակառակը: Եթե մենք երբեք չենք հանդիմանում ոչխարներին, որպեսզի անարդարացիորեն չվաստակենք նրանց անհավանությունը, ապա անում ենք դա ոչ թե այն պատճառով, որ սիրում ենք նրանց, այլ որովհետև ուզում ենք դուր գալ նրանց: Հավանություն և գնահատանք ստանալու ցանկությունը մահացու թույն է Աստծո ծառայողի համար, սակայն, թվում է՝ շատերն են խայթվել դրանից: Մենք մոռացել ենք մեր Տիրոջ զգուշացումը. «Վա՜յ ձեզ, երբ որ բոլոր մարդիկ ձեզնից բարի ասեն, որովհետև այդպես էին անում սուտ մարգարեներին նրանց հայրերը» (Ղուկ. 6.26):

238 Ա Տիմոթեոս 3.1-7, Տիտոս 1.7-9
239 Եսայի 62.6,7
240 Բ Տիմոթեոս 3.16-ում Պողոս առաքյալը ներկայացնում է երիտասարդ Տիմոթեոսին Աստծո Խոսքի քառակողմ ծառայությունը՝ Աստծո ծառայողի կողմից:
241 Գաղատացիների 4.16-ում Պողոսը հակառակվում է Գաղատացիների մոլորությանը և հարցնում է. «Ուրեմն թշնամի՞ եղա ձեզ՝ ձեզ հետ ճշմարիտը խոսելով»:

ԳԼՈՒԽ ԻՆԸ

Մնալ եկեղեցում

«Որդյակնե՛ր, վերջին ժամանակն է, և ինչպես լսեցիք, թե՝ Նեռը գալիս է, և այժմ շատ նեռեր են եղել, որ սրանից իմանում ենք, թե վերջին ժամանակն է: Մեզնից դուրս գնացին, բայց մեզնից չէին, որովհետև, եթե մեզնից լինեին, ապա մեզ հետ մնացած կլինեին, բայց որ հայտնի լինեն, թե նրանք ամենը մեզնից չեն»:

– Ա Հովհաննես 2.18,19

Առաջին Հովհաննես 2.18,19-ում Հովհաննես առաքյալը խոսում է մի խումբ մարդկանց մասին, որոնք ընտրել էին նահանջի ճանապարհը: Նրանք մերժել էին առաքելական վարդապետությունը Քրիստոսի Անձի և աշխատանքի մասին, հեռացել էին եկեղեցուց և սուտ մարգարեներ էին դարձել: Հովհաննեսը նույնիսկ այնքան հեռու է գնում, որ հակաքրիստոսներ կամ նեռեր է անվանում նրանց:

Տխրահռչակ «հակաքրիստոս» տիտղոսը հունարեն *«Քրիստո՛ս»* բառի և *«անտի»* նախածանցի համադրությունն է: Եզակի թվով, Հակաքրիստոսը կամ Նեռը Մեսիայի մեծ թշնամին է, որը մեկ օր կփորձի զավթել Նրա դիրքը և պատերազմել Նրա դեմ[242]: Այս բառի հոգևակի գործածությունը վերաբերում է եկեղեցու ժամանակաշրջանում ապրող ցանկացած թվով մարդկանց, որոնք ժխտում են հիմնարար առաքելական վարդապետությունները Քրիստոսի Անձի և աշխատանքի մասին, հեռու են գնում եկեղեցուց և պատմական քրիստոնեությունից և ձգտում են նույն կերպով մոլորեցնել այլ մարդկանց[243]: Իր թղթում Հովհաննեսն անվանում է նրանց ստախոսներ և մոլորեցուցիչներ, որոնք ուրանում են

242 Բ Թեսաղոնիկեցիների 2.3,4

243 Հովհաննեսի «վերջին ժամանակն է» արտահայտությունը «հետին օրերի» (կամ «վերջին օրերի») հոմանիշն է (Գործք 2.17, Բ Տիմոթեոս 3.1, Հակոբոս 5.3): Այն վերաբերում է Քրիստոսի հարության և համբարձման և Նրա երկրորդ վերադարձի միջև ժամանակահատվածին:

Հորը և Որդուն՝ ժխտելով մարմնավորումը և հրաժարվելով ընդունել, որ Հիսուսն աստվածային Քրիստոսն է[244]: Ինչպես և Հովհաննեսի օրերում, մեր ժամանակակից աշխարհը լի է հակաքրիստոսներով, որոնք կա՛մ ուղղակիորեն ընդդիմանում են Քրիստոսին, կա՛մ տարածում են այնպիսի կրոն, որը փոքրացնում է Նրա Անձի գերազանցությունը կամ Նրա աշխատանքի էական բնույթը: Ցանկացած ուսմունք, որը հաստատ չի հարում Քրիստոսի բացարձակ եզակիությանը, ոչ լիարժեք կերպով է ներկայացնում Նրա դիրքը կամ աննշան կերպով է պատկերում Նրա խաչը, իր բնույթով հակաքրիստոսական է: Ինչպես տեսնում ենք Սուրբ գրքում, ովքեր Քրիստոսի կողմից չեն, դեմ են Նրան[245]:

Թեև անմիջական համատեքստում Հովհաննեսն առաջին հերթին գրում է սուտ ուսուցիչների մասին, նա աստվածաշնչյան հավաստիացման ևս մեկ ստուգում է ներկայացնում. ճշմարիտ քրիստոնյան կմնա քրիստոնեական հավատքի պատմական վարդապետությունների սահմաններում և կշարունակի հաղորդակցվել Աստծո ժողովրդի հետ: Այն մարդիկ, որոնք մերժում են այս վարդապետությունները և դադարում են հաղորդակցվել եկեղեցու հետ, ցույց են տալիս, որ իրենք ճշմարտապես դարձի եկած չեն և երբեք էլ չեն եկել: Հովհաննեսը գրում է. «Մեզնից դուրս գնացին, բայց մեզնից չէին, որովհետև եթե մեզնից լինեին, ապա մեզ հետ մնացած կլինեին, բայց որ հայտնի լինեն, թե նրանք ամենը մեզնից չեն» (2.19):

Սա չի նշանակում, որ հավիտենական փրկությունը ձեռք է բերվում կամ պահպանվում է եկեղեցում: Մարդը փրկվում է միայն Քրիստոսով և միայն հավատքի միջոցով[246]: Դա նշանակում է, որ այն մարդը, որը ճշմարտապես դարձի է եկել, կհարատևի այն ուսմունքների մեջ, որոնք հանգեցրին իր դարձի գալուն, և կշարունակի հաղորդակցվել քրիստոնեական եկեղեցու հետ: Հովհաննեսը նման պնդումներ է անում իր Երկրորդ թղթում. «Ամեն, ով որ հանցանք է գործում և չի կենում Քրիստոսի վարդապետության մեջ, Աստված չունի: Ով որ կենում է Քրիստոսի վարդապետության մեջ, նա ունի Որդուն էլ, Հորն էլ» (1.9):

ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ ԵՎ ՆԱՀԱՆՁ

Եկեղեցու պատմության ընթացքում մշտապես պայքար է մոլեգնել նրանց միջև, ովքեր ընդունում են հավատացյալի հավիտենական ապահովությունը կամ հարատևումը, և նրանց միջև, ովքեր համարում են, որ ճշմարիտ հավատացյալը կարող է նահանջել՝ հավիտենական կործանման գնալով: Այս հարցն այն աստիճան կարևոր է, որ պետք է

244 Ա Հովհաննես 2.22,23, 4.2, Բ Հովհաննես 1.7
245 Ղուկաս 11.23
246 Եփեսացիների 2.8,9

հակիրճ խոսեմ այս մասին: Ես չեմ ենթադրում, որ այս հարցը կլուծվի՝ գոհացնելով բոլորին: Այնուամենայնիվ, հույս ունեմ առաջադրել մի քանի կարևոր ճշմարտություն դարձի բնույթի վերաբերյալ և ցույց տալ, թե ինչպես են դրանք վերաբերում հավատացյալին:

Նախ՝ կարևոր է հասկանալ, որ ես ընդունում եմ սրբերի հարատևման պատմական վարդապետությունը, որին հարում էին բարեկարգողները, մաքրակրոնները, վաղ երիցականները և, մասնավորապես, մկրտականները[247]: Այս վարդապետությունը հաստատում է, որ նրանք, ովքեր ճշմարտապես վերածնվել են Սուրբ Հոգով, նոր ստեղծվածներ են դարձել Քրիստոսում, պահվում են Աստծո զորությամբ և երբեք վերջնականորեն չեն ընկնի նահանջի և հավիտենական կործանման մեջ: Այս վստահության պատճառը հավատացյալի կամքի ուժը չէ, այլ Աստծո հավատարմությունը և զորությունը: Այն Աստված, Ով ծառայում է Իր ժողովրդին, նույնպես պահում է Նրանց Իր զորությամբ: Այն Աստված, Ով արդարացնում է հավատացյալին, անկասկած կսրբացնի նրան և, ի վերջո, կընդունի նրան փառքի մեջ: Նման Պողոս առաքյալին, մենք վստահ ենք այն բանում, որ Նա, Ով բարի գործ է սկսել, կկատարի այն մինչև Հիսուս Քրիստոսի օրը:

Հավատացյալների հարատևության վերաբերյալ ցանկացած քննարկման մեջ անհրաժեշտ է հաշվի առնել չորս բան: Առաջինը՝ մենք պետք է ճիշտ պատկերացում ունենանք փրկության բնույթի մասին: Ժամանակակից քարոզման մեծ մասի մակերեսային բնույթը դրդել է մեզ հավատալ, որ փրկության աշխատանքն առաջին հերթին մարդկային կամքի որոշում է: Աստված հայտնում է Ավետարանը մարդուն, իսկ հետո սպասում է նրա արձագանքին: Մարդը փրկություն է ստանում՝ ընտրելով Քրիստոսին, և շարունակում է մնալ փրկության մեջ՝ իր կամքով: Այսպիսով, այն մարդը, որը փրկություն է ստանում՝ Աստծուն պատշաճ կերպով արձագանքելով, կարող է նույնքան հեշտորեն կորցնել իր փրկությունը, եթե հրաժարվի իր սկզբնական որոշումից՝ հակառակ որոշում կայացնելով:

Այս տեսանկյան խնդիրն այն է, որ այն հաշվի է առնում միայն մարդու կամքը և չի դիտարկում այն աշխատանքը, որն Աստված կատարում է մարդկային բնության հետ: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ փրկարար հավատք ունեցող մարդը *ծնված է* Աստծուց[248]: Ավելին, այն հաստա-

247 Ընթերցողը կարող է ուսումնասիրել և՛ Վեստմինստերի հավատքի դավանանքի, և՛ 1689 թվականի Լոնդոնի հավատքի դավանանքի 17-րդ գլուխները, որոնցում մանրամասնորեն ներկայացվում է սրբերի հարատևման վարդապետությունը:

248 «Աստծուց է ծնված» արտահայտությունը թարգմանված է հունարեն *«գեգե՛ննետայ»* բառից, որը վաղակատար ժամանակաձևով և կրավորական սեռով է: Այն ճշտորեն թարգմանված է *«Անգլերեն Ստանդարտ թարգմանության»* մեջ. «Յուրաքանչյուրը, ով հավատում է, որ Հիսուսը Քրիստոսն է, ծնվել է Աստծուց...»: Այսպիսով, վերածնման աշխատանքը տրամաբանորեն նախորդում է հավատքին և

տում է, որ այս վերստին ծնունդը «ո՛չ արյունից, և ո՛չ մարմնի կամքից, և ո՛չ մարդու կամքից է, այլ՝ Աստծուց» (Հովհ. 1.13): Փրկությունը չի վերաբերում միայն մարդու կամքին, այլ ծայրաստիճան արատավորված մարդկային բնության վերափոխմանը նոր ստեղծվածի[249]: Այն Աստծո գերբնական աշխատանքն է, որի միջոցով մեղավորի թշնամական և անարձագանք քարե սիրտը փոխարինվում է նոր՝ կենդանի և արձագանքող մսեղեն սրտով[250]: Փրկությունն այն չէ, երբ չար մարդկային սիրտը որոշում է վերադառնալ Աստծուն՝ ընդամենը քարոզչի մեղմ հորդորով կամ, նույնիսկ, Սուրբ Հոգու սահմանափակ մղումներով. այն արմատական վերածնման արդյունք է: Աստծո Հոգու վիթխարի աշխատանքի միջոցով մեղավորը դարձել է նոր ստեղծված՝ նոր ձգտումներով, որոնք կարող են հեռացնել իրեն մեղքից և մոտեցնել Աստծուն: Եթե փրկությունը և դրա ընթացքը ընդամենը բաղկացած լինեին կամային որոշումից և Աստծուն պատշաճ կերպով արձագանքելուց, այն հեշտորեն կարող էր չեղյալ դարձվել՝ հակառակ որոշման միջոցով: Բայց եթե փրկությունը վերաբերում է մարդու բնության վերստեղծմանը, ինչի շնորհիվ նա նոր ստեղծված է դառնում, նշանակում է՝ փրկության չեղարկումը կամ կորուստն անհնար է:

Երկրորդը՝ մենք պետք է ճիշտ պատկերացում ունենանք աստվածային նախախնամության շարունակական աշխատանքի մասին ճշմարտապես դարձի եկած մարդու կյանքում: Այնպես չէ, որ Աստված ընդամենը դրդում է մարդուն հավատալ Իրեն, իսկ հետո թողնում է նրան իր ցանկություններին: Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ այն Աստված, որն արդարացնում է, նաև սրբացնում է: Այս ճշմարտությունը գերազանց պատկերված է Եփեսոսի եկեղեցուն ուղղված Պողոսի թղթում: Հաստատելով երկրորդ գլխում, որ արդարացումը միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով է, Պողոսն անմիջապես ուղղում է իր ընթերցողների ուշադրությունը Աստծո սրբացման աշխատանքին, որը մշտապես ուղեկցում է փրկարար հավատքը, և շնորհքի հետագա արդյունքներից մեկն է. «Որովհետև Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվենք» (2.10):

Այն մարդը, որն արդարացել է շնորհքով՝ հավատքի միջոցով, դարձել է Աստծո ստեղծվածը: Նա վերստեղծվել է Քրիստոս Հիսուսում, որպեսզի կատարի այն բարին, որը պատրաստված է եղել իր համար աշխարհի ստեղծագործությունից առաջ՝ Աստծո հավիտենական խոր-

---

հանդիսանում է հավատքի պատճառը և հիմքը:

249 Բ Կորնթացիների 5.17

250 Եզեկիել 36.26

հուրդներով: Ինչպես որ Պողոսը գրեց Փիլիպեի հավատացյալներին, Աստված չէր փրկել նրանց, իսկ հետո միայնակ ճանապարհ ուղարկել. Նա գործում էր նրանցում *«կամենալն էլ, անելն էլ՝* իր հաճության պես» (2.13, շեղագիրն ավելացված է): Այս ազդեցիկ պնդումն ապացուցում է, որ Աստված ոչ միայն նոր ստեղծված է դարձրել հավատացյալին՝ նոր ձգտումներով, որոնք ազդում են նրա կամքի վրա, այլև աշխատել է հավատացյալի կամքի հետ, որպեսզի նա ապրի և գործի Աստծուն հաճելի կերպով: Այս զարմանալի աստվածային աշխատանքն այն հիմքն էր, որն անսասան վստահություն էր հաղորդում Պողոսին Փիլիպեի հավատացյալների վերջնական փրկության և ապագա փառավորման վերաբերյալ. «Եվ հաստատ համոզված եմ սրան, թե Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (1.6):

Երրորդը՝ սրբերի հարատևման վերաբերյալ ցանկացած քննարկման մեջ պետք է ճիշտ պատկերացում ունենանք փրկության նպատակի մասին: Թեև Աստծո փրկության աշխատանքը *մարդու համար* է, մարդու բարեկեցությունը չէ ամեն ինչի մեծագույն բարիքը կամ վերջնական նպատակը: Թեև սա խիստ խոսք է ժամանակակից մարդու և նույնիսկ ժամանակակից ավետարանական հավատացյալի համար, ամեն ինչի վերջնական նպատակն Աստծո փառքն է՝ Նրա բնավորության և զորության հայտնության միջոցով: Այլ կերպ ասած, Աստված անում է այն, ինչ անում է, որպեսզի Իր մեծությունը և փառքը հայտնվեն Իր արարչագործությանը: Սա Աստծո բոլոր գործերի նպատակն է, հատկապես դրանցից մեծագույնի՝ մարդկանց փրկության, որը կատարվեց Հիսուս Քրիստոսի միջոցով: Մի՞թե Աստված թույլ կտա, որ Իր բնավորության և զորության մեծագույն դրսևորումը ձախողվի: Մի՞թե Նա, որ սկսեց փրկության աշխատանքը, չի կարող կատարել այն: Մի՞թե Նա ծաղրանքի առարկա կդառնա Իր թշնամիների համար, որոնք կասեն. «Տերը չկարողացավ տանել նրանց այն երդումով խոստացած երկիրը, նրա համար անապատի մեջ մեռցրեց նրանց» (Թվոց 14.16):

Հանուն Իր փառքի, Աստված թույլ չի տա, որ փրկությունը ձախողվի, նույնիսկ ամենից տկար հավատացյալի կյանքում: Ընդհակառակը, Նա թույլ կտա, որ «Տիրոջ կարողությունը մեծանա, ինչպես որ» Ինքը խոսեց (Թվոց 14.17): Նա կվերցնի Իր ժողովրդին այս աշխարհից և կբերի Իր մոտ: Նա կմաքրի նրանց բոլոր պղծություններից և կուռքերից, նոր սիրտ կտա նրանց և կգրի Իր օրենքներն այդ սրտի վրա: Նա կդնի Իր Հոգին նրանց մեջ և այնպես կանի, որ նրանք Իր օրենքներում վարվեն[251]: Նա հավիտենական ուխտ կկնքի նրանց հետ այն մասին, որ չի թողնելու նրանց, և կդնի Տիրոջ երկյուղը նրանց սրտերում, որպեսզի չհե-

251 Երեմիա 31.33, Եզեկիել 36.22-27

ռանան Իրենից: Նրանք կլինեն Իր ժողովուրդը, և Ինքը կլինի նրանց Աստված: Նա կցնծա նրանց համար՝ նրանց բարիք անելով, և կհետևի, որ Իր գործն ավարտին հասցվի նրանց կյանքերում՝ Իր ամբողջ սրտով և անձով[252]: «Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հռոմ. 8.31): Փրկությունը չի ձախողվի, քանի որ դրա նպատակն է ապացուցել կամ հայտնել ոչ թե մեր հավատարմությունը և ուժը, այլ՝ Աստծո՛ւնը:

Չորրորդը՝ մենք պետք է հասկանանք, որ հարատևության վարդապետությունը շատ սխալ է մեկնաբանվել և ոչ ճշգրիտ է բացատրվել նրանց կողմից, ովքեր, իրենց պնդմամբ, հարում են դրան: Ովքեր հավատում են, որ ճշմարիտ հավատացյալը կարող է նահանջել, այդպես են կարծում այն մարդկանց պատճառով, որոնք, իրենց պնդմամբ, հարում են սրբերի հարատևման վարդապետությանը, սակայն դրա անվան ներքո ամեն տեսակի սխալմունք են սովորեցնում: Սրբերի հարատևման պատմական վարդապետությունը միանշանակ հաստատում է Աստծո զավակի հավիտենական ապահովությունը: Այնուամենայնիվ, այն մեղանչելու թույլտվություն չէ, և ո՛չ էլ ենթադրում է, որ մարմնավոր և անաստված մարդիկ փրկվելու են: Փոխարենը, անշեղորեն հարում է աստվածաշնչյան ճշմարտությանը այն մասին, որ կփրկվեն միայն նրանք, ովքեր մինչև վերջ կդիմանան, և որ առանց սրբացման, որը տանում է սրբության, ոչ ոք չի տեսնի Տիրոջը[253]:

Ժամանակակից ավետարանական շարժումը կրել է «մեկ անգամ փրկված՝ ընդմիշտ փրկված» ուսմունքի վնասակար ազդեցությունը, որը ենթադրում է, որ հնարավոր է փրկություն՝ առանց սրբացման: Ի պաշտպանություն *«սոլա գրատիա»* (միայն շնորհքով) և *«սոլա ֆիդե»* (միայն հավատքով) վարդապետությունների, շատ ավետարանական հավատացյալներ եռանդուն կերպով պաշտպանում են այնպիսի մարդու փրկությունը, որը մի ժամանակ դավանում էր Քրիստոսին, բայց այժմ մերժում է Նրան, կամ՝ որը դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ, բայց շարունակում է մնալ մարմնավոր, աշխարհիկ և Աստծո հանդեպ անտարբեր: Նրանք պնդում են, որ վերափոխման նշաններ կամ սրբացման որոշակի աստիճան պահանջելը նշանակում է գործեր ավելացնել հավատքին և, ըստ էության, մերժել քրիստոնեական Ավետարանը:

Այս փաստարկի խնդիրը հետևյալն է. ակնհայտ է դառնում, որ այդ մարդիկ տեղյակ չեն հավատքի բնույթից, վերածնման զորությունից, նաև այն խոստումից, որ Աստված տվել է նախախնամության շարունակական աշխատանքի վերաբերյալ: Առաջինը՝ մենք պետք է գիտակ-

252 Երեմիա 32.38-41
253 Մատթեոս 24.13, Մարկոս 13.13, Եբրայեցիների 12.14

ցենք, որ ճշմարիտ հավատքը վկայվում է գործերով: Համաձայն Սուրբ գրքի, անկարելի է փրկարար հավատք ունենալ և չկրել դրա նկատելի ազդեցությունը սեփական վարքի վրա: Հակոբոս 2.17-20-ը հաստատում է սա. «Այսպես էլ հավատքը, եթե ինքնին գործ չունենա, մահացած է: Բայց ինչ-որ մեկը կասի. «Դու հավատք ունես, իսկ ես գործեր ունեմ»: Ցույց տուր ինձ քո հավատքը՝ առանց քո գործերի, իսկ ես ցույց կտամ քեզ իմ հավատքն իմ գործերից: Դու հավատում ես, որ մեկ Աստված կա: Ճիշտ ես անում: Նույնիսկ դևերն են հավատում և դողո՛ւմ են: Բայց ցանկանո՞ւմ ես իմանալ, ո՛վ անմիտ մարդ, որ հավատքն առանց գործերի մահացած է» (NKJV):

Նույն կերպով, այն մարդը, որը փրկություն է ստացել՝ Հիսուսին Տեր դավանելով, ապացուցում է իր դավանությունը իր կյանքի պտղով[254]: Սուրբ գիրքը խոստանում է, որ եթե մեր բերանով դավանենք, որ Հիսուսը Տերն է, և հավատանք մեր սրտերում, որ Աստված հարություն է տվել Նրան մեռելներից, կփրկվենք[255]: Այնուամենայնիվ, Քրիստոսը զգուշացնում է մեզ, որ Իր իշխանության ցանկացած դավանություն, որը չի ուղեկցվում Հոր կամքը կատարելով, լիովին անվավեր է և անկարող է փրկել[256]: Այս հետևությունները հիմնված չեն զուտ եզրակացությունների վրա, այլ՝ Սուրբ գրքի պարզ ուսուցման:

Երկրորդը՝ մենք պետք է գիտակցենք, որ փրկությունն ամբողջովին պարգև է և Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի արդյունքն է[257]: Դարձի պահին Հոգին, որը փրկարար հավատք է փոխանցում հավատացյալին, վերածնում է նաև նրա սիրտը՝ դարձնելով նրան նոր ստեղծված, որը կենդանի է Աստծո համար և ունի նոր ձգտումներ Աստծո և աստվածապաշտության հանդեպ[258]: Այս վերածնման աշխատանքի բնական արդյունքը փոխված սիրտն է, ինչի շնորհիվ փոփոխություններ են տեղի ունենում քրիստոնյայի մտքի և վարքի մեջ:

Երրորդը՝ մենք կրկին պետք է նշենք, որ փրկությունը տրվում է ուղեկցող խոստումով այն մասին, որ Աստծո նախախնամությունը շարունակաբար գործելու է մարդու կյանքում, ինչի արդյունքը յուրաքանչյուր հավատացյալի աստիճանական սրբացումն է[259]: Աստված չի փրկում, իսկ հետո թողնում: Նա չի որդեգրում, իսկ հետո անտեսում[260]: Նա անփույթ հայր չէ[261]: Նա անկարող վարպետ չէ, որը չի կարողանում

254 Մատթեոս 7.20, Ղուկաս 6.46
255 Հռոմեացիների 10.9
256 Մատթեոս 7.21
257 Հովհաննես 3.3,5, Եփեսացիների 2.8,9
258 Բ Կորնթացիների 5.17, Եփեսացիների 2.5
259 Հռոմեացիների 8.28-31, Փիլիպեցիների 1.6
260 Հռոմեացիների 8.14-16, Գաղատացիների 4.4-6
261 Եբրայեցիների 12.5-8

ավարտել իր սկսած գործը[262]: Մենք միշտ պետք է հիշենք, որ փրկությունը դիտարկվում է երեք ժամանակով, և Աստված դրանցից յուրաքանչյուրի Ձորագլուխն ու Կատարողն է[263]: Նա փրկեց մեզ մեղքի դատապարտությունից՝ արդարացման միջոցով, ներկայումս փրկում է մեզ մեղքի իշխանությունից՝ շարունակական սրբացման միջոցով, և կփրկի մեղքի հետևանքից՝ ապագա փառավորման միջոցով: Հավատացյալի համար սա ընդամենը հուսադրող հավանականություն չէ. սա անհերքելի փաստ է: Այս պատճառով է, որ Պողոս առաքյալը գրեց Հռոմեացիների 8.28-31-ում.

> «Բայց գիտենք, որ Աստծուն սիրողներին բոլոր բաները գործակից են լինում դեպի բարին՝ նրանց, որ նախասահմանելով կանչված են: Որովհետև նրանց, որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որ Նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ: Եվ որոնց առաջուց սահմանեց, նրանց կանչեց էլ, և որոնց կանչեց, նրանց արդարացրեց էլ, և որոնց արդարացրեց, նրանց փառավոր էլ արեց: Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ»:

Սրբերի հարատևման վարդապետությունը մեղանչելու թույլտվություն չէ, ինչպես նաև մարմնավոր և անաստված մարդկանց փրկության հավաստիացում տալու միջոց չէ: Այո՛, այս վարդապետությունը հաստատում է, որ Աստված պահպանում է նրանց, որոնց փրկում է, բայց նույնպես՝ որ Նա վերափոխում է նրանց, որոնց պահպանում է: Ճշմարիտ հավատացյալն ունի հավաստիացում փրկության մեջ, ոչ միայն այն բանի համար, որ որոշակի պահին անցյալում նա հավատքի դավանություն է արել, այլև շնորհիվ Աստծո ընթացիկ աշխատանքի նրա կյանքում, որը շարունակում է վերափոխել նրան Քրիստոսի պատկերին: Այն մարդը, ով դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ, սակայն չունի ոչ մի ապացույց հավատքի, վերածնման աստվածային աշխատանքի և աստվածային նախախնամության շարունակական աշխատանքի մասին, գրեթե չի կարող հավաստիացում ունենալ հավիտենական կյանքի մեջ: Պատճառն այն չէ, որ նա կորցրել է մի ժամանակ ունեցած փրկությունը. նա ցույց է տալիս, որ երբեք չի ունեցել այն փրկությունը, որին հավակնում է:

Առաջին Հովհաննես 2.19-ում առաքյալը պատմում է մի խումբ անհատների մասին, որոնք մի ժամանակ դավանում էին իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, բայց այժմ ցույց տվեցին իրենց կորսված վիճա-

262 Եփեսացիների 2.10, Փիլիպեցիների 1.6
263 Եբրայեցիների 12.2

կը՝ հեռանալով քրիստոնեության հիմնարար վարդապետություններից և եկեղեցու հետ շփումից: Այնուամենայնիվ, նա պարզորեն հայտնում է մեզ, որ նրանք չէին կորցրել իրենց փրկությունը. փոխարենը, նրանց «դուրս գնալն» ապացուցեց, որ նրանք երբեք ճշմարտապես փրկված չէին եղել: Նրա լեզուն շատ հստակ է. «Մեզնից դուրս գնացին, բայց *մեզնից չէին,* որովհետև եթե մեզնից լինեին, ապա մեզ հետ մնացած կլինեին, բայց որ հայտնի լինեն, թե նրանք ամենը մեզնից չեն» (շեղագիրն ավելացված է):

Այս խոսքը պատշաճ սուրբգրային հավասարակշռություն է ներկայացնում հավատացյալի հավաստիացման և նահանջելու հավանականության վերաբերյալ: Ինչո՞ւ այդ մարդիկ նահանջեցին: Հովհաննեսը հստակ նշում է, որ թեև նրանք նույնանում էին Քրիստոսի և Նրա եկեղեցու հետ, բայց երբեք ճշմարտապես *Քրիստոսինը* չէին եղել և *Նրա ժողովրդի հետ* չէին եղել: Նման շատերին եկեղեցու պատմության ընթացքում, նրանք կրում էին քրիստոնեության հանդերձանքը և սովորել էին դրա խոսելաձևը, բայց երբեք չէին վերապրել զորությունը[264]: Նրանք չէին վերադառնում իրենց նախկին վիճակին, այլ ցույց էին տալիս իրենց իրական վիճակը, որում գտնվում էին ամբողջ ընթացքում: Այն շունը, որը վերադառնում է իր փսխածին, ցույց է տալիս, որ նա երբեք այլ բան չի եղել՝ շուն լինելուց բացի, թեև նա կարող էր այլ կերպ ներկայանալ: Այն խոզը, որը վերադառնում է ցեխի մեջ թավալվելուն, ցույց է տալիս, որ այն մաքուր վիճակների մեջ, որ ինքը եղել է, միայն մակերեսային է եղել: Թեև նա ակնհայտորեն մաքուր էր դրսից, նա երբեք չէր ունեցել այլ էություն՝ խոզի էությունից բացի[265]: Նա, ով դավանում է Քրիստոսին և հաղորդակցվում է Նրա ժողովրդի հետ, իսկ հետո ընդմիշտ հեռանում է երկուսից էլ, չի վերադառնում իր նախկին վիճակին, այլ պարզապես հեռացնում է ոչխարի հանդերձը և ցույց է տալիս իր ճշմարիտ բնությունը, որն այդպես էլ չի վերափոխվել:

ԱՆՁՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

Ճշմարիտ հավատացյալները չեն հեռանում հավատքից: Այնուամենայնիվ, ովքեր դավանում են Քրիստոսին և նույնիսկ գտնվում են եկեղեցում, ճշմարիտ հավատացյալներ չեն: Նրանք, ի վերջո, հեռանում են աստվածաշնչյան եկեղեցուց և ցույց են տալիս իրենց իրական վիճակը: Այնուամենայնիվ, այս հարցում Ավետարանական եկեղեցին ամենից ավելի է ձախողել իր համայնքի անդամներին: Երբ Աստծո Խոսքը չի մեկնվում այնպես, որ ազդեցություն թողնի մարդու խղճի վրա, և երբ

264 Բ Տիմոթեոս 3.5
265 Բ Պետրոս 2.22

եկեղեցու գործունեությունը կազմակերպվում է այս աշխարհի մարմնավոր ցանկությունները գոհացնելու համար, դարձի չեկած մարդիկ հեռանալու հարկադրանք չեն զգում և կարող են հարմարավետ մնալ եկեղեցում, թեև նրանք շարունակում են գնալ դժոխքի ճանապարհով: Ահա թե որքան տխուր է, այսպես կոչված, Ավետարանական եկեղեցու վիճակը: Այն պատճառով, որ բազում ճիշտ հասկացություններ սխալ են մեկնաբանվում և կիրառվում, օրինակ՝ սերը, ընդունելությունը և մարդկանց չվնասելը, դարձի չեկած մարդիկ հաստատվում են մեր համայնքներում: Եվ ամբողջ այդ ընթացքում մոլորված մարգարեն կանչում է ««Խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն», երբ խաղաղություն չկա» (Երեմ. 6.14, 8.11, NKJV):

Եթե այս իրավիճակը երբևէ փոխվի, պետք է սկսվի Աստծո ժողովրդի հովիվների արթնությունից: Նրանք պետք է քարոզեն իրենց ունկնդիրների խղճին Աստծո Խոսքի ամբողջական խորհուրդը: Նրանք պետք է հայտնի դարձնեն Ավետարանը՝ իր վրդովեցուցիչ փառքով, ներկայացնեն Աստծո սրբությունը, բացահայտեն մարդու արատավորությունը, մատնացույց անեն Գողգոթայի խաչը և պատվիրեն մարդկանց ամենուր ապաշխարել և հավատալ Ավետարանին: Նրանք պետք է հորդորեն Աստծո ժողովրդին ապրել սրբության մեջ, արհամարհել այս աշխարհը, չկենտրոնանալ սեփական անձի վրա, անձնազոհ ծառայել և կյանքի մասին հավիտենական պատկերացում ունենալ: Միայն այդ դեպքում մեր միջև եղող դարձի չեկած մարդիկ կարթնանան քնից: Այո՛, ոմանք կարթնանան՝ լցված ատելությամբ քարոզչի և նրա ուղերձի հանդեպ, բայց մյուսները կարթնանան՝ զղջալով մեղքի համար և հավատալով հավիտենական կյանքին:

Հովիվներին դիմելուց հետո, մենք պետք է խոսք ուղղենք նրանց, ովքեր նստում են այդ մարդկանց առջև յուրաքանչյուր Տիրոջ օրը: Ինչպե՞ս կարծագանքեինք, եթե մեր հովիվն ապաշխարեր իր ծառայությունն անհավատարմորեն կատարելու համար և սկսեր հավատարմորեն և Սուրբ Հոգու զորությամբ քարոզել Աստծո Խոսքը: Արդյո՞ք մենք կուրախանայինք, թե՞ կպայքարեինք նրա դեմ, մինչև մեր հաղթանակը և նրան հեռացնելը: Թե՞, չգտնելով անաստված մեծամասնություն, որը կկանգներ մեր կողքին, մենք կարծագանքեինք այն մարդկանց պես, որոնց մասին գրում է Հովհաննեսը: Արդյո՞ք մենք կհեռանայինք բարեկարգող հովվից և համայնքից և դրանով կապացուցեինք, որ երբեք ճշմարտապես եկեղեցու մասը չենք եղել և երբեք ճշմարտապես չենք պատկանել Քրիստոսին:

Սրանք խիստ խոսքեր են, որոնց շուրջ շատերն են խորհում, բայց որոնց մասին քչերն են խոսում: Ինչպե՞ս կվարվեինք, եթե եկեղեցին դա-

դարեր կենտրոնանալ մեր և մեր անմիջական կարիքների վրա, և կենտրոնանար Աստծո և Քրիստոսի փառքի վրա: Ինչպե՞ս մենք կարծագանքեինք մեր խղճին ուղղված աստվածաշնչյան քարոզմանը: Ինչպիսի՞ն կլիներ մեր արձագանքը, եթե ժամանցային մթնոլորտը գահընկեց արվեր և պարզ, սրտանց երկրպագությունն իր տեղը գրավեր: Ինչպե՞ս կքվեարկեինք, եթե ծրագրերը փոխարինվեին աղոթքի հավաքույթներով, ինչպես նաև Աստծո Խոսքի և աղոթքի շուրջ անցկացվող ընտանեկան ժամանակով: Ինչպե՞ս մենք կվարվեինք, եթե բոլորը որոշեին, որ այս ժամանակին և աշխարհին համապատասխան լինելն այնքան կարևոր չէ, որքան Աստծուն հաճեցնելը: Եթե աստվածաշնչյան և կենսառատ քրիստոնեությունը վերածնվեր մեր համայնքում, ո՞ւր կգնայինք: Ի՞նչ կանեինք: Հովհաննես առաքյալն այս հատվածում հայտնում է, որ մեր արձագանքը կլիներ մեր դավանանքի իսկության կարևոր ցուցիչը:

ԳԼՈՒԽ ՏԱՍԸ

Դավանել Քրիստոսին

«Ո՞վ է ստախոսը, եթե ոչ նա, որ ուրանում է, թե Հիսուսը չէ Քրիստոսը: Նա Նեռն է, որ ուրանում Հորը և Որդուն: Ամեն, ով որ Որդուն ուրանում է, Հորն էլ չունի. Նա, որ Որդուն դավանում է, Հորն էլ ունի: Արդ այն, որ դուք լսեցիք սկզբից, թող բնակվի ձեզանում: Եթե բնակվի ձեզանում այն, որ սկզբից լսեցիք, դուք էլ կբնակվեք Որդու և Հոր մեջ»:

– Ա Հովհաննես 2.22-24

«Սիրելինե՛ր, ամեն հոգու մի՛ հավատացեք, այլ փորձե՛ք հոգիները, թե արդյո՞ք Աստծուց են, որովհետև շատ սուտ մարգարեներ են դուրս եկել աշխարհ: Սրանով ճանաչեք Աստծո Հոգին. ամեն հոգի, որ խոստովանում է Հիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, Աստծուց է: Եվ ամեն հոգի, որ չի խոստովանում Հիսուս Քրիստոսին՝ մարմնով եկած, Աստծուց չէ: Եվ նա Նեռի հոգին է, որ լսեցիք, թե գալիս է, և հիմա արդեն աշխարհում է»:

– Ա Հովհաննես 4.1-3

«Սրանով գիտենք, որ մենք Նրանում ենք բնակված, և Նա՝ մեզանում, որ Իր Հոգուց տվեց մեզ: Եվ մենք տեսանք և վկայում ենք, որ Հայրն Իր Որդուն ուղարկեց աշխարհի Փրկիչ լինելու: Ով որ դավանի, թե Հիսուսն է Աստծո Որդին, Աստված նրանում է բնակվում, և նա՝ Աստծո մեջ»:

– Ա Հովհաննես 4.13-15

Հովհաննեսի Առաջին նամակի նպատակն է օգնել հավատացյալներին աստվածաշնչյան հավաստիացում ստանալ իրենց հավիտենական վիճակի մասին, նաև այն մասին, որ իրենք Աստծո հետ հաղորդություն ունեն՝ Քրիստոսի միջոցով: Այնուամենայնիվ, այս նամակում նույնպես

տեսնում ենք, որ սուտ ուսուցիչներ էին մուտք գործել եկեղեցական համայնքներ և կասկածներ էին առաջացնում քրիստոնեության հիմնարար ճշմարտությունների վերաբերյալ: Այս գլխի սկզբում գտնվող հատվածներից կարող ենք որոշել այն սխալմունքներից մի քանիսը, որոնք քարոզում էին այդ սուտ ուսուցիչները.

Նրանք ժխտում էին, որ Հիսուսը Քրիստոսն է:

Նրանք ժխտում էին, որ Հիսուս Քրիստոսը եկել է մարմնով:

Նրանք ժխտում էին, որ Հիսուսն Աստծո Որդին է:

Ելնելով այս երեք ժխտումներից և այս նամակում գտնվող այլ հղումներից՝ այնպիսի տպավորություն է, որ այս սուտ ուսուցիչները գնոստիկյաններ էին, կամ, առնվազն, նրանց ուսմունքները ներկայացնում էին այն կրոնի վաղ ժամանակաշրջանը, որը հետագայում հայտնի դարձավ «Գնոստիցիզմ» անվանումով: Այն հունարեն *«գնոսիս»* բառից է, որը նշանակում է «գիտելիք»: Թեև գիտելիքը քրիստոնեության էական կողմերից է, գնոստիկյանները պնդում էին, որ տիրապետում էին հատուկ գիտելիքի, որը ստացված էր ոչ սուրբգրային աղբյուրներից և հակառակ էր Սուրբ գրքին: Նրանց կենտրոնական ուսուցումն այն էր, որ հոգին բարի է, իսկ նյութը՝ չար: Այս ոչ աստվածաշնչյան դուալիզմից բխում են մի քանի սխալմունքներ, որոնք դարձրին գնոստիցիզմն առաջին եկեղեցուն ընդդիմացող ամենից վտանգավոր հերձվածություններից մեկը[266]: Առաջինը՝ ըստ գնոստիկյանների, մարդու մարմինը նյութական է և, այդ պատճառով, չար է: Ի հակադրություն, Աստված միայն հոգի է և այդ պատճառով բարի է: Երկրորդը՝ փրկվելու համար մարդը պետք է խուսափի իր մարմնի ազդեցությունից՝ ոչ թե Քրիստոսի հանդեպ հավատքով, այլ հատուկ հայտնությամբ, որն ունեին միայն գնոստիկյանները: Երրորդը՝ քանի որ մարմինը չար է, որոշ գնոստիկյաններ պնդում էին, որ այն պետք է զրկանքներ կրի՝ ճգնավորական կենսաոճի միջոցով, իսկ մյուսները համարում էին, որ մարմնի հետ տեղի ունեցածն անհետևանք է, այսինքն՝ մարդը կարող է անզուսպ տրվել ցանկացած տեսակի անբարոյության:

Հովհաննեսն անդրադառնում էր այս հերձվածությունների մեծ մասին իր Առաջին նամակում, նման Պողոս առաքյալին՝ Կողոսացիների թղթում: Թեև յուրաքանչյուրը մանրամասնորեն դիտարկելը մեր ուսումնասիրության շրջանակից դուրս է, այդ հերձվածություններից երկուսը

266 Դուալիզմը որևէ երևույթի հասկացութային բաժանում է երկու հակասական կամ հակադիր կողմերի, կամ նման կերպով բաժանված լինելու վիճակ է: Փիլիսոփայության մեջ դուալիզմը (երկվությունը) վերաբերում է ցանկացած մտածական համակարգի, որը դիտարկում է իրականությունը որպես երկու անկախ սկզբունքներ՝ նյութական և աննյութական, կամ՝ նյութ և հոգի:

հատկապես հետաքրքիր են մեր ուսումնասիրության համար: Դրանցից յուրաքանչյուրը վերաբերում է Հիսուս Քրիստոսի բնությանը և Անձին, նաև այն բանին, թե ինչպես մենք պետք է հավատանք Նրան՝ փրկվելու համար:

Առաջին գնոստիկյան հերձվածությունը կոչվում էր «Դոկետիզմ»: Այս անվանումը հունարեն *«դոկե՛ո»* բառից է, որը նշանակում է «թվալ»: Քանի որ գնոստիկյանները հավատում էին, որ նյութական մարմինն ի սկզբանե չար է, նրանք պետք է մերժեին Քրիստոսի մարմնավորումը և սովորեցնեին, որ աստվածային Քրիստոսի մարմինը միայն «թվացյալ» էր: Երկրորդ հերձվածությունը նման է դրան: Այն կոչվում էր «Կերինթոսականություն»՝ իր ամենից ակնառու քարոզիչ Կերինթոսի անունով: Նա սովորեցնում էր, որ աստվածային Քրիստոսի հոգին իջել էր երկնքից Նազովրեցի Հիսուս մարդու վրա՝ նրա մկրտության ժամանակ, և որ Քրիստոսը թողեց Հիսուսին և երկինք համբարձվեց, մինչև նրա մահը Գողգոթայում: Որպես ամփոփում, այդ գնոստիկյան ուսմունքները ժխտում էին Աստծո հավիտենական Որդու մարմնավորումը և համարում էին, որ Հիսուս մարդը և աստվածային Քրիստոսը երկու տարբեր էակներ էին: Այսպիսով, դրանք ժխտում էին, որ Հիսուսը Քրիստոսն էր և Աստծո Որդին էր:

Մեր սովորածի կիրառությունը մեր օրերում պարզապես հետևյալն է. մարդը քրիստոնյա չէ, եթե չի հավատում և դավանում, որ Նազովրեցի Հիսուսը Աստծո հավիտենական Որդին է, որ Նա թողեց Իր երկնային փառքը և հղացվեց Սուրբ Հոգուց կույսի որովայնում, որ Նա ծնվեց Բեթլեհեմում՝ որպես մարմնավորված Աստված, և Նա լիովին Աստված է և լիովին մարդ է, որ Նա այն Քրիստոսն է, Ում գալուստը կանխասել էին Օրենքը և Մարգարեները, և որ Նա այս աշխարհի Փրկիչն է: Ցանկացած շեղում Հիսուս Քրիստոսի Անձի վերաբերյալ այս էապես կարևոր ճշմարտություններից՝ որակազրկում է ցանկացած, այսպես կոչված, քրիստոնեական դավանանք չնայած դավանողի ակնհայտ անկեղծությանը և բարի գործերի հանդեպ ունեցած նախանձավորությանը:

Ի՞ՆՉ ԵՔ ՄՏԱԾՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Ջոն Նյուտոնը գրեց «Ի՞նչ ես մտածում Քրիստոսի մասին» օրհներգը, երբ հովիվ էր Անգլիայի Օլնի քաղաքում, և այն հատկապես համահունչ է այս գլխի սկզբում մեջբերված հատվածներին՝ Ա Հովհաննես 4-րդ գլխից.

> «Ի՞նչ ես մտածում Քրիստոսի մասին՝ սա ստուգում է,
> Որ փորձում է քո վիճակն ու հայացքները.

Դու չես կարող արդար ու խաղաղ լինել,
Թե ճիշտ չեն Նրա մասին քո մտքերը:
Ինչպիսին, որ Հիսուսն է՝ քո կարծիքով,
Որքանով Նա սիրելի է, կամ՝ ոչ,
Այնպես էլ Աստված է միտված քո հանդեպ,
Եվ գութ կամ բարկություն է բաժինը քո:

Ոմանք ստեղծված են համարում Նրան՝
Մարդ, կամ ամենաշատը՝ հրեշտակ,
Բայց նրանք չունեն զգացումներ՝ ինձ պես,
Ո՛չ էլ գիտեն, որ թշվառ են ու կորած:
Այնքա՛ն հանցավոր և անօգնական եմ ես,
Չեմ խիզախի վստահել Նրա արյանը,
Ո՛չ էլ ապավինել Նրա պաշտպանությանը,
Թե վստահ չլինեմ, որ Աստված է Նա[267]»:

Մենք կսկսենք մի պնդումով, որը կարող է ինչ-որ առումով ծայրահեղ կամ, նույնիսկ, նորարարական համարվել Ավետարանական շարժման մեջ գտնվող շատ մարդկանց համար. *քրիստոնեությունը վերաբերում է Հիսուս Քրիստոսի Անձին և աշխատանքին:* Եթե Ավետարանական եկեղեցին ավելի առողջ վիճակում լիներ կամ գոնե ավելի շատ կենտրոնացած լիներ Սուրբ գրքի վրա, այս պնդումն անտեղի կլիներ: Այնուամենայնիվ, այսօր այն անհրաժեշտ է, և եկեղեցի հաճախող յուրաքանչյուր մարդ, որը բարեկարգում և արթնություն է ցանկանում, պետք է մշտապես պահի այն իր ուշադրության կենտրոնում: Այն պետք է լինի մեր ամենաթանկ և ամենից հաճախ կրկնվող սկզբունքը. քրիստոնեությունը՝ իր ամենից ճշմարիտ և սկզբնական ձևով, կրոն է, որը հիմնված է և կենտրոնացած է Քրիստոսի վրա: «Որովհետև ոչ ոք ուրիշ հիմք չի կարող դնել, քան թե որ դրված է, որ է Հիսուս Քրիստոսը» (Ա Կորնթ. 3.11):

Այսօր եկեղեցին պետք է ուշադրություն դարձնի Զոն Նյուտոնի այս բառերին. դրանք անհրաժեշտ են՝ մեր ներկա ախտը բուժելու համար: Նյուտոնը ճիշտ էր ամեն առումով, երբ խոսում էր Քրիստոսի գերազանցության մասին: Նա Աստծո գերագույն Հայտնությունն է և Հաղթողը Նրա մեծագույն գործի մեջ: Այսպիսով, մեր կարծիքը Քրիստոսի մասին այն ստուգումն է, որով ապացուցվում է մեր քրիստոնեական դավանանքի իսկությունը: Մեր դավանանքը, նույնացումը և գործերն անհիմաստ են և անպետք են, եթե, նախևառաջ, մենք չունենք ճիշտ կարծիք Քրիստոսի մասին: Իրականում, Աստծո վերաբերմունքը մեր հանդեպ լիովին որոշ-

267 Թոդ Մյուրի. «Ի՞նչ ես մտածում Քրիստոսի մասին»՝ «*Ավելի, քան զարմանալին. Զոն Նյուտոնի մոռացված հիմները»* լսասկավառակի վրա: Թոդ Մյուրին ներկայացրել է մի շարք ընտրված երգեր «*Օլնիի երգարանից»,* որը հրատարակվել էր Զոն Նյուտոնի կողմից 1779 թվականին:

վում է Իր Որդու հանդեպ մեր վերաբերմունքով:

Սուրբ գրքում Քրիստոսի Անձի հատկանիշներից երկուսն այնքան պարզ են ներկայացվում, որ դրանք ժխտելը նշանակում է ժխտել Սուրբ գիրքը և հակաքրիստոս դառնալ: Այս երկու հատկանիշներն ավելի տարբեր են, քան ցերեկն ու գիշերը. դրանք բևեռային հակադրություններ են, որոնց միջև չկա ոչ մի կապող օղակ՝ Քրիստոսի Անձից բացի: Միայն Նրանում է, որ աստվածությունը և մարդկությունը գոյակցում են և միահյուսված են՝ առանց այս երկու բնությունների միախառնման և առանց դրանցից որևէ մեկի նսեմացման:

Փրկիչը պետք է մարդ լիներ, որովհետև մարդն էր, որ զանցել էր օրենքը, և նա էր, որ պետք է մահանար: Եթե ամբողջ աշխարհում ծնված բոլոր մաքուր կենդանիները զոհաբերվեին՝ իրենց անաղարտ վիճակում, բոլորի արյունը միասին չէր կարող հեռացնել մեր բիծը. «Որովհետև հնարավոր չէ, որ ցլերի և այծերի արյունը կարողանա հեռացնել մեղքերը» (Եբր. 10.4, NKJV): Եթե երկնքի բոլոր հրեշտակները ժողովվեին և հոժարաբար ու ամբողջովին զոհեին իրենց կյանքերը մեր փրկության համար, դա նույնպես արդյունք չէր տա, որովհետև Փրկիչը պետք է մեր ցեղից գար. Նա պետք է լիներ մարմին՝ մեր մարմնից, և ոսկոր՝ մեր ոսկրից: Մեզ Փրկող Ազգականի դերում հանդես գալու համար Քրիստոսը պետք է մեր մտերիմ ազգականը լիներ[268]:

Այնպես որ, մեր Փրկիչը լիովին մարդ էր, բայց՝ ոչ միայն մարդ: Անհրաժեշտ էր, որ Նա նաև Աստված լիներ՝ այդ բառի բոլոր իմաստներով, յուրաքանչյուր տեսանկյունից և ամեն առումով՝ առանց բացառության: Այս գրքում չենք կարող ներկայացնել այս անհրաժեշտության բոլոր պատճառները, բայց կարող ենք դիտարկել առնվազն երեքը: Առաջինը՝ միայն Աստված է Փրկիչը, և Նա չի կիսվում այս տիտղոսով ոչ ոքի հետ: Աստված ցույց տվեց, որ փրկությունը աստվածության բացառիկ իրավունքն է, երբ հայտարարեց Եսայի մարգարեի միջոցով. «Ես՝ Ես եմ Տերը, և Ինձնից ջոկ Փրկիչ չկա» (Եսայի 43.11): Այնպես որ, եթե Քրիստոսը մեր Փրկիչն է, Նա պետք է Աստված լինի: Եթե Նա Աստված չէ, Նա մեր Փրկիչը չէ, և մենք դեռ կորսված ենք մեր մեղքերի մեջ և բոլոր մարդկանցից ավելի ողորմելի ենք[269]:

Երկրորդը՝ փրկության աշխատանքի մեծության պատճառով, Աստվածությունը պետք է կատարեր այն: Արարչագործությունը ոչնչից[270] այնպիսի հանճար և զորություն էր պահանջում, որը մեծապես գերա-

268 Ղևտացիների 25.25, Հռութ 2.1,20

269 Ա Կորնթացիների 15.19

270 Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Աստված ստեղծեց աշխարհը ոչնչից (Եբր. 11.3): Նա նյութ չվերցրեց մեկ այլ աղբյուրից՝ այս աշխարհը կազմելու համար: Փոխարենը, Նա խոսեց՝ գոյության կոչելով նյութը:

զանցում է մեր ամենահամարձակ երևակայությունը, սակայն դա փոքր բան է՝ մեր փրկության համեմատ: Աստծուց չպահանջվեց որևէ ջանք կամ զոհ՝ աշխարհը ոչնչից ստեղծելու համար: Նա ոչ մի ուժ չծախսեց, որը վերականգնում էր պահանջում, և չզգաց ոչ մի տկարություն, երբ աշխարհն ավարտված էր: Նրա ամբողջ աշխատանքն առանց որևէ ջանքի էր: Նա հանգստացավ յոթերորդ օրը, ոչ թե որ վերականգներ Իր ծախսած ուժերը, այլ՝ որ վայելեր այն, ինչ ձեռք էր բերվել՝ նոր, բարի և գեղեցիկ աշխարհ, որը ստեղծված էր ոչնչից՝ միայն խոսքով: Այնուամենայնիվ, խաչի վրա Աստվածությունը կատարեց մեծագույն զոհը, և այդ փայտի վրա մարմին հագած Արարիչը և՛ սպառվեց, և՛ թուլացավ: Աստվածությունը լարեց Իր ուժերը, և Երկինքը սնանկացավ՝ այդ գինը վճարելու համար: Ո՞վ կարող էր նման աշխատանք կատարել, եթե ոչ՝ Աստված: Ո՞վ կարող էր նման փրկագին վճարել, եթե ոչ՝ Աստված: Մեր օրինազանցությունն այնպիսի հատուցում էր պահանջում, որն ավելին էր անսահմանափակ թվով աշխարհներից և դրանց պարունակությունից: Նույնիսկ սերովբեների լեգեոնի մահը չէր կարող բարելավել մեր դրությունը աստվածային արդարադատության նշածողի առջև: Անհրաժեշտ էր անսահման արժեք ունեցող անձնավորության զոհ՝ մեզ անեծքից և օրենքի պատժից փրկագնելու համար: Եթե Քրիստոսը լիովին Աստված չլիներ, Նա չէր կարողանա նման գին վճարել:

Երրորդը՝ մեր բացարձակ արատավորության պատճառով, մեր Փրկիչը պետք է Աստված լինի: Սա ապացույց է, որ մեզ պետք է մարդկային բուժումից կամ բարոյական ուղեցույցից ավելին: Մեզ Աստվա՛ծ է պետք: Յուրաքանչյուրը, ով մտածում է, որ կարող է փրկություն ստանալ որևէ անձի միջոցով, որն Աստծուց ցածր է, չի գիտակցում իր իսկ արատավորության և օրինազանցության խորությունը: Նա կույր է իր մեղքի խավար իրականության հանդեպ և խուլ է իր խղճի մնացորդի հանդեպ: Նա պետք է արթնանա՝ գիտակցելով այն չարությունը, որը բուժելը վեր է բոլորի կարողությունից՝ բացի Աստծուց, Ում համար անհնարին ոչինչ չկա[271]:

Եթե անկեղծորեն գնահատեինք մեզ՝ մեր մտքերը, ծածուկ գործերը և գաղտնի ասված խոսքերը, մենք պատշաճ կերպով կխոնարհվեինք և կամաչեինք: Եթե միայն գիտակցեինք, որ մեր հանցանքները թույլ չեն տա մեզ արդարանալ նույնիսկ բարյացակամ մարդկային ատյանի կամ մտերիմ ընկերներից բաղկացած երդվյալ ատենակալների առջև, մենք կհասկանայինք Ավետարանի երկյուղը: Եթե միայն դադարեինք անտեսել կամ փոփոխել պատմությունը և ուշադրություն դարձնեինք մեր հայրերի մեղքերին, մենք կբացահայտեինք, որ կրկնում ենք նրանց

271 Երեմիա 32.27, Ղուկաս 1.37

մեղքերը՝ այլակերպված և ավելի հնարամիտ ձևերով: Եթե միայն թողնեինք մեր նողկալի ինքնահավանությունը և մեկս մյուսի գրեթե երբեք չիրագործված ներուժի շարունակ մեծարումը, մենք կհասկանայինք, որ մեր լավատեսությունը կառուցված է սարդոստայնի պես անհաստատ հիմքի վրա: Եթե միայն ընդունեինք, որ մահն ու գերեզմանը սպասում են բոլորիս, մենք կիմանայինք, որ մեզ անհրաժեշտ է ավելին, քան որևէ իմաստունի բարոյական ուսուցումը՝ մեր անձերը փրկելու և մեր աշխարհը շտկելու համար: Մեզ պետք է, որ այն Աստված, Ում դեմ մեղանչել ենք, վճարի մեր փրկության գինը: Այն Աստված, Ով ստեղծել է մեզ, պետք է վերստեղծի մեզ:

Երանի՜ ամբողջ աշխարհը դիտարկեր իրեն Սուրբ գրքի լույսի ներքո և ընդուներ այն մարդաբանությունը, որն ուսուցանում էին Զոն Նյուտոնը և Պողոս առաքյալը, որոնք բարոյական առումով թշվառականներ էին համարում իրենց՝ առանց Աստծո փրկարար և վերափոխող շնորհքի[272]: Այդ ժամանակ մարդիկ կհասկանային, որ եթե Քրիստոսն Աստված չլիներ՝ այս բառի լիարժեք իմաստով, Նա չէր ունենա բավարար արժանիք և զորություն՝ իրենց փրկելու համար:

Ո՞Վ ԵՔ ԱՍՈՒՄ, ՈՐ ՆԱ ԼԻՆԻ

Հիսուսի ծառայության շրջադարձային պահերից մեկի ժամանակ Նա հարցրեց Իր աշակերտներին. «Մարդիկ Ինձ համար ո՞վ են ասում, որ լինեմ»: Ի պատասխան այս հարցին, Պետրոս առաքյալը հայտարարեց. «Դո՛ւ ես Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին» (Մատթ. 16.13-17): Այստեղից հասկանում ենք, որ թեև խիստ կարևոր է, որ մենք ճշտորեն հասկանանք, թե ինչ արեց Հիսուսը, և հավատանք դրան, մենք նույնպես պետք է ճշտորեն հասկանանք, թե ով էր, և ով է Նա, և հավատանք դրան: Այս ճշմարտությունը՝ Ա Հովհաննես 4-րդ գլխից քաղած նյութի հետ մեկտեղ, խրատում է, որ եթե մենք հավատում ենք, որ Հիսուս Մարդը թեկուզ ինչ-որ չափով ցածր է, քան Քրիստոսը, և մարմնավորված Աստված, մենք քրիստոնյա չենք:

Ճշմարիտ եկեղեցում կան տարբեր տեսակի հավատացյալներ՝ հասուն և ոչ հասուն, աստվածաբաններ և առևտրականներ, ուսուցիչներ և ուսանողներ: Ակնհայտ է, որ ոմանք ավելի կրթված են Քրիստոսի Անձին վերաբերող վեհ ճշմարտությունների մեջ, քան մյուսները, և ավելի լիարժեք են մեկնում դրանք: Այնուամենայնիվ, նույնիսկ ամենից անփորձ-

272 Զոն Նյուտոնը հայտնեց իր կարծիքն իր մասին հետևյալ հանրահայտ խոսքերով. «Զարմանալի՜ շնորհք: Որքա՜ն քաղցր է հնչում այն, ինչը փրկեց ինձ պես թշվառականին»: Պողոս առաքյալը պատկերեց իր ինքնանկարը Հռոմեացիների 7.24-ում. «Ես ի՜նչ խեղճ մարդ եմ: Ո՞վ կապրեցնի ինձ այս մահի մարմնից»:

ներն Աստծո ժողովրդի մեջ հարում են ճշմարտությանը այն մասին, որ Հիսուսը *եզակի անձնավորություն* է պատմության մեջ՝ հավիտենական Աստծո Որդին, Ով մարմին դարձավ և բնակվեց մեր մեջ[273], քանի որ Նոր ուխտի խոստումներից մեկը և վերստին ծնունդի արդյունքներից մեկն այն է, որ Աստծո ժողովուրդը՝ փոքրից մեծ, Աստծուց ուսված կլինեն և կճանաչեն Նրան[274]:

Յուրաքանչյուր կրոն՝ քրիստոնեությունից դուրս, և յուրաքանչյուր աղանդ, որը հավակնում է նույնանալ քրիստոնեության հետ, առանձնահատուկ է այն բանով, որ ժխտում է որևէ ճշմարտություն Քրիստոսի Անձի վերաբերյալ: Այնուամենայնիվ, Աստված հոգ կտանի, որ նման հերձվածությունները չտարածվեն Իր ժողովրդի մեջ: Նույնիսկ այն հավատացյալները, որոնք գտնվում են աշխարհի ամենից հեռավոր վայրերում, ունեն պարզունակ, բայց վստահ համոզմունք այն բանում, որ Քրիստոսը և՛ Աստված է, և՛ մարդ: Միգուցե նրանք չկարողանան բացատրել, թե ինչպես այդ երկու բռնությունները կարող են գոյակցել մեկ անձի մեջ՝ առանց միախառնվելու կամ դրանցից որևէ մեկը չնսեմացնելու, նրանք գիտեն, որ Հիսուսը և՛ Աստված է, և՛ մարդ՝ այս բառերի լիարժեք իմաստով, և նրանք հրաժարվում են հաղորդակցվել նրանց հետ, ովքեր այլ բան են սովորեցնում:

Այս ուսումնասիրությունն ամփոփելու համար, պետք է ուշադրություն դարձնենք մեզ և համապատասխանաբար կիրառենք այն, ինչ սովորեցինք: Ի՞նչ եք դուք մտածում Քրիստոսի մասին, և ի՞նչ եք ասում Նրա մասին: Դուք կարող եք հավաստիացում ունենալ փրկության մեջ այն չափով միայն, որով ակնածանք ունեք Նրա հանդեպ, և որով ընդունում եք Նրա աստվածությունը և մարդեղությունը:

Մենք չենք կարող չափազանց բարձր մտածել Քրիստոսի մասին կամ ավելի շատ գովաբանել Նրան, քան պարտավոր ենք: Այնուամենայնիվ, ովքեր այսօր դավանում են Քրիստոսին և նույնացնում են իրենց քրիստոնյաների հետ, մատնվում են Նրա մասին իրենց թյուր կարծիքով: Թեև նրանք կարող են պատշաճ կերպով դավանել Նրա և՛ աստվածությունը, և՛ մարդեղությունը, նրանք չափազանց անփույթ վերաբերմունք ունեն Նրա հանդեպ և անհարգալից են արտահայտվում Նրա մասին իրենց խոսքում: Մենք պետք է զգույշ լինենք, որ Քրիստոսը սովորական չդառնա մեզ համար: Մենք պետք է մտահոգված լինենք մեր անձի մասին, եթե Նա երկյուղածություն և ակնածանք չի ներշնչում մեզ:

Գրեթե չկա ապացույց, որ մարդն Աստծո մասին գիտելիք է ստացել, եթե նա մտածում է Քրիստոսի մասին Սուրբ գրքին հակառակ կերպով:

273 Հովհաննես 1.14, Եբրայեցիների 2.14
274 Հովհաննես 6.45, Երեմիա 31.34

Գրեթե չկա ապացույց, որ մարդը վերածնվել է Սուրբ Հոգու կողմից, եթե վեհ ճշմարտությունները Քրիստոսի մասին չեն ոգեշնչում նրան՝ դրդելով ավելի մեծ սիրո, երկյուղածության և գործնական նվիրման: Վերստին ծնունդը մշտապես առաջնորդում է ճիշտ պատկերացման Քրիստոսի մասին և դրան հաջորդող ձգտման Քրիստոսի հանդեպ. այս պնդումը վստահելի է և արժանի է անվերապահ ընդունելության:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿ

Սրբել սեփական անձը

«Տեսե՛ք, թե Հայրն ինչպիսի սեր շնորհեց մեզ, որ Աստծո որդիներ կոչվենք: Սրա համար աշխարհը չի ճանաչում մեզ, որ Նրան չճանաչեց: Սիրելինե՛ր, հիմա Աստծո որդիներ ենք, և տակավին հայտնված չէ, թե ինչ պիտի լինենք: Բայց գիտենք, թե երբ որ Նա հայտնվի, Նրա նման կլինենք, որովհետև կտեսնենք Նրան, ինչպես որ է: Եվ ամեն, ով որ այս հույսն ունի իրենում, սրբում է իր անձը, ինչպես որ Նա սուրբ է»:

– Ա Հովհաննես 3.1-3

Առաջին Հովհաննես 3.1-3-ում Հովհաննեսն ուշադրություն է դարձնում բարոյական մաքրության մեծ կարևորությանը քրիստոնեական կյանքում: Նա զգուշորեն է ընտրում իր բառերը՝ ցույց տալու համար, որ սրբությունը ընդամենը տարբերակ չէ քրիստոնյայի համար, այլ դարձի մեծագույն ապացույցներից մեկն է: Մենք գիտենք, որ ճշմարտապես հուսացել ենք Քրիստոսին՝ փրկության համար, եթե մեր կյանքն առանձնանում է՝ ձգտելով անձնական սրբության, այսինքն՝ եթե մենք ձգտում ենք սրբել մեզ, ինչպես որ Նա է սուրբ:

Դիտարկելով այս հատվածը՝ պետք է մտապահենք, որ սուտ ուսուցիչները, որոնք եկեղեցի էին թափանցել, հավատում էին, որ նյութական մարմինը չար է և գրեթե անհետևանք է կրոնի հարցում: Այդ իսկ պատճառով, նրանք անձնատուր էին լինում իրենց մարմնական ցանկություններին և սովորեցնում էին մարդկանց վարվել նույն կերպով՝ առանց վերապահության: Նրանց կյանքն առանձնանում էր այս աշխարհի՝ մարմնի ցանկության, աչքի ցանկության և այս կյանքի ամբարտավանության հանդեպ սիրով (Ա Հովհ. 2.15,16): Նրանք Իրենց ենթադրյալ ազատությունը դարձրել էին առիթ մարմնավոր կյանքի համար և, թվում է, արհամարհում էին աստվածաշնչյան սրբացմանը ձգտող մարդ-

կանց[275]՝ համարելով նրանց անհաղորդ, անուսում և օրինապաշտությամբ կապված:

Չափազանցություն չէ ասելը, որ մենք գտնում ենք այս արհամարհանքի զուգահեռը ժամանակակից ավետարանական շարժման մեջ: Թեև մեզ չեն շրջապատում գնոստիկյանները, ընդդեմ որոնց Հովհաննեսը գրեց այս ուղերձը, մենք հեղեղված ենք աշխարհիկությամբ, և մեզնից շատերը, թվում է, անբարյացակամ վերաբերմունք ունեն ցանկացած ուսմունքի հանդեպ, որը սահմանափակում է մեր մարմնավոր բնությունը և առաջ է քաշում բարոյական մաքրության թեման: Շնորհքի անվան ներքո ոմանք անտեսում են, վերաիմաստավորում են կամ բացահայտ ժխտում են սրբության վերաբերյալ աստվածաշնչյան հանձնարարականները: Ովքեր ձգտում են ավելի մեծ սրբության կամ ավելի հստակ անձնական սրբության, հաճախ պիտակվում են որպես մոլեռանդ, օրինապաշտական, գերհոգևոր կամ ուրիշներին մատնացույց անող մարդիկ:

Ի հակադրություն այս հերձվածողական ուսմունքին, Հովհաննես առաքյալը մատնացույց է անում սրբությունը՝ որպես Հիսուս Քրիստոսի և ճշմարիտ քրիստոնյայի առանձնահատուկ հատկանիշներից մեկը: Համաձայն Հովհաննեսի, յուրաքանչյուրը, ով ճշմարտապես հուսացել է Քրիստոսին, «սրբում է իր անձը, ինչպես որ Նա սուրբ է» (Ա Հովհ. 3.3): Թեև մարդու անձնական սրբությունը երբեք ամբողջական չէ փառքի այս կողմում, ու թեև դա Աստծո առջև ճիշտ դիրք ստանալու միջոց չէ, դա, այնուամենայնիվ, մեծ ապացույց է այն մասին, որ մարդը ճանաչել է Աստծուն՝ Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի և Քրիստոսի հանդեպ անձնական հավատքի միջոցով: Ովքեր փրկվել են շնորհքով՝ հավատքի միջոցով, դարձել են Աստծո ստեղծվածը: Սա արտահայտվում է Աստծո բնավորությանը կերպարանվելով, որի ամենից առանձնահատուկ հատկանիշը սրբությունն է. «Որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ»» (Ա Պետր. 1.16):

Թեև եկեղեցում պետք է խուսափենք օրինապաշտությունից, այնուամենայնիվ մենք պետք է վերականգնենք բարոյական մաքրության մասին աստվածաշնչյան ուսմունքը: Բազմաթիվ անհավատներ մերժել են կամ այդպես էլ չեն լսել Ավետարանի ուղերձը այն մարդկանց կործանված վկայության պատճառով, որոնք իրենց համարում են այդ ուղերձը կրողները: Ավելին, եկեղեցին տառապում է սրբության պակասից առաջացող մի շարք ախտերից, որոնց թվում են օտարացումն Աստծուց, Նրա հայտնված ներկայության բացակայությունը, նաև հոգևոր կյանքի և զորության սակավությունը: Վերջինը և ամենից ողբերգականն այն է, որ մեր եկեղեցական նստարանները լի են բազմաթիվ անհատներով,

275 Գաղատացիների 5.13, Եբրայեցիների 12.14

որոնք վստահ են հավիտենական կյանքի մեջ, թեև աստվածաշնչյան հիմք չունեն իրենց հավաստիացման համար: Սրբությանը ձգտելու և հանուն աստվածապաշտության սեփական անձը զսպելու գաղափարներն օտար են նրանց համար[276]: Նրանց երբեք չեն զգուշացրել կամ խրատել այն ճշմարտության մեջ, որ դարձի մեծագույն նշաններից մեկն անձնական սրբության ձգտումն է, ինչի արդյունքը անկեղծ և շարունակական պայքարն է սրբության համար: Նրանց չեն սովորեցրել, և այդ պատճառով նրանք տեղյակ չեն այն ճշմարտության մասին, որ առանց սրբության ոչ ոք չի տեսնի Տիրոջը[277]:

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս հատվածում «սուրբ» կամ «սրբում է» բառերը կազմված են նույն հունարեն արմատից: «Սուրբ» ածականը թարգմանված է հունարեն *«հագնոս»* բառից, որը ցույց է տալիս, որ ինչ-որ մարդ կամ առարկա մաքուր, սուրբ, անարատ կամ անմեղ է: «Սրբել» բայը թարգմանված է հունարեն *«հագնի՛զո»* բառից, որը նշանակում է մաքրել կամ սրբել: Թեև Նոր կտակարանն օգտագործում է այս բառը՝ խոսելով ծիսական մաքրման մասին[278], այն նույնպես նշանակում է անձնական ներքին մաքրում: Հակոբոսի նամակի մեջ, որն ուղղված է Առաջին եկեղեցու ցրված հավատացյալներին, նա կոչ է անում մեղավորներին մաքրել իրենց ձեռքերը և սրբել իրենց սրտերը՝ Աստծուն մոտենալու համար[279]: Իր թղթում Պետրոս առաքյալը նկարագրում է քրիստոնյաներին որպես մարդկանց, որոնք, հնազանդվելով ճշմարտությանը, սրբել են իրենց անձերը[280]: Մեր հիմնական հատվածում Հովհաննես առաքյալը նկարագրում է ճշմարիտ հավատացյալին որպես մի մարդու, որը սրբում է իր անձը, ինչպես որ Քրիստոսը սուրբ է:

Ուշադրություն դարձրեք, որ այն հունարեն բառը, որը թարգմանված է «սրբում է» բառով, ներկա ժամանակով է, ինչը ցույց է տալիս շարունակական գործողություն: Այսպիսով, ամբողջ այս հատվածը կարելի է պատշաճ կերպով թարգմանել այսպես. «Եվ յուրաքանչյուրը, ով ունի այս հույսը Նրա հանդեպ, շարունակաբար սրբում է իրեն, ինչպես որ Նա սուրբ է»: Այստեղից իմանում ենք, որ հավատացյալի առաջընթացն անձնական սրբության մեջ պարտադիր չէ, որ ինչ-որ ակնթարթային վերապրման արդյունք լինի. այն ընթացք է, որը շարունակվում է դարձի պահից մինչև վերջնական փառավորումը Երկնքում: Ահա թե

276 Ա Տիմոթեոս 4.7, 6.11, Բ Տիմոթեոս 2.22
277 Եբրայեցիների 12.14
278 Հովհաննես 11.55, Գործք 21.24,26
279 Հակոբոս 4.8
280 Ա Պետրոս 1.22

ինչու աստվածաբանները և մեկնիչները հաճախ *«աստիճանական սրբացում»* են անվանում հավատացյալի աճը սրբության մեջ: Ճիշտ է, որ Աստված կարող է օգտագործել մեր կյանքի իրադարձությունները, անձնական վերապրումներն աղոթքի մեջ կամ արթնության արտասովոր աշխատանքը՝ որոշ ժամանակով մեր առաջընթացն արագացնելու համար: Այնուամենայնիվ, հավատացյալի աճը սրբության մեջ հիմնականում տեղի է ունենում շնորհիվ Աստծո նախախնամության շարունակական աշխատանքի, նաև հավատացյալի ամենօրյա ձգտման՝ ավելի սրբվելու Աստծո Խոսքի, աղոթքի և այս աշխարհից առանձնանալու միջոցով:

Նույնպես, ուշադրություն դարձրեք, որ «սրբում է» բային հաջորդում է «իր» անդրադարձ դերանունը՝ ցույց տալով, որ ենթական ինքն է ներգործում իր վրա, ոչ թե որևէ ներգործություն է կրում: Այլ կերպ ասած, հենց սրբվողն է, որ կատարում է սրբացման աշխատանքը: Այս գաղափարը չի ժխտում Աստծո մասնակցությունը մեր սրբացման մեջ, այլ ապացուցում է, որ մեր սրբացումը համատեղ աշխատանք է (երկու կամ ավելի գործող ուժերի փոխգործակցություն կամ համագործակցություն՝ միացյալ արդյունք ստանալու համար): Թեև մեր վերածնումը միակողմանի աշխատանք է, որը կատարում է Աստված, մեր սրբացումը համատեղ է. այն Աստծո աշխատանքի և հավատացյալի համագործակցության արդյունքն է: Այս ճշմարտությունը փայլուն կերպով ներկայացված է Փիլիպպեի եկեղեցուն ուղղված Պողոսի խրախուսանքի և հորդորի մեջ. «Ուրեմն, իմ սիրելինե՛ր, ինչպես ամեն ժամանակ հնազանդվեցիք՝ ոչ միայն իմ ներկայությամբ, այլ հիմա էլ ավելի՝ իմ բացակայությամբ, ահով և դողալով *գործե՛ք ձեր անձերի փրկությունը:* Որովհետև Աստված է, *որ ներգործում է ձեզանում* ՝կամենալն էլ, անելն էլ՝ *Իր* հաճության պես» (Փիլիպ. 2.12,13, շեղագիրն ավելացված է):

Սրբությունը կամ սրբացումը համատեղ աշխատանք է, որում և՛ Աստված, և՛ հավատացյալը գործուն մասնակցություն ունեն, որպեսզի հասնեն ցանկալի արդյունքին՝ հավատացյալի կերպարանմանը Քրիստոսի պատկերին: Աստված նախասահմանել է և առաջնորդում է այս աշխատանքը Իր ներբնակվող Հոգու միջոցով և նախախնամության բազմապիսի գործերով: Նրա աստվածային նախաձեռնությունը և մասնակցությունը հավաստիացնում են, որ հավատացյալն առաջընթաց կունենա սրբության մեջ: Դրանք նաև Պողոսի համարձակ վստահության հիմքն են, որ Նա, Ով սկսեց Իր բարի գործը հավատացյալի մեջ, կկատարի այն մինչև Քրիստոս Հիսուսի օրը: Միևնույն ժամանակ Սուրբ գիրքը ցույց է տալիս, որ հավատացյալի սրբացումը նաև կախված է նրա անձնական մասնակցությունից: Մինչ Աստված գործում է՝ մաքրելու

համար հավատացյալին նրա անմաքրությունից և կռապաշտությունից, հավատացյալը կանչված է սրբելու իր անձը, ինչպես որ Քրիստոսն է սուրբ, նա կանչված է սրբելու իր անձը մարմնի և հոգու ամեն պղծությունից՝ սրբությունը կատարելով Աստծո ահով[281]:

Տեսնելով մարդկային տարրը մեր սրբացման մեջ, ժամանակակից ընթերցողը կարող է հարցնել. «Մի՞թե սա ապացույց չէ, որ որոշ ճշմարիտ հավատացյալներ կարող են չգնալ սրբացման ճանապարհով, կամ՝ որ ոմանք կարող են մարմնավոր մնալ և գրեթե առաջընթաց չունենալ սրբության մեջ»: Կրկին, այս հարցը մատնում է անհիրազեկությունը փրկության բնույթի մասին: Առաջինը՝ սրբացման ցանկությունը, որը կա հավատացյալի ներսում, վերստին ծնունդի արդյունքն է: Նա դարձել է Աստծո զավակ՝ նոր ստեղծված, որն ունի նոր ձգտումներ՝ ուղղված արդարությանը: Թեև կլինեն մեծ պայքարներ մարմնի, այս աշխարհի և մեր թշնամու դեմ, Աստծո հանդեպ այս նոր ձգտումների պատճառով հավատացյալն ավելի կխորշի այս աշխարհից և ավելի կհրապուրվի սրբությամբ: Երկրորդը՝ մենք երբեք չպետք է մոռանանք, որ Աստված գործում է յուրաքանչյուր հավատացյալի կյանքում՝ «կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես» (Փիլիպ. 2.12,13): Նա և՛ փոխում է հավատացյալի կամքը՝ նմանեցնելով Իր կամքին, և՛ զորացնում է հավատացյալին՝ այդ կամքը կատարելու համար: Նա տալիս է և՛ հակվածություն, և՛ զորություն. Նա առաջնորդում է և կենդանացնում է: Վերջինը՝ մենք երբեք չպետք է մոռանանք, որ Աստված խոստացել է մշտապես զգոն լինել Իր զավակների հանդեպ: Նա չի մատնի նրանց անաստված վիճակի և ետ չի պահի Իր սիրող, նպատակաուղղված խրատը: Այս պատճառով, Եբրայեցիների թղթի հեղինակը գրում է.

> «Որովհետև Տերն Իր սիրածին խրատում է. Նա ծեծում է ամեն որդու, որ ընդունում է: Եթե խրատին համբերեք, Աստված ձեզ հետ՝ ինչպես որդիների հետ կվարվի, որովհետև ո՞ր որդին է, որ հայրը նրան չի խրատում: Բայց եթե առանց խրատի եք, որին ամենը մասնակից եղան, ուրեմն խորթ եք և ոչ՝ որդիներ: Նաև մեր մարմնավոր հայրերին խրատող ունենալով՝ նրանցից ամաչում էինք. չէ՞ որ առավել ևս պիտի հնազանդվենք հոգիների Հորը և ապրենք: Որովհետև սրանք մի քիչ ժամանակ իրենց հաճո երևացածի պես խրատում էին, բայց Նա՝ օգտի համար, որ Նրա սրբությունն ընդունենք» (12.6-10):

Շարունակական սրբացումը մի հատկանիշ է, որը գոյություն ունի յուրաքանչյուր ճշմարտապես դարձի եկած մարդու կյանքում: Մենք մանրամասնորեն կխոսենք այս մասին այս գլխի ամփոփման մեջ, բայց

281 Եզեկիել 36.25, Բ Կորնթացիների 7.1

նույնիսկ մինչ այդ, ընթերցողը պետք է մտապահի, որ ճշմարիտ քրիստոնյան ոչ միայն հնազանդվում է իր կյանքում կատարվող Աստծո սրբացման աշխատանքին, այլև գործուն կերպով մասնակցում է դրան այն միջոցներով, որոնք տրված են իրեն Սուրբ գրքում:

ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՍՐԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Աստծո առաջնորդությունը և մասնակցությունը հավատացյալի սրբացման մեջ հիմք չէ անհոգ կամ ծույլ լինելու համար, այլ՝ կոչ և խրախուսանք՝ մեր մասը կատարելու համար: Քանի որ Աստված գործում է մեզանում, մենք վստահ ենք, որ մեր ջանքերը զուր չեն լինի: Մենք արդարացում չունենք անգործության համար, այլ ունենք ամեն պատճառ, որ նախանձավորությամբ սրբության ձգտենք: Մեր սրբության ձգտման մեջ մենք պետք է ջերմեռանդ, լուրջ և կենտրոնացած լինենք: Ինչպես Պողոս առաքյալն էր խրախուսում Տիմոթեոսին, մենք պետք է աստվածապաշտության խրատենք և վարժեցնենք մեր անձերը[282]:

Համաձայն Սուրբ գրքի, Աստված տվել է հավատացյալին մի քանի միջոց, որոնցով նա կարող է սրբել իր անձը: Թեև դրանք մանրամասնորեն դիտարկելը չի մտնում այս ուսումնասիրության շրջանակներում, անհրաժեշտ է հիշատակել չորս ակնառուները: Առաջինը՝ մենք կարող ենք վստահաբար ասել, որ սրբությունը սկսվում է մեղքից հեռանալով: Մաքրումն անհնար է, եթե մենք դեռ չենք առանձնացել այն ամենից, ինչը պղծում է: Անօգուտ է մեզ վրա օձառ քսելը, եթե մենք դեռ դուրս չենք եկել պղծության ցնցուղից: Անօգուտ է մաքուր հագուստ հագնելը, եթե մենք դեռ կանգնած ենք աղբահորում կամ թավալվում ենք ցեխի մեջ: Ահա թե ինչու էր Պողոս առաքյալը հորդորում Կորնթոսում գտնվող հավատացյալներին.

> «Նրանց միջից դո՛ւրս գնացեք և բաժանվե՛ք,- ասում է Տերը,- և պիղծ բաների մի՛ դիպչեք: Եվ Ես կընդունեմ ձեզ» (Բ Կորնթ. 6.17,18ա):

Երկրորդը՝ Աստված տվել է Սուրբ գիրքը՝ որպես հիմնարար կանոն աստվածապաշտ կյանքի համար: Համաձայն սաղմոսերգուի, երիտասարդը կարող է մաքուր պահել իր ճանապարհը՝ միայն Աստծո Խոսքին ականջ դնելով, և նա պետք է գանձի պես պահի այդ Խոսքն իր սրտում, որպեսզի չմեղանչի Նրա դեմ[283]: Պողոս առաքյալը սովորեցնում էր, որ հավատացյալը պետք է նորոգի իր միտքը, եթե որոշել է փախչել այս աշխարհի անաստված ազդեցությունից և վերափոխվել՝ համապա-

282 Ա Տիմոթեոս 4.7
283 Սաղմոս 119.9,11

տասխանելով Աստծո բարի, հաճելի և կատարյալ կամքին[284]: Պետրոս առաքյալը, հորդորելով գնալ դեպի սրբությունը, քաջալերեց հավատացյալներին ձգտել Խոսքի անխարդախ կաթին, որպեսզի դրա միջոցով նրանք աճեին փրկության մեջ[285]:

Երրորդը՝ սրբացման ազդեցիկ, սակայն մեծապես անտեսված միջոց է կարգապահ աղոթքը: Տերը պատվիրեց մեզ աղոթել, որպեսզի չտարվենք փորձության, այլ ազատվենք չարից[286]: Գեթսեմանի այգում Իր մատնվելու գիշերը Հիսուսը նմանատիպ պատվիրան տվեց Իր ներքին շրջանակին. «Եվ երբ որ այն տեղը հասավ, նրանց ասաց. «Աղո՛թք արեք, որ փորձության մեջ չմտնեք»» (Ղուկ. 22.40): Եփեսոսի եկեղեցուն ուղղված իր նամակում Պողոս առաքյալը, անդրադառնալով հոգևոր պատերազմի թեմային, հորդորեց հավատացյալներին ամեն ժամանակ աղոթել ամեն տեսակի աղոթքներով, և հսկել ամեն հարատևությամբ և աղաչանքով բոլոր սուրբերի համար[287]:

Չորրորդը՝ Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ հավատացյալն աճում է սրբության մեջ՝ այն չափով, որով նա շարունակում է ճանաչել Քրիստոսին և Նրա Ավետարանը: Թեև այս չորրորդ միջոցն անբաժանելի է Սուրբ գրքի ուսումնասիրությունից և աղոթքից, մենք պետք է առանձին դիտարկենք այն, որպեսզի հասկանանք, որ մենք չենք փոխվում պարզապես մեզ ներկայացվող ճշմարտությունը կիրառելով և աստվածաշնչյան սկզբունքներն ընդօրինակելով. մենք փոխվում ենք Քրիստոսի մասին շարունակ հայտնություններ ունենալով, որոնք ստանում ենք Խոսքից:

Ոչինչ այնքան չի դրդում մեզ սրբության, որքան շփումը ճշմարտապես աստվածապաշտ և քրիստոսանման անձնավորության հետ: Որքան ավելի ենք ժամանակ անցկացնում նման մարդու հետ, և որքան ավելի մտերիմ է մեր շփումը դառնում, այնքան մեր կյանքն ավելի մեծ ազդեցություն է կրում: Եթե այս սկզբունքը ճշմարիտ է մարդկանց հետ շփման հարցում, որքա՜ն ավելին է այս ազդեցությունը, երբ ժամանակ ենք անցկացնում Քրիստոսի հետ: Նրա ուսուցումը կյանք և հոգի է[288], Նրա օրինակն անսխալական է, և Նրա Անձի փառքը վերափոխում է մեզ: Այս պատճառով, Պողոս առաքյալը գրում է. «Բայց մենք՝ ամենս, բաց երեսով Տիրոջ փառքն՝ ինչպես հայելու մեջ տեսնելով՝ նույն պատկերի նման կերպարանափոխվում ենք՝ փառքից դեպի փառք, ինչպես թե Տիրոջ Հոգուց» (Բ Կորնթ. 3.18):

284 Հռոմեացիների 12.2
285 Ա Պետրոս 2.2
286 Մատթեոս 6.13
287 Եփեսացիների 6.18
288 Հովհաննես 6.63

Թեև մեր երկրային պանդխտության ընթացքում մենք կարող ենք լավագույն դեպքում միայն աղոտ կերպով տեսնել Քրիստոսին, ամենից աննշան վերապրումը կարող է կատարել մեծագույն վերափոխումը նույնիսկ բոլոր սրբերից փոքրագույնի կյանքում[289]: Որքան ավելի մենք տեսնենք Քրիստոսին, վերապրենք Նրան և հաղորդակցվենք Նրա հետ Աստվածաշնչում և աղոթքի մեջ, այնքան ավելի կվերափոխվենք Նրա փառքով և կընդունենք Նրա պատկերը՝ մի պատկեր, որն ազատ է նույնիսկ փոքրագույն բարոյական արատից: Ինչպես որ Եբրայեցիների թղթի հեղինակն է հավաստիացնում մեզ, Նա «սուրբ, անմեղ, անարատ, մեղավորներից ջոկված և երկնքից վեր բարձրացած» է[290]:

Թեև Սուրբ գրքում հստակ նշված չէ, որ այս հոգևոր միջոցները գործադրելը վկայում է դարձի մասին, դրանք կարող են իրապես հոգևոր անձնավորություն լինելու անսխալական ցուցանիշ լինել Քրիստոսի հանդեպ իր հավատքը դավանող մարդու համար: Նույնիսկ ամենից հասուն և նվիրված հավատացյալները երբեմն ցավալիորեն անտեսում են այս հոգևոր միջոցները, որոնք նպաստում են բարոյական մաքրությանը և Քրիստոսին կերպարանվելուն: Այնուամենայնիվ, մեզ համար շատ դժվար կլինի ապացուցել այնպիսի մարդու դարձի գալը, որը չի կիրառում դրանք, որն այն աստիճան է անտեսում իր առաջընթացը սրբության մեջ, որ մնացել է անտարբեր՝ իր սրտով, և անգործունյա՝ իր արարքներով:

ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՐՁԻ ԱՊԱՑՈՒՅՑ

Մեր հիմնական հատվածի ավարտն ազդեցիկ կերպով ցույց է տալիս մեզ ճշմարտությունը: Մենք չպետք է խաբվենք դրա հակիրճությամբ, քանի որ դրանում գտնվող սկզբունքը կարող է բժշկել բազմաթիվ ախտեր, որոնք սպառնում են ժամանակակից ավետարանական շարժմանը. «Եվ ամեն, ով որ այս հույսն ունի իրենում, սրբում է իր անձը, ինչպես որ Նա սուրբ է» (Ա Հովհ. 3.3):

Առաջին բանը, որին պետք է ուշադրություն դարձնենք, «ամեն (մեկը)» բառն է, որը վերաբերում է նրանց, ովքեր ճշմարտապես հավատում են Տեր Հիսուս Քրիստոսին՝ փրկության համար: Հովհաննեսի խոսքերի իմաստը պարզ է. յուրաքանչյուրը, ով ճշմարտապես քրիստոնյա է, անձնապես և գործնականորեն սրբության է ձգտելու: Սրբությանը ձգտելը չի սահմանափակվում մի խումբ գերհոգևոր սրբերով, այն հատկանշական է նրանց համար, ովքեր ճշմարտապես հուսացած են Քրիստոսին: Արդեն չափազանց երկար ժամանակ է, որ Ավետարանական միջավայ-

289 Եփեսացիների 3.8
290 Եբրայեցիների 7.26

րում գոյություն ունի մարդկանց սխալական եռաշերտ դասակարգում՝ անհավատներ, մարմնավոր քրիստոնյաներ և հոգևոր քրիստոնյաներ: Նման դասակարգումը թույլ է տվել, որ եկեղեցին լցվի տղամարդկանցով, կանանցով և երիտասարդներով, որոնք աստվածապաշտության կերպարանք ունեն, սակայն ուրանում են դրա զորությունը: Նրանք դավանում են Աստծուն, բայց ուրանում են Նրան իրենց գործերով: Եվ նրանք զգացմունքային ոգևորությամբ դավանում են Քրիստոսին որպես Տեր, սակայն չեն կատարում Հոր կամքը[291]: Թեև ճշմարիտ է, որ քրիստոնյաները դեռ պայքարում են մեղքի դեմ, և նույնիսկ ամենից զորավոր սրբերը պետք է պայքարեն անտարբերության մշտապես ներկա սպառնալիքի դեմ, գոյություն չունի ոչ մի հիմք այն երևույթի համար, որը ներկայումս կոչվում է «մարմնավոր քրիստոնյա»: Գոյություն չունի այնպիսի քրիստոնյա, որը ամբողջ կյանքում մշտապես մարմնավոր վիճակում է. գոյություն չունի այնպիսի քրիստոնյա, որում Աստված արդյունավետ չի գործում:

Սուրբ գիրքը վկայում է, որ Աստված գործում է յուրաքանչյուր հավատացյալի կյանքում՝ առանց բացառության, և՛ կամենալը, և՛ անելը՝ Իր հաճության պես[292]: Մենք Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար[293]: Նա այն Աստվածն է, Ով ամեն բան հաջողում է՝ Իր կամքի խորհուրդների պես, Ով անում է՝ ինչ կամենում է՝ երկնքում, երկրի վրա, ծովերում և բոլոր խորը տեղերում[294]: Հնարավո՞ր է, որ այն Աստված, Ով իշխում է արարչագործության վրա, չկարողանա հաստատել Իր նպատակը և չկարողանա կատարել Իր բարի կամքն Իր զավակների կյանքում[295]: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Աստծո զավակների անունները դրոշմված են Նրա ձեռքերի ափերին[296]: Մի՞թե նրանք ինչ-որ կերպով դուրս են մնացել Նրա ուշադրությունից կամ փախչել են՝ հեռանալով Նրա հայրական խնամքից: Մի՞թե այն Աստված, Ով պատվիրում է մարդկանց մեծացնել իրենց երեխաներին խրատով և Տիրոջ ուսմունքով, անտեսում է Իր զավակներին[297]: Մի՞թե Նա պահանջում է երեցներից բարի վերակացու լինել իրենց տներում, այնինչ Իր տունը խառնաշփոթ վիճակում է[298]: Մենք գիտենք պատասխանը Եբրայեցիների 12.6-8-ից. Աստված վարվում է Իր ժողովրդի հետ՝ ինչպես որդիների հետ, և խրատում է նրանց, որոնց սիրում է:

291 Մատթեոս 7.21, Բ Տիմոթեոս 3.5, Տիտոս 1.16
292 Փիլիպեցիների 2.13
293 Եփեսացիների 2.10
294 Սաղմոս 115.3, 135.6, Եփեսացիների 1.11
295 Եսայի 46.9,10
296 Եսայի 49.15,16
297 Եփեսացիների 6.4
298 Ա Տիմոթեոս 3.4,5

Աստված աննահանջ է Իր զավակների մասին հոգալու և նրանց խրատելու հարցում: Այն, որ բազմաթիվ մարդիկ ավետարանական միջավայրում անկարգ կյանք են վարում, ոչ թե հերքում է Աստծո խոստումները, այլ ապացուցում է նրանց խորթ լինելը: Աստված չի անտեսել նրանց: Զարհուրելի փաստն այն է, որ նրանք պարզապես Նրա զավակները չեն: Եթե նրանք այդպիսին լինեին, Եբրայեցիների թղթում գրված է, որ Նա կխրատեր նրանց, և նրանք կհամբերեին այդ խրատին:

Հովհաննեսի Առաջին և Եբրայեցիների թղթերի այս հատվածները ներկայացնում են մեզ զարմանալի ճշմարտությունն այն մասին, որ մեր սրբացումը և՛ հավատացյալի աշխատանքն է, և՛ Աստծո աշխատանքը, որ կանչել է նրան: Այն հավատացյալը, որն իրականում հուսացած է Քրիստոսին՝ փրկության համար, սրբում է իրեն, ինչպես որ Նա է սուրբ, և Նա, Ով որդեգրել է նրան, մեծագույն հոգածությամբ կերպարանում է նրան Իր կամքին: Նա չի նահանջի, նույնիսկ եթե անհրաժեշտ լինի դիմել սաստիկ ծեծի՝ խրատելու համար[299]:

Կրկին, հավատացյալը շարունակելու է պայքարել մեղքի, մարմնի և այս աշխարհի հետ: Նա ձախողվելու է: Ավելին՝ լինելու են ակնհայտ դադարներ Աստծո սրբացման աշխատանքի մեջ, նաև ժամանակահատվածներ, երբ թվում է՝ հավատացյալի կյանքում շատ քիչ բան է կատարվում: Հաճախ մեծագույն էտումը և պատրաստությունն իրականացվում են այն ժամանակ, երբ տեսանելի պտուղ գրեթե չկա: Սա նշանակում է, որ մարդիկ, որոնք հուսացած են Քրիստոսին՝ փրկության համար, նաև ապագա փառավորման համար՝ Նրա գալուստի ժամանակ, ապացուցելու են իրենց հույսը սրբության հանդեպ ձգտմամբ, նաև Քրիստոսի պատկերին կերպարանվելու անկեղծ և նկատելի ցանկությամբ: Այն չափով, որով այս բաներն ակնհայտ են և ավելանում են, մենք կարող ենք առավել հավաստիացում ունենալ, որ ճշմարտապես ճանաչել ենք Նրան: Այն չափով, որով դրանք բացակայում են մեր կյանքում, մենք պետք է մտահոգվենք:

Սուրբ գիրքը պարզորեն սովորեցնում է, որ առանց սրբացման ոչ ոք չի տեսնի Տիրոջը[300]: Սա չի նշանակում, որ մենք պետք է սրբության ձգտենք՝ Աստծո թագավորություն մտնելու համար, քանի որ դա կլիներ փրկություն՝ գործերից, ոչ թե շնորհքից. «Եթե գործերից է, էլ շնորհք չէ» (Հռոմ. 6.11): Մենք չենք ստանում ճիշտ դիրք Աստծո առջև կամ հավիտենական փրկություն՝ շնորհիվ անձնական սրբության. փոխարենը, այն վկայում է, որ մենք փրկություն ենք ստացել շնորհքով՝

299 Դժվար է չափից ավելի շեշտադրել Եբրայեցիների 12.6-ում օգտագործվող «ծեծել» բառը: Այն թարգմանված է հունարեն *«մաստիգո՛ն»* բառից, որը նշանակում է «մտրակով ծեծել»:

300 Եբրայեցիների 12.14

հավատքի միջոցով: Այս ճշմարտությունն ակնառու դիրք էր գրավում Ավետարանը քարոզելու մեջ մինչև ներկա դարաշրջանը, բայց այժմ այն բոլորովին անհայտ է բազմաթիվ ժամանակակից քրիստոնյաներին: Հաճախ այն պատշաճ կերպով չի մեկնաբանվում և չի հարկադրվում Քրիստոսի հանդեպ իրենց հավատքը դավանող մարդկանց խղճին: Այսպիսով, որոշ ճշմարիտ հավատացյալներ չունեն այն հավաստիացումը, որը պետք է ունենան, և որոշ կեղծ նորադարձներ վստահ են փրկության մեջ, թեև չունեն ոչ մի պատճառ դրա համար:

Քրիստոնյաները սոսկ չեն սպասում, որ սրբացվելու են Քրիստոսի գալստյան ժամանակ, այլ ձգտում են սրբել իրենց անձերը՝ հավատարմորեն այս աշխարհից առանձնանալու, Աստծո Խոսքն ուսումնասիրելու և աղոթքի մեջ հարատևելու միջոցով: Ճշմարիտ հավատացյալն Իր Փրկչի նման լինելու ներքին ձգտում ունի, ինչն արտահայտվում է առաջին հերթին Աստծո թագավորությունը և արդարությունը փնտրելով, նաև սեփական անձն աստվածապաշտության վարժեցնելով[301]: Եթե այս բաներն օտար են մեզ համար, մենք պետք է ամենայն ջանասիրությամբ ստուգենք մեզ՝ տեսնելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ ենք, և մեր կոչումն ու ընտրությունը հաստատ անենք[302]:

ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻՆ

Մենք չենք կանչվել, որ մեն-մենակ ճանապարհ ընկնենք՝ անորոշ ավարտով: Մենք խոստում ունենք, որ Աստված կգործի մեր կյանքում, և Նա, որ բարի գործ է սկսել, կկատարի այն: Թեև Հովհաննեսն ասում է, որ մենք չգիտենք, թե ինչպիսին ենք լինելու, երբ Աստծո գործն ավարտվի մեզանում, մենք հաստատ գիտենք, որ Նրա նման ենք լինելու[303]: Մենք չգիտենք, թե ինչպիսին ենք լինելու, ոչ թե մեր ավարտի անորոշության, այլ դրա մեծության պատճառով: Հավատացյալի վախճանն այնքա՜ն վեհ է, որ կարող ենք ասել, որ աչքը չի տեսել, և ականջը չի լսել, և այն, ինչ Աստված պատրաստել է Իրեն սիրողների համար, չի ընկել նույնիսկ ամենից իմաստունների սիրտը[304]: Թեև լավագույնները քրիստոնյաներից դեռ սգում են մեղքի, ձախողման, տկարության և կասկածի պատճառով, ապագա փառքը սպասում է նույնիսկ ամենատկարներին և խեղճերին: Թեև ուշանա էլ, այն կգա՝ Քրիստոսի հետ, երբ Նա հայտնվի այս աշխարհին Իր փառքով: Այդ ժամանակ ոչ միայն Քրիստոսը կարդարացվի և կփառավորվի, այլև Նրա ժողովուրդը, որն այժմ նսեմացված և

301 Մատթեոս 6.33, Ա Տիմոթեոս 4.7
302 Բ Կորնթացիների 13.5, Բ Պետրոս 1.10
303 Ա Հովհաննես 3.2
304 Ա Կորնթացիների 2.9

անարգված է, կարդարացվի, կվերափոխվի և կփառավորվի Նրա հետ: Դա կլինի մեր որդիության վերջնական և աներկբա հաստատումը: Այս մեծ հույսը, որը հիմնված է աստվածային վճռի վրա և հաստատված է Գողգոթայի խաչով, լցնում է հավատացյալին «անպատմելի և փառավոր խնդությամբ» և մղում է սրբության: Նա ցանկանում է սուրբ լինել, ինչպես որ Նա սուրբ է (Ա Պետրոս 1.7,8,16):

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒ

Արդարություն գործել

«Եվ հիմա, որդյակնե՛ր, մնացե՛ք Նրանում, որ երբ որ Նա հայտնվի, համարձակություն ունենանք և չամաչենք Նրանից՝ Նրա գալուստի ժամանակում: Եթե գիտեք, որ Նա արդար է, կիմանաք, թե ամեն, ով որ արդարություն է անում, Նրանից է ծնված»:

– Ա Հովհաննես 2.28,29

«Ամեն, ով որ մեղք է գործում, նա անօրինություն էլ է անում, և մեղքն է անօրինությունը: Եվ գիտեք, որ Նա հայտնվեց, որ մեր մեղքերը վեր առնի, և Նրանում մեղք չկա: Ամեն, ով որ Նրանում մնում է, չի մեղանչում, և ամեն, ով որ մեղանչում է, չի տեսել Նրան և ո՛չ էլ ճանաչել Նրան:

Մանկունք, ոչ ոք ձեզ չխաբի: Նա, որ արդարություն է անում, արդար է, ինչպես Նա էլ արդար է: Եվ նա, որ մեղք է անում, սատանայից է. որովհետև սատանան հենց սկզբից մեղանչում է, նրա համար հայտնվեց Աստծո Որդին, որ սատանայի գործերը քանդի: Ամեն, ով որ Աստծուց է ծնված, մեղք չի անում, որովհետև Նրա սերմը նրանում մնում է, և չի կարող մեղանչել, որովհետև Աստծուց է ծնված:

Սրանով են հայտնի Աստծո որդիները և սատանայի որդիները: Ամեն, ով որ արդարություն չի անում, նա Աստծուց չէ, և ո՛չ էլ նա, որ իր եղբորը չի սիրում»:

– Ա Հովհաննես 3.4-10

Նախորդ գլխում իմացանք, որ ճշմարիտ հավատացյալի նշաններից մեկը Քրիստոսին շարունակաբար կերպարանվելն է՝ անձնական սրբությամբ: Հովհաննեսը գրում է. «Եվ ամեն, ով որ այս հույսն ունի իրենում, սրբում է իր անձը, ինչպես որ Նա սուրբ է» (Ա Հովհ. 3.1-3): Վերևում

մեջբերված երկու հատվածներում տեսնում ենք, որ ճշմարիտ հավատացյալի մեկ այլ նշան է Քրիստոսին կերպարանվելը՝ արդարություն գործելով: Նմանություններն այս երկու ստուգումների միջև ակնհայտ են.

Հավատացյալը սրբում է իրեն, ինչպես որ Քրիստոսը սուրբ է[305]:

Հավատացյալն արդարություն է գործում, ինչպես որ Քրիստոսն արդար է[306]:

Ինչ-որ իմաստով, ճշմարիտ քրիստոնյայի այս երկու հատկանիշները մեկը մյուսի հայելային արտացոլքն են: Թեև մենք կարող ենք տարբերակում անել և պետք է տարբերակում անենք սրբության և արդարության միջև, այս հատկանիշներից ոչ մեկը առանց մյուսի չի կարող լինել որևէ մարդու կյանքում: Այս երկուսից մեկն ունեցողը հավասարապես կունենա նաև մյուսը: Այն չափով, որով մենք սրբում ենք մեր անձերը, նաև աճում ենք արդարության մեջ:

Այլ իմաստով, *«արդարություն»* բառը պարզորեն ցույց է տալիս, թե ինչ է նշանակում սուրբ լինելը: Այն ապացուցում է մեզ, որ ճշմարիտ սրբությունը կամ բարոյական մաքրությունը չի վավերացվում որևէ զգացմունքով կամ հիացական հոգևոր վիճակով, այլ՝ արդարություն գործելով: «Արդարություն» բառը թարգմանված է հունարեն *«դիկաիոսո՛ւնե»* բառից, որը նշանակում է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի վիճակը, որը ճիշտ է Աստծո առջև կամ արժանացել է Նրա հավանությանը: Երբ այս բառն օգտագործվում է հավատացյալի արդար դիրքի վերաբերյալ, այն նշանակում է նրա օրինական կամ իրավական արդար դիրքն Աստծո առջև՝ Քրիստոսի Անձի և աշխատանքի հանդեպ ունեցած հավատքի միջոցով: Երբ այս բառն օգտագործվում է հավատացյալի անձնական արդարության վերաբերյալ, այն նշանակում է նրա կերպարանումն Աստծո բնությանը և կամքին, ինչպես որ դրանք հայտնված են ամբողջ Սուրբ գրքում, և առաջին հերթին Հիսուս Քրիստոսի Անձում: Կարևոր է նշել, որ թեև չկա ոչ մի հակասություն Քրիստոսի և օրենքի միջև, Քրիստոսն աստվածային իրողությունների և Աստծո կամքի մեծագույն հայտնությունն է: Մենք պետք է հասկանանք, որ Հովհաննեսը դասակարգում է Քրիստոսին որպես և՛ սրբության, և՛ արդարության բարձրագույն չափանիշ[307]: Սա ազդեցիկ և վերափոխող ճշմարտություն է, որը թույլ է տալիս, որ հավատացյալի բարոյականությունը ճշմարտապես քրիստոսակենտրոն լինի:

«Անել» բառը թարգմանված է հունարեն *«պոիե՛ո»* բառից, որը նշանակում է «պատրաստել, անել, առաջացնել, գործել, կատարել, վարվել, պահել, աշխատել»: Բառերի այս երկար ցուցակի նպատակն է

305 Ա Հովհաննես 3.3
306 Ա Հովհաննես 2.29
307 Ա Հովհաննես 3.3,7

ցույց տալ, որ *«պոիե՛ո»* բառը նշանակում է գործունեություն, և այն արդարությունը, որի մասին Հովհաննեսը գրում է, գործուն, գործնական և նկատելի է: Այս արդարությունը չի վերաբերում այն մարդկանց, որոնք միայն լսում են Խոսքը, այլ նրանց, որոնք կատարում են այն. «Բայց Խոսքը անո՛ղ եղեք, և ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Հակոբոս 1.22): Ո՛չ էլ այս արդարությունը վերաբերում է խորհրդապաշտ մարդկանց կամ նրանց, ովքեր գերազանց են գիտելիքի մեջ, բայց ոչ՝ գործերի: Փոխարենը, այն պարզ հնազանդության, Աստծո օրենքին նկատելի կերպարանման և Քրիստոսին նմանվելու արդարություն է:

Կարևոր է նշել, որ *«պոիե՛ո»* բայը գրված է ներկա ժամանակով և ցույց է տալիս շարունակական գործողություն, կենսառՃ կամ հաստատված սովորություններ: Թեև քրիստոնեական կյանքում կան բազմաթիվ պայքարներ մեղքի և կրկնվող ձախողումների հետ, այն առանձնանում է Աստծո կամքին կերպարանվելու ձգտումով, Աստծո կամքին ավելի հնազանդվելով և ավելի մեծ զղջմամբ, երբ այն զանցվում է:

ՇԱՏ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մենք չպետք է զարմանանք, որ դարձը ստուգվում է գործնական և նկատելի հնազանդությամբ: Արդեն երկու անգամ հանդիպել ենք այս ճշմարտությանը: Առաջին ստուգման մեջ՝ Ա Հովհաննես 1.5-7-ում, մենք իմացանք, որ ճշմարիտ քրիստոնյան վարվում է լույսի մեջ. նրա կենսառՃը համապատասխանում է Աստծո հայտնությանը Նրա Անձի և կամքի մասին: Երրորդ ստուգման մեջ՝ Ա Հովհաննես 2.3-5-ում, բացահայտեցինք, որ ճշմարտապես դարձի եկած մարդիկ պահում են Աստծո պատվիրանները: Այս ստուգման մեջ՝ Ա Հովհաննես 2.29-ում, գրված է, որ յուրաքանչյուրը, ով արդարություն է անում՝ համապատասխանեցնելով իր կյանքը և գործերը Աստծո օրենքի չափանիշին, ճշմարտապես ծնված է Նրանից: Այս գլխի սկզբում բերված հատվածները՝ Նոր կտակարանի բազմաթիվ այլ հատվածների հետ, ցույց են տալիս, որ փրկությունը՝ շնորհքով և հավատքի միջոցով, ապացուցվում է գործերով[308], որ արդարացումն ապացուցվում է սրբացմամբ[309], որ արդար դիրքն Աստծո առջև վավերացվում է անձնական արդարությամբ[310], որ Քրիստոսին Տեր դավանելը ստուգվում է գործնական հնազանդությամբ[311], և որ եթե մեկը Քրիստոսում է, նա նոր ստեղծված է, որի համար հներն անցել են, և ամեն ինչ նոր է[312]:

308 Հակոբոս 2.14-26
309 Փիլիպեցիների 1.6, 2.12,13, Եբրայեցիների 12.14
310 Տիտոս 1.16
311 Մատթեոս 7.21
312 Բ Կորնթացիների 5.17

Թեև այս պնդումները լիովին աստվածաշնչյան են, և ընդունված են եղել եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում՝ ամենից ակնառու ծառայողների և հաստատված հավատքի դավանանքների կողմից, դրանք հիմնականում մոռացված են ժամանակակից ավետարանական քրիստոնյաների միջավայրում: Նույնիսկ ակնարկն այն մասին, որ փրկությունը կարող է գործնական ապացույցներ ունենալ, կամ որ աշխարհին անձնատուր եղած մարդիկ ճշմարտապես դարձի եկած չեն, լրջորեն վիրավորում է Ավետարանական շարժման մեծ մասին և խիստ հանդիմանության առարկա է դառնում նրանց կողմից: Ահա թե ինչու է խիստ անհրաժեշտ, որ ուշադրություն դարձնենք Հովհաննեսի զգուշացմանը.

> «Մանկունք, ոչ ոք ձեզ չխաբի: Նա, որ արդարություն է անում, արդար է, ինչպես Նա էլ արդար է» (3.7):

> «Սրանով են հայտնի Աստծո որդիները և սատանայի որդիները: Ամեն, ով որ արդարություն չի անում, նա Աստծուց չէ, և ո՛չ էլ նա, որ իր եղբորը չի սիրում» (3.10):

Մենք պետք է հաշվի առնենք, որ դառնությամբ և քննադատությամբ լցված օրինապաշտ մարդու խոսքեր չենք կարդում: Երեց Հովհաննեսը երկակի նպատակ է հետապնդում՝ մանուկներ անվանելով իր ընթերցողներին: Առաջինը՝ նա ցանկանում է փոխանցել նրանց իր հայրական սերը՝ որպես առաքյալ և Քրիստոսի հոտի հովիվ: Երկրորդը՝ նա ցանկանում է հիշեցնել, որ, նման փոքր երեխաների, նրանք կարող են խաբվել և լինել «երերված ու տատանված վարդապետության ամեն քամուց» (Եփես. 4.14): Սա հատկապես ճշմարիտ է քրիստոնեական բարոյականության հարցում:

Քրիստոնեական եկեղեցին քայլում է նեղ ճանապարհով, որի երկու կողմերում մահացու որոգայթներ են: Մի կողմում օրինապաշտությունն է՝ կանոնների և վարձատրությունների կրոնը, որը մեծարում է մարդու ձեռքբերումները և, հետևաբար, նվազեցնում է Քրիստոսի Անձը և գործերը: Մարդը հաղթանակում է, իսկ Աստված պարտատեր է դառնում՝ հարկադրված վարձատրելու նրան իր աստվածապաշտության և ազնվագույն նվաճումների համար: Այն դարձնում է մարդկանց փարիսեցիներ, որոնք սիրում են կանոններ, ոչ թե Աստծուն, և որոնք համարում են, որ շնորհքն անհրաժեշտ է ավելի ցածր խավի մարդկանց[313]: Նման կրոնը մատնացույց է անում շյուղը և անտեսում է գերանը, մժեղը քամում է, իսկ ուղտը կուլ է տալիս[314]: Այն մշտապես չափում է, համեմատում

313 Ղուկաս 18.11
314 Մատթեոս 7.3-5, 23.24

և մրցակցում է[315]: Այն ամբողջովին բաղկացած է դասակարգումներից, հրամաններից և հպատակությունից[316]: Որպես կանոն, այն ավարտվում է իրար կծելու, ուտելու և փչանալու խելագարությամբ[317]:

Քրիստոնեության վտանգավոր նեղ արահետի մյուս որոգայթն է անտինոմիանիզմը[318] կամ անօրինությունը: Թեև այն նույնքան մահացու է, որքան օրինապաշտությունը, այն ավելի տարածված է ժամանակակից քրիստոնեության մեջ, և այդ պատճառով արժե մանրամասնորեն դիտարկել այն: Անտինոմիանիզմը թունավոր վարդապետություն է, որն անառակության է վերածում Աստծո շնորհքը[319] և պարծենում է զարհուրելի կարգախոսով. «Մնա՞նք մեղքի մեջ, որ շնորհքը շատանա» (Հռոմ. 6.1, հմմտ. 3.8): Իր ամենից ծայրահեղ դրսևորմամբ, այս վարդապետությունը հեշտորեն ճանաչվում և մերժվում է: Այնուամենայնիվ, երբ այն քողարկվում է լայն մտահորիզոն ունենալով, գթասրտությամբ և քրիստոնեական սիրով, դառնում է խաբուսիկ և մահացու:

Մենք պետք է գիտակցենք, որ ապրում ենք հարաբերականության ժամանակաշրջանում, որում բացարձակ բարոյական չափանիշները մերժված են: Այս ախտը մուտք է գործել եկեղեցի, և դրա հետևանքները կործանարար են եղել: Այն տապալել է Աստծո օրենքի արդար չափանիշը, հերքել է, որ գոյություն ունի քրիստոնեությանը հատուկ կենսաձ, և անհնարին է դարձրել նեղ ճանապարհը սահմանելը: Արդյունքում շատերը կասկածանքով են վերաբերվում ցանկացած ուղերձի, որը հենվում է որևէ բացարձակ բարոյական չափանիշի վրա: Այն պահին, երբ մեր խղճին որևէ օրենք կամ ճշմարտություն է հարկադրվում, մենք արժեզրկում ենք այն քարոզող մարդուն՝ նրան օրինապաշտ անվանելով, ինչպես նաև նրա ուսմունքը՝ այն ստրկացնող համարելով: Քանի որ մեզ համոզել են, որ այլևս չենք կարող իմանալ ճշմարտությունը մեր պատշաճ վարքի մասին, մեզ մնում է միայն մեկ հնարավոր տարբերակ՝ ինքնակառավարումը, որի դեպքում յուրաքանչյուրն անում է այն, ինչ իրեն ճիշտ է թվում[320]: Այս տարբերակը փորձվել է շատ անգամներ անցյալում և միշտ նույն կործանարար հետևանքներն է ունեցել, որովհետև որտեղ չկա տեսիլք կամ օրենքի հայտնություն, մարդիկ անզուսպ են և, ի վերջո, կործանվում են. «Առանց մարգարեության (կամ՝ հայտնության) ժողո-

315 Մատթեոս 7.1,2, Բ Կորնթացիների 10.12
316 Մատթեոս 23.5-7, Մարկոս 12.38,39, Ղուկաս 11.43, 20.46
317 Գաղատացիների 5.15
318 Անտինոմիանիզմը վարդապետություն է այն մասին, որ շնորհքն ազատում է քրիստոնյային օրենքի բարոյական սահմանափակումներից, ինչի արդյունքն անսանձ անբարոյական արարքներն են:
319 Հուդա 4, «Անառակություն» բառը թարգմանված է հունարեն «ասե՛լգեիա» բառից, որը նշանակում է անզուսպ կիրք, ավելորդություն, անառակություն, ցանկասիրություն, անամոթություն, հանդգնություն:
320 Դատավորաց 17.6, 21.25

վուրդը կվայրենանա, բայց ով որ օրենքը պահի, երանի՛ նրան» (Առակ. 29.18)[321]:

Մենք ապրում ենք հումանիզմի և անհատապաշտության ժամանակաշրջանում, որում մարդն ամեն ինչի կենտրոնը և նպատակն է, և առանձին անհատը պահանջում է սեփական անձի արտահայտման անսահման ինքնավարություն՝ առանց հանդիմանության նույնիսկ աննշան ակնարկի: Քանի որ այլևս չկա աստվածաշնչյան չափանիշ, որը կարելի է ճանաչել, և որին պետք է հնազանդվել, մենք թողնված ենք մեկս մյուսի կարծիքներին: Արդյունքում, երբ ինչ-որ մեկը հանդիմանում է մյուսին, նա կարող է մերժվել՝ որպես անտեղյակ և ամբարտավան անձնավորություն, ով պարզապես ձգտում է բարձրացնել իր կարծիքը մյուսների կարծիքներից: Քանի որ մենք այլևս չենք հավատում, որ Աստծո խոսքերը կարելի է ճշտորեն հասկանալ և կիրառել, մենք կարող ենք արդարացնել մեզ, երբ անտեսում ենք Սուրբ գրքի ամենից ճշգրիտ մեկնությունը և մերժում ենք մարդուն՝ որպես վտանգավոր մոլեռանդի, ով ասում է՝ այսպես է ասում Տերը: Մենք չենք գիտակցում, որ չարի ճիրաններում ենք, երբ կրկնում ենք նրա՝ «Իրա՞վ Տերն ասաց» կարգախոսը (Ծնն. 3.1):

Ի վերջո, մենք ապրում ենք խեղաթյուրված ռոմանտիկ ժամանակաշրջանում, որում աստվածապաշտությունը վերասահմանվել է որպես լայն մտահորիզոն, որը բաց է ամեն ինչի համար, և հանդուրժողականությունը սիրո գերագույն դրսևորումն է: Այսպիսով, ցանկացած տեսակի հանդիմանություն համարվում է մեծագույն անբարոյություն: Այս պատճառով, քրիստոնեական տերմինաբանության մեծ մասը կա՛մ վերասահմանվել է, կա՛մ լիովին հեռացվել է: «Ես սխալ եմ» արտահայտությունը կործանարար է սեփական անձի համար, իսկ «Դու սխալ ես» արտահայտությունը հանցավոր է: Այնպես որ, մարգարեները վտարվում են, և նրանց փոխարեն կարգվում են հոգևոր խորհրդատուներ: Աստվածաշնչյան վարդապետությունը, հանդիմանությունը, ուղղումը և խրատը՝ արդարության համար, փոխարինվում են մոտիվացնող սկզբունքներով, որոնց նպատակն անձի կայացումն է[322]: «Երկաթը սրում է երկաթը» սկզբունքը փոխարինվում է փոխադարձ հավանության վարժանքով[323], իսկ եկեղեցական կարգապահությունը դատապարտվում է՝ հրեշավոր որակվելով և հավասարեցվելով Սալեմի վհուկների դատավարությանը: Թվում է՝ մեր սերն այն աստիճան նրբին և վսեմ է դարձել, որ այլևս չենք կարողանում մարսել Քրիստոսի հասարակ պատվիրանները:

321 Այս խոսքի երկրորդ մասը սահմանում է առաջինը՝ պարզորեն ցույց տալով, որ տեսիլքն Աստծո օրենքի հայտնությունն է:
322 Բ Տիմոթեոս 3.16
323 Առակաց 27.17

Այսպիսով, հանուն մեր ինքնակամ անիրազեկության, անհատի հանդեպ ենթադրյալ գնահատանքի, լայն մտահորիզոնի և հանդուրժողականության, մենք արդյունավետ կերպով տապալել ենք ցանկացած չափանիշ և դարձել ենք գործնական անտինոմիականներ կամ անօրեն մարդիկ՝ առանց իմաստության և սկզբունքների: Մենք ապրում ենք այս աշխարհում և այս աշխարհի նման ենք: Մենք կա՛մ անտեսում ենք, կա՛մ հռետորաբանությամբ ծածկում ենք ցանկացած աստվածաշնչյան ցուցանիշ, որն առաջնորդում է մեզ դեպի նեղ ճանապարհը: Մեզ սովորեցրել են, որ մենք չենք կարող իմանալ ճշմարտությունը, և հավատալով ստին՝ դատապարտել ենք մեզ խավարի մեջ վարվելուն:

Եթե ժամանակակից քրիստոնեությունը երբևէ պատրաստվում է վերականգնել իր առողջությունը և ուժը, այն պետք է վերջ տա իրեն պաշարող խաբեությանը: Մենք պետք է հասկանանք, որ փրկարար հավատքը և իրական դարձն արտահայտվում են աստիճանական, գործնական և նկատելի աճով՝ սրբության և արդարության մեջ: Մենք պետք է վերադառնանք այն պարզ և ողջամիտ ցուցմանը, որը տվեց Հովհաննես առաքյալը: Առաջին Հովհաննես 3-րդ գլխի 7-րդ և 10-րդ խոսքերում ներկայացվող ճշմարտությունն այն է, որ Քրիստոսին դավանող մարդը կարող է փրկության հավաստիացում ունենալ այն չափով միայն, որով նա արդարության է ձգտում, գործնականորեն կատարում է այն և զղջում է զգում՝ իր ձախողումների պատճառով:

Կենդանական աշխարհը բաժանված է ըստ դասերի և տեսակների՝ հիմնված նկատելի հատկանիշների և վարքի վրա: Մարդը տարբերվում է իրենից ավելի ցածր գտնվող կենդանիներից՝ իր ինքնությամբ և գործերով: Մենք երբեք չենք շփոթի ձիուն ձկան հետ, կամ կապիկին բզեզի հետ՝ նրանց նկատելի հատկանիշների պատճառով: Այնուամենայնիվ, ժամանակակից քրիստոնեության գազանանոցում մենք ոչ միայն անհնարին ենք համարում Աստծո զավակին սատանայի զավակից հստակորեն տարբերելը, այլև անընմբռնելի ենք համարում մտածելը, որ նրանց միջև ընդհանրապես կարող են տարբերություններ լինել:

Մենք չունենք որևէ մարդու դարձը վերջնականորեն հաստատելու կամ ժխտելու իշխանություն, և պետք է զգույշ լինենք նույնիսկ ինքներս մեզ դատելիս: Հավասարակշռությունը կարևոր է, և մենք պետք է ձգտենք խուսափել այս կրկնակի որոգայթներից՝ մի կողմից՝ թողտվության, և մյուս կողմից՝ խստության: Այնուամենայնիվ, թեև մենք չենք կարող հավաստիացում շնորհել կամ զրկել հավաստիացումից, սակայն կարող ենք զգուշացնել և պետք է զգուշացնենք մարդկանց, որպեսզի նրանք ստուգեն իրենց անձերը՝ սրբություն և արդարություն գործելու վերաբերյալ[324]:

324 Բ Կորնթացիների 13.5

Եթե Սուրբ գրքի լույսի ներքո նրանք պարզեն, որ անտարբեր են արդարության հանդեպ, որ մեղանչում են՝ առանց զղջալու և փոխվելու, որ անօրեն, անբարո և աշխարհիկ են, նրանք պետք է զգուշանան, քանի որ այս ամենը դարձի չեկած մարդկանց նշաններ են: Նրանց անհրաժեշտ է կոչ անել փնտրելու «Տիրոջը, քանի դեռ Նա գտնվում է», և կանչելու «Նրան, քանի դեռ Նա մոտ է» (Եսայի 55.6, NKJV): Եթե, այնուամենայնիվ, Սուրբ գրքի լույսի ներքո նրանք պարզեն, որ իրենք առաջին հերթին փնտրում են Աստծո թագավորությունը և Նրա արդարությունը[325], որ առաջընթաց ունեն Քրիստոսին կերպարանվելու մեջ, որ սգում են այն ամենի համար, ինչը դեռ անփոփոխ է[326], և փշրված հոգի ունեն, երբ իրենց մեղքերը հայտնի են դառնում իրենց[327], նրանք պետք է խրախուսվեն, քանի որ այս ամենը Աստծո զավակների նշաններ են:

ՏԱՐԲԵՐԵԼ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Երրորդ գլխի առաջին մի քանի խոսքերում Հովհաննես առաքյալը ծավալուն կերպով հակադրում է Աստծո զավակներին և սատանայի զավակներին: Թեև մարդկության նման բաժանումը կարող է անհանգստացնող թվալ մեր գերզգայուն մշակույթի համար, մենք պետք է հիշենք, որ այն սովորական է Սուրբ գրքի համար, որը հաճախ է բաժանում ամբողջ աշխարհն իրարամերժ կարգերի՝ հրեայի և հեթանոսի, հավատացյալի և անհավատի, եկեղեցու և այս աշխարհի:

Որքան էլ ինչ-որ մեկը վիրավորական համարի այս դասակարգումները, դրանցից ոչ մեկն այն աստիճան արմատական և կոպիտ չէ, որքան այս երկուսը՝ այս հատվածում: Հնարավո՞ր է արդյոք, որ ամբողջ աշխարհն իրականում բաժանված է Աստծո զավակների և սատանայի զավակների: Արդյո՞ք չկա միջին կարգ՝ այն անհավատների համար, որոնք չեն միաբանվել սատանայի հետ կամ Հիտլերի պես ոճրագործություններ չեն արել: Այս պնդումը չափազանց վիրավորական է թվում, սակայն այսպիսին է Նոր կտակարանի լեզուն: Համաձայն Հովհաննեսի, ինչպես նաև Քրիստոսի, այս աշխարհը բաժանված է երկու խմբի՝ քրիստոնյաների, որոնց հոգևոր հայրությունն Աստծուց է՝ Քրիստոսի միջոցով, և անհավատների, որոնք նույնանում են սատանայի հետ՝ Ադամի և իրենց իսկ անհնազանդության միջոցով:

Այս աստվածաշնչյան ճշմարտությունների լույսի ներքո սկսում ենք հասկանալ, թե ինչու Հովհաննեսն ավարտեց իր Առաջին թղթի այս բաժինը (3.10) այն պնդմամբ, որ գոյություն ունեն նկատելի տարբերութ-

325 Մատթեոս 6.33
326 Մատթեոս 5.4
327 Սաղմոս 51.17, Եսայի 66.2

յուններ հավատացյալի և անհավատի միջև, որ մարդու հավատքի դավանանքը կարող է ստուգվել և պետք է ստուգվի, որ հավաստիացումը փրկության մեջ պարզապես հիմնված չէ մարդու խոսքերի և զգացմունքների վրա, այլ՝ փոխված և փոխվող կյանքի գործնական ապացույցների[328]: Այս խոսքում Հովհաննեսն ասում է, որ տարբերությունը հավատացյալի և անհավատի միջև «հայտնի» է կամ ակնհայտ է: Այս բառը թարգմանված է հունարեն *«ֆաներո՛ս»* ածականից, որը նշանակում է «ակնհայտ, բացահայտ, պարզորեն ճանաչվող կամ իմացվող»: Մարկոսն օգտագործում է նույն բառարմատը և բառը՝ գրի առնելով Հիսուսի հռչակումը, որը Նա արեց սովորեցնելու ժամանակ. «Որովհետև ծածուկ բան չկա, որ *չհայտնվի*, և մի թաքուն բան չեղավ, որ դեպի հայտնություն չգար» (4.22, շեղագիրն ավելացված է):

Մեր դարձի ապացույցը որևէ խորհրդավոր կամ անիմանալի գաղտնիք չէ. այն երևում է մեր կյանքի ոճով: Տարբերությունները հավատացյալի և անհավատի միջև ակնհայտ են և հեշտորեն ճանաչելի են: Հովհաննեսը զարմանալի պարզությամբ ամփոփում է դրանք.

> Անհավատը մեղք է գործում և արդարություն չի գործում (3.8-10):
>
> Հավատացյալն արդարություն է գործում և մեղք չի գործում (3.7-9):

Համաձայն Հովհաննեսի, անհավատն առանձնանում է երկու չարագույժ իրողություններով՝ այն բանով, ինչ նա անում է, և այն բանով, ինչ նա չի անում: Նա մեղք է գործում և արդարություն չի գործում: Թեև այս երկու հատկանիշներն առանձին են նշված, դրանք, ըստ էության, վերաբերում են նույն բանին՝ անհնազանդությանը, Աստծո կամքի նշանակետից վրիպելուն կամ դրա չափանիշից շեղվելուն: Այսպիսով, անհավատը բացահայտվում է այն բանով, որ շարունակաբար անտեսում է Աստծո արդարությունը գործելը, ինչպես որ այն հայտնվում է պատվիրաններում, և շարունակաբար մասնակցում է այն ամենին, ինչ Աստված արգելել է: Սա ապացուցում է, որ նա միաբանված է սատանայի հետ, քանի որ նա մասնակցում է սատանայի գործերին, որոնք կործանելու համար Քրիստոսը եկավ, և գործում է այն մեղքերը, որոնք վերցնելու համար Քրիստոսը մահացավ[329]:

---

328 «Փոխված և փոխվող կյանք» արտահայտությունը կարևոր է, քանի որ այն ցույց է տալիս և՛ վերածնման սկզբնական զորությունը, և՛ սրբացման շարունակական աշխատանքը հավատացյալի կյանքում: Այս երկու իրողությունները պետք է միասնաբար դիտարկվեն: Իրական իմաստով, հավատացյալը փոխվել է վերածնման միջոցով, սակայն այլ իմաստով, որը հավասարապես իրական է, հավատացյալը շարունակում է փոխվել սրբացման շարունակական աշխատանքի միջոցով, որը շարունակվելու է մինչև նրա վերջնական փառավորումը Երկնքում:

329 Ա Հովհաննես 3.5,8

Մենք արդեն սեղմ անդրադարձանք այն բանին, որ սատանայի հետ միաբանվելու համար պարտադիր չէ, որ մարդը ներգրավված լինի որևէ խավար պաշտամունքի մեջ, ինչպիսիք են կախարդությունը և սատանայապաշտությունը: Ո՛չ էլ պարտադիր է, որ նա «մեծ» մեղավոր լինի՝ այնպիսին, որը բացահայտ արտահայտում է իր թշնամանքն Աստծո հանդեպ և մատնել է իրեն ամեն տեսակի անբարոյության: Իրականում, շատերը, որոնք նույնացնում են իրենց քրիստոնեության և ավետարանական հավատքի հետ, նույնքան մեղավոր են: Թեև նրանք պնդում են, որ հավատարիմ են Քրիստոսին, նրանց կյանքի ամբողջ ընթացքն ապացուցում է, որ այդ պնդումը սուտ է: Նրանք աղոթել են մեղավորի աղոթքը, ամեն շաբաթ հավաքույթների են հաճախում և արտահայտում են այնպիսի բարոյականություն, որը մեկ քայլ բարձր է այս աշխարհի չարիքից: Այնուամենայնիվ, նրանք խորասուզված են այս աշխարհի ցանկությունների և գործերի մեջ: Նրանք գրեթե հետաքրքրված չեն Սուրբ գիրքը հասկանալով և չգիտեն Աստծո կամքը: Որպես արդյունք, նրանք աստվածաշնչյան զանազանության ապշեցուցիչ բացակայություն են դրսևորում և կարող են ազատորեն մասնակցություն ունենալ մեղքի մեջ՝ առանց, նույնիսկ, նվազագույն խղճի խայթի: Պողոս առաքյալի խոսքով, նրանք «աստվածապաշտության կերպարանք ունեն, բայց նրա զորությունն ուրացած են» (Բ Տիմոթ. 3.5):

Մենք չպետք է խաբվենք՝ մտածելով, որ անտարբերությունն աստվածապաշտության հանդեպ և Աստծո օրենքն անտեսելը ավելի փոքր հանցանքներ են, քան բացահայտ ապստամբությունը: Համաձայն Ա Հովհաննես 3.4-ի, ամեն մեղք անօրինություն է՝ դավաճանություն Աստծո դեմ և պատերազմական կոչ ընդդեմ Նրա գահի: Այն մարդիկ, որոնք նույնանում են Քրիստոսի հետ, սակայն բոլորովին հետաքրքրված չեն Նրա Խոսքով, նույնքան մեծ վտանգի մեջ են, որքան նրանք, ովքեր ապրում են բացահայտ անհնազանդությամբ և բռունցք են թափ տալիս Աստծո երեսին: Ըստ էության, Լեռան քարոզի վերջում Հիսուսը զգուշացրեց դավանող աշակերտներին հենց այս մասին. «Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23):

Այս զգուշացման մեջ Քրիստոսն օգտագործում է նույն բառը, որը Հովհաննեսն օգտագործում է այս գլխի հիմնական հատվածում՝ «անօրինություն»-ը: Նման Հովհաննեսին, Նա հայտնում է, որ նրանք, ովքեր Տեր են անվանում Իրեն, սակայն շարունակում են ապրել իրենց սեփական օրենքներով, կդատապարտվեն դատաստանի օրը: Կրկին, ո՛չ Քրիստոսը, ո՛չ Հովհաննեսը չեն սովորեցնում արդարացում օրենքի միջոցով, կամ հարատևություն գործերի միջոցով: Մենք փրկված ենք

միայն շնորհքով՝ միայն հավատքի միջոցով, և դա մեզնից չէ, որ ոչ մի մարդ չպարծենա: Այնուամենայնիվ, ճշմարիտ շնորհքը երբեք չի տանում անտինոմիականության կամ անօրինության, այլ՝ արդարության, Քրիստոսին կերպարանվելուն և ճշմարիտ աստվածապաշտության: Պողոս առաքյալը հաստատում է այս ճշմարտությունը Տիտոսին ուղղված իր նամակում. «Որովհետև Աստծո շնորհքը երևաց, որ փրկարար է, բոլոր մարդկանց համար, որ *խրատում է մեզ, որ ուրանանք ամբարշտությունը և աշխարհական ցանկությունները, և խոհեմությամբ և արդարությամբ և աստվածապաշտությամբ ապրենք այս աշխարհում»* (2.11,12, շեղագիրն ավելացված է):

Շնորհքը չի ազատում մեզ Աստծո արդարությունից, այսինքն՝ թույլ չի տալիս ներկայացնել մեր մարմնի անդամները մեղքին՝ որպես անիրավության գործիքներ[330]: Այն անվավեր չի դարձնում Հին կտակարանի մեծ ճշմարտությունները, որոնք գրված են մեր սովորելու համար[331], և գահընկեց չի անում Քրիստոսին՝ դարձնելով ընդամենը դրածո, որը չունի գերագույն կամք և իշխանություն[332]: Շնորհքի նպատակը երբեք արդարության արժեզրկումը և անօրինության առաջխաղացումը չի եղել, սակայն թվում է՝ այսօր գերակշռող կարծիքը հենց այսպիսին է: Այնպիսի տպավորություն է, որ Ավետարանական շարժման ներսում քչերն են մտածում իրենց կյանքը Սուրբ գրքի ցուցումներով կառուցելու մասին, և ցանկացած հիշատակում Սուրբ գրքի կողմից սահմանված որոշակի և հստակ բարոյական սկզբունքների մասին անմիջապես պիտակվում է որպես օրինապաշտություն: Չափազանց շատ ավետարանականներ, թվում է, գոհ են՝ լինելով անտեղյակ Սուրբ գրքի վարդապետությունից, ազատ դրա հանդիմանությունից, չազդված դրա շտկումից և չձևավորված դրա խրատով[333]: Չափազանց շատերն այնպես են վարվում, ասես Իսրայելում թագավոր չկա, և յուրաքանչյուրը թողնված է իր աչքին հաճո եղածն անելու: Այսպիսով, եկեղեցին հեղեղված է այնպիսի մարդկանցով, որոնք Փրկիչ են անվանում Քրիստոսին և հուսացած են հավիտենական կյանքին, սակայն անտարբեր են Աստծո հայտնված կամքի հանդեպ, ինչը հանգեցնում է անօրեն կյանքի: Սա ողբերգական է, քանի որ նրանք կեղծ հավաստիացում ունեն, որն ավարտվելու է վերջնական և անդառնալի դատաստանով:

Ինչպես և անհավատը, ճշմարիտ քրիստոնյան նույնպես առանձնանում է երկու իրողությամբ՝ այն բանով, ինչ նա անում է, և այն բանով, ինչ նա չի անում: Այնուամենայնիվ, սրանով հավատացյալի և անհավա-

330 Հռոմեացիների 6.12,13
331 Հռոմեացիների 15.4
332 Ղուկաս 6.46
333 Բ Տիմոթեոս 3.16

տի ընդհանրություններն ավարտվում են, և սկսվում է մեծ հակադրությունը, քանի որ քրիստոնյան արդարություն է գործում, որից անհավատը խորշում է, և քրիստոնյան խորշում է մեղքից, որն անհավատը շարունակում է գործել[334]: Հովհաննեսի համար, նրանց վարքի այս անսխալական հակադրության պատճառը պարզ է. Ճշմարտապես դարձի եկած մարդիկ չեն կարող սովորականի պես մեղք գործել, քանի որ նրանք ծնվել են Աստծուց, և Աստծո սերմը բնակվում է նրանցում[335]:

«Սերմ» բառը թարգմանված է հունարեն *«սպե՛րմա»* բառից: Այն կարող է բառացիորեն վերաբերել սերմին, որից ծլում է բույսը, կամ սերմնաբջջին, որից բեղմնավորվում է մարդկային կյանքը: Այնուամենայնիվ, այս խոսքում լավագույն տարբերակն այս բառն այլաբանորեն հասկանալն է՝ որպես Սուրբ Հոգու աստվածային կյանք, որը գործում է հավատացյալի անձում, որի միջոցով նա վերածնվում է և շարունակաբար սրբացվում է: Խոսելով աստվածային սերմի և վերստին ծնունդի մասին, Հովհաննեսը ցանկանում է շեշտադրել, որ դարձն Աստծո գերբնական աշխատանքն է, և քրիստոնյան նոր ստեղծված է՝ նոր բնությամբ, որը վերստեղծվել է Աստծո պատկերով՝ արդարությամբ և սրբությամբ[336]: Պողոս առաքյալի խոսքերով, քրիստոնյան դարձել է աստվածային բնության մասնակիցը և աստվածային զորության հասցեատերը, ինչի արդյունքը և՛ կյանքն է, և՛ աստվածապաշտությունը[337]:

Քանի որ Աստված կատարել է այս արտասովոր աշխատանքը յուրաքանչյուր հավատացյալի կյանքում, Հովհաննեսը մեծագույն վստահությամբ կարող է գրել՝ ով որ Աստծուց է ծնված, մեղք չի անում, կամ՝ որ հավատացյալն ընդհանրապես կարող է այսպիսին լինել (3.9): Սա չի նշանակում, որ հավատացյալն առանց մեղքի է, անընկալունակ է գայթակղության հանդեպ, ազատ է մարմնի հետ պայքարից կամ չի կարող բարոյական ձախողում ունենալ: Այս պնդումը նշանակում է, որ Աստծո Հոգու միջոցով վերածնված մարդը չի կարող ապրել շարունակական մեղքի մեջ, ինչպես որ ձուկը չի կարող ջրից դուրս երկար ապրել: Այս անկարողությունը չի բխում հավատացյալի կամքի ուժից, այլ՝ Աստծո աշխատանքից, որը կատարվել է և կատարվում է նրանում: Աստված դարձրել է նրան նոր ստեղծված, որը պարզապես տանել չի կարողանում մեղքը և անարդարությունը, որոնցով նա մի ժամանակ հիանում էր: Նա չի կարող մեղանչել՝ առանց խղճի ուժգին խայթ զգալու և սրտխառնոցի՝ մեղքի պղծության պատճառով: Այս իրողությունը, Աստծո նախախնամության շարունակական աշխատանքի հետ մեկտեղ, որն

334 Ա Հովհաննես 3.7,9,10
335 Ա Հովհաննես 3.9
336 Բ Կորնթացիների 5.17, Եփեսացիների 4.24
337 Բ Պետրոս 1.3,4

արտահայտվում է՝ հավատացյալի կյանքում կարգուկանոն հաստատելով, հավաստիացնում է, որ հավատացյալը, որն ընկնում է մեղքի մեջ, շուտով ապաշխարությամբ ետ կընկրկի՝ մաքրման և վերականգնման ձգտելով[338]:

Նոր կտակարանը տեղ չի թողնում ժամանակակից Ավետարանական շարժման մեջ տարածված կարծիքին այն մասին, որ ճշմարտապես վերստին ծնված մարդը կարող է անտարբեր լինել արդարության հանդեպ և ապրել բացահայտ մեղքի և ապստամբության մեջ: Ովքեր դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ և այս կերպով են ապրում, պետք է մեծապես մտահոգվեն իրենց հավիտենական բարեկեցությամբ: Նրանք չպետք է խաբվեն, այլ պետք է ուշադրություն դարձնեն Հովհաննեսի պարզ ստուգմանը. «Նա, որ արդարություն է անում, արդար է», բայց «ամեն, ով որ արդարություն չի անում, նա Աստծուց չէ»[339]:

338 Ա Հովհաննես 1.8-10
339 Ա Հովհաննես 3.7,10

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔ

Հաղթել աշխարհին

«Որովհետև ամեն, ով որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Եվ սա է հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ մեր հավատքը: Եվ ո՞վ է, որ հաղթում է աշխարհին, եթե ոչ նա, որ հավատում է, թե Հիսուսն Աստծո Որդին է»:

– Ա Հովհաննես 5.4,5

«Դուք Աստծուց եք, որդյակնե՛ր, և հաղթեցիք նրանց, որովհետև ավելի մեծ է Նա, որ ծեզանում է, քան թե նա, որ աշխարհի մեջ է: Նրանք աշխարհից են. նրա համար աշխարհից են խոսում, և աշխարհը լսում է նրանց: Մենք Աստծուց ենք. ով որ Աստծուն ճանաչում է, լսում է մեզ. ով որ Աստծուց չէ, չի լսում մեզ: Սրանից ենք ճանաչում ճշմարտության Հոգին և խաբեության հոգին»:

– Ա Հովհաննես 4.4-6

Ինչ-որ իմաստով, մարդիկ ունեն միայն երկու խնդիր՝ մեղքի դատապարտությունը և մեղքի իշխանությունը[340], և երկուսն էլ լուծվում են Հիսուս Քրիստոսի Անձում և Նրա կատարած աշխատանքով: Մենք արդարացված ենք Նրա հանդեպ ունեցած հավատքով. այնպես որ, մեղքի դատապարտությունը չեղյալ է դարձվել. «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար, որ մարմնավորապես չեն վարվում, այլ՝ հոգևորապես» (Հռոմ. 8.1): Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի միջոցով մենք վերստին ծնվում ենք և զորություն ենք ստանում՝ կյանքի նորոգության մեջ վարվելու համար, և մեղքի իշխանությունը խաթարվում է[341]: Հավատացյալը հաղթող չէ՝ իր կամքի ուժի կամ անձնական նվիրման պատճառով: Նա հաղթում է այն բանով, ինչ

340 Հովիվ Չարլզ Լեյտեր, զրույց հեղինակի հետ Հռոմեացիների 6-րդ գլխի մասին:
341 Հռոմեացիների 6.4-6

կատարվել է իր համար խաչի վրա, նաև այն բանով, ինչ կատարվել է և կատարվում է իրենում Սուրբ Հոգու աշխատանքի և Աստծո նախախնամության հավատարիմ ներգործության միջոցով:

Համաձայն Նոր կտակարանի ուսուցման, Աստծո զավակը բախվում է բազմաթիվ պայքարների՝ ներսից և դրսից: Երբեմն նա պարտված է և նույնիսկ՝ հուսալքված: Այնուամենայնիվ, նրա կյանքի ամբողջ ընթացքը պարուրված է իրական հաղթանակի մթնոլորտով: Թեև նա յոթ անգամ ընկնի, կրկին ու կրկին կկանգնի[342]: Թեև նա բազմաթիվ խավար ձորերով անցնի, նրա պանդխտությունն առաջնորդում է նրան ավելի ու ավելի մեծ բարձունքների: Թեև երբեմն նա ձախողումներ ունենա, վերջին խոսքը չի պատկանում ձախողմանը: Թեև քրիստոնյան պարտություններ կրի, նա, ի վերջո, պարտված չէ: Այդպիսին է փրկության բնույթը, որովհետև այն Աստված, Ով բարի գործ է սկսել, կկատարի այն: «1689 թվականի Լոնդոնի Մկրտական հավատքի դավանանքի» 17-րդ գլխում այս ճշմարտությունը ներկայացված է հետևյալ կերպով.

> «Ում որ Աստված ընդունել է Սիրելիի մեջ, արդյունավետ կերպով կանչել է և սրբացրել է Իր Հոգով, նաև տվել է Իր ընտրյալների պատվական հավատքը, չի կարող ո՛չ լիովին, ո՛չ էլ վերջնականորեն ընկնել շնորհքից, այլ, անկասկած, մինչև վերջ կհարատևի դրանում և հավիտյան կփրկվի, քանի որ Աստծո պարգևները և կոչումներն առանց զղջալու են, նաև այն պատճառով, որ Նա դեռ ծնում և սնուցում է նրանցում հավատք, ապաշխարություն, սեր, ուրախություն, հույս և Հոգու բոլոր շնորհները՝ դեպի անմահություն: Ու թեև շատ փոթորիկներ և հեղեղներ բարձրանան և հարվածեն նրանց, դրանք երբեք չեն կարողանա հեռացնել նրանց այն հիմքից և ժայռից, որի վրա նրանք հավատքով ամրացած են: Թեև անհավատության և սատանայի գայթակղությունների միջոցով Աստծո լույսը և սերը որոշ ժամանակով կարող են մթագնեցվել և ծածկվել նրանցից, Նա դեռ նույնն է, և նրանք անպատճառ կպահվեն Աստծո զորությամբ՝ փրկության համար, որում նրանք կվայելեն այն, ինչ գնվել է իրենց համար, քանի որ նրանք փորագրված են Նրա ձեռքերի ափերին, և նրանց անունները գրված են կյանքի գրքում՝ ամբողջ հավիտենությունից առաջ»:

Այս փրկության ստուգման միջոցով մենք իմանում ենք, որ ճշմարիտ դարձի կարևորագույն նշաններից մեկն այն է, որ այս աշխարհը չի հաղթի քրիստոնյային այնպես, որ նա ուրանա Քրիստոսին և վերադառնա դրան: Ո՛չ էլ այս աշխարհին կհաջողվի սահմանափակել Աստծո

342 Առակաց 24.16

աշխատանքը հավատացյալի կյանքում՝ նրան անպտուղ դարձնելով: Մենք գիտենք, որ ճանաչում ենք Աստծուն և ճշմարտապես վերստին ծնված ենք, որովհետև, թեև անցնում ենք ներսից և դրսից մոլեգնող անթիվ պայքարներով, ինչպես նաև հաճախակի ձախողումներ և անկումներ ենք ունենում, Աստված պահպանում է մեզ և շարունակում է գործել մեզանում՝ մեր բարու և Իր փառքի համար:

ԱՅՍ ԱՇԽԱՐՀՆ ԸՆԴԴԵՄ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻ

Ինչպես սովորեցինք նախորդ գլուխներից մեկում, այս աշխարհը ներկայացնում է այն ամենը, ինչը թշնամաբար է տրամադրված Աստծո հանդեպ, և այն ընդդիմանում է քրիստոնյային, որը ձգտում է գնալ նեղ ճանապարհով՝ համաձայն Քրիստոսի պատվիրանների: Ջոն Բունյանը դիպուկ նկարագրում է այս էպիկական պայքարը *«Ուխտագնացի ճանապարհորդությունը»* գրքում: Այն Քրիստոնյայի կյանքի մասին է, որը երկար ճանապարհ է անցնում՝ Կործանման քաղաքից դեպի Երկնային քաղաք գնալով: Իր ճանապարհորդության ընթացքում նա հանդիպում է այն ամենին, ինչ այս աշխարհը կարող է ուղղել իր դեմ՝ անթիվ գայթակղություններ, խաբեբա մարդիկ և դևեր, հուսալքող իրադարձություններ, չար զրպարտություն, անգութ մեղադրանքներ, նեղություններ, հալածանքներ և այս աշխարհ վերադառնալու անթիվ հնարավորություններ: Այնուամենայնիվ, չնայած շարունակ բախվելով հակառակություններին և ձախողումներին, Քրիստոնյան հաղթում է «Գառան արյունով» (Հայտն. 12.11), «Աստծո Խոսքով» (Ա Հովհ. 2.14) և Նրա նախախնամությամբ, Ով ասաց. «Երբե՛ք չեմ թողնի քեզ» (Եբր. 13.5):

Որպես քրիստոնյաներ, երբեք չպետք է զարմանանք կամ ցնցվենք այս աշխարհի թշնամությունից, որը մեր դեմ է ուղղված, ո՛չ էլ այն սաստկությունից, որով այս աշխարհը փորձում է խանգարել մեր առաջընթացին Քրիստոսի մեջ: Ահա թե ինչու է Պողոս առաքյալը հայտնում, որ «ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն» (Բ Տիմոթ. 3.12): Պետրոս առաքյալը նույնպես հորդորում է մեզ ոչ մի դեպքում չզարմանալ այն կրակով բորբոքված փորձություններից, որոնցով մենք պետք է անցնենք, ասես թե մեզ հետ անսովոր մի բան է կատարվում[343]: Հավատացյալը և այս աշխարհը նույնքան տարբեր են, որքան արդարությունը և անօրինությունը, լույսը և խավարը, Քրիստոսը և Բելիալը, կենդանի Աստված և համր կուռքերը[344]: Այնպես որ, հակառակությունը և թշնամությունը մշտապես գոյություն են ունենալու այս երկուսի միջև՝ առանց հաշտության նույ-

343 Ա Պետրոս 4.12
344 Բ Կորնթացիների 6.14-16

նիսկ աննշան հնարավորության: Քանի որ պայքարը քրիստոնյայի և այս աշխարհի միջև երբեք չի հանգուցալուծվելու, նա պետք է հուսա Աստծուն, նայի Քրիստոսին և պատերազմի իր հավատքի բարի պատերազմը: Նա պետք է ուժեղ լինի Տիրոջ մեջ և Նրա զորության կարողության մեջ, և հագնի Աստծո սպառազինությունն ամբողջությամբ, որպեսզի կարողանա հաստատ կանգնել և՛ դևերի, և՛ մարդկանց հնարների դեմ[345]:

Այս երկրի վրա երբևէ չի եղել այնպիսի պատերազմ, որը պահանջում էր ավելի մեծ տոկունություն և հաստատակամություն, որքան քրիստոնյայի դեմ ամեն օր ուղղված պատերազմը: Այս երկրի վրա երբևէ չի քայլել այնպիսի բանակ, որն իր ուժով և խորամանկությամբ կարող է համեմատվել հավատացյալի դեմ ամեն օր պայքարող բանակի հետ: Մենք թշնամու թիկունքում ենք՝ օտար աշխարհում, որը հակառակ է մեր վարդապետությանը և բարոյականությանը: Մենք շրջապատված ենք խաբեբաներով՝ և՛ մարդկանցով, և՛ դևերով: Մեզ կշտամբում են կրոնական մոլեռանդության համար և խրախուսում են հաշվի առնել փոխզիջման գնալու առավելությունները: Ամենուր ձայներ են հնչում, որոնք գայթակղեցնում են մեզ, որ ուրանանք մեր Տիրոջը, թողնենք մեր կանչը և վերադառնանք Կործանման քաղաք:

ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏ Է

Հաշվի առնելով այս աշխարհի չթուլացող հակառակությունը՝ միգուցե հարց առաջանա, թե ինչպես է կարելի թեկուզ ինչ-որ չափով հավաստիացում ունենալ, որ քրիստոնյան հաղթանակ կտանի և չի նահանջի: Պատասխանը պարզ է. մեր հույսը հիմնված չէ մեր բարոյական ամրության, կրոնական նվիրման և անձնական աստվածապաշտության վրա, այլ՝ մեր Փրկչի մեծության և այն փրկության բնույթի, որը Նրանում մեզ է պատկանում: Պողոս առաքյալի խոսքով՝ «[Մենք] առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց» (Հռոմ. 8.37):

Առաջին Հովհաննես 5.4,5-ում քրիստոնյայի հաստատ հաղթանակը վերագրվում է երեք կարևոր իրողության: Նա հաղթում է վերստին ծնունդով, հավատքով Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի հանդեպ և իրենում Բնակվողի մեծությամբ[346]: Այլ կերպ ասած, մեր հաղթանակը հաստատ է, որովհետև այն Նրա հաղթանակն է՝ ստացված Նրա զորությամբ և կատարված Նրա հաճության և փառքի համար: Քրիստոնյայի պայքարն իրական է: Նա կանչված է ջանք անելու[347], իր ու-

345 Եփեսացիների 6.10,11
346 Ա Հովհաննես 4.4, 5.4,5
347 Ղուկաս 13.24, Հռոմեացիների 15.30

նեցածը պահելու[348] և պատերազմելու[349]՝ մեծագույն ջերմեռանդությամբ և նախանձավորությամբ[350]: Այնուամենայնիվ, երբ պատերազմի դաշտի փոշին նստի, և ամեն թշնամի պարտված լինի, քրիստոնյան կխոստովանի, որ թե՛ պատերազմը, թե՛ հաղթանակը Տիրոջինն էին[351]: Եթե մենք հավատացինք, ապա հաղթանակն այն հավատքով էր, որը Նա էր տվել մեզ[352]: Եթե մենք չընկանք գայթակղության մեջ, պատճառն այն է, որ Նա փրկեց մեզ[353]: Եթե մենք դուրս եկանք կասկածի և հուսալքության խավար լաբիրինթոսներից, պատճառն այն է, որ Նա էր մեր առաջնորդը[354]: Եթե պատերազմի ժամանակ մենք հաստատակամ բնավորություն դրսևորեցինք, ապա Նա էր ստեղծել այդ բնավորությունը մեզանում[355]: Եթե մենք կանգնեցինք, ապա Նա էր, որ կանգնեցրեց մեզ[356]: Եթե մենք աշխատեցինք մեծագույն ջանասիրությամբ և անձնազոհությամբ, դա միայն Նրա շնորհքով էր[357]: Ոչ մի քրիստոնյա, որը երբևէ ճանաչել է այս շնորհքը, երբեք չի վիճի այս փաստարկների հետ: Նրանցից ոչ ոք չի մտածի, որ Աստծուն չափազանց բարձր գովեստ է տրվում, և չի փորձի ավելի բարձր գովեստ վերագրել իրեն: Ավելին, քրիստոնյաները կբացականչեն Դավիթ Թագավորի և Պողոս առաքյալի հետ.

> «Ոչ թե մեզ, Տե՛ր, ոչ թե մեզ, այլ Քո անվա՛նը փառք տուր՝
> Քո ողորմության համար և Քո ճշմարտության համար»
> (Սաղմ. 115.1):

> «Նա, որ պարծենում է, թող Տիրոջով պարծենա»
> (Ա Կորնթ. 1.31):

Համաձայն Հովհաննեսի, առաջին իրողությունը, որը հավաստիացնում է քրիստոնյայի հաղթանակը, վերստին ծնունդն է. «Որովհետև ամեն, ով որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհը» (Ա Հովհ. 5.4): Այս աշխատության մեջ շատ անգամներ ենք անդրադարձել այս վարդապետությանը: Վերստին ծնունդն Աստծո զարմանալի աշխատանքն է, որով ծայրաստիճան արատավորված մարդը, որը թշնամաբար է վերաբերվում Աստծուն և չի կարող հնազանդվել Նրա կամքին[358], վերափոխ-

348 Ա Կորնթացիների 15.2, Ա Թեսաղոնիկեցիների 5.21, Եբրայեցիների 3.6,14, 4.14, 10.23, Հայտնություն 2.25, 3.11
349 Եփեսացիների 6.12, Ա Տիմոթեոս 1.18, 6.12
350 Հռոմեացիների 12.11, Եբրայեցիների 6.11, Բ Պետրոս 1.5
351 Ա Թագավորաց 17.47, Բ Մնացորդաց 20.15, Զաքարիա 4.6
352 Մարկոս 9.23
353 Մատթեոս 6.13, Ա Կորնթացիների 10.13, Բ Պետրոս 2.9
354 Սաղմոս 5.8, 31.3, 43.3, 48.14, 139.10
355 Եզեկիել 36.26, Բ Կորնթացիների 5.17
356 Սաղմոս 18.33, 66.9, Եզեկիել 37.10, Հռոմեացիների 14.4
357 Ա Կորնթացիների 15.10, Եփեսացիների 3.7
358 Հռոմեացիների 8.7

վում է՝ դառնալով նոր ստեղծված, որը սիրում է Նրան, հիանում է Նրա կամքով և փնտրում է Նրա փառքը: Այս իրողությունը բացատրում է, թե ինչպես իրենց հանցանքների և մեղքերի մեջ մահացած մարդիկ կենդանացան Աստծո համար[359], և պատասխանում է շատ վաղուց տրված մի հարցի. «Մի՞թե կկենդանանան այս ոսկորները» (Եզեկ. 37.3):

Վարդապետությունը վերստին ծնունդի մասին կարելի է ժամանակակից Ավետարանական շարժման կորսված վարդապետություն անվանել: Այն չհասկանալը և չքարոզելը մի շարք հետևանքների է հանգեցրել: Դարձի փառքը նվազեցվել է՝ ներկայացվելով ընդամենը որպես Քրիստոսին հետևելու մարդկային որոշում, և գրեթե ոչինչ չի ասվել այն հրաշքի մասին, որն անհրաժեշտ է, որպեսզի դա տեղի ունենա: Քրիստոնյան ընդամենը դիտարկվում է որպես մարդ, որը որոշում է կայացրել: Այն, թե արդյո՞ք նա աճում և պտուղ է բերում, կամ արդյո՞ք նա շարունակում է մնալ հավատքի մեջ, կախված է նրա անձնական որոշումներից: Այսպիսով, նա ստացել է հավիտենական կյանքը, քանի որ ճիշտ որոշում է կայացրել՝ ընտրելով Քրիստոսին, բայց կարող է շարունակել ապրել մարմնավոր, աշխարհիկ և անբարո կյանքով, եթե որոշի չունենալ առաջընթաց Աստծո մեջ: Այս կարծիքը հայտնում է անհիրազեկությունը դարձի բնույթի մասին և այնպես է ներկայացնում փրկության ամբողջ ընթացքը[360], ասես այն կախված է գրեթե կամ բոլորովին չվերափոխված բնություն ունեցող մարդու կամքից:

Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ վերստին ծնունդը և դարձը պատշաճ կերպով են հասկացվում, մարդն ապաշխարում է և հավատում է՝ Աստծո գերբնական աշխատանքի արդյունքում, որը վերափոխում է նրա բնությունը, զգացմունքները և կամքը: Նա նոր ստեղծված է, որը սիրում է Աստծուն, ցանկանում է հաճեցնել Նրան և ձգտում է կերպարանվել Նրա պատկերով: Նա ճիշտ որոշում է կայացնում, քանի որ ճիշտ ձգտումներ ունի. նրա բնությունը նորոգվել է Աստծո նմանությամբ՝ ճշմարիտ արդարությամբ և սրբությամբ: Այսպիսով, նա հաղթում է՝ շնորհիվ այն բանի, թե ինչպիսին է ինքը դարձել վերածնման հրաշալի աշխատանքի միջոցով:

Երկրորդը՝ Ա Հովհաննես 5.4-ը վերագրում է քրիստոնյայի հաստատ հաղթանակը Քրիստոսի Անձի և աշխատանքի հանդեպ ունեցած հավատքին: Հավատացյալի արդար դիրքն Աստծո առջև՝ միայն հավատքով, քրիստոնեության հիմնաքարն է: Հավատացյալի կյանքում, առանց

359 Եփեսացիների 2.1-5

360 Փրկության ամբողջ ընթացքը վերաբերում է ամբողջական փրկությանը կամ դրա երեք ժամանակներին՝ անցյալի արդարացմանը, ներկա սրբացմանը և ապագա փառավորմանը:

այս ճշմարտության, չկա հիմք, որի վրա կարելի է կառուցել, չի կարող լինել խաղաղություն, ինչպես նաև ուժ՝ ներսից և դրսից եկող հարձակումներին հակառակվելու համար: Առանց հավատքով արդարանալու վարդապետության, հաղթանակն անհնարին է:

Դարձի գալու համար մարդը պետք է ունենա առնվազն որոշ տեղեկություն Աստծո արդար չափանիշի խստության մասին և այն մասին, որ ինքը չի կարող համապատասխանել դրան: Ավելի շատ ճանաչելով Սուրբ գիրքը՝ նա ավելի է գիտակցում ահռելի տարբերությունը Աստծո բնավորության և իր հատկանիշների միջև, Աստծո պահանջների և իր կարողության միջև: Այս գիտելիքը կարող էր հուսալքության և պարտության եզրին հասցնել հավատացյալին, եթե նա հավաստիացում չունենար այն հստակ, անքակտելի և անփոփոխ արդարության մեջ, որը վերագրվել է իրեն՝ Քրիստոսին հավատալու միջոցով: Նա կարող է հաղթել հուսալքվելու յուրաքանչյուր գայթակղություն, միայն որովհետև գիտի, որ ինքը հավատքով արդարացել է, որ ինքը Քրիստոսի արդարությունն է հագել, և որ իր ճիշտ դիրքն Աստծո առջև հիմնված չէ իր առաքինության կամ արժանիքի վրա, այլ Նրա առաքինության և արժանիքի վրա, որը և՛ անթերի է, և՛ անսխալական է: Նա հաղթող է նույնիսկ իր տկարության և ձախողման մեջ, որովհետև վստահում է Ավետարանի հաստատ խոսքին.

> «Արդ մենք, հավատքով արդարացած լինելով, Աստծո հետ խաղաղություն ունենք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Հռոմ. 5.1):

> «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար» (Հռոմ. 8.1):

Հավատացյալի խոչընդոտների թվում են նրա ձախողումները, նաև կասկածն ու հուսալքությունը, որոնք բխում են նրա ներսից: Նա նույնպես բախվում է սաստիկ մեղադրանքների, որոնք գալիս են եղբայրների չարախոսից՝ առաջին օձից, որը բանսարկու և սատանա է կոչվում, որը մոլորեցնում է ամբողջ աշխարհը, և որը բարկությամբ է լցված, որովհետև գիտի, որ իր ժամանակը կարճ է, և շրջում է մռնչացող առյուծի պես՝ փնտրելով, թե որին կուլ տա[361]: Նա դաժան և անողորմ թշնամի է, որն աներևակայելի ատելությամբ ատում է Աստծո ժողովրդին: Նա ձգտում է կործանել նրանց՝ դժոխքից բոցավառվող եռանդով:

Թեև սատանան մեծ զինանոց ունի, որից կարող է օգտվել, նրա մեծագույն մարտավարություններից մեկն է մատնացույց անել հավատացյալի ձախողումները և համոզել նրան, որ նա զուրկ է Աստծո շնորհքից:

361 Ա Պետրոս 5.8, Հայտն. 12.9,10,12

Այս թրի մի սայրով նա խոցում է հավատացյալին, իսկ մյուսով կտրում է ապաքինման հույսը: Նա անում է սա՝ չափազանցնելով հավատացյալի ձախողումը և փոքրացնելով Իր զավակների հանդեպ Աստծո սիրո անպայմանական բնույթը:

Եթե քրիստոնեությունը գործերի կրոն լիներ կամ քարոզեր որևէ լրացուցիչ վարդապետություն, որը պահանջում է մեր կողմից նույնիսկ նվազագույն անձնական արդարություն, մենք հուսահատության կհասնեինք: Մենք դատապարտությամբ կհեռանայինք քրիստոնեական հավատքից և կհամարեինք դրա ուսմունքներն աստվածային հնարք, որը պահանջում է շատ ավելին, քան երբևէ կարող ենք տալ: Այն ավելի դաժան կլիներ, քան հունական դիցաբանության վատագույն պատմությունը, որում աստվածները խաղում էին մարդկության ճակատագրերի հետ և հրճվում էին նրանց տառապանքով: Եվ սատանան ուզում է, որ մենք հենց սրան հավատանք:

Բայց քրիստոնեությունն ամենևին չի առնչվում գործերի վրա հիմնված կրոնների հետ: Իրականում, այն շնորհք է՝ անթերի և անխառն: Մարդը չի արդարանում հավատքի և գործերի համադրությամբ, այլ՝ շնորհքով՝ հավատքի միջոցով: Հավատացյալի գործերը չեն լրացնում Քրիստոսի կատարյալ աշխատանքը և ոչինչ չեն ավելացնում դրան, այլ բխում են դրանից: Նրանք, ովքեր հավատքով արդարացել են, նույնպես Հոգով վերածնվել են. նրանք դարձել են նոր ստեղծվածներ՝ նոր զգացմունքներով, որոնք հակված են կատարելու Աստծո կամքը: Ամենուր, որտեղ քրիստոնեություն կա՝ իր զտագույն տեսքով, քարոզվում է, որ փրկությունը հավատքով է, իսկ գործերը բխում են փրկությունից և դրա ապացույցն են:

Սատանան ուզում է, որ խեղաթյուրենք այս գեղեցիկ վարդապետության հաջորդականությունը՝ համադրելով գործերը և հավատքը, և հավատանք, որ գործերն Աստծո փրկարար աշխատանքի միջոցն են, ոչ թե արդյունքը: Այս հասկացությունները միախառնելն աղավաղում է Սուրբ գրքի ուսմունքը փրկության մասին, ըստ որի շնորհքը և գործերն իրարամերժ են: Ինչպես որ Պողոսը գրում է Հռոմի եկեղեցուն. «Բայց եթե շնորհքով է, էլ գործերից չէ. ապա թե ոչ, շնորհքն էլ շնորհք չի լինի» (Հռոմ. 11.6): Կրկին, այս պնդումը չի հակասում Հակոբոսին, որը գրում է, որ հավատքն առանց գործերի մեռած է: Մենք արդարանում ենք միայն շնորհքով՝ միայն հավատքի միջոցով, բայց արդարացման և վերածնման ապացույցը մեր գործերն են:

Հավատքն այն միջոցն է, որով հավատացյալը հաղթում է այս աշխարհին և տեղի չի տալիս հրապուրիչ գայթակղություններին և դաժան հարձակումներին: Ներսից և դրսից մղվող պատերազմներում, բախվելով թշնամիների և ձախողումների, քրիստոնյան հանգիստ է առնում միայն

Քրիստոսի անսասան հիմքի վրա: Նա պարծենում է Քրիստոս Հիսուսով և «մարմնի վրա վստահություն» չունի (Փիլիպ. 3.3): Երբ կասկածներ են ծնվում, և թշնամին կատաղի հարձակվում է, հավատացյալը չի նայում իր ներսը՝ անձնական առաքինություն կամ ուժ գտնելու համար, այլ հակահարված է տալիս թշնամու բիրտ մեղադրանքներին՝ հեռացնելով իր հայացքն իր անձից, մատնացույց անելով Աստծուն՝ Քրիստոսում ունեցած իր դիրքից, և հաղթականորեն աղաղակելով. «Ո՞վ է, որ Աստծո ընտրվածների դեմ մեղադիր լինի: Աստված է, որ արդարացնում է: Ո՞վ է, որ դատապարտի: Քրիստոսը, որ մեռավ, և ավելին՝ որ հարություն էլ առավ և Աստծո աջ կողմն է, որ մեզ համար բարեխոս էլ է» (Հռոմ. 8.33,34):

Հավատքի միջոցով հավատացյալը հաղթահարում է իր սրտի և թշնամու մեղադրանքները: Նույնիսկ իր անձնական ձախողման փաստն ի զորու չէ ստրկացնել նրան վախով կամ բանտարկել հուսալքության մեջ: Նա առաջ է գնում՝ Աստծո հանդեպ ճիշտ դիրք ունենալու անառիկ վստահությամբ, քանի որ այն հիմնված է իր Փրկիչ Քրիստոսի Անձի և աշխատանքի վրա: Օրհներգերի հեղինակ Հորացիո Սփեֆորդը գեղեցիկ կերպով ամփոփում է այս ճշմարտությունը.

Թե փորձություն գա, թե սատանան զարկի,
Թող լինի համոզմունքն այս օրհնյալ,
Որ Քրիստոսը նայեց իմ անհույս վիճակին
Եվ թափեց Իր արյունն ինձ համար:

Իմ մեղքը՝ երանելի՜ փառավոր միտք,
Ոչ թե մասամբ, այլ ամբողջությամբ,
Գամված է խաչին, և ես չեմ կրում այն:
Տիրոջը տուր փա՜ռք, փա՜ռք, ո՜վ իմ անձ[362]:

Վերջինը՝ քրիստոնյայի հաստատ հաղթանակը վերագրվում է Նրա մեծությանը, Ով բնակվում է նրանում: Հովհաննեսը գրում է. «Դուք Աստծուց եք, որդյակնե՛ր, և հաղթեցիք նրանց, որովհետև ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհի մեջ է» (4.4): Կա մի մեծ ճշմարտություն, որը պետք է իմանանք. Աստված ոչ միայն մեզ հետ է, այլև բնակվում է մեզանում՝ Սուրբ Հոգու միջոցով: Նույնիսկ ամենից աստվածապաշտները մեր միջև լիովին չեն հասկացել այն մտերիմ շփումը, որի մասին այս ճշմարտությունը հայտնում է մեզ[363]: Քանի որ մենք որդիներ ենք, Աստված ուղարկել է Իր Որդու Հոգուն մեր սրտում, որն աղաղակում է «Աբբա՛, Հա՛յր»: Նա այն կնիքն ու ապացույցն է, որ մենք այլևս ստրուկ-

362 Հորացիո Սփեֆորդ, «Իմ անձն ապահով է»
363 Բ Կորնթացիների 13.13, Փիլիպեցիների 2.1

ներ չենք, այլ՝ Աստծո որդիներ և ժառանգներ ենք[364]: Նա հավաստիացնում է մեզ մեր որդեգրության մեջ՝ վկայելով մեր հոգուն, որ մենք Աստծո զավակ ենք[365]: Նա այն ավանդն է, որը երաշխավորում է մեր ժառանգությունը, մինչև ապագայում մեր փրկությունը[366]:

Մեզանում բնակվող Հոգին ծառայում է մեզ՝ համաձայն մեր կարիքների, որպեսզի Աստծո մեծ նպատակը կատարվի մեր կյանքում: Նա կարողություն է տալիս, որ հասկանանք, թե ինչ է Աստված արել մեզ համար և ինչ է Աստված տվել մեզ Քրիստոսում[367]: Նա օգնում է հսկել մեզ վստահված Ավետարանի վարդապետությունները, որպեսզի չհեռանանք դրա ճշմարտություններից և չմոլորեցնենք մարդկանց ուրիշ ավետարանով[368]: Նա պատերազմում է մեր մարմնի դեմ և օգնում է մարմնի դեմ ունեցած մեր մեծ պայքարում[369]: Նա զորացնում է մեզ մեր ներսի մարդու մեջ, որպեսզի կարողանանք ճանաչել Քրիստոսի սերը և լցվել Աստծո ամբողջ լիությամբ[370]: Նա պաշտպանում է մեզ մոլորությունից, բերում է Իր պտուղը մեր կյանքում, առաջնորդում է մեզ և զորացնում է ծառայության համար[371]: Նա նույնպես «օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք՝ ինչպես արժան է, չգիտենք», բայց Ինքը բարեխոսում է մեզ համար՝ անբարբառ հառաչանքներով (Հռոմ. 8.26): Ինչպե՞ս մենք կարող ենք չհաղթել աշխարհին, մարմնին և նույնիսկ ամբողջ դժոխքին, եթե Քրիստոսում մեզ այսպիսի Պարակլետոս[372] է ձրիաբար տրվել:

Եվս մեկ մեծ ճշմարտություն, որը սովորում ենք այս գլխի հիմնական հատվածից, այն է, որ Աստված, Ով բնակվում է մեզանում, անսահմանորեն ավելի մեծ է, քան մեր բոլոր թշնամիները միասին: Ամբողջ տիեզերքում ապրող մարդկանց և դևերի միացյալ հարձակումն Աստծո գահի վրա ավելի քիչ ազդեցություն կունենա, քան եթե մի փոքրիկ ոջիլ գլխով հարվածի մի գրանիտե ժայռի: Ազգերը նման են դույլից կախված կաթիլի Նրա առջև: Աստված նրանց միացյալ ուժը համարում է ոչնչությունից պակաս և ունայն: Նա տարածում է երկինքը վարագույրի պես, երկրի իշխաններին ոչինչ է շինում և երկրի դատավորներին ոչնչի պես է անում[373]:

364 Գաղատացիների 4.6,7
365 Հռոմեացիների 8.16
366 Բ Կորնթացիների 1.22, 5.5, Եփեսացիների 1.13,14, 4.30
367 Ա Կորնթացիների 2.12, Ա Հովհաննես 2.20,27
368 Ա Տիմոթեոս 6.20, Բ Տիմոթեոս 1.14, Գաղատացիների 1.6,7
369 Գաղատացիների 5.17
370 Եփեսացիների 3.16-19
371 Գործք 1.8, Հռոմեացիների 8.14, Գաղատացիների 5.18,22,23, Ա Հովհաննես 2.26,27
372 «Պարակլետոս»-ը հունարեն բառ է, որը նշանակում է «նա, ով կանչված է ինչ-որ մեկի կողքին լինելու՝ օգնության համար. խորհրդական կամ դատապաշտպան»: Հովհաննեսը հաճախ է օգտագործում այս տիտղոսը՝ խոսելով Սուրբ Հոգու մասին (Հովհաննես 14.16,26, 15.26, Ա Հովհաննես 2.1):
373 Եսայի 40.15-23

Նա «Իր ուզածի պես է անում երկնքի զորքով և երկրի բնակիչներով, և մեկը չկա, որ զարկի Նրա ձեռքին և ասի՝ ի՞նչ ես անում» (Դանիել 4.35): Նրա դեմ չկա իմաստություն, չկա հանճար, և չկա ոչ մի խորհուրդ[374]:

Ահա թե ինչպիսին է այն Աստված, Ով բնակվում է քրիստոնյայի մեջ: Այնպես չէ, որ Նա հավատարիմ Աստված է, Ով զորություն չունի, կամ զորավոր Աստված է, Ով հավատարիմ չէ: Փոխարենը, Նա հավատարիմ Աստված է, Ով պահում է Իր խոստումները և կարող է կատարել այն, ինչ խոստացել է[375]: Նա, Ով բարի գործ սկսեց մեզանում, կկատարի այն: Նա կարող է պահել մեզ սայթաքելուց և կանգնեցնել Իր փառքի ներկայության մեջ՝ անբիծ ցնծությամբ[376]: Այսպիսով, նույնիսկ մեզնից ամենափոքրերը և ամենաթույլերը կարող են աղաղակել Պողոս առաքյալի հետ. «Բայց այս բոլոր բաներում առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց, որովհետև հաստատ գիտեմ, որ ո՛չ մահ, ո՛չ կյանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանություններ, ո՛չ զորություններ, ո՛չ ներկա բաներ, ո՛չ գալու բաներ, և ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն, և ո՛չ մեկ ուրիշ ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսում է» (Հռոմ. 8.37-39):

Ի՞ՆՉ Է ՀԱՂԹԱՆԱԿԸ

Քրիստոնյան հաղթում է այս աշխարհին վերստին ծնունդի շնորհիվ, Քրիստոսի Անձին և աշխատանքին հավատալու միջոցով և իրենում Ներբնակվողի մեծությամբ[377]: Այնուամենայնիվ, մենք պետք է համոզված լինենք, որ ճիշտ պատկերացում ունենք այն մասին, թե ինչ է նշանակում քրիստոնյայի հաղթանակը: Առաջինը՝ այն չի նշանակում, որ նա մեկընդմիշտ կհաղթի իր մարմնին և այն երբեք չի անհանգստացնի իրեն: Պայքարը մարմնի հետ երբեմն տիտանական կլինի նույնիսկ ամենից հասուն և սրբացված հավատացյալի կյանքում[378]: Երկրորդը՝ այն չի նշանակում, որ ճշմարիտ հավատացյալը կհաղթահարի մեղքն իր կյանքում և անմեղ կատարելության շարունակական ընթացք կունենա: Հակոբոսը, որն առանձնանում էր մյուս առաքյալներից իր մեծ աստվածապաշտությամբ, նկատի ուներ նաև իրեն, երբ գրում էր. «Որովհետև շատ բաներով մեղանչում ենք ամենքս» (3.2): Եվ սիրելի Հովհաննես առաքյալն ավելի խիստ էր, երբ գրում էր. «Եթե ասենք, թե մեղք չունենք, մեր անձերը խաբում ենք, և ճշմարտությունը չկա մեզանում» (Ա Հովհաննես 1.8):

Հաղթանակող քրիստոնեական կյանքը չի նշանակում, որ մենք վեր

374 Առակաց 21.30
375 Երկրորդ Օրինաց 7.9, Հռոմեացիների 4.21
376 Հուդա 24
377 Ա Հովհաննես 5.4,5
378 Գաղատացիների 5.17

ենք բոլոր հակամարտություններից և պարտություններից: Հաղթական քրիստոնեական կյանքը հարատևության և համբերության մեջ է: Հաղթելը նշանակում է, որ, անկախ մեր ձախողումից, մենք շարունակում ենք առաջ գնալ: Մեր ընթացքը կարող է մշտապես երկու քայլ առաջ և մեկ քայլ ետ լինել, բայց մենք շարունակում ենք հավատալ, ապաշխարել և հետևել: Մենք չենք կարող ուրանալ Քրիստոսին, ինչպես որ չենք կարող ուրանալ մեր կյանքը[379]: Մենք չենք կարող վերադառնալ այս աշխարհ, քանի որ գիտենք, որ միայն Նրա մոտ են հավիտենական կյանքի խոսքերը[380]: Մենք հաստատակամորեն հարում ենք Ավետարանին և ուժ գործադրելով Աստծո թագավորություն ենք մտնում[381]՝ ոչ թե մեր ներքին կամքի ուժի կամ նույնիսկ բացառիկ աստվածապաշտության պատճառով, այլ զուտ հուսահատությունից դրդված: Մենք լիովին համոզված ենք մեր անկարողության մեջ և ամուր կառչում ենք Քրիստոսից, ինչպես որ խորտակվող մարդն է կառչում փրկօղակից, կամ սայթաքող լեռնագնացը՝ իր ժայռակեռիկներից[382] և պարանից: Հաղթել՝ նշանակում է, որ պարզապես առաջ ենք գնում Քրիստոսի հետ և հավատքով հարատևում ենք մինչև վերջ[383]:

Այնուամենայնիվ, եթե պարզում ենք, որ գտնվում ենք անհավատության, փոխզիջման և աշխարհիկության կայուն վիճակում, մենք վախենալու պատճառ ունենք: Եթե մենք շարունակ պաշարված ենք մեղքով, և մեր կյանքում չկա սրբացում, մենք կասկածի հիմքեր ունենք[384]: Եթե մենք հեռանում ենք Աստծո պատվիրաններից և խրատ չենք ստանում, ճիշտ կանենք, եթե առնվազն վիճարկենք մեր վերստին ծնունդի իսկությունը[385]: Եթե մենք մշտական անտարբերության քնի մեջ ենք Աստծո, Նրա Քրիստոսի և Նրա Ավետարանի հանդեպ, պետք է քննենք մեզ Սուրբ գրքի լույսի ներքո՝ տեսնելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ ենք[386]: Ինչպես սերմնացանի առակում, մեր փրկությունը ոչ այնքան որոշվում է այն բանով, թե ինչպես ենք սկսում մեր ընթացքն Ավետարանի հետ, այլ՝ թե ինչպես ենք ավարտում այն[387]: Ովքեր, թվում է, լավ են սկսում, բայց, ի վերջո, պարտվում, նահանջում և անպտուղ են դառնում, ցույց են տալիս, որ իրենց հավատքը կեղծ էր իրենց ընթացքի հենց սկզբից:

379 Հովիվ Չարլզ Լեյտեր, զրույց հեղինակի հետ:
380 Հովհաննես 6.69
381 Ղուկաս 16.16
382 Ժայռակեռիկը ժայռի մեջ գամվող սեպ է՝ լեռնագնացի ծանրությունը պահելու համար:
383 Մատթեոս 24.13
384 Եբրայեցիների 12.14
385 Եբրայեցիների 12.8
386 Բ Կորնթացիների 13.5
387 Մատթեոս 13.3-9,18-23

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍ

Հավատալ Հիսուսին

«Եթե մարդկանց վկայությունն ընդունում ենք, Աստծո վկայությունն ավելի մեծ է. որովհետև սա է Աստծո վկայությունը, որ վկայեց Իր Որդու մասին: Ով որ հավատում է Աստծո Որդուն, վկայությունն ունի իր անձում: Ով որ չի հավատում Աստծուն, ստախոս է արել Նրան, որովհետև չհավատաց այն վկայությանը, որ Աստված վկայեց Իր Որդու մասին: Եվ սա է վկայությունը, որ Աստված հավիտենական կյանք տվեց մեզ, և այս կյանքը Նրա Որդու մեջ է: Ով որ Որդուն ունի, նա կյանք ունի, և ով որ Աստծո Որդուն չունի, կյանք չունի»:

– Ա Հովհաննես 5.9-12

Հաճախ լավագույնը որևէ շարքում պահվում է վերջում: Սա վերաբերում է նաև մեզ: Այս գլխում մենք դիտարկում ենք դարձի վերջին ստուգումը՝ անձնական հավատքն այն վկայությանը, որն Աստված տալիս է Իր Որդու մասին: Համաձայն Հովհաննեսի, մենք գիտենք, որ Աստծո զավակներ ենք դարձել, քանի որ հավատում ենք այն բաներին, որոնք Աստված հայտնել է Իր Որդու՝ Նազովրեցի Հիսուս Քրիստոսի մասին: Պողոս առաքյալի խոսքերով, մենք քրիստոնյա ենք համարվում, քանի որ պարծենում ենք միայն Քրիստոսով և մարմնի վրա վստահություն չունենք[388]:

ՀԱՎԱՏՔԻ ԱՐԺԵԶՐԿՈՒՄ ԵՎ ՍԽԱԼ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչև խոսելը այս աստվածաշնչյան հատվածի մասին, մենք պետք է հերքենք երկու տարածված, բայց սխալական կարծիք փրկարար հավատքի մասին: Առաջին սխալմունքը վերաբերում է հավատքի բնույթին և մեր կողմից այն արժևորելուն: Ժամանակակից Ավետարանական շարժման մեծ մասում փրկարար հավատքը փոքրացվել է՝ հասցվելով ընդամենը մտավոր և հաճախ մակերեսային համաձայնության մի քանի հոգևոր

388 Փիլիպեցիների 3.3

սկզբունքների կամ օրենքների: Շատերի կարծիքով, այն դարձել է կամքի մեկանգամյա որոշում, ըստ որի մենք ընդունում ենք Քրիստոսին՝ ինչ-որ մեկի հետ մի աղոթք կրկնելու միջոցով: Թեև այն մարդը, որը պնդում է, թե դարձի է եկել, որ իր կյանքի մեծ մասը կարող է ապրել՝ գրեթե չմտածելով Քրիստոսի մասին, նրան հավաստիացնում են փրկության մեջ՝ հիմնվելով այն պահի վրա, որ նա ճիշտ որոշում է կայացրել և ճիշտ քայլ է արել: Այսպիսով, փրկարար հավատքը չի համարվում այնպիսի վիճակ, որտեղ մարդն ամբողջ կյանքում կենտրոնանում է Քրիստոսի վրա կամ հարատևող վստահություն ունի Աստծո խոստումների հանդեպ. այն համարվում է որոշում, որը կայացվում է մեկ անգամ և հաճախ մոռացվում է:

Սուրբ գիրքը և եկեղեցու հավատքի կարևորագույն դավանանքները դասակարգում են փրկարար հավատքն Աստծո «խորությունների» թվում՝ որպես անըմբռնելի բնույթ ունեցող վարդապետություն, որը պետք է ուսումնասիրել, և որի մասին պետք է մտորել մեծ զգուշավորությամբ և ուշադրությամբ: Այնուամենայնիվ, փորձելով պարզեցնել Ավետարանը, մենք՝ փոքրացրել ենք փրկարար հավատքը՝ դարձնելով այն ծեսից մի փոքր ավելին, և զրկել ենք այն իր նշանակալի և հոյակապ լինելուց: Մենք փոքրացրել ենք այս փառքի տիեզերքը՝ վերածելով այն փոքրիկ հողակտորի, որը կարելի է մի քանի րոպեում շրջել: Իր վերասահմանված և կրճատված վիճակում այն այժմ դիտարկվում է որպես կաթ՝ Քրիստոսի մեջ մանուկների համար, որը նրանք պետք է հասկանան և թողնեն՝ շարունակելով իրենց ընթացքը դեպի քրիստոնեական վարդապետության ավելի «մսային» դրույթների ուսումնասիրությունը: Կրկին, փրկարար հավատքի մերօրյա արժեզրկումը հակառակ է Սուրբ գրքին, որը մեծագույն կարևորություն է վերագրում դրան և մեծ մանրամասնությամբ սահմանում ու բացատրում է դա[389]: Եթե ցանկանում ենք վերականգնել Ավետարանը իր սկզբնական փառքին և զորությանը, մենք պետք է կրկին աստվածաշնչյան պատկերացում ունենանք այն մասին, թե ինչ է նշանակում հավատալ Աստծո վկայությանը Իր սիրելի Որդու մասին: Մենք պետք է անտեսենք մեր ներկա մեթոդաբանությունները, որոնք դրդում

389 Համաձայն Եբրայեցիների թղթի հեղինակի, «Աստծուն հավատալը»՝ Քրիստոսի մասին «սկզբնական» ուսմունքներից է (Եբր. 6.1): Առաջին հայացքից կարելի է մտածել, որ նա դասակարգում է փրկարար հավատքը քրիստոնեական հավատքի ավելի տարրական վարդապետությունների թվում: Այնուամենայնիվ, դա այդպես չէ: «Սկզբնական» (կամ՝ «տարրական») բառը թարգմանված է հունարեն *«արքե՛»* բառից, որը նշանակում է «սկիզբ, ծագում կամ առաջինը որևէ շարքում»: Այսպիսով, մեզ փոխանցվում է գաղափարն այն մասին, որ փրկարար հավատքը քրիստոնեության գլխավոր և հիմնարար վարդապետությունների թվում է: Թեև այն արդարացիորեն կարող է կոչվել քրիստոնեական կյանքի սկզբնական քայլը, այն նույնպես վերջինն է: Իրականում, ամբողջ քրիստոնեական կյանքը պատշաճ կերպով կարող է նկարագրվել որպես հավատքի ընթացք: Որովհետև Աստծո արդարությունը հայտնվում է Ավետարանի միջոցով՝ հավատքից դեպի հավատք:

են մարդկանց վստահել «մեղավորի աղոթքին», և վերադարձնենք նրանց հավատքի մեջ հարատևող քրիստոսակենտրոնությանը:

Երկրորդ սխալական կարծիքը հավատքի վերաբերյալ առնչվում է դրա ուղղվածությանը կամ վախճանին: Ժամանակակից ավետարանական շարժման մեջ կան բազմաթիվ հավատքի եկեղեցիներ, հավատքի շարժումներ, հավատքի համաժողովներ և գրքեր հավատքի մասին: Այնուամենայնիվ, այս մեծ տարվածությունը հիմնականում ուղղված է այնպիսի հավատքի, որը ժամանակավոր օրհնություններ է ստանում Աստծուց, և գրեթե հետաքրքրված չէ այնպիսի հավատքով, որը հավիտենական արդարացման է տանում: Քրիստոնեական գրախանութները հեղեղված են ցուցումներով այն մասին, թե ինչպես գործածել հավատքը՝ հաղթանակ, բարգավաճում և իշխանություն ստանալու համար, սակայն դրանցում գրեթե բացակայում է աստվածաշնչյան մեկնությունը ճշմարիտ փրկարար հավատքի բնույթի և վկայության մասին: Եթե այս շեշտադրումը ժամանակավոր նյութապաշտության վրա՝ հավիտենական փրկագնման փոխարեն, և անձնական բարգավաճման վրա՝ Աստծուն ճանաչելու փոխարեն, կարող է Ավետարանական շարժման ախտանիշ համարվել, ապա մենք զարհուրելի վիճակում ենք:

Եթե մենք պատրաստվում ենք վերականգնել Ավետարանի սկզբնական շուքն ու զորությունը, պետք է ուրանանք այս մտահոգիչ տարվածությունը ժամանակավորով և ուղղենք մեր ուշադրությունը հավիտենականին: Մենք պետք է կարգավորենք մեր կշեռքը՝ արդար կշռելու համար, որպեսզի, երբ հավիտենականը և ժամանակավորը դրվեն հակառակ նժարներին, հավիտենականի կողմը գերազանցի: Պետրոս առաքյալը շտապում է հիշեցնել, որ մեր հավատքի նպատակը մեր անձերի փրկությունն է, ոչ թե ժամանակավոր շահը. «Ձեր հավատքի վախճանն [հունարենում «*տելո՛ս»]* ընդունելով, այսինքն՝ հոգիների (կամ՝ «անձերի») փրկությունը» (Ա Պետրոս 1.9): Այսպիսով, *«տելո՛ս»-ը,* կամ մեր հավատքի մեծ վախճանը նայում է ավելի հեռուն այս մահկանացու կյանքից՝ մտածելով մեր անձերի փրկության մասին հավիտենական նզովքից, նաև ուղղելով մեր ուշադրությունը վերականգնված հարաբերությանը Աստծո հետ և փառքի ապագա հույսին: Թեև մենք պետք է հավատանք Աստծուն և՛ ժամանակավորի, և՛ հավիտենականի համար, այնուամենայնիվ առաջինը երկրորդից վեր դասելը նշանակում է խոտ դիզել՝ անտեսելով ոսկին:

ՀԱՎԱՏՔԻ ԲՆՈՒՅԹԸ

Այս գլխի հիմնական աստվածաշնչյան հատվածը գլխավորապես վերաբերում է այն վկայությանը հավատալուն, որն Աստված տալիս է

Իր Որդու մասին: Թվում է՝ այս ուսմունքը բավականին պարզ է, սակայն հավատքի իրական բնույթի շուրջ առկա շփոթությունն անասելի է: Շատ ավետարանական քրիստոնյաներ պնդում են, որ փրկարար հավատք ունեն, սակայն այդ հավատքը գրեթե ազդեցություն չունի նրանց առօրյա կյանքի վրա: Այս ախտն առաջնորդում է մեզ որոշ անչափ կարևոր հարցերի. «Ի՞նչ է նշանակում հավատալ Աստծո վկայությանը Իր Որդու մասին»: «Ի՞նչ է նշանակում հավատք ունենալ»: Եբրայեցիների թղթի հեղինակն ասում է մեզ. «Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունը և չերևացող բաների ապացույցն է» (11.1):

Համաձայն Եբրայեցիների թղթի հեղինակի, հավատքը որևէ անձի համոզվածությունն է ինչ-որ իրողության մեջ, որի հանդեպ նա հույս ունի, բայց որը դեռ չի իրականացել կամ տեսանելի չէ: Այս սահմանումը շատ կարևոր հարցեր է առաջացնում. «Ինչպե՞ս ողջամիտ մարդը կարող է նման համոզմունք ունենալ»: «Ինչո՞վ է հավատքը տարբերվում ցանկալին իրականի տեղ ընդունելուց կամ խելահեղ կերպով որևէ պատրանքի ձգտելուց»: Պատասխանն Աստծո Անձի ազնվության և Նրա հայտնության արժանահավատ լինելու մեջ է: Մարդը կարող է հավաստիացած լինել այնպիսի բանում, ինչի հանդեպ նա հույս ունի, և համոզված լինել այնպիսի բանում, ինչը նա երբեք չի տեսել, միայն որովհետև Աստված է վկայել այդ մասին: Այս ճշմարտությունը հստակ պատկերվում է Նոյի կյանքում: Եբրայեցիների թղթի հեղինակը գրում է նրա մասին. «Հավատքով՝ Նոյը, պատգամ առնելով դեռ չերևացած բաների համար և երկյուղած լինելով, շինեց տապանը իր տան փրկության համար, որով աշխարհիս դատապարտեց, և ժառանգ եղավ հավատքով լինող արդարությանը» (11.17):

Նոյը տապան կառուցեց, որովհետև հավատաց, որ շուտով աշխարհը ջրհեղեղով կործանվելու էր: Չկար ոչ մի պատմական տվյալ համաշխարհային ջրհեղեղների մասին, որոնց վրա նա կարող էր հիմնել իր համոզմունքը, ինչպես նաև չկար որևէ ներկա ապացույց այն մասին, որ շուտով նման իրադարձություն էր տեղի ունենալու: Նա հավատաց, որ ջրհեղեղ էր լինելու, և նվիրեց իր ամբողջ կյանքը տապան կառուցելուն, միայն որովհետև պատգամ էր առել կամ զգուշացվել էր Աստծուց դեռ չերևացած բաների մասին: Նոյը հավատաց համաշխարհային ջրհեղեղին և գործեց իր հավատքի հիման վրա, որովհետև Աստված վկայություն էր տվել նրան գալիք ջրհեղեղի մասին:

Աբրահամի կյանքը հավատքի ևս մեկ օրինակ է մեզ համար: Պողոս առաքյալը գրում է հետևյալ մեկնությունը նրա մասին. «Եվ չտկարացավ հավատքով, այսինքն մտիկ չարեց իր մարմնին, որ արդեն մեռած էր, ինքը իբրև հարյուրամյա լինելով, և ո՛չ էլ Սառայի արգանդի մեռած լի-

նելուն: Եվ Աստծո խոստման համար չերկմտեց անհավատությամբ, այլ զորացավ հավատքով և Աստծուն փառք տվեց: Եվ իր մտքում համոզված էր, թե Նա, որ խոստացավ, կարող է և անել» (Հռոմ. 4.19-21):

Համաձայն այս հատվածի, Աբրահամը լիովին համոզված էր, որ որդի էր ունենալու իր կին Սառայից: Այնուամենայնիվ, նրա մեծ հավաստիացումը հիմնված չէր այնպիսի բանի վրա, ինչն ինքը կարող էր տեսնել, քանի որ թե՛ ինքը, թե՛ Սառան վաղուց անցել էին որդեծնության տարիքից: Նա առանց հույսի՝ հույսով հավատաց, և չտատանվեց անհավատությամբ, այլ լիովին համոզված էր, որ որդի էր ունենալու, որը դեռ չէր էլ հղացվել՝ միայն Աստծո վկայության պատճառով: Նրա հավաստիացումը հիմնված էր այն փաստի վրա, որ Աստված կարող էր անել այն, ինչ խոստացել էր:

Այս հատվածների լույսի ներքո կարող ենք եզրակացնել, որ ճշմարիտ հավատքն անձնական հավաստիացում է այն բանում, ինչի հանդեպ մենք հույս ունենք, և համոզվածություն է այն բանում, ինչը դեռ չենք տեսել, միայն որովհետև Աստված վկայել է այդ մասին: Սա հատկապես ճշմարիտ է Աստծո Որդու վերաբերյալ, որի մասին Նա տվել է Իր մեծագույն վկայությունը:

ԱՍՏԾՈ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին Հովհաննես 2.9-12-ի հիմնական թեման Աստծո վկայությունն է Իր Որդի Նազովրեցի Հիսուս Քրիստոսի մասին: «Վկայություն» բառը, որը թարգմանված է հունարեն *«մարտուրի՛ա»* բառից, օգտագործվում է 113 անգամ Նոր կտակարանում, որոնցից 64-ը Հովհաննեսի գրքերում է: Հովհաննեսի Ավետարանում Հիսուսի մասին վկայություն է տրվում Հովհաննես Մկրտչի[390], Հովհաննես առաքյալի[391], Հայր Աստծո[392], Սուրբ Հոգու[393], Սուրբ գրքի[394], Հիսուսի գործերի[395] և անձամբ Հիսուսի կողմից[396]: Հովհաննեսի Առաջին թղթում վկայություն է տրվում Հովհաննես առաքյալի[397], Հոգու, ջրի և արյան[398], և, ի վերջո, Հայր Աստծո կողմից[399]: Հովհաննեսի Ավետարանում այս վկայության նպատակն է, որ բոլորը

390 Հովհաննես 1.6-8,15, 3.26,32,33, 5.32-34
391 Հովհաննես 19.35, 21.24
392 Հովհաննես 5.37, 8.18
393 Հովհաննես 15.26
394 Հովհաննես 5.39
395 Հովհաննես 5.36, 10.25
396 Հովհաննես 3.11,32,33, 8.14,18, 18.37
397 Ա Հովհաննես 1.2, 4.14
398 Ա Հովհաննես 5.6-8: «Ձուրը և արյունը», հավանաբար, հղում է Հիսուսի մկրտությանը և խաչելությանը: Նրա և՛ մկրտությունը, և՛ արյունոտ խաչելությունը վկայում են, որ Նա Քրիստոսն է՝ Աստծո Որդին և աշխարհի Փրկիչը:
399 Ա Հովհաննես 5.9-11

հավատան, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծո Որդին, և հավատալով փրկվեն[400]: Հովհաննեսի Առաջին թղթում այս վկայության նպատակն է հաստատել ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի և Նրա Ավետարանի մասին և հավաստիացում տալ ճշմարիտ հավատացյալներին, որոնք սասանվել էին իրենց հավատքի մեջ՝ սուտ ուսուցիչների պատճառով[401]:

Հովհաննեսը սկսում է՝ ազդեցիկ փաստարկ բերելով այն մասին, որ Աստված արժանահավատ է, և մենք ողջամտորեն ենք վարվում՝ հավատալով Նրան: Նա հակադրում է մարդկանց և Աստծուն, իսկ հետո կշռադատում է՝ փոքրից անցնելով մեծին: Եթե մենք ընդունում ենք մարդկանց վկայությունը, որն ավելի փոքր է, որքա՜ն ավելի պետք է հակված լինենք ընդունելու Աստծո վկայությունը, որն ավելի մեծ է[402]: Այս աշխարհում բոլորիս կոչ է արվում վստահել տարբեր տեսակի վկայությունների՝ սկսած ողջամիտներից և վստահելիներից մինչև լիովին սխալականները: Իրականում, եթե մենք չվստահենք մարդկանց, շուտով կհայտնաբերենք, որ չենք կարողանա ոչինչ անել՝ թե՛ որպես անհատներ, թե՛ որպես հասարակություն: Այսպիսով, մենք հավատում ենք մարդկանց՝ անկախ այն ամենից, ինչ գիտենք նրանց մասին, հատկապես այն, որ նրանք հակված են ճշմարտությունն աղավաղելուն[403]: Եվ եթե մենք գտնում ենք, որ ողջամտորեն ենք վարվում՝ հավատալով մարդկանց, որոնք հակված են ստելուն, որքա՜ն ավելի պետք է հավատանք ճշմարիտ Աստծուն, Ով, համաձայն Սուրբ գրքի վկայության, ճշմարիտ և անսուտ է[404]: Իրականում, Նրա բնության կատարելությունների պատճառով, անկարելի է, որ Նա ստի[405]: Սամուել մարգարեն հայտարարեց. «Իսրայելի Ապավենը սուտ չի խոսի և չի զղջա» (Ա Թագ. 15.29): Եվ նույնիսկ մոլորյալ Բաղաամը հարկադրված էր մատուցել հետևյալ գովասանքը.

> «Աստված մարդ չէ, որ սուտ խոսի,
> Ո՛չ էլ մարդու որդի, որ զղջա.
> Մի՞թե կասի և չի անի,
> Կամ՝ կխոսի և չի կանգնեցնի» (Թվոց 23.19):

Ավելի փոքրին (մարդուն) հավատալը և ավելի մեծի (Աստծո) վկայությունը չընդունելը ոչ միայն ողջամիտ չէ, այլև մատնում է մարդու անվստահությունն Աստծո բնավորության հանդեպ: Նույնիսկ մարդկա-

400 Հովհաննես 20.31
401 Այս հատվածի ավելի ամբողջական բացատրության համար ընթերցողը կարող է օգտվել Կոլին Գ. Կրուզի *«Հովհաննեսի նամակները»* գրքից, էջեր 179-184:
402 Ա Հովհաննես 5.9
403 Սաղմոս 116.11, Հռոմեացիների 3.4
404 Սաղմոս 31.5, Եսայի 65.16, Տիտոս 1.2
405 Եբրայեցիների 6.18

յին հարաբերություններում մարդու խոսքին կասկածելը նշանակում է վատ կարծիք ունենալ նրա բնավորության մասին, և այն, թե ինչպես ենք վերաբերվում դիմացինի խոսքերին, ցույց է տալիս, թե ինչ ենք մտածում նրա մասին՝ որպես անձի: Եթե սա ճշմարիտ է մարդկանց վերաբերյալ, է՛լ ավելի ճշմարիտ է Աստծո վերաբերյալ, Ում բնավորությունը սերտորեն կապված է Նրա Խոսքի հետ[406]: Այս պատճառով, Սուրբ գիրքը դիտարկում է մարդու անհավատարմությունն Աստծո Խոսքին՝ որպես վիրավորանք, որի հետ պետք է հաշվի նստել: Հովհաննեսի խոսքերով՝ այս գլխի հիմնական հատվածում, «Ով որ չի հավատում Աստծուն, ստախոս է արել Նրան» (5.10):

Խոսելով Աստծո ճշմարտացիության և Նրա վկայության արժանահավատ լինելու մասին՝ Հովհաննեսը շարունակում է՝ հայտնելով Աստծո վկայության առարկան, որը Նրա Որդին է: Տասներորդ խոսքում Հովհաննեսը հայտարարում է, որ Աստված «վկայել է Իր Որդու մասին» (NKJV): Հովհաննեսի կողմից վաղակատար ժամանակն օգտագործելը ցույց է տալիս Աստծո անդառնալի ու անփոփոխ դիրքորոշումն Իր Որդու վերաբերյալ: Նա վկայություն է տվել Նրա մասին և չի փոխի այն: Դ. Էդմունդ Հեյբերտը պնդում է. «Աստված պաշտոնապես արտահայտել է Իր դիրքորոշումը՝ որպես Իր Որդու մասին մշտապես վկայություն տվող»[407]: Նա արել է դա Հին կտակարանի մարգարեների միջոցով[408], Հովհաննես Մկրտչի միջոցով[409], Հոգու գործերի միջոցով[410], Իր լսելի ձայնով[411], խաչելությանը ուղեկցող գերբնական և աղետալի իրադարձություններով[412], հարությամբ[413], Հոգու թափմամբ՝ Պենտեկոստեի օրը[414], նաև Հոգու շարունակական վկայությամբ՝ եկեղեցու միջոցով:

Հաշվի առնելով նման առատ աստվածային վկայությունը Որդու մասին՝ անհավատությունը տարբերակ չէ: Սուրբ գիրքը ոչ մի դեպքում մեղմորեն չի մոտենում անհավատին և ակնթարթորեն չի գոհացնում նրա՝ ավելի շատ տեղեկություն կամ ապացույց ստանալու պահանջները: Անհավատությունը երբեք թողտվություն չի ստանում և չի արդարացվում. այն մեղավորի կողմից փաստերը համառորեն մերժելու արդյունքն է՝ պարզապես այն պատճառով, որ նա հրաժարվում է հնազանդվել Աստ-

406 Սաղմոս 138.2
407 Հեյբերտ. *«Հովհաննեսի թղթերը»,* էջ 241:
408 Ղուկաս 24.44-47, Հովհաննես 5.39
409 Հովհաննես 1.6-8,15, 3.26,32,33, 5.32-34
410 Հովհաննես 5.36, 10.25
411 Աստված լսելի ձայնով խոսեց Երկնքից Քրիստոսի մկրտության ժամանակ (Մատթ. 3.16,17, Մարկ. 1.10,11), Նրա այլակերպման ժամանակ (Մատթ. 17.5, Մարկ. 9.7, Ղուկ. 9.35), նաև բազմության առջև՝ Զատկի ժամանակ (Հովհ. 12.27-29):
412 Մատթեոս 27.50-53
413 Հռոմեացիների 1.4, 4.25
414 Գործք 2.1-36

ծո արդարությանը: Անհավատության լուրջ և զարհուրելի բնույթն արտահայտվում է Քրիստոսի զգուշացման մեջ. «Նրան հավատացողը չի դատապարտվի, իսկ չհավատացողն արդեն դատապարտված է, որովհետև չհավատաց Աստծո միածին Որդու անվանը» (Հովհ. 3.18):

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Մինչև այս պահը Հովհաննեսն աշխատում էր ապացուցել, որ Աստված պարզ և հաստատ վկայություն է տվել Նազովրեցի Հիսուսի մասին՝ որպես Աստծո մարմնավորված Որդու, Ով խաչվեց Իր ժողովրդի մեղքերի համար: Նա նույնպես խոսեց այս վկայությանը հավատալու ողջամտության և այն մերժելու հանցանքի մասին. «Ով որ չի հավատում Աստծուն, ստախոս է արել Նրան» (5.10): Այնպես որ, իր փաստարկը հաստատելուց հետո, Հովհաննեսը ներկայացնում է մեզ Իր Որդու մասին Աստծո վկայության ճշգրիտ բնույթը. «Աստված հավիտենական կյանք տվեց մեզ, և այս կյանքը Նրա Որդու մեջ է» (5.11): Չափազանցություն չէ ասելը, որ այս մի քանի բառերն ամփոփում են Ավետարանի էությունն ամբողջությամբ: Այնուամենայնիվ, այս հատվածը լիովին հասկանալու համար, մենք պետք է երկու կարևոր հարց տանք. «Ի՞նչ է հավիտենական կյանքը» և «Որո՞նք են «Որդու մեջ» արտահայտության իմաստը և հետևանքները»:

Գոյություն ունի մեծ շփոթմունք, որն առաջանում է հավիտենական կյանքի ժամանակվա և բնույթի վերաբերյալ: Ինչ վերաբերում է ժամանակվան, շատերը, թվում է, դիտարկում են հավիտենական կյանքը բացառապես որպես ապագա հույս և համարում են, որ այն մեր վերջնական փառավորման և Երկնքում մեր ապագա կյանքի հոմանիշն է: Նման տեսանկյունը հակառակ է Սուրբ գրքին, որը սովորեցնում է, որ հավիտենական կյանքը սկսվում է վերստին ծնունդի պահին և շարունակվում է ամբողջ հավիտենության ընթացքում: Հովհաննեսի Ավետարանից հասկանում ենք, որ «Որդուն հավատացողը հավիտենական կյանք ունի» (3.36): «Ունի» բայը թարգմանված է ներկա ժամանակում գտնվող հունարեն բայից, ինչը ցույց է տալիս, որ հավիտենական կյանքը ներկա իրականություն է ճշմարտապես հավատացողների համար: Առաջին Հովհաննես 5.11-ում Հովհաննեսը հայտարարում է, որ «Աստված հավիտենական կյանք տվեց մեզ»: «Տվեց» բառը թարգմանված է հունարեն աորիստ ժամանակաձևով բայից, ինչը ցույց է տալիս, որ հավիտենական կյանքն արդեն իսկ տրվել է Որդուն հավատացողներին: Այս ամենից հետևություն ենք անում, որ թեև հավիտենական կյանքն ապագա հույս է, այն նույնպես ներկա իրականություն է: Այն սկսվում է Քրիստոսին հավատալու պահից և երբեք չի ավարտվի հավիտենության անթիվ դարերում:

Առաջին և ամենատարածված սխալմունքն այն է, որ հավիտենական կյանքը դիտարկվում է ընդամենը որպես ժամանակային չափ, ոչ թե կյանքի որակ, և որ դրա բնույթն անտեսվում է: Թեև հավիտենական կյանքն անվերջանալի է, մեծագույն շեշտադրումը *նոր տեսակի* կյանքի վրա է, որը հավատացյալը ստացել է Քրիստոսում: Վերնատան զրույցի ժամանակ Տեր Հիսուս Քրիստոսն այսպես նկարագրեց հավիտենական կյանքը. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն Քեզ միայն ճշմարիտ Աստված, և Նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհ. 17.3):

Այս խոսքում Հիսուսը չի դիտարկում հավիտենական կյանքը որպես ժամանակային չափ, այլ որպես կյանքի որակ, որում մենք շփում ունենք Աստծո և Նրա Որդու հետ: Որպեսզի հասկանանք, թե որքան կարևոր է այս ճշմարտությունը, պետք է պատկերացում կազմենք «ճանաչել» բառին վերագրվող իմաստի մասին: Այն թարգմանված է հունարեն *«գինո՛սկո»* բառից, որը հաճախ օգտագործվում է՝ փոխանցելու համար եբրայերենում առկա ճանաչողության գաղափարը՝ անձնական շփման համատեքստում: Սուրբ գրքում այն հաճախ օգտագործվում է՝ նկարագրելու համար անձնական և նույնիսկ ֆիզիկական մտերմություն տղամարդու և կնոջ միջև: Այս խոսքում այն օգտագործվում է՝ ներկայացնելու համար հավիտենական կյանքը, որը բնութագրվում է Աստծո հետ մտերիմ շփմամբ: Հովհաննեսը հաստատում է այս խոսքի նման ընկալումն իր Առաջին թղթի ամփոփիչ դիտողություններում. «Եվ գիտենք, որ Աստծո Որդին եկավ և մեզ միտք տվեց, որ ճշմարիտը ճանաչենք, և ճշմարիտում ենք, այսինքն՝ Նրա Որդի Հիսուս Քրիստոսում: Նա է ճշմարիտ Աստվածը և հավիտենական կյանքը» (5.20):

Կրկին, հավիտենական կյանքը հավասարվում է Որդու միջոցով Աստծուն ճանաչելուն՝ անձնական և մտերիմ շփման համատեքստում: Տրամաբանական հաջորդականությունը հետևյալն է. Ավետարանը քարոզելու, ինչպես նաև ներբնակվող Հոգու վերածնող և լուսավորող աշխատանքի միջոցով Աստված տալիս է Իր ժողովրդին կյանք, հասկացողություն և հոժար սիրտ: Արդյունքում նրանք մուտք են գործում նոր կյանք, որը բնութագրվում է հավատքով, հաղորդությամբ, փառաբանությամբ և Աստծուն ծառայելով: Սա հավիտենական կյանքն է՝ ոչ միայն անվերջանալի օրեր կամ երկնքի ապագա հույսը, այլև նոր կյանք՝ Քրիստոսի մեջ: Հավիտենական կյանքն այժմ Աստծո առջև անհասկանալի դիրք կամ աստվածաբանական վարկած չէ: Այն ներկա, փորձառական և զանազանելի իրականություն է հավատացյալի երկրային պանդխտության մեջ: Այն նույնքան իրական է նրա համար, որքան տեսողության վերականգնումը՝ կույրի համար, լսողության պարգևը՝ խուլի

համար, և կյանքին վերադառնալը՝ մահացածի համար: Թեև այս կյանքի փորձառական իրականությունը կարող է որոշ չափով տարբեր լինել տարբեր հավատացյալների կյանքում և նրանց կյանքի տարբեր փուլերում, այն, այնուամենայնիվ, իրական է:

ԿՅԱՆՔԸ ՈՐԴՈՒ ՄԵՋ

Այժմ մեր ուշադրությունը կուղղենք այն անսպառ ճշմարտությանը, որ այս կյանքը «Նրա Որդու մեջ» է (Ա Հովհ. 5.11): Այս երեք բառերը թարգմանված են հունարեն *«էն տո հուիո»* արտահայտությունից, որը հայտնում է ամենագեղեցիկ ճշմարտություններից մեկը ամբողջ Սուրբ գրքում: Հունարենում գտնվող նախդիրը, որը պայմանավորված է գոյականի հոլովով, ցույց է տալիս այն ոլորտը, որտեղ հավիտենական կյանքն է: Այն գտնվում է բացառապես *Որդու մեջ:* Սա ապացույց է, որ Հիսուսը ոչ թե պարզապես այն ամենն է, ինչի կարիքը մենք ունենք, այլ այն ամենը, ինչ մենք ունենք: Նրանից դուրս մենք չունենք բաժին Աստծո հետ: Նրանում մեզ է պատկանում յուրաքանչյուր օրհնություն, որն Աստված տվել է մարդուն: Նրանից դուրս մենք ոչինչ չունենք: Մենք «թշվառ և ողորմելի և աղքատ և կույր և մերկ» ենք (Հայտն. 3.17): Միայն Քրիստոսն է այն հիմքը, որի վրա կառուցվում է այն ամենը, ինչը կարելի է կառուցել: Նա այն առանցքն է, որի շուրջ ամեն ինչ պտտվում է: Նա մեծ որոշիչ գործոնն է բոլոր հարցերում, որոնք վերաբերում են Աստծո առջև արդար դիրքին և Նրա հետ հարաբերություններին: Այս անսպառ ճշմարտությունը և դրանից բխող հետևությունները չեն կարող լիարժեք ընկալվել, և ո՛չ էլ երբևէ կարող են չափազանցվել:

Քրիստոնեության մեծագույն և ամենից հիմնարար ճշմարտությունների թվում է այն, որ հավիտենական կյանքը և ցանկացած այլ հոգևոր օրհնություն բացառապես Որդու մեջ է: Հիսուսը վկայեց Իր մասին. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով» (Հովհ. 14.6): Պետրոսը կանգնեց Իսրայելի իշխանների առջև և հայտարարեց. «Եվ էլ ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև ուրիշ անուն էլ չկա երկնքի ներքև մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ փրկվել» (Գործք 4.12): Պողոս առաքյալը գրեց երիտասարդ Տիմոթեոսին. «Որովհետև մեկ Աստված կա, և մեկ միջնորդ Աստծո և մարդկանց մեջ՝ Քրիստոս Հիսուս Մարդը» (Ա Տիմոթ. 2.5): Ճշմարտությունն այն մասին, որ հավիտենական կյանքը բացառապես *Որդու մեջ* է, չի կարող չափից ավելի շեշտադրվել: Իրականում, քրիստոնեությունը՝ իր անաղարտ տեսքով, բաղկացած է այն գիտակցումից, որ առանց Որդու՝ մենք «հեռացած [ենք] Իսրայելի քաղաքակցությունից և օտարացած ենք խոստման ուխտերից, հույս [չունենք] և անաստված [ենք] աշխարհում» (Եփես. 2.12):

Եփեսացիների 1-ին գլխում անսխալաբար ներկայացված է Քրիստոսի եզակի, էական և բացառիկ բնույթը: Առաջին տասնչորս խոսքերում Պողոսն օգտագործում է «Քրիստոսում» բառը կամ դրա համարժեքները տասնմեկ անգամ: *Որդու մեջ* մենք օրհնված ենք յուրաքանչյուր հոգևոր օրհնությամբ: *Որդու մեջ* մենք ընտրված ենք այս աշխարհի արարումից առաջ: *Որդու մեջ* Աստված ազատորեն պարգևել է մեզ Իր շնորհքը: *Որդու մեջ* մենք ունենք փրկություն և մեղքերի թողություն: *Որդու մեջ* Աստված հայտնել է մեզ Իր կամքի խորհուրդը: *Որդու մեջ* Աստված միավորել է ամեն ինչ երկնքում և երկրի վրա: *Որդու մեջ* մենք կնքվեցինք խոստման Սուրբ Հոգով[415]: Յուրաքանչյուր հոգևոր օրհնություն, որը մենք ունենք, ներառյալ հավիտենական կյանքը, տրվել է՝ շնորհիվ Աստծո սիրելի Որդու և մեր փոխարեն Նրա կատարած աշխատանքի: Ահա թե ինչու է Հովհաննեսն ամփոփում Քրիստոսի եզակի, գերագույն և կենտրոնական դերը փրկության մեջ՝ օգտագործելով ամենից ազդեցիկ հայտարարություններից մեկը Սուրբ գրքում. «Ով որ Որդուն ունի, նա կյանք ունի, և ով որ Աստծո Որդուն չունի, կյանք չունի» (Ա Հովհ. 5.12):

Այս ճշմարտությունն անսահմանորեն թանկ է քրիստոնյայի համար, քանի որ այն կապակցում է երկնքի վերաբերյալ յուրաքանչյուր հույս Քրիստոսի հետ և ընդունում է Նրա Անձի և աշխատանքի անսահման արժանիքը: Այն մարդը, որի սիրտը ճշմարտապես վերածնված է Սուրբ Հոգու կողմից և արդարացված է Քրիստոսի արյան հանդեպ ունեցած հավատքով, չի վիրավորվի, երբ ամեն գովասանք շռայլվի Որդուն: Ընդհակառակը, նա կցնծա յուրաքանչյուր մտքի կամ խոսքի համար, որը փառք է բերում Քրիստոսին և տալիս է Նրան բարձրագույն դիրքը: Ավելին, քրիստոնյան բերկրանք է ապրում՝ հասկանալով և հռչակելով, որ Քրիստոսն է իր ամբողջական փրկությունը: Նա պարծենում է փրկությամբ, որը ստացվել է առանց իր մասնակցության, և արդարացմամբ, որը ստացվել է առանց իր առաքինության կամ արժանիքի: Նա նույնիսկ հրճվանք կզգա, եթե իր մեղքը պատկերվի ամբողջ երկնակամարում, եթե այդ խավարի վրա Առավոտյան Աստղն[416] ավելի փառավոր կերպով երևա: Եթե մենք ճշմարիտ քրիստոնյա ենք, բերկրանք կապրենք՝ վերագրելով Որդուն ամբողջ երախտիքը մեր փրկության համար, և կզարհուրենք, եթե այդ երախտիքի թեկուզ աննշան չափը մեզ վերագրվի:

Սուրբ գրքում Քրիստոսի պատկերումը՝ որպես միակ Փրկչի և միակ Միջնորդի Աստծո և մարդու միջև, թանկ ճշմարտություն է քրիստոնյայի համար: Այնուամենայնիվ, անհավատի համար դա ամենից վրդովեցու-

415 Եփեսացիների 1.3,4,6,7,9,10,13
416 Հղում Մեսիային. Թվոց 24.17, Բ Պետրոս 1.19, Հայտնություն 22.16

ցիչ ուղերձն է, գլորվելու քար է և գայթակղվելու վեմ է[417]: Անհավատներն արժեզրկում են այս ուղերձը՝ ամբարտավան մոլեռանդություն համարելով, քանի որ այն առանձնացնում է քրիստոնեությունը որպես եզակի կրոն, որը հրաժարվում է սատարել փրկություն ստանալու ցանկացած հույս՝ առանց Քրիստոսի: Պոստմոդեռնիստական հայացքներ ունեցող մարդու համար, որի անարդարությունը հարկադրում է նրա մտքին ընդունել անհեթեթ վարկածն այն մասին, որ բոլոր կրոնները հավասարապես ճիշտ են, սա միակ աններելի մեղքն է: Սա է պատճառը, որ առաջին քրիստոնյաներն աթեիստներ էին համարվում և այրվում էին խաչերի վրա, և սա է պատճառը, որ քրիստոնեության աստվածաշնչյան և պատմական ցանկացած ձև արհամարհվում է այսօր: Եթե միայն եկեղեցին հրաժարվեր այս պնդումից կամ նույնիսկ մեղմացներ այն, հնարավոր կլիներ խաղաղություն հաստատել այս աշխարհի հետ և կրկին միանալ մարդկության մնացած մասին: Այնուամենայնիվ, անելով դա, եկեղեցին պարզապես կուրանար Քրիստոսին և կկորցներ իր խաղաղությունն ու միությունն Աստծո հետ:

ՆԵՐՔԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Հովհաննես առաքյալի, Աստծո վկայությունը հետևյալն է. Նա հավիտենական կյանք է տվել մեզ, և այս կյանքը Նրա Որդու մեջ է: Ավելին՝ Հովհաննեսը պնդում է, որ յուրաքանչյուրը, ով ճշմարտապես հավատում է Որդուն, ունի այս վկայությունն իրենում[418]:

Այս ակնառու ճշմարտությունը շատ ավելի բարդ է մեկնաբանել, քան կարող է թվալ առաջին հայացքից: Նույնիսկ Բարեկարգման և պահպանողական դպրոցի աստվածաբանների շրջանում մի քանի տեսակետ է առաջադրվել: Արդյո՞ք Հովհաննեսը նկատի ունի, որ հավատացյալն ընդունել է Աստծո վկայությունն Իր Որդու մասին և համապատասխանեցրել է դրան իր կյանքը: Արդյո՞ք Հովհաննեսը հղում է անում յուրաքանչյուր հավատացյալի ներսում բնակվող Հոգու ներքին վկայությանը: Թե՞ նա նկատի ունի հավիտենական կյանքի փորձառական վկայությունը, որը հավատացյալն ունի՝ այն նոր կյանքի իրողությունը, որի առանցքը Հոր և Որդու հետ մտերիմ շփումն է: Հնարավոր է, որ այս պնդման իմաստն այնքան լայն է, որ ընդգրկում է բոլոր այս տարբերակները:

Մեր դարձի ճշմարտացիության առաջին նշանը հետևյալն է. մենք ընդունել ենք Աստծո վկայությունը, որը սկզբնապես պատմվել է ականատեսների, այսինքն՝ առաքյալների կողմից[419], և այդ ժամանակից ի

417 Հռոմեացիների 9.32,33, Ա Պետրոս 2.8
418 Ա Հովհաննես 5.10
419 Ա Հովհաննես 1.1-4

վեր փոխանցվել է հաջորդ սերունդներին՝ Ավետարանը հավատարմորեն քարոզելու միջոցով: Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ հարում ենք և հուսացած ենք Հիսուս Քրիստոսի «սրբերին մեկ անգամ ավանդված» Ավետարանին (Հուդա 3): Մենք ապավինում ենք Սուրբ գրքին և պատմական ավետարանական քրիստոնեության հոսանքի մեջ ենք: Մենք չենք հեռացել Ավետարանի հույսից, այլ հաստատ և անսասան հարատևում ենք հավատքի մեջ[420]:

Կարևոր է նշել, որ Աստծո փրկարար վկայությունը ճշմարտապես ընդունելը մակերեսային և սովորական բան չէ. ընդունելով այս վկայությունը՝ աստիճանաբար համապատասխանեցնում ենք դրան մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառը: Ճշմարտապես դարձի գալու դեպքում, Քրիստոսը դառնում է մեր կերակուրը և ըմպելիքը. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ՝ եթե մարդու Որդու մարմինը չուտեք և Նրա արյունը չխմեք, կյանք չունեք ձեր անձերում» (Հովհ. 6.54)[421]: Նրա խոսքերը դառնում են մեր մեր կյանքի հիմքը, օրինակը և նպատակը: Ավետարանը դառնում է մեր մասը և բնորոշում է մեր ինքնությունը. այն և՛ որոշում է, թե ով ենք մենք, և՛ կառուցում է մեր ընթացքը: Այն մեր ներսում է և մեր էության մասն է: Մենք չենք կարող բաժանվել Ավետարանից, ինչպես որ չենք կարող մասնատել մեր անհատականությունը և տարածել այն երկրագնդի չորս կողմերով: Մեր ներսի մարդու խորքից մենք համաձայնում ենք Ավետարանի հետ, հիանում ենք դրա գեղեցկությամբ և ցանկանում ենք համապատասխանել դրա պատվիրաններին: Ավետարանի հավատարիմ ազդարարման յուրաքանչյուր դեպք, որը մենք լսում ենք կամ ընթերցում, դառնում է ևս մեկ հաստատում մեր սրտերի համար, որ Քրիստոսն ամեն ինչ է մեզ համար, և հավիտենական կյանքը միայն *Որդու մեջ* է:

Մեր ճշմարիտ քրիստոնյա լինելու երկրորդ նշանը մեզանում բնակվող Հոգու ներքին վկայությունն է: Հովհաննեսի Ավետարանից իմանում ենք, որ Սուրբ Հոգին ուղարկվել է, որպեսզի վկայի Քրիստոսի մասին, բնակվի հավատացյալի ներսում և առաջնորդի նրան դեպի ամբողջ ճշմարտությունը[422]: Հովհաննեսի առաջին թղթից իմանում ենք, որ Հոգին նաև գործում է հավատացյալի ներսում, որպեսզի և՛ հաստատի, և՛ ամրապնդի նրա հավաստիացումն իր որդիության մեջ: Մենք գիտենք, որ մենք Աստծո զավակներ ենք, և որ ունենք մշտական շփում Քրիս-

420 Կողոսացիների 1.23

421 «Կերակուր և ըմպելիք» արտահայտությունը Զոն Նյուտոնի *«Օլնիի երգարանում»* գտնվող «Ի՞նչ ես մտածում Քրիստոսի մասին» երգից է (հմ. 89).
«Այն հարցին, թե ինչ եմ մտածում Հիսուսի մասին,
Թեև աղքատիկ են իմ լավագույն մտքերը,
Ասում եմ՝ Նա իմ կերակուրն ու ըմպելիքն է,
Իմ կյանքը, ուժը և ապավենը»:

422 Հովհաննես 14.16, 15.26, 16.13

տոսի հետ՝ այն Հոգու միջոցով, Որին Նա տվել է մեզ[423]: Աստծո Հոգին վկայում է Քրիստոսի մարմնավորման և քավչարար աշխատանքի մասին և հաստատում է դրանց իրականությունը մեր սրտերում[424]:

Ուշադրություն դարձրեք, որ ուսմունքը Սուրբ Հոգու ներքին վկայության մասին հանդիպում է ոչ միայն Հովհաննեսի գրքերում, այլև կարևոր տեղ է զբաղեցնում Պողոսի կողմից քրիստոնեական կյանքի նկարագրության մեջ: Սուրբ Հոգին և Նրանից հոսող կյանքը տրվել է յուրաքանչյուր հավատացյալի՝ որպես այն կյանքի երախայրի և գրավ, որը հայտնվելու է մեր ապագա փառավորման ժամանակ[425]: Սուրբ Հոգու միջոցով Աստծո սերը սփռվում է մեր սրտերում՝ որպես իրական և ճանաչելի փորձառություն[426]: Սուրբ Հոգին հեռացնում է մեզնից դատապարտության ստրկական վախը և փոխարինում է այն որդիության ուժգին հավաստիացմամբ, ինչի պատճառով մենք աղաղակում ենք. «Աբբա՛, Հա՛յր»[427]: Հոգին նույնպես առաջնորդում է մեզ Աստծո կամքով և աջակցում է մեր տկարությունների մեջ[428]: Վերջապես, Սուրբ Հոգին վկայում է, որ մենք Աստծո զավակներ ենք՝ շարունակաբար սրբացնելով մեզ, կերպարանելով մեզ Քրիստոսի պատկերին և ձևավորելով մեզանում Քրիստոսի պտղաբեր կյանքը[429]:

Համաձայն Հովհաննեսի և Պողոսի, Հոգու այս ներքին աշխատանքը կկատարվի Աստծո յուրաքանչյուր զավակի կյանքում: Այն յուրովի կդրսևորվի յուրաքանչյուր հավատացյալի համար: Եվ նույնիսկ ամենից հասուն սուրբի ընթացքի մեջ կլինեն էտման, ակնհայտ անպտղության և Աստծո հայտնված ներկայության պակասի կամ կորստի ժամանակահատվածներ[430]: Բայցևայնպես, յուրաքանչյուր հավատացյալի կյանքում

423 Ա Հովհաննես 3.24, 4.13
424 Ա Հովհաննես 4.2, 5.6-8
425 Հռոմեացիների 8.23, Եփեսացիների 1.13,14
426 Հռոմեացիների 5.5: Ընթերցողը չպետք է եզրակացնի, որ հավատացյալը շարունակաբար աստվածային սիրո նման դրսևորումներ է վերապրելու, և որ դրանք մշտապես նույն ուժգնությունն են ունենալու: Թեև Աստծո սերը մշտական իրողություն է հավատացյալի կյանքում, այդ սիրո ճանաչելի դրսևորումները կարող են ուժգնանալ կամ թուլանալ՝ ըստ հավատացյալի կարիքի, նրա նվիրման կամ Աստծո իմաստուն նախախնամության:
427 Հռոմեացիների 8.15, Գաղատացիների 4.6: Կրկին, պետք է հասկանալ, որ հավատացյալի հավաստիացումն իր որդիության մեջ կարող է տատանվել իր ուժգնությամբ: Թեև մեր ուժգին հավաստիացումը փրկության մեջ Հոր կամքն է, նույնիսկ ամենից հասուն սուրբը կարող է պայքարել կասկածների հետ՝ բախվելով իր դեմ դուրս եկող թշնամիներին, որոնք են մարմինը, այս աշխարհը և սատանան:
428 Հռոմեացիների 8.14,26
429 Հռոմեացիների 8.16, 15.13, Գաղատացիների 5.22,23: Հոգու վկայությունը, անկասկած, չի սահմանափակվում զգացմունքներով և խորհրդավոր դրսևորումներով: Նա նույնպես վկայում է մեր որդիության մասին աստվածապաշտ և քրիստոսանման կյանքի գործնական կամ ճանաչելի ապացույցներով:
430 Թեև Աստված ամենագո է, Նա միշտ չէ, որ հայտնում է Իր ներկայությունը, ո՛չ էլ այն մշտապես ճանաչելի է հավատացյալի համար: Նույնիսկ ամենից հասուն և

կլինեն Հոգու աշխատանքի գործնական և ճանաչելի դրսևորումներ: Սա Աստծո զավակների ի ծնե ստացած իրավունքն է, նաև այն միջոցներից մեկը, որոնցով մենք հավաստիանում ենք, որ ճանաչում ենք Նրան:

Փրկությանը ճշմարտապես հավատալու երրորդ նշանը հավիտենական կյանքի իրական լինելու վկայությունն է մեզանում: Որպեսզի հասկանանք այս պնդումը, մենք պետք է հիշենք, թե որն է հավիտենական կյանքի ճշմարիտ բնույթը: Այն պարզապես անվերջանալի օրեր չէ, այլ՝ կյանքի որակ, որի հիմքը և աղբյուրը Աստծուն և Նրա Քրիստոսին ճանաչելն է, նաև Աստծո և Նրա Քրիստոսի հետ հաղորդակցվելն է[431]: Եթե հավիտենական կյանքն ընդամենը անվերջանալի կյանք է կամ ապագա իրողություն Երկնքում, ապա նույնիսկ ամենից մարմնավոր և աշխարհիկ մարդը կարող է պնդել, որ ունի այն, և ոչ ոք չի կարող հերքել նրա խոսքերը: Այնուամենայնիվ, եթե հավիտենական կյանքը նոր տեսակի կյանք է, որն արտահայտվում է Աստծուն ճշմարտապես ճանաչելով և Նրա հետ հաղորդակցվելով, մարմնավոր և աշխարհիկ մարդու վստահությունն անհաստատ է՝ լավագույն դեպքում, և լիովին սխալ՝ վատագույն դեպքում:

Ավետարանական քրիստոնեության մեջ գոյություն ունի մի հայտնի աստվածաշնչյան սկզբունք. «Մենք գիտենք, որ հավիտենական կյանք ունենք, որովհետև հավատում ենք»: Այնուամենայնիվ, կարող ենք նաև փոփոխել բառերի հաջորդականությունը՝ ստանալով նոր սկզբունք, որը հավասարապես աստվածաշնչյան է. «Մենք գիտենք, որ հավատացել ենք, որովհետև հավիտենական կյանք ունենք»: Այլ կերպ ասած, մենք գիտենք, որ ճշմարտապես հավատացել ենք Քրիստոսին և հավատքով արդարացած ենք՝ մեր ներսում գտնվող նոր տեսակի կյանքի ճանաչելի և շարունակական իրողության շնորհիվ, որը սկսվեց մեր դարձի գալու պահից: Մենք գիտենք, որ փրկարար հավատք ունենք, քանի որ մուտք ենք գործել իրական, կենսական և հարատև շփման մեջ միակ ճշմարիտ Աստծո և Նրա ուղարկած Հիսուս Քրիստոսի հետ[432]: Սա՛ է հավիտենական կյանքը: Արդյո՞ք սա վերաբերում է մեզ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր ուսումնասիրությունն ամփոփելու համար սեղմ կդիտարկենք Աստծո ճշմարիտ զավակի հատկանիշները, որոնք ներկայացված են մեզ Հովհաննեսի Առաջին թղթում: Հուսով ենք, որ հավատացյալի հա-

աստվածապաշտ հավատացյալը կարող է անցնել այնպիսի փուլերով, երբ Աստծո ներկայության զգացումը նրա կյանքում քիչ է: Նման ժամանակահատվածների նպատակն է սովորեցնել հավատացյալին հավատքով վարվել և վստահել Աստծուն նույնիսկ խավարում:

431 Հովհաննես 17.3

432 Հովհաննես 17.3, Ա Հովհաննես 5.20

վաստիացումը փրկության մեջ կավելանա, իսկ դարձի չեկած մարդը կկարողանա հանգել այն եզրակացությանը, որ ինքը դեռ պետք է ճանաչի Քրիստոսին:

Ստուգում 1. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ լույսի մեջ ենք վարվում (Ա Հովհ. 1.4-7): Մեր կենսառճն աստիճանաբար համապատասխանում է այն ամենին, ինչ Քրիստոսը հայտնել է մեզ Իր բնության և կամքի մասին:

Ստուգում 2. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ մեր կյանքում կա զգայունություն մեղքի հանդեպ, ապաշխարություն և խոստովանություն (Ա Հովհ. 1.8-10):

Ստուգում 3. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ պահում ենք Աստծո պատվիրանները (Ա Հովհ. 2.3,4): Մենք ցանկանում ենք իմանալ Աստծո կամքը, ձգտում ենք հնազանդվել դրան և սգում ենք մեր անհնազանդության պատճառով:

Ստուգում 4. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ վարվում ենք՝ ինչպես որ Քրիստոսն էր վարվում (Ա Հովհ. 2.5,6): Մենք ցանկանում ենք նմանվել Քրիստոսին և ավելի կերպարանվել Նրան:

Ստուգում 5. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ սիրում ենք այլ քրիստոնյաների, ցանկանում ենք շփվել նրանց հետ և ձգտում ենք ծառայել նրանց՝ գործով և ճշմարտությամբ (Ա Հովհ. 2.7-11):

Ստուգում 6. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ մեզանում ավելանում է հակակրանքն այս աշխարհի հանդեպ, և քանի որ մենք մերժում ենք այն ամենը, ինչը հակասում և ընդդիմանում է Աստծո բնությանը և կամքին (Ա Հովհ. 2.15-17):

Ստուգում 7. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ շարունակում ենք հետևել քրիստոնեական հավատքի պատմական վարդապետություններին և սովորույթներին և հաղորդակցվում ենք այն մարդկանց հետ, որոնք նույն կերպով են վարվում (Ա Հովհ. 2.18,19):

Ստուգում 8. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ դավանում

ենք, որ Քրիստոսն Աստված է, և մեծագույն պատիվն ենք տալիս Նրան (Ա Հովհ. 2.22-24, 4.1-3,13-15):

Ստուգում 9. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ մեր կյանքում կա անձնական սրբության ցանկություն և գործնական ձգտում (Ա Հովհ. 3.1-3):

Ստուգում 10. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ արդարություն ենք գործում (Ա Հովհ. 2.28,29, 3.4-10): Մենք անում ենք այն, ինչը համապատասխանում է Աստծո արդար չափանիշին:

Ստուգում 11. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ հաղթում ենք այս աշխարհին (Ա Հովհ. 4.4-6, 5.4,5): Թեև հաճախ ճնշված և հյուծված ենք, մենք առաջ ենք շարժվում հավատքի մեջ: Մենք շարունակում ենք հետևել Քրիստոսին և ետ չենք դառնում:

Ստուգում 12. Մենք գիտենք, որ քրիստոնյա ենք, քանի որ հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է Իր Որդի Հիսուս Քրիստոսի մասին: Մենք հավիտենական կյանք ունենք միայն Նրանում (Ա Հովհ. 5.9-12):

Եթե մենք ունենք այս հատկանիշները, և դրանք ավելանում են մեզանում, մեր կյանքում կա ապացույց, որ մենք ճանաչել ենք Աստծուն և կրում ենք Աստծո զավակ լինելու պտուղը: Այնուամենայնիվ, եթե այս հատկանիշները բացակայում են մեր կյանքում, մենք պետք է մեծապես մտահոգվենք մեր անձի համար: Մենք պետք է ջանասիրաբար խնդրենք Աստծուն մեր փրկության համար: Մենք պետք է կրկին քննենք ինքներս մեզ՝ տեսնելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ ենք: Մենք պետք է ջանասեր լինենք, որպեսզի հաստատ դարձնենք մեր կոչումը և ընտրությունը[433]:

433 Բ Կորնթացիների 13.5, Բ Պետրոս 1.8-11

ՄԱՍ ԵՐԿՈՒ

Ավետարանի զգուշացումները կամ Զգուշացումներ դատարկ դավանություն անողներին

«Դու հավատում ես, որ մեկ Աստված կա: Ճիշտ ես անում: Նույնիսկ դևերն են հավատում և դողո՛ւմ են»:

– Հակոբոս 2.19 (NKJV)

«Նեղ դռնո՛վ ներս մտեք, որովհետև լայն է դուռը, և ընդարձակ՝ ճանապարհը, որ կորուստն է տանում, և շատերն են նրանով գնացողները: Քանի՛ նեղ է դուռը, և նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք, և քիչ են այն գտնողները»:

– Մատթեոս 7.13,14

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳ

Ավետարանի պարզունակացում

«Դու հավատում ես, որ մեկ Աստված կա: Ճիշտ ես անում: Նույնիսկ դևերն են հավատում և դողո՛ւմ են»:

– Հակոբոս 2.19 (NKJV)

Երկու տարբեր առարկա կամ երևույթ, առանձին դիտարկվելու դեպքում, կարող են գրեթե նույնական թվալ, սակայն ամեն ինչ կփոխվի, երբ դրանք կողք կողքի դրվեն: Այն, ինչը թեթև տարբերություն կամ աննշան շեղում էր թվում, կարող է սուր հակադրության վերածվել: Համեմատությունները և հակադրությունները, որոնք օգտավետ են համարվում գրեթե բոլոր ոլորտներում, մեծ օգնություն են նաև Սուրբ գրքի ուսումնասիրության և համակարգված աստվածաբանության կազմավորման մեջ: Եկեղեցին և առանձին հավատացյալները մշտապես շահել են, երբ համեմատել և հակադրել են իրենց համոզմունքները և սովորույթները Սուրբ գրքի մեծ չափանիշի հետ, ինչպես նաև եկեղեցու պատմության ավելի փոքր, բայց, միևնույն է, օգտակար չափանիշի հետ: Ներկայումս Ավետարանական շարժումը լավ կանի, եթե հետևի այս ընթացքին՝ անկախ այն բանից, թե որքան ցավոտ կլինի այն, և թե ինչ կարող է հայտնել: Նույնիսկ ամենազարհուրելի ախտի հայտնաբերումը վատ լուր չէ, եթե դեռ ժամանակ կա բժշկության համար:

Պատմական քրիստոնեական մտքի նույնիսկ ամենից հպանցիկ դիտարկումը՝ բարեկարգողներից մինչև մեր օրերը, ցույց է տալիս, որ գոյություն ունի մեծ հակադրություն ժամանակակից քրիստոնեության և մեր հայրերի Ավետարանի միջև: Այս հակադրությունը չի սահմանափակվում ազատամիտ համայնքներով, որոնք մերժում են ուղղադավան քրիստոնեական վարդապետության հիմնական դրույթները, այլ գտնվում է նույնիսկ ամենից պահպանողական և ավետարանական եկեղեցիներում: Ձեռք ձեռքի տված՝ մենք վերցրել ենք «Երանելի Աստծո փառավոր Ավետարանը» և փոքրացրել ենք այն՝ վերածելով հավատքի մակերե-

սային հանգանակի (Ա Տիմոթ. 1.11): Եվ յուրաքանչյուրը, ով դավանում է այն, վերստին ծնված և լիարժեք քրիստոնյա է հայտարարվում:

ՃԻՇՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ՝ ՍԽԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ

Հակոբոս առաքյալը, թվում է, դրդված է մեծ մտահոգությամբ ներկայացնել, թե ինչ է «սուրբ և անարատ կրոնասիրությունը» Աստծո համար (1.27): Այս պատճառով, նրա նամակն ընդհանուր առմամբ չափազանց շիտակ և երբեմն խիստ է: Նա նկարում է լայն վրձնախազվածքներով և գրեթե նրբերանգներ չի օգտագործում: Նա պարզ ասում է մեզ, որ տպավորված չէ մեր հավատքի դավանանքով և աստվածապաշտ լինելու պնդումներով: Նա պահանջում է ավելի ծանրակշիռ վկայություն. նա ցանկանում է տեսնել մեր հավատքի ապացույցը՝ մեր գործերով:

Այն հատվածում, որը մենք դիտարկում ենք, Հակոբոսը բացահայտում է իր ազգակից հրեաների սրտերը, որոնք միայն խոսքով էին դավանում իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ: Նրանք ընկել էին դատարկ դավանության մահացու ծուղակը: Նրանք որոշ չափով մտավոր համաձայնություն ունեին քրիստոնեական հավատքի վեհ վարդապետությունների հետ, բայց դեռևս դարձի եկած չէին: Այդ իրավիճակը շտկելու համար Հակոբոսը հիշում է Իսրայելի մեծագույն վարդապետական դավանանքը՝ «Շեմա»-ն. «Լսի՛ր, ո՛վ Իսրայել, մեր Տեր Աստված՝ Տերը, մեկ է» (Երկր. Օր. 6.4)[434]: Դրանից հետո նա սուր հեգնանքով պնդում է, որ համաձայնությունը բոլոր դավանանքներից մեծագույնին՝ որևէ արժեք չունի, եթե չի ուղեկցվում ճշմարիտ հավատքով, որը հանգեցնում է համապատասխան վարքի: Նա, ով հավատում է, որ կա միայն մեկ ճշմարիտ Աստված, լավ է անում: Այնուամենայնիվ, եթե նրա հավատքի արդյունքը խոսքային դավանանքից ավելին չէ, նա դևերից էլ վատ վիճակում է: Այդ չարամիտ և դատապարտված արարածները նույնպես հավատում են այդ ճշմարտությանը, սակայն նրանց սարսափելը ցույց է տալիս, որ նրանք ավելի մեծ ակնածանք ունեն Աստծո հանդեպ, քան նա, ով դավանում է իր հավատքը, սակայն ոչ մի ազդեցություն չի կրում դրանից:

Հակոբոսից մենք սովորում ենք, որ Քրիստոսի հանդեպ մեր հավատքի հրապարակային դավանությունը և մեր բանավոր համաձայնությունը անաղարտ վարդապետական ճշմարտություններին՝ փրկության վերջնական ապացույց չէ: Դևերը հավատում են Աստծուն վերաբերող բազմաթիվ ճշմարտությունների, և Սուրբ գիրքը նույնիսկ դեպքեր է նշում, երբ դևերը ճշգրիտ հրապարակային դավանություններ էին անում Քրիս-

434 *«Շեմա»* անվանումը եբրայերեն «լսել» բառից է:

տոսի մասին. «Եվ պիղծ ոգիները, երբ որ Նրան տեսնում էին, ընկնում էին Նրա առջև, աղաղակում էին և ասում, թե «Դու Աստծո Որդին ես»» (Մարկ. 3.11,12ա): Այնուամենայնիվ, այդ դևերը փրկված չէին: Թեև նրանք վեհ ճշմարտությունների էին հավատում, կարևոր վարդապետություններ էին հասկանում և հրաշալի բաներ էին դավանում, նրանք, միևնույն է, դևեր էին՝ հակված չարին, ընդդիմացած արդարությանը և թշնամացած Աստծո հետ: Նույն կերպով, մարդը կարող է հավատալ Աստծո մասին ճիշտ բաների և հրապարակավ դավանել իր համոզմունքները, սակայն դևից ոչնչով չտարբերվել:

Այն, ինչի հետ Հակոբոսը պայքարում էր գրեթե երկու հազար տարի առաջ, տարածված է նաև ժամանակակից քրիստոնեության մեջ: Հրեաները փոքրացրել էին Իսրայելի հինավուրց հավատքը՝ հասցնելով այն միաստվածության հրապարակային դավանանքի: Մենք փոքրացրել ենք քրիստոնեական հավատքը՝ հասցնելով այն ընդամենը մի քանի հասարակ հարցերի տրվող դրական պատասխանի: Ավետարանի ժամանակակից քարոզումը սովորաբար սկսվում է հետևյալ հարցով. «Դուք գիտե՞ք, որ մեղավոր եք»: Եթե այն մարդը, որին ուղղված է այս հարցը, դրական պատասխան է տալիս, տրվում է երկրորդ հարցը. «Դուք ուզո՞ւմ եք Երկինք գնալ»: Եթե նա տալիս է երկրորդ դրական պատասխանը, նրան խրախուսում են աղոթել և որ ընդունի Հիսուսին իր սրտի մեջ: Եթե նա աղոթում է և համոզված է, որ անկեղծորեն է անում դա, նրան հավաստիացնում են, որ նա փրկված է, և ընդունում են Աստծո ընտանիքում:

Այս գլխում մանրամասնորեն կդիտարկենք այս ավետարանչության հանրահայտ մեթոդը և կբացահայտենք, որ այն ոչ միայն անլիարժեք է, այլև խիստ վտանգավոր է: Գոյություն ունեն միլիոնավոր մարդիկ, որոնք նստած են եկեղեցական նստարաններին և դարձի եկած չեն, սակայն նրանց հավաստիացրել են փրկված լինելու մեջ, որովհետև ինչ-որ պահի նրանք ճիշտ պատասխաններ են տվել սխալ հարցերին:

ԴՈՒՔ ՄԵՂԱՎՈ՞Ր ԵՔ

Մենք գտնվում ենք անկում ապրած աշխարհում և անկում ապրած ցեղ ենք: Համաձայն Սուրբ գրքի, Աստծո պատկերը մարդու ներսում լրջորեն աղավաղվել է, և բարոյական արատավորությունն ամբողջությամբ ապականել է նրա էությունը՝ մարմինը[435], դատողությունը[436],

435 Հռոմեացիների 6.6,12, 7.24, 8.10,13
436 Հռոմեացիների 1.21, Բ Կորնթացիների 3.14,15, 4.4, Եփեսացիների 4.17-19

զգացմունքները[437] և կամքը[438]: Այդ դեպքում, ինչպե՞ս մարդը՝ առանց Սուրբ գրքի և Հոգու աշխատանքի, կարող է հասկանալ, թե ինչի մասին է խոսքը, երբ նրան հարցնում են մեղավոր լինելու մասին: Եթե նա պարզապես «այո» ասի, մի՞թե դա ինչ-որ բան է նշանակում: Մի՞թե դրանով մենք ինչ-որ բան ենք իմանում նրա մասին: Մեր մշակույթը «անօրինությունը ջրի պես է խմում» (Հոբ 15.16): Մեղքը հաճելի է համարվում, գնահատվում է, խրախուսվում է և տարածվում: Մենք ոչ միայն մեղանչում ենք, այլև պարծենում ենք մեր մեղքի չափով և ամոթի բացակայությամբ: Այնպես որ, եթե մարդն ընդամենը համաձայնում է, որ մեղավոր է, դա շատ քիչ բան է նշանակում: Սատանան կարող է ասել մեզ, որ ինքը մեծ մեղավոր է, բայց նրա խոստովանությունը որևէ կերպով չի մոտեցնի նրան Աստծուն, ո՛չ էլ կապացուցի, որ Աստված աշխատում է նրա սրտի հետ: Նույնը վերաբերում է մարդուն:

Գիտակցելով այս ամենը, մենք պետք է հասկանանք, որ ճիշտ հարցն այն չէ, թե արդյո՞ք մարդը գիտի, որ ինքը մեղավոր է, այլ՝ թե արդյո՞ք Աստված այնպիսի աշխատանք է կատարել նրա սրտում՝ Ավետարանը լսելու միջոցով, որ նրա պատկերացումը մեղքի մասին և վերաբերմունքը մեղքի հանդեպ փոխվել է: Արդյո՞ք նա սկսում է դիտարկել մեղքն այնպես, ինչպես Աստված է դիտարկում այն, և ինչպես Սուրբ գիրքն է խոսում այդ մասին: Արդյո՞ք նա համարում է, որ ինքը լիովին զուրկ է արժանիքներից և արժանի է Աստծո դատաստանին: Արդյո՞ք նրա սերը սեփական անձի և մեղքի հանդեպ փոխարինվել է զզվանքի և ամոթի զգացումներով: Արդյո՞ք նա փափագում է ներվել, ազատություն ստանալ և սրբվել:

Այլ բան է, երբ մարդն ասում է, որ ինքը մեղավոր է, և նույնիսկ աղաղակում է մեղքի դեմ, և լիովին այլ բան է, երբ նա ատում է հենց իր մեղքը և ամաչում է դրանից: Համաձայն Սուրբ գրքի, ոչ թե մեղքի բացահայտ խոստովանությունը, այլ մեղքի հանդեպ սրտի դիրքի փոփոխությունն է վկայում, որ Աստված փրկարար աշխատանք է կատարել մարդու սրտում:

Բունյանի *«Ուխտագնացի ճանապարհորդությունը»* գրքում մի գեղեցիկ օրինակ կա, որը ցույց է տալիս տարբերությունն այն մարդու միջև, ով պարզապես ընդունում է, որ ինքը մեղավոր է, և այն մարդու միջև, ով իր սրտում հակառակվում է իր մեղքին: Մենք տեսնում ենք սա ճշմարիտ հավատացյալ Հավատարիմի և կեղծ հավատացյալ Շաղակրատի զրույցի մեջ.

437 Հռոմեացիների 1.26,27, Գաղատացիների 5.24, Բ Տիմոթեոս 3.2-4
438 Հռոմեացիների 6.17, 7.14,15

«Շաղակրատ. Տեսնում եմ, որ մեր զրույցը լինելու է տարբեր իրողությունների ազդեցության մասին: Դա շատ լավ հարց է, և ես ուզում եմ պատասխանել քեզ: Առաջինը՝ և հակիրճ, երբ Աստծո շնորհքը սրտում է, այն աղաղակում է մեղքի դեմ...

Հավատարիմ. Սպասի՛ր: Կա՛նգ առ: Եկ հերթով խոսենք առանձին հասկացությունների մասին: Կարծում եմ՝ փոխարենը դու պետք է ասես, որ շնորհքը վկայում է իր մասին՝ դրդելով անձին խորշել իր իսկ մեղքից:

Շաղակրատ. Իսկ ի՞նչ տարբերություն մեղքի դեմ աղաղակելու և մեղքից խորշելու միջև:

Հավատարիմ. Շատ մեծ: Մարդը կարող է աղաղակել մեղքի դեմ՝ որպես ընդհանուր իրականության, բայց նա չի կարող խորշել դրանից, քանի դեռ չունի աստվածային ատելություն դրա հանդեպ»[439]:

Թշվառ և ինքնախաբեության մեջ գտնվող Շաղակրատը ճիշտ խոսել գիտեր, բայց նրա խոսքերից ոչ մեկն իրական չէր իր սրտում: Նա գիտեր, որ մարդը պետք է գիտակցեր մեղքն իր կյանքում և նույնիսկ խոսեր դրա դեմ, սակայն նրա սրտում չկար իրական ատելություն մեղքի հանդեպ և ամոթ՝ դրանում մասնակցություն ունենալու համար:

Շաղակրատի և Հավատարիմի այս կարճ զրույցից իմանում ենք, որ պետք է զգույշ լինենք, որպեսզի մակերեսորեն չվերաբերվենք մեղքին՝ թե՛ Ավետարանը քարոզելու, թե՛ Աստծուն փնտրողների հետ խորհրդատվության ժամանակ: Բավական չէ հարցնել մարդկանց, թե արդյո՞ք նրանք մեղավոր են՝ ըստ մեղքի մասին նրանց պատկերացման և ըստ նրանց ինքնագնահատականի: Մենք պետք է օգտագործենք Սուրբ գրքի բոլոր միջոցները, մինչև որ Աստծուն փնտրողները աստվածաշնչյան պատկերացում ունենան մեղքի մասին, գիտակցեն իրենց մեղավորությունը և վկայություն ունենան մեղքի հանդեպ նոր դիրքորոշման մասին: Միայն այդ դեպքում կարող ենք ավարտված համարել խոսակցությունը մեղքի մասին և անցում կատարել Ավետարանի մյուս հարցերին:

ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ ԵՐԿԻՆՔ ԳՆԱԼ

Հաճախ, համաձայն ժամանակակից ավետարանչական մեթոդների, եթե մարդը դրական է պատասխանում առաջին հարցին՝ իր մեղ-

439 Ջոն Բունյան, *«Ուխտագնացի ճանապարհորդության նոր հրատարակություն. Ջոն Բունյանի դասական աշխատության ժամանակակից վերանայված տարբերակը՝ Ուորեն Ուիրսբիի նշումներով»* (Գրենդ Ռեփիդս, «Discovery House Publishers», 1989թ.), էջ 99:

քի մասին, նրան տալիս են երկրորդը. «Դուք ուզո՞ւմ եք Երկինք գնալ»: Այս պահին պետք է մի կարևոր հարց տանք. անկախ մարդու դրական կամ բացասական պատասխանից, մի՞թե այդ պատասխանը որևէ բան է ասում մեզ նրա սրտի իրական վիճակի մասին: Եթե մարդը գերադասում է դժոխք գնալ՝ Երկնքի փոխարեն, դա պարզապես նշանակում է, որ նա չի գիտակցում դժոխքի սարսափները կամ մտավոր խնդիրներ ունի: Այնուամենայնիվ, եթե նա գերադասում է Երկինքը, մի՞թե դա ապացույց է, որ Աստված աշխատում է նրա հետ, և որ նրա կյանքում ապաշխարություն կամ փրկարար հավատք կա: Մարդիկ կարող են ցանկանալ կամ իսկապես ցանկանում են Երկինք գնալ գրեթե անթիվ պատճառներով, որոնց մեծ մասը եսասիրական է:

Առաջինը՝ մարդիկ կարող են ցանկանալ Երկինք գնալ՝ հանուն Երկնքի: Աշխարհիկ հումանիզմը և դրա հասարակական բարեփոխումները սովորեցրել են, որ բոլոր մարդիկ ներքուստ ձգտում են ուտոպիայի՝ իդեալական, կատարյալ վայրի: Միայն խելագարները կամ ցնորված հանցագործները ավելի կգերադասեն քաոսը, քան դրախտը: Բոլորը ցանկանում են կատարյալ աշխարհ, որտեղ ամեն ինչ գեղեցիկ է, որտեղ չկա վախ, մահը պարտված է, և բոլոր երազանքներն իրականանում են: Սակայն, մի՞թե այդ ցանկությունը նշանակում է, որ մարդու սրտում դարձի աշխատանք է կատարվել: «Հանուն Երկնքի» Երկինք գնալու ցանկությունը ոչինչ չի նշանակում:

Երկրորդը՝ մարդիկ կարող են ցանկանալ Երկինք գնալ, քանի որ այն դժոխքի միակ այլընտրանքն է: Պերուի հյուսիսային ջունգլիներում տարվա մեջ մի քանի անգամ հողագործներն այրում են իրենց բրնձի դաշտերը՝ հարդից ազատվելու համար: Կրակը սաստկանում է, և թվում է՝ ամբողջ աշխարհը կլանվում է ծխի և մոխրի մեջ: Ուշադիր նայելու դեպքում կարելի է տեսնել, որ ամեն տեսակի օձերն ու միջատները փախչում են կրակի բոցերից: Թեև նրանք առաջնորդվում են միայն բնազդով, նրանցում ինքնապահպանման ձգտում կա: Նրանք նոր ստեղծվածներ չեն: Նրանց ցանկությունները չեն փոխվել: Նրանք դեռ ցանկանում են այն խավար և պղտոր ճահճուտը, որը լքում են, և ցանկություն չունեն մնալու այն բարձրադիր հատվածում, որտեղ փախել են: Նրանք փախչում են նախորդ վայրից դեպի ներկա վայրը՝ միայն ինքնապահպանման համար:

Նմանապես, Երկինք գնալու ցանկությունը, որը ծնվում է դժոխքի հանդեպ վախից, ոչինչ չի ասում մեզ այն մասին, թե արդյո՞ք Աստված որևէ փոփոխություն է կատարել մարդու սրտում: Թեև ճշմարիտ է, որ վախը դժոխքից՝ աստվածաշնչյան դրդապատճառ է փրկության համար, սակայն այն ոչ մի դեպքում բացառիկ և գլխավոր դրդապատճառը չէ: Հովհաննես Մկրտիչը զգուշացրեց մարդկանց՝ հորդորելով փախչել

գալիք բարկությունից[440]: Հիսուսն ասաց մարդկանց, որ պետք է վախենալ Նրանից, Ով կարող է կործանել մարմինն ու անձը դժոխքում[441]: Պենտեկոստեի օրը Պետրոս առաքյալը բացականչեց՝ հորդորելով իր ունկնդիրներին ազատվել այս թյուր ազգից (կամ՝ սերնդից)[442]: Նույնիսկ *«Ուխտագնացի ճանապարհորդության»* մեջ Քրիստոնյան փախուստի դիմեց դեպի Երկնային քաղաք, քանի որ հասկացավ, որ իր ներկա բնակավայրի վրա կործանում էր գալիս: Այնուամենայնիվ, ճշմարիտ դարձի դեպքում մարդու վախը դժոխքից և ինքնապահպանման զգացումը շուտով նսեմացվում են Աստծո հանդեպ սիրով և արդարության ձգտումով: Ճշմարիտ դարձի դեպքում մարդը պարզապես չի փախչում իր վախի առարկայից, այլ վազում է դեպի իր ցանկության առարկան՝ թանկարժեք մարգարիտը[443], Աստծո թագավորությունը և նրա արդարությունը[444]: Նման մարդիկ վախենում են կորսվելուց, քանի որ վախենում են, որ առանց Հիսուսի են ապրելու[445]: Ինչևէ, այն, որ մարդու միակ ցանկությունը սեփական կաշին փրկելն է, և նա անկեղծ է դրանում, դեռ չի ապացուցում, որ իր կյանքում կատարվել է դարձի աշխատանքը:

Երրորդը՝ մարդիկ կարող են ցանկանալ Երկինքը՝ առանց Աստծո: Ինչպես արդեն նշեցինք, մարդկանց մեծ մասը ցանկանում է Երկինք գնալ, բայց նրանց միջև տարակարծություններ կան այն մասին, թե ինչպիսին այն պետք է լինի և ինչպես այն պետք է կառավարվի: Շատերը հավատում են, որ Երկինքն այնպիսի վայր է, որտեղ յուրաքանչյուրը ստանում է ճիշտ այն, ինչ ուզում է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով նման վայրի բնակիչների անթիվ հակասական գաղափարները, ինչպե՞ս այն կարող է գոյություն ունենալ: Անհրաժեշտ կլիներ, որ յուրաքանչյուրը մասնավոր երկինք ստանար, որտեղ նա կստեղծեր բոլոր կանոնները և բացարձակ իշխանություն կունենար: Արդյո՞ք Սուրբ գրքի Աստված տեղ ունի նման պատկերացման մեջ: Մենք պետք է հասկանանք, որ երբ մարդկանց մեծ մասը հաստատում է Երկինք գնալու ցանկությունը, իրականում նրանք նկատի չունեն այնպիսի վայր, որտեղ Աստված յուրաքանչյուր մտքի, հիացմունքի և երկրպագության կենտրոնում է: Գաղափարն այն թագավորության մասին, որում միայն Աստված է բացարձակ տիրակալը, և Նրա կամքն է միակ օրենքը, ոչ միայն օտար է, այլև անընդունելի է նրանց համար:

Կա մի կինոնկար, որը կոչվում է «Ո՞ւր են տանում երազանքնե-

440 Մատթեոս 3.7
441 Մատթեոս 10.28
442 Գործք 2.40
443 Մատթեոս 13.45,46
444 Մատթեոս 6.33
445 Հովիվ Չարլզ Լեյտերի մտքերից:

ը», որում մի ագնոստիկ բժիշկ մահանում է և Երկինք է գնում: Մինչ նա կանգնած է՝ ապշած մահից հետո հանդերձյալ կյանքի իրականությունից, մի հրեշտակ է մոտենում նրան: Նրանց զրույցի ընթացքում այդ բարի բժիշկը հետևություն է անում. «Եթե Երկինք կա, ուրեմն, Աստված նո՞ւյնպես կա»: Հրեշտակը դրական է պատասխանում, և այդ բարի բժիշկը հարցնում է. «Որտե՞ղ է Նա»: Հրեշտակը ձեռքը վեր է ուղղում և ասում է. «Այնտե՛ղ, վերևում»:

Այս հասարակ զրույցն ամբողջ հատորներ է պատմում մարդու մասին, նաև Աստծո հանդեպ նրա թշնամանքի մասին: Հասկանալով, որ անհնար է հերքել Աստծո գոյությունը, մարդն արել է այն ամենը, ինչ կարող է, որպեսզի լռեցնի իրեն հայտնի ճշմարտությունները Նրա մասին[446]: Նախորդ տասնամյակներում մարդկությունը ձգտում էր հեռացնել Աստծուն երկրային կյանքի ցանկացած ոլորտից (մշակույթից, կառավարությունից, կրթությունից և նույնիսկ կրոնից) և հարմարավետ կերպով Երկինք վտարել Նրան, որտեղ Նա անտեսանելի և անմասն է: Այժմ, թվում է, մարդկությունն ահռելի ճեղքում է ունեցել Աստծո դեմ իր պատերազմի մեջ՝ Նրան Երկնքից հեռացնելով և ավելի բարձր վայր հատկացնելով: Նման ուսուցչի, որը խնդրահարույց աշակերտին անցկացնում է հաջորդ դասարան՝ պարզապես իր դասարանից հեռացնելու համար, մարդկությունը հատկացրել է Աստծուն ամենաբարձր դիրքը՝ պարզապես Նրանից ազատվելու համար: Այս ամենը հայտնում է մի պարզ և անհերքելի ճշմարտություն. բոլորն են ցանկանում Երկինք գնալ, բայց մեծամասնությունը չի ցանկանում, որ Աստված այնտեղ լինի:

Ավելի մեծ ապացույցն այն մասին, որ մարդիկ ցանկանում են Երկինք՝ առանց Աստծո, այն է, որ մարդկանց մեծ մասի ցանկությունները և ձգտումներն այստեղ՝ երկրի վրա, լիովին հակառակ են Երկնքին: Ինչո՞ւ այն մարդը, ով չունի երկրպագելու ցանկություն այստեղ՝ երկրի վրա, պետք է ցանկանա Երկինք գնալ, որտեղ ամեն ինչ երկրպագության շուրջ է կենտրոնացած: Ինչո՞ւ մեղքը սիրող մարդիկ պետք է ցանկանան լինել այնպիսի վայրում, որտեղ մեղք չկա: Ինչո՞ւ արդարության հանդեպ անտարբեր մարդը պետք է ցանկանա այնպիսի վայր, որտեղ կատարյալ արդարություն է: Ինչո՞ւ Աստծո կամքի մասին չմտածող մարդը պետք է ցանկանա լինել այնպիսի վայրում, որտեղ Աստծո կամքն ամեն ինչ է:

Բոլորն են ցանկանում Երկինք գնալ, բայց այն երկինքը, որը նրանք ցանկանում են, նման չէ Սուրբ գրքում հայտնված Երկնքին: Այնպես որ, հարցն այն մասին, թե արդյո՞ք մարդը ցանկանում է Երկինք գնալ, ավելի ճիշտ կլինի այսպես վերաձևակերպել. «Արդյո՞ք Աստված այնպիսի

446 Հռոմեացիների 1.18

աշխատանք է կատարել ձեր կյանքում՝ Ավետարանը լսելու միջոցով, որ այժմ ձեզանում իրական և հստակ ձգտում կա Նրա հանդեպ: Արդյո՞ք այն Աստված, Ով մի ժամանակ չէր հետաքրքրում ձեզ, և Ում դուք չէիք ձգտում, ցանկալի է դարձել ձեզ համար: Արդյո՞ք սերն Աստծո հանդեպ արթնացել է ձեր սրտում: Արդյո՞ք ձեզանում կան նոր զգացումներ, որոնք անդիմադրելի կերպով գրավում են ձեզ դեպի Նա»: Հարցն այն չէ, թե արդյո՞ք մարդը ցանկանում է Երկինք գնալ, այլ՝ արդյո՞ք նա ցանկանում է Աստծուն: Ինչպես հայտարարեց Հիսուսը. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն Քեզ՝ միայն ճշմարիտ Աստված, և Նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհ. 17.3):

ՑԱՆԿԱՆՈ՞ՒՄ ԵՔ ԱՂՈԹԵԼ

Ժամանակակից ավետարանչության մեջ, որպես կանոն, եթե մարդը դրական պատասխան է տալիս առաջին հարցին՝ իր մեղքի վերաբերյալ, և երկրորդ հարցին՝ Երկնքի վերաբերյալ, նրան տալիս են երրորդ և վերջին հարցը. «Ցանկանո՞ւմ եք աղոթել և խնդրել Հիսուսին գալ ձեր կյանքի մեջ»: Եթե մարդը չի ցանկանում անձամբ աղոթել, նրան առաջնորդում են կրկնելու մեղավորի աղոթքը, որը հաճախ գրված է ավետարանչական գրքույկների վերջում: Աղոթքից հետո նրան հավաստիացնում են, որ եթե նա անկեղծորեն աղոթեց, Աստված փրկել է իրեն, և Հիսուսը եկել է իր սրտի մեջ:

Թեև սա դարձել է ժամանակակից քրիստոնեության *միակ* ավետարանչական մեթոդը, մենք պետք է տանք հետևյալ հարցը. «Արդյո՞ք այս մեթոդն աստվածաշնչյան նախադրյալ ունի: Արդյո՞ք այն գտնվում է Քրիստոսի և Նրա առաքյալների ուսմունքներում»: Թեև Սուրբ գիրքը սովորեցնում է, որ մարդիկ պետք է ընդունեն Քրիստոսին՝ որպես Փրկիչ և Տեր[447], սխալ է մտածելը, որ այս աստվածաշնչյան պահանջը կատարվում է, միայն որովհետև ինչ-որ մեկը որոշում է կայացնում հոգուտ Քրիստոսի կամ աղոթում է մեղավորի աղոթքը, հատկապես որ Քրիստոսը և Նրա աշակերտները ոչ մի անգամ նման հրավեր չուղղեցին մարդկանց: Իրականում, մարդկանց փրկության հրավիրելու նրանց ոճը շատ էր տարբերվում ժամանակակից հրավերից.

> «Եվ Հովհաննեսի մատնվելուց հետո Հիսուսը եկավ Գալիլեա, քարոզում էր Աստծո թագավորության Ավետարանը և ասում, թե՝ «Ժամանակը կատարվել է, և Աստծո թագավորությունը մոտեցել է: Ապաշխարե՛ք և հավատացե՛ք Ավետարանին»» (Մարկ. 1.14,15):

447 Հովհաննես 1.12

> «Որ ինչպես ետ չպահեցի ոչ մի օգտակար բան, որ չպատմեմ և սովորեցնեմ ձեզ՝ թե՛ հրապարակներում, և թե՛ տան մեջ: Հրեաներին և հույներին վկայություն տալով՝ ապաշխարել դեպի Աստված, և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ» (Գործք 20.20,21):

Ուշագրավ է, որ Սուրբ գրքում մենք չենք տեսնում, որ Քրիստոսը, առաքյալները կամ մեկ այլ անձնավորություն կոչ անի մարդկանց կրկնել մեղավորի աղոթքը կամ բացել իր սիրտը և խնդրել, որպեսզի Հիսուսը գա իր սրտի մեջ: Փոխարենը, մենք կրկին ու կրկին ապաշխարելու և Հիսուս Քրիստոսին ճշմարտապես հավատալու կանչ ենք տեսնում: Այնպես որ, հարցն այն չէ, արդյո՞ք մարդը ցանկանում է աղոթել և հրավիրել Հիսուսին իր սրտի մեջ, այլ՝ արդյո՞ք Աստված այնպիսի աշխատանք է կատարել նրա սրտում՝ Ավետարանը քարոզելու միջոցով, որ այժմ նա ապաշխարում է մեղքից և հավատում է Հիսուս Քրիստոսին՝ իր անձի փրկության համար:

Եթե մարդը դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ, պետք է ցնծալ նրա հետ, բայց ոչ՝ առանց հետագա հորդորների և զգուշացումների: Նրան անհրաժեշտ է խրախուսել այն ճշմարտությամբ, որ եթե նա իսկապես ապաշխարել է և հավատացել է, նա փրկված է: Այնուամենայնիվ, Նրան պետք է սովորեցնել, որ եթե նրա դարձն իրական է, այն շարունակ կհաստատվի, քանի որ նա կհարատևի աստվածային իրողությունների մեջ: Նա պետք է իմանա, որ փրկությունը նման չէ մեկանգամյա պատվաստման, որն այլևս ուշադրություն չի պահանջում: Եթե մարդը ճշմարտապես ապաշխարել է և փրկություն է ստացել, նա կշարունակի ապաշխարել, և ապաշխարությունն ավելի խորը կդառնա նրա կյանքի ամբողջ ընթացքում: Եթե նա ճշմարտապես հավատացել է փրկությանը, նա կշարունակի հավատալ և ավելի մեծ կախվածություն կունենա Աստծուց: Այլ կերպ ասած, ապացույցն այն մասին, որ Աստված իսկապես աշխատանք է սկսել մարդու կյանքում՝ դարձի միջոցով, այն է, որ Նա շարունակում է աշխատանք տանել նրա կյանքի ամբողջ ընթացքում: Եթե ենթադրյալ դարձի փորձառությունից հետո մարդը կրկին անտարբեր է դառնում աստվածային իրողությունների հանդեպ, չի ունենում առաջընթաց աստվածապաշտության մեջ և թողնում է հավատացյալների համայնքը, նա չունի աստվածաշնչյան հիմք՝ հավատալու համար, որ իր դարձի գալու փորձառությունն իրական է եղել, կամ՝ որ ինքը երբևէ Աստծո զավակ է եղել: Շատ մեծ և վտանգավոր սխալ է հրաժեշտ տալ նորադարձներին՝ առանց նման զգուշացման:

ՍԽԱԼ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՍԽԱԼ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Ոչ ոք չի վիճի, որ անթիվ անհատներ մեր փողոցներում և եկեղեցական նստարաններին խոստովանել են իրենց մեղքը, որոշում են կայացրել և աղոթել են՝ Քրիստոսին ընդունելու համար, սակայն չունեն ճշմարիտ դարձի գրեթե կամ բոլորովին ոչ մի պտուղ: Թեև Սուրբ գիրքը սովորեցնում է, որ կլինեն հավատքի սխալ դավանություններ նույնիսկ լավագույն քարոզի դեպքում[448], իրենց քրիստոնյա անվանող մարդկանց թիվը, որոնք շարունակում են մարմնավոր մնալ, պարզապես աներևակայելի է: Ի՞նչը կարող է լինել այս ախտի պատճառը:

Դիտարկելով Ավետարանական քրիստոնեության ընդարձակ տիրույթը և մանրամասնորեն ուսումնասիրելով անձնական և զանգվածային ավետարանչության հանրահայտ մեթոդաբանությունները, մենք պետք է եզրակացնենք, որ պարզապես քաղում ենք մակերեսային Ավետարանի և մեղավորներին դեպի Քրիստոսը առաջնորդելու առավել մակերեսային ձևի հունձքը: Արդյունքում ձեռք բարձրացնողների, շարքերի միջով առաջ եկողների, որոշում կայացնողների և մեղավորի աղոթքն աղոթողների մեծ մասն այդպես էլ իրականում դարձի չի եկել: Նրանք պարզապես ճիշտ պատասխաններ են տվել մի շարք սխալ հարցերի և կեղծ հավաստիացում են ստացել Ավետարանի տնտեսներից, որոնք պետք է ավելի լավ իմանային իրենց անելիքը: Նրանք ավազե հիմքի վրա են, և վերջում նրանց կործանում է սպասում: Մենք պետք է պատմենք նրանց, որ մարդիկ փրկվում են ոչ թե պարզապես որոշում կայացնելով և աղոթք անելով, այլ՝ Քրիստոսին մոտենալով: Մենք պետք է զգուշացնենք նրանց, որ անցյալում տեղի ունեցած դարձի վկայությունը այդ դարձի շարունակական աշխատանքն է մինչև ներկա ժամանակը, քանի որ այն Աստված, Ով փրկում է, նաև սրբացնում է: Եթե անցյալում կայացրած որոշումը չի ազդում նրանց ներկա կյանքի վրա, ամենայն հավանականությամբ, նրանց հույսը զուր է:

448 Մատթեոս 13.3-23

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑ

Նեղ դուռը

«Նեղ դռնո՛վ ներս մտեք, որովհետև լայն է դուռը, և ընդարձակ՝ ճանապարհը, որ կորուստն է տանում, և շատերն են նրանով գնացողները: Քանի՛ նեղ է դուռը, և նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք, և քիչ են այն գտնողները»:

– Մատթեոս 7.13,14

Լեռան քարոզը շատերի կողմից համարվում է քրիստոնեության հռչակագիրը: Դրա մեջ են գտնվում Քրիստոսի մեծագույն ուսմունքները, քրիստոնեական հավատքի վեհագույն առաքինությունները և քրիստոնեական աշակերտության խստագույն պահանջները: Այն եզակի քարոզ է, որն ավելի մեծ կշիռ ունի, քան որևէ մեկը կարող է ընկալել քրիստոնեական կյանքի ամբողջ ընթացքում:

Մատթեոս 7.13,14-ից սկսվում է այս զարմանալի քարոզի ամփոփիչ մասը: Այն պատշաճ ավարտ է՝ շիտակ, նույնիսկ կտրուկ զգուշացնում է Քրիստոսի խոսքերի լրջության և դրանց հավիտենական հետևանքների մասին: Այն ապացուցում է մեզ, որ այս քարոզն աննշան բաների մասին չէ, այլ՝ մարդկային գոյության ամենից ծանրակշիռ հարցերի: Հավիտենությունը դրոշմված է Քրիստոսի յուրաքանչյուր բառին, երբ Նա խոսում է Երկնքի և դժոխքի, հավիտենական կյանքի և հավերժական կործանման մասին: Նա խոսում է սարսափեցնող լրջությամբ, որպես մի անձնավորություն, որն ունի մեծագույն իշխանությունը՝ այդ հավիտենական հարցերին անդրադառնալու համար[449]: Կարդալով Լեռան քարոզը՝ մենք զարմանում ենք[450] և համոզվում, որ սա է լավագույն ժամանակը՝ լսելու համար Հոր վկայությունն Իր Որդու մասին. «Սա Իմ սիրելի Որդին է: Լսե՛ք Նրան» (Մարկոս 9.6, NKJV):

Այս հատվածում և Մատթեոս 7-րդ գլխի շարունակության մեջ կիան-

449 Մատթեոս 7.29
450 Մատթեոս 7.28

դիպենք մի շարք հակադրությունների: Մենք կբացահայտենք, որ գոյություն ունի երկու դուռ և երկու ճանապարհ, որոնցից մեկը տանում է դեպի կյանք, իսկ մյուսը՝ դեպի կործանում: Մենք կհանդիպենք երկու տեսակի քարոզիչների, որոնցից մեկը կերակրում է ոչխարներին, իսկ մյուսը հոշոտում է նրանց (խս. 15): Մենք կիմանանք երկու տեսակի ծառերի մասին՝ բարի ծառի, որը բարի պտուղ է բերում և էտվում է, և չար ծառի, որը չար պտուղ է բերում և կտրվում է ու կրակի մեջ գցվում (խոսքեր 16-20): Մենք կծանոթանանք երկու տեսակի դավանող քրիստոնյաների հետ, որոնցից մեկն ընդունում է Քրիստոսի իշխանությունը և մուտք է գործում Երկնքի թագավորության մեջ, իսկ մյուսը, թեև դավանում է նույն Տիրոջը, մերժում է ստանում մտնելիս և դժոխք է գցվում (խոսքեր 21-23): Ի վերջո, մենք կտեսնենք երկու շինարարների, որոնցից մեկը կառուցում է ժայռի վրա և փրկվում է Աստծո բարկության մոլեգնող ջրհեղեղից, իսկ մյուսը կառուցում է ավազի վրա և կուլ է գնում վերջին և անդառնալի դատաստանին:

ԴՈՒՌԸ ՔՐԻՍՏՈՍՆ Է

Մեր հատվածը սկսվում է հանդիսավոր և հաստատ հորդորով՝ «Նեղ դռնո՛վ ներս մտեք»: Այս պատվերը բաղկացած է ընդամենը չորս բառից, սակայն դրանք անասելի կշիռ ունեն և պահանջում են մեր լիակատար ուշադրությունը: Լսելով դրանք՝ մենք հայտնվում ենք այնպիսի վայրում, որից չունենք փախչելու ոչ մի հնարավորություն: Մենք խաչմերուկում ենք՝ վճռորոշ կետում: Մենք չենք կարող ձևացնել, որ չենք լսել, ո՛չ էլ կարող ենք հետաձգել մեր որոշումը կամ փոխանցել դրա պատասխանատվությունը մեկ այլ անձի: Մենք պետք է կարևոր որոշում կայացնենք կյանքի և մահվան միջև, Երկնքի և դժոխքի միջև, Քրիստոսի և ցանկացած այլ դռան միջև, որը ենթադրաբար տանում է Աստծո մոտ: Կանգնած «վճռի հովտում», մենք շրջապատված ենք անթիվ դռներով, որոնց մուշտարիները մրցում են մեր ուշադրության համար, սակայն այդ աղմուկի մեջ մենք լսում ենք Քրիստոսի մեծ ձայնը (Հովել 3.14): Նա ուղղորդում է մեզ Իրեն՝ միակ ճշմարիտ դռանը, միակ բացվածքին բանտի պարսպի մեջ, որի միջով կարող ենք անցնել և ազատություն ստանալ: Նա է այդ բացվածքն արել. Նա է այդ բացվածքը՝ այն դուռը, որով մարդը կարող է ներս մտնել և ապրել[451]: Մենք պետք է որոշում կայացնենք: Ո՞ւմ ենք լսելու: Ո՞ւմ ենք հավատալու: Կրկին, Հայր Աստծո խոսքերը հնչում են մեր ականջներում. «Նրա՛ն լսեք» (Մատթ. 17.5):

Եթե կա մեկ անհերքելի ճշմարտություն, որը վեր է ցանկացած բանա-

451 Հովհաննես 10.9

վեճից Նոր կտակարանում, դա այն է, որ Նազովրեցի Հիսուս Քրիստոսը «ճանապարհն է, ճշմարտությունը և կյանքը», և «ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ՝ Նրանով» (Հովհաննես 14.6): «Որովհետև մեկ Աստված կա և մեկ միջնորդ Աստծո և մարդկանց մեջ՝ Քրիստոս Հիսուս մարդը» (Ա Տիմոթ. 2.5): «Ուրիշ անուն էլ չկա երկնքի ներքև մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ փրկվել» (Գործք 4.12): Սա Քրիստոսի և քրիստոնեության մեծագույն ճշմարտությունն է և վրդովեցուցիչ իրողությունը: Նազովրեցի Հիսուսը կանգնած է ամբողջ աշխարհի առջև և աղաղակում է. «Ես՝ Ես եմ Տերը, և Ինձնից ջոկ փրկիչ չկա» (Եսայի 43.11): Այնքան էլ կարևոր չէ, որ այս աշխարհը փակում է իր ականջները, պատռում է իր հագուստը և կրճտացնում է իր ատամները: Աստված վճռել է այս հարցը շատ վաղուց՝ Իր հավիտենական և գաղտնի խորհուրդներում:

Քրիստոնեությունը պետք է ընդամենը մի քանի սանտիմետր տեղափոխվի ավելի էկումենիկ դիրքորոշման՝ ամբողջ աշխարհի ամենասիրված կրոնը դառնալու համար: Անհրաժեշտ է միայն մի փոքրիկ ձևափոխում՝ քրիստոնեության և ժամանակակից մտածելակերպի պատերազմին վերջ տալու և օրհնված գոյակցման և փոխհաստատման սկիզբ դնելու համար. մենք պետք է փոխարինենք *որոշյալ* հոդն *անորոշով* և հայտարարենք, որ Քրիստոսն այս աշխարհի փրկիչ է, ոչ թե Փրկիչը, ինչը բացառում է մնացածին: Եթե մենք փոխզիջման գնայինք այս մեկ հարցում, Քրիստոսը շատ ավելի մեծ լսարան կստանար, և մենք կդառնայինք այն մարդկանց հիացմունքի առարկան, որոնք այսօր ընդդիմանում են մեզ և կշտամբում են՝ անվանելով նեղ մտածելակերպ ունեցող ծայրահեղականներ և համաշխարհային հանրության հրապարակային թշնամիներ: Եթե մենք գնայինք այս փոքր թվացող զիջմանը, նույնիսկ կարող էինք ենթադրել, որ այս աշխարհը թույլ կտար Հիսուսին նստել իր փրկիչների պանթեոնի առաջին աթոռին, իսկ մեզ կարևոր պաշտոններ կհատկացներ այդ նստավայրում: Այդ դեպքում, ինչո՞ւ քրիստոնյաները զիջման չեն գնում այս հասարակ թվացող հարցում: Ինչո՞ւ են նրանք ընտրում օտարացում հասարակությունից, հալածանք և մահ՝ իրենց բացառիկությունից հրաժարվելու փոխարեն, ինչն առաջացնում է նույնիսկ ամենից հանդուրժողական պոստմոդեռնիստների տարակուսանքը և բարկությունը:

Այնուամենայնիվ, պատասխանը պարզ է. քրիստոնեությունը «ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքով կրոն է: Նազովրեցի Հիսուս մարդը կա՛մ Աստծո Որդին էր, կա՛մ հայհոյիչ. կա՛մ ճշմարտության մեծագույն հայտնությունը, կա՛մ ամենազազրելի ստախոսը, որը երբևէ ապրել է այս մոլորակում. կա՛մ աշխարհի Փրկիչը, կա՛մ անամոթ խաբեբա: Ի տարբերություն այլ կրոնների, քրիստոնեությունը առաջին հերթին ուս-

մունքների կամ բարոյական օրենքների շուրջ կենտրոնացած կրոն չէ, որի աշակերտները կարող են մասամբ կամ լիովին հետևել դրանց: Փոխարենը, այս կրոնը հիմնված է մի Անձնավորության վրա, որը կա՛մ այն է, ինչ ասում է Իր մասին, կա՛մ՝ ոչ: Կ. Ս. Լյուիսի՝ արդեն հայտնի դարձած եռընտրանքում Նազովրեցի Հիսուսը խելագար է, ստախոս է կամ Տերն է: Անթույլատրելի է Նրա Անձի վերաբերյալ որևէ զիջողություն թույլ տալ, ինչպես նաև փոխհամաձայնության գալ Նրա մասին Սուրբ գրքի նկարագրության և ցանկացած այլ կարծիքի միջև՝ անկախ այն բանից, թե որքան աննշան շեղում է պարունակում այդ կարծիքը[452]: Քրիստոնյա լինելու համար մենք պետք է հաստատուն լինենք այս դիրքորոշման մեջ: Ո՛չ Քրիստոսի Անձը, ո՛չ Նրա ուսմունքները զիջումների կամ փոխզիջման ենթակա չեն: Եթե մենք ցանկանանք ստանալ այս աշխարհի հավանությունը, ստիպված կլինենք կորցնել Քրիստոսի հավանությունը: Եթե մենք ձգտենք շահել մեր կյանքն այս աշխարհում, ստիպված կլինենք կորցնել այն հաջորդում[453]:

Եթե մենք իսկապես քրիստոնյա ենք դարձել, մենք գիտակցում ենք, որ վտանգավոր է տեղի տալ ցանկացած պահանջի, որն այս աշխարհը կարող է ներկայացնել մեզ ընդդեմ Քրիստոսի Անձի և աշխատանքի եզակի բնույթի: Ավելին, մենք գիտակցում ենք, որ չկա այդ պահանջներին տեղի տալու այլ պատճառ՝ բացի ինքնապահպանումից կամ այս չար աշխարհի համար ավելի ընդունելի դառնալուց[454]: Այն Քրիստոսը, որին մենք ճանաչում ենք և ծառայում ենք, կարիք չունի սակարկելու այս աշխարհի հետ կամ փորձելու ավելի նպաստավոր դիրք գրավել այլ չակերտավոր փրկիչների և տերերի թվում: Նա աշխարհի Փրկիչն է և ամենի Տերը[455]: Մենք գիտենք Աստվածաշնչից, որ Աստված այն Հիսուսին, Ում խաչեցինք, Տեր և Օծյալ արեց. Նա նստեցրեց Նրան Իր աջ կողմը՝

452 Կ. Ս. Լյուիսը գրում է. «Սրանով ես փորձում եմ թույլ չտալ, որ որևէ մեկն ասի այն իսկապես անմիտ բանը, որը մարդիկ հաճախ են ասում Նրա մասին. «Ես պատրաստ եմ ընդունել Հիսուսին՝ որպես բարոյականության մեծ ուսուցչի, բայց չեմ ընդունում Աստված լինելու Նրա պնդումը»: Սա այն է, ինչ մենք չպետք է ասենք: Եթե ցանկացած մարդ, պարզապես մարդ լինելով, ասեր այն բաները, որոնք ասաց Հիսուսը, նա բարոյականության մեծ ուսուցիչ չէր լինի: Նա կա՛մ խելագար կլիներ՝ նույն կերպով, ինչպես այն մարդը, որն ասում է, որ ինքը խաշած ձու է, կա՛մ՝ հենց սատանան դժոխքից: Դուք պետք է ինքներդ ձեզ համար ընտրություն կատարեք. կա՛մ այս մարդն Աստծո Որդին էր և է, կա՛մ՝ խելագար և նույնիսկ ավելի վատ բան... Դուք կարող եք լռեցնել Նրան՝ հիմար անվանելով, դուք կարող եք թքել Նրա վրա և սպանել Նրան՝ ինչպես դևի, կամ կարող եք Նրա ոտքերն ընկնել՝ Նրան Տեր և Աստված անվանելով: Բայց եկեք չառաջադրենք զիջողամիտ անմտություն այն մասին, որ Նա մարդկության մեծ ուսուցիչներից մեկն է: Նա նման տարբերակ չի թողել մեզ: Նա այդպիսի մտադրություն չուներ»: *«Հասարակ քրիստոնեություն»* (Վեսթվուդ, Նյու Ջերսի, «Barbour and Company», 1943թ.), էջ 45:

453 Մատթեոս 10.33,39, Բ Տիմոթեոս 2.12

454 Գաղատացիների 1.4

455 Հովհաննես 4.42, Գործք 10.36, Հռոմեացիների 10.12

շատ ավելի բարձր ամեն իշխանությունից, պետությունից, զորությունից և տերությունից, և ամեն անունից, որն անվանվում է ոչ միայն այս աշխարհում, այլև հանդերձյալում. Նա հայտարարեց, որ ամեն ծունկ կծալվի, և ամեն լեզու կդավանի, որ Նազովրեցի Հիսուսը Տերն է[456]: Թեև ամբողջ աշխարհը մոլեգնի այս ճշմարտության դեմ, Աստծո վճիռն անփոփոխ է: Աստված հայտարարեց Քրիստոսի Որդի լինելը՝ խոսքով և զորությամբ[457]: Նա օծեց Նրան՝ որպես Փրկիչ և Թագավոր Սիոնում, և տվեց Նրան ազգերը՝ որպես ժառանգություն, և երկրի ծայրերը՝ որպես ստացվածք[458]:

Ավետարանական շարժումը դեռևս բավականաչափ ողջամտություն ունի ցնծալու համար, երբ Քրիստոսն ազդարարվում է որպես փրկությանը տանող նեղ դուռ: Դավանող ավետարանականների մեծ մասը հաստատ հարում է քրիստոնեական հավատքի մեծագույն և կարևորագույն սյուներից մեկին՝ *«սոլուս Քրիստուս»*-ին («միայն Քրիստոսը»): Թեև ավետարանականները հաճախ համաձայն չեն միմյանց հետ բազմաթիվ հարցերում, որոնցից շատերը աննշան են, իսկ մյուսները՝ չափազանց կարևոր, մենք կարող ենք ուրախանալ այն բանով, որ նրանց մեծ մասը համոզված է այս մեծ ճշմարտության մեջ և պատրաստ է չարչարանքներ կրել դրա համար՝ այն, որ Քրիստոսի Անձը և պաշտոնը եզակի են, որ Քրիստոսը Տերն է, և չկա այլ փրկիչ՝ Նրանից բացի[459]:

Այնուամենայնիվ, մենք պետք է մշտապես զգոն լինենք, քանի որ կան նշաններ, որոնք վկայում են փոխզիջման մասին նույնիսկ դավանող ավետարանականների միջև: Մերօրյա պոստմոդեռնիստական մտածելակերպի համար չկա ավելի խիստ վրդովեցուցիչ բան, քան սեփական ճշմարտացիության մասին հայտարարելը՝ բացառելով մյուսներին: Ցանկացած ուղղվածություն մշակույթի, կրթության, քաղաքականության և տնտեսության ոլորտներում, նույնիսկ շատ կրոնների մեջ սկսել է հավատալ, որ խաղաղ փոխգոյակցումը միակ հնարավոր տարբերակն է այնպիսի հասարակության մեջ, որում յուրաքանչյուրը համաձայնում է առնվազն այն հարցում, որ ոչ ոք սխալ չէ: Այնպես որ, ցանկացած անհատ կամ համայնք, որը հարում է ճշմարտության որևէ բացարձակ չափանիշի և ձգտում է ուղղորդել մյուսներին դեպի այդ չափանիշը, ծայրահեղական և խտրական է, արժանի է ծաղրանքի և պետք է սահմանափակվի: Մենք չպետք է թերագնահատենք այս նոր աշխարհային հոգու ուժը: Ավելացնելով իր ազդեցությունը՝ այն կձգտի ոչ միայն թյուր կերպով ներկայացնել և նսեմացնել նրանց, ովքեր քարոզում են

456 Գործք 2.36, Եփեսացիների 1.20-22, Փիլիպեցիների 2.10,11
457 Սաղմոս 2.7, Մատթեոս 3.17, 17.5, Հռոմեացիների 1.4
458 Սաղմոս 2.6,8
459 Եսայի 43.11

միայն Քրիստոսի մասին, այլև զսպել ու սահմանափակել նրանց, մինչև իսկ լիովին լռեցնելը:

Որպես քրիստոնյաներ, մենք պետք է գիտակցենք, որ Երկնքի թագավորությունը գործ ունի մտքի, սրտի և խղճի հետ: Մենք ոչ մի դեպքում չպետք է ընդդիմանանք այն թշնամական մշակույթին, որը շրջապատում է մեզ, ցանկացած կերպով՝ բացի Ավետարանի ճշմարտությունից, աղոթքի զորությունից և արդար կյանքի ազդեցությունից: Միևնույն ժամանակ, չպետք է տեղի տանք դրա ավելացող հակառակությանը կամ մեր ինքնապահպանման գայթակղությանը: Ավելին, մենք չպետք է հավատանք այն ստին, որը գերակշռող է դարձել ավետարանականների միջև՝ այն, որ մենք կարող ենք վերածնակերպել Ավետարանը և պակաս վիրավորական դարձնել այն՝ չկորցնելով էական բովանդակությունը: Սա մեծ խաբեություն է, որն առաջադրող մարդկանց տկար աստվածաբանությունը չի սովորեցնում նրանց երկյուղ ունենալ Աստծուց և զգուշանալ հետևյալ հորդորից. «Բայց եթե մենք էլ, կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ նրանից ուրիշ, քան որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովված լինի» (Գաղատ. 1.8): Թեև մեր դիրքորոշումը հանդուրժելի չէ իր հանդուրժողականությամբ պարծեցող մշակույթի համար, թեև այն ծանրագույն նեղություններ է պատճառում մեզ, ու թեև այն մեծամասնության նախատինքի առարկա է դարձնում մեզ, մենք պետք է առաջ շարժվենք՝ հոսանքին հակառակ: Նման հավատարիմ սրբերին, որոնք ապրել են մեզնից առաջ, մենք չենք կարող ենթարկել մեր ուղերձն անաստված մշակույթի խորհրդին: Մենք պետք է հաստատակամորեն հարենք Սուրբ գրքին: Մենք պետք է կանգնենք Քրիստոսի համար: Մենք չենք կարող և չպետք է նահանջենք[460]: Քրիստոսի գերազանցությունը և եզակիությունը փոքրացնելը հավասար է Նրան ուրանալուն:

ՄՈՒՏՔ՝ ՈՒԺ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՎ

Քրիստոսը նեղ դուռն է՝ միակը, որը փրկության է տանում, և մենք պետք է մտածենք, թե ինչպես ենք արձագանքում այս ճշմարտությանը: Մեզ պատվիրված է մտնել Նրանով: Այս պատվերը թարգմանված է հունարեն *«էիսե՛րխոմայ»* բառից, որը նշանակում է ինչ-որ բանի մեջ մտնել: Այս բայը պատվեր է, և այն պահանջում է հնազանդություն ունկնդրից: Այն նույնպես օգտագործվում է աորիստ ժամանակաձևով, ինչը ենթադրում է

460 Մարտին Լյութերի հայտնի հայտարարությունը Վորմսի Ռայխսթագում՝ 1521 թվականին. «Ես չեմ կարող ենթարկել իմ հավատքը ո՛չ Պապին, ո՛չ էլ ժողովներին, քանի որ ցերեկվա պես պարզ է, որ նրանք հաճախ սխալվել են և հակասել են իրար: Այսպիսով, քանի դեռ Սուրբ գրքի վկայությունը չի համոզել ինձ հակառակ բանը... ես չեմ կարող և չեմ հրաժարվի իմ խոսքերից... Սրանում կանգնած եմ... այլ կերպ չեմ կարող: Եվ թող օգնի ինձ Աստված, ամե՛ն»:

եզակի, ոչ թե շարունակական գործողություն: Գաղափարն այն է, որ ունկնդիրները պետք է որոշում կայացնեն և վճռականորեն գործեն՝ ի պատասխան Քրիստոսի ուսմունքին: Մենք պետք է հիշենք, որ Քրիստոսը փիլիսոփա չէ, որի խոսքերի շուրջ պետք է մտորել. Նա մարմնավորված Տերն է, Ով ուշադրություն և հնազանդություն է պահանջում: Մարդկության համար միայն մեկ դուռ է բացված փրկության համար, և այն էլ սահմանափակ ժամանակով: Այդ իսկ պատճառով, մարդկանց հորդոր է ուղղված՝ մտնել դրանով մեծագույն հրատապության զգացումով և ջանքով: Եթե մենք պատկերացնենք այն ջանքը և նույնիսկ սաստկությունը, որով մարդիկ կպայքարեին՝ տապանը մտնելու համար, եթե նրանք հավատային Նոյի վկայությանը, մենք որոշ պատկերացում կկազմենք այն հրատապության մասին, որով մարդիկ պետք է ձգտեն մտնել այս նեղ դռնով:

Հրատապության զգացումը և ջանքը մեր հատվածում ավելի ակնհայտ են դառնում, երբ դիտարկում ենք Հիսուսի հորդորն այս մասին Ղուկասի Ավետարանում: Սուրբ գիրքը պատմում է, որ երբ Հիսուսը սովորեցնում էր՝ շրջելով գյուղերով, ինչ-որ մեկը հարցրեց Նրան. «Տե՛ր, մի՞թե քիչ են փրկվողները» (Ղուկ. 13.23): Նա պատասխանեց անուղղակի, բայց անսխալական հաստատմամբ՝ հետևյալ հորդորի միջոցով. «Ձա՛նք արեք, որ նեղ դռնով ներս մտնեք, որովհետև, ասո՛ւմ եմ ձեզ, շատերը կուզեն մտնել և չեն կարողանա» (Ղուկ. 13.24):

Հիսուսի խոսքերում կա և՛ հորդոր, և՛ զգուշացում: Առաջինը, Նա հորդորում է մեզ ջանք անել՝ նեղ դռնով ներս մտնելու համար: *«Ջանք անելը»* թարգմանված է հունարեն *«ագոնի՛զոմայ»* բայից, որը նշանակում է պայքարել, կռվել, քրտնաջան աշխատել կամ մեծ եռանդով ինչ-որ բան անել: Սկզբնականորեն այս բառը նշանակում էր մրցույթի մասնակցել կամ մրցել մարզական խաղերում և հաճախ օգտագործվում էր թշնամիների դեմ կռվելու կամ նեղությունների և վտանգների դեմ պայքարելու իմաստով: Նույնարմատ *«ագոնի՛ա»* բառն օգտագործվում է՝ նկարագրելու համար Քրիստոսի տագնապը Գեթսեմանիում[461]: Այս ամենից կարող ենք ճշտորեն եզրակացնել, որ նեղ դռնով, այսինքն՝ Քրիստոսի միջոցով Թագավորություն մտնելը բոլորովին հեշտ չի լինելու: Թեև մենք մուտք ենք գործում ապաշխարությամբ և հավատքով, դրանում լինելու է նաև եռանդ ու ջանք:

Երկրորդը՝ Հիսուսը ոչ միայն հորդորում է մեզ մտնել մեծ ջանքով, այլև զգուշացնում է, որ «շատերը կուզեն մտնել և չեն կարողանա»: Սա կարևոր ճշմարտություն է, որը հաճախ լիովին սխալ է հասկացվում: Հիսուսը չի սովորեցնում, որ շատերը կուզեն փրկվել, սակայն բավականին լավը չեն լինի դրա համար: Փոխարենը, Նա բացատրում է, որ թեև

461 Ղուկաս 22.43

շատերը կցանկանան ստանալ Թագավորության խոստումները և առավելությունները, նրանք չեն արձագանքի փրկության կանչին՝ իրենց անտարբերության, սրտի խստության, ինքնապահպանման ցանկության և այս աշխարհը սիրելու պատճառով: Անձնուրացությունը, որը պահանջվում է մարդուց, և թագավորության հետ առնչվող նեղությունները, հալածանքները և դժվարությունները բոլորին ետ կկանգնեցնեն մտնելու մտադրությունից՝ բացի ամենից հուսահատորեն ցանկացողներից: Ըմբռնելով Քրիստոսի խոսքերի իմաստը՝ Ջոն ՄակԱրթուրը գրում է.

> «Քրիստոսը չի ասում, որ ինչ-որ մեկը կարող է արժանանալ Երկնքին՝ ջանք գործադրելով: Որքան էլ ջանք գործադրեն, մեղավորները երբեք չեն կարողանա փրկել իրենց: Փրկությունը միմիայն շնորհքով է, ոչ թե գործերով: Բայց նեղ դռնով մտնելը, այնուամենայնիվ, դժվար է, քանի որ դա թանկ է նստում նրանց վրա՝ մարդկային հպարտության առումով, մեղքի հանդեպ մեղավորի ունեցած բնական սիրո պատճառով, նաև այս աշխարհի ու սատանայի կողմից ճշմարտությանը հակառակվելու պատճառով»[462]:

Գաղափարն այն մասին, որ փրկվելը հեշտ է, լիովին խորթ է Սուրբ գրքին և Եկեղեցու պատմության ամենից անվանի աստվածաբաններին ու ծառայողներին: Վիլյամ Հենդրիկսենը գրում է.

> «Այսպիսով, պարզ է, որ մեր Տերը չի հետևում այն մեթոդին, որն օգտագործվում է որոշ ինքնակոչ արթնության քարոզիչների կողմից, որոնք այնպես են խոսում, ասես «փրկվելը» աշխարհում ամենից հեշտ բանն է: Հիսուսը, ընդհակառակը, Թագավորության մեջ մուտքը պատկերում է որպես՝ անչափ ցանկալի, սակայն՝ բոլորովին ոչ հեշտ մի բան: Մուտքի դուռը նեղ է: Այն պետք է «գտնվի»: Եվ ճանապարհը, որի հետ այն կապակցված է, «նեղվածք» է: ...Մի՞թե ճշմարիտ չէ, որ իսկապես մեծ ավետարանիչները,- մտածե՛ք Ուայթֆիլդի, Սփերջենի և նրանց արժանի մերօրյա հետևորդների մասին,- շեշտադրում էին և շեշտադրում են միևնույն ճշմարտությունը»[463]:

Փրկվելը ոչ միայն հեշտ *չէ,* այլև լիովին անհնար է՝ առանց Աստծո զորության: Իրականում, ավելի հեշտ է, որ ուղտն ասեղի ծակով անցնի, քան մարդը դարձի գա[464]: Թեև դարձի բոլոր փորձառությունները եզակի են և տարբերվում են անձնական պայքարի չափով, Սուրբ գիրքը պատկերում է դարձը որպես դժվարին մի բան, որը մեծ վճռականություն է

462 Ջոն ՄակԱրթուր. *«ՄակԱրթուրի Ուսումնական Աստվածաշունչ»,* էջ 1542:
463 Վիլյամ Հենդրիկսեն. *«Նոր կտակարանի մեկնություն. Ըստ Մատթեոսի Ավետարանի մեկնության»* (Գրենդ Ռեփիդս, «Baker», 1973թ.), էջ 367:
464 Մատթեոս 19.24, Մարկոս 10.25, Ղուկաս 18.25

պահանջում Աստծուն փնտրողի կողմից: Հետևյալ հատվածները հատկապես օգտակար են այս ճշմարտությունը պատկերելու հարցում.

> «Բայց Հովհաննես Մկրտչի օրերից մինչև հիմա Երկնքի արքայությունն ուժով է առնվում, և ուժովները հափշտակում են այն» (Մատթ. 11.12)[465]:

> «Օրենքը և մարգարեները մինչև Հովհաննեսն են: Նրանից հետո Աստծո արքայությունն է ավետարանվում, և ամեն մարդ ջանք է անում ուժով մտնել նրա մեջ» (Ղուկ. 16.16):

Մինչ Երկնքի թագավորությունը տարածվում է աշխարհով մեկ և յուրաքանչյուր գալիք սերնդի կյանքում, ոմանք փորձում են ուժ գործադրել՝ այն ճնշելու համար, իսկ մյուսները ձգտում են մտնել դրա մեջ՝ հավասարաչափ՝ եթե ոչ ավելի մեծ ուժ գործադրելով: Մենք պետք է քաղենք հետևյալ ճշմարտությունը. Երկնքի թագավորությունը չի պատկանում անգործունյա, անտարբեր կամ անհոգ մարդկանց, այլ նրանց, ովքեր ջանասիրաբար և վճռականորեն գործում են, որպեսզի հավատքով մտնեն դրա մեջ: Սա չի նշանակում, որ մարդիկ շահում են Թագավորությունը կամքի ուժով, ինքնակարգապահությամբ կամ վճռականությամբ: Հիսուսը չի սովորեցնում, որ Իր թագավորությունը պատկանում է միայն ուժեղներին. Նա սովորեցնում է ճիշտ հակառակը:

Այն հրատապությունը, ջանքը և նույնիսկ ուժի գործադրումը, որով մարդիկ մուտք են գործում Թագավորության մեջ, Աստծո Հոգու երկակի աշխատանքի արդյունքն է: Առաջինը՝ Հոգին արթնացնում է մարդուն՝ ցույց տալով սեփական անձը փրկելու նրա բացարձակ անկարողությունը, և դրանով ուժգին ու հուսահատ ցանկություն է ստեղծում նրանում՝ շահելու միակ Անձնավորությանը՝ Հիսուս Քրիստոսին, Ով կարող է փրկել իրեն: Սովորական հանգամանքներում թեթև կազմվածքով և ֆիզիկապես թույլ մարդը գրեթե վտանգ չի ներկայացնի լավ մարզական վիճակում գտնվող երեք մարդու համար: Այնուամենայնիվ, եթե այդ մարդը ծովում խեղդվելիս լիներ և արդեն երրորդ անգամ սուզվեր, նա մեծ վտանգ կներկայացներ այդ երեք մարդու համար էլ: Միայն իր հուսահատության պատճառով՝ գիտակցելով իր վերահաս կործանումը, այդ թույլ մարդը կունենար ուժ և վճռականություն՝ կառչելու նրանից, ում կհասնեին իր ձեռքերը: Վախից դրդված՝ նա կկառչեր այնպիսի ու-

465 Քննարկումներն այս հատվածում և Ղուկաս 16.16-ում Քրիստոսի հստակ ասելիքի մասին՝ շարունակվում են: Թեև առաջադրվել են տարբեր մեկնություններ, ամենից գերակշռողը այս աշխատության մեջ ներկայացվածն է՝ այն, որ Աստծո թագավորության մեջ ճշմարտապես մտնող մարդիկ ունեն ջանասիրություն, վճռականություն և նախանձավորություն, որոնք առաջացել են փրկությանը հուսահատորեն ձգտելուց:

ժով, որ նույնիսկ ամենաուժեղ մարդը չէր կարողանա ազատվել նրանից: Նա աննահանջ համառություն կունենար՝ ոչ թե իր ֆիզիկական հատկանիշներից կամ բնավորության առաքինություններից որևէ մեկի, այլ՝ իր կարիքի պատճառով: Խեղդվելու և մահանալու հաստատ վտանգի դեպքում, նույնիսկ մեծ ուժ գործադրելով[466], անկարելի կլիներ այդ մարդուն պոկել փրկության միակ հույսից, որը նա գտել էր: Նույն կերպով, մարդու կողմից իր տկարության և սեփական անձը փրկելու բացարձակ անկարողության գիտակցումն է, որ դրդում է նրան պայքարել յուրաքանչյուրի և նույնիսկ բոլորի հետ, որոնք կընդդիմանան իրեն՝ թույլ չտալով մտնել այդ նեղ դռնով:

Երկրորդը՝ Աստծո Հոգին վերածնում է մարդու սիրտը և միտքը, որպեսզի նա ավելի թանկ համարի Քրիստոսին, քան ամեն ինչն այս աշխարհում, և դրանով իսկ ամեն ինչից առավել Քրիստոսին շահելու հուսահատ ցանկություն է ստեղծում նրանում: Այս նոր և սուրբ ձգտումներ ունեցող մարդը մղում է զգում դեպի Քրիստոսի անդիմադրելի գեղեցկությունը, որն իրական է դարձել իր համար: Նա պետք է շահի Քրիստոսին և միայն Նրա՛ն: Թեկուզ նրան անվերջանալի կյանք էլ տային՝ կատարյալ վիճակում, և շնորհեին ամեն մի արարված բարիք՝ հավիտյան վայելելու համար, եթե չլիներ Քրիստոսը, նա կհամարեր, որ դատապարտված է հավիտենական դժոխքի թշվառությանը: Աստծո Հոգու վերստեղծող և վերածնող աշխատանքի միջոցով նա արթնացել է Քրիստոսի գերազանցության համար, և այժմ այլևս ոչինչ, նույնիսկ ամենաբարձր երկինքը չի կարող գոհացնել նրան: Ամեն ինչ աղճատված, մթագնած և աղտոտված է՝ Քրիստոսի համեմատ: Զոն Ֆլավելի բառերով.

> «Ո՞վ գեղեցիկ արև, և գեղեցիկ լուսին, և գեղեցիկ աստղեր, և գեղեցիկ ծաղիկներ, և գեղեցիկ վարդեր, և գեղեցիկ շուշաններ, և գեղեցիկ արարածներ: Սակայն բյուրավոր, հազարավոր անգամներ գեղեցիկ Տեր Հիսո՛ւս: Ավա՛ղ, ես անարդարացի վարվեցի Նրա նկատմամբ՝ նման կերպով այս համեմատությունն անելով: Ո՞վ սև արև և լուսին, բայց ո՞վ գեղեցիկ Տեր Հիսուս: Ո՞վ սև ծաղիկներ, և սև շուշաններ ու վարդեր, բայց ո՞վ գեղեցիկ, գեղեցիկ, շատ ավելի գեղեցիկ Տեր Հիսուս: Ո՞վ բոլոր գեղեցիկ բաները՝ սև, տձև ու առանց գեղեցկության, երբ դուք դրվում եք գեղեցկագույն Տեր Հիսուսի կողքին: Ո՞վ սև երկինք, բայց ո՞վ գեղեցիկ Քրիստոս: Ո՞վ սև հրեշտակներ, բայց ո՞վ գերազանց գեղեցկությամբ Տեր Հիսուս»[467]:

466 Հովիվ Չարլզ Լեյտեր, զրույց հեղինակի հետ:
467 «Զոն Ֆլավելի կյանքը» *«Զոն Ֆլավելի աշխատությունները»* բազմահատոր հավաքածուի մեջ, (Լոնդոն, «Banner of Truth», 1968թ.), հտ. 1, էջեր ixx–xx:

Հոգու աշխատանքի միջոցով մարդը սկսում է ուժ գործադրել և նույնիսկ անում է դա անխոհեմ կերպով՝ առաջնորդվելով երկու դրդապատճառով, որոնք չէին կարող ավելի հակադիր լինել. մեկն անտանելի սարսափն է, իսկ մյուսը՝ անդիմադրելի գեղեցկությունը: Շնորհիվ այդ աշխատանքի, մարդը պատրաստ է լինում ընտրել դժոխքի սարսափները, միայն եթե կարողանար Քրիստոսի երեսը տեսնել, քան Երկնքի փառքերը՝ առանց այդ երեսը նույնիսկ մեկ ակնթարթ տեսնելու:

Երբ Աստված դեռ աշխատանք չէր կատարել մեզ հետ, բոլորս անտարբեր էինք կրոնի վեհ իրողությունների հանդեպ: Սակայն հետո՝ հանգամանքների կամ քարոզման, կամ էլ երկուսի միջոցով մենք արթնացանք՝ գիտակցելով մեր մեղքը և մեր կյանքի դատարկությունը: Հասկացանք, որ անկարող ենք կատարել օրենքի պահանջները և անզոր ենք ազատելու մեզ վերահաս դատաստանից: Այդ պահին Աստծո Հոգին հայտնեց մեզ Քրիստոսին, և մենք տեսանք Նրան՝ որպես թանկարժեք մարգարիտ, որը ամեն գնով պետք է ունենանք: Մենք չէինք մտածում սակարկելու մասին՝ դրա գինն իջեցնելու համար, այլ պատրաստ էինք կորցնել ամեն ինչ, նույնիսկ կորցնել բոլորին, որպեսզի ստանայինք Նրան[468]: Այժմ, երբ մենք Նրանն ենք, և Նա մերն է, և մենք ճաշակել ու տեսել ենք, որ Տերը քաղցր է, մենք չենք կարող թողնել Նրան և չենք անի դա[469]: Մեր սեփական անձը փրկելու բացարձակ անկարողությունը՝ այն գիտելիքի հետ մեկտեղ, որ միայն Նա ունի հավիտենական կյանքի խոսքերը, դրդում է մեզ անսասան ուժով հարել Նրան[470]: Մենք ավելի շուտ կարձակեինք մեր շունչը և կընկնեինք ժայռոտ անդունդը՝ ընդունելով մեր մահը, քան կթողնեինք Քրիստոսին: Մենք ավելի շուտ կհայտնվեինք Հյուսիսային Ատլանտյան օվկիանոսում՝ առանց որևէ օգնության, քան նույնիսկ մեկ ակնթարթ կմնայինք առանց Նրա: Մենք գիտենք, որ ամենասուր քարերը և ամենամոլեգնող ծովերը ոչինչ են՝ Աստծո զայրույթի համեմատ, որը սպասում է Քրիստոսին չունեցող մարդկանց: Ավելին, այժմ, երբ մենք ճաշակել և տեսել ենք, որ Տերը քաղցր է, երբ մենք տեսել ենք Նրա գեղեցկությունը, այլևս բարկության վախը չէ, որ դրդում է մեզ հարել Նրան, այլ Նրա Անձի վեհությունը և գերազանցությունը[471]: Մեր վերածնված սիրտը և նորագյուտ սուրբ ձգտումները պետք է շահեն Նրան: Մենք պարզապես չենք կարող ապրել առանց Նրա, այլապես մեծագույն թշվառության մեջ կհայտնվենք: Այսպիսով, մեր կողմից ուժի գործադրումը բխում է հուսահատությունից, և մեր հուսահատությունը բխում է այն բանից, որ մենք և՛ ունենք Նրա կարիքը, և՛ ցանկանում ենք Նրան:

468 Մատթեոս 13.45,46
469 Սաղմոս 34.8
470 Հովհաննես 6.69
471 Սաղմոս 27.4

ՃԵՂՔԵԼ ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մենք դիտարկեցինք այն, ինչը սուրբ ջանասիրություն, եռանդ և հրատապություն է ստեղծում Ճշմարտապես փրկությանը ձգտող մարդկանց սրտերում, բայց այժմ պետք է պարզենք, թե ինչու է այս ամենն անհրաժեշտ: Պատասխանն այն է, որ գոյություն ունեն ահարկու թշնամիներ և վիատեցնող հանգամանքներ, որոնք կանգնում են արթնություն վերապրած մեղավորի և այն նեղ դռան միջև, որով նա պետք է անցնի:

Այս Ճշմարտությունը գեղեցիկ և ազդեցիկ կերպով պատկերված է *«Ուխտագնացի Ճանապարհորդությունը»* գրքում: Քրիստոնյան՝ գլխավոր հերոսը, արթնություն է ապրում՝ գիտակցելով Կործանվող քաղաքի վերահաս ոչնչացումը: Իր հուսահատության պահին Ավետարանիչն ուղղորդում է նրան Մեկնիչի մոտ, որտեղ նա ականատես է լինում բազմաթիվ զարմանալի տեսարանների, որոնցից մեկը կարևոր լույս է սփռում այն Ճշմարտությունների վրա, որոնք այժմ դիտարկում ենք.

> «Մեկնիչը տարավ Քրիստոնյային՝ մոտեցնելով այդ պալատի դռանը: Դռան մոտ կանգնած էր մարդկանց մեծ բազմություն, որոնք ցանկանում էին մտնել, բայց չէին համարձակվում, իսկ դռնից մի փոքր հեռու գտնվող սեղանի մոտ մի մարդ էր նստած՝ առջևում դրված գրքով ու գրչով, որը գրի էր առնում նրանց անունները, ովքեր որոշում էին մտնել: Նա նույնպես տեսավ, որ դռան մոտ կանգնած էին բազմաթիվ սպառազինված մարդիկ՝ այն պաշտպանելու համար, և պատրաստ սպասում էին, որ վնաս և չարիք պատճառեին նրանց, ովքեր ուզում էին մտնել: Քրիստոնյան զարմացավ:
>
> Ի վերջո, երբ բոլորը ետ էին կանգնել՝ զինված մարդկանց վախից, Քրիստոնյան տեսավ մի ուժեղ և վճռական տեսք ունեցող մարդու, ով մոտեցավ սեղանի մոտ նստած գրագրին և ասաց. «Գրե՛ք իմ անունը, պարո՛ն»: Եվ երբ նա արեց դա, այդ մարդը դուրս քաշեց իր թուրը, սաղավարտը դրեց գլխին և շտապեց դեպի զինված մարդիկ, որոնք մահացու թափով հարձակվեցին նրա վրա: Սակայն այդ մարդը, ամենևին չհուսահատվելով, կատաղի հարվածում ու կտրում էր: Եվ այն բանից հետո, երբ նա շատ վերքեր ստացավ և շատ վերքեր պատճառեց նրանց, ովքեր փորձում էին ներս չթողնել իրեն, նա ճեղքեց իր ճանապարհը նրանց միջով և պալատ մտավ. պալատի վերևում քայլողների մոտից հաճելի ձայն էր լսվում. «Նե՛րս եկ, նե՛րս եկ, հավիտենական փառք կստանաս դու»»[472]:

472 Բունյան, *«Ուխտագնացի Ճանապարհորդությունը» գրքի նոր հրատարակություն,* էջեր 43-44:

Մեկնիչի տանը տեղի ունեցած այս տեսարանում Բունյանը վառ կերպով պատկերում է այն վճռականությունը, որն անհրաժեշտ է Թագավորության մեջ մուտք գործելու համար: Դրդված փրկության հուսահատ կարիքից և Քրիստոսի հանդեպ ունեցած անհագ ցանկությունից՝ արթնություն ապրած մեղավորը պետք է ջանք գործադրի այն ամենի դեմ, ինչն ընդդիմանում է նրան, և հավատքով շահի Քրիստոսին: Հենց սա նկատի ունի Քրիստոսը՝ հորդորելով նրանց, ովքեր ցանկանում են փրկվել, որ ձգտեն նեղ դռնով մտնել, և ջանք անեն՝ ուժով մտնելու համար[473]:

Ուժով Թագավորության մեջ մտնելու գաղափարը բարեկարգողների, մաքրակրոնների և վաղ ավետարանականների բառապաշարի մասն էր: Այնուամենայնիվ, այն խորթ է ժամանակակից քրիստոնեությանը: Փրկությունը և դարձն այժմ ներկայացվում են միայն այնպիսի այլաբանություններով, որոնք հաճելի են մարմնավոր մտքին: Փրկությունը ներկայացվում է որպես պարգև, որը հեշտորեն ընդունվում է՝ նման ցածր ճյուղից խնձոր քաղելուն կամ Սուրբ ծննդյան նվերը բացելուն: Թեև մենք պետք է անսասան պաշտպանենք և համարձակ հռչակենք այն ճշմարտությունը, որ փրկությունն անվճար է տրվում բոլորին, նման այլաբանություններն ամբողջական չեն, եթե դրանք մեկուսի են ներկայացվում: Մետաղադրամը պետք է երկու երես ունենա, որպեսզի դրանում որևէ արժեք լինի: Նույն կերպով, ձրիաբար տրվող Ավետարանի առաջարկը պետք է նաև ուղեկցվի հստակ և որոշակի հորդորներով, որոնք կոչ են անում մարդկանց հավատքով ջանալ՝ մուտք գործելու համար Թագավորություն, մինչև որ նրանք լիովին համոզված լինեն, որ մտել են դռնով և շահել են մրցանակը: Չարլզ Սփերջենն այս մասին գրում է.

> «Մեր Փրկիչը, տեսնելով Իր շուրջը տեղի ունեցող պայքարը՝ Իրեն մոտենալու համար, ասաց. «Սա պարզապես այն բանի օրինակն է, ինչ հոգևորապես անում են այն մարդիկ, որոնք փրկվելու են: Ինչպես որ դուք ջանում եք մոտենալ Ինձ, կուտակվում եք Իմ շուրջը, ձեռքերով և արմունկներով հրում եք մեկդ մյուսին, որպեսզի լսեք Իմ ձայնը, այնպես էլ պետք է լինի, եթե դուք ուզում եք փրկվել: Որովհետև Երկնքի թագավորությունն ուժով է առնվում, և ուժեղները հափշտակում են այն»: ...Քրիստոսը պատկերացրեց մարդկանց բազմություն, որոնք ցանկանում են մոտենալ կենդանի Փրկչին: Նա տեսավ, թե ինչպես էին նրանք ջանում առաջ գալ, կուտակվում էին, խռնվում էին, հրում էին իրար և տրորում էին միմյանց ոտքերը՝ Իր մոտ գալու անհամբեր ցանկությամբ: Նա զգուշացրեց Իր ունկնդիր-

473 Մատթեոս 11.12, Ղուկաս 13.24, 16.16

> ներին, որ քանի դեռ նրանք չունեն այդ եռանդն իրենց անձերում, երբեք չեն հասնի Իրեն՝ փրկություն ստանալու համար... Ինչ-որ մեկը կարող է ասել. «Դուք ուզում եք, որ մենք մտածենք, որ եթե մարդը ցանկանում է փրկվել, նա պետք է ուժ և սաստիկ ջա՞նք գործադրի՝ փրկություն ստանալու համար»: Այո՛, անկասկած, որովհետև դա է սովորեցնում այս հատվածը: Եվս մեկը կարող է պատասխանել. «Իսկ ես կարծում էի, որ այդ ամենը Աստծո աշխատանքն է»: Այո՛, սկզբից մինչև վերջ: Բայց երբ Աստված սկսում է Իր աշխատանքը մարդու հետ, Աստծո աշխատանքի մշտական արդյունքը մեզանում այն է, որ մենք նույնպես գործում ենք, և երբ Աստծո Հոգին իսկապես ջանք է գործադրում մեզանում, մենք նույնպես պետք է սկսենք ջանք գործադրել: Սա պարզապես ստուգում է, որով կարող ենք տարբերել նրանց, ովքեր ընդունել են Աստծո Հոգուն, նրանցից, ովքեր չեն ընդունել Աստծո Հոգուն: Նրանք, ովքեր ճշմարտապես ընդունել են Հոգուն, ուժ գործադրող մարդիկ են: Նրանք մեծ տագնապով ջանում են փրկված լինել, և ուժ գործադրելով՝ ձգտում են նեղ դռնով մտնել»[474]:

Այն մարդիկ, որոնք ցանկանում են փրկվել, աննահանջ են և վճռական, ինչպես որ պատկերում են և՛ Բունյանը, և՛ Սփերջենը: Քանի որ, թեկուզև փրկությունը ձրի է, այն հեշտ չէ: Բազում խոչընդոտներ՝ ներսից, և թշնամիներ՝ դրսից, զսպում են մեղավորներին՝ թույլ չտալով մոտենալ Քրիստոսին: Դրանց անհրաժեշտ է հակառակվել և հաղթահարել՝ ուժ գործադրելով: Թեև այս խոչընդոտները գրեթե անհաշվելի են, մենք կդիտարկենք միայն մի քանիսը, որոնք ամենից տարածվածն են:

Առաջինը՝ ովքեր ցանկանում են ընդունել Քրիստոսին, պետք է պայքարեն փրկությանը ընդդիմացող մեծագույն պատուհասի՝ ինքնաարդարացման դեմ: Փրկությունը շնորհվում է միայն նրանց, ովքեր գիտակցում են, որ լիովին զուրկ են ցանկացած արժանիքից՝ փրկվելու համար, և բացարձակապես անկարող են Աստծո առջև արդար դիրք ունենալ: Գործերը և շնորհքը, նաև ինքնաարդարացումը և խոնարհ փրկարար հավատքը ճիշտ հակառակն են: Այն մարդիկ, որոնք միայն կիսով չափ են մոտենում Քրիստոսին և փնտրում են Նրա օգնությունը՝ որպես իրենց սեփական արժանիքների լրացում, նույնքան հեռու են փրկությունից, որքան այն փարիսեցին, որը պնդում է, որ բոլորովին օգնության կարիք չունի: Այս հարցում ոչ մի վարանում չի կարող լինել: Հին ժամանակների սրբերը սիրում էին ասել, որ մարդը կարող է մտնել Թագավորության մեջ՝ անկախ բազմաթիվ ձախողումներից և սխալներից,

474 Չ. Հ. Սփերջեն. *««Նյու Փարք Սթրիթ»-ի ամբիոնը»* (Փասադենա, Տեխաս, «Pilgrim Publications», 1981թ.), հտ. 1, էջեր 217-218:

սակայն նա չի մտնի այնտեղ, եթե ինքնաարդարացման թեկուզ մի ծվեն ունենա իր հանդերձի վրա: Մտնելու համար մարդը պետք է հակառակվի իր գերեզմանը սպիտակ ծեփով պատելու ցանկացած փորձի: Նա պետք է պայքարի, որպեսզի հաղթահարի իր սրտի, իր մարմնի, սատանայի և նույնիսկ ժամանակակից ավետարանական շարժման խաբեությունն այն մասին, որ ինքն այնքան էլ վատը չէ, որքան իր մասին ասում են հնաոճ մաքրակրոն ուսմունքները:

Երկրորդը՝ ովքեր ցանկանում են ընդունել Քրիստոսին, պետք է պայքարեն ինքնավար լինելու ցանկության դեմ: Սուրբ գիրքը ոչինչ չգիտի այնպիսի փրկության մասին, որը Տեր չի դավանում Հիսուսին[475], և անկեղծ չի համարում այն դավանանքը, որը չի ապացուցում իր իսկությունը՝ Աստծո կամքին նորովի և շարունակաբար հնազանդվելով[476]: Ովքեր ընդունում են Քրիստոսին, պետք է ընդունեն և՛ Նրա բացարձակ իշխանության հավակնությունը, և՛ Նրա աշակերտության ծայրահեղ պահանջները: Ովքեր ցանկանում են փրկվել, պետք է ճեղքումներով անցնեն իրենց ընթացքը՝ արմատական որոշումներ կայացնելով: Ղուկասը պատմում է, որ երբ Հիսուսը տեսավ Իրեն և Իր աշակերտներին հետևող մեծ բազմություններին, ասաց. «Եթե մեկն Ինձ մոտ գա և չատի իր հորը և մորը, կնոջը և որդիներին, եղբայրներին և քույրերին, և հենց իր անձն էլ, նա չի կարող Իմ աշակերտը լինել: Եվ ով որ իր խաչը վեր չառնի և Իմ ետևից գա, նա չի կարող Իմ աշակերտը լինել»[477]: Իրեն հետևորդներ դառնալ ցանկացողներին նման պայմաններ թելադրելը սովորական էր Հիսուսի ավետարանչական մեթոդաբանության համար[478]: Սա բազմություններից անհատներ ջոկելու Նրա մեթոդն էր, որով բացահայտում էր բացարձակապես հուսահատներին, որոնք ամեն գնով ցանկանում էին շահել Իրեն: Քանի որ ժամանակակից ավետարանչությունը, թվում է, անտեսում է այս պահանջները, իր ունկնդիրները նման անասելիորեն ծանր ընտրություններ կատարելու կարիք չունեն: Արդյունքում բազմությունները դավանում են Քրիստոսին և պնդում են, որ փրկված են՝ առանց, նույնիսկ, ստիպված լինելու հաշվել դրա գինը, և չունենալով իրական պատկերացում այն մասին, որ իրենք հանձնել են իրենց անձերը Նրա բացարձակ իշխանությանը: Այդ իսկ պատճառով, ժամանակակից Ավետարանն ազդարարում է այնպիսի փրկություն, որը ոչ այնքան ձրիաբար տրվող է, որքան էժան է:

Երրորդը՝ ովքեր ցանկանում են ընդունել Քրիստոսին, պետք է պայքարեն իրենց փայփայած մեղքերը պահպանելու ցանկության դեմ:

475 Հռոմեացիների 10.9
476 Մատթեոս 7.21
477 Ղուկաս 14.26,27
478 Մատթեոս 10.39, 16.24-26, Մարկոս 8.34-38, Ղուկաս 9.23-26

Մատթեոսը պատմում է մեզ հարուստ երիտասարդ իշխանի մասին, որը չափազանց անկեղծ էր իր կրոնի և բարոյականության մեջ: Նա անկեղծորեն ցանկանում էր հավիտենական կյանքը, սակայն մեր Տիրոջ անսխալական զանազանությունը տեսավ մեկ բան, ինչը նա ցանկանում էր ավելին, քան նույնիսկ իր անձի փրկությունը. իր հարստությունը: Միակ մեղքը, որը նա չէր ցանկանում խոստովանել, և որից չէր ցանկանում հրաժարվել, ետ պահեց նրան Երկնքից և դժոխքի դատապարտեց նրա անձը: Նման արծվի, որը խորտակվում է լճում՝ հրաժարվելով բաց թողնել այն մեծ ձկանը, որին ցանկանում է, սակայն չի կարողանում բարձրացնել, այդպես էլ մեղավորը կխորտակվի դժոխքում այն մեղքի պատճառով, որը հրաժարվում է թողնել: Կարևոր է նշել, որ Քրիստոսը կատարելություն չէր պահանջում այդ երիտասարդից: Նա չի պահանջում, որ մեղավորը ջնջի իր մեղքը մինչև փրկվելը, այլ՝ որ խոստովանի, ատի և պայքարի դրա դեմ, կտրուկ խզի բոլոր կապերը դրա հետ և վազի Քրիստոսի մոտ: Աբրահամը պետք է զոհաբերեր իր Իսահակին, իսկ հարուստ երիտասարդը պետք է թողներ իր հարստությունը: Ովքեր ցանկանում են նեղ դռնով մտնել, ուրանում են նույնիսկ իրենց ամենից փայփայած չարիքը, և դրանով իսկ նրանց ջանասիրությունն ի հայտ է գալիս:

Չորրորդը՝ ովքեր ցանկանում են ընդունել Քրիստոսին, պետք է պայքարեն այս աշխարհի գայթակղության դեմ: Ըստ ֆիզիկայի, որքան մեծ է առարկայի ծավալը, այնքան մեծ է դրա ձգողությունը: Մենք կարող ենք կիրառել այս ճշմարտությունը նաև հոգևոր աշխարհի վերաբերյալ: Անկում ապրած մարդկության մեծ զանգվածը՝ իր գաղափարներով, դիրքորոշումներով և գործերով, մեծ ազդեցություն է թողնում Աստծուն որոնող մարդու վրա: Եթե նա ցանկանում է ընդունել Քրիստոսին, այս աշխարհում պետք է հեռացնի իրեն այն ամենից, ինչն ընդդիմանում է իրեն: Նա պետք է հոսանքին հակառակ լողա, մինչ հոսանքով գնացողները պարզում են իրենց ձեռքերը, որպեսզի ետ քաշեն նրան: Բունյանը զարմանալիորեն պատկերում է այս ճշմարտությունը *«Ուխտագնացի ճանապարհորդության»* մեջ: Հենց որ Քրիստոնյան վճռեց փախչել Կործանվող քաղաքից, իր ընտանիքը, ընկերները և համաքաղաքացիները փորձեցին տարհամոզել նրան՝ երկար և ճարտար փաստարկներով: Ճանապարհվելով դեպի նեղ դուռը, նա հանդիպեց մի քանի հերոսների, որոնք փորձեցին համոզել նրան վերադառնալ այս աշխարհ և ետ դառնալ խաչի մոտ տանող ճանապարհից: Քրիստոնյան լիովին կպարտվեր, եթե չլիներ Աստծո նախախնամությունը և Ավետարանչի գալուստը, որը զգուշացրեց, որ նա չլսեր այդ մարդկանց, և հանդիմանեց նրան, երբ նա սկսեց լսել նրանց:

Նույն կերպով, ովքեր ցանկանում են փրկվել Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքով, պետք է առաջ գնան՝ հաղթահարելով այս աշխարհի խաբուսիկ գայթակղությունները և հարկադրանքը: Նրանք պետք է խզեն միաբանությունն այս աշխարհի հետ, եթե ցանկանում են շահել Քրիստոսին, որովհետև այս երկուսն իրարամերժ են և մեծապես ընդդիմանում են իրար: Սուրբ գիրքը հստակ զգուշացնում է մեզ, որ այս աշխարհի հետ ընկերությունը՝ թշնամություն է Աստծո հետ, և ով որ ցանկանում է ընկեր լինել այս աշխարհին, Աստծո թշնամին է դառնում[479]: Փրկությանը փափագող մարդիկ հաճախ են կրկնում հետևյալը. «Որովհետև ի՞նչ օգուտ է մարդուն, եթե ամբողջ աշխարհը ստանա և իր անձը կորցնի»[480]:

Հինգերորդը՝ ովքեր ցանկանում են ընդունել Քրիստոսին, պետք է պայքարեն թշնամու՝ սատանայի ստերի դեմ: Համաձայն Սուրբ գրքի, յուրաքանչյուրը ծնվում է՝ բռնված նրա որոգայթի մեջ և ստրկացված նրա կողմից՝ նրա կամքը կատարելու համար[481]: Երբ, Աստծո շնորհքով, մարդն ուշքի է գալիս և փախուստ է փնտրում, սատանան գնում է նրա ետևից՝ նման մռնչացող առյուծի, որը փնտրում է, թե որին կուլ տա[482]: Եթե ինչ-որ մեկը մտածում է, որ սատանայի հետապնդումը միայն ցուցադրական է, նա պետք է գիտակցի, որ նրա որջը լիքն է Աստծուն փնտրող անթիվ մարդկանց չորացած ոսկորներով և դիակներով, որոնք ականջ դրեցին նրա ստերին և հավիտյան կորսվեցին[483]: Նա մարդասպան էր հենց սկզբից, և նրա զոհերի թիվն ավելանում է ամեն օր: Նա ստախոս է և ստերի հայրն է: Նա մեղադրում է Աստծուն և այն մարդուն, ով ցանկանում է հաշտվել Նրա հետ[484]: Նա թույնի գրեթե անսպառ պաշար ունի, որը պատրաստված է նրանց համար, ովքեր վճռում են գտնել Քրիստոսին: Նրա նետերից թույն է կաթում, և դրանք բոցավառվում են անմիջապես դժոխքի կրակներով[485]: Ինչպե՞ս ինչ-որ մեկը կարող է մտածել, որ փրկությունը հեշտ կլինի, եթե մարդկանց անձերի այսպիսի թշնամի գաղտագողի շրջում է: Նման Հիսուսի օրերի անպետք կրոնական առաջնորդներին, նա փորձում է փակել Երկնքի թագավորությունն ուղիղ մարդկանց առջև և ընդդիմանում է նրանց, ովքեր փորձում են մտնել այդտեղ[486]: Այս ուժգին հակառակությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է Աստծո շնորհքը և Աստծո Խոսքը, ինչպես նաև

479 Հակոբոս 4.4
480 Մարկոս 8.36
481 Բ Տիմոթեոս 2.26
482 Բ Տիմոթեոս 2.25,26, Ա Պետրոս 5.8
483 Մատթեոս 13.19, Մարկոս 4.15
484 Ծննդոց 3.1,4,5, Հովհաննես 8.44, Հայտնություն 12.10
485 Եփեսացիների 6.16
486 Մատթեոս 23.13

անհրաժեշտ է ուժ գործադրել՝ ներս մտնելու և առաջ գնալու համար[487]:

Ի վերջո, ովքեր ցանկանում են ընդունել Քրիստոսին, պետք է պայքարեն Աստծուն այլևս չփնտրելու գայթակղության հետ, որն առաջանում է Ավետարանի դժվարին լինելու պատճառով: Այս ճշմարտությունը գրեթե անհայտ է այսօր. այնպես որ, անհրաժեշտ է մանրակրկիտ բացատրել այն: Աստծո նախախնամության ճանապարհը մեղավորների փրկության մեջ առեղծված է լինելու մինչև հավիտենությունը, երբ Նա որոշի հայտնել այն: Ոմանք լսում են Ավետարանը և գրեթե անմիջապես հասկանում են: Նրանք ընդունում են Ավետարանը լիովին համոզվածությամբ, այն լսելու առաջին իսկ օրվանից: Այնուամենայնիվ, մյուսները գնում են շատ ավելի բարդ ճանապարհով: Նրանք լսում են Ավետարանը և մեծ անկեղծությամբ հետաքրքրվում են դրանով, սակայն չեն կարողանում հասկանալ Ավետարանը, և նրանց վճռականությունը մարում է՝ դրա պահանջների պատճառով: Նրանք ձգտում են ունենալ ճշմարիտ ապաշխարություն և հավատք, և չգիտեն՝ արդյո՞ք ունեն այս հատկանիշներից թեկուզ մեկը: Նրանք ուսումնասիրում են Սուրբ գիրքը, աղաղակում են Աստծուն և քննում են իրենց՝ հասկանալու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ են: Նրանք հյուծելու աստիճան հոգնեցնում են իրենց, սակայն գրեթե ճեղքում չեն ունենում կամ բոլորովին տեղից չեն շարժվում: Նման Բունյանի ուխտագնացին, նրանք հաճախ հայտնվում են Վհատության ճահճում՝ պարտված կասկածներից և հուսալքությունից: Այս դեպքում, անհրաժեշտ է հոգատար և համբերատար խորհրդատվություններ անցկացնել նրանց հետ: Ավետարանիչը պետք է իմանա, թե երբ մոտենա նրանց խոսքով և երբ նրանց մենակ թողնի Աստծո հետ: Նա չպետք է համարձակվի ինչ-որ առաջադրանք տալ նրանց՝ իրենց պայքարը թուլացնելու համար, օրինակ՝ աղոթել մեղավորի աղոթքը, իսկ հետո ասել, որ փրկված է, քանի որ արեց այդ աղոթքը[488]: Նա պետք է խրախուսի այդ մարդկանց խորհել Աստծո խոստումների շուրջ և աղոթքով փնտրել Աստծուն, քանի դեռ Քրիստոսը չի բացել նրանց միտքը՝ Սուրբ գրքերը հասկանալու համար[489], քանի դեռ Հայրը չի սփռել Իր սերը նրանց սրտերում և չի ազդարարել նրանց որդեգրությունը[490], քանի դեռ Հոգին վկայություն չի տվել նրանց հոգուն, որ իրենք Աստծո զավակներ են[491]: Այսպիսով, մենք պետք է խրախուսենք այդ մարդկանց, որ ձգտեն մտնել նեղ դռնով՝ միայն հավատքով, ձգտեն

487 Բ Տիմոթեոս 2.25,26, Ա Հովհաննես 2.14

488 Աստծուն փնտրողներին դեպի մեղավորի աղոթքն առաջնորդելը և նրանց փրկված հայտարարելը հիմնված է մի շարք հատվածների սխալ մեկնության վրա, որոնց թվում են Հովհաննես 1.12-ը, Հռոմեացիների 10.8,9-ը և Հայտնություն 3.20-ը:

489 Ղուկաս 24.45

490 Հռոմեացիների 5.5, 8.15, Գաղատացիների 4.6

491 Հռոմեացիների 8.16, Ա Հովհաննես 5.10

մտնել իրենց հանգստի մեջ Քրիստոսում, ինչպես որ վկայում է Եբրայեցիների թղթի հեղինակը.

> «Ուրեմն վախենանք, միգուցե... Նրա հանգստի մեջ մտնելու խոստումը մնալիս ձեզնից մեկը պակասված գտնվի: Որովհետև մենք էլ ենք ավետիքն առել, ինչպես և նրանք, բայց նրանց օգուտ չբերեց ավետիքի քարոզության խոսքը, որովհետև չխառնվեց հավատքի հետ լսողների մեջ: Բայց մենք՝ հավատացյալներս, մտնում ենք այն հանգստի մեջ, ինչպես ասաց, թե. «Ինչպես երդում արի Իմ բարկությունում, թե պիտի չմտնեն Իմ հանգստի մեջ», թեև գործերն աշխարհի սկզբից կատարված էին» (4.1-3)[492]:

Ավետարանիչը պետք է նուրբ հավասարակշռություն պահպանի: Մի կողմից, ոմանք մակերեսային մոտեցում ունեն փրկությանը և ամբողջ կյանքում ապրում են կեղծ հավաստիացմամբ, որի արդյունքը լինելու է իրենց վերջնական դատապարտումը: Նրանք չունեն ճշմարիտ ապաշխարության գրեթե ոչ մի ապացույց, և նրանց հավատքը մակերեսային է ու սխալ ուղղվածություն ունի: Ավելին, նրանց կյանքում չկա շարունակական սրբացման ոչ մի վկայություն և ոչ մի նկատելի աճ շնորհքի մեջ: Նրանք պարզապես շարունակում են ապրել իրենց ավետարանական կրոնով՝ իրականում գրեթե չմտահոգվելով հավիտենության և աստվածապաշտության մասին, և անուշադրության են մատնում իրենց անձերը ստուգելու կարիքը՝ պարզելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ են[493]:

Մյուս կողմից, ոմանք հավասարապես վտանգավոր անհավասարակշռություն ունեն իրենց աստվածաբանության մեջ. նրանք փակում են Երկնքի դուռը և դրսում են մնում՝ իրենց խստության պատճառով: Նրանք բարձր կարծիք ունեն փրկության մասին և ամենայն լրջությամբ են ընդունում այն: Նրանք հոժարաբար հնազանդվում են իրենց քննելու և իրենց կոչումն ու ընտրությունը հաստատ դարձնելու աստվածաշնչյան հորդորներին[494]: Այնուամենայնիվ, նրանք այնպիսի չափանիշ են սահմանել, որը վեր է Սուրբ գրքից: Նրանք հավատում են, որ մինչև կարողանան նույնիսկ աննշան չափով հավաստիացում ունենալ, իրենք պետք է կրեն ամենից հասուն քրիստոնյայի նշանները: Նրանք համեմատում են իրենց սկզբնական ապաշխարությունը և հավատքը այս երկու վարդապետությունների ամենից կատարյալ և հասուն նկարագրությունների հետ Սուրբ գրքում, և թերի են համարում իրենց: Նրանք համեմատում են իրենց ընթացիկ սրբացումն այն բանի հետ, ինչը ձեռք

492 Կարդացե՛ք նաև Եբրայեցիների 3.18,19, 4.10,11
493 Բ Կորնթացիների 13.5
494 Բ Կորնթացիների 13.5, Բ Պետրոս 1.10

չեն բերել նույնիսկ ամենից հասուն քրիստոնյաները, և կրկին թերի են զգում իրենց: Նրանք ջանում և ձգտում են՝ հասնելու համար այնպիսի բարոյական չափանիշի, որով իրենք կարող են հավաստիացում ունենալ փրկության մեջ, և դրանով վերածում են քրիստոնեությունը գործերի կրոնի: Նրանք այլևս չեն նայում Քրիստոսին, այլ ուղղել են իրենց հայացքն իրենց անձին և գործերին: Դրա արդյունքը մահացու է:

Ակնհայտ է, որ այս ախտերը բուժելու համար անհրաժեշտ են տարբեր դարմաններ: Առաջին ծայրահեղության մեջ գտնվող մարդը պետք է առերեսվի իր կրոնի մակերեսային բնույթի հետ, բայց երկրորդում գտնվող մարդը պետք է առերեսվի իր կրոնի խստությանը: Թեև առաջին ծայրահեղությունն ավելի շատ տարածված է մեր օրերում, երկրորդը, որն ավելի շատ աստվածապաշտ է թվում, նույնքան մահացու է: Կրկին ու կրկին, ավետարանիչները պետք է հավատարմորեն ազդարարեն ճշմարտությունն այն մասին, որ մարդը փրկություն է ստանում, երբ գիտակցում է իր բացարձակ անկարողությունը և նայում է միայն Քրիստոսին: Նրանք պետք է պարզորեն բացատրեն, որ թեև մեր հավաստիացումը կարող է թուլանալ կամ հաստատվել՝ մեր ներկա կենսառճի պատշաճ քննության արդյունքում, այն հիմնարար հարցերը, որոնք առաջին հերթին պետք է տանք ինքներս մեզ, հետևյալն են. «Արդյո՞ք մենք պարծենում ենք Քրիստոս Հիսուսով և չենք վստահում մարմնին»[495], «Արդյո՞ք մենք կորցրել ենք ցանկացած հույս մեր անձի հանդեպ», «Արդյո՞ք մենք փնտրում ենք միայն Քրիստոսին: Արդյո՞ք Քրիստոսը թանկագին է դարձել մեզ համար»:

Ովքեր քննում են իրենց ոչ սուրբգրային խստությամբ, կարիք ունեն հավելյալ բացատրություն ստանալ փրկության բնույթի վերաբերյալ: Թեև ընդունված է ասել, որ դարձի արդյունքը փոխված կյանքն է, միգուցե ավելի ճիշտ է ասել, որ դրա արդյունքը փոխվող կյանքն է: Դարձն առաջնորդում է Աստծո առջև մեր դիրքի ակնթարթային փոփոխության, սակայն մեր բնության վերափոխումը, հոգևոր կյանքի լեցունությունը, այս վերափոխման արտաքին ազդեցությունը՝ որպես տեսանելի իրողություն, ժամանակ է պահանջում, և այս ամենին հնարավոր է հասնել միայն բազում պայքարների միջոցով[496]: Թեև ապաշխարությունը և հավատքը, որի արդյունքը փրկությունն է, պետք է անկեղծ լինեն, մենք չպետք է ակնկալենք կոտրվածության և հավատքի նույն խորությունը նորահավատի կյանքում, որը տեսնում ենք քառասուն տարվա քրիստոնյայի կյանքում: Ապաշխարությունը և հավատքը, նման մյուս բոլոր քրիստոնեական առաքինություններին, ենթակա են սրբացման: Ավե-

495 Փիլիպեցիների 3.3
496 Հռոմեացիների 5.1, Բ Կորնթացիների 5.17, Եփեսացիների 2.4,5

լին, թեև նորահավատը հենց սկզբից արմատական փոփոխություններ կտեսնի իր կյանքում, մենք չպետք է ակնկալենք նրանից նույն սրբացումը, որը կարող ենք տեսնել հասուն հավատացյալի կյանքում: Մեր հավաստիացումը փրկության մեջ չպետք է հիմնվի մեր սրբացումն այլ հավատացյալների սրբացման հետ համեմատելու վրա: Մենք պետք է ապավինենք միայն Քրիստոսի արժանիքներին և գիտակցենք Աստծո նախախնամության և սրբացման աշխատանքը մեր կյանքում[497]: Մենք դարձել ենք Նրա ստեղծագործությունը:

Ժամանակակից ավետարանչությունը լուծում ունի այն մարդկանց համար, որոնք դժվարանում են հավաստիացում ստանալ: Կասկածներ ունեցող մարդիկ միայն պետք է աղոթեն մեղավորի աղոթքը և ապավինեն Աստծո խոստումներին: Ապա, եթե նրանք շարունակում են կասկածել, պետք է մերժեն այդ զգացումը՝ որպես սատանայից եկող սուտ դատապարտություն: Այնուամենայնիվ, սա անօգուտ բալասան է, որը տևական բուժում չի բերելու, և այն օգտագործող ծառայողները Աստծո ժողովրդի վերքերը մակերեսորեն բուժողների թվում են: Մեղավորի դարձի գալը չպետք է հասարակ կերպով դիտարկվի: Խաղաքարտին շատ բան է դրված, և ծառայողը պետք է նույնքան ջանասիրությամբ աշխատի խորհրդատվության մեջ, որքան Աստծուն փնտրող մարդը պետք է ջանա մտնել փրկության դռնով:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄԵՐՕՐՅԱ ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ավետարանը քարոզելուց հետո ավետարանիչը պետք է Քրիստոսի մոտ գալու եռանդագին կանչ ուղղի բոլորին: Այնուամենայնիվ, նա պետք է ուղղի այդ կանչը՝ համաձայն Աստվածաշնչի: Նա չպետք է փոխզիջման ենթարկի կամ մեղմացնի այն պահանջները, որոնք Քրիստոսը ներկայացնում է Թագավորության մեջ մտնել ցանկացողներին, և ո՛չ էլ պետք է առաջարկի իր ունկնդիրներին փրկության և հավաստիացման այնպիսի միջոց, որն անհայտ է սուրբ գրքին և անծանոթ է եկեղեցու պատմությանը: Երկուսն էլ Ավետարանի կեղծում է, որը վտանգ է ներկայացնում, և կավարտվի «պարզունակ հավատքի» ուսմունքով, որը գերմանացի նահատակ Դիտրիխ Բոնհոֆֆերն «էժանագին շնորհք» էր անվանում:

> «էժանագին շնորհքը նշանակում է շնորհք, որը վաճառվում է շուկայում՝ չարչու[498] ապրանքների պես: Խորհուրդները, մեղքի ներումը և կրոնի այլ ստոփանքները բաժանվում են իջեցված

497 Փիլիպեցիների 2.12,13, Եբրայեցիների 12.5-11
498 Էժանագին և անորակ իրեր վաճառող. մանրավաճառ շուկայում կամ տոնավաճառում:

գներով: Շնորհքը ներկայացվում է որպես Եկեղեցու անսպառ գանձարան, որից Եկեղեցին շռայլ ձեռքերով օրհնություններ է անձրևում՝ առանց հարցեր տալու և սահմաններ որոշելու: Շնորհք՝ առանց գնի. շնորհք՝ առանց արժեքի: Եվ շնորհքի էությունը, ինչպես մենք ենթադրում ենք, այն է, որ հաշիվը նախապես վճարված է, և քանի որ այն արդեն վճարված է, կարելի է ստանալ ամեն ինչ՝ ոչնչի դիմաց: Քանի որ վճարված գինն անսահման է, այն գործածելու և ծախսելու հնարավորությունները նույնպես անսահման են: Ինչպիսի՞ն կլիներ շնորհքը, եթե այն էժանագին չլիներ... Նման Եկեղեցում աշխարհն էժան ծածկոց է գտնում իր մեղքերի համար. չի պահանջվում ոչ մի զղջում, և դրանից էլ պակաս՝ մեղքից ազատվելու որևէ ցանկություն... էժանագին շնորհքը նշանակում է մեղքի արդարացում՝ առանց մեղավորի արդարացման: Շնորհքն ինքնին ամեն ինչ կատարում է, ասում են նրանք. ուրեմն, ամեն ինչ կարող է մնալ՝ ինչպես նախկինում էր... էժանագին շնորհքը նշանակում է ներման քարոզում՝ առանց ապաշխարություն պահանջելու, մկրտություն՝ առանց եկեղեցական կարգապահության, հաղորդություն՝ առանց դավանության, մեղքերի թողություն՝ առանց անձնական խոստովանության: էժանագին շնորհքը շնորհք է՝ առանց աշակերտության, շնորհք՝ առանց խաչի, շնորհք՝ առանց կենդանի և մարմնավորված Հիսուս Քրիստոսի»[499]:

Քրիստոսի հորդորների և զգուշացումների լույսի ներքո, մենք պետք է հարցնենք մեզ. «Ինչո՞ւ է մերօրյա Ավետարանական շարժման շնորհքն այդքան ցավոտ կերպով համապատասխանում Բոնհոֆֆերի էժանագին շնորհքի նկարագրությանը: Ինչո՞ւ է ջանք անելով Աստծո թագավորություն մտնելու մասին գաղափարն այդքան խորթ մեզ համար: Ինչպե՞ս է ստացվում, որ շատերը, թվում է, հեշտորեն են մտնում Թագավորություն»: Պատասխանը երկակի է: Առաջինը՝ ճշմարտապես քրիստոնյա լինելու գինը հազվադեպ է հիշատակվում Ավետարանի քարոզման մեջ. այդ իսկ պատճառով, Աստծուն փնտրող մարդը դժվարանալու պատճառ չունի: Ունկնդրի ներսում չկա ոչ մի ներքին պայքար Քրիստոսի կանչի վերաբերյալ, քանի որ նա չի բախվել աստվածաշնչյան քրիստոնեության իրողություններին: Քրիստոնեական աշակերտության ծայրահեղ պահանջներն այժմ փոխարինվում են «Աստված սիրում է քեզ և հրաշալի ծրագիր ունի քո կյանքում» պնդմամբ: Քրիստոնեությունը վերակազմավորվել է լայն ճանապարհի, որում չկան ռիսկեր, այլ միայն՝ ձեռքբերումներ. անհատի ինքնավարությունը համառորեն

499 Դիտրիխ Բոնհոֆֆեր. *«Աշակերտության գինը»* (Նյու Յորք, «Collier Books», 1963թ.), էջեր 45-47:

պաշտպանվում է, իսկ աստվածաշնչյան պատվիրաններն ավելի շուտ ուղեցույցներ են՝ ենթակա մշակույթին և խղճին. ընկերությունն այս աշխարհի հետ ոչ միայն թույլատրվում է, այլև խրախուսվում է. քրիստոնյան կարող է երկքաղաքացիություն ունենալ, և աստվածապաշտ մարդիկ այլևս չեն հալածվում:

Երբ Ավետարանը ճշմարտապես քարոզվում է, մարդը դեմ առ դեմ բախվում է դարերի ճակատամարտին. ինքնավարություն՝ ընդդեմ սեփական կամքն այլ Անձին հանձնելուն. ինքնապահպանում՝ ընդդեմ մեծամասնությանը հակառակվելու վտանգին. համբավ և մարդկանց հավանություն՝ ընդդեմ օտարացմանը՝ լավագույն դեպքում, և նահատակությանը՝ վատագույն դեպքում. այս տեսանելի աշխարհից կառչելը՝ ընդդեմ այն հիմունքով հաստատված քաղաքը փնտրելուն, որի ճարտարապետը և արարիչն Աստված է[500], և մեղքի անցողիկ հաճույքները վայելելը՝ ընդդեմ Քրիստոսի նախատինքն այս աշխարհի գանձերից ավելի մեծ հարստություն համարելուն[501]:

Երբ Ավետարանի պահանջները դառնան Ավետարանը քարոզելու մասը, Ավետարանը կրկին վրդովեցուցիչ կդառնա, և Քրիստոսին ընդունելու որոշումը մեծ ձգտման և պայքարի արդյունք կլինի: Դարձի եկած մարդը Բունյանի ստեղծագործության միջի վճռական դեմքով մարդու պես կլինի, որը հագնում է իր սաղավարտը, դուրս է քաշում իր թուրը, շտապում է դեպի նեղ դուռը և կատաղիորեն կտրում-բացում է իր ճանապարհը՝ հաղթահարելով մարմնի, այս աշխարհի և սատանայի հակառակությունը: Նա կլինի այն մարդու պես, որն ուզում է աշտարակ կառուցել, բայց, նախ, նստում և հաշվում է գինը՝ տեսնելու համար, թե արդյո՞ք իր ունեցածը բավական է ավարտելու համար[502]: Նա կլինի այն թագավորի պես, որը, մինչև այլ թագավորի մարտի դաշտում հանդիպելը, նստում և գնահատում է, թե արդյո՞ք ինքը բավականին ուժեղ է՝ տասը հազար զինվորի հետ, որպեսզի բախվի իր դեմ եկող թագավորին, որը քսան հազար զինվոր ունի[503]: Ավելին, նա կլինի սերմնացանի առակի մակերեսային կերպով դարձի եկած մարդկանց ուղիղ հակապատկերը: Առաջինը լսում է խոսքը և անմիջապես ուրախությամբ ընդունում, սակայն հաստատ արմատ չունի իրենում: Նրա դավանանքը միայն ժամանակավոր է, և երբ նեղություններ կամ հալածանքներ են սկսվում՝ Խոսքի պատճառով, անմիջապես նահանջում է[504]: Երկրորդը «խոսքը լսում է, և այս աշխարհի հոգսերը, և հարստության խաբեբա-

500 Եբրայեցիների 11.9,10
501 Եբրայեցիների 11.25,26
502 Ղուկաս 14.25-30
503 Ղուկաս 14.31-33
504 Մատթեոս 13.20,21

յությունը խեղդում են այն խոսքը, և անպտուղ է լինում» (Մատթ. 13.22):

Երկրորդը՝ այնպիսի տպավորություն է, որ շատերը հեշտորեն են թագավորություն մտնում, քանի որ մենք փոխարինել ենք Հոգու կողմից ձևավորվող ապաշխարությունը և հավատքը դատարկ դավանանքով և հարմարավետ ծեսով: Հետևաբար, Աստծուն փնտրող մարդը կարիք չունի ընկալել Ավետարանի մեծ ճշմարտությունները և փորձել զանազանել, թե արդյո՞ք դրանք իրականություն են դարձել իր կյանքում: Նրան առաջարկել են կատարել մեղավորի աղոթքի ծեսը, և նա հավաստիացած է իր փրկության մեջ, քանի որ կատարել է այն: Այնուհետև, ամբողջ կյանքի ընթացքում նա դիտարկում է այդ ծեսը որպես հիմք հավիտենական կյանքի հույսի համար: Սա է պատճառը, որ բազմաթիվ մարմնավոր և աշխարհիկ մարդիկ մեր փողոցներում և եկեղեցական նստարաններին համոզված են, որ ճիշտ դիրք ունեն Աստծո առջև՝ այնպիսի բանի պատճառով, ինչն իրենք արել են անցյալում, և ինչը չունի գրեթե կամ բոլորովին ոչ մի ազդեցություն իրենց ներկա կյանքում:

Ահա թե որտեղ ենք գտնում մեծ հակադրությունը մի կողմից՝ Սուրբ գրքի և եկեղեցու պատմության, և մյուս կողմից՝ ժամանակակից ավետարանական մեթոդաբանության միջև: Սուրբգրային ավետարանչության դեպքում Ավետարանը քարոզվում է, և մարդկանց հորդորում են ապաշխարել և հավատալ: Նրանց, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերում Ավետարանի հանդեպ, առաջնորդում են Սուրբ գրքի ուսումնասիրության՝ ճշմարիտ ապաշխարության և հավատքի բնույթն ավելի հստակ հասկանալու համար: Ավելին, այդ մարդկանց խրախուսում են ստուգել իրենց անձերը Սուրբ գրքի լույսի ներքո՝ որոշելու համար, թե արդյո՞ք այս երկու ավետարանական շնորհներն իրականություն են դարձել իրենց կյանքում: Եթե նրանք հավաստիացում չեն գտնում Սուրբ գրքի ընթերցանության միջոցով, ավետարանիչը չի փորձում հավաստիացում տալ նրանց՝ առաջարկելով ինչ-որ ավետարանական ծես կատարել, ինչից հետո նա «կնքում է գործարքը» և նրանց փրկված է հայտարարում: Փոխարենը, նա շարունակում է խորհրդատվություն տալ, աղոթել նրանց համար և ամենակարևորը՝ խրախուսում է նրանց փնտրել Աստծուն՝ աղոթքով և Խոսքի հետագա ընթերցանությամբ, մինչև որ Աստված տա նրանց այն հավաստիացումը, որը փնտրում են:

Ահա թե որտեղ է Աստծուն փնտրող մարդը հաճախ բախվում մեծագույն պայքարներին և տեսնում ուժ գործադրելու մեծագույն անհրաժեշտությունը: Ինչպես *«Ուխտագնացի ճանապարհորդության»* Ավետարանիչը, ժամանակակից ավետարանիչը միայն կարող է մատնացույց անել պանդուխտին դեպի նեղ դուռը. նա չի կարող անցկացնել նրան այդ դռնով: Պանդուխտը պետք է անձամբ կռվի այս մարտում:

Նա պետք է մարտնչի Սուրբ գրքի հետ, մինչև որ հասկանա այն, ինչ-պես նաև ապաշխարության և հավատքի իմաստն ընկալելու հետ, մինչև որ համոզված լինի, որ դրանք իրական են իր կյանքում: Նա նույնիսկ պետք է մարտնչի Աստծո հետ, մինչև որ Աստված հաստատում տա իրեն: Աստծուն փնտրող մարդը պետք է միայնակ առաջ գնա, մինչև որ գտնի Տիրոջը կամ գտնվի Նրա կողմից:

Ահա թե երբ ավետարանիչն ամենամեծ գայթակղությունը կունենա միջամտելու և տրամադրելու Աստծուն փնտրող մարդուն ինչ-որ մեթոդ, որով նա կարող է հավաստիացում ստանալ: Այնուամենայնիվ, ցանկա-ցած նման հավաստիացում արհեստական կլինի և կխափանի Աստծո իրական աշխատանքը: Աստծուն փնտրողին պետք է մենակ թողնել Աստծո հետ: Նա պետք է գործ ունենա Քրիստոսի հետ: Նա պետք է լրջորեն դիտարկի փրկության տանող ապաշխարությունը և մտորի, թե արդյո՞ք դա տեղի է ունեցել իր կյանքում: Նա պետք է ուսումնասիրի Աստծո խոստումները և ձգտի ընդունել դրանք, քանի դեռ Հոգու աշխա-տանքը սուրբգրային հավաստիացում չի տվել նրա անձին, Աստծո սերը չի սփռվել նրա սրտում, և որդեգրության հոգին չի դրդել նրան աղաղա-կել՝ Աբբա՛, Հա՛յր[505]:

Այն բանից հետո, երբ մարդիկ հավատքի դավանանք են անում, ճշմարիտ ավետարանիչը պետք է խրախուսի նրանց մեծ ուրախութ-յամբ, բայց ոչ՝ առանց զգուշացման: Նրանք պետք է իմանան, որ եթե իրենց ներկա հավաստիացումն իրական է, ապա իրենք մնալու են Տիրոջ հետ՝ անցնելով բազմաթիվ նեղություններով, նաև աճելու են սրբացման և Քրիստոսին կերպարանվելու մեջ: Այնուամենայնիվ, եթե նրանք այս աշխարհի վերադառնան կամ շարունակեն մարմնավոր կերպով ապրել՝ առանց աստվածային խրատի, պետք է վիճարկեն իրենց դավանանքի իսկությունը[506]: Նրանք պետք է մեծ ջանք գործադրեն՝ հավաստիանա-լու համար, որ Աստված կանչել և ընտրել է իրենց[507]: Նրանք պետք է ստուգեն իրենց Սուրբ գրքի լույսի ներքո՝ պարզելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ են[508]:

Հոգու աշխատանքը մարդու անձում մեծ առեղծված է, որը պահան-ջում է բացարձակ վստահություն Աստծո նախախնամությանը: Որոշ մարդիկ լսում են Ավետարանը, ապաշխարում են և հավատում են՝ ան-միջապես հավաստիացում ստանալով, որը ձևավորվում է նրանց մեջ Աստծո Հոգու կողմից: Մյուսները պայքարում են օրերով, շաբաթներով կամ, նույնիսկ, ամիսներով, մինչև նման հավաստիացում ստանալը: Որ-

505 Հռոմեացիների 5.5, 8.15,16, Գաղատացիների 4.6
506 Եբրայեցիների 12.5-8
507 Բ Պետրոս 1.10
508 Բ Կորնթացիների 13.5

պես մարդիկ, որոնց վստահված է Ավետարանը, մենք պետք է զգույշ լինենք, որ յուրաքանչյուր դեպքում ճիշտ վարվենք՝ մեծ զանազանությամբ և համբերությամբ: Այլ բան է առաջնորդել ինչ-որ մեկին որևէ ավետարանական համակարգով և փրկված հայտարարել նրան՝ նրա անկեղծ համաձայնության պատճառով: Բոլորովին այլ բան է առաջնորդել նրան դեպի փրկության խոստումները և սպասել նրա հետ, մինչև որ նա ճշմարտապես մտնի այդ նեղ դռնով, և Աստված շնորհի նրան հավաստիացման հրաշալի պարգևը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹ

Նեղ ճանապարհը

«Նեղ դռնո՛վ ներս մտեք, որովհետև լայն է դուռը, և ընդարձակ՝ ճանապարհը, որ կորուստն է տանում, և շատերն են նրանով գնացողները: Քանի՛ նեղ է դուռը, և նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք, և քիչ են այն գտնողները»:

– Մատթեոս 7.13,14

Մատթեոս 7.13,14-ում նկարագրվում է ոչ միայն դուռ, այլև ճանապարհ, որոնցից երկուսն էլ նեղ ու նեղվածք են: Այստեղից հասկանում ենք, որ դարձի գալը չի սահմանվում միայն դռնով, որով մարդն անցնում է, այլև ճանապարհով, որով նա գնում է: Երբ ուսումնասիրում ենք ժամանակակից ավետարանական քարոզը, թվում է՝ հաճախ միայն պատմության կեսն է ներկայացվում:

Աստծո շնորհքով, համաշխարհային Ավետարանական շարժման մեծ մասը շարունակում է հարել այն ճշմարտությանը, որ Հիսուսը միակ Փրկիչն ու Միջնորդն է Աստծո և մարդկանց միջև[509]: Մենք նույնպես կարող ենք փառք տալ Աստծուն, որ մեծամասնությունը հաստատ կանգնած է *«սոլա գրատիա»* և *«սոլա ֆիդե»* վարդապետություններում՝ միայն շնորհքով և միայն հավատքով[510]: Այնուամենայնիվ, թեև այսօր շատ է քարոզվում այն մասին, թե ինչպես մտնել Թագավորություն, քիչ է խոսվում այն վկայությունների մասին, որոնք ապացուցում են մարդու մուտքը: Մենք նեղ դռնով ենք Թագավորություն մտնում, բայց ապացույցն այն մասին, որ այդ դռնով մտել ենք, այն է, որ այժմ նեղ ճանապարհով ենք քայլում[511]: Մենք արդարանում ենք միայն Քրիստոսի Անձի

509 Հովհաննես 14.6, Գործք 4.12, Ա Տիմոթեոս 2.5

510 Եփեսացիների 2.8,9

511 Վիլյամ Հենդրիկսենը գրում է. «Այսպիսով, «դուռը» և դրան հետևող «ճանապարհը» շատ բնական և հասկանալի հաջորդականություն է՝ հատկապես հաշվի առնելով այն, ինչ այս խոսքը, հավանաբար, նկատի ունի. ճիշտ սկզբնական ընտրությանը (դարձին) հաջորդում է սրբացումը, նաև հակառակը՝ սխալ սկզբնական ընտրությանը հաջորդում է աստիճանական խստացումը»: *«Մատթեոս»,* էջեր 368-369:

և աշխատանքի հանդեպ ունեցած հավատքով: Այնուամենայնիվ, մեր արդարացման վկայությունը մեր շարունակական սրբացումն է: Նեղ դուռը և նեղվածք ճանապարհն անբաժանելի են[512]: Առաջինով մտնող մարդու կյանքը ձևավորում է երկրորդը:

ՆԵՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

«Ճանապարհ» բառը թարգմանված է հունարեն *«հոդո՛ս»* բառից, որը բառացիորեն նշանակում է ճանապարհ կամ բանուկ արահետ: Փոխաբերական իմաստով այն կյանքի ոճի, վարքագծի կամ մտածելակերպի իմաստ ունի: Այս բառը վեց անգամ օգտագործվում է Գործք առաքելոց գրքում՝ որպես քրիստոնեության հոմանիշ[513]: Այսպիսով, մենք արագորեն բացահայտում ենք, որ քրիստոնեական հավատքն ավելին է, քան անցյալում կայացրած Քրիստոսին ընդունելու որոշումը: Այն տևական հավատք է, որը փոխում է մարդու կյանքի ընթացքը:

«Նեղ» բառը թարգմանված է հունարեն *«թլի՛բո»* բառից, որը նշանակում է սեղմել կամ ճզմել, ինչպես մարդը խաղողի այգում կարող է խաղող ճզմել, կամ ինչպես մարդկանց բազմությունը կարող է իրար սեղմվել: Կրավորական սեռով այս բառը նշանակում է փորձանք, նեղություն կամ դժվարություն կրել[514]: *«Հոդո՛ս»*-ի հետ, այն նշանակում է սեղմված, նեղացված կամ սահմանափակ ճանապարհ: Բազմաթիվ հեղինակներ և քարոզիչներ նկարագրել են այս փոխաբերության իմաստը՝ պատկերելով նեղ կիրճ, որի միջով կարող է միայն մեկ մարդ անցնել, որի յուրաքանչյուր կողմում լերկ սարերից բաղկացած բարձր պարիսպներ են: Այս արահետի սահմանափակ բնույթը կարող է ցույց տալ երկու կարևոր ճշմարտություն քրիստոնեական կյանքի մասին. այն ճանապարհ է, որը սահմանվում է Աստծո կամքով, և այն ճանապարհ է, որում կա հակառակություն, դժվարություն և մեծ պայքար:

Ճանապարհ, որը սահմանվում է Աստծո կամքով

Նեղ դռնով մտնողները քայլելու են նեղ ճանապարհով: Նրանք աննպատակ չեն քայլելու, ո՛չ էլ նրանց թույլատրվելու է ազատորեն թափառել այս աշխարհի Սնափառության տոնավաճառում և Մահվան դաշտերում: Նրանց ընթացքը հստակորեն սահմանված է լինելու Աստծո կամքով, և նրանք առաջնորդվելու են Աստծո աննահանջ նա-

512 Հենդրիկսենը գրում է. «Նկարագրությունից պարզ է, որ այս երկուսը՝ դուռը և ճանապարհը, պետք է կապակցված լինեն. նեղ դուռը և նեղվածք ճանապարհը, լայն դուռը և ընդարձակ ճանապարհը»: *«Մատթեոս»,* էջ 367:
513 Գործք 9.2, 19.9,23, 22.4, 24.14,22
514 Այս բառի գոյական *«թլի՛պսիս»*-ը թարգմանվում է «նեղություն» բառով Հռոմեացիների 2.9 և 8.35 խոսքերում:

խախնամությամբ: Նա սովորեցնելու է նրանց, առաջնորդելու է նրանց, զորացնելու է նրանց՝ հետևելու համար, և խրատելու է նրանց, երբ շեղվեն: Ինչպես Հիսուսը սովորեցրեց, Իր ոչխարները լսում են Իր ձայնը և *հետևում են Իրեն*[515]*:*

Հասկացությունը ճանապարհի կամ արահետի մասին, որն Աստված որոշել է Իր ժողովրդի վարքի համար, տարածված թեմա է Հին կտակարանի գրքերում: Այն կոչվում է Տիրոջ ճանապարհը, արդարների ճանապարհը և արդարության շավիղը[516]: Այս շավիղը գծված է Աստծո պատվիրաններով, և այն ճշմարիտ հավատքի մեծագույն անսխալական չափանիշն է: Սաղմոսների գրքում մենք բացահայտում ենք, որ Տիրոջ ճանապարհը և արդարների ճանապարհը նույնն է, ինչ Տիրոջ վկայությունների, պատվիրանների և հրամանների ճանապարհը[517]: Դրա հետ մեկտեղ, այս ճանապարհը երկու կողմից լավ մաշված և քերված է: Այն տրորված-խորացված է հողի մեջ անթիվ սրբերի կողմից, որոնք քայլել են դրանով դեռ այն ժամանակվանից, երբ Աստված սկսել է գործել մարդկության հետ: Սաղմոս 23-ում Դավիթը պարծենում է, որ Աստված առաջնորդում է իրեն արդարության շավիղներով: «Շավիղ» բառը թարգմանված է եբրայերեն *«մա՛գալ»* բառից, որը նշանակում է խրամատ կամ երկար, խորը, նեղ փորվածք հողի մեջ:

Գոյություն ունի ևս մեկ կարևոր ճշմարտություն նեղ ճանապարհի մասին. որքան սուրբն ավելի է գնում դրանով, այնքան դրա եզրագծերն ավելի պարզ են երևում: Առակաց գիրքը սովորեցնում է մեզ, որ արդարների ճանապարհը նման է արևածագի լույսի, որն ավելի ու ավելի պայծառ է լուսավորում, մինչև կատարյալ օր դառնալը[518]: Երբ նորահավատը ոտք է դնում այդ ճանապարհին, այն հաճախ դժվար է որոշելը: Այնուամենայնիվ, երբ նա շարունակում է քայլել, ճանապարհը տարբերելն ավելի հեշտ է դառնում: Իր մտքի նորոգության միջոցով նա սկսում է հասկանալ, թե որն է Աստծո կամքը և ինչն է «բարի, հաճելի և կատարյալ» (Հռոմ. 12.2): Եբրայեցիների թղթի հեղինակն ասում է, որ նորահավատը, որը բաժնեկցում է կաթին, անհմուտ է արդարության խոսքին, որովհետև նա մանուկ է: Բայց հասունանալով և ավելի պինդ կերակուրի անցնելով, նաև հմտանալու միջոցով նրա զգայարանները վարժվում են՝ բարին և չարը տարբերելու համար[519]:

Նեղ ճանապարհը նշագծվում է Աստծո կամքով և հայտնվում է Նրա

515 Հովհաննես 10.27
516 Ծննդոց 18.19, Դատավորաց 2.22, Սաղմոս 1.6, 23.3, Առակաց 8.20, 12.28, 16.31, Եսայի 26.7
517 Սաղմոս 119.14,27,32,33
518 Առակաց 4.18
519 Եբրայեցիների 5.13,14

վկայությունների, պատվիրանների, հրամանների և իմաստության միջոցով: Այնուամենայնիվ, մենք պետք է զգույշ լինենք, որ ընկալենք այս ամենը Հիսուս Քրիստոսի Անձի համատեքստում: Հիսուսն ասաց, որ Ինքն է ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը, և ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Իրենով[520]: Այդ իսկ պատճառով, մենք պետք է մշտապես հիշենք, որ այն նեղ ճանապարհը, որին մենք հետևում ենք, Անձ է, ոչ թե ընդամենը կյանքի վարքականոն կամ ընթացակարգային ձեռնարկ: Դրույթային ճշմարտությունը բացարձակապես անհրաժեշտ է քրիստոնեությանը, և մենք ստացել ենք հրաշալի օրենքներ, սկզբունքներ և իմաստություն, որոնց պետք է հնազանդվենք[521]: Այնուամենայնիվ, դրանք չեն քրիստոնեական կյանքի էությունը, և եթե մենք դիտարկենք դրանք առանց Քրիստոսի, դրանք կարող են տանել մեզ ինքնաարդարացման և օրինապաշտության վտանգավոր ճանապարհով: Որպես քրիստոնյաներ, մենք հետևում ենք և ձգտում ենք նմանվել Անձի[522]: Սուրբ գրքի դրույթային ճշմարտությունները մեծ արժեք ունեն, քանի որ դրանք բացատրում են մեզ, թե ով է Քրիստոսը և ինչպես պետք է հետևենք Նրան, սակայն դրանք ինքնանպատակ չեն և երբեք չեն կարող առանձնացվել Նրանից՝ առանց ծանր վնաս հասցնելու քրիստոնեությանը և քրիստոնյային: Այս զգուշացման էությունն ազդեցիկ կերպով ամփոփված է Քրիստոսի խոսքերում՝ Իր օրերում ապրող այն մարդկանց, որոնք սահմանափակել էին Իսրայելի հավատքը՝ հասցնելով այն դատարկ վարքականոնի: Հիսուսն ասաց. «Քննե՛ք գրքերը, որ դուք կարծում եք, թե նրանցով ունեք հավիտենական կյանք, և նրանք են, որ Ինձ համար վկայում են: Եվ դուք չեք կամենում Ինձ մոտ գալ, որ կյանք ունենաք» (Հովհ. 5.39,40): Քրիստոսը չի կարող առանձնացվել Սուրբ գրքի հրահանգներից և պատվիրաններից, բայց ո՛չ էլ այդ պատվիրանները կարող են առանձնացվել Քրիստոսի Անձից:

Ճանապարհ, որում դժվարություն կա

Մենք իմացանք, որ նեղ ճանապարհը սահմանվում է Աստծո կամքով: Այժմ կուղղենք մեր ուշադրությունը երկրորդ և հավասարապես կարևոր ճշմարտությանը. այն բնութագրվում է դժվարությամբ և պայքարով: Այն հեշտ ճանապարհ չէ:

Ինչպես արդեն նշեցինք, «նեղ» բառը կրավորական սեռով հունա-

520 Հովհաննես 14.6

521 Դրույթային ճշմարտությունը վերաբերում է ճշմարտությանը, որը հայտնվում կամ փոխանցվում է պնդումների կամ հաստատումների միջոցով (օր.՝ «Տերը մեկ է» [Երկր. Օր. 6.4], «Հիսուսը Տերն է» [Ա Կորնթ. 12.3], «Քո Տեր Աստծո անունը դատարկ տեղը չհիշես» [Ելից 20.7]):

522 Մատթեոս 4.19, 8.22, 9.9, 10.38, 16.24, 19.21, Ա Կորնթացիների 11.1, Եփեսացիների 5.1, Ա Թեսաղոնիկեցիների 1.6

րեն բայից է, որը նշանակում է փորձանք, նեղություն կամ դժվարություն կրել: Նոր կտակարանի նույնիսկ մակերեսային ընթերցումը ցույց է տալիս, որ այս իրողությունները բնորոշ են քրիստոնեական կյանքին: Եթե քրիստոնեության մեջ մտնելու համար պահանջվում է պայքարել կամ ուժ գործադրել, մենք միայն կարող ենք ենթադրել, որ պահանջվում է նույնպիսի, եթե ոչ ավելի մեծ պայքար՝ դրանում հարատևելու համար: Յուրաքանչյուրը, ով սրան հակառակ է քարոզում, Քրիստոսի ճշմարիտ ծառայողը չէ, այլ խաբեբա է, որն ինչ-որ բան է ուզում վաճառել:

Առաջին եկեղեցու մեծագույն առանձնահատկություններից մեկն այն նեղություններն ու դժվարություններն էին, որոնք այն կրեց: Քրիստոսը և Նոր կտակարանի հեղինակները հաճախ էին զգուշացնում և՛ Աստծուն փնտրողներին, և՛ հավատացյալներին, որ ճշմարիտ աշակերտությունը հանգեցնելու է մեծ նեղության: Հիսուսը զգուշացնում էր Իր աշակերտներին, որ այս աշխարհն ատելու էր նրանց, և որ նրանք մեծ փորձանքներ էին կրելու՝ աշակերտ լինելու պատճառով[523]. նրանց հալածելու էին, հայհոյելու էին, չարախոսելու էին [524], հետապնդելու էին, դատապարտելու էին և սպանելու էին կառավարիչների և թագավորների առջև՝ Իր անվան պատճառով[525]: Պողոս առաքյալը խրատեց երիտասարդ Տիմոթեոսին, որ «ամենը, որ կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում, հալածանք պիտի կրեն» (Բ Տիմոթ. 3.12): Նա գրեց Փիլիպեի եկեղեցուն, որ նրանց շնորհվել էր ոչ միայն Քրիստոսին հավատալը, այլև Քրիստոսի համար չարչարվելը[526]: Նա խրախուսեց Լյուստրայում, Իկոնիոնում և Անտիոքում գտնվող հավատացյալներին. «Շատ նեղություններով պետք է մեզ մտնել Աստծո արքայությունը» (Գործք 14.21): Պետրոս առաքյալը խրատեց Ասիայում ցրված հավատացյալներին, որ նրանց չարչարանքն Աստծո կամքով էր, և նրանք չպետք է զարմանային նույնիսկ ամենից կրակոտ փորձությունների պատճառով, ասես թե նրանց ինչ-որ օտար բան էր պատահում[527]: Իրականում, նա սովորեցրեց նրանց, որ նման չարչարանքը սովորական էր աշխարհով մեկ գտնվող հավատացյալների և եկեղեցիների համար[528]:

Սուրբ գրքից հասկանում ենք, որ քրիստոնյայի ուղին նեղ է և լի է տառապանքներով, սակայն նրա նեղություններն աննպատակ չեն: Աստված ծրագրում է մեր չարչարանքները՝ մեզ մաքրելու, վերափոխելու և Իր Որդու նման դարձնելու համար: Այս աշխարհի կրակոտ փոր-

523 Մատթեոս 10.22, Հովհաննես 15.18-20, 16.33
524 Մատթեոս 5.10-12
525 Մատթեոս 10.22-28, Ղուկաս 21.12
526 Փիլիպեցիների 1.29
527 Ա Պետրոս 3.17, 4.12,19
528 Ա Պետրոս 5.9

ձությունների միջոցով ապացուցվում է մեր հավատքի իսկությունը, և այն զտվում է՝ հասնելով մաքրության ավելի ու ավելի բարձր աստիճանների, մինչև որ ոսկու պես թանկ է դառնում[529]: Ավելին՝ նեղ ճանապարհին գտնվող տարատեսակ դժվարությունները և փորձությունները տանում են քրիստոնեական առաքինության ավելի բարձր աստիճանների: Պողոս առաքյալը գրում է. «Այլ՝ նեղությունների մեջ էլ պարծենում ենք՝ գիտենալով, որ նեղությունը համբերություն է գործում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս» (Հռոմ. 5.3,4): Հակոբոսը պատվիրեց չարչարանքներ կրող հավատացյալներին բոլորովին ուրախություն համարել, երբ բախվում էին բազմաթիվ փորձությունների՝ իմանալով, որ իրենց հավատքի ստուգումը համբերություն է առաջացնում, ինչի արդյունքն ավելի մեծ սրբացումն ու հասունությունն է[530]:

Չարչարանքի ընթացքում հավատացյալը հետևյալ հավաստիացումն ունի. «Գիտենք, որ Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին՝ նրանց, որ նախասահմանելով կանչված են» (Հռոմ. 8.28): Այս պատճառով, քրիստոնյան մեծապես ուրախանում է, թեև կարճ ժամանակով ստիպված է լինում տրտմել տարբեր փորձությունների պատճառով[531]: Նա գիտի, որ ներկայիս չարչարանքներն արժանի չեն համեմատվելու այն փառքի հետ, որը հայտնվելու է իրեն[532]:

Ճշմարտությունն այն մասին, որ մենք Աստծո ստեղծվածն ենք, և որ Նա, Ով բարի գործ է սկսել մեզանում, կկատարի այն, և՛ մխիթարող է, և՛ անհանգստացնող: Մխիթարություն է իմանալը, որ մենք չենք մնա այնպիսին, ինչպիսին որ հիմա ենք, սակայն միտքն այն մասին, թե ինչերով պետք է անցնենք այս նեղ ճանապարհին, որ ազատվենք այն ամենից, ինչ Աստված չի պատրաստվում հանդուրժել մեզանում, երբեմն վախեցնող է: Մեսիան եկավ՝ ոչ միայն լինելու Իր ժողովրդի հավանության առարկան, այլև հալեցնողի կրակը և թափիչների օճառը: Նա նստելու է՝ արծաթ հալեցնողի և մաքրողի պես, և մաքրելու է Ղևիի որդիներին՝ զտելով նրանց արծաթի և ոսկու պես, որպեսզի արդարությամբ ընծաներ մատուցեն Տիրոջը[533]: Նրա մաքրման աշխատանքն Իր ժողովրդի մեջ այնքան ուժգին է լինելու, որ Նրա գալուստը կանխասող մարգարեն հարցնում է. «Եվ ո՞վ է Նրա գալու օրը տանողը, և ո՞վ է Նրա երևալու ժամանակ կանգնողը» (Մաղաք. 3.2): Հին կտակարանի մարգարեությունների մեծագույն խոստումներից մեկն այն է, որ Մեսիան ամբողջությամբ մաքրելու է Իր ժողովրդին պղծությունից և կռապաշտութ-

529 Ա Պետրոս 1.6,7
530 Հակոբոս 1.2-4
531 Հռոմեացիների 5.3, Ա Պետրոս 1.6, 4.12,13
532 Հռոմեացիների 8.17,18
533 Մաղաքիա 3.1-3

յունից[534]: Այնուամենայնիվ, այս մաքրումը միշտ չէ, որ տեղի է ունենալու մեղմ լվացման միջոցով, այլ հաճախ՝ խոզանակով քերելու և ծեծի միջոցով: Ահա թե ինչու է Եբրայեցիների թղթի հեղինակը գրում.

> «Եվ մոռացաք այն մխիթարությունը, որ ձեզ հետ՝ ինչպես որդիների հետ խոսում է. «Իմ որդյա՛կ, մի՛ անարգիր Տիրոջ խրատը, և ո՛չ էլ վհատվիր Նրանից հանդիմանված ժամանակդ: Որովհետև Տերն Իր սիրածին խրատում է. Նա ծեծում է ամեն որդու, որ ընդունում է»» (Եբր. 12.5,6):

Որպեսզի հասկանանք այն սաստկությունը, որով Տերը կարող է վարվել Իր զավակների հետ այս նեղ ճանապարհին, մենք պետք է դիտարկենք հետևյալ երեք բառերը Եբրայեցիների 12.5,6-ում. «հանդիմանել», «խրատել», «ծեծել»: «Հանդիմանել» բառը թարգմանված է հունարեն *«էլե՛գչո»* բառից, որը նշանակում է հանդիմանել անօրինության կամ հանցանքի մեջ՝ լույսի մեջ բերելով կամ բացահայտելով: Այն նույնպես ընդհանուր առմամբ ենթադրում է հանդիմանված մարդուն ամոթանք տալը: Այս բառը նշանակում է նաև խիստ կշտամբել, սաստել, կարգի հրավիրել կամ պատժել: «Խրատել» բառը թարգմանված է հունարեն *«պաիդեո՛ւո»* բառից, որը նշանակում է խրատել կամ սովորեցնել երեխաներին: Այն հաճախ ընդգրկում է, ինչպես որ այս համատեքստում է, կարգապահության գաղափարը՝ կշտամբանքներով, հորդորներով և մտրակելով: «Ծեծել» բառը թարգմանված է հունարեն *«մաստիգո՛ո»* բառից, որը նշանակում է ծեծել, մտրակել կամ ճիպոտով հարվածել: Նման բառապաշարը դժվարին և նույնիսկ անբարո է թվում ժամանակակից Ավետարանական շարժման գերզգայուն ականջներին: Այնուամենայնիվ, այն աստվածաշնչյան բառապաշար է և իրական է այն մարդու համար, ով բավականին երկար է քայլել նեղ ճանապարհով: Իրականում, մեծագույն դասերից մեկը, որը սովորել է նեղ ճանապարհի վրա գտնվող յուրաքանչյուր պանդուխտ, այն է, որ Աստված մեծագույն ջանք կգործադրի և չի խնայի որևէ միջոց՝ Իր զավակներին սուրբ դարձնելու համար: Նա սիրում է Իր զավակներին և չի ատում նրանց. այնպես որ, Նա չի խնայում Իր գավազանը, այլ ջանասիրաբար խրատում է Իր զավակներին՝ նրանց անձերը դժոխքից ազատելու համար[535]:

Հավատքով հավատացյալը հնազանդվում է խրատի աստվածային աշխատանքին և նույնիսկ տալիս է իր մեջքը մտրակին: Թեև տվյալ պահին խրատը մեծ տրտմություն և նույնիսկ ցավ է պատճառում, քրիստոնյան գիտի, որ հետագայում այն արդարության խաղաղ պտուղ է տալու, ինչի մասին խոսում է Եբրայեցիների թղթի հեղինակը. «Եվ ամեն խրատ

534 Եզեկիել 36.25
535 Առակաց 13.24, 23.14

հենց նույն ժամանակ ուրախություն չի երևում, այլ՝ տրտմություն, բայց հետո նրանով վարժվածներին արդար խաղաղության պտուղ է վճարում» (12.11): Ավելին, նա գիտի, որ ինչպիսի ծեծ էլ գա անմիջապես Աստծո ձեռքից կամ ավելի թույլ գործիքների, օրինակ՝ սատանայի կամ այս աշխարհի կողմից, այդ ամենը ծրագրված է Աստծո կողմից և ուղղորդված է Նրա ամենագետ և ամենակարող կամքով: Սեմյուել Չեդվիկը գեղեցիկ պատկերում է սա՝ նկարագրելով դարբնի աշխատանքը.

> «Դարբինը պահում է շիկափայլ մետաղը՝ պտտելով այն, որպեսզի հարվածները շարունակ նույն հատվածին չտեղան, և ուղղորդում է հարվածները, որպեսզի դրանք ճիշտ պահին իջնեն: Նա պտտում է, կոփում և կարգավորում է մետաղը, մինչև որ այն իր ցանկալի ձևն է ստանում: Նույնպես էլ Աստված պահում է մարդու անձը և կարգավորում է հարվածները: Երբեմն Նա սատանային Իր մրճահարն է դարձնում: Սատանան զարկում է՝ փշրելու համար: Աստված կարգավորում է այդ հարվածը և ուղղորդում է նրա չարակամությունը մեր կատարելագործմանը, և սատանան քրտնում է՝ կատարելով սրբերին Քրիստոսի նմանությանը հասցնելու գործը: Ի վերջո, մենք կպարզենք, որ այս կյանքի ամբողջ խրատը շնորհքի հետ է գործել, և որ մենք լիարժեք կերպով նույնացած ենք Որդու և Հոր հետ: Փառավոր նպատակն իրականացվել է, և մենք Նրա նման կլինենք. «Ես կկշտանամ, երբ արթնանամ Քո նմանությամբ» (Սաղմ. 17.15, KJV)»[536]:

Քանի որ Աստծո նպատակն Իր ժողովրդի բարիքն է, մենք ձգտում ենք քայլել նեղ ճանապարհով և մնալ Նրա կամքի ապահովության և օրհնության սահմաններում, որը հայտնված է Նրա պատվիրանների և իմաստության մեջ: Ավելին, մենք նույնպես ձգտում ենք կատարել մեր փրկությունը ահով ու դողալով՝ իմանալով, որ Աստված է, որ ներգործում է մեզանում՝ կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես[537]: Ունենալով այսպիսի խոստումներ՝ մենք վարժեցնում ենք մեր անձն աստվածապաշտության, մաքրում ենք մեզ հոգու և մարմնի ամեն պղծությունից, ձգտում ենք սրբացման, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը, և կատարում ենք սրբությունն Աստծո ահով[538]: Եթե Աստված մեծագույն ջանք է գործադրում և չի խնայում ոչ մի միջոց՝ մեզ Քրիստոսի պատկերին կերպարանելու համար, մենք նույնպես նույն ջանասիրությամբ պետք է ձգտենք նույն մեծ նպատակին: Այս նեղ ճանապարհին մենք պետք է մո-

536 Սեմյուել Չեդվիկ. *«Մարդկությունը և Աստված»* (Լոնդոն, «Hodder and Stoughton», 1904թ.), էջ 90:
537 Փիլիպեցիների 2.12,13
538 Բ Կորնթացիների 7.1, Ա Տիմոթեոս 4.7, Եբրայեցիների 12.14

ռանանք այն, ինչ մնացել է ետևում, գնանք դեպի այն, ինչն առջևում է, և ձգտենք դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչման մրցանակը Քրիստոս Հիսուսում[539]:

ԼԱՅՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

«Լայն» ածականը թարգմանված է հունարեն *«էուրո՛ւխորոս»* բառից, որը նշանակում է ընդարձակ, լայն, մեծապարփակ, տարողական: Քրիստոսի ուսուցման համատեքստում «լայն ճանապարհը» անկում ապրած և ապստամբ մարդկանց ուղին է, որոնք մերժում կամ անտեսում են Աստծո հավակնություններն իրենց հանդեպ, մի կողմ են նետում Նրա օրենքը և ձգտում են անկախ ու ինքնավար գոյության: Անհրաժեշտ է մի քանի նշումներ անել լայն ճանապարհի և դրան տանող լայն դռան մասին:

Առաջինը՝ լայն ճանապարհը մարդու բնական ուղին է: Այս ճանապարհի վրա է ծնվել անկում ապրած մարդկության յուրաքանչյուր ներկայացուցիչը: Սաղմոսերգուն հայտարարում է, որ անօրեն և ստախոս մարդիկ մոլորված են իրենց ծնված օրից[540]: Եսայի մարգարեն աղաղակում էր, որ «Մենք ամենս ոչխարների պես մոլորվեցինք, յուրաքանչյուրն իր ճանապարհին դառավ» (53.6): Ոչինչ չի պահանջվում, և ոչինչ պետք չէ անել՝ լայն դուռը գտնելու և լայն ճանապարհին կանգնելու համար: Դա այն պողոտան է, որի կողքին Ադամը կառուցեց իր տունը, և այն դարձավ նրա զավակների ժառանգությունը[541]: Մեր ծնվելուց անմիջապես հետո գտնում ենք այս ճանապարհը՝ մեր անկում ապրած բնազդներով, և գտնելուն պես բացահայտում ենք, որ այն համապատասխանում է մեր բնությանը: Ոչ մի ջանք անհրաժեշտ չէ՝ այդ դռնով մտնելու և այդ ճանապարհով գնալու համար, բայց պետք է ամեն ջանք գործադրել՝ այն թողնելու համար: Սա է պատճառը, որ Քրիստոսը հորդորում է մարդկանց առավելագույն ուժ գործադրել՝ թողնելու համար լայն ճանապարհը, որը կործանման է տանում, և մտնելու նեղ դռնով, որը դեպի կյանք է տանում:

Երկրորդը՝ լայն ճանապարհն ինքնավարության տանող ուղի է: Այն մի վայր է, որում այս աշխարհի բնակիչները դուրս են գալիս Աստծո և Նրա Քրիստոսի դեմ՝ ասելով. «Կոտրենք Նրանց կապանքները և դեն գցենք Նրանց չվանները մեզնից» (Սաղմ. 2.3): Սա այն վայրն է, որում յուրաքանչյուրը ձգտում է անել այն, ինչ ճիշտ է համարում[542]: Լայն ճա-

539 Փիլիպեցիների 3.13,14
540 Սաղմոս 58.3
541 Հռոմեացիների 5.12
542 Դատավորաց 17.6, 21.25

նապարհն ընտրողները պարծենում են, որ ազատվել են երկնքի Բռնակալից, բայց, այդպես վարվելով, իրենց ենթարկել են սեփական արատավորված սրտի բռնատիրությանը: Նրանք փոխել են երկնային Թագավորին վեց միլիարդ անարժան զավթիչների հետ, որոնց կարծիքները ճշմարտության մասին այնքան մշուշոտ են, որքան առավոտյան մառախուղը, և այնքան ստվար են, որքան աստղերը երկնքում: Նրանք փոխել են աստվածային օրենքը սեփական կրքերով կառավարվելու հետ և դարձել են անզուսպ ժողովուրդ, որը սրընթաց սլանում է դեպի կործանումը: Որովհետև որտեղ չկա տեսիլք կամ օրենքի հայտնություն, մարդիկ անզուսպ են, իսկ այն ճանապարհը, որը ճիշտ է թվում նրանց, մշտապես մահով է ավարտվելու[543]: Նրանք հեռացրել են Աստծուն կյանքի հավասարումից և անհնարին են համարում բացարձակ ճշմարտության գոյությունը: Սա է պատճառը, որ անօրենների ճանապարհը լայն է, քանի որ, առանց բարոյական կողմնացույցի, մարդիկ դատապարտված են անիմաստ և աննպատակ թափառելուն: Հուդայի վախ առաջացնող խոսքերով, նրանք, ովքեր մերժում են Աստծո գերիշխանությունը՝ հոգուտ իրենց ինքնավարության, նմանվում են քամիներից տատանված անջուր ամպերի, ծովի կատաղած ալիքների, որոնք ի ցույց են հանում իրենց ամոթը՝ փրփուրի պես, մոլորված աստղերի, որոնց համար հավիտյան թավ խավար է պահված[544]:

Թեև այս խոսքերը բացասական և չարագույժ են, դրանք վերաբերում են եկեղեցի հաճախող մարդուն նույնքանով, որքանով աթեիստին և անհավատին: Շատերը նստած են մեր եկեղեցիներում՝ որպես քրիստոնեության հետևորդներ, սակայն նրանց կյանքն ընթանում է լայն ճանապարհի վրա: Նրանք չեն ձգտում իմանալ Աստծո կամքը. նրանք չեն ցանկանում Նրա պատվիրանները. նրանք չեն փնտրում Նրա նախախնամության ուղենիշները և շրջահայաց չեն վարվում: Առավել անհանգստացնող է այն փաստը, որ նրանք կարող են հանգիստ և անխռով մնալ բազմաթիվ ավետարանական եկեղեցիներում և բոլորովին չազդվել ավետարանական քարոզների մեծամասնությունից: Նրանք մեծ վստահությամբ պնդում են, որ պատկանում են Աստծո թագավորությանը, սակայն նրանց շարունակվող պանդխտությունը լայն ճանապարհի վրա հերքում է այդ պնդումը:

Երրորդը՝ լայն ճանապարհն ինքնագոհացման ուղի է՝ այն մարդկանց քայլուղին, ովքեր վեր են դասում իրենց անձն Աստծուց, այս աշխարհը՝ հաջորդից, որպեսականը՝ հավիտենականից, և մարմնավորը՝ հոգևորից: Այն պողոտա է, որը գոհացնում է անկում ապրած մեղավոր

543 Առակաց 14.12, 16.25, 29.18
544 Հուդա 12,13

մարմնական բնության յուրաքանչյուր ցանկություն և ձգտում: Սուրբ գիրքն ասում է մեզ, որ մարդիկ բնականորեն ինքնասեր և արծաթասեր են, սիրում են այս աշխարհը և ավելի ցանկասեր են, քան թե աստվածասեր[545]: Այն ամենը, ինչ գտնվում է լայն ճանապարհին, և նրանք, ովքեր քայլում են դրանով, առաջնորդվում են մարմնի ցանկությամբ, աչքի ցանկությամբ և այս կյանքի ամբարտավանությամբ (Ա Հովհ. 2.16): Սա է պատճառը, որ լայն ճանապարհը կարող է նկարագրվել որպես շարունակական Սնափառության տոնավաճառ՝ նման Բունյանի *«Ուխտագնացի ճանապարհորդության»* համանուն վայրի նկարագրությանը.

«Եվ ես տեսա իմ երազում, որ երբ Քրիստոնյան և Հավատարիմը դուրս եկան անապատից, շուտով նրանք մի քաղաք տեսան իրենց առջևում, որի անունը Սնափառություն էր, և այդ քաղաքում տոնավաճառ կար, որը կոչվում էր Սնափառության տոնավաճառ, որը բաց էր ամբողջ տարվա ընթացքում: Այն կոչվում էր Սնափառության տոնավաճառ, քանի որ այն, ինչ վաճառվում էր այդտեղ, ունայն կամ անարժեք էր, և ովքեր գալիս էին այդտեղ, սնափառությամբ էին լցված: Ինչպես ասում է իմաստուն ասացվածքը. «Այն, ինչ որ պիտի գա, ունայն է»:

Այս տոնավաճառը նոր հաստատված ձեռնարկություն չէր, այլ՝ վաղեմի մի բան: Ես կպատմեմ ձեզ, թե ինչպես այն սկիզբ առավ:

Գրեթե հինգ հազար տարի առաջ կային պանդուխտներ, որոնք Երկնային քաղաք էին գնում, ինչպես և այս երկու ազնիվ մարդիկ, և Բեեղզեբուղը, Ապոլիոնը և Լեգիոնը՝ իրենց ընկերակիցների հետ, տեսնելով, որ պանդուխտները մշտապես անցնում էին Սնափառության քաղաքով, որոշեցին տոնավաճառ բացել այդտեղ, որը կգործեր ամբողջ տարվա ընթացքում, որտեղ նրանք կվաճառեին ամեն տեսակի ունայն բաներ՝ տներ, հողատարածքներ, ձեռնարկություններ, վայրեր, պատիվներ, առաջխաղացումներ, տիտղոսներ, պետություններ, թագավորություններ, կրքեր, հաճույքներ և ամեն տեսակի զվարճալիքներ, օրինակ՝ մարմնավաճառների, կանանց, ամուսինների, երեխաների, տերերի, ծառաների... կյանքեր, արյուն, մարմիններ, անձեր, արծաթ, ոսկի, մարգարիտներ և թանկարժեք քարեր:

Այս տոնավաճառում մշտապես կարելի էր տեսնել ամեն տեսակի աճպարարների, խարդախների, հիմարների, նմանակողների, խաբեբաների և սրիկաների, նաև խաղեր, պիեսներ»[546]:

Լայն ճանապարհը լի է ամեն տեսակի մակերեսային, շեղող երևույթներով, որոնց նպատակն է թույլ չտալ մարդկանց մտածել այն մասին,

545 Բ Տիմոթեոս 3.2,4, Ա Հովհաննես 2.15-17
546 Բունյան, *«Ուխտագնացի ճանապարհորդության նոր հրատարակություն»*, էջ 108:

ինչն իսկապես կարևոր է: Այն առաջարկում է գայթակղություններ, որոնք ցանկություններ են ստեղծում մարմնավոր մարդկանց սրտերում և ուժգնացնում են նրանց ցանկությունները, միևնույն ժամանակ թուլացնելով բավականություն ստանալու կարողությունը: Այն ծուղակն է գցում մարդկանց՝ վատագույն և կոպտագույն անբարոյությամբ, և նույնիսկ բարի բաներով, որոնք մահացու կուռքեր են դառնում՝ Աստծուց վեր դասվելու դեպքում: Որքան ավելի են մարդիկ քայլում այս պողոտայով, այնքան ավելի են հեռանում Աստծուց, այնքան ավելի ունայն են դառնում, և այնքան ավելի ամուլ ու անպտուղ է դառնում նրանց կյանքը:

Երբ մարդիկ ճիշտ են տեսնում ամեն ինչ, հասկանում են, որ մարդու գլխավոր նպատակն Աստծուն փառավորելը և Նրան հավիտյան վայելելն է, ինչպես որ սովորեցնում է Վեստմինստերի Կարճ հարցուպատասխանքի Հարց 1-ը: Երբ մարդիկ հեռացնում են իրենց սրտերն այս նպատակից, կորցնում են Աստծուց իրենց տրված արժանապատվությունը: Նրանք ստեղծված էին, որպեսզի ճանաչեին Աստծուն և բացահայտեին Նրա Անձի և գործերի անսահման սքանչելիքները, բայց նրանք ընտրեցին խոզերի հետ թավալվելը և կախազարդերով խաղալը: Նրանք ընտրեցին պարուրաձև վարընթաց լայն ճանապարհը: Պողոս առաքյալը խոսում է այս մասին Հռոմեացիների թղթի առաջին գլխում. «Որովհետև Աստծուն ճանաչելով՝ Նրան Աստծո պես չփառավորեցին կամ շնորհակալ չեղան, այլ իրենց մտածմունքներում ունայնացան, և նրանց անմիտ սրտերը խավարեցին: Ասելով, թե իմաստուն են, հիմարացան, և անեղծ Աստծո փառքը փոխեցին եղծանելի մարդու և թռչունների և չորքոտանիների և սողունների պատկերի նմանության հետ» (խոսքեր 21-23):

Մենք ապրում ենք այնպիսի մշակույթում, որտեղ մարդիկ անհագ ախորժակ ունեն ամեն մարմնավոր և ունայն բաների հանդեպ: Նրանք նկարագրված են Սուրբ գրքում՝ որպես մարդիկ, «որոնց Աստվածն իրենց որովայնն է, և փառքը իրենց ամոթն է, որոնք երկրավոր բաներն են մտածում» (Փիլիպ. 3.19): Նրանք փոխել են հավիտենականը ժամանակավորի հետ, երկինքը՝ երկրի հետ, և Աստծուն՝ սեփական անձի հետ: Նրանք քայլում են լայն ճանապարհով և ծախսում են իրենց փողն այն բանի համար, ինչը հաց չէ, և իրենց վարձատրությունը՝ այնպիսի բաների համար, որոնք բավականություն չեն տալիս[547]:

Մարդկության ահռելի զանգվածը՝ ներառյալ նրանք, որոնք նույնացնում են իրենց Քրիստոսի հետ, գտնվում է լայն ճանապարհի վրա, որը կործանման է տանում: Այս խնդիրը բարդանում է այն բանով, որ քիչ եկեղեցիներ կան, որոնք փող են հնչեցնում և զգուշացնում են անօրենների իրենց վերահաս կործանման մասին: Ինքնագոհացման այս լայն

547 Եսայի 55.2

ճանապարհը ոչ միայն չի դատապարտվում, այլև պաշտպանվում և գովազդվում է: Այն նույնիսկ օգտագործվում է՝ որպես մարմնավոր բազմությանը կիրակնօրյա ծառայությունների գրավելու միջոց: Շատ եկեղեցական համայնքներ Սնափառության տոնավաճառից ոչ ավելին են, իսկ նրանց քարոզիչներն ընդամենը էժանագին ապրանքներ վաճառողներ են: Օգտագործելով խորամանկորեն կազմված կարճ քարոզներ՝ քլունգների և բահերի պես, նրանք փոխել են լայն ճանապարհի ուղղությունը, որպեսզի իրենց եկեղեցիներ հաճախող մարմնավոր բազմությունները նույնքան հեշտորեն Երկինք լցվեն, որքան նեղ ճանապարհն ընտրող աստվածապաշտ հավատացյալները: Նրանց փրկությունը չունի խաչ, նեղություններ, հալածանքներ և անձնուրացություն: Նրանք առաջարկում են սեփական անձի կայացման և առաջխաղացման կրոն՝ գործարար պայմանագիր Աստծո հետ, որում մարդը կարող է պահպանել հարստությունը, ճոխությունը, շռայլությունը և հեշտ կյանքը, քանի դեռ նա տալիս է իր եկամտի տասը տոկոսը: Այս պանդխտությունը լայնատարած և մեծ արահետով է, որի վրա ենթադրյալ փրկվածները քայլում են ձեռք ձեռքի տված այս աշխարհի հետ՝ վերածելով Աստծո շնորհքն անառակության և ուրանալով Հիսուսի իշխանությունը[548]: Նման բաներ չպե՛տք է լինեն: Թող Աստված ևս մեկ անգամ շնորհի մեզ՝ քարոզիչներիս և հովիվներիս, որ ճշմարտության օրենք լինի մեր բերանում, և անիրավություն չգտնվի մեր շուրթերին, որպեսզի խաղաղությամբ վարվենք Աստծո հետ և շատերին անօրինությունից դարձնենք[549]: Եկեք կանգնենք դռների մոտ և ձայն տանք բոլորին. «Եվ աշխարհն անցնում է, և նրա ցանկությունն էլ, բայց Աստծո կամքն անողը մնում է հավիտյան» (Ա Հովհ. 2.17):

Չորրորդը՝ լայն ճանապարհը նվազագույն հակառակության ուղին է: Դրանով գնալը հոսանքի ուղղությամբ լողալ է նշանակում: Նախևառաջ, լայն ճանապարհին չկա ոչ մի հակառակություն մարմնից: Մենք ստիպված չենք ջանք գործադրել՝ լայն դռնով մտնելու համար: Ինչպես արդեն նշեցինք, մենք բնականորեն ենք հայտնվում այդտեղ: Մենք ծնվել ենք մեղքի մեջ, ծուռ ենք մոր որովայնից և մոլորվում ենք մեր ծնված օրից[550]: Այս պատճառով է, որ մեր անկում ապրած մարմնական մեղավոր բնությունը հարազատ է համարում յուրաքանչյուր ապստամբի, որին այն հանդիպում է լայն ճանապարհին, և սրտանց հավանություն է տալիս յուրաքանչյուր սխալ վերաբերմունքի և արարքի[551]: Մենք պետք է հիշենք, որ անկում ապրած մարմնական բնությունը թշնամաբար է

548 Հուդա 4
549 Մաղաքիա 2.6
550 Սաղմոս 51.5, 58.3
551 Հռոմեացիների 1.32

տրամադրված Աստծո հանդեպ և չի կարող հաճեցնել Նրան[552]: Փոխարենը, այն սիրում է այս աշխարհը և պատրաստակամորեն լսում է դրա ձայնը: Առանց որևէ մղման, այն ազատություն է տալիս իր կրքին և գնում է լայն ճանապարհով, որտեղ էլ որ այն տանի: Այնպես որ, ովքեր ցանկանում են գնալ այդ ճանապարհով, իրենց մարմնական բնության մեջ կտեսնեն ոչ թե թշնամու, այլ միայն խաբուսիկ դաշնակցի:

Նմանապես, լայն ճանապարհի վրա չկա ոչ մի հակառակություն այս աշխարհից: Վիլյամ Հենդրիկսենը գրում է. «Այս լայն պողոտայի երկայնքով դրված ցուցանակներին գրված է. «Բարի գալո՛ւստ բոլորիդ և ձեր բոլոր ընկերներին. որքան շատ լինեք, այնքան ուրախ կլինենք: Գնացե՛ք՝ ինչպես կամենում եք, և այն արագությամբ, որով կամենում եք: Չկա ոչ մի սահմանափակում»»[553]: Լայն ճանապարհով քայլողներն այս աշխարհի պողոտայի վրա են գտնվում: Այն մարդկության ճանապարհն է՝ եղբայրության, ներառականության և հանդուրժողականության ճանապարհը: Այն անվերջանալի փառատոն է, որում փոխադարձ շողոքորթությունը պարտադիր է, ճշմարտությունը պատուհանից դուրս է նետվում, և ոչ ոքի չի թույլատրվում բացականչել, որ թագավորը մերկ է, կամ որ ամբողջ այդ շքերթը կործանման է գնում:

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ այս աշխարհը սիրում և լսում է յուրայիններին[554]: Երբ Աստծո Որդին այս աշխարհ եկավ, Նա եկավ այն աշխարհ, որն Ինքն էր ստեղծել, և այն ժողովրդի մոտ, որին Ինքն էր ընտրել, բայց նրանք չընդունեցին Նրան[555]: Երբ եկավ վերջնական որոշման ժամանակը, այս աշխարհն ընտրեց յուրայիններից մեկին՝ խնդրելով ներում շնորհել տխրահռչակ գողի և մարդասպանի, և պահանջելով Սրբի և Արդարի՝ Կյանքի Առաջնորդի խաչելությունը[556]: Այս աշխարհն ընկեր է նրանց, ովքեր չեն ցանկանում ընկեր լինել Աստծուն: Դրա թշնամանքը պահված է միայն նրանց համար, ովքեր կհամարձակվեն խախտել դաշինքն իր հետ, շրջվել իր ուղուց և միաբանվել Աստծո հետ[557]:

Առավել ևս, լայն ճանապարհի վրա չկա ոչ մի հակառակություն սատանայից: Իրականում, այս ճանապարհը կառուցված է նրա կողմից և ուղղորդված է ըստ նրա կամքի: Պողոս առաքյալի խոսքերով, լայն ճանապարհով քայլելը նշանակում է գնալ «այս աշխարհի սովորության պես՝ օդի իշխանության իշխանի պես, այն հոգու պես, որ հիմա

552 Հռոմեացիների 8.7,8
553 Հենդրիկսեն. *«Մատթեոս»*, էջ 369:
554 Հովհաննես 15.19, Ա Հովհաննես 4.5
555 Հովհաննես 1.11
556 Մատթեոս 27.16,21,26, Մարկոս 15.7,11,15, Ղուկաս 23.18, Հովհաննես 18.40, Գործք 3.14,15
557 Հովհաննես 15.19

ներգործում է ապստամբության որդիների մեջ» (Եփես. 2.2): Հենդրիկսենը գրում է. «Սատանան է կառուցել այս [լայն] ճանապարհը: Նրա հետևորդները դրանով են գնում»[558]: Աստծո սուրբը, որը գնում է նեղ ճանապարհով, մշտապես կգայթակղվի, կփորձվի և նույնիսկ կխոչընդոտվի իր պանդխտության ընթացքում: Սատանան ամեն քայլափոխին կընդդիմանա նրան և կձգտի խաթարել հավատքի մեջ առաջադիմելու Նրա յուրաքանչյուր փորձը: Եթե չլիներ Քրիստոսի պաշտպանությունը, սատանան ցորենի պես կմաղեր նրան և կտրորեր այնքան, մինչև որ նա անիծեր Աստծուն[559]: Բայց լայն ճանապարհին գտնվողների համար սատանան ընկեր է. գոնե որոշ ժամանակով, նրա շուրթերից մեղր է կաթում, և նրա խոսքերը յուղից փափուկ են, բայց վերջում նա օշինդրի պես դառը և երկսայրի թրի պես սուր կլինի[560]: Իր բազում խոսքերով նա գայթակղեցնում է մարդկանց, և իր շուրթերի շողոքորթությամբ հրապուրում է նրանց[561]: Բայց նրա ոտքերը դեպի մահն են իջնում, և նրա քայլերը դժոխքին են հասնում[562]: Նրան լայն ճանապարհով հետևողները նման են սպանդի գնացող եզան, շղթաներով պատժվելու գնացող խելագարի կամ դեպի ծուղակը շտապող թռչնի[563]: Նրանք չգիտեն, որ իրենց կյանքով են վճարելու իրենց ընտրության համար, որովհետև սատանայի տունը խորտակվում է դեպի մահ, և նրա ուղիները՝ դեպի մահացածները: Նրա մոտ գնացողներից ոչ ոք չի վերադառնա, ո՛չ էլ կյանքի ճանապարհներին կհասնի[564]:

Հինգերորդը՝ լայն ճանապարհն ավելացող խավարի ուղի է: Առակաց գրքից գիտենք, որ «արդարների ճանապարհը ծագող լույսի պես է, որ հետզհետե լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում» (4.18): Ի հակադրություն, «ամբարիշտների ճանապարհը խավարի նման է. նրանք չգիտեն, թե ինչով են գայթակղում (կամ՝ «սայթաքում»)» (4.19): Նրանք խավարած են մտքով և օտար են Աստծո կյանքից[565]: Ժամանակի ընթացքում նրանց խիղճն այրվում է՝ ասես խարանիչ երկաթով, նրանց բարոյական կողմնացույցը վերցվում է նրանցից, և նրանք մատնվում են իրենց սրտերի կրքերին, անմաքրությանը և ապականող ցանկություններին[566]: Գոյություն ունի մի սարսափելի դատաստան, որը վրա է հասնում մարդկանց և ազգերին՝ ավելի մեծ հաճախականությամբ, քան

558 Հենդրիկսեն. *«Մատթեոս»,* էջ 369:
559 Հոբ 2.9,10, Ղուկաս 22.31
560 Առակաց 5.3,4
561 Առակաց 7.21
562 Առակաց 5.5
563 Առակաց 7.22,23
564 Առակաց 2.18,19
565 Եփեսացիների 4.17-19
566 Հռոմեացիների 1.24,26, Ա Տիմոթեոս 4.12

կարող ենք հասկանալ կամ ընդունելու խիզախություն ունենք: Թեև երբեք չպետք է դադարենք հավատալ, որ Աստծո շնորհքը կարող է փրկել նույնիսկ վատագույն մեղավորներին, մենք պետք է զգուշացնենք լայն ճանապարհին գտնվող յուրաքանչյուր մարդու, որ ամեն մի քայլը ավելի է մոտեցնում նրան փրկությունից վերջնականորեն զրկվելուն և անդառնալիորեն հավիտենական տանջանքների մատնվելուն: Այնպես չէ, որ նա կցանկանա փրկվել, բայց չի կարողանա, այլ դա այլևս չի մտահոգի նրան: Այդ պահին նրա սիրտը չոր կեղևի կվերածվի, իսկ նրա անձն այնքան մակերեսային կդառնա, որ լայն ճանապարհի մոլորությունները լիովին բավական կլինեն՝ այն լցնելու համար:

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ԵՎ ԿԵՂԾ ՀԱՎԱՏԱՑՅԱԼԸ

Մեծագույն ճշմարտություններից մեկը, որը պետք է քաղենք նեղ և լայն ճանապարհների փոխաբերությունից, այն է, որ մեր ընթացքը մեր դարձի ապացույցն է: Մենք պետք է կրկնենք, որ մարդը փրկվում է միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով: Աստծո առջև մեր արդար դիրքը մեր կողմից որևէ առաքինության կամ արժանիքի արդյունք չէ. այն Աստծո պարգևն է[567]: Այնուամենայնիվ, մենք նույնպես պետք է հասկանանք, որ այն մարդիկ, որոնք փրկվում են շնորհքով՝ հավատքի միջոցով, Աստծո ստեղծվածն են դառնում: Նրանք վերստեղծված են Քրիստոս Հիսուսում՝ բարի գործերի համար, որոնք Աստված՝ Իր գերիշխանությամբ, նախապես պատրաստեց, որպեսզի նրանք վարվեն դրանցում[568]: Փրկությունը Աստծո գերբնական աշխատանքն է, որի արդյունքում հավատացյալը նոր ստեղծված է դառնում՝ նոր և սուրբ ձգտումներով[569]: Այս նոր ձգտումները դրդում են քրիստոնյային գնալ նեղ ճանապարհով՝ ոչ թե հարկադրական քայլքով, այլ հոժար հոգով[570]: Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի և Նրա ներբնակության միջոցով հավատացյալը հարություն է առել՝ կյանքի նորոգության մեջ վարվելու համար[571]: Նա այլևս չի ցանկանում այնպես վարվել, ինչպես հեթանոսներն են վարվում՝ իրենց մտքի ունայնությամբ և իրենց սրտի խստությամբ, այլ ջանք է անում, որ վարվի Տիրոջն արժանի կերպով՝ հաճեցնելով Նրան ամեն ինչում, պտղաբեր լինելով ամեն բարի գործում և ավելանալով Աստծուն ճանաչելու մեջ[572]: Թեև նախկինում նա խավար էր, այժմ լույս է Տիրոջ մեջ, և նա ձգտում է վարվել լույսի որդու

567 Եփեսացիների 2.8,9
568 Եփեսացիների 2.10
569 Բ Կորնթացիների 5.17
570 Ա Հովհաննես 5.3
571 Հռոմեացիների 6.4
572 Եփեսացիների 4.1,17-19, Կողոսացիների 1.10, Ա Թեսաղոնիկեցիների 2.12

պես՝ Քրիստոսի նման և համաձայն Նրա պատվիրանների[573]:

Սա վերածնման վարդապետությունն է, որը լիովին մոռացվել է ժամանակակից Ավետարանական շարժման մեջ, և դրան վերադառնալն էապես կարևոր է, եթե եկեղեցին պատրաստվում է ևս մեկ անգամ քարոզել Ավետարանը: Մենք պետք է մերժենք մեր օրերի դատարկ շեշտադրումը դավանության վրա և բացատրենք, որ փրկությանը հավատացողները վերստին ծնվել են, և վերածնվելով՝ դարձել են նոր ստեղծվածներ, որոնք կյանքի նորոգության մեջ են վարվում[574]: Մենք պետք է վերադառնանք ճշմարտությանը այն մասին, որ արդարացման ապացույցը սրբացման շարունակական աշխատանքն է, որ նեղ դռնով մտնելու նշանն այն է, որ հավատացյալը շարունակում է նեղ ճանապարհով գնալ, այսինքն՝ ապրել համաձայն Քրիստոսի պատվիրանների և հակառակվել մարմնին, այս աշխարհին և սատանային: Արդարացումը հավատքով է, բայց հավասարապես կարևոր վարդապետությունները վերածնման և Աստծո աննահանջ նախախնամության մասին հավաստիացնում են, որ արդարացված մարդը նաև սրբացման ընթացք է անցնելու:

Ովքեր դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ և քայլում են նեղ ճանապարհով, պետք է խրախուսվեն և մխիթարվեն՝ անկախ իրենց բազում տկարություններից և ձախողումներից: Բայց ովքեր նույն դավանությունն են արել, սակայն անհոգ զբոսնում են լայն ճանապարհով՝ դիտելով տեսարժան վայրերը և ձեռք բերելով դրա իրերը, պետք է զգուշացնել իրենց անօրինության և հետագա դատապարտության մասին: Սա հովվի և ավետարանչի մեծ առաջադրանքն է: Աստծո ժողովրդի ծառայողին տրվել է ոչ միայն հռչակել բարի լուրը Աստծո շնորհքի մասին, այլև հետևել, որպեսզի ոչ ոք չզրկվի այդ շնորհքից[575]:

Որպեսզի պատկերենք և կիրառենք այն ճշմարտությունները, որոնք դիտարկեցինք, մենք պետք է հակիրճ խոսենք երկու մարդու մասին՝ քրիստոնյայի և կեղծ հավատացյալի: Ի դեմս քրիստոնյայի, մենք տեսնում ենք մի մարդու, որը քայլում է լայն ճանապարհով: Նա գրեթե չի մտահոգվում իր անձի մասին՝ կա՛մ այն պատճառով, որ որոշել է բոլորովին չհավատալ Աստծուն, կա՛մ որովհետև անզգայացած է ինչ-որ տեսակի կրոնով: Մեկ անգամ մի քարոզիչ կոչ է անում նրան՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով: Թեև հնարավոր է, որ նախկինում հազար անգամ լսել է այդ ուղերձը, նա ինչ-որ ձայն է լսում այդ ավետարանչի ձայնի մեջ: Նա արթնանում է Աստծուն ճանաչելու, իր զարհուրելի վիճակը գիտակցելու և Քրիստոսի կատարած աշխատանքն արժևորելու հա-

573 Եփեսացիների 5.8, Ա Հովհաննես 1.7, 2.6, Բ Հովհաննես 6
574 Ա Հովհաննես 5.1
575 Եբրայեցիների 12.15

մար: Այս նոր հայտնությունն Աստծո սրբության մասին բացահայտում է նրա մեղքը, և նա զղջում է այն պատճառով, թե ինչպիսին է դարձել և ինչ է արել: Նրա տրտմությունը, այնուամենայնիվ, առաջացնում է ոչ թե մահ, այլ ավելի մեծ հայտնություն Աստծո սրբության և իր մեղքի մասին: Նույնպես, առաջին անգամ իր կյանքում նա տեսնում է Աստծո զարմանալի շնորհքը՝ Քրիստոսի դեմքում: Այնպես որ, նա հավատքով վազում է Քրիստոսի մոտ և փրկվում:

Դրանից հետո նրա դարձի իսկությունն ակնհայտ է դառնում: Նա ամեն ինչ սկսում է դիտարկել այլ կերպ, քան նախկինում: Նույնպես կորցնում է իր հին ձգտումների մեծ մասը, որոնք փոխարինվում են նոր ցանկություններով՝ ուղղված Աստծուն հաճեցնելուն և Նրա պատվիրաններով ապրելուն: Միևնույն ժամանակ, նա ցավով գիտակցում է, որ իր ներսում կա այնպիսի բան, ինչը դեռ պատերազմում է թե՛ Աստծո դեմ, թե՛ արդարության հանդեպ ունեցած իր բոլոր ձգտումների դեմ: Նրա անձի մեջ դեռևս կա չփրկված կողմ, որը Սուրբ գիրքը պարզապես «մարմին» է անվանում: Դրա ցանկությունները դեմ են Հոգուն, և այս երկուսը պատերազմում են այնպես, որ նորահավատը շուտով բացահայտում է, որ քրիստոնեական կյանքը պայքար է[576]: Սկսած նեղ ճանապարհով գնալու պահից, այդ պայքարը մոլեգնում է նրա շուրջը և նրա ներսում: Երբեմն շնորհքն արագացնում է նրա ոտքերը, և թվում է՝ նա մեծ առաջընթաց է ունենում: Այլ դեպքերում թվում է՝ նա երեք քայլ առաջ և երկու քայլ ետ է գնում: Երբեմն նա նույնիսկ գայթակղված է լինում թողնելու նեղ ճանապարհը, բայց Աստծո նախախնամությունը փորել է այն՝ խորը խրամատի պես[577], և նա չի կարողանում դուրս մագլցել: Թեև մարմնի, այս աշխարհի և սատանայի դեմ պայքարելը դժվար է, քրիստոնյան պարզում է, որ Աստծո դեմ պայքարելն անհնար է: Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքով, այժմ նա Աստծո սեփականությունն է և Աստծո ստեղծվածը: Իր կյանքի ցանկացած պահին թվում է, թե ինքը ետ է գնում և ցած է իջնում, բայց Աստծո նախախնամությունը հավաստիացնում է, որ նա առաջընթաց կունենա իր ամբողջ ճանապարհին: Նա կպայքարի մեղքի դեմ, և երբեմն միգուցե ծանր մեղքի մեջ ընկնի, սակայն չի մնա դրանում: Աստված նախանձավոր կերպով փափագում է այն Հոգուն, Ում Ինքը բնակեցրել է նրանում[578]: Մեծ Հովիվը կգտնի նրան, որովհետև Նա չի կորցնի այն, ինչ Հայրը տվել է Իրեն[579]: Հայրը որդու պես կվարվի նրա հետ և կխրատի նրան՝ մեծ հանդիմա-

576 Գաղատացիների 5.17
577 Սաղմոս 23.3-ում «շավիղ» բառը թարգմանված է եբրայերեն «մա՛գալ» բառից, որը նշանակում է խրամատ կամ երկար, խորը, նեղ փորվածք հողի մեջ: Այն երկու կողմերից լավ մաշված և քերված է:
578 Հակոբոս 4.5
579 Հովհաննես 6.39

նությամբ կամ նույնիսկ սաստիկ ծեծով, որը կարող է սպիեր թողնել նրա կյանքում[580]: Ի վերջո, Աստված կկատարի այն աշխատանքը, որը սկսել է, մինչև քրիստոնյայի փառավորվելը. «Որովհետև նրանց, որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որ Նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ: Եվ որոնց առաջուց սահմանեց, նրանց կանչեց էլ, և որոնց կանչեց, նրանց արդարացրեց էլ, և որոնց արդարացրեց, նրանց փառավոր էլ արեց: Ապա ի՞նչ ասենք այս բաների համար. եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հռոմ. 8.29-31):

Դարձի ապացույցը ճշմարիտ հավատացյալի կյանքում այն է, որ նա շարունակում է Աստծո պատվիրանների նեղ ճանապարհով գնալ: Ամեն անգամ, շարունակ ավելացող հայտնություն ստանալով Աստծո սրբության և սեփական մեղքի մասին, նա ավելի խորը զղջում է ապրում: Այնուամենայնիվ, սեփական տկարության և կարիքի մասին շարունակ ավելացող հայտնությունը հուսահատության չի տանում նրան, քանի որ դրա հետ մեկտեղ նրանում ավելանում է հայտնությունը Քրիստոսում Աստծո շնորհքի մասին: Իր օրերի վերջում հավատացյալը հայտնաբերում է իրեն այդ նեղ ճանապարհի վրա՝ ավելի սուրբ և ավելի զղջացող. նա ավելի է արժևորում Քրիստոսին և ավելի քիչ է վստահում սեփական անձին, քան իր ընթացքի սկզբում:

Ի դեմս կեղծ հավատացյալի, մենք տեսնում ենք մի մարդու, որը նույնպես քայլում է լայն ճանապարհով և գրեթե չի մտահոգվում իր անձի մասին: Մեկ անգամ մի քարոզիչ Հիսուս Քրիստոսի Ավետարանի կոչն է անում նրան: Ինչ-ինչ պատճառով դա գրավում է նրա ուշադրությունը: Որոշ ժամանակ անց նա դավանում է իր հավատքը Քրիստոսի հանդեպ: Այս պահին կա երկու հավանական տարբերակ: Գոնե որոշ ավետարանական եկեղեցիներում նա կկարողանա լայն ճանապարհի վրա մնալ և, միևնույն ժամանակ, հավաստիացում ունենալ իր դարձի փորձառության և հավիտենական կյանքի հույսի մեջ: Նրա անփոփոխ վիճակը և աստվածային իրողությունների հանդեպ հետաքրքրություն չունենալը պարզապես կվերագրվեն աշակերտության պակասին: Նման այդ եկեղեցու շատ այլ անդամների, որոնք կարող են ճիշտ նույն կերպով խաբված լինել, և որոնց հետ նա կարող է համեմատել իրեն, նա կշարունակի հավիտենական կործանման լայն ճանապարհով գնալ՝ առանց զգուշացում ստանալու այն հովիվներից, որոնք հաշվետու են նրա անձի համար:

Այնուամենայնիվ, եթե նրա հավատքի դավանությունն արվեր առողջ ուսմունք ունեցող եկեղեցում, որտեղ քարոզվում է սուրբգրային Ավետարանը, և որն ունի պատկերացում իրական դարձի մասին, ամեն ինչ

580 Եբրայեցիների 12.5-11

այլ կերպ կլիներ: Այդ մարդուն կսովորեցնեին նեղ ճանապարհի ուղենիշները և կհորդորեին վարվել դրանցում: Այդ պահին նա կարող էր արագորեն մերժել աշակերտության պահանջները և բացահայտել իր դարձի չեկած վիճակը: Այնուամենայնիվ, ինչպես հաճախ տեղի է ունենում, նման մարդու կյանքում կարող են ի հայտ գալ արտաքին փոփոխություններ: Նա կարող է նորագյուտ ուրախություն արտահայտել և նույնիսկ ճշմարիտ աշակերտության նշաններ ցույց տալ: Նա կարող է պայքարել մարմնի դեմ և ունենալ նեղ ճանապարհին գտնվող ճշմարիտ պանդուխտի բոլոր նշանները: Բայցևայնպես, ժամանակի ընթացքում նրա ճշմարիտ բնությունն ակնհայտ կդառնա: Նա կմոլորվի նեղ ճանապարհից և, ի վերջո, բոլորովին կհեռանա դրանից: Նա կարող է ինչ-որ վարդապետական սխալմունք ընդունել և մերժել ճշմարիտ հավատքի հիմքերը: Նա կարող է դադարել պայքարը մեղքի դեմ և վերադառնալ իր արատներին, ինչպես որ շունն է վերադառնում իր փսխածին, կամ խոզը լվացվելուց հետո վերադառնում է ցեխի մեջ թավալվելուն[581]: Նման Դեմասին, նրա շարունակական սերն այս աշխարհի հանդեպ կարող է կրկին բոցավառվել՝ դրդելով նրան հեռանալ հավատքից և վերադառնալ աշխարհ[582]: Նա կարող է պարզապես անտարբեր դառնալ՝ հայտնվել խորը լեթարգիական վիճակում, որից նրան անկարելի կլինի արթնացնել: Կամ, վերջինը՝ նա կարող է շեղվել՝ հայտնվելով այնպիսի ավետարանական համայնքում, որտեղ մարմնավոր մարդիկ հարմարավետ կերպով բարգավաճում են:

Թեև բոլոր այս ողբերգություններն ինչ-որ չափով կարող են պատահել ճշմարիտ քրիստոնյայի կյանքում, տարբերությունն այն է, որ կեղծ հավատացյալի դեպքում բացակայում է Աստծո աննահանջ նախախնամությունը: Չկա աստվածային խրատի սուրբգրային դրսևորում: Այդ մարդը պարզապես անպատիժ կերպով անում է՝ ինչ կամենա: Նա թողնում է իր ուղին և փախչում է փարախից՝ առանց աստվածային միջամտության, որը կխոչընդոտեր նրան: Նրա նահանջը բացահայտում է, որ նա կեղծ հավատացյալ է և խորթ որդի է: Եբրայեցիների թղթի հեղինակը հստակ ներկայացնում է այս զարհուրեցնող ճշմարտությունը. «Որովհետև ո՞ր որդին է, որ հայրը նրան չի խրատում: Բայց եթե առանց խրատի եք, որին ամենը մասնակից եղան, ուրեմն խորթ եք և ոչ որդիներ» (Եբր. 12.7,8):

Սերմնացանի առակում Հիսուսը մեծագույն ճշգրտությամբ նկարագրում է դարձի չեկած մարդուն: Առաջինը՝ նրա սիրտը նման է քարքարոտ հողի, որի վրա ընկնում է Ավետարանի սերմը: Նա լսում է Խոսքը

581 Բ Պետրոս 2.22
582 Բ Տիմոթեոս 4.9

և անմիջապես ուրախությամբ ընդունում է այն, սակայն չունի հաստատուն արմատ իրենում, ինչը նշանակում է, որ նա վերստին ծնված չէ: Այն, ինչ նա ստացել է, միայն ժամանակավոր է, և երբ նեղություններ և հալածանք է գալիս Խոսքի պատճառով, նա անմիջապես նահանջում է[583]: Երկրորդը՝ նրա սիրտը նման է փշոտ հողի, որի վրա ընկնում է Ավետարանի սերմը: Նա լսում է Խոսքը, սակայն հետագայում այս աշխարհի հոգսերը և հարստության խաբեությունը խեղդում են Խոսքը, և այն անպտուղ է լինում[584]: Երկու դեպքերում էլ կեղծ հավատացյալը տարբերվում է քրիստոնյայից այն բանով, որ այդպես էլ չի հասունանում և մնայուն պտուղ չի բերում[585]: Նա նման է այն բույսին, որը նկարագրում է Եբրայեցիների թղթի հեղինակը, որը խմում է իր վրա հաճախ տեղացող անձրևը, սակայն փուշ ու տատասկ է տալիս և արդյունքում այրվում է[586]: Նա նման է ծառի, որը բարի պտուղ չի բերում և կտրվում է ու կրակը գցվում[587]: Սերմնացանի առակի ամենից զարմանալի և անհանգստացնող ճշմարտություններից մեկն այն է, որ նկարագրված չորս մարդկանցից միայն առաջինն անթաքույց մերժեց Ավետարանը: Մյուս երեքը հավատքի դավանություն արեցին, բայց նրանցից միայն մեկն էր ճշմարտապես դարձի եկել:

ՇԱՏԵՐԸ ԵՎ ՔՉԵՐԸ

Մոտենալով նեղ դռան և լայն ճանապարհի թեմայի ավարտին, մենք բախվում ենք մի իրողության, որը կարող է ամենից ցնցող ճշմարտությունը լինել. շատերը կործանման տանող ճանապարհին են, և միայն քչերն են գտնում դեպի կյանք տանող դուռը և ճանապարհը[588]: Այս ճշմարտությունն ավելի խիստ է դառնում, երբ մենք ճշտորեն հասկանում ենք Քրիստոսի խոսքերի համատեքստը:

Առաջին հայացքից հակված ենք մտածելու, որ Քրիստոսը տարբերակում է անում Իրեն հրապարակավ ընդունող և չընդունող մարդկանց միջև: Նման դեպքում, աթեիստները, ագնոստիկները, հեթանոսները և աղանդավորները գտնվում են կործանման տանող լայն ճանապարհին, իսկ Քրիստոսին դավանող մարդիկ՝ դեպի կյանք տանող նեղ ճանապարհին: Եթե այդպես լինի, պնդումն այն մասին, որ մարդկության մեծամասնությունը գտնվում է կործանման ճանապարհին, միևնույն է՝ ճշմարիտ կլինի: Այնուամենայնիվ, Քրիստոսի գծած շրջանակը շատ

583 Մատթեոս 13.20,21
584 Մատթեոս 13.22
585 Մատթեոս 13.23, Հովհաննես 15.16
586 Եբրայեցիների 6.7,8
587 Մատթեոս 7.19
588 Մատթեոս 7.13,14

ավելի նեղ է: Այս համատեքստում Նա չի հակադրում կրոնին չհարող մարդկանց կրոնական մարդկանց հետ, և ո՛չ էլ քրիստոնեությունից դուրս գտնվող կրոնական մարդկանց՝ Քրիստոսին դավանողների հետ: Փոխարենը, Նա խոսում է միայն նրանց մասին, ովքեր պնդում են, որ Իր հետևորդներն են: Նա զգուշացնում է, որ Իր հետ նույնացող և նույնիսկ Իրեն հրապարակավ Տեր դավանող մարդկանցից միայն քչերն են փրկվելու:

Այս անհանգստացնող ճշմարտությունն ապացուցվում է հաջորդ խոսքերում, որոնցում Հիսուսը խիստ զգուշացումներ է տալիս այն մարդկանց, որոնք Իր հետևորդներն են համարում իրենց[589]: Առաջինը՝ քրիստոնյայի կերպարանք ունեցող ամեն մարգարե չէ, որ քրիստոնյա է: Նրա ծառայության և դավանության վավերական լինելն ապացուցվում է նրա պտղով, նրա վարքով[590]: Երկրորդը՝ Հիսուսին ոգևորությամբ Տեր դավանող և նույնիսկ Նրա անունով ծառայող ամեն մարդ չէ, որ Երկնքի թագավորություն կմտնի[591]: Ճշմարիտ հավատքի նշանը Հոր կամքին հնազանդվելն է: Վերջինը՝ Քրիստոսի ուսմունքները լսող ամեն մարդ չէ, որ կփրկվի այս աշխարհի վերահաս դատաստանից, այլ միայն նրանք, ովքեր ոչ միայն լսում են Նրա խոսքերը, այլև վարվում են դրանց հիման վրա[592]:

Այս զգուշացումներից պարզ է, որ Քրիստոսը նկատի չունի մարդկության հոծ զանգվածը, որը կա՛մ անտեսում է, կա՛մ հրապարակավ մերժում է Իրեն. փոխարենը, Հիսուսի խոսքերն ուղղված են միայն նրանց, ովքեր պնդում են, որ ճանաչում են Իրեն, և ովքեր, փաստորեն, հրապարակավ նույնանում են Իր հետ: Այս մարդկանցից է, որ միայն քչերն են փրկվելու: Իսկ նրանց մնացած մասը նման է հարսանեկան խնջույքին անպատրաստ եկած մարդուն[593]: Նա պատահական պատասխանել էր այդ հրավերին, բայց չէր համարել, որ արժեր պատշաճ հագուստ ձեռք բերել՝ հարսանիքին մասնակցելու համար: Այնպես որ, թագավորը պատվիրեց կապել նրա ձեռքերն ու ոտքերը և դուրս անել՝ խավարի մեջ գցելով: Հիսուսը զգուշացնում է, որ նույն կերպով լինելու են անթիվ մարդիկ, որոնք ինչ-որ ձևով արձագանքել են Ավետարանի կանչին, սակայն երբեք ճշմարտապես դարձի չեն եկել, և ճշմարիտ դարձի ապացույցները երբեք բնորոշ չեն եղել նրանց: Թեև նրանք ինչ-որ չափով արձագանքել են, թեև նրանք Տեր են անվանել Նրան և նույնիսկ Նրա անունով ծառայել են, այնուամենայնիվ, գցվելու են «դրսի խավա-

589 Մատթեոս 7.15-27
590 Մատթեոս 7.15-20
591 Մատթեոս 7.21-23
592 Մատթեոս 7.24-27
593 Մատթեոս 22.11-14

որը... Այնտեղ կլինի լացը և ատամների կրճտոցը»: Ահա թե ինչու է Հիսուսը զգուշացնում, որ «շատերն են կանչված, բայց քչերը՝ ընտրված» (Մատթ. 22.13,14):

Մենք պետք է ուշադրություն դարձնենք այս զգուշացմանը: Մենք չենք կարող թաղել մեր գլուխներն ավազի մեջ և ձևացնել, որ նման բան գոյություն չունի: Մենք չենք կարող անտեսել Արևմուտքի ավետարանական համայնքի ներկա վիճակը: Անթիվ մարդիկ Տեր են դավանում Քրիստոսին և շաբաթ առ շաբաթ ամեն տեսակի ավետարանական միջոցառումների են մասնակցում, սակայն նրանք հետևում են լայն ճանապարհի ուղենիշներին: Նրանք գրեթե, կամ՝ բոլորովին, չունեն կանչի, պայքարի, զոհաբերման, մեղքն ուրանալու, այս աշխարհից հեռանալու և արդարության ձգտելու զգացումներ: Մենք ետընթաց ենք ապրել մեր զարգացման մեջ՝ դառնալով այն ամենի անճոռնի ու դատարկ ձևը, ինչը պետք է լինեինք, սակայն այժմ այդ ամենն այնքան սովորական է դարձել, որ թվում է՝ քչերն են նույնիսկ նկատում դա: Ավետարանական շարժումն այլևս չի զգուշացնում ընդդեմ այս աշխարհի Սնափառության տոնավաճառի, այլ դարձրել է Սնափառության տոնավաճառն իր գլխավոր գրավչություններից մեկը: Միգուցե մեծագույն մեղքն այն է, որ այս ամենը տեղի է ունեցել ոչ թե ամբիոնը շրջանցելու պատճառով, այլ հենց ամբիոնի պատճառով: Ժամանակակից ծառայողն այլևս չի զսպում այդ ամենը, այլ, ընդհակառակը, խթանում է: Քարոզելն այժմ իրականացվում է խորհրդատուների կողմից, որոնք հաջողակ կյանքի սկզբունքներ են սովորեցնում մարդկանց: Եկեղեցական աճի մասնագետները սովորեցնում են եկեղեցիներին, թե ինչպես հրապուրել մարմնավոր մարդկանց՝ մարմնավոր միջոցներով, և պահել նրանց իրենց համայնքներում՝ շարունակ ավելացող մարմնավոր հնարքների միջոցով: Ավետարանչության և միսիայի մասնագետներն այն աստիճան են հարմարեցրել Ավետարանը՝ այս աշխարհի մշակույթին հասանելի և ոչ վիրավորական դարձնելու համար, որ այս երկուսի միջև արդեն չկա մեծ տարբերություն, եթե ընդհանրապես ինչ-որ տարբերություն կա: Ամբողջ այդ ընթացքում մարդկանց բազմություններ, որոնք Տեր են դավանում Հիսուսին, ավելի են մոտենում այն օրվան, երբ կանգնելու են Նրա առջև և լսելու են. «Երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ»:

Մեր ամբողջ ավետարանական աղմուկի և իրարանցման մեջ, մինչ մենք պարծենում ենք մեր ծառայություններին հաճախող բազմաթիվ մարդկանցով, ճիշտ կվարվենք, եթե մտորենք այս ճշմարտությունների շուրջ, ինչպես նաև աստվածաբան և Նոր կտակարանի մասնագետ Քրեյգ Բլոմբերգի հետևյալ խոսքերի շուրջ. «Ճշմարիտ հավատացյալ-

ների տոկոսային չափն այն վայրերում և ժամանակներում, որոնցում «քրիստոնյա» լինելը ժողովրդականություն է վայելում, հավանաբար, այնքան էլ չի տարբերվում քրիստոնյաների տոկոսային չափից հալածանքի ժամանակ, երբ խորը նվիրում չունեցողներից քչերն են համարձակվում դավանել»[594]:

ԿՅԱՆՔ ԵՎ ՄԱՀ

Ճշմարիտ քրիստոնեությունը չի վերաբերում մակերեսային իրողություններին: Այն վերաբերում է կյանքին ու մահվան, երկնքին ու դժոխքին, հավիտենական երանությանը՝ Աստծո ներկայության մեջ, կամ գոյությանը հավիտենական զարհուրանքների մեջ, որոնք վեր են ամեն նկարագրությունից: Քրիստոնեությունն այնպիսի կրոն է, որում կշեռքի նժարներին են մարդկանց անդառնալի ճակատագրերը: Այդ իսկ պատճառով, այն լրջագույն իրողություն է:

Մատթեոս 7.13,14-ում Հիսուսը հակադրում է «կյանքը» «կորստի» հետ: «Կյանք» բառը թարգմանված է հունարեն *«զոե»* բառից: Քրիստոսի և Նոր կտակարանի բոլոր հեղինակների ուսուցումների համատեքստում մենք կարող ենք եզրակացնել, որ Նա պարզապես չի խոսում ֆիզիկական գոյության կամ անվերջ գոյության մասին: Փոխարենը, Նա նկատի ունի հավիտենական կյանքը՝ կյանքի որակը, որը բխում է Աստծո հետ մտերիմ և անձնական հարաբերություն ունենալուց[595]: Այս հարաբերությունն ազատ է, լիարժեք է, և մեղքի պատճառով առաջացած բաժանությունը և մահը չեն խոչընդոտում այն[596]: Սա որդիական հարաբերություն է, որում հավատացյալին շնորհվել է որդիության արտոնությունը և օրհնությունը[597]: Որպես ամփոփում, այն անսահման տևողություն ունեցող կյանք է՝ Աստծո բարեհաճ ներկայության մեջ, և այն շնորհվում է Հիսուս Քրիստոսի Անձի և աշխատանքի միջոցով[598]:

«Կյանքին» հակադրվում է «կորուստ» բառը: Այն հունարեն *«ապո՛լեիա»* բառից է, որը կարելի է թարգմանել նաև որպես «ավերում» կամ «կործանում»: Համաձայն Քրիստոսի և Նոր կտակարանի ուսուցումների համատեքստի, մենք կարող ենք եզրակացնել, որ այն չի վերաբերում անձի գոյության ավարտին, այլ՝ հավիտենական կամ անվերջանալի պատժին դժոխքում: Թեև ինչ-որ մեկը կարող է առարկություններ ունենալ հավիտենական պատժի վարդապետության վերաբերյալ և արհա-

594 Քրեյգ Բլոմբերգ. *«Նոր ամերիկյան մեկնություն. Մատթեոս»* (Նեշվիլ, Տենեսի, «Broadman», 1992թ.), էջ 132:
595 Հովհաննես 17.3
596 Հռոմեացիների 5.1, 8.1
597 Հովհաննես 1.12,13, Հռոմեացիների 8.15, Գաղատացիների 4.6
598 Հովհաննես 14.6, Գործք 4.12, Ա Տիմոթեոս 2.5,6, Հայտնություն 21.3-5,22-27

մարիել Նոր կտակարանը՝ այն թերի փաստաթուղթ համարելով, սակայն նա չի կարող մերժել այն փաստը, որ Նոր կտակարանը պարզորեն սովորեցնում է այս մասին: Հավիտենական կյանքը և հավիտենական կործանումը միասնաբար են ներկայացված Սուրբ գրքում: Այս ճշմարտությունը հստակ երևում է Քրիստոսի կողմից վերջին դատաստանի նկարագրության մեջ, որում Նա հայտարարեց. «[Անօրենները] կգնան հավիտենական տանջանքը, իսկ արդարները՝ հավիտենական կյանքը» (Մատթ. 25.46): Եթե անօրենների «հավիտենական տանջանքը» դժոխքում անսահման տևողություն չունի, նշանակում է՝ մենք նույնպես չենք կարող համարել, որ փրկվածների երանությունը Երկնքում անվերջ է[599]:

Դժոխքը՝ անօրենների դեմ Աստծո արդար զայրույթի վերջնական և լիարժեք դրսևորումն է: Այն լայն ճանապարհի վրա սկսված մեծ անկման վերջնական արդյունքն է: Դժոխքում ողորմությունը լիովին հեռացվում է մեղավորից, և նա հանձնվում է իրեն հասանելի կատարյալ արդարադատությանը: Նա նույնպես վերջնականորեն և անդառնալիորեն մատնվում է իր սրտի ցանկությանը, և նվաստացուցիչ կրքերն անզուսպ կերպով իշխում են նրան[600]: Նա հավիտյան զրկվում է Աստծո ժողովրդի օրհնություններից՝ մնալով առանց Աստծո և առանց հույսի[601]: Մտորելով այս սուրբգրային ճշմարտության շուրջ, բանաստեղծ Դանթեն գրել է իր էպիկական *«Աստվածային կատակերգության»* մեջ, որ դժոխքի դարպասների վերևում գրված է. «Թողե՛ք հույսը, բոլո՛րդ, որ մտնում եք այստեղ»: Անվանի մաքրակրոն հովիվ Ռիչարդ Բաքստերը հայտարարում էր. «Ես քարոզում եմ՝ երբեք հույս չունենալով, որ կրկին կքարոզեմ, և որպես մահացող մարդ՝ մահացող մարդկանց»[602]:

Մենք պետք է հասկանանք, որ կա դուռ, որով պետք է մտնենք, եթե ցանկանում ենք փրկված լինել: Այդ դուռը Քրիստոսն է՝ միայն Քրիստոսը, և միայն հավատքն է, որ բացում է Նրան մեզ համար: Այնուամենայնիվ, Սուրբ գիրքն անսասան և նույնիսկ աննահանջ ձգտում է համոզել մեզ, որ այդ դռնով մտնելու ապացույցն այն է, որ մենք պանդուխտներ ենք դարձել նեղ ճանապարհի վրա:

Ասում են, որ մենք մահանում ենք ծնվելու պահից: Նույնքան ճշմարիտ է, որ այս աշխարհ մուտք գործելու պահից կանգնում ենք դրանից հեռանալու ճանապարհին: Այս պատճառով, Քրիստոսը զգուշացնում է

599 Դանիել 12.2, Մատթեոս 18.8, 25.41, Հայտնություն 20.10
600 Հռոմեացիների 1.24,26
601 Եփեսացիների 2.12
602 Ռիչարդ Բաքստեր. *«Բանաստեղծական հատվածներ. Սրտի ներգրավվածությունը՝ Աստծո և սեփական անձի հետ»* (Լոնդոն, «J. Dunton», 1689թ.), էջ 30:

մեզ, որ կա նեղ ճանապարհ, որը «տանում» է դեպի հավիտենական կյանք, և լայն ճանապարհ, որը «տանում»[603] է դեպի հավիտենական կործանում: Սա մեծ և զարհուրելի ճշմարտություն է, որը պետք է հարկադրվի մեր խղճին: Երեմիա մարգարեն ասում է, որ Տերը մեր առջև դնում է «կենաց ճանապարհը և մահվան ճանապարհը» (Երեմ. 21.8): Նա աղաղակում է.

> «Կանգնե՛ք ճանապարհներին և տեսե՛ք և հարցրե՛ք վաղեմի ճանապարհներից, թե արդյոք ո՞րն է լավ ուղին, այն ժամանակ գնացե՛ք նրանով: Եվ դուք հանգստություն կգտնեք ձեր հոգիների (կամ՝ «անձերի») համար»:

Երուսաղեմի համառ բնակիչների պես չլինենք, որոնք պատասխանեցին՝ չենք գնում (Երեմ. 6.16): Այն, ինչպես որ Եսայի մարգարեն էր խնդրում. «Ամբարիշտը թողնի իր ճանապարհը, և անօրեն մարդը՝ իր խորհուրդները, և դառնա Տիրոջը, և Նա կողորմի նրան, և մեր Աստծուն, որովհետև Նա շատ ներող է» (55.7):

603 «Տանել» բառը, որը հանդիպում է Մատթեոս 7.13,14-ում, թարգմանված է հունարեն *«ապա՛գո»* բառից: Այն նշանակում է «դուրս տանել»՝ այն իմաստով, որ ինչ-որ մեկին տանում են՝ պատժի կամ պատվի համար:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹ

Ներքին իրողության արտաքին վկայությունը

«Զգո՛ւյշ կացեք սուտ մարգարեներից, որ գալիս են ձեզ մոտ ոչխարների հանդերձներով, բայց ներսևանց հափշտակող գայլեր են: Իրենց պտուղներից նրանց ճանաչեք. մի՞թե փշերից խաղող են քաղում, կամ տատասկից՝ թուզ: Այսպես ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար ծառը չար պտուղ է բերում: Չի կարող բարի ծառը չար պտուղ բերել, ո՛չ էլ չար ծառը՝ բարի պտուղ բերել: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրվում է և կրակի մեջ գցվում: Ուրեմն, իրենց պտուղների՛ց ճանաչեք նրանց»:

– Մատթեոս 7.15-20

Այս խոսքերում Տերը զգուշացնում է Իր ժողովրդին, որ կեղծ մարգարեների ի հայտ գալն անխուսափելի է, և սովորեցնում է, թե ինչպես տարբերել նրանց: Պողոս առաքյալը նման զգուշացում է տալիս Եփեսոսի եկեղեցուն. «Որովհետև ես գիտեմ, որ իմ հեռանալուց հետո հափշտակող գայլեր կգան ձեր մեջը, որ հոտին չեն խնայի: Եվ հենց ձեզնից մարդիկ վեր կկենան, որ ծուռ բաներ կխոսեն, որ աշակերտներին իրենց ետևից քաշեն» (Գործք 20.29,30):

Քրիստոսի խոսքերով, առաջին հայացքից այս հոգևոր գիշատիչները ոչխարի պես կթվան և հոտի ներսում կլինեն, ասես թե իրենք հոտի մասն են: Բայցևայնպես, նրանք այն չեն, ինչ թվում են, այլ՝ ճիշտ հակառակը: Թեև արտաքուստ նրանք գառան են նման, ներքուստ հափշտակող գայլեր են: Նրանք բաժակներ են, որոնք մաքուր են դրսից, բայց լի են պղծությամբ ներսից[604]: Նրանք խնամքով ծեփած գերեզմաններ են՝ լցված «մեռելների ոսկորներով և ամեն պղծությամբ» (Մատթ. 23.27): Հուդայի 12-րդ խոսքը նկարագրում է նրանց որպես վտանգավոր ժայռեր՝ թաքնված գրավիչ ջրերի ներքևում, տպավորիչ ամպեր, որոնք

604 Մատթեոս 23.25,26, Ղուկաս 11.39,40

կենսատու անձրև չեն տալիս, և փարթամ թվացող ծառեր, որոնց բույնը փտած է, և որոնք անպտուղ են: Պողոս առաքյալի խոսքերով, նրանք չար և խաբեբա մարդիկ են, որոնք առաջանում են չարության մեջ՝ «մոլորեցնելով և մոլորվելով» (Բ Տիմոթ. 3.13):

Բոլոր այս ցավալի նկարագրությունների իմաստն այն է, որ այս մարդկանց ներքին իրողությունը հակառակ է նրանց դավանությանը. նրանք այն չեն, ինչ թվում են կամ դավանում են: Նրանք քրիստոնեության բարակ երեսպատվածք են հագել ու խաբել են իրենց և ուրիշներին՝ Քրիստոսի իշխանության իրենց դատարկ դավանություններով[605]: Այս մարդիկ պատվում են Քրիստոսին իրենց շուրթերով, բայց նրանց սիրտը հեռու է Նրանից. նրանք խոստովանում են, թե ճանաչում են Նրան, բայց ուրանում են իրենց գործերով[606]:

Թեև Քրիստոսը հիմնականում խոսում է կեղծ մարգարեների ծածուկ բնավորության և նրանց կողմից մոլորված լինելու վտանգների մասին, Նրա խոսքերը չպետք է սահմանափակել միայն դրանով: Մենք ճիշտ կանենք, եթե հասկանանք, որ այս խոսքերի կիրառումը շատ ավելի լայն է և վերաբերում է նրանց, ովքեր դավանում են Քրիստոսին և նույնանում են Նրա հետ: Իրականում, Քրիստոսի խոսքերը հասնում են քրիստոնեական կրոնի սրտին և պատասխանում դրա կարևորագույն հարցերից մեկին. «Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ»: Այս հարցի պատասխանն այնքան պարզ է, որքան և խորն է: Մեր ներքին իրողությունը հայտնվում է արտաքին վկայությամբ. մեր ճշմարիտ ինքնությունը բացահայտվում է նկատելի գործերով. մեր դարձը կամ դրա բացակայությունն իմացվում է մեր կյանքի պտղով:

ԱՆՓՈՓՈԽ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Մատթեոս 7.16-ում Քրիստոսն առաջադրեց հստակ սկզբունք, որը բացառություն չունի. «Իրենց պտուղների՛ց ճանաչեք նրանց»: Այլ կերպ ասած, մարդու վարքով և գործերով կիմանանք, թե արդյո՞ք նրա հավատքի դավանությունը ճշմարիտ է:

> «Ճանաչել» բառը թարգմանված է հունարեն *«էպիգինո՛սկո»* բառից: Ընդհանուր առմամբ, այս բառը նշանակում է ավելի հստակ կամ ճշգրիտ գիտելիք որևէ թեմայի մասին, քան սովորական գիտելիքը, որի համար օգտագործվում է *«գինո՛սկո»* բառը: Այն նշանակում է իմանալ ստույգ, լիարժեք և սպառիչ կերպով[607]: «Պտուղ» բառը թարգմանված է հունարեն *«կար-*

605 Ղուկաս 6.46
606 Եսայի 29.13, Մատթեոս 15.8, Մարկոս 7.6, Տիտոս 1.16
607 Վիլյամ Ֆ. Արնդտ և Ֆ. Վիլբուր Գինգրիչ. *«Նոր կտակարանի և այլ վաղ*

պոս» բառից, որը բառացիորեն նշանակում է ծառերի կամ խաղողի որթերի պտուղ: Փոխաբերական իմաստով, այս բառը նշանակում է ինչ-որ բանի արտադրանք, ազդեցություն կամ արդյունք: Վ. Է. Վայնը նկարագրում է պտուղը որպես «ներքուստ և անտեսանելի կերպով գործող ուժի տեսանելի արտահայտում՝ այն իմաստով, որ պտղի բնույթը վկայում է այն առաջացնող ուժի բնույթի մասին»[608]:

Ներկա համատեքստում *«կարպոս»* բառը նշանակում է վարքը, պահվածքը, գործերը և արարքները, որոնք բխում են մարդու բնավորությունից և ցույց են տալիս դրա իրական որակը: Նույնպես, կարևոր է նշել, որ Հիսուսը խոսում է «պտուղների» մասին՝ հոգևակի, ոչ թե եզակի թվով, նկատի ունենալով ոչ թե մարդու կյանքի ոլորտներից մեկը, այլ նրա ամբողջ կյանքը: Մենք տեսնում ենք հետևյալ ճշմարտությունը. մարդու ներքին իրողությունն ի հայտ կգա նրա գործերով՝ նրա անձնային հատկանիշներով և վարքով, ցանկացած իրավիճակում: Թե՛ առաքինությունը, թե՛ չարիքն անկարելի է հեշտորեն թաքցնել. ժամանակի ընթացքում երկուսն էլ ի հայտ կգան[609]:

Այս ճշմարտությունը հաստատվում է այս խոսքերի կրկնությամբ: Ուշագրավ է, որ Քրիստոսը սկսում և ավարտում է պտուղների մասին Իր զրույցը նույն զգուշացմամբ. «Իրենց պտուղների՛ց ճանաչեք նրանց» (Մատթ. 7.16,20, հմմտ. 12.33): Արդարները կպայքարեն մեղքի դեմ և նույնիսկ պարբերաբար կձախողվեն: Երբեմն անօրենները բարի գործեր կկատարեն, և նրանց վարքը նույնիսկ արդարություն կհիշեցնի: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում և՛ արդարները, և՛ անօրենները կբացահայտվեն՝ իրենց շարունակական վարքի միջոցով:

Մենք պետք է հենց սկզբից գիտակցենք, որ այս ճշմարտությունը հակառակ է գրեթե ամբողջ ժամանակակից Ավետարանական շարժման հանրածանոթ ուսմունքներին: Այն բացակայում է Ավետարանի քարոզման և խորհրդատվությունների մեծ մասից, և ավելին՝ բացահայտ կերպով հերքվում է: Առաջինը՝ գրեթե ամբողջ Ավետարանական շարժումն ընդունել է ժամանակակից մշակույթի սխալական կարծիքը, որը հերքում է ցանկացած կապ բնավորության և վարքի միջև: Այս տեսանկյունն ավելի վստահում է մարդու դավանությանը և զգացմունքներին, քան փաստերին, որոնք ապացուցում կամ հերքում են դրանք: Ավելին,

---

քրիստոնեական գրականության հունարեն-անգլերեն բառարան» (Չիկագո. «University of Chicago Press», 2000թ.), էջ 369:

608 Վ. Է. Վայն. *«Նոր կտակարանի բառերի բացատրական բառարան՝ իրենց ճշգրիտ բառիմաստներով, անգլախոս ընթերցողների համար»* (Նեշվիլ, Տենեսի «Thomas Nelson», 1985թ.), էջ 133:

609 Մատթեոս 7.16-ի իր մեկնության մեջ Ժան Կալվինը գրում է. «Առաքինությունը կեղծելուց դժվար բան չկա»:

մենք ընդունել ենք այն սուտը, որ անբարոյություն է կամ մարդու արժանապատվության ոտնահարում է վիճարկել ցանկացած պնդում, որը նա անում է իր մասին՝ անկախ այն բանից, թե որքանով է դա հակասում փաստերին: Մենք որպես կանոնական օրենք ենք ընդունել ասացվածքն այն մասին, որ գիրքը կազմով չեն դատում: Այնուամենայնիվ, դրանով մերժել ենք Քրիստոսի պարզ ուսմունքը, որ մարդկանց ճանաչում են նրանց պտղով:

Կարևոր է նշել, որ, ասելով, որ գիրքը կազմով չեն դատում, մարդիկ կոչ չեն անում արգելք դնել զանազանության վրա, այլ զգուշացնում են դատելուց՝ ընդամենը մակերեսային դիտարկման հիման վրա: Օրինակ, մենք չպետք է կասկածենք մարդու գիտելիքի կամ մասնագիտական հմտությունների մեջ, միայն որովհետև նա որևէ հայտնի համալսարանի շրջանավարտ չէ: Բայց սա չի նշանակում, որ մենք չպետք է վիճարկենք մարմնավոր և անօրեն մարդու դավանանքը Քրիստոսին հետևելու մասին կամ, նույնիսկ, կասկածենք դրանում, միայն որովհետև չենք կարող իմանալ նրա սիրտը: Համաձայն Քրիստոսի, սիրտը կարող է իմացվել դրանից բխող տեսանելի գործերից. «Որովհետև սրտից դուրս են գալիս չար խորհուրդներ, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գողություններ, սուտ վկայություններ, հայհոյություններ: Սրանք են մարդուն պղծողը, բայց անլվա ձեռքով ուտելը մարդուն չի պղծում» (Մատթ. 15.19,20):

Այս տարածված հեռացումը Սուրբ գրքից չպետք է զարմացնի մեզ: Մարդիկ, որոնք անհնազանդ են հավատքին և ձևացնում են, թե դավանում են, մեկ ընդհանուր հատկանիշ ունեն. նրանք պնդում են, որ կրոնը սրտի հարց է, և դրա մասին անկարելի է դատել ցանկացած արտաքին դրսևորմամբ: Հիմնվելով այս հարմարավետ, բայց սխալական ենթադրության վրա, մարդը կարող է հայտարարել, որ իր սրտում ունի ամենամեծ նվիրումն Աստծո հանդեպ, և միաժամանակ գործել ամենամեծ հանցանքներն ընդդեմ Նրա պատվիրանների: Այս պատճառով է, որ Սուրբ գրքում կան բազմաթիվ զգուշացումներ ցանկացած տեսակի անհիմն դավանության դեմ: Հիսուսի զգուշացումների հետ մեկտեղ՝ Մատթեոսի 7-րդ գլխում և Հիսուսի ամբողջ ծառայության ընթացքում, Պողոս առաքյալը նույնպես զգուշացնում է այն մարդկանց համար, որոնք խոստովանում են, թե ճանաչում են Աստծուն, սակայն իրենց գործերով ուրանում են Նրան: Նա պիղծ և անհնազանդ է անվանում նրանց[610]: Հակոբոսը պնդում է, որ հավատքը, որի արդյունքում գործեր չկան, մահացած է և փրկարար արժեք չունի: Նման հավատք ունեցող մարդիկ փրկության

610 Տիտոս 1.16

հույս չունեն[611]: Ի վերջո, մենք տեսանք այս գրքի առաջին մասում, որ Հովհաննես առաքյալը մի ամբողջ նամակ գրեց, որպեսզի Քրիստոսին դավանող մարդիկ կարողանան ապացուցել իրենց դավանության իսկությունը՝ համեմատելով իրենց անձը և կենսառձը ճշմարիտ քրիստոնյայի հատկանիշների հետ[612]:

Որպես ամփոփում, ճշմարիտ հավատացյալը մնայուն պտուղ կբերի: Այս նպատակի համար է, որ նա ընտրվել և կարգվել է, և սրանով է նա ապացուցում, որ ինքը Քրիստոսի ճշմարիտ աշակերտն է[613]: Թեև նրա կյանքում կլինեն ակնհայտ անպտղության փուլեր՝ նրան պաշարող մեղքի կամ Հոր էտման պատճառով, աստվածային խրատի աշխատանքը կծառայի իր նպատակին և ավելի պտղաբեր կդարձնի նրան[614]: Սերմնացանի առակում Հիսուսը գաղափար է տալիս այն առատ պտղաբերության մասին, որով կառանձնանա յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքը, երբ հայտարարում է, որ Իր ճշմարիտ աշակերտներից ոմանք՝ հարյուրապատիկ, ոմանք՝ վաթսունապատիկ, և ոմանք էլ երեսնապատիկ պտուղ կբերեն (Մատթ. 13.23, հմմտ. Հովհ. 15.5): Զարմանալի բան է, և Աստծո փրկարար զորության դրսևորումն է, որ նույնիսկ ամենափոքրը Աստծո թագավորության մեջ երեսնապատիկ պտուղ կբերի[615]: Ինչպես Եսայի մարգարեն է ասում, Տիրոջ փրկությունը կծաղկի և արդարության ծիլ կտա[616]:

«ԱՐԳՈՒՄԵՆՏՈՒՄ ԱԴ ԱԲՍՈՒՐԴՈՒՄ»

«Արգումենտում ադ աբսուրդում»-ը կամ *«ռեդուկտիո ադ աբսուրդում»*-ը (անհեթեթության տանող փաստարկ կամ անհեթեթության վերածում) տրամաբանության մեջ օգտագործվող մեթոդ է, որը ցույց է տալիս, որ ընդդիմախոսի փաստարկը հանգեցնում է անհաշտ հակասության կամ անհեթեթ եզրակացության: Մատթեոս 7.16-ում Հիսուսը նմանատիպ հնարք է օգտագործում՝ հերքելու համար այն մարդկանց խոսքերը, որոնք չէին ընդունում, որ իրենց ներքին իրողությունը (այսինքն՝ իրենց ինքնությունը) կարող է իմացվել իրենց տեսանելի արարքներով (այսինքն՝ իրենց վարքով). «Իրենց պտուղների՞ց ճանաչեք նրանց. մի՞թե փշերից խաղող են քաղում, կամ տատասկից՝ թուզ»:

Հիսուսն արտասովոր ուսուցիչ էր, և Լեռան քարոզն այս ճշմարտության մեծագույն ապացույցներից է: Նա անձնավորում էր իմաստությունը.

611 Հակոբոս 2.14-26
612 Ա Հովհաննես 5.13
613 Հովհաննես 15.8
614 Հովհաննես 15.2, Եբրայեցիների 12.11
615 Մատթեոս 11.11, Ղուկաս 7.28, Հովիվ Չարլզ Լեյտեր, զրույց հեղինակի հետ:
616 Եսայի 45.8

Նա հռետորաբանության վարպետ և անսասան բանավիճող էր: Ավետարանի հեղինակը հավաստիացնում է մեզ, որ ցանկացած բանավեճի ժամանակ «Ոչ ոք չէր կարողանում մի բան պատասխան տալ Նրան» (Մատթ. 22.46): Եվ երբ ամեն ինչ ասված և արված էր, Նրա ընդդիմախոսները զարմացած հեռանում էին՝ չհամարձակվելով «այլևս... Նրանից մի բան հարցնել» (Ղուկ. 20.40):

Հիսուսն օգտագործում է մի օրինակ, որը կարող է հասկանալի լինել նրան, ով նույնիսկ մի փոքր ծանոթ է գյուղատնտեսությանը: Նա հարցնում է բազմությանը. «Խաղողը չի հավաքվում փշոտ թփերից, այնպես չէ՞»: Մենք ընդամենը կարող ենք պատկերացնել մարդկանց արձագանքը, որոնց վերջապես այնպիսի հարց տվեցին, որին իրենք կարող էին պատասխանել: Հավանաբար, նրանք վստահությամբ ասացին. «Իհարկե՝ ո՛չ: Լիովին անհեթեթ կլինի նույնիսկ նման բան ենթադրելը: Դա հակառակ է բնությանը»:

Հիսուսը ևս մեկ նման հարց տվեց. «Եվ տատասկներից էլ թուզ չեն քաղում, այնպես չէ՞»: Կրկին, բազմությունը պատասխանեց նորագյուտ համարձակությամբ և հնարավոր է՝ գերազանցության զգացումով. «Դա անհեթեթություն է: Կան որոշ բաներ, որոնք հնարավոր չեն: Բույսը չի կարող այնպիսի պտուղ տալ, որը հակառակ է իր բնությանը: Նա, ով պնդում է, որ խաղող է հավաքել փշերից, կամ թուզ՝ տատասկներից, կա՛մ խելագար է, կա՛մ ստում է»:

Մարդիկ հաղթական զգացողություն ունեին: Նրանք ճիշտ պատասխանեցին Մեծ Հարցնողին: Նրանք խրատեցին Խրատողին: Այնուամենայնիվ, նրանց հաղթանակի պատրանքը կարճատև էր: Քրիստոսի հարցերը հռետորական բնույթ ունեին: Դրանք Իր օգտի համար էին, ոչ թե նրանց: Նա փակեց Իր ծուղակը և հայտնեց Իր հարցումների իրական մտադրությունը: Նա ներկայացրեց դրանց անխուսափելի հետևությունը.

> «Եթե անհեթեթ է հավատալը, որ փշոտ թփերին կարող է խաղող աճել, և տատասկներին՝ թուզ, ապա հավասարապես անհեթեթ է հավատալը, որ ինչ-որ մեկը ճշմարտապես Իմ աշակերտն է, եթե Նա աշակերտի պտուղ չի բերում: Եվ եթե ցանկացած մարդ, ով պնդում է, թե խաղող է հավաքել փշերից, կամ թուզ՝ տատասկներից, կա՛մ խելագար է, կա՛մ ստախոս, նշանակում է՝ ցանկացած մարդ, ով պնդում է, թե Իմ աշակերտն է, և աշակերտի պտուղ չի բերում, հավասարապես ցնորամիտ կամ անբարո է»:

Պատկերացրեք, որ մի անձնավորություն կարևոր հանդիպման է գալիս մեկ ժամ ուշացումով. ենթադրենք, խոսքը քարոզչի մասին է, ով

պետք է քարոզի ամիսներ առաջ ծրագրված մի մեծ հավաքույթի ժամանակ: Երբ նա ի վերջո տեղ է հասնում, ամենայն խստությամբ հարցնում են նրա ուշացման պատճառը: Նա տալիս է հետևյալ բացատրությունը.

> «Պարոնա՛յք, ես ժամանակին դուրս եկա Հյուրանոցից, բայց ճանապարհին մեքենայի անիվի օդը դուրս թողեց: Մինչ փոխում էի անիվը, ագուցներից մեկն ընկավ ձեռքիցս և գլորվեց արագընթաց մայրուղու մեջտեղը: Առանց մտածելու, ես արագ գնացի, կռացա և վերցրի այն: Երբ կանգնեցի, տեսա, որ երեսուն տոննա բեռով մի բեռնատար ինձ վրա է գալիս՝ ժամում հարյուր կիլոմետր արագությամբ: Այն հարվածելով ինձ՝ վրաերթ արեց: Ահա թե ինչու ուշացա: Ես ներողություն եմ խնդրում անհարմարություն պատճառելու համար»:

Այդ բացատրությունը լսողներն ուշադրություն են դարձնում, որ այդ քարոզչի մազերը հարդարված են, և նրա հագուստը կոկիկ արդուկած է: Ավելին, նա չունի ոչ մի տեսանելի վնասվածք: Այնպես որ, նրանք միայն եզրակացնում են, որ այդ քարոզիչը խելագար է, խաբված է կամ արտասովոր ստախոս է: Նրանց եզրակացության հիմքն այն պարզ փաստն է, որ լիովին անհնար է, որ անպաշտպան մարդը վրաերթի ենթարկվի երեսուն տոննա բեռով բեռնատարի կողմից և չունենա այդ բախման որևէ տեսանելի ապացույց:

Նման այս օրինակին, Ավետարանական շարժումը բախվում է մի շարք արտասովոր հարցերի: Ի՞նչն է ավելի մեծ, բեռնատա՞րը, թե՞ Աստված: Եթե հնարավոր չէ, որ մարդուն վրաերթի ենթարկի նույնիսկ ամենափոքր մեքենան, և նրա վրա շրջադարձային փոփոխության հետքեր չլինեն, ինչպե՞ս է հնարավոր, որ մարդը երես առ երես հանդիպի կենդանի Աստծուն՝ առանց նույնիսկ իր բնավորության վրա մեկ փոս ընկած տեղի կամ քերվածքի: Ինչպե՞ս է ստացվում, որ անթիվ մարդիկ պնդում են, որ հանդիպում են ունեցել Աստծո հետ, սակայն գրեթե չունեն ապացույցներ՝ իրենց պնդումը հաստատելու համար:

Կա երկու գլխավոր պատճառ, մեկը՝ աստվածաբանական, և մյուսը՝ գործնական: Աստվածաբանական պատճառն այն է, որ վերածնման վեհ վարդապետությունը վերածվել է մարդկային որոշումից ոչ ավելի մի բանի: Քչերն են ընկալում վերստին ծնունդի հասկացությունը՝ որպես Աստծո գերբնական աշխատանք, որն այն աստիճան է փոխում մարդու բնությունը, որ նա կարող է նոր ստեղծված համարվել՝ համաձայն Սուրբ գրքի:

Գործնական պատճառն այն է, որ շատերը աստվածաշնչյան Ավետարանից պակաս ուղերձ են ստացել. նրանց կոչ են արել դառնալ

Աստծուն՝ ընդամենը աղոթք կրկնելով: Նրանք չգիտեն ապաշխարության և հավատքի ճշմարիտ բնույթը և տեղյակ չեն աշակերտության պահանջների և քրիստոնեական կյանքի սահմանափակումներից: Նրանք դեռ պետք է նեղ դռնով մտնեն, իսկ ներկայումս երանությամբ շարունակում են լայն ճանապարհով քայլել: Նրանք բավականաչափ կրոնական գաղափարներ են ստացել՝ իրենց խիղճը խաղաղեցնելու համար: Նրանք նաև բավականաչափ հավաստիացումներ են ստացել իրենց կրոնական առաջնորդներից[617], որպեսզի անընկալունակ լինեն ճշմարիտ Ավետարանի զգուշացումների հանդեպ:

«ԱՐԳՈՒՄԵՆՏՈՒՄ ԱԴ ՀՈՄԻՆԵՄ»

Գոյություն ունի մի ընդհանուր միտում ցանկացած տեսակի բարոյական կամ կրոնական գաղափարախոսության հարող մարդկանց միջև. նրանք մերժում կամ անտեսում են Քրիստոսի կողմից վճռականորեն հաստատվող ճշմարտությունն այն մասին, որ մարդու ներքին իրողությունն ի հայտ է գալիս նրա պտուղներով՝ անկախ այն բանից, թե որքան հաճախակի և վճռական է նրա դավանությունը: Պողոս առաքյալը խոսում էր այս խնդրի մասին Հռոմի եկեղեցուն ուղղված իր նամակում, որում նա ծավալուն փաստարկներ էր բերում կրոնական հրեաներին, որոնք պարծենում էին օրենքով և դատապարտում էին հեթանոսների անբարո վարքը, սակայն մեղավոր էին համանման հանցանքների մեջ: Նրանք անգիր ասում էին *«Շեման»* և կարկառուն դավանություններ էին անում Աստծուն և Նրա պատվիրաններին հավատարիմ լինելու մասին, սակայն նրանց գործերն ապացուցում էին, որ նրանք այն չէին, ինչ պնդում էին: Պողոսը գրում է Հռոմեացիների 2.17-23-ում.

> «Ահա դու Հրեա ես անվանվում և կռթնում ես օրենքի վրա և պարծենում ես Աստծով: Եվ Նրա կամքը գիտես, և զանազանում ես տարբեր բաները՝ օրենքից խրատված լինելով, և քո անձի վրա վստահություն ունես, որ կույրերի առաջնորդ ես և խավարյալների լույս, անմիտների խրատիչ, երեխաների վարդապետ, որ օրենքի գիտության և ճշմարտության կերպարանքն ունես օրենքում: Արդ դու, որ ուրիշին սովորեցնում ես, քո անձին չե՞ս սովորեցնում: Դու, որ քարոզում ես չգողանալ, գողանո՞ւմ ես: Դու, որ ասում ես շնություն չգործել, շնությո՞ւն ես գործում: Դու, որ կուռքերից գարշում ես, սրբապղծությո՞ւն

617 Այս կրոնական առաջնորդներն են ավետարանական հովիվները, երիտասարդական ծառայողները և ավետարանիչները, որոնց ոչ սուրբգրային պատկերացումն Ավետարանի մասին փրկության կեղծ հավաստիացում է տալիս իրենց ունկնդիրներին, ինչն անընկալունակ է դարձնում նրանց ցանկացած ճշմարիտ խրատի համար:

ես անում: Դու, որ օրենքով պարծենում ես, օրենքին դեմ գործելով Աստծուն անարգո՞ւմ ես»:

Հրեաների միջև գոյություն ունեցող այս սխալմունքը, որին Պողոսն անդրադառնում է, լայնորեն տարածված է ժամանակակից Ավետարանական շարժման մեջ: Բազմաթիվ ավետարանականներ պնդում են, որ վերստին ծնված են և հավիտենական կյանք են ստացել, սակայն նրանց կյանքը ցայտուն կերպով հակադրվում է նրանց դավանանքին: Բացի այն, որ նրանք անտեսում են Քրիստոսի ուսմունքներն այս մասին, նրանք հաճախ բացահայտ հերքում են դրանք և սովորեցնում են ճիշտ հակառակը: Կեղծ հավատացյալը համարում է, որ ոչ ոք երբեք չէր կասկածի իր մեջ, եթե կարողանար տեսնել իր սրտի խորքը, որում ծածկված են ճշմարիտ հավատքը և սերն Աստծո հանդեպ: Իրավիճակն ավելի է վատթարանում այն բանով, որ նա հաճախ օգտագործում է Քրիստոսի ուսմունքները՝ սաստելու համար ցանկացած մարդու, որը համարձակվում է ընդդիմանալ իրեն: Սովորաբար նրա սիրելի հակահարվածը Մատթեոս 7.1-ն է. «Մի՛ դատեք, որ չդատվեք»: Նա չի գիտակցում, որ իր դարձի վավերականությունն ապացուցելու մոլուցքով աղճատում է Սուրբ գիրքը՝ իր իսկ կործանման համար[618]:

Ուշագրավ և անհանգստացնող է, որ կեղծ հավատացյալի ամենից հաճախ տրվող պատասխանը ցանկացած մարդու, որը երբևէ վիճարկում է նրա դարձի գալը, մի դասական սխալմունքի գրեթե կատարյալ օրինակ է, որը փիլիսոփաները և տրամաբաններն անվանում են *«արգումենտում ադ հոմինեմ»* (փաստարկ՝ ուղղված մարդուն կամ ընդդեմ մարդու): Այս սխալմունքը հետևյալն է. մարդը հարձակվում է իր ընդդիմախոսի անձնային հատկանիշների վրա, փոխարենը փորձի հերքել նրա փաստարկի ճշմարտացիությունը և ողջամտությունը: Գաղափարն այն է, որ ընդդիմախոսի ասածը պետք է մերժվի, քանի որ նրա խոսքերն իր բնավորության մեջ և դրդապատճառներում առկա ինչ-որ սխալմունքի արդյունք են: Այս մարտավարության նպատակն է վիճարկել ընդդիմախոսի անձնային հատկանիշները և քննության ենթարկել նրան՝ նրա փաստարկներն անտեսելու համար:

Կեղծ հավատացյալը հաճախ է նման հնարքի դիմում՝ ի պատասխան իր հավատքի վավերականությանն ուղղված ցանկացած հարցի: Պատկերացրեք այսպիսի մի օրինակ: Մի երեց նկատում է, որ եկեղեցու անդամներից մեկի կյանքում կամայականությունն ավելի արտահայտիչ է դառնում, և որոշում է ընդդիմանալ նրան: Այդ երեցը սիրով ներկայացնում է մի քանի հստակ ապացույցներ, որոնք դրդել են իրեն

618 Բ Պետրոս 3.16

վիճարկել այդ անձնավորության դարձի գալը: Այնուամենայնիվ, փոխարենը իր դեմ ուղղված փաստարկների վավերականությունը դիտարկելը կամ ինչ-որ բացատրություն ներկայացնելը՝ այդ թյուրըմբռնումը հարթելու համար, այդ անձնավորությունն ի պատասխան հարձակվում է այդ երեցի վրա: Նա մեղադրում է նրան փարիսեցի լինելու և մարդկանց դատելու մեջ: Նա զգուշացնում է այդ երեցին՝ չդատել, որպեսզի ինքն էլ չդատվի, և հորդորում է նրան հանել իր աչքի գերանը, մինչև ուրիշի մեղքերով զբաղվելը[619]: Ի վերջո, նա հանդիմանում է այդ երեցին՝ նույնիսկ մտածելով, որ ինքը կարող է որոշել դիմացինի սրտում եղածը, և ենթադրելով, որ ինչ-որ մեկը քրիստոնյա չէ: Այդ կեղծ հավատացյալին հաջողվում է հեռացնել ուշադրությունն իրենից և իր դեմ խոսող փաստարկներից ու մատնացույց անել այդ երեցին, որն, իր կարծիքով, ամբարտավանորեն ու առանց սիրո հարձակվել է իր վրա:

Արդյունքում այդ կեղծ հավատացյալը ոչ միայն մերժեց Քրիստոսի ամենակարևոր ուսմունքներից մի քանիսը դարձի և դրա վկայության մասին, այլև աղճատեց դրանք՝ ուղղելով այն մարդկանց դեմ, որոնք սիրով և անձնազոհաբար փորձում էին օգնել իրեն: Ամենից ողբերգական փաստն այս օրինակում հետևյալն է. այդ կեղծ հավատացյալի վիճակը, որում նա անընկալունակ է ճշմարտության հանդեպ, մեծ մասամբ ստեղծվել և ձևավորվել է ժամանակակից ավետարանական ամբիոնից հնչող քարոզներով:

ՆԵՐՔԻՆ ԻՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այն, ինչն առաջին հայացքից նման է սովորական արտահայտության, որում օգտագործված փոխաբերությունը հասկանալի է նույնիսկ երեխաների համար, իրականում ամենից խորիմաստ ուսմունքներից մեկն է դարձի աշխատանքի մասին, ինչպես նաև մարդու բնության և կամքի միջև կապի մասին: Հիսուսը հայտարարում է. «Այսպես, ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և չար ծառը չար պտուղ է բերում: Չի կարող բարի ծառը չար պտուղ բերել, ո՛չ էլ չար ծառը բարի պտուղ բերել» (Մատթ. 7.17,18):

Թեև արդեն ասել եմ սա, ժամանակակից մարդը՝ թե՛ Ավետարանական շարժման մեջ, թե՛ դրանից դուրս, ստեղծել է անբնական տարանջատում բնության և կամքի միջև: Այս սխալմունքը, որը ժամանակակից Ավետարանական շարժման հիմքում է, մեծ տկարություն է առաջացրել դրա ամբողջ կառույցի մեջ: Այն թույլ է տվել մեզ առանձնացնել մարդու էությունը նրա գործերից:

619 Մատթեոս 7.3-5

Երբ Հիսուսը հայտարարեց, որ ամեն բարի ծառ բարի պտուղ է բերում, և ամեն չար ծառ չար պտուղ է բերում, Նա պարզապես հաստատում էր անքակտելի կապը ծառի բնույթի և դրանից ստացվող պտղի միջև: Թեև լավ ծառի պտղի մի մասը կարող է վնասված լինել, իսկ վատ ծառի պտղի մի մասը կարող է լավը լինել, նրանց պտղի մեծ մասը համապատասխան կլինի նրանց բնությանը: Լավ ծառի վրա բավականաչափ լավ պտուղ կլինի. այդ պտուղը ցույց կտա, որ այդ ծառը լավն է, և կառանձնացնի այն վատ ծառերից: Ինչպես արարչագործության օրերում, ամեն ծառ պտուղ է տալիս իր տեսակի պես[620]:

Այս անբաժանելի կապը պտղի և բնության, հատկանիշների և տեսակի, գործերի և էության միջև, թվում է, թե պարզ է կյանքի բոլոր ոլորտներում՝ բացի կրոնից և բարոյականությունից: Մենք կվիճարկեինք այն մարդու ունակությունները, որը չի կարողանում տարբերել ծառերի տարածված տեսակները՝ դրանց պտուղները տեսնելուց հետո, կամ չի կարողանում տարբերել կենդանիների տեսակները, նույնիսկ նրանց հատկանիշները և սովորությունները հանգամանորեն ուսումնասիրելուց հետո: Երբ մենք մոտենում ենք դաշտում կանգնած որևէ կենդանու, որը ձիու նման չէ, քանի որ այն ունի երկու փոքրիկ ոտք, թաղանթավոր թաթեր և փետուրներ, եզրակացնում ենք, որ այն ձի չէ: Մեր կարծիքն ավելի է հաստատվում, երբ տեսնում ենք, որ այն ձիու պես չի վարվում, քանի որ այն դժվարությամբ և օրորվելով է քայլում, լողում է առանց որևէ ջանք գործադրելու և թռչում է հյուսիսից հարավ և հակառակը: Այն ձիու նման չէ և ձիու նման չի վարվում. այնպես որ, մենք եզրակացնում ենք, որ այն ձի չէ:

Այնուամենայնիվ, երբ խոսքը քրիստոնեական դավանության մասին է, մենք շփոթվում ենք և տարածված շաբլոնային արտահայտություններ ենք օգտագործում՝ Քրիստոսի ուսմունքների փոխարեն: Թվում է՝ Ավետարանական շարժումն այլևս չի դիտարկում դարձն առաջին հերթին որպես Աստծո գերբնական աշխատանք, որը կատարվում է վերստին ծնունդի հրաշքի միջոցով: Հետևաբար, քրիստոնյա են համարվում այն մարդիկ, որոնք պարզապես փոխել են իրենց կարծիքը, ոչ թե նրանք, որոնք վերափոխվել են Աստծո զորությամբ և նոր ստեղծվածներ են դարձել՝ նոր բնությամբ, և արդյունքում՝ նոր և արդար ձգտումներով: Այդ պատճառով, սրբացումը և պտղաբերությունը դիտարկվում են որպես այնպիսի երևույթներ, որոնք կարող են տեղի ունենալ կամ տեղի չունենալ քրիստոնյայի կյանքում: Մենք հաստատում ենք, որ այն Աստված, որը բարի գործ սկսեց մեզանում, կկատարի այն, բայց միայն՝ եթե

620 Ծննդոց 1.12

թույլ տանք[621]: Մենք Նրա ստեղծվածն ենք՝ հաստատված բարի գործերի համար, որոնք նախապես պատրաստված են եղել, բայց ամբողջ այդ աստվածային ծրագիրը կարող է ի չիք դառնալ, եթե որոշենք չվարվել դրանցում[622]: Ուստի ոմանք հավատում են, որ մարդը կարող է ընտրել Քրիստոսին և լիարժեք արդարացում ստանալ, սակայն որոշել, որ չի հետևելու Քրիստոսին՝ սրբացման ընթացք անցնելու համար:

Թեև այս կարծիքը տարածված է, այն պարզապես ճիշտ չէ: Այնուամենայնիվ, ճիշտ չէ նաև այն ճակատագրապաշտական տեսանկյունը, որը ներկայացնում է Աստծուն որպես շահարկող և պարտադրող Անձի, որը գործում է Իր ժողովրդի կյանքում՝ անտեսելով նրանց կամքը: Մեր աճը Քրիստոսի մեջ և մեր պտղաբերությունը կախված են մեր կամքից. այնուամենայնիվ, մենք չպետք է անտեսենք այն փաստը, որ մեր կամքը կախված է մեր բնությունից, որն արմատապես փոխվել է Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի շնորհիվ: Մենք որոշում ենք պտուղ բերել, քանի որ ցանկանո՛ւմ ենք պտուղ բերել, և այդ ցանկությունը բխում է մեր նոր բնությունից: Աստված հոժարություն չի տալիս մեզ՝ շահարկման կամ պարտադրանքի միջոցով, այլ՝ Իր վերստեղծման աշխատանքով: Այն, որ մենք պտուղ կբերենք, հաստատ է, որովհետև Նա վերափոխել է մեզ՝ պտղաբեր ծառեր դարձնելով:

Քրիստոնեության իմաստն այն չէ, որ փորձենք մեր բնությանը հակառակ ապրել: Թեև արդարություն գործելը դեռևս հակառակ է մեր անկում ապրած մարմնին, այն հակառակ չէ մեր նոր բնությանը և թշնամական չէ մեր ձգտումներին[623]: Մենք նոր ստեղծվածներ ենք, որոնք վերստեղծված են Աստծո պատկերով՝ ճշմարիտ արդարությամբ և սրբությամբ[624]: Մենք արդարությամբ ենք վարվում, որովհետև սիրում ենք արդարությունը, և խորշում ենք մեզնից, երբ հեռանում ենք դրանից: Թեև մեր լիարժեք վերափոխումը տեղի կունենա մեր հարության ժամանակ, այն սկսվել է մեր դարձի գալու օրը: Վերստին ծնունդի միջոցով մենք նոր ստեղծվածներ դարձանք՝ այս արտահայտության լիարժեք իմաստով: Այս ճշմարտությունները չպետք է դիտարկել բանաստեղծական կամ սիրերգային, ասես դրանք զուրկ են որևէ իրական իմաստից. մենք պետք է հասկանանք, որ դրանք ճշգրտորեն պատկերում են քրիստոնյայի ներկա իրողությունը: «Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթ. 5.17):

Վերստին ծնունդի իրողությունն այն վարդապետական հիմքն է, հա-

621 Փիլիպեցիների 1.6
622 Եփեսացիների 2.10
623 Գաղատացիների 5.17, Հովիվ Չարլզ Լեյտեր, զրույց հեղինակի հետ:
624 Բ Կորնթացիների 5.17, Գաղատացիների 6.15

մաձայն որի Հիսուսը հայտարարում է, որ բարի ծառը չի կարող չար պտուղ բերել, և չար ծառը չի կարող բարի պտուղ բերել: Այն ճշմարտությունը, որը Նա փոխանցում է, միաժամանակ և՛ պարզ է, և՛ խորը. ծառը չի կարող այնպիսի պտուղ բերել, որը հակառակ է իր բնությանը: Ադամի ծայրաստիճան արատավորված որդին չի կարող Աստծուն հաճելի կերպով ապրել, և Աստծո վերածնված որդին չի կարող ապրել՝ շարունակ ապստամբելով Նրա դեմ: Սրբացումը կամ Աստծո էտման աշխատանքը քրիստոնյայի կյանքում կհանգեցնի այն արդարության հունձքին, որը տրվում է Հիսուս Քրիստոսի միջոցով՝ Աստծո փառքի և գովասանքի համար[625]: Նա կսովորի վարվել որպես լույսի զավակ և կբերի լույսի պտուղը՝ ամեն բարությամբ, արդարությամբ և ճշմարտությամբ[626]:

Թվում է՝ մենք հակված ենք սովորեցնելու ծառերի և դրանց պտղի մասին Հիսուսի ուշագրավ ճշմարտության միայն մեկ կողմը: Դարձի չեկած մարդկանց մենք հետևողականորեն հորդորում ենք վստահություն չունենալ մարմնի վրա և թողնել իրենց գործերով իրենց փրկելու ցանկացած հույս[627]: Մենք ճշտորեն տեղեկացնում ենք նրանց, որ «մարմնի խորհուրդը՝ Աստծո դեմ թշնամություն է» (Հռոմ. 8.7): Մենք անսասան հավաստիացնում ենք, որ գործերով արդարանալն անհնար է՝ առանց որևէ բացառության: Չար ծառը չի կարող բարի պտուղ բերել, և չվերածնված սիրտը չի կարող կատարել օրենքի արդար պահանջները:

Այն, որ մենք պաշտպանում և ազդարարում ենք այս ակնառու ճշմարտությունը, գովելի է: Այնուամենայնիվ, մենք պետք է հարցնենք մեզ, թե ինչո՞ւ ենք հազվադեպ հիշատակում դրան փոխկապակցված ճշմարտությունն այն մասին, որ բարի ծառը չի կարող չար պտուղ բերել: Ինչպես որ անհնար է, որ դարձի չեկած մարդն իր կյանքով հաճեցնի Աստծուն, հավասարապես անհնար է, որ քրիստոնյան ապրի շարունակական ապստամբությամբ և անպտղությամբ Աստծո առջև: Աստված այնքան մեծ ներդրում է կատարել Իր խաղողի այգում, որ թույլ չի տա, որ նույնիսկ մեկ ճյուղ անպտուղ մնա: Նա պարզապես թույլ չի՛ տա դա: Նրա նախախնամությունը կհաղթահարի Իր ժողովրդի ցանկացած տկարություն ու հանգամանք, որ գրոհում են նրանց վրա: Թեև տարբեր չափով և հաճախականությամբ, Աստծո յուրաքանչյուր զավակ պտուղ կբերի:

Մենք ճյուղեր ենք, և ինքներս ոչինչ չենք կարող անել, բայց Նա պատվաստել է մեզ Քրիստոսի մեջ[628]: Մենք կարող ենք կոտրվել մեր իսկ ծանրությունից, բայց Նա հավատարիմ Մշակն է, որն էտում է մեզ՝ ավե-

625 Փիլիպեցիների 1.11
626 Եփեսացիների 5.8,9
627 Հռոմեացիների 3.20, Գաղատացիների 2.16, Եփեսացիների 2.8,9, Փիլիպեցիների 3.3
628 Հովհաննես 15.4,5

լի պտղաբեր դարձնելու համար[629]: Մենք գործում ենք մեր փրկությունն ահով ու դողով, բայց Նա Գերիշխան Տերն է, Ով գործում է մեզանում՝ և՛ կամենալը, և՛ անելը՝ Իր հաճության պես[630]: Մենք զավակներ ենք՝ հակված անհոգության և անհնազանդության, բայց Նա Տերն է, Ով խրատում է մեզ, որ ընդունենք Իր սրբությունը[631]: Մեր կյանքում մշտապես աշխատանք է կատարվում, բայց մենք Նրա ստեղծվածն ենք, և Նա, Ով բարի գործ է սկսել մեզանում, կկատարի այն[632]: Այնուամենայնիվ, եթե մենք մշտապես անպտուղ ենք, նշանակում է՝ չենք պատվաստվել: Եթե մեր կյանքում երբեք էտում չի լինում, նշանակում է՝ Աստված մեր Մշակը չէ: Եթե մենք չունենք առաջընթաց սրբացման մեջ, նշանակում է՝ մենք Նրա ստեղծվածը չենք: Եվ եթե մեր կյանքում չկա խրատ՝ մեր կամակորության համեմատ, նշանակում է՝ Աստված մեր Հայրը չէ: «Որովհետև, ո՞ր որդին է, որ հայրը նրան չի խրատում: Բայց եթե առանց խրատի եք, որին ամենը մասնակից եղան, ուրեմն խորթ եք և ոչ որդիներ» (Եբր. 12.5-11):

Այս ճշմարտությունները պետք է ազդարարվեն յուրաքանչյուրին, ով դավանում է Քրիստոսի անունը և պնդում է, որ հավիտենական կյանք ունի: Թեև հաճախ մենք ավելի մեծահոգի կարգախոս ենք ընտրում՝ «գիրքը կազմով չեն դատում», այնուամենայնիվ մենք պետք է հասկանանք, որ բարի ծառը չի կարող չար պտուղ բերել: Կյանքի տարբեր պահերին քրիստոնյան կարող է վազել, քայլել, սողալ, սահել կամ, նույնիսկ, ընկնել: Այնուամենայնիվ, իր կյանքի ամբողջ ընթացքում նա կաճի և պտուղ կբերի՝ «որը հարյուր, և որը վաթսուն, և որը երեսուն» (Մատթ. 13.23):

629 Հովհաննես 15.2
630 Փիլիպեցիների 2.12,13
631 Եբրայեցիների 12.9,10
632 Եփեսացիների 2.10, Փիլիպեցիների 1.6

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆԸ

Դատարկ դավանության վտանգները

«Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայություն, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է: Շատերը կասեն ինձ այն օրը. «Տե՛ր, Տե՛ր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք, և Քո անունով դևեր հանեցինք, և Քո անունով շատ զորություններ գործեցինք»: Եվ Ես այն ժամանակ պարզ կասեմ նրանց, թե՝ երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ...

Արդ, ով որ Իմ այս խոսքերը լսում է և կատարում, կնմանեցնեմ մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին և այն տանը զարկեցին, և այն չկործանվեց, որովհետև ժայռի վրա հաստատված էր: Եվ ով որ Իմ այս խոսքերը լսում է և չի կատարում, նա կնմանվի մի անխելք մարդու, որ իր տունը շինեց ավազի վրա: Եվ անձրևն էլ եկավ, գետերն էլ վարարեցին, քամիներն էլ փչեցին, և այն տանը զարկեցին, և այն կործանվեց, և նրա կործանումը մեծ էր»:

– Մատթեոս 7.21-23, 24-27

Մեր առջև է Աստվածաշնչի կարևորագույն հատվածներից մեկը: Այն համապատասխան ավարտ է «Վերականգնել Ավետարանը» շարքի համար, քանի որ փոխանցում է մեզ Ավետարանի ծառայության լրջությունը: Կարդալով այն՝ անմիջապես գիտակցում ենք, որ Քրիստոսը չի խոսում ժամանակավոր և աննշան բաների մասին, այլ՝ հավիտենական ճակատագրերի: Իրականում, թվում է՝ մի մռայլ, գրեթե զարհուրեցնող քամի է փչում Նրա խոսքերից՝ ցրելով այն ամպերը, որոնք սահմանափակում են մեր տեսողությունը միայն այս աշխարհով: Այս պարզությունը կարճատև, բայց ապշեցուցիչ կերպով պատկերում է մեզ համար այն, ինչը սպասվում է այն մեծ և վերջին օրը, երբ ամբողջ մարդկության հետ կկանգնենք Քրիստոսի առջև, և կազդարարվի մեր հավիտենական ճակատագիրը:

Մենք տեսնում ենք, որ լինելու է մարդկային ցեղի մեծ հավաքում և ջոկում: Մի կողմում լինելու է մեծ բազմություն, որը ոչ ոք չի կարող հաշվել՝ ամեն ազգից, ցեղից, ժողովրդից և լեզվից: Նրանք կանգնելու են գահի առջև և Գառան առջև: Նրանք սպիտակ հանդերձներ են հագած և բարձր ձայնով աղաղակում են. «Փրկությունը՝ մեր Աստծուն, որ նստում է աթոռի վրա, և Գառանը» (Հայտն. 7.9,10): Այս մարդիկ ստացել են Աստծո հավանությունը և հրավիրված են մտնելու իրենց Տիրոջ ուրախության մեջ[633]: Նրանք նույնպես ընդունելության են արժանացել կենդանի Աստծո քաղաքում՝ հրեշտակների և կատարյալ դարձած սրբերի կողմից, և նրանք հավիտյան Աստծո և Գառան ներկայության մեջ կբնակվեն[634]: Ամեն արցունք սրբվել է նրանց աչքերից, և նրանց երկարատև պայքարը տառապանքի և մահվան հետ, նրանց սուգը և ցավերն ավարտվել են: Այս անկում ապրած աշխարհի բոլոր զարհուրանքներն անցել են[635]: Իրենց նոր բնակավայրում նրանք հավիտյան կբացահայտեն, որ մեկ օրը Աստծո սրահներում ավելի լավ է, քան հազար տարին՝ այլուր, որ Նրա ներկայության մեջ ուրախության լիություն կա, և Նրա աջ կողմում վայելքներ են հավիտյան[636]: Այս աշխարհի բոլոր սքանչելիքները և հաճույքները, որ նրանք թողել են, չեն կարող համեմատվել ամենափոքր ուրախության մի ակնթարթի հետ, որն այժմ պատկանում է իրենց: Երկրի վրա նրանք հավատում և սիրում էին Նրան, թեև Նա ծածկված էր իրենց տեսողությունից, բայց այժմ նրանք նայում են Նրան և ցնծում են՝ անպատմելի և փառավոր ուրախությամբ լցված[637]:

Մյուս կողմում մենք տեսնում ենք ևս մեկ բազմություն, որը ոչ ոք չի կարող հաշվել՝ ամեն ազգից, ցեղից, ժողովրդից և լեզվից: Դրա թիվն այնքան մեծ է, որ առաջին բազմությունը դրա համեմատ աննշան է դառնում և ընդամենը մնացորդ է թվում: Նրանք կանչված են Երկնքի գահի առջև իրենց կամքին հակառակ՝ ճանաչելու գահի վրա Նստողի իշխանությունը[638]: Նրանց երբեմնի համարձակ հայացքները սարսափով են համակված: Նրանք ահաբեկված են, փշրված են՝ հողեղեն անոթների պես[639], անվայել են և անարգ: Նրանք հալչում են Աստծո գահի առջև՝ նման փոքրիկ մոմե արձանների հրահալոցային վառարանի առջև[640]: Նրանք աղաղակում են սարերին և ժայռերին, որ ընկնեն իրենց վրա

633 Մատթեոս 25.21,23
634 Եբրայեցիների 12.22-24, Հայտնություն 21.23
635 Հայտնություն 21.4
636 Սաղմոս 16.11, 84.10
637 Ա Պետրոս 1.8
638 Փիլիպեցիների 2.10,11
639 Սաղմոս 2.9, Հայտնություն 2.27
640 Հովիվ Չարլզ Լեյտեր, զրույց հեղինակի հետ:

և թաքցնեն իրենց Աստծո և Գառան անմատույց լույսից[641]: Հանկարծ նրանք լռեցվում են, և Քրիստոսն Ինքն է ազդարարում նրանց վերջնական դատավճիռը. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23):

Հանկարծ աստվածային ձեռքով նրանք դժոխք են գցվում, և նրանց դատաստանի զարհուրելի սպասումներն իրականություն են դառնում[642]: Իրենց նոր բնակավայրում նրանք կբացահայտեն, որ «Սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը» (Եբր. 10.31): Նրանք կանցկացնեն հավիտենությունը դրսի խավարում, որտեղ միայն լաց և ատամների կրճտոց է[643]: Նրանք կխմեն Աստծո սրտմտության գինին, որն անխառն լցված է Նրա բարկության բաժակի մեջ: Նրանց տանջանքի ծուխը հավիտյան կբարձրանա, և ցերեկ ու գիշեր հանգիստ չեն ունենա[644]: Նրանք կպարզեն, որ իրենց բնակությունը դևերի հետ է՝ մի վայրում, որը պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար, որտեղ նրանց որդը չի մահանում, և կրակը չի հանգչում[645]: Ավելի լավ կլիներ, եթե նրանք երբեք ծնված չլինեին, կամ որ նրանք կյանք մտնեին խեղված, կաղ և կույր, քան իրենց ամբողջ մարմնով դժոխքը գցվեին[646]:

Մենք կարող ենք ի սրտե ցանկանալ, որ այս խոսքերն ընդամենը փոխաբերություններ լինեին՝ բանաստեղծի այլաբանություններ և չափազանցություններ: Եթե դրանք Դանթեի, Գյոթեի կամ Մարլոուի գրչին պատկանեին[647], հնարավոր կլիներ անտեսել, բայց քանի որ պատկանում են Քրիստոսին, ոչ մի կետ կամ նշանագիր չի կարող անտեսվել[648]: Իրականում, եթե մենք արժանահավատ ենք համարում Նրա խոսքերը վերջին դատաստանի, երկնքի և դժոխքի մասին, մենք կարող ենք համոզված լինել, որ այդ ամենի նույնիսկ կեսը չի պատմվել մեզ: Այս աշխարհի վերջը գալիս է այնպիսի մեծություն ունեցող դատաստանով, որ ամեն լսողի ականջները կզրնգան[649]:

Հենց այս ճշմարտությունների պատճառով է, որ ժամանակակից

641 Ա Տիմոթեոս 6.16, Հայտնություն 6.16
642 Մատթեոս 5.29,30, 18.9, Մարկոս 9.45,47, Ղուկաս 12.5, Եբրայեցիների 10.27, Բ Պետրոս 2.4
643 Մատթեոս 8.12, 22.13, 25.30, Հուդա 13
644 Հայտնություն 14.9-11
645 Մատթեոս 25.41, Մարկոս 9.44-48, Բ Պետրոս 2.4, Հուդա 6
646 Մատթեոս 26.24, Մարկոս 9.43-47
647 Դանթեն իտալացի բանաստեղծ էր և *«Աստվածային կատակերգության»* հեղինակը՝ մի պոեմի, որը նկարագրում է դժոխքի սարսափները: Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթեն և Քրիստոֆեր Մարլոուն գրի էին առել «Ֆաուստ» կոչվող հանրահայտ գերմանական առասպելի առանձին տարբերակներ: Այն մի գիտնականի մասին է, որը գործարք է կնքում սատանայի հետ և վաճառում է իր անձը՝ գիտելիք և հաճույք ստանալու համար:
648 Մատթեոս 5.18
649 Ա Թագավորաց 3.11, Դ Թագավորաց 21.12, Երեմիա 19.3

ավետարանական ամբիոնի թեթևամիտ և ժամանցային քարոզումն այս աստիճան արհամարհելի է: Ինչպե՞ս կարող են Աստծո ժողովուրդը և նրանց հովիվներն այդ աստիճան տարված լինել ժամանակավորով, երբ այդքան բան է խաղաքարտին դրված հավիտենականում: «Փող հնչեցրե՛ք Սիոնում» և տագնապի ձայն հնչեցրե՛ք եկեղեցում: «Դողան երկրի բոլոր բնակիչները, որ Տիրոջ օրը եկել է, որ մոտ է այն» (Հովել 2.1): Եկեք աղոթենք, որ Աստված տա մեզ մարդկանց, որոնք կանգնել են հավիտենության եզրին և տեսել են դրա սաստիկ իրողությունները՝ մարդկանց, որոնք չեն վախենում ազդարարել այս աշխարհին. «Պատրաստվի՛ր դիմավորելու քո Աստծուն» (Ամովս 4.12):

ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ

Մատթեոս 7.21-ը սկսվում է Քրիստոսի կողմից տրված խստագույն զգուշացումներից մեկով. «Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայություն»: Մենք պետք է հիշենք, որ Քրիստոսի զգուշացումն ուղղված չէ ինքնահռչակ աթեիստների կամ անհավատների: Ո՛չ էլ Նա դիմում է այլ կրոնի ներկայացուցիչների կամ մարդկանց, որոնք բացահայտ թշնամանքով են վերաբերվում Իր անվանը: Փոխարենը, Նրա խոսքերն ուղղված են նրանց, ովքեր պնդում են, որ ճանաչում և Տեր են անվանում Իրեն, այն մարդկանց, որոնք կրում են «քրիստոնյա» անունը և համարվում են Իր աշակերտների թվում, որոնց հավատքի դավանանքը համապատասխանում է Սուրբ գրքին:

Քրիստոսի խոսքերը վերաբերում են մեզ, և դրանց նպատակն է նիզակի պես խոցել մեր սրտերը՝ մեր վտանգավոր քնից զարթնեցնելու համար: Դրանք պահանջում են, որ մենք վիճարկենք մեր պատկերացումները և մեծագույն զգուշությամբ ստուգենք ինքներս մեզ: Մենք ճանաչո՞ւմ ենք Նրան: Մենք ճանաչվա՞ծ ենք Նրանից: Մեր անձերն ապահո՞վ են: Մեր հավիտենական ճակատագրին վտանգ է սպառնում, և ինքնախաբեության հավանականությունը շատ մեծ է: Որովհետև շատերը կգան Նրա առջև այդ Մեծ օրը՝ «Տե՛ր, Տե՛ր» ողջույնով, բայց Նա կմերժի նրանց գովասանական խոսքերը և կհայտարարի նրանց. «Հեռացե՛ք Ինձնից, Ես երբեք չեմ ճանաչել ձեզ»: Եթե երբևէ կարծել ենք, որ Քրիստոսի նախորդ զգուշացումները քչերի և շատերի մասին չափազանցված են, մենք այլևս չպետք է այդպես մտածենք:

Մեզ զգուշացնում է մեծագույնը բոլոր իշխաններից: Մենք ականջ կդնե՞նք Նրա զգուշացմանը: Մենք գտնվում ենք մեծ բազմության միջև, որը Տեր է անվանում Հիսուսին, բայց հնարավո՞ր ենք համարում, որ Քրիստոսի խոսքերը կարող են մե՛զ ուղղված լինել: Նա զգուշացրել է, որ Իր բանակում բոլորը չէ, որ հավատարիմ են: Մենք Աքարի պե՞ս կլինենք,

որը մտածում էր, որ կարող է ամբոխի մեջ թաքնվել[650]: Մենք կմտածե՞նք, որ կարող ենք աննկատ հարսանեկան խնջույքը մտնել՝ առանց պատշաճ հագուստի[651]: Հնարավո՞ր ենք համարում, որ միգուցե մենք խաբված ենք և դեռ դարձի չենք եկել, թե՞ խստացնում ենք մեր սրտերը՝ Հուդայի պես, որը հայտարարեց. «Իհարկե, ե՛ս չեմ այդ մարդը»[652]:

Այս հատվածում Հիսուսը նկատի չունի ծածուկ աշակերտներին, որոնք ամաչում են հրապարակավ դավանել Նրան: Փոխարենը, Նրա զգուշացումն ուղղված է այն մարդկանց, ովքեր, թվում է, համարձակ և վճռականորեն դավանում են Նրա իշխանությունը: Այս մասին վկայում է նրանց «Տե՛ր, Տե՛ր» հռչակումը: Եբրայերեն գրականության մեջ կրկնությունն օգտագործվում է և՛ պարզեցման, և՛ շեշտադրման նպատակով: Երբ Եսային տեսիլքով տեսավ Աստծո գահը, սերովբեները կանչում էին Յահվեհին. «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ»[653]: Այս կրկնության նպատակն էր՝ հնարավորինս շեշտադրել Աստծո սրբությունը: Նմանապես, կրկնությունն այս հատվածում ցույց է տալիս, որ նույնիսկ այն մարդկանցից, որոնք զգացմունքորեն Տեր են դավանում Հիսուսին, շատերը մերժվելու են և դատապարտվելու են դատաստանի օրը: Սա զարհուրելի ճշմարտություն է, որը թույլ է տալիս եզրակացնել, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքը պարզապես դավանելը ոչինչ չարժե, եթե այն չի ուղեկցվում էական պտղով, որն ապացուցում է դրա իսկությունը:

ԴԱՐՁԻ ԱՊԱՑՈՒՅՑԸ

Եթե Հիսուս Քրիստոսի իշխանության նույնիսկ ամենից արտահայտիչ և հաճախակի դավանությունը ճշմարիտ դարձի ապացույց չէ, ուրեմն ո՞րն է այդ ապացույցը: Մենք արդեն մանրակրկիտորեն դիտարկել ենք այս հարցի պատասխանը Սուրբ գրքի երկու հատվածներում: Մատթեոս 7.16-ում և 20-ում Հիսուսն ասում է, որ ճշմարտապես դարձի եկածներին մենք կճանաչենք իրենց պտղով: Նա կրկին հայտարարում է Մատթեոս 7.21-ում, որ ոչ թե ամեն Իրեն Տեր անվանողը կմտնի Իր թագավորությունը, այլ միայն «նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է»:

Մենք վկայում ենք, որ ճշմարտապես դավանում ենք Հիսուս Քրիստոսի իշխանությունը և ճշմարտապես դարձի ենք եկել՝ Աստծո կամքին հնազանդվելով: Այլ կերպ ասած, Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր

650 Հեսու 7.18-20
651 Մատթեոս 22.11-13
652 Մատթեոս 26.25 (հեղինակի թարգմանությունը)
653 Եսայի 6.3

հավատքը դավանելը և Երկնքին հավակնելը կասկածելի է, եթե դա չի ուղեկցվում պտղով՝ քրիստոսանման բնավորությամբ և արդար գործերով: Նույնիսկ ամենից գործուն քրիստոնեական ծառայությունը՝ դրան ուղեկցող ակնհայտ հաջողությամբ, դարձի ապացույց չէ[654]:

Այս ճշմարտությունը չպետք է զարմացնի մեզ, քանի որ այն Մատթեոսի 7-րդ գլխի ընդհանուր թեման է: Նեղ դռնով մտնելու ապացույցն այն է, որ այժմ մարդը նեղ ճանապարհով է գնում, որը նշագծված է Քրիստոսի պատվիրաններով[655]: Դարձի գալու և բարի ծառ դառնալու վկայությունն այն է, որ այժմ մարդը բարի պտուղ է բերում, որովհետև ամեն ծառ իր պտղով է ճանաչվում[656]: Հիսուս Քրիստոսի իշխանությունն անկեղծորեն դավանելը վկայվում է այն բանով, որ մարդը կատարում է Հոր և Որդու կամքը[657]: Եվ վերջինը՝ կյանքը ժայռի վրա կառուցելը և գալիք դատաստանից ապահով լինելը ապացուցվում է այն բանով, որ մարդը լսում է Քրիստոսի խոսքերը և կատարում[658]:

Եթե, դուրս գալով Մատթեոսի 7-րդ գլխի սահմաններից, մենք փնտրենք այլ սուրբգրային հատվածներ՝ նույն ճշմարտությունը հաստատելու համար, կպարզենք, որ դրանք բազմաթիվ են: Պողոս առաքյալը հորդորում է մանրակրկիտորեն քննել մեր անձերը՝ որոշելու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ ենք[659]: Նա նույնպես զգուշացնում է այն մարդկանց մասին, որոնք կդավանեն, որ ճանաչում են Աստծուն, բայց իրենց գործերով կուրանան Նրան[660]: Պետրոս առաքյալը հորդորում է մեզ ջանք գործադրել՝ հավաստիանալու համար, որ Աստված կանչել և ընտրել է մեզ[661]: Այս հորդորի հետ մեկտեղ, նա նույնպես մի շարք առաքինություններ է ներկայացնում (հավատքը, բարոյական գերազանցությունը, գիտելիքը, զսպվածությունը, համբերությունը, աստվածապաշտությունը, եղբայրասիրությունը և սերը[662]), որոնք կավելանան մեր կյանքում, եթե ճշմարտապես դարձի եկած ենք և Աստծո ժողովրդի թվում ենք համարվում: Այն չափով, որով այս առաքինությունները կան և ավելանում են մեր կյանքում, մենք կարող ենք հավաստիացում ունենալ, որ ճշմարտապես վերստին ծնված ենք և հաղորդակից ենք աստվածային բնությանը[663]: Այնուամենայնիվ, մենք պետք է մտահոգվենք մեր հոգևոր վիճակի մասին այն չափով, որով այս հատկանիշները բացակայում

654 Մատթեոս 7.22
655 Մատթեոս 7.13,14
656 Մատթեոս 7.16-20, Ղուկաս 6.44
657 Մատթեոս 7.21, Ղուկաս 6.44
658 Մատթեոս 7.24-27
659 Բ Կորնթացիների 13.5
660 Տիտոս 1.16
661 Բ Պետրոս 1.10
662 Բ Պետրոս 1.5-7
663 Բ Պետրոս 1.4,8

են մեր կյանքից: Ինչպես Պետրոսը զգուշացնում է. «Բայց նա, որ այս բաներն իր մոտ չունի... կարճատես [է]» (Բ Պետրոս 1.9): Հովհաննես առաքյալը գրել է իր ամբողջ Առաջին թուղթը՝ հիմնվելով այն նախադրյալի վրա, որ գործերը ճշմարիտ փրկարար հավատքի և դարձի ապացույցն են: Նրա թուղթը ներկայացնում է մի շարք հատկանիշներ, որոնք տարբեր չափերով դրսևորվելու են Աստծո յուրաքանչյուր ճշմարիտ զավակի կյանքում: Մենք կարող ենք հավաստիացած լինել, որ հավիտենական կյանք ունենք՝ այն չափով, որով այս հատկանիշներն ավելանում են և տեսանելի են մեր կյանքում[664]: Սակայն մենք պետք է մտահոգվենք, թե արդյո՞ք ճշմարտապես քրիստոնյա ենք՝ այն չափով, որ չափով դրանք բացակայում են մեր կյանքից: Վերջինը, Հակոբոսը հաստատում է, որ գործերը ճշմարիտ փրկարար հավատքի արդյունքը և ապացույցն են[665]: Թեև նա հաճախ սխալ է հասկացվել և մեկնաբանվել, նա չի ժխտում միայն հավատքով արդարանալու վարդապետությունը, որը ներկայացնում է Պողոս առաքյալը: Երկուսն էլ գրում են նույն մետաղադրամի երկու կողմի մասին: Պողոսը խոսում է արդարացման պատճառի մասին, իսկ Հակոբոսը՝ դրա արդյունքի: Մենք փրկվում ենք միայն հավատքով: Այնուամենայնիվ, ովքեր հավատում են, վերածնվել են Սուրբ Հոգու կողմից և բերվել են Աստծո նախախնամական հոգատարության ներքո: Այս պատճառով, մենք կարող ենք համոզված լինել, որ յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ պտուղ կբերի և կարտահայտի իր հավատքն իր գործերով: Հակոբոսը զգուշացնում է, որ «հավատքն առանց գործերի մեռած է» (2.26), և մարտահրավեր է նետում նրանց, ովքեր այլ կարծիք ունեն՝ խայթիչ դիտողությամբ. «Ցո՛ւյց տուր ինձ քո հավատքը՝ առանց քո գործերի, իսկ ես ցույց կտամ քեզ իմ հավատքն իմ գործերից» (NKJV): Հակոբոսի համար այն մարդիկ, որոնք դավանում են, որ հավատք ունեն, սակայն պտուղ չեն բերում, դևերից էլ վատն են: Դևերը գոնե այն աստիճան ողջամտություն ունեն, որ սարսափում են[666]:

Ինչպես նշեցի, Քրիստոսի և առաքյալների այս ուսմունքները չեն ժխտում միայն հավատքով արդարանալու հիմքային քրիստոնեական վարդապետությունը: Դրանք պարզապես հաստատում են այն համընդհանուր ճշմարտությունը, որ ցանկացած երևույթի ներքին իրողությունն արտահայտվում է համապատասխան բնավորությամբ և գործերով: Նույնպես կարևոր է հասկանալ, որ ո՛չ Քրիստոսը, ո՛չ առաքյալները չեն սովորեցնում, որ միայն ամենից հասուն հավատացյալները, որոնք գրեթե կատարյալ պտուղ ունեն, կարող են հավաստիացում ունենալ

664 Ա Հովհաննես 5.13
665 Մատթեոս 13.55, Գործք 12.17, 15.13, 21.18, Ա Կորնթացիների 15.7, Գաղատացիների 1.19, 2.9
666 Հակոբոս 2.19

իրենց փրկության մեջ: Լավագույն քրիստոնյան մեր միջև խստորեն ազդվում է իր անթիվ թերացումների և ձախողումների պատճառով: Բոլորս էլ լիովին և ամբողջապես կախված ենք Աստծո շնորհքից և Իր ժողովրդի հանդեպ Նրա մեծ ողորմածությունից: Այնուամենայնիվ, ճշմարիտ հավատացյալի առաջընթացը հավատքի մեջ այն պսակն է, որը վկայում է, որ նա իրապես վերածնվել է Սուրբ Հոգուց և Աստծո զավակ է:

Այս ճշմարտությունների լույսի ներքո ցավալիորեն ակնհայտ է, որ ժամանակակից ավետարանական քարոզման մեծ մասը մակերեսային է՝ լավագույն դեպքում, և արհամարհելի է՝ վատագույնում: Սուրբ գրքի մակերեսային դիտարկման պատճառով այն փրկություն է խոստանում ցանկացած մարդու, ով իր բերանով Հիսուսին Տեր է դավանում և իր սրտում հավատում է, որ Աստված հարություն է տվել Նրան մեռելներից[667]: Այնուամենայնիվ, բազմաթիվ քարոզիչներ պարզորեն չեն բացատրում այս ճշմարտությունը և չեն զգուշացնում, որ դավանողներից շատերը, եթե ոչ՝ մեծ մասը, անում են դա՝ առանց ապաշխարության և հավատքի: Ավելի վատ է այն, որ քարոզիչները չեն սովորեցնում Քրիստոսին դավանող մարդկանց, թե ինչպես որոշեն՝ իրենց դավանությունը ճի՞շտ է, թե՞ ոչ: Փոխարենը, նրանք խրախուսում են նրանց հավաստիանալ իրենց փրկության մեջ՝ անձամբ գնահատելով այն անկեղծությունը, որով իրենք կանչեցին Քրիստոսին և դավանեցին Նրան՝ որպես Տիրոջ: Շատերն անտեսել են Սուրբ գրքի այն պարզ ուսմունքը, որը կոչ է անում մարդկանց հաստատ դարձնել իրենց կոչումը և ընտրությունը, ստուգել իրենց Սուրբ գրքի լույսի ներքո[668] և որոշել իրենց դարձի վավերականությունը՝ իրենց պտղի որակով:

Մենք պետք է հասկանանք, որ Ավետարանի խոստումները պետք է քարոզվեն Ավետարանի զգուշացումների հետ: Այս երկուսից ցանկացածն անտեսելը հանգեցնում է «ուրիշ ավետարանի», որն իրականում ընդհանրապես Ավետարան չէ (Գաղատ. 1.6,7): Քրիստոնեության պատմության ընթացքում ամենից աստվածապաշտ ծառայողները հավասարակշռված և հետևողական զգուշացումներ են ուղղել նորադարձներին և եկեղեցու անդամներին, բայց մեր օրերում նման զգուշացումները հազվագյուտ են, և շատ դեպքերում ընդհանրապես բացակայում են: Մեր մեծագույն կարիքի ժամանակ, երբ վերահաս դատաստանի սուրը կախված է Քրիստոսին դավանող բազմությունների գլխավերևում, քիչ դետեր են հոժարաբար փող հնչեցնում: Նրանք չեն սթափեցնում անօրեններին, և նրանց ամբիոններին այն մարդկանց արյունն է, որոնց նրանք հրաժարվում են զգուշացնել[669]:

667 Հռոմեացիների 10.9,10
668 Բ Կորնթացիների 13.5, Բ Պետրոս 1.10, Ա Հովհաննես 5.13
669 Եզեկիել 33.6

Պարզ, հստակ զգուշացումների կարիքն ավելի ակնհայտ է դառնում այն մակերեսային, հարմարավետ և մարդակենտրոն ավետարանի պատճառով, որը տարածված է Ավետարանական եկեղեցիների մեծամասնության մեջ: Մենք հեղեղված ենք այնպիսի ավետարանով, որը պահանջներ չի ներկայացնում, և որի համար պետք չէ գին վճարել, որը ոչ միայն չի ընդդիմանում մարմնին, այլև հաճախ ծառայում է դրան: Ծառայողները, ովքեր պետք է, որ ավելի լավ հասկանային իրենց անելիքը, քարոզում են Աստծուն գահընկեց անող և մարդուն մեծարող ուղերձ, որը կարելի է ընդունել՝ մեկ աղոթք կրկնելով: Եվ ընդամենը մի քանի աննշան շտկումներից հետո «նորադարձին» թույլատրվում է շարունակել քայլել նույն լայն ճանապարհով, ինչպես նախկինում, և ձեռք ձեռքի տված գնալ նույն հարմարավետ հավատքը գտած բազմաթիվ մարդկանց հետ: Այս հարմարավետ հավատքը հաստատվում և պաշտպանվում է նրանց կրոնական առաջնորդների կողմից, որոնք այն աստիճան են անզգայացնում նրանց խիղճը, որ այն գրեթե անթափանցելի է դառնում ճշմարտության համար:

Ավետարանական մշակույթի զգալի մասը գտնվում է իր աշխարհիկ կրկնորդի ազդեցության ներքո, որը մեծարում է հանդուրժողականությունը, լայնախոհությունը, ներառականությունը և զիջողամտությունը՝ համարելով դրանք ամենից բարձր և գերազանց առաքինությունները: Այժմ Ավետարանական եկեղեցու անդամները և քարոզիչները պարծենում են այն բանով, որ ընդունում են միմյանց վարդապետական և բարոյական շեղումները Սուրբ գրքի ճշմարտությունից՝ առանց մի փոքր մտածելու, որ դա կարող է վկայել իրենց չվերածնված վիճակի մասին: Արդյո՞ք մեր սերն է, որ դրդում է մեզ լուռ մնալ այսքան վարդապետական և բարոյական հակասությունների դեպքում, թե՞ Աստվածաշունչը չիմանալը: Արդյո՞ք մեր սերն է, որ թույլ չի տալիս մեզ զգուշացնել այն մարդկանց, որոնք դավանում են Հիսուսին, բայց իրենց գործերով ուրանում են Նրան, թե՞ ինքնապահպանումը և մարդկանց հավանությունը ստանալու ցանկությունը: Քրիստոսի հանդեպ հավատքը դավանելը փրկության եզրափակիչ վկայություն չէ: Այդ դեպքում, ո՞րն է փրկության նշանը: Ի՞նչն է վկայում, որ մարդը ճշմարտապես ճանաչել է Նրան: Հիսուսը հստակ ասում է.

> «Իրենց պտուղների՛ց ճանաչեք նրանց» (Մատթ. 7.16,20):

> «Ոչ թե ամեն ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայություն, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթ. 7.21):

«Արդ, ով որ Իմ այս խոսքերը լսում է և կատարում, կնմանեցնեմ մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա» (Մատթ. 7.24):

ԿԵՂԾ ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Մատթեոս 7.21-ում Քրիստոսը գահի վրա է, և Նրա առջև մարդկանց բազմություն է կանգնած: Այնուամենայնիվ, դա ուրախ տեսարան չէ: Իրականում, դա ամենից սարսափեցնող տեսարաններից է Աստվածաշնչում: Երկրի վրա այս մեծ բազմությունը Տեր էր անվանում Նրան, և նրանցից շատերը նույնիսկ ծառայում էին Նրա անունով, սակայն այժմ նրանց անպտղությունը և անհնազանդությունը մատնում է նրանց: Այն ամենը, ինչ ծածուկ էր մինչև Քրիստոսի գահի առջև կանգնելը, այժմ հայտնի է դարձել[670]: Նրանց դավանությունը դատարկ էր, նրանց հավատքը դևերի հավատք էր, և նրանց արդար գործերը նման էին կեղտոտ հանդերձների՝ ներծծված արյամբ և իրենց սրտերի ապականությամբ[671]: Նրանց ջերմ ընդունելության և թագավորությունը առատորեն մտնելու հույսը հօդս ցնդեց[672]: Քրիստոսը նայում է նրանց արդար խորշանքով և ազդարարում է. «Երբե՛ք ձեզ չեմ ճանաչել. Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23):

Այս զարհուրելի ազդարարումից մենք բացահայտում ենք երկու կարևոր փաստ այն մարդկանց մասին, որոնք Տեր էին դավանում Քրիստոսին, սակայն մերժվեցին և դատապարտվեցին դատաստանի օրը: Առաջինն այն է, որ Քրիստոսը երբեք չէր ճանաչել նրանց: «Ճանաչել» բառը թարգմանված է հունարեն *«գինո՛սկո»* բառից, որը ես բացատրեցի 14-րդ գլխում: Այս համատեքստում այս բառը մտերիմ միության և շփման գաղափար է փոխանցում: Թեև այդ կեղծ հավատացյալները պնդում էին, որ Հիսուսն իրենց Տերն է, Քրիստոսն ազդարարում է, որ երբեք չի *ճանաչել* նրանց: Այս ազդարարումից հնարավոր է բազմաթիվ հետևություններ անել: Առաջինը՝ այն կարող է վերաբերել Քրիստոսի կանխագիտությանը և Իր ժողովրդի ընտրությանը: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստծո յուրաքանչյուր զավակի անունը գրված էր Գառան Կյանքի գրքում աշխարհի ստեղծագործությունից առաջ[673]: Այնուամենայնիվ, այն մարդկանց անունները, որոնք այդ պահին կանգնած էին Քրիստոսի առջև, չգտնվեցին այդ գրքում[674]: Նրանք ընտրված չէին «Հոր Աստծո կանխագիտության պես, Հոգու սրբությամբ, հնազանդության և

670 Մատթեոս 10.26, Մարկոս 4.22, Ղուկաս 12.2
671 Ղուկաս 6.24, Տիտոս 1.16, Հակոբոս 2.19
672 Բ Պետրոս 1.11
673 Հայտնություն 13.8
674 Հայտնություն 20.15

Հիսուս Քրիստոսի արյան սրսկելու համար» (Ա Պետրոս 1.1,2):

Երկրորդը՝ այն կարող է նշանակել, որ նրանք չէին գտնվում Քրիստոսի նախախնամական հոգատարության ներքո: Աստվածաշունչը սովորեցնում է, որ «Տերը *ճանաչում է* արդարների ճանապարհը, բայց ամբարիշտների ճանապարհը կկորչի» (Սաղմ. 1.6, շեղագիրն ավելացված է): Քրիստոսը սովորեցրեց, որ Իր ոչխարներն Իր ձայնը լսում են, և Նա *ճանաչում է* նրանց, և նրանք հետևում են Իրեն[675]: Այնուամենայնիվ, այդ մարդիկ Իր ոչխարները չէին, և Նա նրանց Հովիվը չէր: Նա չէր ճանաչում նրանց, և նրանք էլ չէին լսում Իր ձայնը և հնազանդորեն չէին հետևում Իրեն, երբ կանչում էր:

Երրորդը և ամենակարևորը՝ այն կարող է նշանակել, որ Քրիստոսի և այդ մարդկանց միջև չկար մտերիմ հաղորդակցություն: Քրիստոսը կարծես թե ասեր նրանց. «Դուք չէիք փնտրում Ինձ ձեր երկրային պանդխտության ընթացքում: Իրականում, Ես հազվադեպ էի հայտնվում ձեր մտքերում: Մենք միասին չէինք քայլում և չէինք վայելում միմյանց շփումը: Դուք չէիք փնտրում Իմ խորհուրդը, ականջ չէիք դնում Իմ ուսուցմանը և չէիք հնազանդվում Իմ պատվիրաններին: Ես չէի ճանաչում ձեզ այն ժամանակ և չեմ ճանաչում ձեզ հիմա»:

Ավետարանական հավատացյալները սովորաբար ասում են, որ ամենակարևոր բանը մարդու կյանքում Հիսուսին ճանաչելն է: Թեև այս պնդման մեջ մեծ ճշմարտություն կա, միգուցե ավելի ճիշտ է փոխել հերթականությունը և ասել, որ մեր պնդումը Հիսուսին ճանաչելու մասին նույնիսկ իր կարևորությամբ մոտ չէ այն փաստին, թե արդյո՞ք Հիսուսն Ինքը ճանաչում է մեզ: Պատկերացրեք մի մարդու, ով մոտենում է Սպիտակ տան՝ ԱՄՆ-ի նախագահի նստավայրի դարպասներին և պահանջում է ներս թողնել իրեն: Մենք կարող ենք վստահ լինել, որ նրան անհապաղ բերման կենթարկեն և մանրակրկիտորեն կհարցաքննեն: Մենք կարող ենք համոզված լինել, որ նրան թույլ չեն տա մտնել, միայն որովհետև նա հայտարարում է, որ ճանաչում է այդտեղ բնակվող նախագահին: Այնուամենայնիվ, եթե նախագահը հայտարարի, որ ճանաչում է այդ մարդուն, նրան անհապաղ և առանց որևէ հարցի թույլ կտան մտնել: Մենք արդեն իմացանք, որ Քրիստոսին հավատալու մասին մեր դավանությունն անօգուտ է՝ առանց գործերից բաղկացած պտղի, որն ապացուցում է դա: Ի հակադրություն, Քրիստոսի խոստովանությունը մեր մասին անսահման արժեք ունի, քանի որ այն դուռ է բացում մեր առջև, որը ոչ ոք չի կարող փակել[676]:

Երկրորդ փաստն այն մարդկանց մասին, ովքեր Տեր էին դավանում

675 Հովհաննես 10.26,27
676 Հայտնություն 3.8

Քրիստոսին, սակայն դատապարտվեցին, այն է, որ նրանք անօրեն էին: Մատթեոս 7.23-ում Հիսուսը հրամայում է անօրինություն գործողներին հեռանալ Իրենից: «Անօրինություն» բառը թարգմանված է հունարեն *«անոմի՛ա»* բառից, որը նշանակում է առանց օրենքի լինելու վիճակ: Այն վերաբերում է այնպիսի մարդու, որը խախտում է Աստծո կամքը՝ անիրազեկության, անհոգության կամ գիտակցված ապստամբության պատճառով: Այս բառի իմաստն անչափ կարևոր է, քանի որ այն լույս է սփռում կեղծ դարձի բնույթի վրա և հայտնում է Հիսուսի խստության պատճառը: Ասես թե Նա արհամարհանքով նայում է այդ կեղծ հավատացյալներին և ազդարարում է. «Դե՛ն գնացեք Ինձնից, դո՛ւք, որ պնդում էիք, թե Իմ աշակերտներն եք, և Տեր էիք դավանում Ինձ, սակայն այնպես էիք ապրում, ասես Ես երբեք չէի տվել ձեզ պատվիրաններ, որոնց պետք է հնազանդվել»:

Մեր դիտարկած պնդումներից ոչ մեկն այդքան դիպուկ չի բնութագրում «ավետարանական» կոչվող բազմաթիվ մարդկանց, որքան սա: Շատերն Ավետարանական շարժման մեջ աստիճանաբար կերպարանվել են այս աշխարհի մշակույթին և վերստեղծել են հարմարավետ կրոն՝ առանց պահանջների, օրենքների և չափանիշների, որոնք կարող էին զսպել մարմինը: Նման այն անաստված մարդկանց, որոնց մասին գրում է Հուդան, որոշ ավետարանականներ «մեր Աստծո շնորհքն անառակության դարձրին և ուրանում են այն միակ Իշխանին՝ Աստծուն, և մեր Տեր Հիսուս Քրիստոսին» (1.4): Ոչ ոք չի կարող հերքել, որ բազմաթիվ մարդիկ Ավետարանական շարժման մեջ հավակնում են Քրիստոսին, սակայն, ըստ էության, չգիտեն Նրա կամքը և չեն կատարում այն իրենց կյանքում: Թվում է՝ Ավետարանական շարժման մտքում Քրիստոսին Տեր դավանելն անջատ է փաստացի կերպով Նրա հայտնված կամքին հնազանդվելուց: Կարո՞ղ է մարդը իսկապես հավատարիմ ենթակա լինել ցանկացած թագավորի տիրույթում, սակայն ոչ միայն անտեսել Նրա հրամանները, այլև դրանց հակառակ ապրել: Թվում է՝ բազմաթիվ ժամանակակից ավետարանականներ այդպես են կարծում:

Թեև ճշմարիտ է, որ մենք ազատվել ենք օրենքից՝ Քրիստոսին հետևելու և Հոգով առաջնորդվելու համար[677], մենք պետք է հասկանանք, որ թե՛ Քրիստոսը, թե՛ Հոգին հակառակ չեն օրենքին և չեն ընդդիմանում դրան: Իրականում, մենք որոշում ենք ճշմարիտ կերպարանումը Քրիստոսին և վավերացնում ենք Հոգու առաջնորդությունը մեր կյանքում հենց Աստծո Խոսքի գրվածով: Եթե մենք սիրում ենք Քրիստոսին, կպահենք Նրա պատվիրանները[678], և եթե հետևում ենք Հոգուն, կապրենք բարձրագույն

677 Հռոմեացիների 7.1-6
678 Հովհաննես 14.15

առաքինություններով, որոնց «դեմ օրենք չկա» (Գաղատ. 5.22,23):

Աստծո շնորհքը Քրիստոսում դուրս չի գցում մեզ այս աշխարհի, որ ապրենք մեր կյանքն առանց խրատի կամ շարունակենք այս աշխարհի սովորույթներով վարվել[679]: Փոխարենը, մենք կանչված ենք «այլևս չգնալ՝ ինչպես ուրիշ հեթանոսներն են գնում» (Եփես. 4.17,18), այլ՝ կերպարանվել Քրիստոսի պատկերով ամեն բանում և գերել ամեն միտք՝ հնազանդեցնելով Նրան[680]: Այս նպատակին հասնելու միջոցներից մեկը Սուրբ գրքի պատվիրանները, հրահանգները և իմաստությունը ջանասիրաբար ուսումնասիրելն ու պատշաճ կերպով կիրառելն է[681]: Մովսեսը գրեց, որ Աստծո պատվիրանները դատարկ խոսքեր չեն, այլ՝ կյանք են հավատացյալի և եկեղեցու համար[682]: Դավիթը երգում էր, որ դրանք ճրագ էին իր ոտքերին, լույս՝ իր ճանապարհին, և այն միջոցը, որով երիտասարդը կարող է անարատ պահել իր ճանապարհը[683]: Հիսուսը հաստատեց պատվիրանների կենտրոնական դիրքն Իր ժողովրդի կյանքում՝ հայտարարելով. «Ոչ միայն հացով կապրի մարդը, այլև ամեն Խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»[684]: Պողոս առաքյալը սովորեցնում էր Տիմոթեոսին, որ Սուրբ գիրքը ոչ միայն փրկությանը առաջնորդող իմաստություն է տալիս, այլև օգտակար է վարդապետության, հանդիմանության, ուղղելու և դեպի արդարությունը խրատելու համար[685]: Հովհաննես առաքյալը սովորեցնում է, որ դարձի մեծագույն ապացույցներից մեկն այն է, որ մենք պահում ենք Աստծո պատվիրանները[686]: Նա եզրափակում է. «Որովհետև սա է Աստծո սերը, որ Նրա պատվիրանները պահենք, և Նրա պատվիրանները ծանր չեն» (Ա Հովհ. 5.3):

Հաշվի առնելով Աստվածաշնչի հեղինակների համաձայնությունը Աստծո Խոսքի կենտրոնական դիրքի և դրա պատվիրանների կարևորության մասին, մենք պետք է հարցնենք մեզ, թե ինչու են այդքան ավետարանականներ հառաչում ընդամենը պատվիրանների հիշատակումից և պայքարում դրանց դեմ, ասես դրանք սահմանափակում են մեզ և խոչընդոտում ուրախությանը մեր կյանքում: Ի՞նչն է պատճառը, որ ցանկացած քարոզում, որը նույնիսկ ենթադրում է որևէ բացարձակ չափանիշ կամ տարանջատում է ճիշտը սխալից, համարվում է օրինապաշտական, խիստ, ինքնաարդարացի և սիրուց զուրկ: Պատասխանը նույնքան պարզ է, որքան և դժվար է ընդունել: Պատճառն այն է, որ չա-

679 Եփեսացիների 2.2
680 Հռոմեացիների 8.29, Բ Կորնթացիների 10.5
681 Սաղմոս 19.10,11
682 Երկրորդ Օրինաց 32.47
683 Սաղմոս 119.9,105
684 Մատթեոս 4.4
685 Բ Տիմոթեոս 3.15-17
686 Ա Հովհաննես 3.4

փազանց շատ մարդիկ Ավետարանական շարժման մեջ դարձի եկած չեն: Թեև նրանք հագել են ժամանակակից քրիստոնեության հանդերձները, նրանց չվերածնված սրտերը շարունակում են թշնամացած մնալ Աստծո և Նրա կամքի հանդեպ[687]: Աստծո Խոսքը բեռ է նրանց համար, քանի որ այն պահանջում է, որ իրենք գործեն այն արդարությունը, որն ատում են, և այն ճնշող է, քանի որ արգելում է նրանց գործել այն անօրինությունը, որը նրանք սիրում են[688]:

Բազմաթիվ ավետարանականների անտարբերությունը, անհոգությունը և նույնիսկ հակակրանքը Աստծո Խոսքի բարոյական և հոգևոր բացարձակ ճշմարտությունների հանդեպ ապացույց է, որ նրանք ունեն աստվածապաշտության կերպարանք, և ուրիշ ոչինչ[689]: Նրանք դարձել են ճշմարիտ քրիստոնեության աղճատված ծաղրանկարի մասնիկը, որը գտնվում է կործանման տանող լայն ճանապարհի վրա: Նրանք մի աղոթք են աղոթել և հրավեր են ստացել՝ միանալու ժպտացող դեմքերով լի գրավիչ համայնքի: Ամեն շաբաթ նրանք ուշադրությամբ ունկնդրում են հոգևոր սկզբունքներ, որոնք երաշխավորում են ավելի լավ կյանք իրենց համար: Նրանք մասնակցում են ընտանեկան միջոցառումների, որոնք նպատակաուղղված են թվում և զվարճացնում են իրենց: Այնուամենայնիվ, նրանք խաբված են: Իրենց սրտերում և գործերում նրանք անօրեն են: Նրանք ապրում են՝ չիմանալով Աստծո պատվիրանները, և իրենց աչքին հաճելի եղածն են անում: Նրանք հայտնաբերել են, թե ինչպես հարել այս աշխարհին՝ այն չափով, որ գոհացնեն իրենց մարմնին, և ընդունել քրիստոնեությունը՝ այն չափով, որ մեղմացնեն իրենց խիղճը: Այնուամենայնիվ, վերջին օրը նրանք կլսեն. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23):

ՄԵԾ ՄԵՐԺՈՒՄԸ

Քրիստոսը զգուշացնում է մեզ, որ Մեծ դատաստանի օրը Նա կազդարարի շատերին ամենից զարհուրեցնող դատավճիռը, որը մարդկանց ականջները երբևէ լսել են. Նա կհրամայի անօրինություն գործողներին հեռանալ Իրենից: Ամբողջ այդ ազդարարումը գրեթե բառ առ բառ վերցված է Դավթի խոսքերից՝ Սաղմոս 6.7-10.

> «Տրտմությունից մաշվեց իմ աչքը,
> Հնացավ ինձ նեղացնողների պատճառով:
> Հեռացե՛ք Ինձնից, ո՛վ բոլոր անօրինություն գործողներ,
> Որովհետև Տերն իմ լացի ձայնը լսել է:

687 Հռոմեացիների 1.30, 8.7
688 Հովիվ Չարլզ Լեյտեր, զրույց հեղինակի հետ:
689 Ա Տիմոթեոս 3.5

Տերը լսեց իմ աղաչանքը.
Տերն ընդունում է իմ աղոթքը:
Թող ամաչեն ու շատ զարհուրեն իմ բոլոր թշնամիները.
Հետ դառնան և ամաչեն շուտով»:

Այս հատվածում կա չորս ճշմարտություն, որոնք վերաբերում են վերջին դատաստանի մեր ուսումնասիրությանը: Առաջինը՝ Դավիթը թշնամի է համարում է այն մարդկանց, որոնց վտարում է: Նմանապես, ում Քրիստոսը վտարելու է դատաստանի օրը, Իր թշնամիներն են լինելու: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ իրենց բնությամբ «աստվածատողներ» են, և նրանց միտքը թշնամաբար է տրամադրված Նրա հանդեպ[690]: Այնուամենայնիվ, մենք նույնպես պետք է հասկանանք, որ այս թշնամությունն Աստծո և մեղավորի միջև միակողմանի չէ, այլ փոխադարձ է: Իր սրբությամբ և արդարությամբ, Աստված նույնպես հակառակ է մեղավորին և պատերազմ է հայտարարել նրա դեմ: «Որովհետև, թե որ դեռ թշնամի էինք, Աստծո հետ հաշտվեցինք Նրա Որդու մահով, որքա՞ն ավելի, որ հաշտված ենք, կապրենք Նրա կյանքով» (Հռոմ. 5.10)[691]: Մեղավորի միակ հույսն է իր զենքը ցած դնել և սպիտակ դրոշ բարձրացնել՝ անձնատուր լինելով, քանի դեռ հավիտյան ուշ չէ: Այլապես, հենց որ նա հասնի Քրիստոսի դատաստանի գահին, խաղաղության ձիթենու ճյուղը ետ քաշված կլինի, և հաշտության ու խաղաղության ժամանակն անցած կլինի: Եբրայեցիների թղթի հեղինակը պատմում է մեզ, որ այդ պահին բոլորին կմնա «դատաստանի ահավոր սպասելը և կրակի զայրույթը, որ հակառակողներին կլափի» (Եբր. 10.27): Թեև նրանք Տեր էին դավանում Քրիստոսին և աստվածապաշտության որոշակի ձևի էին հարում[692], Նա տեսնում էր, թե ինչ կար նրանց բարեպաշտության բարակ քողի ետևում: Նրանց դատարկ դավանությամբ և Ավետարանի հանդեպ անտարբեր վերաբերմունքով, նրանք ոտնակոխ արին Աստծո Որդուն, պիղծ համարեցին ուխտի արյունը և նախատեցին շնորհքի Հոգուն[693]: Այս պատճառով, նրանց ժողովելու են՝ ինչպես խրձերը կալատեղում, և ինչպես չոր ճյուղեր, որոնք պետք է այրել[694]: Դա Տիրոջ վրեժխնդրութ-

690 Հռոմեացիների 1.30, 8.7, Կողոսացիների 1.21
691 Նույնպես կարդացե՛ք Նաում 1.2, Եսայի 63.10: Այս ճշմարտության ավելի մանրամասն բացատրության համար կարդացե՛ք *«Հռոմեացիների»,* հեղինակ՝ Թոմաս Ռ. Շրեյներ (Գրենդ Ռեփիդս, «Baker», 1998թ.), էջ 264, և *«Հռոմեացիների թուղթը»,* հեղինակ՝ Դուգլաս Մոո (Գրենդ Ռեփիդս, «Eerdmans», 1996թ.), էջեր 311-312: Այս տեսանկյունը նույնպես պաշտպանվում է Հռոմեացիների թղթի վերաբերյալ այլ հեղինակավոր աշխատություններում, հեղինակներ՝ Ռոբերտ Հոլդեյն, Ջոն Մյուրի, Չարլզ Հոջ և Չ. Է. Բ. Քրենֆիլդ:
692 Բ Տիմոթեոս 3.5
693 Եբրայեցիների 10.29
694 Միքիա 4.12, Հովհաննես 15.6

յան օրն է Իր թշնամիներից[695]: Նրանք կխմեն Աստծո սրտմտության գինին, որն անխառն լցված է լինելու Նրա բարկության բաժակի մեջ[696]:

Երկրորդը՝ ում Դավիթը վտարում է, հեռանալու են մեծ ամոթով և զարհուրանքով: «Ամաչեն» բառը թարգմանված է եբրայերեն *«բուշ»* բառից, որը նշանակում է ամոթ, հուսալքություն և շփոթություն: «Շատ զարհուրեն» արտահայտությունը թարգմանված է եբրայերեն *«բահալ»* բառից, որը նշանակում է տագնապ, անհանգստություն և սարսափ: Դավթի թշնամիները կվտարվեն՝ իրենց ամոթը կրելով, տագնապով համակված և լիովին սարսափած: Թեև սա խիստ դժգույն պատկեր է, դատաստանի այս նախանշումը, որը գտնում ենք Դավթի խոսքերում, նույնիսկ աննշան չափով չի նկարագրում այն մարդկանց սպասող աներևակայելի ամոթը և սարսափը, որոնք անպիտան կհամարվեն և կվտարվեն Քրիստոսի ներկայությունից: Նրանք մեծ վստահությամբ մուտք կգործեն Գահի սրահը՝ համարելով, որ ոչնչի կարիք չունեն, բայց անմիջապես կհայտնաբերեն, որ իրենք «թշվառ և ողորմելի և աղքատ և կույր և մերկ» են (Հայտն. 3.17): Ինչպես որ Քանանի երկիրը փսխեց քանանացիներին՝ նրանց պղծության պատճառով, իսկ հետագայում արեց նույնը անհնազանդ իսրայելցիների հետ, այնպես էլ Քրիստոսը կփսխի նրանց Իր բերանից և կվտարի մեծագույն արհամարհանքով և խորշանքով[697]: Նրանք կհեռացվեն՝ ինչպես մարդիկ, որոնց երեսի վրա աղբ է ցրված[698]: Նրանք նախատինքով և ամոթով կծածկվեն, կամաչեն և կկորչեն[699]: Ինչպես Դանիելը մարգարեացավ նրանց մասին, նրանք կզարթնեն «ի հավիտենական նախատինք և անարգանք» (Դանիել 12.2):

Երրորդը՝ ում Դավիթը վտարում է, գիտակցելու են իրենց վերահաս կործանումը, միայն երբ արդեն չափազանց ուշ լինի: Այն գալու է նրանց վրա թրի հարվածի արագությամբ: Իրենց մեծագույն վստահության պահին նրանք ետ են դարձվելու: Նմանապես, ովքեր կեղծ ձևով են դավանել Քրիստոսին, անտեղյակ և անպատրաստ են լինելու իրենց վրա հասնող դատաստանին այդ վերջին օրը: Այն կգա որպես իրադարձությունների կտրուկ և անսպասելի շրջադարձ, որը գլխիվայր կշրջի նրանց ամբողջ պատկերացումն իրականության մասին: Նրանք կմտնեն Նրա Գահի սրահը՝ մտածելով, որ Նրան են պատկանում, որ ջերմ ընդունելության կարժանանան և նույնիսկ պատիվ կստանան իրենց ծառայությունների

695 Նաում 1.2, Եբրայեցիների 10.30
696 Հայտնություն 14.10
697 Ղևտացիների 18.25,28, 20.22, Հայտնություն 3.16
698 Մաղաքիա 2.3
699 Սաղմոս 71.13, 83.17, 109.28,29

համար[700]: Այնուամենայնիվ, հանդիպելով Քրիստոսի հայացքին, նրանք կզարհուրեն իրենց տեսածից: Մի ակնթարթում նրանք կգիտակցեն իրենց սխալմունքը և կընկնեն Քրիստոսի առջև, ինչպես որ Համանն ընկավ Եսթերի առջև: Եվ, ինչպես Համանի դեպքում, Թագավորի խոսքով նրանց երեսները կծածկվեն, և նրանց քարշ տալով կհեռացնեն Նրա ներկայությունից դեպի իրենց սպասվող կործանումը[701]: Նրանք կլինեն այն մարդու պես, որը հարսանեկան խնջույքի մտավ՝ առանց պատշաճ հագուստի և անպատրաստ[702]: Նա վստահ էր, որ ընդունելություն էր ստանալու, և պատրաստվում էր զվարճանալ այդ երեկույթին: Այնուամենայնիվ, երբ նա թագավորի ներկայության մեջ հայտնվեց, նրա հիմարությունը բացահայտվեց: Նա անխոս կանգնած էր՝ լսելով իր դատավճիռը. «Այն ժամանակ թագավորն ասաց ծառաներին. «Դրա ոտքերը և ձեռքերը կապե՛ք, վե՛ր առեք դրան, դրսի խավարը գցե՛ք. այնտեղ կլինի լացը և ատամների կրճտելը» (Մատթ. 22.13):

Այս պահին պատշաճ կլինի հարցնել հետևյալը. քանի՞ միլիոնավոր մարդկանց են ավետարանական ծառայողները և ծառայություններն անպատրաստ ուղարկել կանգնելու Քրիստոսի դատաստանի գահի առջև: Քանի՞սը մուտք կգործեն Գահի սրահը այն վստահությամբ, որը հիմնված է նրանց հովվի հավաստիացումների վրա, միայն Քրիստոսի անհավանությանը բախվելու համար: Այդ ժամանակ ինչպե՞ս նրանք կվերաբերվեն այն ծառայողին, որը հոգ էր տանում իրենց անձերի մասին: Նա բարի էր և սիրալիր էր նույնիսկ մանրուքներում: Նա հաճելի, ուրախ և դրական էր: Այնուամենայնիվ, նա թեթևորեն էր բուժում նրանց վերքը, վիրակապում էր նրանց բորբոքված ախտը մեղավորի աղոթքով և հավանություն տվող հոգևոր համայնքում սովորեցնում էր դրականորեն մտածել իրենց մասին: Նա կերակրում էր նրանց բարոյականության համեղ պատառիկներով և կշտացնում էր գործնական սկզբունքներով, որպեսզի նրանք նավարկեին այս կյանքում և հնձեին դրա առավելությունները: Բայց նա չէր պատրաստում նրանց իրենց Աստծուն հանդիպելու համար: Նա երբեք չէր պատմում նրանց այն կրոնի ավելի ծանրակշիռ իրողությունների մասին, որն ինքը ենթադրաբար ներկայացնում էր: Նրանք ոչինչ չգիտեին Աստծո բնավորության մասին, նաև մարդկային սրտի արատավորության մասին: Նրանք անտեղյակ էին Քրիստոսի մահվան ճշմարիտ բնույթից: Նրանք երբեք չէին լսել ապաշխարելու և հավատալու կոչը[703]: Նրանց երբեք չէին խրատել իրենց կոչումը և ընտրությունը հաստատ դարձնելու կամ իրենց փրկությունը ահով ու

700 Մատթեոս 7.22, 25.21,23, Ղուկաս 12.37, Հովհաննես 12.26, Բ Պետրոս 1.10,11
701 Եսթեր 7.8
702 Մատթեոս 22.10-14
703 Մարկոս 1.15

դողալով կատարելու մասին[704]: Այդ ծառայողը թույլ էր տվել նրանց հավիտենություն մուտք գործել՝ հենվելով մակերեսային կրոնի վրա, որը սարդոստայնի պես դյուրաբեկ է[705]: Ամբողջ հավիտենության ընթացքում նա լսելու է այդ մարդկանց աղաղակները և իմանալու է, որ ինքն առնվազն մասամբ պատասխանատու է նրանց դատապարտության համար: Նա մակերեսորեն էր բժշկում այդ մարդկանց ցավերը՝ «ասելով՝ խաղաղությո՛ւն, խաղաղությո՛ւն, երբ խաղաղություն չկա» (Երեմ. 6.14, NKJV): Նա անպետք դետ էր, և նրանց արյունը նրա ձեռքերին է[706]:

Չորրորդը՝ այն մարդիկ, որոնց Դավիթը վտարում է, անասելի տրտմություն էին պատճառել նրան իրենց հարձակումներով՝ նրա անձի և կոչման դեմ: Այդ իսկ պատճառով, նրանց հանկարծակի անկումը Դավթի արդարացումն էր՝ Աստծո ձեռքով: Նմանապես, դատաստանի օրը Քրիստոսը կարդարացվի այն չար գործերից, որոնք կատարող մարդիկ Տեր էին դավանում Նրան և իրենց անվանում էին Նրա ժողովուրդը, սակայն չէին կատարում Նրա ասածները[707]: Նրանք անառակության էին վերածել Աստծո շնորհքը[708]: Նրանք այնպիսի անբարոյություններ էին գործում, ինչպիսիք չկային նույնիսկ հեթանոսների մեջ[709]: Նրանք ապրում էին հետևյալ կարգախոսով. «Չար գործենք, որ բարին գա... մնա՞նք մեղքի մեջ, որ շնորհքը շատանա» (Հռոմ. 3.8, 6.1): Նրանց պատճառով Քրիստոսի անունը հայհոյվում էր հեթանոսների մեջ[710]: Քրիստոսին մեղադրում էին նրանց չար գործերի համար և ծաղրում էին՝ որպես Փրկչի, որն անկարող էր փրկել. Ազատողի, որը կարողացավ հանել Իր ժողովրդին Եգիպտոսից, բայց չկարողացավ տանել նրանց իրենց երկիրը[711]. անօրեններին Արդարացնողի, որն անզոր էր սրբացնել նրանց. Շինարարի, որը բարի գործ սկսեց, սակայն չկարողացավ ավարտել[712]. Աստծո, որը տկար էր՝ նման տագնապած կնոջ, որը հասել էր ծնելու կետին, բայց ծնելու ուժ չուներ[713]: Բոլոր այդ մեղադրանքներն ուղղվում էին Նրա դեմ՝ անաստված մարդկանց պատճառով, որոնք դավանում էին Նրան իրենց բերանով, բայց ուրանում էին իրենց գործերով[714]: Այնուամենայնիվ, այդ վերջին օրը բոլոր այդ չարախոսական մեղադրանքներին վերջ կդրվի: Ճշմարտությունն այն մասին, որ ոչ ամեն Նրան «Տե՛ր, Տե՛ր»

704 Փիլիպեցիների 2.12, Բ Պետրոս 1.10
705 Հոբ 8.14
706 Եզեկիել 3.17,18
707 Ղուկաս 6.46
708 Հուդա 4
709 Ա Կորնթացիների 5.1
710 Հռոմեացիների 2.24
711 Թվոց 14.13-16, Եզեկիել 36.20
712 Ղուկաս 14.28-30, Փիլիպեցիների 1.6, Եփեսացիների 2.10
713 Եսայի 66.9
714 Տիտոս 1.16

ասողն էր ճանաչված Նրանից և համարված Նրա եղբայրների թվում, հայտնի կդառնա: Այդ օրը Քրիստոսը կարդարացվի, իսկ նրանք կբացահայտվեն՝ որպես խորթ զավակներ, որոնք իրենց ուզած կերպով էին վարվում: Սա նախանշվում է Մովսեսի խոսքերում, որն արդարացրեց Աստծուն և դատապարտեց անհնազանդ Իսրայելին.

«Աստծո գործը կատարյալ է,
Որովհետև Նրա ամեն ճանապարհներն իրավունք են:
Աստված հավատարիմ է և անիրավություն չունի,
Արդար և ուղիղ է Նա:
Ապականվեցին Նրա դեմ.
Նրա որդիները չեն.
Իրենցն է արատը:
Մեկ խոտորված և ծռած ազգ է» (Երկր. Օր. 32.4,5):

Ժամանակակից ավետարանական մտքի համար անասելիորեն դժվար է ընդունել այն իրողությունները, որոնք մենք հենց նոր դիտարկեցինք. բայցևայնպես, դրանք ճշմարիտ են: Սա դժգույն թեմա է, որը, սակայն, չի կարելի թաքցնել և անտեսել: Ինչպես հայտարարեց Ամովս մարգարեն.

«Առյուծը մռնչացել է.
Ո՞վ չի վախենում:
Տեր Աստված է խոսում.
Ո՞վ չի մարգարեանա» (3.8):

Իսկ մենք կթաքցնե՞նք այս իրողությունները մեր ունկնդիրներից: Վերջում նրանք կանիծեն մեզ: Մենք կասե՞նք նրանց այս մասին, թեև նրանք կմտածեն, որ մենք խելագարվել ենք: Եվ այն օրը նրանք կօրհնեն մեզ: Մենք պետք է մի կողմ նետենք մարդկանցից գովեստ և հավանություն ստանալու ամեն ցանկություն և ձգտենք Քրիստոսի հավանությանը: Մենք պետք է քարոզենք Քրիստոսի խիստ խոսքերը, թեև մեզ մեղադրեն սիրուց զուրկ, բարկացած, հիվանդագին և խստաբարո լինելու մեջ: Մենք պետք է կամենանք կրել մարդկանց ժամանակավոր զայրույթը, եթե դա կփրկի նրանց Աստծո հավիտենական զայրույթից: Մենք պետք է պատրաստենք նրանց՝ հանդիպելու իրենց Աստծուն[715]:

ԴԺՈԽՔԻ ԻՐԱԿԱՆ ԼԻՆԵԼԸ

Մատթեոս 7-րդ գլխից սովորեցինք, որ անթիվ մարդիկ, որոնք ներկայումս Տեր են դավանում Քրիստոսին, մեկ օր բացահայտվելու են՝ իրենց կեղծ դավանության պատճառով, և նրանց հրամայվելու է հեռանալ Նրա ներկայությունից: Սա մեծագույնն է բոլոր զգուշացումներից

715 Ամովս 4.12

և վերջնական ծանուցումն է, որը մենք պետք է լսենք, և որին պետք է արձագանքենք: Կան մի քանի ճշմարտություններ, որ մենք պետք է քաղենք այս փաստից:

Առաջինը՝ մենք պետք է հասկանանք, որ Քրիստոսի կամքն է, որ կեղծ հավատացյալները հեռանան Իր ներկայությունից: Այս հատվածում չկա ավետարանական ռոմանտիզմ, համաձայն որի Քրիստոսը տրտմում է և լաց լինում, մինչ մարդիկ դժոխք են նետվում՝ անկախ այն ամենից, ինչ Ինքը ցանկանում է անել՝ դա թույլ չտալու համար: Քրիստոսն Ինքն է վտարում նրանց՝ բարկությամբ և առանց ողորմության: Նրանց կյանքի ընթացքում Քրիստոսն առատորեն շնորհում էր նրանց Իր բարությունը և համբերությունը, ինչը պետք է ապաշխարության դրդեր նրանց, սակայն նրանք խստացնում էին իրենց համառ սրտերը Նրա դեմ և բարկության ավելի մեծ չափ էին կիտում իրենց համար, որը հայտնվելու էր դատաստանի օրը[716]: Նա կամենում էր հավաքել նրանց, ինչպես թխսկանը հավաքում է իր ճտերին թևերի տակ, բայց նրանք չկամեցան[717]: Նա պարզում էր իր ձեռքը նրանց և մեծահոգաբար առաջարկում էր Իրեն, բայց նրանք հրաժարվեցին: Ինչպես որ Նա հռչակեց Եսայի մարգարեի միջոցով.

> «Ես որոնվեցի նրանցից, որ չէին հարցնում.
> Ես գտնվեցի նրանցից, որ Ինձ չէին խնդրում:
> Եվ ասացի. «Ահա՛ Ես, ահա՛ Ես»,
> Այն ազգին, որ Իմ անունը չէր կանչել:
> Ես տարածեցի Իմ ձեռքերը ամեն օր դեպի մի ապստամբ ժողովուրդ,
> Որոնք գնում են մի այնպիսի ճանապարհով, որ լավ չէ,
> Իրենց խորհուրդների ետևից.
> Մի այնպիսի ժողովուրդ, որ Ինձ բարկացնում է միշտ Իմ առջև» (65.1-3):

Հիսուսն անում էր այս ամենը այդ մարդկանց համար, բայց նրանք արձագանքում էին շարունակ ավելացող ապստամբությամբ և Նրա բարկությունը բորբոքելով: Նա կանչում էր, բայց նրանք մերժում էին. Նա պարզում էր Իր ձեռքը, բայց նրանք ուշադրություն չէին դարձնում: Նրանք լիովին անտեսում էին Նրա խորհուրդը և չէին ցանկանում Նրա հանդիմանությունը: Այնպես որ, այժմ, երբ նրանք են կանչում Նրան, Նա չի պատասխանի, և երբ նրանք են ջանասիրաբար փնտրում Նրան, չեն գտնի: Նրանք ատեցին գիտելիքը և չընտրեցին Տիրոջ երկյուղը. նրանք չկամեցան ընդունել Նրա խորհուրդը և արհամարհանքով մերժեցին

716 Հռոմեացիների 2.4,5
717 Մատթեոս 23.37, Ղուկաս 13.34

Նրա բոլոր հանդիմանությունները. «Ուրեմն նրանք իրենց ճանապարհի պտղից ուտեն և իրենց խորհուրդներից կշտանան» (Առակ. 1.24-31): Դատաստանի օրը Քրիստոսի փրկության առաջարկը ետ կվերցվի, և Նրա հրամանով Նրա թշնամիները դժոխքը կնետվեն: Ահա թե ինչու է Նա զգուշացնում.

> «Բայց ասում եմ ձեզ՝ Իմ բարեկամներին, մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինը սպանում են, և դրանից հետո ավելի բան չունեն, որ անեն: Բայց ցույց տամ ձեզ, թե ումից պետք է վախենաք: Նրանից վախեցեք, որ սպանելուց հետո իշխանություն ունի գեհենի մեջ գցելու: Այո՛, ասում եմ ձեզ, Նրանի՛ց վախեցեք» (Ղուկ. 12.4,5):

> «Որդուն համբուրեք, որ չբարկանա,
> Եվ դուք չկորչեք ճանապարհին:
> Որովհետև Նրա բարկությունը շուտով կվառվի.
> Երանի՛ այն ամենին, որ Նրան են հուսացած» (Սաղմ. 2.12):

Երկրորդը՝ մենք պետք է ուշադրություն դարձնենք, որ կեղծ հավատացյալներին հրամայվում է հեռանալ *Քրիստոսից:* Եթե մենք չենք համարում սա դժոխքի ամենազարհուրելի կողմը, մենք պետք է վիճարկենք մեր փրկությունը: Այն հավատացյալի համար, որի սիրտը վերածնված է Սուրբ Հոգու կողմից, առանց Քրիստոսի ապրելու միտքը բոլորովին անտանելի է[718]: Ճաշակելով և տեսնելով, որ Տերը քաղցր է, և անձամբ համոզվելով, որ Նրա ներկայության մեջ ուրախության լիություն կա, հավատացյալը չի կարող հանդուրժել նույնիսկ առանց Քրիստոսի գոյության մասին միտքը [719]: Մենք պետք է հասկանանք, որ վերածնված սիրտը չի մտածում հավիտենական կյանքի մասին՝ առաջին հերթին որպես անվերջ ուտոպիայի, այլ՝ որպես չընդհատվող և Քրիստոսի հետ անխոչընդոտ շփման: Նրանք, ովքեր քարոզում են Երկնքի մասին՝ առաջին հերթին որպես ուտոպիայի, և՛ անարգում են Քրիստոսին, և՛ դրդում են մարմնավոր մարդկանց մտածել, որ այդ վայրն իրենց համար է: Չնայած իր բոլոր նյութական կատարելություններին և գեղեցկությանը, Երկինքը կործանված կլիներ նրանց համար՝ Քրիստոսի ներկայության պատճառով: Նրա սուրբ և արդար ներկայությունն անտանելի կդարձներ այն: Այնուամենայնիվ, եթե մենք կարողանայինք համոզել մեղավոր մարդկանց, որ Քրիստոսն իրենց նման է, կամ որ Նա Երկնքում չէ, մենք արդեն վաղը կլցնեինք Երկինքը[720]: Բոլորն են ուզում Երկինք գնալ, բայց մեծամասնությունը չի ցանկանում Քրիստոսին: Այս

718 Հովիվ Չարլզ Լեյտեր, զրույց հեղինակի հետ:
719 Սաղմոս 16.11, 34.8
720 Սաղմոս 50.21

պատճառով է, որ մենք պետք է զգուշացնենք մարմնավոր մարդկանց, որ իրենց անտարբերությունն արդարության հանդեպ և Քրիստոսի հետ շփվելու ցանկություն չունենալը մեծ վկայություն է այն մասին, որ իրենց սրտերը դեռ պետք է փոխվեն, և որ իրենց քաղաքացիությունը Երկնքում չէ: Ավելին, մենք պետք է զգուշացնենք նաև նրանց, ովքեր դավանում են Քրիստոսին, սակայն ավելի շատ ոգևորված են ապագա ուտոպիայի, քան Քրիստոսի լիության հույսով:

Երրորդը՝ մենք պետք է ուշադրություն դարձնենք, որ կեղծ հավատացյալներին հրամայվում է հեռանալ Քրիստոսի ներկայությունից դեպի դժոխք: Ոմանք Ավետարանական շարժման մեջ բոլորովին չեն քարոզում դժոխքի մասին և արդարացնում են դա՝ ասելով, որ գերադասում են կենտրոնանալ Հիսուսի ուսմունքների և Ավետարանի Բարի լուրի վրա: Այնուամենայնիվ, այդպես ասող մարդիկ կա՛մ միտումնավոր խաբեության մեջ են, կա՛մ անտեղյակ են թե՛ Ավետարանից, թե՛ Քրիստոսի ուսմունքներից: Իրականում, մենք գրեթե ոչինչ չէինք իմանա դժոխքի բնույթի և զարհուրանքների մասին, եթե չլինեին Հիսուսի ուսմունքները: Թեև ճշմարտությունը հավիտենական պատժի մասին գրված է նաև Հին կտակարանում[721], կան քիչ պարզ հղումներ այս թեմայի մասին: Նույնը կարելի է ասել առաքյալների նամակների վերաբերյալ[722]: Իրականում, գրեթե այն ամենը, ինչ մենք գիտենք դժոխքի վարդապետության մասին, Քրիստոսի ուսմունքներից է, որոնք գտնվում են Ավետարաններում, և Հիսուսի մասին հայտնությունից, որը տրվեց Հովհաննեսին Պատմոս կղզում: Հաճախ ասում են, որ դժոխքի մասին քարոզող մարդիկ չարամիտ են, քննադատող են և սիրուց զուրկ են, սակայն այս պնդումը հերքվում է, քանի որ ամենից սիրող Անձնավորությունը, որը երբևէ ապրել է այս երկրի վրա, տվել է մեզ ամենից սպառիչ և նկարագրական ուսմունքները դժոխքի իրական լինելու մասին: Եվ եթե Նա արժանահավատ է, ապա դժոխքն աննկարագրելի տանջանքի վայր է[723], որում արդար դատաստան է տրվում, և անօրենները ստանում են պատժի ճիշտ այն չափը, որին արժանի են[724]: Մարդիկ հաճախ են հարցնում, թե ինչու է դժոխքի մասին սուրբգրային հատվածների մեծ մասը հնչում Քրիստոսի շուրթերից: Վստահելի աստվածաբան Վ.Գ. Թ. Շեդդը, թվում է, տալիս է ամենից հավանական պատասխանը.

> «Անվերջ պատժի վարդապետության մեծագույն հենարանը Քրիստոսի՝ մարդու Փրկչի ուսմունքներն են: Թեև այս վար-

721 Դանիել 12.2
722 Բ Թեսաղոնիկեցիների 1.8,9, Եբրայեցիների 10.26,27, Հուդա 7
723 Մատթեոս 13.42,50, 22.13, 24.51, 25.30, Ղուկաս 13.28, 16.28
724 Մատթեոս 11.21-24, 16.27, 23.14, Ղուկաս 12.47,48, Հռոմեացիների 2.6, Բ Կորնթացիների 5.10, 11.15, Բ Տիմոթեոս 4.14, Հայտնություն 18.6, 20.12,13

դապետությունը պարզորեն ուսուցանվում է Պողոսի թղթերում և Սուրբ գրքի այլ հատվածներում, առանց մարմնավորված Աստծո հստակ և կրկնվող պնդումների, նման զարհուրելի ճշմարտությունը հազիվ թե զբաղեցներ այն ակնառու տեղը, որն այն միշտ զբաղեցրել է քրիստոնեության հավատքի դավանանքներում... Առաքյալները շատ ավելի քիչ էին մանրամասնում այն և շատ ավելի սակավ էին շեշտադրում այս լրջագույն թեման... Եվ, միգուցե, նրանք ճիշտ էին: Որովհետև ոչ ոք՝ բացի Աստծուց, իրավունք չունի, և ոչ ոք չի համարձակվի դատապարտել մարդուն հավիտենական թշվառության՝ մեղքի պատճառով, և քանի որ ոչ ոք՝ բացի Աստծուց, չունի այդ իրավունքը, ոչ ոք էլ չպետք է վերապահի իրեն այդ դատավճռի բնույթը և հետևանքները նկարագրելը: Ահա թե ինչու է այն զարհուրելի պատկերների մեծ մասը, որոնցում նկարագրվում են կորսվածների չարչարանքները, գտնվում մեր Տիրոջ և Փրկչի խոսքերում: Նա Ինքը ստանձնեց, որ մեզ ուղղի այս զգուշացումը»[725]:

Սուրբ գիրքն օգտագործում է դժոխքի շատ պատկերավոր և ցնցող նկարագրություններ: Այն, թե արդյո՞ք դրանք պետք է բառացիորեն ընկալել, երկարաժամկետ բանավեճերի առարկա է նույնիսկ պահպանողական աստվածաբանների շրջանակներում: Արդյո՞ք դժոխքը բառացիորեն կրակի և խավարի, ծծմբի և ծխի վայր է[726]: Եթե ինչ-որ մեկը հերքում է այս նկարագրությունների բառացի մեկնությունը՝ պնդելու համար, որ դժոխքում անօրենների չարչարանքներն այնքան էլ սաստիկ չեն, նրա փաստարկները պետք է մերժվեն: Այնուամենայնիվ, ընդունելի է փոխաբերական համարել այս նկարագրությունները՝ այն իմաստով, որ դրանք փորձում են այնպիսի զարհուրելի իրողություն պատկերել, որը մարդկային միտքը չի կարող ընկալել, և մարդկային լեզուն չի կարող փոխանցել: Դժոխքի զարհուրանքները նկարագրելու համար Աստվածաշնչի հեղինակներն օգտագործում էին մեծագույն սարսափները, որոնք հայտնի են մարդուն այս երկրի վրա, բայց մենք կարող ենք համոզված լինել, որ դժոխքը շատ ավելի վատն է, քան այն ամենը, ինչ կա այս աշխարհում: Կրակը և խավարը, ծծումբը և ծուխը միայն թույլ փորձ է՝ նկարագրելու համար շատ ավելի զարհուրելի մի իրողություն, քան այս բառերը կարող են փոխանցել՝ այն, որ անօրենները պետք է ամբողջ հավիտենության ընթացքում կրեն արդար Աստծո ներկայությունը և Նրա կատարյալ արդարադատությունը:

725 Վ. Գ. Թ. Շեդդ «Դոգմատիկ աստվածաբանություն» (Ֆիլիպսբուրգ, Նյու Ջերսի, «P&R», 2003թ.), հտ. 2, էջ 675:
726 Մատթեոս 3.10,12, 7.19, 8.12, 13.42, 18.8, 22.13, 25.30,41, Հուդա 13, Հայտնություն 20.9,14, 21.8

Մենք իմացանք, որ Քրիստոսին կեղծ ձևով դավանողներին հրամայվում է հեռանալ Նրա ներկայությունից դեպի դժոխք: Այնուամենայնիվ, մենք պետք է զգույշ լինենք մեր ձևակերպումների մեջ: Երբ նկարագրում ենք դժոխքը՝ որպես հավիտենական գոյություն առանց Քրիստոսի, նկատի չունենք, որ այն լիովին առանց Քրիստոսի է: Կա մի տարածված ավետարանական ասացվածք, որ երկինքը երկինք է, քանի որ Աստված այնտեղ է, և դժոխքը դժոխք է, քանի որ Նա այնտեղ չէ: Այնուամենայնիվ, այն ճիշտ չէ: Ավելի պատշաճ կլինի ասելը, որ դժոխքը դժոխք է, որովհետև Աստված այնտեղ է՝ Իր լիարժեք արդարությամբ և մեղավորի դեմ ուղղված Իր լիարժեք զայրույթով: Դատաստանի օրը, երբ մարդիկ հեռացվեն Քրիստոսի մոտից, նրանք վտարվելու են Նրա բարեհաճ ներկայությունից: Այնուամենայնիվ, Նրա մռայլ հայացքը հետևելու է նրանց ամբողջ հավիտենության ընթացքում: Հովհաննես առաքյալը հաստատում է այս ճշմարտությունը. «Այնպիսին [անհավատը] Աստծո սրտմտության գինուց պիտի խմի, որ անխառն ածված է Նրա բարկության բաժակի մեջ: Եվ պիտի տանջվի կրակի և ծծմբի մեջ սուրբ հրեշտակների և Գառան առջև» (Հայտն. 14.10):

ԴԺՈԽՔԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԸ

Սուրբ գրքից իմանում ենք, որ այս աշխարհի վրա անդառնալի և անխուսափելի դատաստան է գալու: Այն լինելու է մարդկության մեծագույն և վերջնական ջոկումը: Այս ճշմարտությունը գործնականորեն նշանակում է, որ յուրաքանչյուր մարդ այս երկրի վրա որոշված է կա՛մ հավիտենական փառքի, կա՛մ հավիտենական պատժի՝ դժոխքում: Թեև սա կարող է տհաճ կամ վանող լինել մարդկության մեծ մասի համար, անկարելի է հերքել, որ Սուրբ գիրքը հստակ սովորեցնում է այս մասին[727]:

Մեր փողոցներում և եկեղեցական նստարաններին մարդիկ տարբեր կերպերով են արձագանքում դժոխքի վարդապետությանը: Ոմանք անմիջապես հերքում են այն, թեև նրանց ներսում կրծող կասկած կա այն մասին, որ իրենք սխալ են: Մյուսները համոզված են, որ դժոխքը միայն ամենասարսափելի մարդկանց համար է: Նրանք հավատում են, որ նույնիսկ աթեիստը կազատվի դրանից, եթե հետևի իր վարքին, ձգտի լավը լինել՝ իր ուժերի չափով, և օգտակար լինի իր մերձավորներին: Մյուսները հավատում են, որ դժոխքը միայն նրանց համար է, ովքեր կտրականապես մերժում են Քրիստոսին, իսկ այն մարդիկ, որոնք համաձայն են Նրա պնդումներին և Տեր են դավանում Նրան, հավաստիացում ունեն, որ չեն մոտենա դրա դարպասներին: Բոլոր այս տարատեսակ կարծիք-

727 Մատթեոս 5.22,29,30, 10.28, 18.9, 23.33, 25.41,46, Մարկոս 9.43,45,47, Ղուկաս 12.5, Բ Պետրոս 2.4, Հայտնություն 20.15

ները դրդում են մեզ մի կարևոր հարցի. ո՞վ է դատապարտված դժոխքին: Հին ժամանակվա քարոզիչները սիրում էին ասել. «Խնդիրն այն չէ, որ մարդիկ չեն հավատում դժոխքին. նրանք հավատո՛ւմ են: Խնդիրն այն է, որ ոչ ոք չի կարծում, որ ինքն այնտեղ է գնալու»:

Մատթեոս 7-րդ գլխում Հիսուսը պարզորեն ցույց է տալիս մարդկանց չորս խումբ, որոնք անցկացնելու են հավիտենությունը դժոխքում: Մենք լավ կանենք, եթե ուշադրությամբ դիտարկենք յուրաքանչյուր խումբը և քննենք մեր կյանքը՝ ըստ նրանց բնութագրի: Այս աշխարհում չկա ավելի կարևոր բան: Մարդիկ կարող են սխալվել շատ հարցերում՝ առանց իրենց մեծ վնաս հասցնելու: Այնուամենայնիվ, այս հարցում սխալվելը հավիտենական և անդառնալի հետևանքներ ունի:

Դժոխքին դատապարտվածների առաջին խումբը բաղկացած է այն մարդկանցից, որոնք ապրում են լայն ճանապարհին[728]: Նրանց մտածելակերպը, վարքը և կյանքի ուղղվածությունը չեն համապատասխանում Քրիստոսի կամքին: Փոխարենը, նրանց կյանքը ձևավորված է այս անկում ապրած աշխարհի կարծիքներով և կրքերով, և նրանք վարվում են դրանց համաձայն: Թեև նրանք կարող են քրիստոնեության բարակ քող կրել, նրանց մտածելակերպը և կենսաոճը հակառակ են այն կրոնին, որը նրանք դավանում են: Նրանք սիրում են այս աշխարհը, նման են այս աշխարհին և ունեն նույն ձգտումները, ինչ այս աշխարհը: Մեր ավետարանական եկեղեցիները լցված են նման մարդկանցով: Նրանք անկեղծորեն հավատում են, որ անցել են նեղ դռնով, որը Քրիստոսն է, և որ իրենց փրկությունն ապահով է: Այնուամենայնիվ, նրանք տեղյակ չեն, որ իրենց չընդհատվող ընթացքը լայն ճանապարհով վկայում է, որ իրենք զուր տեղն են հավատացել:

Դժոխքի դատապարտվածների երկրորդ խումբը բաղկացած է այն մարդկանցից, որոնց կյանքում չկա պտղաբերություն և Հոր էտումը[729]: Նրանք դավանում են իրենց հավատքը Քրիստոսի հանդեպ, բայց Նրա բնավորությունը և գործերը չեն արտահայտվում նրանց կյանքում, և ո՛չ էլ նրանց կյանքում վկայություն կա Հոր սրբացնող աշխատանքի մասին, որը Նա կատարում է խրատի միջոցով: Նրանք, ովքեր պտուղ չեն բերում, պարզապես քրիստոնյա չեն: Այս ճշմարտությունը չպետք է փոքրացնել կամ այլ կերպ բացատրել: Ավետարանի սկզբնական զգուշացումներում Հովհաննես Մկրտիչը հայտարարեց. «Արդեն կացինն էլ ծառերի արմատին դրված է: Արդ ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կկտրվի ու կրակի մեջ կգցվի» (Մատթ. 3.10, Ղուկ. 3.9): Հիսուսը համաձայնեց Հովհաննեսի հետ, երբ կրկնեց նույն զգուշացումը՝ գրե-

728 Մատթեոս 7.13
729 Մատթեոս 7.16-20, Հովհաննես 15.2

թե բառ առ բառ. «Ամեն ծառ, որ բարի պտուղ չի բերում, կտրվում է և կրակի մեջ գցվում» (Մատթ. 7.19): Մենք պետք է գիտակցենք, որ մեր ավետարանական եկեղեցիները լցված են նման մարդկանցով: Նրանք պտուղ չեն բերում, և նրանց կյանքում չկա ոչ մի վկայություն Հոր էության մասին: Նրանք այդպես են մնում տարեց տարի՝ հարելով աստվածապաշտության ինչ-որ ձևի, սակայն ուրանալով դրա զորությունը՝ իրենց կյանքի անպտղությամբ[730]:

Դժոխքի դատապարտվածների երրորդ խումբը բաղկացած է այն մարդկանցից, որոնց կյանքում չկա գործնական հնազանդություն Հոր կամքին: Կրկին, Հիսուսը պարզորեն սովորեցնում է այս մասին: Նա զգուշացրեց. «Ոչ թե ամեն Ինձ «Տե՛ր, Տե՛ր» ասողը կմտնի Երկնքի արքայություն, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է» (Մատթ. 7.21): Հնազանդությունը փրկություն ստանալու միջոց չէ, այլ՝ փրկված լինելու ապացույցը: Նույն կերպով, անհնազանդությունը փրկություն չունենալու ապացույցն է: Ահա թե ինչու այդ վերջին օրը Հիսուսը կհրամայի անօրեններին հեռանալ: Նա խոսում է նրանց մասին, ովքեր Տեր են դավանել իրեն, սակայն այնպես են ապրել, ասես Նա երբեք օրենք չէր տվել, որին իրենք պետք է հնազանդվեին: Մենք պետք է հասկանանք, որ պարզապես գոյություն չունի այնպիսի երևույթ, ինչպիսին է քրիստոնյան, որն ապրում է Աստծո կամքի հանդեպ մշտական անտարբերությամբ և արհամարհանքով: Այս պնդման հետ չհամաձայնելը նշանակում է ժխտել Հիսուսի ուսմունքները: Այնուամենայնիվ, մեր ավետարանական եկեղեցիները լի են մարդկանցով, որոնք դավանում են Քրիստոսին, սակայն ապրում են գործնական աթեիստների պես. նրանք անում են այն ամենը, ինչ ճիշտ է թվում իրենց, և կործանվում են՝ գիտելիք չունենալու պատճառով[731]: Եթե աշխարհի բոլոր Աստվածաշնչերն առգրավեին, դա որևէ կերպով չէր ազդի նրանց վրա: Նրանք առանց օրենքի են: Նրանք ապրում են Աստծո Խոսքի հանդեպ ինքնահնար սովի մեջ[732]:

Դժոխքին դատապարտվածների չորրորդ խումբը բաղկացած է այն մարդկանցից, որոնք լսում են Քրիստոսի խոսքերը, սակայն դրանց հիման վրա չեն գործում[733]: Կրկին, դարձը վկայվում կամ ապացուցվում է գործնական հնազանդությամբ: Վերստին ծնված մարդիկ նոր և ուժգնացող ձգտումներ ունեն Քրիստոսի Անձի հանդեպ: Այս պատճառով է, որ նրանք նաև փափագում են ճանաչել Նրա կամքը և հաճեցնել Նրան՝ հնազանդության միջոցով: Նրանք ակնածանքով են վերաբերվում Քրիստոսի Խոսքի օրհնություններին և խոնարհված են այն ուսումնասիրելու

730 Բ Տիմոթեոս 3.5
731 Ովսե 4.6
732 Ամովս 8.11
733 Մատթեոս 7.26

և իրենց կյանքում կիրառելու արտոնությամբ: Հետևաբար, նրանք նաև ամաչում են, երբ բացահայտում են, որ անտարբեր, անհոգ և անհնազանդ են: Մի խոսքով, ճշմարիտ հավատացյալը հասկանում է, թե ինչ նկատի ուներ Հիսուսը, երբ ասաց Իր աշակերտներին. «Բայց երանելի են ձեր աչքերը, որ տեսնում են, և ձեր ականջները, որ լսում են: Որովհետև ճշմարիտ ասում եմ ձեզ, որ շատ մարգարեներ և արդարներ ցանկացան տեսնել՝ ինչ որ տեսնում եք, և չտեսան, և լսել՝ ինչ որ լսում եք, և չլսեցին» (Մատթ. 13.16,17):

Ի հակադրություն, կեղծ հավատացյալը չի կրում Քրիստոսի ուսմունքների ազդեցությունը, քանի որ նա չի կրում Քրիստոսի Անձի ազդեցությունը: Նա չի ոգեշնչվում և չի հափշտակվում Խոսքով, և նրա սիրտը չի վառվում իրենում, երբ Խոսքը մեկնվում է[734]: Նա գրեթե կամ բոլորովին չի գնահատում Քրիստոսի Խոսքը և չի մտահոգվում դրա հանդեպ իր անտարբերությամբ և անհնազանդությամբ: Ամեն կիրակի առավոտյան նա լսում է Քրիստոսի ուսմունքները և նույնիսկ համաձայնում է դրանց ճշմարտությանը, բայց, հեռանալով հավաքույթից, իր ետևն է գցում Խոսքը[735]: Նրա դեպքում կատարվում է Եսայի մարգարեի մարգարեությունը.

> «Լսելով կլսեք, և չեք իմանա,
> և տեսնելով կտեսնեք, և չեք տեսնի:
> Որովհետև թանձրացավ այս ժողովրդի սիրտը,
> և իրենց ականջներով ծանր լսեցին,
> և իրենց աչքերը խփեցին:
> Միգուցե աչքերով տեսնեն և ականջներով լսեն
> և սրտով իմանան և ետ դառնան,
> և Ես նրանց բժշկեմ» (Մատթ. 13.13-15):

Մեր ավետարանական եկեղեցիները լի են մարդկանցով, որոնք դավանում են Քրիստոսին, սակայն չեն լսում Նրա Խոսքը՝ հնազանդվելու համար: Նրանց քրիստոնեությունը կարելի է ամփոփել անցյալում կատարված գործարքով, որը կնքել են Քրիստոսի հետ՝ մի աղոթք անելով, բայց նրանք չեն շարունակել գնալ Նրա հետ դեպի նվիրման և հնազանդության խորքերը: Նրանք ընդամենը արել են այն, ինչ իրենց պատվիրել են՝ Երկինք մտնելու համար: Նրանք նստած են մեր եկեղեցական նստարաններին՝ անզգայացած խղճով. նրանք չեն լսում ոչ մի զգուշացում և չեն տեսնում ոչ մի հակասություն իրենց գործերի և իրենց հավակնած չափանիշի միջև, իրենց անձի և իրենց դավանության միջև:

Հանուն Քրիստոսի և անթիվ բազմությունների, որոնք հանգիստ

734 Ղուկաս 24.32
735 Սաղմոս 50.16,17

նստած են Սիոնում և չգիտեն, որ իրենց դատաստանը մոտենում է, մենք պետք է ապաշխարենք այն բանում, թե ինչպես ենք վարվել Ավետարանի և եկեղեցու հանդեպ: Մենք պետք է դեն նետենք ժամանակակից աղավաղումները, որոնք նավաբեկության են ենթարկել մի ամբողջ սերնդի մեծ մասի, և վերադառնանք Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Մենք պետք է քարոզենք այնպիսի պարզությամբ և եռանդով, որ մենք՝ ամբիոնի ետևում կանգնողներս, արդարանանք դատաստանի օրը, և մեզ լսողներն արդարացում չունենան: Եկեք ականջ դնենք Չարլզ Սփերջենի խոսքերին, որն ազդարարեց. «Եթե մեղավորները դատապարտվելու են, գոնե եկեք այնպես անենք, որ նրանք ստիպված լինեն ցատկել մեր մարմինների վրայով՝ դժոխք գնալու համար: Եվ եթե նրանք կորսվելու են, թող որ մահանան՝ մեր ձեռքերն իրենց ծնկներին դրված, մինչ մենք աղաչում ենք նրանց մնալ: Եթե դժոխքը լցվելու է, թող գոնե դա տեղի ունենա մեր ջանքերից հետո, և թույլ մի՛ տվեք ոչ ոքի հեռանալ՝ առանց զգուշացում և աղոթք ստանալու»[736]:

736 Չ. Հ. Սփերջեն. *««Նյու Փարք Սթրիթ»-ի և «Մետրոպոլիտեն Թաբերնեքլ»-ի ամբիոնը»* (Փասադենա, Տեխաս, «Pilgrim Publications», 1969թ.), հտ. 7, էջ 11

Չպետք է զարմանալ, որ թյուրըմբռնումներն Ավետարանի ուղերձի և ճշմարիտ դարձի բնույթի վերաբերյալ խանգարում են փրկության մեջ իրական հավաստիացում ունենալ: Այսպես կոչված «հեշտ հավատքի» կեղծ ավետարանը, որի պատճառով շատերն անհոգաբար ենթադրում են, որ փրկություն ունեն, և որի արդյունքում նրանք թերի պատկերացում ունեն փրկության մասին, գրեթե հոգևոր հուսահատության է մատնել մարդկանց զգայուն խղճերը: *«Ավետարանի հավաստիացումը և զգուշացումները»* գրքում Փոլ Վոշերը լույս է սփռում հույսի Ավետարանով՝ զգուշացնելով հավատքի դատարկ դավանության վտանգների դեմ և Սուրբ գրքի միջոցով մանրակրկիտորեն բացատրելով հավատքի ողջամիտ հավաստիացում ստանալու և պահպանելու հիմքը:

«Փոլ Վոշերն անասելիորեն օգտակար գործիք է տրամադրել մեզ, որի միջոցով կարող ենք հաստատ հավաստիացում փնտրել այն բանում, որ մենք փրկված ենք մեղքից՝ Աստծո շնորհքով: Աստծո Խոսքը նման է ինքնաքննության համար նախատեսված հայելու: Հովհաննեսի Առաջին թուղթը առանձնահատուկ կերպով օգնում է քննել մեր անձերը՝ հասկանալու համար, թե արդյո՞ք հավատքի մեջ ենք: Վոշերը վարպետորեն պատասխանում է այս հարցին Հովհաննեսի Առաջին թղթի միջոցով՝ ներկայացնելով փրկարար շնորհքի տասնյակ նշաններ մարդու անձում: Միևնույն ժամանակ, այս գիրքը խրախուսում է մեզ ապահովություն չզգալ մեր անցյալի փորձառության պատճառով, այլ առաջ գնալ հոգևոր աճի մեջ՝ կառչած մնալով Սուրբ Հոգուց: Այս գիրքը պատեհ օգնություն է Աստծո զավակներին, որոնք դժվարանում են վայելել հավաստիացումն իրենց Հոր ներման և ընդունելության մեջ, նաև սթափեցնող զգուշացում է ինքնախաբեության մեջ գտնվող մարդկանց: Թող Աստված օգտագործի այս գիրքն Իր փառքի համար՝ Իր ժողովրդի մխիթարության և կորսված մեղավորների դարձի համար»:

— Ջոել Ռ. Բիք, *«Լիարժեք հավաստիացման որոնում. Կալվինի և նրան հաջորդողների ժառանգությունը»* գրքի հեղինակ և «Մաքրակրոն բարեկարգված աստվածաբանական սեմինարիայի» նախագահ, Գրենդ Ռեփիդս, Միչիգան

ՓՈԼ ՎՈՇԵՐԸ տասը տարի շարունակ ծառայել է որպես միսիոներ Պերուի Հանրապետությունում: Այդ ընթացքում նա հիմնադրել է «Հարթ-Քրայ» Միսիոներական ընկերությունը՝ աջակցելու համար եկեղեցիներ հիմնող պերուացի ծառայողներին: Ներկայումս Փոլը «Հարթ-Քրայ» Միսիոներական ընկերության մշակներից է: Նա և կինը՝ Չարոն, ունեն չորս երեխա՝ Յանը, Էվանը, Ռոուենը և Բրաունվինը: